


ԳԻՐՔԸ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐՈՎ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ПАРУЙР М. МУРАДЯН

**КАВКАЗСКИЙ
КУЛЬТУРНЫЙ МИР
И АРМЕНИЯ**

Выпуск I

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
2008

ՀՀ ՊԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱՊԻՏՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ
ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Պրակ Ա.

A 93833



ՀՏԴ 941 (479.25): 93/99: 008

ԳՄԴ 63.3 (22)+63.3+71

Մ 992

Նուիրում եմ լուսահոգի եղբորս՝
հայագետ-փուլանդագետ
ԿԻՄ ՄՈՒՐԱԴԵԱՆԻ
խնկելի յիշատակին

Գիրքը հրատարակութեան է երաշխաւորել ՀՀ ԳԱԱ
Արեւելագիտութեան ինստիտուտի գիտական խորհուրդը

Մ 992 Մուրադեան Պ.Մ., Կովկասեան մշակութային աշխարհը և
Հայաստանը: Պրակ Ա - Եր., «Գիտութիւն» հրատարակչութիւն,
2008 - 412 էջ:

Պրակն ամփոփում է V - XIII դարերի Հայոց և Քրիստոնեայ Արեւելքի
հարեան ժողովուրդների գրի ու գրչութեան, դպրութեան և մշակոյթի
պատմութեան խնդիրներին վերաբերող հեղինակի աղբիւրագիտական
պրպտումները: Պատմական ու դաւանական արժարժումները դիտարկ-
ւում են կովկասագիտութեան դասական աւանդոյթի կշռոյթով:

Հասցէագրւում է հայագիտութեամբ և կովկասագիտութեամբ
գրադուող պատմաբաններին, բանասերներին և մշակութաբաններին:

PARUYR M. MURADYAN
THE CAUCASIAN CULTURAL WORLD AND ARMENIA
YEREVAN - 2008

ԳՄԴ 63.3 (22)+63.3+71

ISBN 978-5-8080-0737-6

© ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, 2008

«ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ»

«Կովկասեան մշակութային աշխարհ» բանաձեւումը XIX դարի աւարտին արեւելագիտութեան զարգացման ունիւերսայիզմի նուաճումներէց է: Նրա առարկայական բովանդակութիւնը սահմանուել եւ ուսումնասիրութեան մեթոդը մշակուել է ակադ. Նիկողայոս Մառի գիտական աշխատանոցում¹: Ընդ սմին՝ «մշակութային Կովկաս» հասկացութունն աւելի ընդգրկուել է, քան աշխարհագրական Կովկասը, որովհետեւ առաջինն իր մէջ ներառում է պատմական Ատրպատականի հիւսիսային եւ Յունա-հռոմէական կայսրութեան (հետագայում Բիւզանդիայի) արեւելեան նահանգները, իսկ հիւսիսային սահմանագծում՝ նախալեռնային գօտին:

Էթնիկական բարդ խճանկար ունեցող այս տարածաշրջանը տեղաբնակ ու գրեթէ ցեղերի, ցեղային միութիւնների, ժողովուրդների ու ազգային կազմաւորումների ստեղծած քաղաքակրթութիւնների մի այնպիսի հանգրուան է, ուր մշակութային փոխներթափանցումները շոշափում են հասարակական գործունէութեան գրեթէ բոլոր բնագաւառները՝ նիւթական ու հողեւոր մշակոյթների ուրոյն աշխարհ ձեւաւորելով:

Այն, ինչ Ն. Մառը որակում ու սահմանում էր գերազանցապէս նախնական կռահումներով, շատ յաճախ կենդանի լեզուների համեմատութեան, իր տերմինով՝ հնէաբանութեան հիմամբ, այսօր այլեւս առարկայական են ներկայանում հնագիտական, պատմագիտական, մարդաբանական, ազգագրական, լեզուաբանական եւ այլ հիմնարար հետազոտութիւններով²: Թէ իսկ առարկութիւններ կան, ապա դրանք

¹ Н. Марр, К вопросу о задачах арменоведения СПб. 1899 Նոյնի՝ Об единстве задач армяно-грузинской филологии. Избранные труды, т. I, Л., 1933. Նոյնի՝ Кавказ и памятники духовной культуры. СПб., 1912. Նոյնի՝ Кавказский культурный мир и Армения. СПб., 1915. Ն. Մառ, Հայկական մշակոյթը, Երեւան, 1989.

² Գ. Բ. Ջահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն. նախազրային ժամանակաշրջան. Երեւան, 1987: Այստեղ տրուած է նաեւ մասնագիտական գրականութեան հարուստ մատենագիտութիւն (էջ 633-663): Գր. Ղափանցեան, Հայոց լեզուի պատմութիւն. հին շրջան. Երեւան, 1961, Նոյնի՝ О взаимоотношении армянского и лазо-мегрельского языков. Ереван, 1952, Г. А. Климов Этимологический словарь картвельских языков. - Вопросы языкознания, 1970, N 6. К. Купнарева.

նշանակալի չափով տերմինաբանութեան են առնչում:

1.1. Կովկասեան աշխարհի մշակութային միջուկը, պետական-վարչական գոյութեան հաղարամեայ անցեալ ունեցողն ու իրենց սեփական դպրութիւն-մատենադրութեան ստեղծողը հիմնականում էթնիկական երեք կաղձաւորում է եղել՝ Հայեր, վրացիներ եւ աղուաններ: Այս խմբաւորումը մասամբ պայմանական է, որովհետեւ Վիրք (=Վրաստան) էթնո-մշակութային եւ աշխարհագրական հասկացութիւնը այժմ ընդգրկում է ազգակցութեան տարբեր աստիճաններ ունեցող քարթուելական միւս ժողովուրդները եւս՝ սփաններ, ճաներ, մեղրելներ (եզրիսացիներ) եւ լաղեր, իսկ Աղուանքը (=Ռան) աւելի ցեղային միութեան (ըստ Ստրաբոնի՝ 26) տարածք էր՝ վարչական գետնի վրայ եւ այլ ժողովուրդների ընկալմամբ ընդհանրացած: Ուստի «Կովկասեան մշակութային աշխարհի» պատմականութեամբ մշտապէս հաստատուն, դանդաժայնութեամբ գերակշիռ, աւանդներով հարուստ եւ վարչական ու մշակութային կեանքը կենտրոնացնող երկու կարեւորագոյն միաւոր կար՝ Հայք եւ Վիրք:

1.2. Կովկասաբնակ ցեղերի մշակութային ընդհանրութիւնները որոշակիօրէն դիտարկելի են վաղ բրոնզի դարաշրջանից սկսած (մ. թ. ա. IV-III հաղարամեակներ), երբ ձեւաւորվում է «Կուր-Արաքսեան» կոչուող մշակոյթը: Միջին բրոնզի շրջանում տեղի է ունենում մասնակի տեղայնացում, որի ցցուն արտայայտութիւնն է Թոնդքի մշակոյթը՝ իր տարբերակներով: Նորագոյն հետազոտութիւնները բրոնզի դարաշրջանում Կովկասում ենթադրում են տրոհման ճանապարհին կանգնած երեք հիմք-լեզու՝ քարթուելական, հիւսիս-արեւմտեան (ժառանգներն են՝ ափսաղերէն, արաղիներէն, ուբիխերէն, ադիդեայ-չերքեզերէն, կարարդիներէն) եւ հիւսիս-արեւելեան (չեչենո-ինդուշերէն, դաղստանեան լեզուներ, նաեւ՝ «աղուաներէն»): Մասնագէտները չեն բացառում այս հիմք-լեզուների միջեւ տեղի ունեցած կոնտարկտներն ու փոխառութիւնները, մանաւանդ կառուցուածքայն ընդհանրութիւնները, բայց մերժում են «Իբերո-կովկասեան լեզուաընտանիք» աշխատանքային դրոյթը: Քանի որ հիւսիս-արեւելեան խմբի լեզուները խուռիներէնի եւ ուրարտերէնի հետ ցուցաբերում են բառարմատների որոշակի քանակութեան ընդհանրութիւն, Ի. Մ. Դեակոնովը առաջարկում էր այդ լեզուաընտանիքը կոչել «արարողեան»՝ ինչպէս ուրարտներին երկիցս

Южный Кавказ в IX-II тыс. до н. э. Этапы культурного и социально-экономического развития. СПб., 1993, И. М. Дьяконов. Алародии.- Вопросы древней истории, 1995, N 1. Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Т. I-II Тбилиси, 1984.

անուանում է Հերոդոտեսը (III; 54, VII 79)¹ :

Լեզուական այս խճանկարից դուրս են մնում Կովկասում վաղուց անտի գործառնող մի քանի լեզուներ՝ արեւելաիրանական սկիւթերէնի ժառանգ օտերէնը (ալաներէնը), որ Կովկասում է յայտնուել երկաթի դարաշրջանում, իրանական թալիշերէն եւ թաթերէն լեզուները (Կովկասում են հաստատուել Սասանեան հարստութեան շրջանում), բոլոր թիւրքական լեզուները (ադրբեջաներէն, կումիկերէն, նողայերէն, թաթարերէն եւ այլն) : Վերջին խմբակցութեան լեզուներ կրող հանրութիւնները ձեւաւորուել են սելջուկեան արշաւանքներից յետոյ՝ գերազանցապէս ուշ միջնադարում :

1.3. Բաւական բարդ է հնդեւրոպական ճանաչուող հայոց լեզուի տեղն ու դիրքը Կովկասում : Հայերէնի հնդեւրոպականութիւնն ապացուցող Հ. Հիւբշմանը հայերին համարում է առաջաւորասիական հնագոյն ժողովուրդներից միակ պահպանուածը՝ հակառակ բոլոր անդիպութիւնների² : Նրա ապացոյցներին քաջ ծանօթ Ն. Մառը հայերէնը կոչում էր երկակի բնոյթի լեզու եւ բազում փաստերով վկայում կովկասեան (նրա տերմինով՝ հարեթական) բաղադրիչի առկայութիւնը նրանում³ : Հ. Աճառեանն ու նրա աշակերտները դարգացնում են Հ. Հիւբշմանի եւ Ա. Մեյէի տեսութիւնը (Գ. Ջահուկեանի բազում ճշգրտումներով ու լրացումներով)⁴ : Գր. Ղափանցեանը շատ խնդիրներում չի մերժում Ն. Մառի եզրակացութիւնը, բայց եւ ընդունում է ընդգծուած վերապահութիւններով⁵ : Ի. Դեակոնովը վերստին պնդում է, թէ հայերէնը Կովկաս է մուտք գործում մ. թ. ա. առաջին հազարամեակի սկզբներին՝

¹ И. М. Дьяконов, указ. соч 121.

² Н. Hübschmann. Armenische Grammatik. B. II, Leipzig, 1897, S. V-XXII. Նշեալ դրուադր Յ. Մանանդեանի թարգմանութեամբ տե՛ս Кавказский Вестник, Тифлис, 1902, N 4, s. 84-89.

³ Н. Марр, К вопросу о задачах арменоведения. с. 19; Н. Марр, К вопросу о ближайшем родстве армянского языка с иверским. — ЗВО, т. XIX, 1909, с. 069-072. Н. Марр Яфетический к в армянском языке. ЗВО, т. XIX, 1910, с. 0154-0159. Н. Марр, Два яфетических суффикса — /ti-/ + /t/ в грамматика древнеармянского (хайского) языка. ИАН, с. 1245-1250. Տե՛ս յատկապէս Ն. Մառի Яфетический элементы в языках Армении յօդուածաշարը. — ИАН, 1910-1919 թուականներ :

⁴ Հ. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, հ. 1-2, Երեւան, 1940, 1951 :

⁵ Գր. Ղափանցեան, Հայոց լեզուի պատմութիւն. Հին շրջան, էջ 69-101 : Նոյնիսկ Ն. Մառի հայեացքների քննադատութեանը նուիրուած աշխատութեան մէջ (Երեւան, 1951) Գր. Ղափանցեանը չի մերժում կովկասեան բաղադրիչի առկայութիւնը հայերէնում :

Վ Ուրարտուի գոյութեան շրջանում եւ նրանից յետոյ¹: Ուրարտերէնից հայերէնին անցած միաւորների պատկանելի քանակութիւնը, մանաւանդ տեղանուններից շատերի պահպանուածութիւնը հայերէնում, առաւել եւս՝ հայերէնից կատարուած փոխառութիւնները ուրարտերէնում (ներառեալ հայոց դիցարանի առանձին տարրերը)², չէ թէ սոսկ կոնտակտների, այլեւ նոյն տարածքում (այդ թւում եւ Այսրկովկասում) տեւական համագոյ ներկայութիւն են ապացուցում: Ոչադրաւ է հայերի վրացական «սոմելս-ի» էթնանունը, որ մասնագէտների մի խումբ առնչում է մուշկերի քարթուելական մեսխ/մեխ յորջորջմանը (Ն. Մառ, Գ. Ղափանցեան, Ս. Երեմեան), կամ Զուխմա / Սուխմա եւ կամ Սուխմու երկրանունը (Գ. Խալաթեանց, Բ. Պիտտրոյսկի, Գ. Մելքիշիլի, Գ. Զահուկեան)³:

2.1. Քարթուելական ցեղերի եւ նրանց լեզուների հետ հայերի եւ հայերէնի շփման ու փոխադրեցութեան խնդիրներ արծարծելիս նկատուելի է պատմական մի քանի պարագայ. ա) այսօր լեռնարնակ սուանները վաղնջական ժամանակներում բնակուելիս են եղել աւելի հարաւում (Փոթի տեղանունը սուանական է՝ Փաշղ), ուստի քարթուելական հիմք լեզուից տրոհուելուց յետոյ եւս կարող էին շփման եզրեր ունենալ հայացեղ միջավայրի հետ (Ն. Մառը մի ժամանակ նրանց նոյնիսկ Հայաստանից արտազաղթած էր համարում)⁴: բ) Ճաները (մեգրելների հետ միասին՝ զաները) զբաղեցնում էին Սեւ ծովի հարաւ-արեւելեան առափնեան, ուր անվերապահօրէն պիտի առնչուէին հայերին: գ) Քարթուելական լեզուներին հնազոյն ժամանակներից յատկորոշ է հնդեւրոպական փոխառութիւնների (ոչ անպայմանօրէն հայերէնի միջնորդաւորմամբ) որոշ շերտ, իսկ նոստրատիկ ծագման բառերի քանակութիւնը նկատուելիօրէն աւելին է (որոշ մասնագէտներ այն հասցնում են բառապաշարի քառորդի): դ) Տեւական եւ անհամեմատ սերտ էր Քարթլիի եւ Կախեթի (իմա՝ վրացիների) առնչակցութիւնը՝ Կուրի երկայնքով. հայերի ու վրացիների էթնիկական կաղմաւորմանը այս

¹ И. М. Дьякопов, указ. соч., с. 119.

² Գ.Բ. Զահուկեան, Լեզուական նոր տուեալներ հայոց նախաքրիստոնէական կրօնի եւ հաւատալիքների մասին.՝ ՊԲՀ, 1992, N 1 էջ 14-27, յատկապէս՝ էջ 23-24: Н.В. Арутюнян Топонимика Урарту, Ереван, 1985.

³ Կարծիքների հաւաքական քննութիւն տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն. հ. 1, Երեւան, 1971, էջ 240, հմմտ. Գ. Զահուկեան. Հայոց լեզուի պատմութիւն, էջ 288-289:

⁴ Н. Марр, К дате эмиграции мосхов из Армении в Сванию. - ИАН, 1916, с. 1689-1692. Н. Марр, К Истории передвижения яфетических народов с юга на север Кавказа. - ИАН, 1916, с. 1379-1408.

տարածքում մասնակցել են գուգարները, գարախ/ջաւախները, դիա-
ոխ/տայեցիները եւ այլ ցեղեր: Հնարաւոր են կոնտակտների ու սերտա-
ճումների այլ տարածաշրջաններ եւս (խառը բնակութիւն, փարչական
նոյն կազմում գտնուել, տեղաշարժեր եւ այլն): Այս լրացուցիչ սլարա-
գաների դերը շեշտելու համար ասենք, որ իր փերձին յօդուածներից
մեկում ակադ. Ա. Շանիձեն սլարթեւական տիրապետութեան թե-
լադրանքով էր բացատրում «քարթուել» ինքնանունը (իմա՝ Պար-
թեւական տիրոյթի բնակիչ)¹:

Մ. թ. ա. 11 դարում Արտաշէսը (Արտաքսիասը) իբերներից նուա-
ճում է Պարթիադրիսի լեռնալանջերը, Տայքը, Գուգարքը եւ Խորձեանը,
որոնց բնակիչները եւս, Ստրաբոնի տեղեկութեամբ «միայեղու եղան»,
սակ է՝ հայախօս դարձան: Եթէ այս ամենին գումարենք Իբերիա/
Վիրքի հզորութեան շրջաններում առժամանակ Հայքի թագաւորու-
թեան իսկ տիրանայր, տեւականօրէն աղղեցութեան նոյն ոլորտում
գտնուելը (սլարթեւական, հունա-հռոմեական), ապա հայոց եւ վրաց
մշակութային կեանքի ընդհանրութիւնը անցողիկ նկատելու հիմք չենք
ունենայ:

2.2. Ժամանակային ցուցում եւ հասարակական դարգացման
աստիճան բովանդակող լեզուական ընդհանրութիւններից կարեւոր են
սղինձ (վրաց. սպիլենձ-ի), երկաթ (վրաց. բկինա) տիրմինները: Համա-
նման բեռ են կրում անասնասրահական տերմինները՝ խող (վրաց. դոր-
ի), ոչխար (վրաց. ցխուար-ի, մեզր. շխուր-ի), երինջ (քարթուել. երինջ-
ի), գոճ-անք (վրաց. գոճ-ի, սլան. գխեճ, լադ. դեջի) եւ այլն: Ուշագրաւ
է, որ ընդհանրութիւնները (նաեւ փոխառութիւնները) շարունակական
են երկրագործութեան ոլորտում եւս. ազարակ (վրաց. ազարակ-ի),
գութան (վրաց. գութան-ի), վազ (վրաց. վազ-ի), գարի (վրաց. քեր-ի)
եւ այլն: Ա. Մուրուալեանը տեղական լեզուաշերտից պահպանուած եւ
քարթուելական լեզուներում վիայուած բառերի ու տերմինների սլատ-
կառելի քանակութիւն է բերում²:

Պակաս խօսուն չեն նաեւ պաշտամունքի ոլորտին վերաբերող լե-
զուական իրողութիւնները: Թէեւ նրանք բոլորը աւանդուած են քրիս-
տոնէութեան շրջանում ձեռք բերած նոր կիրառութեամբ, բայց
վստահարար գայիս են վաղնջական պատկերացումների շրջանից.

¹ Տ. Մճեռժյ, յՇօմօցլօջօյրօ Մյեօժյեյծօ: յճրօցլօ, յճրօցյլօ, «ձյ. յճրօ,
յեօն յճօյլօրօն Մճեռժյծօ», Ծ. 23, տձ., 1980, ջյ. 7-13.

² Ա. Մուրուալեան, Հայ-վրացական բառային զուգադիպումները (ընդհանուր բա-
ռերն ու բառարմատները), - Ն. Մառի անուան կաթինետի աշխատութիւններ, թիւ
2, Երեւան, 1947, էջ 23-85:

Հայերէն	Վրացերէն
աղօթ-ք	ლოცვა
գիր/գրել	წერა
դոհել	ზორვა
թուել/թուելի-ք	თუაღვდა/თვლდა
կարդալ(կարդացող= գրբաց, դուշակող)	კითხვა/მკითხავი
կերպ (կուռ.ք)	დმვერთი, დან. ღორძოთი, მსგვ. ღორღოთი սოლან.
	ღვერბეთ (ასათოლად)
կիրթ/կրթել	წურთა/წვრთნა
վիշապ	ვეშაპი
սուրբ	წურფი>წრფელი (მაგრი, აგნილ, ჯიშაკ)
քաղակ, քարող	ქადავი
քաջ-ք	ქაჯი

Ընդհանուր տերմինաբանութիւնը անձանօթ չէ նաև մարդու մարմնի մասերի անուանումներին. Հայ. երիկամ-ունք-ի դիմաց վրաց. ունենք թիրկմել-ի, աջ ձեռք (նաև՝ յաջողութիւն) իմաստով՝ մ-արջ-ուենա, մ-արջ-ւէ (այստեղից՝ գամարջուերայ-ողջոյն, յաղթութիւն): Ն. Մառը ենթադրում էր, թէ Հայերէնի քոյր արիւնակցութիւն ցոյց տուող բառը անմիջական սղերս ունի սուաներէն քիչիր-ին (քոյր): Անպակաս են միջավայրի (աշխարհագրական եւ սոցիալական) ընդհանրական ընկալումները՝ ծիր-վրաց.ծրէ, ծայր-վրաց.ծերո, թափառել-վրաց. մթաբառել-ի (մ-թա-սար, բառ-ի-դաշտ), գաւառ-վրաց.գուառ-ի (տոհմ, աղղ), իսկ վարչական սլաշտօնեութեանը վերաբերող նոյնանուն անուանումները հանրածանօթ են՝ մարդպան (վրաց. մարդպանի), սպարապետ (սպասպետ-ի), սեպուհ (գեպուր -ի) եւ այլն: Այս իրողութիւնները կարող են հայոց ու վրաց անցեալի մասին բաւականաչափ փաստարկեալ պատկերացում տալ:

2.3. Եթէ առանձին բառերի ու տերմինների շուրջ կարելի է տարակուսանք ունենալ՝ արդե՞օք մեկ այլ՝ երրորդ լեզուից կատարուած փոխառութիւն չեն, ապա հազիւ թէ կասկածանք հարուցեն քերականական կարգի ընդհանրութիւնները: Ն. Մառը, օրինակ, համոզուած էր, որ Հայերէնի հոգնակիակերտ ք-ն հաբեթական (կարդա կովկա-

սեան) ծագում ունի, նոյնական է ամփոփազերէնի և մասնիկին¹: Ա. Շանիձէն եւ Գր. Ղափանցեանը սերում-ծագում ցոյց տուող ընդհանուր ածանց են նկատում հայկական եւ վրացական տեղանուն-ցեղանուններում աւանդուած ար-ը (թուխ-ար-ք // թուխարիա-ի, Գուգ-ար-ք//Գուգար-եթ-ի, Գոգ-ար-ան-ի, Գուշ-ար եւ այլն): Ա. Շանիձէն բաղում օրինակներով ապացուցում է -ար վերջածանցի ներկայութիւնը քարթուերական լեզուներում՝ իր տարբերակներով, իսկ Գ. Զահուկեանը այն ծագած է համարում հ. -ե-, -(e)ro ածանցից, համեմատելով -իր, -որ, -ուր-ի հետ³: Բոլոր սլարազաններում՝ նրա ընդհանրական գործածութիւնը անվերապահ է:

Պակաս ուշագրաւ է ճանո-մեզրելական (= դանական) -ում վերջածանցի ներկայութիւնը հայերէնում (յիշենք -ում ճիւղի բարբառների խմբակցութիւնը): Ա. Շանիձէն այն չի նոյնացնում - ում հոլովակազմիչի հետ (տիպաբանական առումով վերջինս ունի վրաց -չի-ի (չինա - մէջ) կազմութիւն՝ -ոյ + մէջ = ում): Նման կարգի դիտարկումներ են կատարել Գր. Ղափանցեանն ու Ա. Մուրաչեանը. մասնաւորապէս միջին հայերէնի կը/կու մասնիկը (կոյ > կու > կը > կ) նրանք ազգակից են համարում ճանո-մեզրելական կոն-ին (ոկուն կոն//կո), որ պիտի է նշանակում⁴: Ի դէպ, եթէ հարցի քնութիւնը տեղափոխենք տիպաբանական գետնի վրայ՝ ոչ պատահական պիտի նկատենք հայերէնի եւ վրացերէնի հոլովման համակարգում նկատուող նոյնատիպութիւնները: Խնդիրը միայն հոլովների քանակն ու նրանց կազմութեան եղանակը է (անշուշտ՝ բացառութեամբ էրգատիւի), այլեւ հոգնակի թուի թեք հոլովներում հայերէնում -ց-ի եւ վրացերէնում -թա-ի գերիշխող հոլովակազմիչ լինելը (-ց-ի եւ թ(ա)-ի համապատասխանութեան ապացոյց է՝ հայ. ա-ղօթ-ք, վրաց. լոց-ուա): Գր. Ղափանցեանը ճանո-մեզրելական փոխառութիւն է համարում հայերէնի -չի մասնիկը (լայն -չի, բոլոր-չի):

¹ Այդ ապացուցող գիտական բաղմաթիւ աշխատութիւններից յիշենք վերջիններից մէկը՝ «Հայկական մշակոյթը», էջ 28-29:

² А. Шаиндзе Два чано-мегрельских суффикса в грузинском и армянском языках – յանուշաո յեօե եճճոյթճոյրօեա ճօ սեճօճօօե եճյօտեյճօ, Ե. 1, տճ., 1957, թճ. 20-24. Գր. Капанцян, Суффиксы и суффигирующие элементы в топонимике древней Малой Азии. Известия АН Арм ССР, 1948, N 6, с. 42-44.

³ Գ. Բ. Զահուկեան, Հին հայերէնի վերջածանցների ծագումը. -ՊԲՀ, 1994, N 1-2, էջ 60:

⁴ Գր. Ղափանցեան, Հայոց լեզուի պատմութիւն, էջ 100-101: Արմ. Մուրաչեան, ԿԸ մասնիկը եւ կը մասնիկաւոր բայերի խրայատուկ առումները հայերէնում.- Գրական-բանասիրական հետազօտութիւններ, Ա. Երևան, 1946, էջ 377:

Մենք լիովին զխտակցում ենք, որ այստեղ վկայակոչուած եւ ենթադրելի այլ իրողութիւնները կարող են ստուգաբանական, ծագումնաբանական ու հնչիւնական տարբեր, նոյնիակ իրարամերժ բացատրութիւններ ու մեկնաբանութիւններ ունենալ (այդպիսիք կան թեկուզ Գր. Ղափանցեանի եւ Գ. Ջահուկեանի առաջարկած խմբաւորումներում), բայց մեզ զբաղեցնողը լեզուական առարկայական մակարդակն է՝ անկախ իրարից կամ մեկ երրորդ լեզուից փոխառութիւն լինելուց, անկախ կովկասեան թէ հնդեւրոպական շերտ կազմելուց:

2.4. Նախաքրիստոնեական գրաւոր յիշատակարանների չգոյութիւնը մեզ զրկում է վրաց եւ հայոց հասարակական կեանքին ու կենցաղին վերաբերող շատ խնդիրների շուրջ հստակ պատկերացում կազմելու հնարաւորութիւնից: Ստրաբոնի մի տեղեկութիւնից, ինչպէս նաեւ կողմնակի վկայութիւններից կարելի է մակարբերել, թէ Աղուանքի հետ Հայաստանում եւ Վրաստանում նոյնպէս իբրեւ բարի ոգի պաշտուել է լուսինը: Նախ՝ լուսնային պիտի լինէր նախնական տոմարական համակարգը, որը հետագայում, որպէս այլուր, փոխարինուեց արեւայինով: Որ այստեղ ժամանակի հաշուարկման նոյն եղանակն է կիրառուել՝ պարզ երեւում է այն արտայայտող որոշ տերմինների ընդհանրութիւնից. հայերէնի ժամ (ժամանակ), դար բառերի դիմաց վրացերէնում ունենք ժամ-ի, դար-ի (= դրո): Աւելին, ամսանունների նոյնանութիւնը ապացոյց է միասնական համակարգի.

Հայոց ամիսներ

1. Նաւասարդ
2. Հոռի
3. Սահմի
4. Տրէ
5. Քաղոց
6. Արաց
7. Մնհեկանի
8. Արեգ
9. Ահեկանի
10. Մարիերի
11. Մարդաց
12. Հրոտից

Վրաց ամիսներ

1. Ախալձլիսայ
2. Մթուլիսայ
3. Տիրիականի
4. Տիրիաղինի
5. Ապնիսի
6. Սուրժղնիսի
7. Միհրականի
8. Իգրիկա
9. Վարդոբիսա
10. Մարիայի
11. Թիբիսայ
12. Քուէլթոբիսայ

Մասնագիտական գրականության մէջ ամսանունների ստուգաբանության բաղում տարակարծություններ կան¹: Այնուամենայնիւ, Հայերէնի 2-րդ եւ 3-րդ ամսանունների քարթուելիական ծագումը (ճիշտ իրենց տեղի նշանակութեամբ՝ երկու եւ երեք) հիմնաւոր առարկութիւն չի գտնում: Ախարծիսա - ն ու Սթուլիսայ -ը պատճենում են Նաւասարդն ու Քաղոցը, իսկ Իգրիկան նոյն Արեգն է, Տիրիսկանի-ն ու Տիրիսդինի-ն սերում են Տրէ -ից (ուղղակ. Տիր/Տիւր - հեթանոս Հայոց դիտութեան եւ ճարտարութեան աստուածը): Համապատասխան ամսանունների տեղերի տարբերութիւնը արդիւնք է տարեսկզբի այլաժամութեան²:

Հայ-վրացական տոմարական այս աւանդոյթը շարունակուեց վաղբրիատոնէական շրջանում: Կ. Կեկելիձէն արդէն ցոյց է տուել, որ 353 թուականից Հայաստանում ընդունուած Անդրեաս Բիւզանդացու գատիական երկուհարիւրամեայ աղիւսակը, որի նպատակը տերունական տօների կարգաւորումն էր, գործածութիւն է դառել նաեւ Վրաստանում, իսկ նրա աւարտից յետոյ 552 թ. Հայոց եկեղեցու հետ միասին Քարթլիում անցել են էսա Աղեքսանդրացու 532-ամեայ պարբերաշրջանին: Նոյն գիտնականի ապացուցումներով արարչագործութեան 5600 տարվա տարբերակը եւս, որ կիրառական էր Այսրկովկասում, դարձեալ Անդրեասի աղիւսակի հետ է կապուած՝ «Հայաստանից Վրաստան անցնելով»³:

3.1. Վրացական 3-րդ եւ 4-րդ ամսանուններից կռահելի է, որ Տիրի պաշտամունքը ճանաչելի է եղել Վիրքում եւս: Այդ հաստատում է նախաբրիատոնէական այլ պաշտամունքների ընդհանրութեան օրինակով: Մասնաւորապէս՝ այդպիսին էր միթրաիզմը (միհրականութիւնը), որի արձագանքը դիտարկելի է նաեւ քրիստոնէութեան ընդունումից յետոյ՝ յանձին ս. Գեւորգի պաշտամունքի⁴: Յիշենք եւ Խորենացու տեղեկութիւնը Հայաստանում այնքան լայն ճանաչում ունեցող եւ թուելիաց երգերի արժանացած Վահագնի մասին, թէ «այլ ասին դա աստուածացեալ, եւ անդրի ի Վրաց աշխարհին դսորա չափ հասակին կանգնեալ՝ պաշտէին զոհիւք» (1, ԼԱ):

¹ Նրանց քննարկումը տե՛ս էդ. Աղայեան. Հին Հայկական ամսանունները եւ օրանունները. ԲԵՀ, 1984, N 2, էջ 61-78:

² Ժ. ԵՅԵՅԵՆԻՍ, ძველი ქართული წესიწავთ, «ეჭოულეობა ძვ. ქართ. აღმოს. ისტორიოგრაფი», Ե. 1, տბ., 1956, გვ. 99-124. **Նոյնի՛** ძვ. ქართ. ეთნოლოგიური წესიწავთ, **Նոյն տեղում**, გვ. 125-132: **Նոյնի՛** წესთაღრიცხვა ძვ. სავ-ში, «ეჭოულეობა...», Ե. II, տბ., 1945, გვ. 325-335.

³ Ժ. ԵՅԵՅԵՆԻՍ, **წესთაღრიცხვა...**, გვ. 339.

⁴ Ժ. ԵՅԵՅԵՆԻՍ, **ქრისტიანობის და მითრისმი**, «ეჭოულეობა...», II, გვ. 342-353.

դարի ասորի հեղինակը Գուրգանը (Վիրքը) համարում է «մի երկիր Հայաստանում» իսկ «հիւսիսային շրջանի» հինգ հաւատացեալ ժողովուրդների առաջին կաթողիկոս՝ «արդար եւ յայտնի մի մարդ՝ Գրիգոր անունով», որի նստոցը «Պարսկական Հայաստանի գլխաւոր քաղաք Դուինում» է¹ :

Չմտնելով այլեւայլ մանրամասնութիւնների մէջ, նկատենք, թէ նման բովանդակութիւն ունի եւ «Գիրք թղթոցի» վկայութիւնը. «Ի միտջէ աղբերէ առեալ էր զվարդապետութիւն, որ նախ ինքեանք զկենդանութեանն լոյս առին՝ եւ ապա մեզ եւ ձեզ առ հասարակ սերմանեցին զաստուածապաշտութիւն՝ նախ երանելին սուրբն Գրիգոր, եւ ապա Մաշդոց, եւ զԳրոց ծանալթութիւն ի պնդութիւն հաւատոց»² : «Գրիգորի վարքի» արարական խմբագրութիւնը յիշատակում է Լուսաւորչին ուղեկցող սեբաստացի մի «կենցաղավարութեամբ սքանչելի, առաքինի, եկեղեցական գրոց գիտակ» վրացու, որին Գրիգորը մետրոպոլիտ է կարգում Վիրքում, իսկ կապադովկացի Սոփրանիոսին քարոզչութեան է ուղարկում Ափսաղք (իմա՝ Արեւմտեան Վրաստան)³ : Ինչ վերաբերում է Նունէին, ապա աւանդութիւնը նրան եւս առնչում է Գրիգոր Լուսաւորչին եւ Հռիփսիմեանց (Խորենացի II, 86) : Նրան ձօնուած մի շարականում, ի դէպ, Վրաստանը կոչուած է Բարթուղիմեոս առաքեալի վիճակ, որ յետագայում փոխարինուեց ս. Աստուածածնին վերաբերող աւանդութեամբ⁴ : Այսպիսով՝ իրենց դերով միմեանց փոխարինել են Բարթուղիմեոս առաքեալը, Գրիգոր Պարթեւը, Նունէն, որ եւ արտացոլումն է քարոզչութեան աստիճանական տեղայնացման :

Ի վերջոյ յիշենք նաեւ, որ Հայոց եկեղեցում կարող էին պաշտօնավարել վրացի հոգեւորականներ (Կիրիոն), Վիրքում՝ հայեր (Հորհայ) : Այս ամէնը պիտի հանգեցնէր նոյնական տօների, սրբերի յիշատակների, ծիսական արարողութիւնների ձեւաւորմանը, որոնց մի մասը իր կենսականութիւնը պահպանեց եկեղեցու ազգայնացումից՝ բաժանումից յետոյ եւս :

¹ Հայերէն թարգմ. տե՛ս «Ասորական աղբիւրներ», թարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հ. Գ. Մելքոնեանի, Երեւան, 1976, էջ 313 :

² «Գիրք թղթոց», Երուսաղեմ, 1994, էջ 340 :

³ H. Mapp, Крещение... с. 137. Հմմտ. նոյնի՝ Предварительный отчет ..., с. 27: Յունարէն խմբագրութեան հաղորդումները մասամբ այլ են. այստեղ նրա անունը էյրենախոս է, սակայն վրացի լինելը յայտնի չէ: Սոփրանիոսի քարոզչութեան վայրը Ափսաղքի փոխարեն «Լաղերի երկիրն» է: Տե՛ս Gerard Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Vaticano, 1946. p. 101-102.

⁴ H. Mapp, Предварительный отчет ..., с. 41.

3.3. Միասնութեան շրջանում, հարկաւ, Վրաց եկեղեցին Օննդեան տօնը յունուար 6-ին էր նշում, համատեղելով այն Սկրտութեան օրուայ տօնի հետ: Վիրքում եւս մեծարում էին ս. Աթանազինէսին, որի նշխարները Գրիգոր Լուսաւորիչը Փոքր Հայքից Հայաստան էր բերել (Ագաթ., § 810, 836) եւ տօնը կարգել «ի նաւասարդ աւուր»: Ընդհանրական էր եւ Ամենայն մարտիրոսաց տօնը: Ամենայատկորոշը, սակայն, Հայոց եկեղեցու աւանդական Առաջաւորաց, Բաղարջակերաց եւ Վարդափառի տօների ճանաչումն էր Վիրքում: Զատագովական մատենագրութեան էջերում յաճախ պատճառարանուողը կամ յանդիմանուողը Առաջաւորաց պահքն էր: Հայոց մատենագրական հնագոյն աւանդութիւնը այն կապում է Գրիգոր Լուսաւորչի դործունէութեան հետ, որը իր ժողոված նախարարներին հինգ օր «թողու անսուաղ» իբրեւ առաջին պահք, «գոր եւ Առաջաւոր կոչեմք»²: Սոյն պահքի սկզբնաւորման իրարամերժ դանազան առասպելախառն բացատրութիւններ կան յոյն եւ վրացի մատենագիրների երկերում³, սակայն մեծ մասամբ դաւանական աչառութեամբ դրուած: Ն. Մառը այս տօնն առնչում էր «կռապաշտութեան ժամանակներում» քարթուելական ծառմաթ/ծառմարթ չաստծուն՝ իբրեւ «պաս մսի, իհարկէ՝ որսի մսի»⁴ եւ իբրեւ ասլացոյց մատնացուցում Յովհան Պահեցողի «Նոմոկանոնի» վրացական խմբագրութեան տեղեկութիւնը, թէ Առաջաւորաց շարաթմիայնակեցները ազատ են կաթնեղէն ուտելու, աշխարհականները՝ միս⁵: Մեկ այլ բացատրութեամբ՝ Առաջաւորաց է կոչւում Մեծ պահքին նախորդելու հանգամանքով. այդ է յուշում եւ «Վրաց ուղղափառ եպիսկոպոս» Մովսէս Յուրտաւեցու «Պատճառքը», ուր կոչ է անում «ոչ ապականել դխորհուրդն եւթն շարաթուցն պահոց, այլ լնուլ դսուրբ քառասներորդն՝ հինգաւրեայ յառաջաւոր պահովքն»⁶: Արսէն

¹ Հմմտ. Յ. յՅՅԵՕԺ, յճժՅՅԵՕԺ ձօյ(ՅՅՅՅՅՅ...), «ՅՅՅՅՅՅՅՅ...», Թ. IV, ՅՅ. 288-289, Թ. I, ՅՅ. 125-132, Թ. VII, ՅՅ. 259-264. Л. Меликсет-Бсков Грузинский извод о посте «Араджавор».- Христианский Восток, V, вып. 2, 1916, с. 73-111; Н. Марр, Аркаун, монгольского название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах. СПб., 1905, с. 54-57; Н. Марр, Предварительный отчет..., с. 13, 17.

² «Պատմութիւն Տարօնայ, զոր թարգմանեաց Զենոր Ասորի», Վենետիկ, 1832, էջ 23:

³ И. Мансветов, О постах православной Восточной церкви. М., 1886, с. 46-49; Л. Меликсет-Беков. Грузинский извод..., с. 76-80.

⁴ Ն. Մառ, Հայ մշակույթը, էջ 38:

⁵ И. Марр, Предварительный отчет..., с. 13; Л. Меликсет-Бсков, О посте «Араджавор», с. 75.

⁶ «Գիրք թղթոց», էջ 263:

Սափարացին «Առաջաւորաց» տօնի (նրա մօտ՝ առաջորի) սահմանու-
մը վերագրում է Դուինի ժողովին իբրեւ՝ «այս է մեր հաւատքի առա-
ջին օրը»¹ :


Բաղարջակերաց տօնի վրացական յիշատակումները շատ չեն,
բայց կան եւ դարձեալ միասնութեան չրջան են վկայում² :

Վարդափառ տօնի ակունքները տակաւին քննելի են: Ղ. Ալիշանը
այն բացատրում է հայոց Աստղիկ դիցուհուն (ուրախութեան, փափ-
կութեան եւ հեշտութեան յորդորիչ) վարդեր նուիրելու սովորութեամբ՝
անշուշտ երակետ ունենալով դիցուհու «ոսկեծղի», «վարդամատն»
որակումները³ : Վարդափառը հետագայում գիտակցուեց իբրեւ Փրկչի
սրայծառակերպութեան (նաեւ ս. Յովհան Կարապետի) տօն, որ նշում
էր Զատիկից 14 շաբաթ (98 օր) յետոյ՝ կիրակի օրը: Այն ընդունուած էր
նաեւ Կապադովկիայի յոյների միջավայրում՝ Bartoubar հայաշունչ
անունով, Զատիկից 6 շաբաթ յետոյ: Բիրունու հաղորդամբ այս տօնը
գիտէին եւ Խորեզմի քրիստոնեաները (մայիսի 4-ին)⁴ : Վարդափառ
տօնի (վրաց. վարդորա) առկայութիւնը վրաստանում՝ վկայուած է
բաղմաթիւ աղբիւրներով (սկսած վարդորիսա ամսանունից մինչեւ
վարքադրական առանձին երկեր ու Յովհան Պահեցողի «Նոմոկանոնի»
վրացերէն թարգմանութիւնը, ուր այն պահք է կոչուած)⁵ : Ն. Մառը
ենթադրում է, թէ Վարդափառը նախապէս ս. Աստուածածնին պիտի
նուիրուած լինէր, իսկ իբրեւ Այլակերպութեան կամ Պայծառակեր-
պութեան տօն յունարան դպրոցի նորամուծութիւնների շարքին պիտի
պատկանի⁶ :

Աւելորդ ենք նկատում յիշեցնել, որ եկեղեցական սոյն տօների
ընդհանրականութիւնը Այսրկովկասում պիտի պայմանաւորէր երթե-
ւեկի ու միջէթնիկական շփումների լայն հնարաւորութիւն՝ գրաւոր ու
բանաւոր ստեղծագործական ակնյայտ ազդեցութիւն ու փոխազդե-
ցութիւն: Լ. Մելիքսեթ-Բէկի տեղեկութեամբ վրացի կաթողիկէների մի-
ջավայրում մինչեւ 20-րդ դարասկիզբը պահպանուելիս է եղել վարդիս
փենորա (վարդադարդ) տօնը: Սակայն մենք դժուարանում ենք ասել՝

17.
A 93835

¹ ճրնչն նաջճրչլո, շճնյոցոնճոցոն յճրոցչլոճ չճ նոմչոճ, շճմոնՅճ Կ.
ճլչչլոճոճ, տճ., 1980, շճ. 80.
² H. Mapp, Предварительный отчет..., с. 17.
³ Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց. Վենետիկ, 1895,
էջ 282-283, 306-307:
⁴ H. Mapp, Аркаун..., с. 55.
⁵ Լ. Մելիքսեթ-Բէկ, Վարդափառը վրացոց մէջ.- «Արարատ», 1918, թիւ 1-3, էջ 133:
⁶ H. Mapp, Аркаун..., с. 54, прим. I.



յիշեալ տօնը Վարդավառի վերապրողին է, թէ՞ Յովհաննէս Աւետարանչի պատուին լատինների նշած Rosalia-ն, որ կատարվում էր մայիսի 8-ին: Թերեւս երկրորդը:

Ի վերջոյ՝ նկատենք, որ միասնութեան շրջանում Վրաց եկեղեցին եւս ընդունում էր մեղաքաւութեան մատաղը՝ սուրբգրական Համապատասխան հիմնաւորումներով¹:

4. 1. Բազմազան ու բազմերանգ են Կովկասի քրիստոնէացման պատմամշակութային արդիւնքները, սակայն այդ շղթայի ամենանշանակալի օղակը ազգային լեզուներով գիր ու դպրութիւն ստեղծելն էր: Իբրեւ վարդապետութիւն քրիստոնէութեան քարոզչութիւնը պահանջում էր Ս. Գրքի, մանաւանդ Նոր Կտակարանի թարգմանութիւն տուեալ հանրութեանը հասկանալի լեզուով, իսկ Այսրկովկասի երեք հիմնական քարոզչութեան լեզուները՝ հայերէն, վրացերէն եւ աղուաներէն (գարգարերէն) որքան էլ ընդհանրութիւններ ունենային՝ հիմնովին տարբեր կառուցուածք են ներկայացնում (աղուաներէնը հաւանաբար պիտի մերձ լինէր հիւսիս-արեւելեան կովկասեան լեզուախմբին): Ի տարբերութիւն Առաջաւոր Ասիայի եւ յարակից շրջանների, Այսրկովկասում դանգուաժային կրողներ ունեցող լեզուներից ոչ մեկը *lingua franca* չէր, ուստի սպասելի էր, որ քարոզչութիւնը տարուէր կամ քրիստոնեայ Արեւելքի լեզուներից մեկով (ասորերէն, յունարէն, թերեւս եւ պարսկերէն), կամ տեղի լեզուներով՝ առանձին-առանձին: Շուրջ մեկ հարիւրամեակ կիրառուեց առաջին եղանակը (համառ. Փարպեցու տեղեկութիւնները), գուցէ եւ բանաւոր, պատմողական փորձերով², սակայն, ինչպէս հայկական աղբիւրների տեղեկութիւններից դիտենք, այն արդիւնաւետ չեղավ: Բնականաբար՝ քարոզիչներն ու քաղաքական իշխանութիւնները դիմեցին երկրորդ եղանակին: Սոյն ճակատագրական քայլը փաստօրէն քրիստոնէական եկեղեցու ազգայնացման առաջին խոշոր դրսեւորումն էր, որին չէին ընդդիմանում Արեւելեան եկեղեցու կարեւորագոյն կենտրոնները՝ Երուսաղէմի, Անտիոքի եւ Կեսարիայի աթոռները: Իզուր չէ, որ Անտիոքում մշակուեց թարգմանութեան-մեկնութեան ոչ այլաբանական մեթոդը³, իսկ Կեսարիա-

¹ Н. Марр, Предварительный отчет..., с. 12.

² Գ. Սարգսեանը նախընտրում է այդ եղանակը կոչել «հեթերոէպիկական» իմա՝ այլախօս ընթերցում կամ արտասանութիւն: Տե՛ս նրա՝ К предыстории армянской письменности. - Кавказ и Византия, вып. 3, Ереван, 1982, с. 19-20. Լ. Խաչիկեանը թուարկում է IV դարում ստեղծուած օտարալեզու մի քանի տեղական յուշարձան (տե՛ս նրա՝ Աշխատութիւններ, հ. Ա, Երեւան, 1995, էջ 28-44):

³ Փայլակ Անթապեան, Հայ մեկնարանական գրականութեան տեսական նախահիմքերի շուրջ. - «Բանբեր Մատենադարանի», հ. 15, Երեւան, 1986, էջ 76-83:

(տառանիշ) գործածուած է քրիստոնէաների խորհրդանշանը (մենագիրը)՝ վրացական Ք (Քրիստոս), Ջ (Ջուարի-խաչ) եւ Ծ (ծմիդա-սուրբ) գրերի տեսքով: Եթէ այս իրողութեանը գումարենք թուով ինը տառապատկերի եւ հնչիւնային արժէքի նոյնութիւնը (կամ գրեթէ նոյնութիւնը) հայերէնի հետ (Կ, Թ, է, Ո, Ի, Ք, Փ, Ջ, Վ), ինչպէս նաեւ հայերէնի նմանութեամբ երկար եւ կարճ ձայնաւորների տարբերակման անհրաժեշտութիւնը հունենայու պարագայում Ե եւ է գրերի գոյութիւնը, ՈԻ գրի կազմութիւնը (ընդհանուր ազգիւրը հունարէնն է), այլեւ Կորինի հանգամանայի վկայութիւնները Մաշտոցի եւ նրա վրացի օգնական Ջաղայի մասին, ի վերջոյ՝ հայ-վրացական հոգեւոր ու մշակութային սերտութիւնը, որի մասին խօսում ենք, հազիւ թէ կարելի լինի այլ բացատրութիւն գտնել՝ քան ժամանակակից վարքագրի հարդորումն է, ժանրին ընորոշ ընդգծումներով: Խնդրական հարցերը մանրամասնութիւններին են առնչվում՝ ինչո՞վ բացատրել գրերի միմասի գծագրական ընդհանրութիւնը, միւսինը՝ ոչ, ինչո՞ւ տարբեր է գրերի հերթակարգը, ուրեմն եւ թուային արժէքը եւ այլն: Ուրեմն՝ նոր պրպտումների դուռը չի փակուած:

4.3. Այբուբենի ստեղծումից յետոյ հայոց եւ վրաց մշակութային պատմութեան մէջ V դարի խոշորագոյն նուաճումը Ս. Գրոց թարգմանութիւնն է: Թեւ տակաւին հունենք ադ յուշարձանի հայկական եւ վրացական խմբագրութիւնների ամբողջական գիտաքննական հրատարակութիւն, սակայն տարբեր գրքերի ուսումնասիրութեամբ պարզուած է, որ սկզբնական («փութանակի» հայերէն թարգմանութիւնը կատարուած է ասորական բնագրից, ապա Սահակ Պարթեւի գլխաւորութեամբ սրբագրուած-խմբագրուած ըստ յունական Եօթանասնիցի: Ենթադրելի է, որ այն հետագայում եւս ինչ-ինչ վերանայում-սրբագրում է ունեցել¹:

Ս. Գրոց վրացական խմբագրութեան սկզբնաղբիւրի վերաբերեալ (մինչ Աթոսեան շրջան) ուղղակի մատենագրական ցուցում չի պահպանուել, ուստի հարցի պատասխանը բնագրական քննութեանն է վերապահուած: Յայտնի է, սակայն, որ գործածական է եղել երկու խմբագրութիւն՝ Խանմետեան (իմա՝ յաւելեալ Խ ունեցող) եւ Սարածմիդեան (իմա՝ ս. Սաբայի մայրավանքում ընդունուած տարբերակ)²:

¹ Ս. Գրոց հայկական խմբագրութեանը վերաբերող աշխատութիւնների մատենագիտութիւն տե՛ս Յ. Ս. Անասեան. Հայկական մատենագիտութիւն. հ. Բ. Երևան, 1976, էջ 309-668: Ձեռագրերի նկարագրութիւն տե՛ս Եսէ արք. Աճէմեան, Յուլյակ Աստուածաշունչ մատենանի հայերէն ձեռագիրներուն. Լիզպոն, 1992:

² Մեկնաբանութիւնը պատկանում է ակադ. Կ. Կեկելիձէին, տե՛ս նրա՝ յճճճ. ԸՅԵԸ. օճԸ, Ը. I, տճ., 1960, թՅ. 413.

Պահպանուած հնագոյն եւ համեմատաբար ամբողջական ձեռագրերը չորսն են՝ Օշկեան (Աթոսի 978 թ. գրչագիր), Երուսաղեմեան, Գելաթեան եւ Մցխեթեան (վերջինս ընդօրինակուած է XVII-XVIII դարերի սահմանգլխին, Սուլխան-Սուբայի վերադիտութեամբ, առաւելապէս ընտիր օրինակներէց)¹ :

Վերջին տասնամեակներին վրացագէտները յիրաւի ծանրակշիռ աշխատանքներ կատարեցին սուրբգրական առանձին գրքերի գիտական-քննական հրատարակութեան գործում, ներառյալ սլարականոնները (Ա. Շանիձէ, Մ. Շանիձէ, Կ. Դանելիա, Թ. Յքիտիշվիլի, Ու. Յինդելիանի, Յ. Քուրցիկիձէ, Էլ. Դոչանաշվիլի եւ այլք) : Պարզուած կարելի է նկատել թարգմանութիւնների երեք խումբ՝ ուղղակի հայերէնից (Գիրք Սաղմոսաց, Եզրաս եւ այլն), յունական Եօթանասնիցից (Երեմիա, Եղեկիէլ եւ այլն) եւ միաժամանակ՝ ե՛ւ յունարէնի, ե՛ւ հայերէնի հետքեր կրող բնագրեր (մանաւանդ Նոր կտակարանի գրքեր) : Իրողութիւնն այն է, որ նոյնիսկ վստահաբար յունարէնից կամ հայերէնից կատարուած թարգմանութիւնները կարող են ունենալ միջնորդաւորուած ասորաբանութիւններ : Սա ինքնին նշանակում է, թէ թարգմանութիւնը կատարուած է ոչ միաժամանակ եւ ոչ թարգմանչական եղակի կենտրոնում : Խնդիրն այն է, թէ ինչպէ՞ս ժամանակագրել նոյն բնագրում յունաբանութիւնների եւ հայկաբանութիւնների միաժամանակեայ առկայութիւնը,

Ս. Գրոց հայկական եւ վրացական խմբագրութիւնների ուսումնասիրութեանը յատուկ աշխատանք նուիրած Ն. Մառի եզրակացութեամբ սկզբնապէս հայերէնից կատարուած թարգմանութիւնը հետազայում՝ մանաւանդ եկեղեցական բաժանումից յետոյ (VII դար), իբրեւ արդիւնք մշակութային վերակողմնորոշման, ստուգուել-խմբագրուել է ըստ Եօթանասնիցի, իսկ ասորաբանութիւնները նախնական հայերէն թարգմանութիւնից են գալիս² : Բազում օրինակներով հաս-

¹ Առկայ ձեռագրերին, խմբագրութիւններին ու գրականութեանը վերաբերող մատենագիտական ակնարկ տե՛ս «ձշեցոյցնո Եղեմեթիցնո», ՅձՄԵԿՅՁ յճճ. ԳՅԵԿԵԿՅՁՅՁՅՁ, [I], տձ., 1981, ՃՅ. 3-17.

² Н. Марр, Заметки по текстам Св. Писания в древних переводах армян и грузин, - Христианский Восток, т. II, вып. 2, с. 163-174; т. II, вып. 3, с. 263-274; т. III, вып. 3, с. 249-262; т. IV, вып. 3, с. 229-245; Н. Марр, Эчмиадзинский фрагмент древнегрузинской версии Ветхого Завета. - Христианский Восток, т. II, вып. 3, с. 378-388; Н. Марр, Новооткрытый армянский текст "Паралипоменон". - Кавказский Вестник, Тифлис, 1902, N 3-4, с. 66-83. Н. Марр, Отрывок армянского пергаментного Евангелия лапидарным письмом-Христианский Восток, т. IV, вып. 2, вып. 2, с. 195-197.

տատուած այս տեսութիւնը վերջերս վերանայւում է: Ըստ Կ. Դանիւ-
լիայի աշխատանքային վարկածի՝ IV դարի 40-ական թուականներից
մինչև V դարի 60-ական թուականները յունարենից թարգմանուած
Աստուածաշունչը V-VI դդ. միջոցին «պիտի սրբագրուէր ըստ հայկա-
կան աղբիւրի՝ որոշակի շրջանի (բացառուած չէ՝ վրացիացած հայկա-
կան շրջանների) ցանկութիւնները բաւարարելու համար»¹: Իբրև այդ-
պիսի միջավայր մատնացուցւում է Տայքը, ուր հայերը մեծաթիւ էին եւ
կարող էին որոշ գրքեր նոյնիսկ ի նորոյ թարգմանել՝ արդէն հայերէ-
նից: Սոյն վարկածը ընդունելի է նկատում Մցխեթեան գրչագրի հրա-
տարակիչ էլ. Դոչանաշվիլին²: Սակայն այստեղ ժամանակագրական ու
էթնո-աշխարհագրական որոշակի թիւրիմացութիւն կա. Տայքի հայոց
քիչ թէ շատ զանգուածային վրացախօսացում կարող էր սկսուել VIII
դարի երկրորդ կէսից ոչ շուտ, քանի որ Աշոտ Կիւրոսաղատի օրօք
միայն (786-826 թթ.) այն կարող էր Շաւշէթ-Կղարջքի Բագրատու-
նեաց տիրոյթ ընդգրկուել: 726 թ. տեղի ունեցած Մանազկերտի ժողո-
վին մասնակցում էր նաեւ Հայոց եկեղեցուն պատկանող Տայքի Սար-
գիս եպիսկոպոսը³, իսկ 747 թ. արաբների դէմ ապստամբած նախա-
րարները Գրիգոր Մամիկոնեանի գլխաւորութեամբ ապստամբում են
Հայաստանի մաս կազմող Տայքում⁴: Ի վերջոյ, մինչև VIII դարի երկ-
րորդ կեսին ծայր առած վրաց վերաբնակումը (Սամցխէի վրայով) Տայ-
քում վրացի բնակչութեան ներկայութեան մասին աղբիւրները ոչինչ
չգիտեն (խօսքը աւելի վաղ շրջանի ճանոմագրելական ցեղերին չի վե-
րաբերում)⁵:

Այսպիսով, անխախտ է մնում Ն. Մառի եզրակացութիւնը, որը եւ
հաստատում է նորանոր փաստարկումներով⁶:

4.4. Սուրբ Գրքի վրացական խմբագրութեան նախաբնագրի հար-
ցը միայն բնագրագիտական-աղբիւրագիտական հետաքրքրութեան
պարագա չէ. այն արդիւնք է նախորդող շրջանի պատմամշակութային

¹ Ե. Լանջլոյ, Ռամզեյնոյ եպիսկոպոսի Զոմլոյիս շքեղեցի յարտայլոյ
տարգմանիս օնթորոյդան, «տժ., յն. Մրոմյժո» Ե. 183, տժ., 1978, թճ. 111.

² «Մցխեթոյրի եղեհա՛ջրո», թճ. 16-18.

³ «Գիրք թղթոց», էջ 478:

⁴ Պատմութիւն Աւստրոպոլսի մեծի վարդապետի Հայոց, ՍՊԲ., 1887, 122-128:

⁵ Հմատ. օճ. ԶձՅՅՅՅՅՅՅՅՅՅ, տե՛ս յղեղեղեղեղ, Ե. II, տժ. 1983, թճ. 56, 63, 66. օ.
ձՅՅՅՅՅՅՅՅՅՅՅ, յարտայլոյ ճա եւմե՛սրի ճոյժ. յրտոյրտոյժ IX-X եւ.-Մօ, տժ.
1944, թճ. 09-010.

⁶ ՄՅՅՅՅՅ ՄՅՅՅՅՅ, օնթորոյդան Մօնիս ճՅՅՅՅ յարտայլոյ տարգմանեղ, տժ.,
1979. «ճՅՅՅՅ ճլոյթիս ձՅՅՅՅՅՅՅՅՅ յարտայլոյ յերեղեղեղ», յձմեղեղ (Ե.
Երեղեղեղեղ, Ե. I, տժ., 1970, Ե. II, 1973.

դարգացման ընթացքի եւ իրենով պայմանաւորում է մատենագրական, դաւանական ու մշակութային (ներառեալ ճարտարապետութիւնն ու արվեստը) մի ողջ շրջափուլ, որ անարձագանք չի մնում նաեւ վրաց լեզուի պատմութեան մէջ:

Աւելին, Ս. Գրոց վրացական խմբագրութիւնը բացառիկ նշանակութիւն ունի հայկական խմբագրութեան պատմութեան համար: «Մինչեւ հիմա,- գրում էր Ն. Մառը,- շարունակում է գոյատեւել այն համոզմունքը, թէ կարելի է զբաղուել հայերէն բնագրի քննութեամբ՝ առանց գիտենալու վրացերէն բնագիրը՝ իր բազմերանգ պատումներով»¹: Եւ յիրաւի՝ գիտնականը Ս. Գրոց տարբեր հատուածներից քաղուած տասնեակ օրինակներ է բերում, ուր վրացական խմբագրութիւնը պահպանել է նախաբնագիր հայերէնի բառային, ոճական ու քերականական կնիքը, իսկ հայկականը վերանայուել ու վերախմբագրուել է: Հետեւաբար՝ ինչպէս որ հայերէնը աղբիւր կարող է ծառայել ասորական (մասամբ եւ յունական) նախաբնագիրը վերականգնելու համար (Պեշիտոն եւս վերանայման շրջան է ապրել), այնպէս էլ հայկական վաղ խմբագրութեան բնագիրը ճանաչելու հիմնական (եթէ ոչ միակ) աղբիւրը վրացական խմբագրութիւնն է, մանաւանդ նրա Օշկեան (Աթոսեան) տարբերակը: Այս պարագան ընդգծելի է նոյնիսկ ընկալեալ բնագրից աւելի հին ընդօրինակութիւն երեւան գալու պայմաններում: «Մնացորդաց գրքի» Գ. Խալաթեանցի հրատարակութեան քննութեան առիթով Ն. Մառը ցոյց տուեց, որ այն եւս ազատ չէ Եօթանասնիցի հիմամբ սրբագրուած լինելու արդիւնքներից²: Ցաւօք, Աստուածաշնչի առանձին գրքերի մեզանում վերջերս ձեռնարկուած գիտական հրատարակութիւններում արծարծուած խնդիրը չի գիտակցւում, ուստի աշխատանքը մնում է համեմատական մակարդակի վրայ եւ ոչ քննական: Իսկ այդ նշանակում է, թէ հայագիտութիւնը զրկւում է V դարի գրական-մշակութային կեանքը, նրանում եղած տարբեր դպրոցների նախասիրութիւնները, մատենագրական շատ երկերի երեւան գալու ժամանակագրութիւնն ու միջավայրը լիարժէք ճանաչելու հնարաւորութիւնից: Գուցե խիստ, բայց արդարացի է Ն. Մառի պատկերաւոր այն եղբակացութիւնը, թէ «Ս. Գրոց հայկական բնագիրն այն տեսքով, ինչով մեզ է հասել, իրենից ներկայացնում է լիովին անորոշ դեմք. առանց նրա բնագրի նկատմամբ քննական վերաբերմունքի՝ Ս. Գրոց առկայ տարբերակի՝ այսպէս կոչուած հայկական

¹ Н. Марр, Заметки, ХВ, т. II, вып. 2, с. 163.

² Н. Марр, Новооткрытый армянский текст... с. 80-83.

վուլգատայի (A^V) ցուցումները կարող են հաւասարեցուել անտեղեակ անձի վկայական ցուցմունքներին»¹:

5.1. Ինչպէս Հայաստանում, Վրաստանում եւս Ս. Գրոց թարգմանութեանը յաջորդեց եկեղեցու հայրերի երկերի եւ հոգեւոր մատենագրութեան թարգմանութեան բուռն մի շրջան: Եւ դարձեալ՝ այստեղ եւս, ինչպէս Հայաստանում, թարգմանում էին գերազանցապէս յունարենից, բայց երկրորդական չէր եւ հայերէնից, աւելի ստոյգ՝ հայերէնի միջնորդաւորմամբ կատարուող թարգմանութեան պարագան: Աստուածաշնչի հայերէնից կատարուած թարգմանութիւնը միաժամանակ նշանակում էր հայերէնագէտ թարգմանիչների մի ողջ սերնդի պատրաստում: Ինչպէս որ մշակութային աւանդոյթի եւ հմտութեան թելադրանքով հայ թարգմանիչները դիմում էին յոյն հեղինակների գործերի ասորական օրինակներին (Եւսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութիւն», Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»)², այդպէս էլ վրացի թարգմանիչները յաճախ նախընտրում էին այդ նոյն ժառանգութեան հայերէն բնագրերը: Յիշենք, որ Մաշտոցի օժանդակող «այր մի թարգման վրացերէն լեզուին», «այր գրագէտ եւ ճշմարտահաւատ» Ջաղան³ առաջին մեղ ծանօթ վրացի թարգմանիչն է, Կ. Կեկելիձէի բնութագրութեամբ՝ թարգմանիչ հայերէն եւ յունարէն լեզուներից⁴:

Քանի դեռ միջին դարերում վրացերէնի թարգմանուած երկու հարիւր օտար հեղինակների գործերի, ինչպէս նաեւ հարիւրաւոր անանուն երկերի բնագրերը լիովին հրատարակուած ու քննարկուած չեն՝ վաղաժամ է ասել, թէ հայ-վրացական եկեղեցական միութեան մատենագրական շրջանի երկու դարում (V-VI դդ.) քանի՞ յուշարձան է հայերէնից թարգմանուել եւ մասնաւորապէս՝ ո՞ր հեղինակները⁵: Ն. Մառի, Կ. Կեկելիձէի, Պ. Պետերսի, Ժ. Գարիտի, Լ. Սելիքեթ-Բէկի եւ մանաւանդ Ի. Աբուլաձէի աշխատութիւններից քաղած տեղեկութիւնների հիմամբ կարելի է վստահաբար ասել, թէ այդպիսիք սլատկառելի քանակութիւն են կազմում եւ ընդգրկում վաղմիջնադարեան մատենագրութեան գրեթէ բոլոր բնագաւառները: Մօտաւոր պատկերացում տալու համար

¹ Христианский Восток, т. V, вып. I, с. 63. Հայկական բնագրի առանձին գրքերի նորագոյն հրատարակութիւնների մեր քննութիւնը տե՛ս սոյն գրքի յաջորդ գլխում:

² Լ. Յ. Տէր-Պետրոսեան, Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» թարգմանութեան նախօրինակը. ՊԲՀ... 1983, թիւ 2-3, էջ 264-278:

³ Կորիւն, էջ 95:

⁴ Ժ. ՅՅՅՅՅՅՅ, յօտ. ջոճ. օկճ. Բ, թ. 113.

⁵ Վրաց թարգմանական մատենագրութեան մատենագիտութիւն տե՛ս Ժ. ՅՅՅՅՅՅՅ, յճօյճյճօ..., Ժ. V, տճ., 1957, թ. 5-211.

նշենք, որ Մինայում եւ Երուսաղէմում Ն. Մառի գիտարշաւի հաշու-
աւուրթեան տեքստում մեզ զբաղեցնող շրջանում հայերէնից թարգմա-
նուած են նկատում 864 թ. վրաց «Ճառընտրի» նիւթերից Տիմոթէոս
Երուսաղէմացու, Մելիտոս Անտիոքացու, Անտիպատրոս Սոստրացու,
Հիպոդիտէսի երկերը, այլ ձեռագրերում՝ Գրիգոր Պարթեւին, Հռիփսի-
մեանց, Դաւիթ եւ Տիրիճանին ձօնուած շարականներ, տիեզերական
եկեղեցու սրբերին վերաբերող վարքեր ու վկայաբանութիւններ, պա-
րականոններ եւ այլն¹: Աթոսի մայրավանքի ձեռագրերից մեկում (N
57, «Վարք սրբոց») Ն. Մառը թուարկում է հայերէնից թարգմանուած
14 վարք ու վկայաբանութիւն, ընդ որում՝ այն էլ տօնական տարուայ
կէսը ընդգրկող ժողովածոյում²:

Մասնագիտական շրջաններին լաւածանօթ են նոյն Ն. Մառի
խմբագրած «Բնագրեր եւ ուսումնասիրութիւններ հայ-վրացական բա-
նասիրութեան» մատենաշարում եղած մատնացուցելի հրատարակու-
թիւնները (Հիպոդիտայ Բոստրացույ՝ Երգ երգոց մեկնութիւն, «Բա-
րոյախօս»)՝ այլեւ ուրիշ ձեռագրերում գիտնականի բացայայտած ոչ
քիչ թուով այլ թարգմանութիւններ:

Հայ-վրացական բանասիրութեան մնայուն արժէքների թուին
պիտի դասել հանգուցեալ Ի. Աբուլաձէի «Վրաց-հայկական բանասի-
րութեան դրուագներ» յօդուածաշարը՝ իր հրատարակումներով ու
հմտալից քննութիւններով³: Թուարկենք հայերէնից վաղ միջնադա-
րում թարգմանուած եւ այդ յօդուածաշարում ներկայացուած յուշար-
ձանները.

1. Վկայաբանութիւն սրբոյն Փիլիկտիմոնի:
2. Յիշատակ սրբոյն Սարգսի (քաղուած Եւս. Կեսարացու «Եկե-
ղեցական պատմութիւն»-ից):
3. Պատմութիւն վարուց սրբոյն Թեկղեայ աղախնոյ Քրիստոսի:
4. Վկայաբանութիւն սրբոց քառասուն վկայիցն:
5. Վկայաբանութիւն սրբոյն Աբրիանոսի եւ Անատոլեայ:
6. Սեւերիոս Գաբաղոնացի, Ընթերցումն վասն մարտիրոսաց:
7. Նոյնի՝ Ճառ իններորդ ի Բանն Աւետարանին...
8. Նոյնի՝ Վասն առաքելոցն ի կրօնս:
9. Յոհան Ոսկեբերան, Վասն Պահոց...
10. Նոյնի՝ Ի տատրակն...

¹ Н. Марр, Предварительный отчет...

² Н. Марр, Из поездки на Афон. ЗВО, 1899, N 3, с. 16-24 (առանձնատիպ).

³ Ամփոփուած են՝ օ. ձօշղճձձ, Յճաձձձ, Ե. I, տձ., 1975.

11. Կիւրէղ Երուսաղէմացի. Քաղուածք ի գրոցն «Կոչումն ընծայութեան»:

Անհրաժեշտութիւն չկայ յիշեցնելու, թէ, ինչպէս Ս. Գրոց թարգմանութեան առիթով նշուեց, վրացերէն այս թարգմանութիւնները վստահելի սկզբնաղբիւրներ են նրանց հայերէն բնագրերի քննութեան համար, էլ չենք խօսում ընդհանուր մշակութային-մատենագրական, լեզուական-բառագանձային հետաքրքրութեան մասին:

Պիտի յիշեցնենք, սակայն, ահադ. Կ. Կեկելիձէի ամփոփիչ խօսքերը թէ՛ «Թարգմանական երկերը սլատահարար եւ աննպատակ չեն յայտնում այս կամ այն մատենագրութեան մէջ. նրանք կեանքի են կոչուած այն սոցիալական-մշակութային եւ այլ բնոյթի պահանջմունքներով, որոնք առաջադրում է մտքի տեղական հոսանքը: Նրանց օգնութեամբ մենք տեղեկանում ենք՝ ինտելեկտուալ ու բարոյական ի՞նչ հետաքրքրութիւններ են դրդել այս կամ այն ժողովրդին այս շրջանում, ի՞նչ գաղափարներ, մտքեր ու հարցեր են գրաւել նրանց ուշադրութիւնը, ինչպէ՛ս է այն իւրացրել այդ գաղափարներն ու մտքերը, մի խօսքով՝ ինչպիսի՛ն է եղել նրա մտաւոր եւ բարոյական մակարդակը, նրա գեղագիտական-գեղարվեստական ճաշակը եւ գրական զարգացումը»¹:

5.2. Թիւր պատկերացում չստեղծելու համար կրկնենք, որ հայերէնից կատարուող թարգմանութիւնները քրիստոնէական քաղաքակրթութեանը հաղորդակից դառնալու միակ ճանապարհը կամ եղանակը չէր: Նոյն շրջանում եւ աւելի մեծ ծաւալներով ու ինտենսիւթեամբ թարգմանութիւններ եւ փոխադրութիւններ էին կատարում յունարէնից՝ մանաւանդ վրաց մշակոյթի Քրիստոնեայ Արեւելքի կենտրոններում: Եւ ապա՝ հիմքեր ունենք պնդելու, թէ ինչպէս հայասորական, հայ-յունական յարաբերութիւններում՝ վաղմիջնադարեան հայ-վրացական մշակութային-մատենագրական յարաբերութիւնները եւս բացարձակ միակողմանի չէին: Այդ է վկայում «Պատմութիւն սրբոյն Դիոնիսիոսի եպիսկոպոսի Արիսպագացոյ» երկի վրացերէնից կատարուած հայերէն թարգմանութիւնը (հրատարակել է Ն. Ակինեանը, վրացերէն տեքստը լոյս է տեսել Պ. Պետերսի, ապա եւ Ի. Աբուլաձէի աշխատասիրութեամբ)²: Իւրովի մեկնաբանելով հայերէն թարգ-

¹ Ժ. ՅՅՅԵՊՈԺ, «ՅԾՕՅԵՅԾՕ...», Ծ. V, թՅ. 5. Հայերէնից թարգմանուած է նկատուում նաեւ Պ. Պետերսի հրատարակած (Anal. Boll., XLIV, fasc. 1-2, 1926) «Վկայութիւն սրբոց Թեղորոսի, Յիւլիանոսի...» երկը (տե՛ս Ժ. ՅՅՅԵՊՈԺ, նշւ. աշխ., հտ. VIII, էջ 372-373):

² «Հանդէս ամսօրեայ», 1913, էջ 641-660, 1914, էջ 205-218: Վերահրատարար-

մանութեան յիշատակարանի տարբերակների այլընթերցումները (Թուական՝ ՅԻԹ (329) եւ ՅԺԸ (318), բնագրի՝ «ի յունականէն ի վիսիական, իսկ ի մերո թարգմանեաց Յովաննէս բժիշկ») ¹, Ն. Ակիւնեանը կարծում է, որ հայերէնը թարգմանութիւն է արաբերէնից կամ ասորերէնից, իսկ թարգմանութեան ժամանակը IX դարն է: Սակայն վաղուց արդեն պարզուած է, որ վիսիական-ը ուրիշ բան չէ, քան Թէոդոս Մեծի եւ Սաբա Արղարի վարքերում (երկուսն էլ գրուած VI դարում) յիշատակուող Βεσσοζ, Βησσοϋ էթնանունը, որ լազ է նշանակում, իսկ լազերի արարողական եւ մատենագրական լեզուն վրացերէնն էր ²: Եւ յիրաւի, Պ. Պետերսն ու Ի. Աբուլաձէն Յովհաննէս բժիշկի թարգմանութեան բնագրում ոչ միայն ակներեւ վրացարանութիւններ, այլեւ այդ հիմքի վրայ դոյացած non sens-ներ են բացայայտել ³: Թարգմանութեան թուականի հարցում, մեր կարծիքով, ճիշտը Ն. Ակիւնեանի առաջարկած, բայց եւ տեղում մերժած «յԻԹ» կամ «յԺԸ» (29 կամ 18) ընթերցումն է (իմա՝ «ի քսաներորդ իններորդ թուականիս» կամ «յիննեւտասաներորդ թուաբերութեանս»), այսինքն՝ Վիրկիլական 569 կամ 580 թուականն է: Ճիշտ այդ ժամանակներին են վերաբերում բեսեր/վիս-երի յիշատակութիւնները բիւզանդական վարքերում: Նոյնական է եւ յիշատակութեան միջավայրը՝ Պաղեստին-Երուսաղէմ:

Այսպիսով, մեզ գրադեցնող շրջանում հայ-վրացական գրական-մշակութային վերաբերումները միակողմանի չէին:

5.3. Ենթադրելի է, որ հայերէնի թարգմանուած երկերի վրացերէնն ունենալուն այնքան նախանձախնդիր վրացի մատենագիրներն ու հոգեւոր գործիչները ուշադրութեան պիտի առնէին նաեւ հայերէնով ստեղծուող ինքնուրոյն մատենագրութեան երկերը: Մենք այստեղ V-VI դդ. շրջանակում, քննութեան չենք առնելու շուրջ երկու տասնեակ վարքագրական-վկայաբանական այն յուշարձանները, որոնք ստեղծուել են հայոց եկեղեցու պատերի ներսում՝ տեղական պահանջ-մունքի թելադրանքով եւ վրացերէն թարգմանութեամբ պահպանուել

կութիւնը տե՛ս Ն. Ակիւնեան. Նիւթեր հայ վկայաբանութեան ուսումնասիրութեան համար. Վիեննա, 1914, էջ ԻԲ-ԼԱ, 35-42: "Analecta Bollandiana". t. XXXIX p. 227-315, ո. ձծյլճոձյ, յճճո. ճոձ ԵոձԵ. ճոձԾ. յճճոձյճոձոձոձ, թճ. 133-147.

Վերջինիս մօտ առկայ է եւ հայերէն բնագրի գիտական տեքստ:

¹ Յիշատակարանը նորերս վերահրատարակուել է Ա. Մաթեւոսեանի կաղմած «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» (Ե-ԺԱ դար) ժողովածոյում (Երեւան, 1988, էջ 38) եւ դետեղուել է ՅԻԹ (880) թուականի տակ:

² Ե. ԵԵԵԵճոձյ, յոձ ԳճոձԵ թճԵթձո?, «յԾճոյճոթձո...», 1, թճ. 84-98.

³ Մանասորասպէս՝ ո. ձծյլճոձյ, թճոձթձո, 1, թճ. 7-9.

էլ փրկուել են հին վրացերէն թարգմանութեան շնորհիւ, սակայն մենք այստեղ այդ երկերը եւս քննութեան չենք առնում, որովհետեւ թարգմանութիւնը կատարուել է եկեղեցական բաժանումից բաւականաչափ ժամանակ անց¹:

Ամփոփելու համար ասենք, որ հայոց ինքնուրոյն մատենագրութիւնից կատարուած վրացերէն այս թարգմանութիւնները եւս ունեն կարեւոր բնագրագիտական արժէք: Նախ՝ նրանք զերծ են ազգային միջավայրում հայերէն բնագրերի կրած խմբագրական կամ այլ բնոյթի փոփոխութիւններից, շատ յաճախ թարգմանուած են այնպիսի տարբերակներից, որ հայերէնով աւանդուած չեն եւ, վերջապէս, առանձին դէպքերում մեզ հասած վրացական ընդօրինակութիւնները հարիւրամեակներով կանխում են նրանց հայերէն բնագրերի ընդօրինակման ժամանակը (մասնաւորապէս այդ վերաբերում է «Շատրերդեան ժողովածուին» եւ Աթոսի «Վարք սրբոց»-ին):

5.4. Մատենագրական այս ողջ շղթայի ինքնայատուկ կարեւորութեան երեւելի օղակն, անշուշտ, «Շուշանիկի վկայաբանութիւնն» է, որ ստեղծուել է V դարի 70-80-ական թթ. եւ մեզ հասել վրացերէն եւ հայերէն ինքնակայ խմբագրութիւններով: Պատմականութեան առումով այն Վահանանց ապստամբութեան եւ Վախթանգ Գորգասալի աղտագրական պայքարին ու բարեփոխումներին նախորդող Այսրկովկասի կացութեան դրվագային արտացոլումն է: Իբրեւ ստեղծագործութիւն՝ այս վկայաբանութեամբ է սկսվում վրաց ինքնուրոյն մատենագրութիւնը՝ տեղական նիստուկացի, քաղաքական-դաւանական կողմնորոշումների, հասարակական հնչեղութիւն ունեցող անցողարձերի ճշմարտացի պատկերումով: Հայոց գեղարուեստական ժառանգութեան պատմութեան համար կարեւոր է այս երկի ոգին՝ այն, որ Վարդանանց նահատակների ժառանգները հարադատ են նախնեաց ուխտին եւ շարունակում են Եղիշէի պատկերած «փափկասուն տիկնանց» առաքելութիւնը:

Վկայաբանութիւնը որքան առինքնող է իր բովանդակութեամբ ու նովելային լուծումներով, նոյնքան բարդ է ու հակասական բնագրագիտական առումով: Նրա հայկական եւ վրացական խմբագրութիւնները իրար չեն ծածկում. կարեւոր շատ դրուագներ մեկում կան, միւսում՝ ոչ, մէկում ականատես եւ առաջին դէմքով պատմող հեղինակ կայ, միւսում՝ ոչ, մէկում սիւժետային շղթան է ընդգծուած, միւսում՝

¹ Բնագրերի հայերէն վերաթարգմանութիւնը տե՛ս Պ. Մուրադեան. Հայերէն բնագրով չպահպանուած վարքագրական երկու յուշարձան. «Բանբեր Մատենագրաւոր», հտ. 12, Երեւան, 1977, էջ 168-190:

մենախօսական մտորումը եւ այլն: Նման սլարազաներում անբնական չափսի նկատել յուշարձանիս զնահատութեան բեւեռացումները մասնագիտական գրականութեան մէջ, մանաւանդ՝ ի՞նչ լեզուով է այն նախապէս գրուել, թարգմանականը հայերէ՞ն է, թէ՞ վրացերէնը, մէկում եղածի բացակայութիւնը միւսում կրճատումով բացատրել, թէ՞ նախնականի վրայ կատարուած յաւելումով: Այս խնդիրների քննութեանը ոչ քիչ թուով մենագրութիւններ ու յօդուածներ են նուիրուել (Պ. Պետերս, Կ. Կեկելիձէ, Ի. Ջաւախիշվիլի, Մ. Աբեղեան, Ի. Աբուլաձէ, Ն. Լ. Ջանաշիա, Շ. Օնիանի եւ այլք)¹: Վերջերս մենք եւս առիթ ունեցանք վկայաբանութեան բնագրի համահաւաք հրատարակութիւն պատրաստելու կապակցութեամբ արծարծելու վերոնշեալ ու այլ խնդիրները: Մեր եղբակացութեամբ՝ նախնական բնագրի հեղինակը Շուշանիկին հայրական տնից ի վեր ուղեկցող, նրա երեխաների կնքահայր եւ վկայի խոստովանահայր Անդրէաս երեցն է, որի մասին տեղեկութիւններ է հաղորդում Ահարոն Վանանդեցին: Այդ նախնական բնագրի հիմքի վրայ, իբրեւ Շուշանիկի յիշատակի օրվա ընթերցելիք, Գուգարքում երկլեզու ժամասացութեան թելադրանքով, մշակուել է ազգային երկու խմբագրութիւն՝ հայերէն եւ վրացերէն, որոնք այնուհետեւ անցել են զարգացման՝ սրբագրման ու խմբագրման ինքնուրոյն ճանապարհ: Այդ պատճառով է, որ վրացերէնում չենք գտնում ակներեւ հայկաբանութիւններ, հայերէնում՝ վրացաբանութիւններ:

Վրացականի զարգացումն ընթացել է պատմականութեան պահպանման եւ իրապատում դրուագների յաւելման մտայնութեամբ, հայկականը գերադասել է զուտ վարքագրական-վկայաբանական յօրինուածքը՝ Հռիփսիմեանց վկայաբանութեան նմանողութեամբ՝ նոր մենախօսութիւններ եւ նահատակի փառաբանման չափազանցութիւններ աւելացնելով:

«Շուշանիկի վկայաբանութիւնը» ամփոփումն է նախընթաց տասնամեակների երկլեզու, բայց միաօգի դպրութեան զարգացման, այն հանգրուանը, որին պիտի հասնէր դաւանակցութեան շուրջ երկուհարիւրամեայ տեղական քրիստոնէական քաղաքակրթութիւնը՝ մերթ իրար թարգմանելով, մերթ երրորդ նոյն աղբիւրից սնուելով: Թէ հայոց եւ վրաց պատմութեան համար ինչ կշիռ ու նշանակութիւն ունէր այդ ոչ այնքան տեւական շրջանը՝ կարելի է հաւաստիանալ Աբրահամ կաթողիկոսի՝ առ Կիւրիոն Վրաց կաթողիկոսը գրած առաջին թղթի վկա-

¹ Առ այսօր եղած գրականութիւն եւ բնագրերի հաւաքական հրատարակութիւն տե՛ս Պ. Մուրադեան, Սուրբ Շուշանիկի վկայաբանութիւնը, Երեւան, 1996:

յակոչութեամբ «...դի զմիաւորութիւն հաւատոյ եւ զասպնջականութիւն զերկոցունց աշխարհացս Յուրտաւայ եկեղեցին անշարժ միջնորդութեամբ պահէր, ուստի սէր եւ խնամութիւնք մարմնաւորականք եւ հաղորդութիւնք հոգեւորականք կատարէին ցնծալից ուրախութեամբ՝ աստի ի Մծխիթայ ի Խաչն գալով, եւ այտի՝ ի սուրբ Կաթողիկէ»։ Եւ «զպաշտաւնն հայերէն սրբոյ Շուշանկան զկարգաւորեալն» փոխելու լուրը հայոց կաթողիկոսին «մահու չափ եւ եւս չարագոյն թուեցաւ գործդ այդ»¹ :

Այլ հարց է, թէ սոյն խօսքերից յետոյ իրադարձութիւններն ինչ ընթացք ունեցան եւ ինչ թելադրանքներով զարգացան, բայց կարող ենք փտտահաբար ասել, որ հաղարամեակներով ամրագրուած մշակութային հարամերձութիւնը (сродство) չէր կարող ընդհատուել եւ իրականում էլ չընդհատուեց։

¹ «Գիրք թղթոց», էջ 316-317:

ԿՈՎԿԱՍԵԱՆ
ԵՐԵՔ ԴՊՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՍԿՋԲՆԱԻՈՐՈՒՄԸ

Կովկասը, մասնաւորապէս Հարաւային Կովկասը, զիր ու դպրութիւն ճանաչող հնագոյն աշխարհագրական կենտրոններից է: Այս եղրակացութիւնը հիմնաւորող մի քանի փաստարկումներ կան: Եթէ անգամ դանց առնենք Այսրկովկասի տարածքում, այդ թւում Հայաստանի լեռներում, պահպանուած եւ հատորներով հրատարակուած ժայռապատկերների գոյութիւնը, անկարելի պիտի լինի Վանի թագաւորութեան ժամանակագրական ու տարածքային շրջանակներում գործածութիւն ունեցող մեհենագիր (հիերոգլիֆ) արձանագրութիւններն անտեսել: Այս կարգի նիւթերի՝ վերջերս հրատարակուած դիւանը (կազմող՝ Ա. Մովսիսեան) բովանդակում է 1350 միաւոր: Վերծանութեան կամ իմաստաւորման փորձերը խիստ պայմանական են, անյայտ է լեզուական ատաղձը, բայց ուրարտական շրջանի շուրջ երկու տասնեակ հիերոգլիֆներ նմանակներ կամ զուգահեռութիւններ ունեն հրապարակուած ժայռապատկերներում եւ նոյն քանակութեան տարբերակումներ կան Հայոց միջնադարեան ձեռագրերում պահպանուած նշանագրերի ցանկերում: Ժայռապատկերների շրջանից (հինգերորդ-չորրորդ հազարամեակ) մինչեւ Վանի թագաւորութիւն (9-7-րդ դարեր) ու Քրիստոսի ծննդեան հազարամեակի սկիզբ եղել, ճանաչուել ու մասնակի գործածութիւն է ունեցել գրութեան այդ համակարգը: Ըստ երեւոյթին բաւարար զարգացման չի հասել, ուստի ու ուրարտական արքաները իրենց արձանագրութիւնները կազմել ու փորագրել են հին Արեւելքի սեպերի համակարգով, բայց իրենց լեզուով:

Վերջերս պատմական Հայաստանի եւ յարակից շրջանների տարածքում պահպանուած եւ առեղծուածային ծագում ու բովանդակութիւն ունեցող արձանագրութիւնների միջից տիպարանական-պատկերային հիմքի վրայ առանձնացուեցին գրութեան ինքնուրոյն համակարգ եւ գործածութեան որոշակի ոլորտ ենթադրող արձանագրութիւններ: Ի. Ի. Մեչչանինովի, Բ. Ա. Կուֆտինի, Օ. Մ. Զափարիձէի, Յ. Ա. Մարտիրոսեանի եւ այլոց փաստագրում-քննարկումներին այժմ աւելացել են նորերը, եւ Ա. Մովսիսեանի վերջերս կատարած հրա-

պարակմամբ կազմել 300 միաւոր: Եթէ դատենք ըստ համեմատական տախտակների, այս՝ պայմանականորէն գծային կոչուած գրերի կամ նշանների մէջ կան թէ ժայռապատկերների, թէ մեհենագրերի (հիերոգլիֆների) հետ նոյնացող կամ ընդհանուր միաւորներ: Մասնագիտական գրականութեան մէջ տեղական «գծային գրի» այս նմոյշները ենթադրարար թուագրւում են Քրիստոսից առաջ 3-1-րդ հազարամեակներով, ուստի եղրակացւում է, թէ ժայռապատկերներից մինչեւ գծային գիրն ու ուրարտական մեհենագրերը մինչեւ փանդունեան Հայաստանի տարածքում գրաւոր մշակոյթ է եղել՝ առանց ընդհատման:

Գրաւոր մշակոյթի զարգացման պատմութեան մէջ կարեւոր փուլ է Հարաւային Կովկասում՝ Ուրարտու կամ Վանի թագաւորութիւն (Բիաինա) կոչուած կազմաւորման տարածքում կիրառուող սեպագրութիւնը: Անկախ այդ սեպագրութեան լեզուի գործածութեան ընդհանուր խօսակցական կամ դուտ արքունական-պաշտօնական լինելուց, ծաւալուն տարեգրութիւններ ու պատմողական (նարատիւ) տեքստեր ներկայացնելը, որպիսիք արդեն բազմիցս հրատարակուել են դիւանի տեքստով (վերջին լիակատար հրատարակութիւնը պատկանում է Ն. Յարութիւնեանին, ուսերէն լեզուով, Երեւան, 2001 թ.), ապացոյց է զարգացած գրային մշակոյթի ու համակարգի առկայութեան: Նրա տեւականութեան եւ ընդգրկունութեան մասին են վկայում պահպանուած բառային փոխառութիւնները, առաւել եւս՝ մի շարք տեղանունների գրեթէ անխաթար պահպանումը Այսրկովկասի պատմական տեղանունական համակարգում: Վերջին տարիներին նկատելի շատացել են այժմեան տեղական լեզուներից (նաեւ պանթեոնից) ուրարտերէնում կատարուած փոխառութիւնների (Գ. Զահուկեան) արձանագրումները: Ուրեմն աւելի փստահ կարելի է խօսել գրաւոր մշակոյթի տեղական կովկասեան աւանդոյթի մասին:

Մ. թ. ա. 6-րդ դարից մինչեւ մ. թ. 4-րդ դարը ներառելով՝ շուրջ մէկ հազարամյակ, Կովկասում եւ անմիջականորէն նրան յարող տարածքներում գրաւոր մշակոյթը, ըստ առկայ միաւորների, աւանդուած է բացառապէս ոչ տեղական լեզուներով: Այսօր մենք կարող ենք խօսել այդ տարածքում գործածուած յունարէն, արամեէրէն, լատիներէն, պահլաւերէն լեզուների եւ նրանցով գրուած յիշատակարանների մասին: Ինչո՞վ բացատրել գրաւոր մշակոյթի այսպիսի շեշտակի շրջադարձը էթնիկական նկարագրի առումով էական փոփոխութեան բացակայութեան պարագայում. գաղափարագիր եւ վանկագիր համակարգերի անկատարութեամբ ու հնչիւնային գրի անցնելու անկարելիութեամբ (բայց այդ առումով արամեական-պահլաւական գրի համակարգն էլ

կատարեալ չէր), թէ՛ նախնախնայական շրջանում այդ լեզուներն ու դպրութեան համակարգերը գործածող հանրութիւնների եւ կազմաւորումների քաղաքական-մշակութային ազդեցութեան ծաւալի մեծացումով: Այսինքն՝ Կովկասեան բազմէթնիկ միջավայրում տեղի ունեցավ մի տեսակ մշակութային համահարթում, մանաւանդ հեյլենիզմի ոլորտ ընդգրկուելով: Ուրարտական շրջանի գրաւոր յիշատակարանները գրեթէ առանց բացառութեան (չհաշուած տարողութեան նշումները) պաշտամունքային-պատերազմական եւ շինարարական բովանդակութիւն ունեն, մինչդեռ փոխարինելու եկած լեզուներն ու գրութեան համակարգերը անհամեմատ լայն կիրառութիւն են վկայում (տապանագրերից մինչեւ գեղեցիկ գրականութիւն): Ուրեմն այս շրջանում հեյլենիզմի հաստատմամբ փոփոխութիւն է կրում նաեւ գրաւոր խօսքի գործառութիւնը: Այդ իրողութիւնը ապացուցող փաստերից մէկն էլ Հերմէս եւ Ապոլոն աստուածներին (քրիստոնեայ հայոց մօտ՝ չաստուածներին) երկրորդող կամ կրկնող գիտութեան, դպրութեան եւ պերճախօսութեան հովանաւոր կամ պաշտպան Տիր աստծոյ ներկայութիւնն է Կովկասեան դիցարանում: Ազաթանգեղոսի տեղեկութեամբ Տիրի մեհեանը գտնւում էր Արտաշատի ճանապարհին եւ կոչւում էր նաեւ «Դիւան գրչի Որմզդի»: Որ յիրավի դպրութեան այդ պաշտպանը կար եւ վրաց հեթանոսական դիցարանում, կարելի է փտահանալ հին վրացական «Տիրիսկանի» եւ «Տիրիսդինի» ամսանունների ստուգաբանութեամբ:

Հեյլենիզմի շրջանում մշակութային դաշտի ընդարձակումը նախատաւոր եղաւ նաեւ նոր վարդապետութեան՝ քրիստոնէութեան քարոզչութեան համար: Առաջին հերթին նկատի ունենք էթնիկական երեք զանգուածային միաւորների՝ հայերի, վրացիների եւ աղուանների մշակութային կեանքում նոյնական կամ ընդհանրական ինստիտուտների ծաւալումը: Նոր կրօնի քարոզչութիւնը պահանջում էր Ս. Գրքի, մանաւանդ Նոր Կտակարանի թարգմանութիւն Այսրկովկասի հանրութեանը հասկանալի լեզուով, իսկ տեղական լեզուները՝ հայերէն, վրացերէն, աղուաներէն որքան էլ ընդհանրութիւններ ունենային՝ հիմնովին տարբեր կառուցուածք ունեին: Ի տարբերութիւն այլ տարածաշրջանների, այստեղ զանգուածային կրողներ ունեցող լեզուներից, ինչպէս արդէն ասել ենք, ոչ մեկը lingua franca չէր, ուստի սպասելի էր, որ քարոզչութիւնը տարուել քրիստոնեայ Արեւելքի գիր ու գրականութիւն ունեցող լեզուներից մէկով՝ ասորերէն, յունարեն կամ պարսկերէն: Աղբիւրների վկայութեամբ (Կորիւն, Փաւստոս, Խորենացի, Փարպեցի) մէկ հարիւրամեակ, ողջ չորրորդ դարը, Հայաստանում

(Հարկաւ նաեւ Վիրքում եւ Աղուանքում) քարոզչութիւնը օտարալեզու էր, եւ սակաւաթիւ մարդկանց բացառութեամբ, նախարար կամ շինական՝ ոչ ոք ոչինչ չէր հասկանում (Փաւստոս, Գ, 13), որովհետեւ հելլէն եւ ասորի «գրագիտութեան արուեստից զուրկ էին»:

Չորրորդ դարի մշակութային այս իրավիճակը՝ հասկանալի լեզուով գրականութեան անհարժեշտութիւն, բայց չգոյութիւն, բացատրելու փորձերի մէջ ուշագրաւ երկու ենթադրութիւն կայ. նախ՝ կիրառուել է բանաւոր թարգմանութեան աւանդոյթ, երբ ասորերէն կամ յունարէն կանոնական տեքստը կարդացուել է հայերէն (հաւանաբար արդպէս էլ Վիրքում՝ վրացերէն, Աղուանքում՝ աղուաներէն կամ գարգարերէն): Ապացոյցը Ս. Գրքի որոշ հատուածների կրկնական թարգմանութիւններից բացի, նման իրավիճակի՝ հեթերոէպիկ տեքստերի առկայութիւնն է արամէա-պարսկական միջավայրում, երբ արամէերէն գրութիւնը կարդալիս հնչում է պարսկերէն: Այս տեսութեան հիմնական զարգացնողներն են Մ. Օրմանեանը եւ Գ. Սարգսեանը: Ենթադրուում է, որ Գրիգոր Լուսաւորչից սկսած մինչեւ Մաշտոց պիտի ստեղծվեր ու անհրաժեշտաբար ստեղծուել է օտարալեզու հայ գրականութիւն կամ նոյնիսկ՝ օտարագիր հայերէն գրականութիւն: Այս տեսութեան ապացոյցների թւում յիշում են այլեայլ կողմնակի վկայութիւններ (Օղիւմպ քուրմ, Բարդաձան, Հիպոդիտէս եւ այլք), ինչպէս նաեւ Լուսաւորչի, Ներսէս Պարթեւի եւ չորրորդ դարի այլ գործիչների անուններով պահպանուած երկերը: Այս թեղիսի հետեւորդների մէջ ամենից աւելի փաստարկուածը Լեւոն Խաչիկեանի ուսումնասիրութիւնն է, ուր նա մերժում է նախամաշտոցեան հայագեղու գրականութեան գոյութիւնը եւ փաստարկում օտարալեզու հայ գրականութեան առակայութիւնը:

Չորրորդ դարի իրավիճակը մենք ներկայացրինք միայն հայկական իրողութիւններով: Վրացական (աւելի շուտ՝ արեւելավրացական) պարագան այլ է՝ եթէ նկատի ունենանք վրացագիտութեան մէջ այսօր համոզմունք դարձած դրոյթը, ըստ որի, եթէ ոչ մ. թ. ա. եօթերորդ կամ երրորդ դարերում, ապա գոնէ մ.թ. չորրորդ դարում գոյութիւն ունէր վրացական ազգային գիր ու դպրութիւն: Այս դրոյթները, հակառակ առաջադրողների պատկառելի հեղինակութեանը (Ջաւախիշիլի, Ծերեթեյի, Գամդրեյիձէ) դուրս հայեցողական են եւ փաստական հիմնաւոր ապացոյց չունեն: Աղուանական այբուբենի մասին կարելի է ասել, թէ իրօք գոյութիւն է ունեցել եւ սերնդակից է միւս երկու այբուբեններին: Օտարալեզու քարոզչութեան անարդիւնավետութիւնը եւ տեղական ընդհանրական լեզվի չգոյութիւնը հարկադրեցին ընտրել

երեք լեզուներով երեք ինքնուրոյն գիր ու դպրութիւն ստեղծելու ուղին: Դատելով Կորիւնի եւ միւս աղբիւրների տեղեկութիւններից, յոյն եւ ասորի մշակութային կենտրոններն ու Արեւելեան եկեղեցու կարեւորագոյն աթոռները (Անտիոք, Կեսարիա, Երուսաղէմ) ոչ միայն չհակառակեցին, այլեւ նպաստեցին (Բարսեղ, // Հռոփանոս, Դանիէլ եւն): Փաստօրէն ազգային լեզուներով դպրութիւն ստեղծելը եկեղեցու ազգայնացման առաջին լուրջ քայլն էր:

Կորիւնի «Վարք ս. Մեսրոպ Մաշտոցի» շնորհիւ հայոց այբուբենի ստեղծողը, ստեղծման ժամանակն ու պարագաները լիովին յայտնի են (վերջերս երեւան են գալիս նոր «տեսութիւններ», որոնք փորձում են տառապատկերները ետ տանել մինչեւ ժայռապատկերներ ու գաղափարագրեր, սակայն նման հարցադրումները պարզասպէս արտագիտական են): Ինչ վերաբերում է վրաց եւ աղուանից այբուբեններին, ապա վերստին արժէ յիշեցնել այն իրողութիւնը, որ հինգերորդ դարից առաջ Վրաստանում եւ Աղուանքում գրուած արձանագրութիւնները բոլորը օտարալեզու եւ օտարագիր են: Եթէ տեղական գիր ու դպրութիւն լինէր մինչեւ այդ, ապա կարող էինք նմոյշ ունենալ:

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԲՆԱԳՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

(ԱԹՈՍԻ 978 ք. ԳՐՉԱԳԻՐԸ)

Ս. Գրոց հայկական խմբագրութեան ուսումնասիրութեան մարզում վերջին տասնամեակների հայագիտութիւնը կարեւոր առաջընթաց ապրեց. Յ. Անասեանի «Հայկական մատենագիտութեան» երկրորդ հատորի հրատարակութեամբ այլեւս ունենք Աստուածաշունչ մատենանի հայկական բնագրի հրատարակութիւնների ու գրականութեան լիարժէք մատենագիտութիւն¹, Շահէ արքեպ. Աճէմեանի եւ Օնիկ Եզանեանի աշխատասիրութեամբ լոյս տեսաւ սուրբգրական բնագրեր բովանդակող ամբողջական ու հատակոտոր ձեռագրերի նկարագրութիւն², Հայաստանում եւ արտասահմանում տեղի ունեցան մասնագիտական խորհրդակցութիւններ ու գիտաժողովներ, ուր նախապատրաստական խնդիրներ եւ բնագրագիտական սկզբունքներ քննարկուեցին³, ի վերջոյ՝ լոյս տեսան պրոֆ. Մ. Սթոնի, Կ. Կոքսի, Պ. Քաուէի պատրաստած հրատարակումները⁴ եւ մանաւանդ՝ Ա. Զէյթունեանի աշխատասիրած չորս գրքերը՝ «Գիրք ծննդոց», «Գիրք ելից», «Գիրք Ղեւտացւոց», «Գիրք թուոց»: Վերջերս այս ցանկն հա-

¹ Յ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հատոր Բ, Երեւան, 1976, էջ 309-606:

² Շահէ արքեպիսկոպոս Աճէմեան, Յուլյակ Աստուածաշունչ մատենանի հայերէն ձեռագիրներուն, Լիդսոն, 1992:

³ Տե՛ս Շ. արքեպ. Աճէմեանի եւ Մ. Սթոնի հրատարակումը՝ Textus. Annual of the Hebrew University Bible Project. Jerusalem, 1973, vol. VIII, pp. 107-125. Անդրանիկ Զէյթունեան, Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան ձեռագրական միաւորների դասակարգման մասին, «Բանբեր Մատենադարանի», N 12, Երեւան, 1977, էջ 295-304: Armenia and the Bible, edited by Christoph Burchard, Atlanta, Georgia, 1993, "Célébration centenaire de la traduction arménienne de la Bible" (19 Mars 1936), Paris. "Armenian Texts Tasks and Tools", Edited by Henning Lehmann and J. J. S. Weitenberg, Aarhus University Press, 1993. «Աստուածաշունչական Հայաստան», Երեւան, 2005:

⁴ Նրանց մասին տե՛ս Շ. արքեպ. Աճէմեան, Յուլյակ... էջ LVI-VII.

մայրուեց Հ. Ամալեանի սլաօրաստած «Գիրք Մակարայեցւոց» (քննական բնագիր) հրատարակութեամբ¹:

Գումարէք այս թուարկումին առանձին հեղինակների օժանդակ հրապարակումները², սուրբագրական բնագրերի մեկնութիւնների յանդէպ աճող հետաքրքրութիւնը (Լ. Խաչիկեան, Կ. Մուրադեան եւ այլք)³, աշխարհաբար թարգմանութեան նոր օրինակները եւ բազում այլ իրողութիւններ, եւ ակներեւ կղաւնայ, որ 1773 թուականին Սարգիս վրդ. Մալեան Հաճրնցու սկսած Ս. Գրքի հայկական խմբագրութեան դիտական հրատարակութեան փորձը, դանադան հանդրուաններ ունենալով, աստիճանաբար գործնական կերպարանք կատանայ: Եւ ճիշտ այդ պարագայի թելադրանքով է, որ ստորեւ պիտի փորձենք փաստական եւ մեթոդական որոշ նկատառումներ ու դիտարկումներ հրապարակել՝ աչքի առաջ ունենալով լոյս տեսած գրքերի «քննական բնագիր» որակումը:

1. Անշուշտ իրաւացի են աշխատասիրողները, երբ բնագրական քննութիւնը կատարում են ըստ հայերէն առկայ ձեռագրերի, խմբաւորելով այդպիսիք ըստ ընթերցումների մերձութեան, հնութեան եւ այլեւայլ որակների, օտարելով բնագրական առումով սրբագրելիք չբովանդակող այլագրութիւնները: Ծննդոց գրքի 106 ձեռագրերից Ա. Զէյթունեանը համեմատութեան է առել 43-ը, եւս 18 պատառիկ, 9 ձեռագիր եւ 1 տպագիր ճաշոց: Վերջերս նա այս ցանկը լրացրեց հատակոտորների մի նոր խմբով եւս:

ԺԲ դարին նախորդող ամբողջական ձեռագրի բացակայութիւնը, թեկուզ Ժ-ԺԱ դարերի պատառիկների առկայութեամբ, աշխատասիրողին զրկում է վստահաբար ընտրութիւն կատարելու հնարաւորութիւնից: Այստեղ նկատառելի է երկու պարագայ. Ե դարի փութանակի (նախսեփեսոսեան) թարգմանութեան եւ Սահակ-Մեսրոպեան վերանայում-վերախմբաւորումից յետոյ եւս Զ-Ժ դարերի միջոցին Կ. Տէր-Մկրտչեանի խօսքերով «ոսկեդարեան թարգմանութիւնը անդադար սրբագրուել եւ յարմարեցուել է Եօթանասնից թարգմանութեան»: Արդ, ճշգրտելի է՝ «Քննական բնագիր» կոչուածը «ոսկեդարեան»

¹ Գիրք ծննդոց, քննական բնագիր, աշխատասիրութեամբ Ա. Ս. Զէյթունեանի, Երեւան, 1985: Այս հրատարակութեան մասին տե՛ս Archbishop Shahe Adjamian, Commentaire sur l'edition critique du Livre de la Genese en arménien. "Armenian Texts Tasks and Tools", pp. 57-64.

² Առաջին հերթին նկատի ունենք «Էջմիածին» հանդէսի 1966 թ. բացառիկը՝ նուիրուած Աստուածաշնչի առաջին տպագրութեան 300-ամեակին:

³ Լեւոն Խաչիկեան, Եղիշէի «Արարածոց մեկնութիւնը», Երեւան, 1992: Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցաւրեայ արարչութեան, աշխատասիրութեամբ Կիմ Մուրադեանի, Երեւան, 1981

Թարգմանութեան վերականգնում պիտի հասկանայ, թէ՞ «անդադար սրբագրում-յարմարեցումների» մէկտեղում: Եթէ Ս. Գրոց հայկական խմբագրութիւնը մերթ Որոզինեան վեցիջեանին է յարում, մերթ Ղուկիանեան խմբագրութեանը, ապա ընթերցումներն ընտրելիս նրանցից որի՞ն պիտի առաջնութիւն տրուի: Հետազօտողները ասորաբանութիւնների ու յունարանութիւնների համագոյ ներկայութեան բազում ապացոյցներ են արձանագրել, «քննական բնագիր» կազմելիս ստուգութեան ելակէտը Պեշիտոն է (որը ինքը ոչ քիչ վերանայումներ է ապրել), թէ՞ Եօթանասնիցը, ըստ որի կատարուել են Ե դարի եւ յաջորդող շրջանի սրբագրումները: Ինչպէ՞ս վարուել յատուկ անունների մերթ ասորական եւ մերթ յունական գրադարձումների հետ՝ հրատարուել միօրինականութեան բերելուց եւ թողնել եւ այս եւ ա՞յն:

Այս հարցերը, հակառակ մեր սպասումներին, տակաւին մնում են արծարծելի: Նման պարագայում արդեօ՞ք նախընտրելի չէ ձեռագրական խմբերը, եթէ այդպիսիք թարգմանութեան կամ խմբագրման-սրբագրման տարբեր աստիճաններ են ներկայացնում, համփոփել մէկ բնագրի շրջանակում, այլ տալ իբրեւ առանձին պատումներ, եւ հրատարակութիւնը կոչել «Նիւթեր քննական հրատարակութեան համար»: Ստորեւ կհամոզուենք, որ նման վերտառութիւնը լիովին պատճառաբանուած պիտի նկատուէր:

2. Մասամբ հասկանալի, մասամբ՝ ոչ այնքան, պատճառներով Աստուածաշնչի հայկական խմբագրութեան ուսումնասիրութիւնը կարելիից աւելի «արեւմտականացաւ», գրեթէ մոռացութեան մատնելով հայագիտութեան արեւելահայ կենտրոնների, աւելի ստոյգ՝ ռուսական հայագիտութեան նուաճումներն այդ մարզում: Վերջին տասնամեակներին լոյս տեսնող մասնագիտական գրականութեան մէջ գրեթէ յիշատակուած չենք գտնում Մեսրոպ Մագիստրոսի (Տէր-Մովսէսեան) «Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան պատմութիւն» ռուսերէն ընդգրկուն աշխատութիւնը¹, ինչպէս որ յանիրաւի անուշադրութեան են մատնուած ակադ. Ն. Մառի աստուածաշնչագիտական մի քանի փաստալից ու հիմնարար հետազօտութիւնները²: Մեր խօսքը ամենեւին հարցի մատենագիտական լիարժէքութեան մասին չէ, այլ այն փաստական նուաճումների մոռացութեան, որ հայագիտութիւնը ձեռք է բերել շուրջ հարիւր տարի առաջ: 1901 թ. դեկտեմբերի 9-ին Պետեր-

¹ Месроп Тер-Мовсисян, История перевода Библии на армянский язык, СПб.; 1902.
² Այդպիսիք ի մի են հաւաքուած վերջերս մեր խմբագրութեամբ լոյս տեսած Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения, գրքում (Ереван, 1995, с. 124-208):

բուրգի համալսարանի Արեւելեան լեզուների ֆակուլտետի գիտ-
 խորհրդի նիստում իր դոկտորական ատենախոսութեան ներածական
 ճառն արտասանելիս նիկողայոս Մառն ասում էր. «Առանց հին վրա-
 ցերէն տեքստի հանգամանալի ուսումնասիրութեան չի կարող լիովին
 պարզաբանուել Ս. Գրոց հին հայերէն առաջին թարգմանութեան հար-
 ցը: Աւելին, առանց վրացերէն թարգմանութեան անմիջական օգտա-
 գործման չի կարող կատարուել Ս. Գրոց հայկական տեքստի քննական
 աշխատանք՝ նրա նախնական տեսքը եւ հայ թարգմանիչների առաջ
 դրուած բնագրի լեզուն պարզելու համար»¹: Մէկ տարի անց՝ Ն. Մառը
 հանդէս եկաւ Գր. Խալաթեանցի հրատարակած «Մնացորդաց գրքի»
 հնագոյն նկատուած բնագրի հմտալից քննութեամբ, անվերապահօրէն
 ապացուցելով, որ Ս. Գրոց հայերէն նախնական թարգմանութիւնը կա-
 տարուած է եբրայական բնագրից եկող ասորական տեքստից՝ ապա
 խմբագրուած ըստ Եօթանասնից բնագրի: Այստեղ նոյնպէս նա եղրա-
 կացնում էր. «Եթէ անգամ հնում հայոց մօտ Ս. Գրոց ասորերէնից կա-
 տարուած թարգմանութեան առկայութեան մասին ոչինչ չասէին ինք-
 նին հայկական բնագրերը եւ չվկայէին նաեւ հայկական աւանդութիւն-
 ները, միեւնոյն է՝ այդ կարելի կլինէր ապացուցել վրացերէն թարգմա-
 նութեան օգնութեամբ: Ս. Գրոց վրացերէն թարգմանութիւնը, ան-
 կասկած, անմիջական կախում ունի հայկական պատումից, ընդ սմին՝
 յաճախ այն յարում է ասորա-եբրայական ընթերցումին, երբ հայկա-
 կան բնագիրը հասցրել է օտարել հին ընթերցումը՝ համապատասխան
 տեղի թարգմանութեամբ ըստ Եօթանասնից բնագրի»²: Եւ այս
 ամէնը գիտնականը հաւաստում էր փաստական հարուստ նիւթով, ուս-
 տի Աստուածաշնչի գիտական բնագրի պատրաստութեամբ զբաղուած
 Կ. Տէր-Մկրտչեանը ոչ պատահականօրէն էր խոստովանում «Պրօֆ.
 Մառը իրաւունք ունի ենթադրելու, թէ Աստուածաշնչի ոսկեղարեան
 թարգմանութիւնը անդադար սրբագրուել եւ յարմարացուել է Եօթա-
 նասնից թարգմանութեան»³: Յետագայում Ն. Մառը կրկին անդրա-
 դարձաւ արծարծուող խնդրին՝ «Սուրբ Գրոց բնագրական դիտարկում-
 ներ՝ ըստ հայոց եւ վրաց թարգմանութիւնների» մենագրական աշխա-
 տութեամբ, վրացական խմբագրութեան կարեւորութիւնը հաւաստող
 տասնեակ ապացոյցների վկայակոչութեամբ⁴:

Ժամանակին այս փաստական ու գործնական դրոյթները քաջ

¹ H. A. Mapp, նշ. աշխ. էջ 34:

² Անդ, էջ 182:

³ Կար. վրդ. [Տէր-Մկրտչեան, Աստուածաշնչի նոր հրատարակութիւնը], «Արա-
 րատ», 1902, էջ 476:

⁴ H. A. Mapp, նշ. աշխ. էջ 1:

բացակայում են՝ Թուոց, Երկրորդ օրինաց, Յիսու Նաւէ, Մնացորդաց, Սաղմոս եւ Մակարայեցւոց:

բ) Երուսաղէմեան գրչագիր: Ընդօրինակուած է Պաղեստինում, Ա. Խաչ Վանքում: Ժամանակով հին չէ, բայց ակներեւաբար զազաւիար օրինակը վաղ շրջանի է պատկանել, թերեւս VII դարից ոչ ուշ գրուած: Բովանդակում է 12 փոքր եւ 4 մեծ ձարգարէութիւնները, Բարուք, Նէեմ եւ Եղրաս: Նկարագրութեամբ քաջ ծանօթ է մասնագէտներին¹:

գ) Մցխեթեան գրչագիր (A-51): Ընդօրինակուած է XVII-XVIII դարերի սահմանադիսին, այլեւայլ գրիչների ձեռքով: Ըստ Ռսկան Երեւանցու 1666 թ. հրատարակութեան խմբագրել, տնատել, գլխակարգել ու ցանկեր եւ համաբարբառներ է կցել վրաց յայտնի բառարանագիր Սուլխան-Սարա Օրբելիանին²: Ա. Գրոց վրացական գրչագրերից առաւել ամբողջականն է:

դ) Գելաթեան գրչագիր (A-1108): Մասնագէտների կարծիքով այս խմբագրութիւնը ինքնակայ թարգմանութիւն է (ԺԲ դար), հարուստ յունարանութիւններով³:

Կան սուրբգրական բնագրեր բովանդակող այլ գրչագրեր եւս՝ «Ջանաշւիլեան» (A-750, A-646), 904թ. «Սաղմոսարան» (A-38) եւ այլն: Բնականաբար՝ մեզ զբաղեցնողը մինչեւ Գէորգի Սուրբսարեցու վերաթարգմանութիւնը-վերախմբագրումը (ԺԱ դար) եղած գրչագրերն ու տարբերակներն են, որոնց առաւել յատկորոշ ներկայացուցիչը Օշկեան Աստուածաշունչն է: Այն տակաւին ամբողջական հրատարակութիւն չունի, բայց առանձին գրքեր վաղուց արդէն հրատարակուած են (Ա. Շանիձէ, Ռ. Բլէյկ, մասամբ՝ Ն. Մառ եւ այլք)⁴:

N. Adonz, Tornik le Moine, "Byzantion", XIII, 1938, pp. 143-164. Նոյնի՝ Etudes arméno-byzantines, Lisbonne, 1965, pp. 297-318. Թուոնիկի յիշատակարանը տե՛ս P. Peeters, Un colophon géorgien de Thornik le Moine, -"Anal. Boll", t. 50, pp. 358-371.

¹ Ռ. Բլէյկը, օրինակ, հրատարակել է այս ձեռագրում ներկայացուած Եղրասը (տե՛ս նրա՝ The Georgian Version of Fourth Esdras... pp. 299-375).

² Ամբողջութեամբ հրատարակուած է Ել. Դոշանաշւիլու աշխատասիրութեամբ, հինգ գրքով: Ռսկան Երեւանցու Աստուածաշունչին ունեցած առնչութեան մասին տե՛ս օ. ձեռքածք, Մճճճճ, II, թ. 188-203.

³ R. P. Blake, Prologomena to a Critical Edition of the Prophetic Writings Old Georgian. -"Patrologia Orientalis", t. XXIX, f. 2, Paris, 1961, p. XV.

⁴ «Մօզեբո ժեյլոնս ձեռքեյմոնս», Ծ. I, հ. 333-334, I, ձեռքեյմոնս. ձեռքեյմոնս. ձեռքեյմոնս ձեռքեյմոնս, 1947. The Georgian Text of Fourth Esdras... pp. 57-105. Ն. Մառը "Заметки по текстам св. Писания в древних переводах армян и грузин" յօդուածաշարում Աթոսի գրչագրից բազմաթիւ վկայակոչութիւններ է կատարում: Աւելի նոր ժամանակներում վրաստանի Գ.Ա.

4. Որ ս. Գրքի հնագույն վրացական խմբագրութիւնը թարգմանուած է հայերէնից մինչեւ VII դարի սկզբի եկեղեցական բաժանումը (անշուշտ՝ բացառութեամբ առանձին դրուագները), նոր ապացոյցների կարօտ խնդիր չէ: Ն. Մառի, Կ. Կեկելիձէի, Ռ. Բլէյկի, Ս. Լիոնետի, Լ. Լեյուարի, Ի. Մոլիթորի, Մգ. Շանիձէի, Ել. Դոչանաշւիլու աշխատութիւններում այդ իրողութիւնը հաստատող տասնեակ ու հարիւրաւոր փաստարկներ են բերուած¹: Անշուշտ, նկատի պիտի ունենալ, թէ Ե դարից մինչեւ Աթոսացիների թարգմանական գործունէութիւնը (ԺԺԱ դարեր) յիշեալ խմբագրութիւնը ի նորոյ համեմատութեան (ըստ Եօթանասնիցի) ոչ քիչ հանգրուաններ է ունեցել, բազմիցս վերանայուել ու սրբագրուել: Եւ այնուամենայնիւ՝ հայերէնից կատարուած սկզբնական թարգմանութեան կնիքն առկայ է գրեթէ բոլոր տարբերակներում, մանաւանդ Օշկի (Աթոսի) գրչագրում: Ճիշտ է, առանձին փորձեր եղել են վրացական խմբագրութեան «արեւելեան» տարրը մերթ ասորերէնով (Կ. Դանելիա) մերթ երբայական մասորեթեան (Թ. Յքիթիշւիլի) բնագրով բացատրելու կամ անմիջնորդ յունական Ղուկիանեան խմբագրութեանն առնչելու (Ու. Յինդելիանի, Յ. Բիրդսալ), սակայն դրանք կամ թէական են կամ առաւելագոյնը՝ որեւէ դրուագի շրջանակով ամփոփուող: Վարանումը մասամբ սլայմանաւորուած է հայկական քննական բնագիր ձեռքի տակ չունենալով, 1805թ. հրատարակութեան հիմամբ վաղմիջնագարեան կացութեան վերաբերեալ պատկերացում կառուցելով, մի խօսքով՝ պարզունակ ու միագիծ ներկայացնելով հայկական խմբագրութեան բարդ ու բազմաստիճան զարգացման պատմութիւնը:

Խնդիրն այն է, թէ ինչպէ՞ս ժամանակագրել վրացական խմբագրութեան այս կամ այն գրքում միաժամանակ աւանդուած այլալեզու աղբիւրով սլայմանաւորուած շերտերը՝ ըստ էութեան յունաբանու-

Կ. Կեկելիձէի անուան Ձեռագրերի ինստիտուտը սկսել է Հին Կտակարանի գրքերի պրակներով հրատարակութիւն ըստ առկայ բոլոր ձեռագրերի: Առանձնացուած է բնագրական երեք տիպ՝ Օշկեան, Գելաթեան եւ ԱԿ (H-1207 եւ Kut.-28): Լոյս է տեսել երեք պրակ:

¹ Ն. Մառի, Ռ. Բլէյկի, Մգ. Շանիձէի, Ել. Դոչանաշւիլու աշխատութիւնները տե՛ս նախորդ ծանօթութիւններում: *კავშირები ქართული ლიტერატურის ისტორიის, ტ. I, თბ., 1960, გვ. 411-428. S. Lyonnet, Les origines de la version arménienne et le Diatessaron. - "Biblica et Orientalia" t. 13, Rome, 1950; L'Leloir, La version géorgienne de la Bible. «Բազմալէս», 1958, էջ 197-203; I. Molitor, Zur Textgeschichte des georgischen Alten Testaments. "Bedi Kartlisa", 1959, pp. 53-55. **Նոյնի**՝ Die Eigennamen in der altgeorgischen Übersetzung der Evangelien und der Apostelgeschichte und ihre textkritische Bedeutung, Bamberg, 1962.*

թիւնների եւ հայկաբանութիւնների հետքերը (ասորաբանութիւն նախատուածները հայկական միջնորդում են ենթադրում): Մինչեւ վերջերս ընդհանրացած էր Ն. Մառի բացատրութիւնը՝ սկզբնապէս հայերէնից եկող թարգմանութիւնը հետագայում ստուգուած-խմբագրուած է ըստ Եօթանասնից (խօսքը մինչեւ Սուրբասարեցեան շրջանի մասին է): Այժմ, սակայն, վրացագիտութեան մէջ աշխատանքային նոր փարկած է առաջադրուած, համաձայն որի հայկաբանութիւնները արդիւնք են վրացախօս հայոց միջավայրում յունարէնից նախապէս թարգմանածը հայերէնի հետ համեմատել-սրբագրելու, մասնաւորապէս՝ հայ քաղկեդոնականների պահանջարկով թելադրուած, Տայքում-Կղարջքում¹:

Մենք արդեն առիթ ունեցել ենք ասելու, որ սոյն փարկածը հետեւանք է ժամանակագրական, պատմական իրողութեան թիւրընկալման. Ը դարի վերջերից առաջ Տայքում ու Կղարջքում վրացախօս հայութիւն չկար, ինչպէս որ չկար նաեւ Գուգարաց բղեշխութիւնում, ուստի քաղկեդոնական հայ համայնքը շարունակում էր գրել ու կարդալ մայրենի լեզուով²: Հետեւաբար՝ արդարացի են Ն. Մառն ու նրա հետեւորդները, երբ վրացական խմբագրութեան հայկաբանութիւնները դիտարկում են իբրեւ Ե դարի թարգմանութեան բնագրային արձագանքներ, աւելին՝ երբ վրացական խմբագրութեան օգնութեամբ ջանում են դիտարկել հայերէնի կրած խմբագրական, բառազանձային, ոճական ու նոյնիսկ քերականական փոփոխութիւնները, որպիսիք առանձնակի կարեւորութիւն ունեն հայկական խմբագրութեան քննական հրատարակութեան համար:

5. Այժմ փորձենք փաստական ընթերցումներով հաւաստել այդ կարեւորութիւնը, օրինակները քաղելով վերազանցապէս Ծննդոց եւ Ելից գրքերից (վրացերէնը ըստ Օշկեան գրչագրի)³:

¹ Տե՛ս Ե. Լաբլանտ, Բաժնեցի Նախտի Զոժեցի «Սոցիալական տարբերութիւնները, տ.Յ.Մ., Ե. 183 (ճր.՝, ցոլ., ԶՅ.) տժ., 1978, ԶՅ. 111.

² Պ. Մուրադեան, Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը. - «Պատմաբանասիրական հանդէս», 1996, N1-2, էջ 117-136, հմտ. Parouir Mouradian, Le monde culturel Caucasiens et l'Arménie "Arménie entre Orient et Occident", Paris, 1996, p. 75-76.

³ Մակարայեցոց գրքերը համեմատութեան չենք առնում, որովհետեւ նորատիպը, հրատարակչի իսկ խօսքերով՝ «քննական բնագիրը հիմք ընդունուած ձեւագրի (իմա՝ Վենետիկի N 1, 1319 թ. - Պ. Մ.) հարադատ, սակայն ոչ տառացի պատճենում, վերարտադրութիւնն է: Գրչագրի շարադրանքում կատարուած են մասնակի բարելաւումներ, ինչպէս՝ վրիպակների ուղղում, քերականական ձեւերի ճշգրտում, բացթողումների լրացում, աղաւաղում, խաթարում ու անընթեռնելի տեղերի վերականգնում, ուղղագրութեան միօրինականացում եւ այլն: Բոլոր տեսակի

ա) Եւ ի Զորն աղտից ջրհորք, ջրհորք* նաւթի (Ծն. ԺԴ, 10):

Եւ ի Զորն աղտից ջրհորք, ջրհորք* նաւթի (Ծն. ԺԴ, 10):

Այստեղ առկայ է «ջրհորք» բառի անտեղի կրկնութիւն, որից ազատ են E₂ H₃₇ J₆ K₈ ձեռագրերը, ինչպէս նաեւ «յունարէն մի մեծ խումբ ձեռագրեր» (ծան.) եւ վրացերէնը:

բ) Եւ իբրեւ լուաւ Աբրամ, թէ գերի վարեցաւ եղբայրն իւր Ղովտ, համարեցաւ զընդոծինսն իւր երեք հարիւր ութնետասն: (Ծն. ԺԴ, 10):

Եւ իբրեւ լուաւ Աբրամ, թէ գերի վարեցաւ եղբայրն իւր Ղովտ, համարեցաւ զընդոծինսն իւր երեք հարիւր ութնետասն: (Ծն. ԺԴ, 10):

Եւ իբրեւ լուաւ Աբրամ, թէ գերի վարեցաւ եղբայրն իւր Ղովտ, համարեցաւ զընդոծինսն իւր երեք հարիւր ութնետասն: (Ծն. ԺԴ, 10):

գ) ...աւրհնեալ է Աստուած բարձրեալ, որ մատնեաց ի ձեռս քո, զթշնամիս քո, եւ ետ նմա* տասանորդս յամենայնէ: (Ծն. ԺԴ, 20):

...աւրհնեալ է Աստուած բարձրեալ, որ մատնեաց ի ձեռս քո, զթշնամիս քո, եւ ետ նմա* տասանորդս յամենայնէ: (Ծն. ԺԴ, 20):

Առանց Աբրահամ անձնանուան հայերէնը աղաւաղ է, որովհետեւ տասանորդ վճարողը Աբրահամն է եւ ոչ Աստուած: A8 B7 ձե-

փոխփոխութիւնները կատարուած են ձեռագրերի հիման վրայ ու դրանց սահմաններում: Երբ իրողութիւնը պարզելու համար փաստերն անբաւարար են եղել կամ ի սպասու բացակայել են, բնագրում ձեռագրերով երաշխաւորուած, թէկուզ եւ կասկածելի ձեւերի պահպանումը գերադասուել է գիտական աշխատութիւնների եւ օտար բնագրերի օգնութեամբ կատարուած վերականգնումներից» (էջ 71-72): Փաստօրէն հրատարակչի համեմատութեան առած միւս 39 ձեռագրերը սրբագրական օժանդակ դեր են ունեցել, իսկ նոր հրատարակութիւնը դարձել է Զօհրապեան բնագրի սրբագրեալ վերահրատարակութիւնը: Այն պարագայում, երբ հայկական ձեռագրերի ընթերցումներով չհիմնաւորուող ամէն մի ուղղում ու ճշգրտում բացառուել է, մեր համոզմամբ, «բնական բնագիր» վերտառութիւնը խիստ պայմանական է:

եւ ἀπολύει (արձակէ) բառերը¹: Կռահումը սրամիտ է, միայն թէ երկրորդ միաւորը ոչ թէ «արձակիլ», այլ «թողնել», «մնալ», «ձեռք քաշել կամ լուանալ» է նշանակում, եւ ճիշտ այդ իմաստն է արտայայտում ԾԾՅՅՅՅՅՅ-ն:

Ուրեմն հայերէնում նախապէս ճիշտ ընթերցում է եղել, բայց վերանայուել է յունարէնի վրիպեալ ընկալմամբ: Պակաս ուշագրաւ չէ նաեւ Ա. Զէյթունեանի դիտարկումը վերջին նախադասութեան վերաբերեալ. այն իրօք յստակ չէ «եւ այն»-ն էլ աւելորդ է²: Մնում է աւելացնել, որ նոյնն է նաեւ վրացերէնում (անյատակութիւնը պահպանուել է Մցխեթեան օրինակում եւս):

ը) ...մինչև ցֆեւեկնի ձորոյն, որ է յանապատի անդ (Մն. ԺԴ, 6):

ვიდრე ბელეკუნადმდე ფარანისა, რომელ არს უდაბნოსა ზედა.

«Բեւեկն»-ը ծառատեսակ է, քանիցս յիշատակուած ս. Գրքում (ՆՀԲ, Ա., 486): Վրացերէնի Զելեյքոն-ը (այլ գրքերում նաեւ Զելեյքոն), անշուշտ գրադարձութիւն է հայերէնից: Եթէ Ի > Լ փոխանցումը նկատենք աւանդական (եւ ոչ Ի-ի Լ ընթերցում կամ, թերեւս, վրաց մրգլովանի գրչութեան Վ-ի եւ Լ շփոթում), ապա յ/(-) դժուար է այլ կերպ բացատրել, քան բեւեկ(ը)ն-ի Լ գաղտնավանկի բացում, որ բաւականաչափ կանոնաւոր պահպանուած է փոխառութիւններում: Բացատրութեան կարօտ է ձոր -ի դիմաց ֆարանի ունենալը: Վերջինս տեղանուն է եւ իբրեւ այդպիսին բացակայում է հայերէնում (եբրայերէնն ու ասորերէնն ունեն)³: Վրացերէնում եղածը ասպացոյց է, թէ այն կար եւ ասորերէնից թարգմանուած հայերէն օրինակում, եւ Փարան տեղանունը իբրեւ յունարէն φάραγξ, φάραγγος (ձոր, կիրճ, անդունդ) կարող էր ընկալուել դարձեալ ըստ Եօթանասնիցի խմբագրութեան պարագային: Հայկական ձեռագրական աւանդոյթը պահպանել է վերանայուած-վրիպեալ ընթերցումը:

թ) Վասն այնորիկ կոչեաց զՋրհորն Զրհոր այնորիկ* (Մն. ԺԶ, 14):

ამისთვის ეწოდა ჯურღმულსა მას ჯურღმული.

Հայերէնն ու վրացերէնը դուգակչիւ են միմեանց եւ հաւասար

¹ Ե. Դուրեան, Ամբողջ երկեր, հ. 2, Երուսաղէմ, 1935, էջ 557: նաեւ «Գիրք ծննդոց», էջ 409, ծան. ԺԵ, 2:

² Անդ:

³ Ss'u Толковая Библия или комментарий на все книги св. Писания, I, Петербург, 1904-09074, с. 94. Н. Марр, նշւ. աշխ.:

յետոյ ամենուր գրել Աբրահամ, ինչպէս եղել է բուն թարգմանութեան մէջ եւ փոխանցուել նաեւ վրացերէնին, մանաւանդ որ նման գրութիւնը անծանօթ չէ համեմատուող ձեռագրերին:

Եւ զկծէին խաչինքն ի դաւաղանսն եւ ծնանէին խաչինքն գորշախայտս եւ պիտակս եւ խայտախարիւս (Մն. Լ. 39):

Ճա միջեջտն Յեղեղտա մատ յըրտեցեթն մաս ճա Մոծջես Յեղեղտն ոցո կճեթճեթ ճա Յրջեթն ճա եւՅրոս ջըրաճ կեյրջեթն:

Ե պատառիկը «բնագրային բաւական մանուածապատ հատուածի» փոխարէն տալիս է «պարզեցուած տարբերակ»՝ «եւ զկծէին խաչինքն ի դաւաղանսն եւ ծնանէին դոքա խայտս եւ սպիտակս եւ խայտախարիւս»:

Վրացերէնի բնագիր հայերէնում եւս եղել է խայտս (Յրջեթն) եւ սպիտակս (կճեթճեթ), իսկ «խաչինքն» բառը դոքա-յով չի փոխարինուել:

Ն. Գոհանանք օրինակների այս թուարկումով, վկայելով սակայն, որ այդպիսիք շատ-շատ են, հարիւրաւոր: Այժմ դիմենք «Ելից գրքի» քննական բնագրին:

ա) Եկաց այլ թագաւոր*, որ ոչ գիտէր զՅովսէփի (Ելք, Ա, 8):

Ձեզնա կեյաճ թըջեթ յըջճեթն Մոնա, Ռոմըլման ոՅոլաճը ճրա ոոկեթ:

Համեմատուած ձեռագրերի մի խումբ՝ B37, E9, H6, ինչպէս նաեւ եբրայերէնն ու վրացերէնը լրացնում են, որ խօսքը Եգիպտոսի թագաւորի մասին է: Ուրեմն հայկական բնագիրը եւս պիտի ունենար ի Եգիպտոս ընթերցումը:

բ) Եւ ասէ ցազգն իւր. Ահա ազգ որդւոցն Իսրայէլի մեծ է զաւրութեամբ եւ զաւրանայ քան զմեզ (Ելք, Ա, 9):

Ճա Յրէյա ետոյեթնա տոյեթն: Ձճա յեյրա ետոյեթն յեյ ճըտա ոկրաՅըլոկտաճ ճոլո կոմրաճըլ ճրե յըրոլո կեյեթն:

Հայերէնի «զաւրութեամբ»-ը «զաւրանայ»-ի ազգեցութեամբ գոյացած սխալագրութիւն է: Վրացերէնի թարգմանչի ձեռքի տակ գտնուած օրինակում եղել է «մեծ է բազմութեամբ», որ եւ պիտի սրբագրել:

գ) Արդ, եկայք հնարեսցուք ինչ նոցա, զուցէ բազմանայցեն, եւ յորժամ դիպեսցի մեզ պատերազմ, յաւելուցուն եւ նոքա ի թշնամիսն (Ելք, Ա, 10):

Առկայ չորս էական տարբերություններից նշենք առաել կարելորդ՝ այն որ մշտնջող-ն երբեմնի հայերէնի բաւթարերն է, որ փոխարինուած է գոյծ-ով: Բաւթ-ի գործածութեան միայն մէկ դէպք է Ն. Մառը գտել հայերէն ս. Գրքում (Եզեկ., ԻԱ, 7):

բ) Եւ հանդէս արար նոցա ի Բեզեկ. ամենայն այր իսրայէլացի ելին վեց հարիւր հազար (Ա. Թագ., ԺԱ, 8):

... Եւ յիտի յո սալ յրոնա մոն յնջըրժոժոտ. Եւ ժոմջլոն ոջո մոջոջլոն յամնա ման յնջըրժոժոնանա ոյցնլոն յոտոժր յլլլոնատան յոց սանջոնա մոնջան ոնրոժլոնա.

Տարբերությունները բազմաթիւ են (հայերէնում պիտի ունենայինք նաեւ՝ «եւ որք եկին ի ժամին հանդիսութեան» եւ այլն, բայց կարելորդն այն է, որ վրացերէնում երկու անգամ գործածուած է հայ. հանդիսութիւն եզրը (որ չկայ հայերէնում), իսկ առկայ հանդէս-ը թարգմանուած է յիտի:

դ) ...եւ գինի եւ արբեցութիւն մի արբցէ, եւ երկաթ մի ելցէ ի գլուխ նորա (Ա. Թագ., Ա, 14):

Եւ յիտի յո սալ յրոնա մոն յնջըրժոժոնա յոն ոնջլոն Եւ մանջլոն յոննոնոնա յոն յնջըրժոժոնա մոննա.

Որ հայերէնի «եւ գինի եւ արբեցութիւն մի արբցէ» նախադասութեան ոճը խառնակ է՝ պարզ է ինքնին: Կամ պիտի ունենայինք «...եւ գինի եւ արբեցութիւն մի տեսցէ» եւ կամ «եւ գինի արբեցութեան մի արբցէ», ինչպէս վրացերէնում է: Բայց այդ բոլորը չէ. «եւ երկաթ մի ելցէ ի գլուխ նորա» արտայայտութեան փոխարէն վրացի թարգմանչի ունեցած հայերէն օրինակում եղել է՝ «եւ սայր վարսափրաց մի ելցէ ի գլուխ նորա»: Ուրեմն՝ սայրը (սուրը) դարձել է երկաթ, իսկ վարսափրը առհասարակ չքացել է¹:

դ) ...եւ ասէ Սաւուղ ցկապարճակիրն իւր. Մերկեա՛ դսուր քո եւ խոցեա նովալ... (Ա. Թագ., ԼԱ, 4):

... Եւ յիտի յո սալ յրոնա մոն յնջըրժոժոնա մոննա: յոննոնա Եւ մանջլոն Եւ մոմջոլոն մո...

Չասենք, թէ քո, նովալ մասնաւորեցումները քերականօրէն աւելորդ են: Կարելորդն այն է, որ վրացերէնի մշտնջող-ն (resp. մշտնջող) բացօրոշ հայկաբանութիւն է՝ *նժուղակալ, որ չի վկա-

¹ Հմմտ. անդ, էջ 125:

յուած Ե դարի մատենագրութեան մէջ¹ եւ ՆՀԲ չգիտէ:

8. Կարծում ենք՝ նոր օրինակներ բերելու անհրաժեշտութիւն այլեւս չկայ: Չենք յիշեցնում եւ այն հարիւրաւոր դէպքերը, երբ վրացերէնի օգնութեամբ կարելի է գատորոշել հայերէն շատ բառերի գործածութեան նեղ իմաստները սուրբգրական բնագրերում (աղգ-Վարձարտոհեթանոս, կպրածիւթ-նաջտո-նաւթ-մալտո, անձ-սյլո-հողի, աւար-Յեյնո-ձի, աղջիկ-մՅեյնո-աղախին, պանդխտութիւն-ճամբորդութիւն, մՎորոճ-բնակութիւն-օտարական եւ այլն), ինչպէս նաեւ կատարել յատուկ անունների ճիշտ ընտրութիւն (Աբրամ, Աբրաամ թէ Աբրահամ - Երեմի, Սեպիւրայ, Սեպիւրայ թէ Սեպիւրայ-Սեպիւրայ, Կառնայիմ, Կարնային թէ Կարնի - Կարան եւ այլն):

9. Թող այն թիւր տպաւորութիւնը չստացուի, թէ մենք գերագնահատում ենք վրացական խմբագրութեան նշանակութիւնը եւ առաջարկում ըստ այնմ կազմել հայկական խմբագրութեան քննական բնագիրը: Հայերէնից թարգմանուելուց յետո վրացականը եւս, ինչպէս բազմիցս նշեցինք, ինքնակայ վերանայման-վերախմբագրման՝ մանաւանդ ըստ յունական ընկալեալ օրինակի, աստիճաններ ու շրջաններ է ունեցել, այն էլ մինչեւ սուրբարեցիներին հասնելը: Աւելին, այդ վերանայման ընթացքում առաջացել են նաեւ յունարէնը հասկանալու եւ բնագրական աղաւաղմանն դէպքեր: Մեր քննարկած Ծննդոց եւ Ելից գրքերից բերէնք նման երկու օրինակ, որ նկատուծ են ակադ. Ա. Շանիձէի, այդ բնագրերի Օչկեան տարբերակի հրատարակչի կարճառոտ առաջաբանում²:

Տուր ինձ ճաշակել ի շիկաթանէդ յայդմանէ, զի նքթեալ եմ (Ծն. ԻԵ, 30):

გემოე მახილვე მგბრის მაგისგან იფქლისა, რამეთუ მოძღურდი.

«Մգբարի օֆքլիսա» նշանակում է «եփած (խարչած) ցորեն», մինչդեռ հայերէնում խօսքը շիկաթանի մասին է (իմա՝ շիկագոյն թան, ոսպէ ապուր): Հետեւաբար վրացերէնում շփութուած են քսրոճ (ցորեն) եւ քսրոճ (կարմրաւուն, կրակագոյն, շէկ) բառերը:

...եւ զհիւսնութիւն փայտից՝ գործել ըստ ամենայն գործոց (Ելք, ԼԱ, 5):

... სამსახურებულსა და საქმესა მას ძელით ხუროვებისასა, საქმედ ყოველისავე საქმისაებრ.

Հայերէնում სამსახურებელი (ծառայութիւն) բառը առհասարակ

¹ Անդ, էջ 127-128:

² «Վոցնի օֆքլիսա յալոյքմիսանի», թ. VIII.

չկայ, մինչդեռ վրացերէնը այդպէս է թարգմանում յունարէնի λιθοουργικά (քարագործութիւն) եղբր, այն ընթերցելով λετουργικά: Այլ խնդիր է՝ հայերէնը ի սկզբանէ (իմա՝ ասորերէնից թարգմանելիս) արդէն այդ եղբր չի՞ ունեցել, թէ՞ հետագայում ընկել-սրբագրուել է (բոլոր պարագաներում եբրայերէնն այն ունի՝ ճիշտ «քարագործութիւն» իմաստով):

10. Ամփոփենք. Կատարուած նոր հրատարակութիւնները էապէս խթանում են աստուածաշնչագիտութիւնը մեղանում եւ ընթերցումները այլալեզու խմբագրութիւններին համեմատել-յարաբերելու մեթոդու եղանակ մշակում: Անուրանալի է աշխատասիրողների, եւ յատկապէս Անդրանիկ Զէյթունեանի, նուիրումն ու ջանքը, գիտական կարողութիւնը, բայց եւ պիտի խոստովանել, որ ընտրութեան չափանիշը հիմնականում Եօթանասնիցով սահմանելը մեղ վերջնական հանգրուանի չի տանում: Նոյնքան կարեւոր եւ նոյնքան ուղենշային է Պեշխտոյի ու նրա բնագրական սլատմութեան արթուն ակնառումը: Անկարելի է ս. Գրոց հայկական խմբագրութեան քննական հրատարակութիւնը կատարել՝ առանց հայերէնից թարգմանուած եւ նշանակալի չափով հայկաբանութիւններ պահպանած վրացական խմբագրութիւնների ընձեռած նիւթը նկատի առնելու: 978թ. Օշկեան գրչագիրը շուրջ երկու հարիւրամեակով կանխում է մեր ունեցած ամբողջական բնագրերը, ուստի այն պիտի բառ առ բառ համեմատուի սուրբգրական կամեցածդ դրուագի հայերէն խմբագրութեան քննական հրատարակութիւն պատրաստելիս:

Գուցէ ն. Մառը խիստ էր, երբ ասում էր, թէ «Ս. Գրոց առկայ տարբերակի՝ այսպէս կոչուած հայկական վուլգատայի (A^v) ցուցմունքները կարող են հաւասարեցուել անտեղեակ անձի վկայական ցուցմունքներին»¹, բայց անվերապահօրէն արդարացի էր, երբ գրում էր. «Առանց վրացերէն թարգմանութեան անմիջական օգտագործման չի կարող կատարուել ս. Գրքի հայկական տեքստի քննական աշխատանք՝ նրա նախնական տեսքը եւ հայ թարգմանիչների առաջ դրուած բնագրի լեզուն պարզելու համար»: Ու քանի որ այդ չի արուել, վերջին տարիներին կատարուած առանձին հրատարակութիւնները մենք կկոչէինք «Նիւթեր քննական հրատարակութեան» համար:

¹ «Христианский Восток», т. V, вып. стр. 163.

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱԻԱՆԴԱԲԱՐ Ս . ՄԵՍՐՈՊԻ ԸՆԴՈՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐՈՒՈՂ ԱԻԵՏԱՐԱՆԻ ՇՈՒՐՋ

Սուրբգրական երկաթագիր պատառիկների վերծանութեանը նուիրուած աշխատութեան առաջաբանում Մեսրոպ եպս. Տէր-Մովսիսեանը Նոր Կտակարանից պահպանուած հատուածների վերծանութիւնը կարեւոր չի համարում, որովհետեւ Աւետարանի մի քանի ամբողջական ու հին օրինակներ են յայտնի¹ : Ն. Մառը գտնում է, որ խնդիրը հին ու ամբողջական օրինակների շատութիւնը չէ, այլ՝ որ նրանք աւանդական (шаблонность) բնագիր են ներկայացնում եւ «մեղ իրապէս հնաւանդ՝ ս. Գրոց նախակգրնական հայկական թարգմանութեան վերապրուկների քիչ նիւթ են տալիս»² : Ուստի հնաւանդ բնագիր պրպտելիս կարեւորութիւն պիտի տալ նաեւ Աւետարանի երկաթագիր մագաղաթեայ պատառիկներին, թեկուզ նրանք եւս ընկալեալ բնագիր ներկայացնեն, առաւել եւս՝ երբ «այդ տեքստը նոյնպէս ուղղագրօրէն տակաւին ճշգրտուած չէ» : Եւ յիրաւի, հակառակ մասնագիտական գրականութեան մէջ հնագոյն ամբողջական Աւետարանների յաճախակի յիշատակութեան (Մլքէ թագուհու, Լազարեան ինստիտուտի, Էջմիածնի, Վեհամօր, Վեհափառի եւ այլ ձեռագրեր), աւելին՝ նրանցից մի քանիսի նմանահանութեան հրատարակուած եւ անգամ վերահրատարակուած լինելուն, նրանք ընթերցուած ու համադրուած չեն, չունեն գիտական քննական հրատարակութիւն³, ուստի առ այսօր գի-

¹ Рукописные отрывки армянской версии Ветхого Завета лапидарным письмом. Издал епископ Месроп, Петроград 1915, стр. 11, прим.

² Н. Марр, Отрывок армянского пергаменного Евангелия лапидарным письмом տե'ս Н. Марр, Кавказский культурный мир и Армения, Ереван, 1995, стр. 206. Աւետարանների թարգմանութեան հարցերին նուիրուած ուշագրաւ աշխատութիւն է հրատարակել Հ. Պողոս Էսապալեանը (տե'ս նրա՝ Տատիանի Համաբարբառն եւ հայերէն Աւետարաններու առաջին թարգմանութիւնը. քննական ուսումնասիրութիւնը, Վիեննա, 1937):

³ Աւետարանների բնագրական հարցեր քննարկելիս Ֆ. Մակլերը համեմատութեան է առել IX-XI դարերի 10 թուակիր գրչագիր (տե'ս նրա՝ La texte arménien de l'Évangile d'après Matthieu et Marc, Paris, 1919): Յ. Անասեանը մինչեւ XI վերջը ընդօրինակուած 15 թուակիր Աւետարան է ցուցակագրում Երեւանի Մատենադա-

(286v, 287v) Անանիան յայտնում է իր պատվիրատու լինելը (բոլոր յիշատակարանները գրուած են ձեռագրի գրչութեամբ, դարձյալ երկաթագիր, մասամբ աւելի մանր): Յիշատակարանները ընթերցուած ու հրատարակուած են յանգուցեալ Ա. Մաթեոսեանի կազմած ժողովածոյում՝ երկուսը իբրև Անանիա Նարեկացուն պատկանող գաղափար օրինակից ընդօրինակուած, երկուսը՝ պատվիրատու Անանիա Վարագացուն պատկանող¹: Արդարութիւնը պահանջում է ասել, որ յիշատակարանների սկզբնական եւ անսխալ ընթերցումը կատարել է ձեռագրի մուտքը հաւաքածոյ արձանագրող եւ քարտը կազմող Օ. Եգանեանը: Ճիշտ է, նա պատվիրատուի անունը սկզբնաբար կարդացել է Անանիա Սարագացի, բայց եւ ծանօթագրել, թէ Վ-ի աջ ելուտը վերականգնելիս Վարագացի սլիտի ընթերցել: Յիշատակարանների Անանիա Նարեկացուն եւ Վարագացուն տարբերակելու անդրանիկ հիմնաւորումը կատարել է Ա. Մաթեոսեանը նախնական մի յօդուածում²: Եւ յիրաւի, պատուիրատու Անանիան իր մասին չէր ասի «Անանիայի Նարեկացւոյ աստուածազան հռետորի եւ հզօր վարդապետի է սուրբ Աւետարանս այս: Եւ որք ընթեռնուք՝ յիշեսցիք ի տէր ստացաւ սորին, աղաչեմք» (էջ 87v): Ձեռագրի բուն ընդարձակ յիշատակարանում ստացողն իրեն կոչում է Անանիա Վարագացի եւ հակառակ նախորդում եղած հախուռն մեծարման՝ «նուաստ ի կրաւնաւորս եւ տրուպ եւ կրտսեր ի գիտնաւորս» (286v): Ուրեմն՝ իսկապէս երկու տարբեր Անանիաների մասին է խօսքը, ինչպէս իրաւացիօրէն ընդունել են այս ձեռագրին անդրադարձած մասնագետները³: Նարեկացի Անանիայի «աստուածազան հռետոր» եւ «հզօր վարդապետ» լինելը վկայուած է, Նարեկայ վանքի վանահօր ժամանակակիցների տուած բնութագրութիւններում

¹ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե-ԺԲ դդ, աշխատասիրութեամբ՝ Ա. Ս. Մաթեոսեանի, Երեւան, 1988, էջ 55 (N 69), 107-108 (N 127): Յիշատակագրութիւնների ժամանակի եւ նրանցում յիշատակուող անձանց ինքնութեանը վերջերս անդրադարձաւ աղբիւրագէտ Գեւորգ Տէր-Վարդանեանը («Էջմիածին», 2004, Բ-Գ, էջ 107-108):

² Ա. Մաթեոսեան, Նուիրական ձեռագիրը, «Գրական թերթ», 1973, յունիսի 15:

³ Ն. Թահմիզեան, Անանիա Նարեկացու եւ Նարեկայ վանքի երաժշտական սուանդոյթների մասին, «Էջմիածին», 1976, Թ, էջ 29-37: Հ.Հ. Թամրազեան, Անանիա Նարեկացի. կեանքը եւ մատենագրութիւնը, Երեւան, 1986, էջ 34-37: Մենք դժուարանում ենք պնդել, թէ Նարեկացի Անանիային սլիտի անպայմանօրէն վերաբերի ձեռագրի 1v էջում պատկերուած խաչի կապտաւուն ֆոնին սպիտակ բոլորգրով եղած յիշատակութիւնը. «Անանիայի է սուրբ Աւետարանս. Աստուած վայելել տացէ ի կամս իւր, ամէն»: Այն խաչի հետ նոյնութեամբ կարող էր ընդօրինակուել Նարեկացի Անանիային պատկանող գաղափար օրինակից, բայց եւ կարող էր պատկերուել ու մակագրուել նաեւ նոր ստացող Անանիա Վարագացու յանձնարարութեամբ:

եւս¹, մինչդեռ Վարազագի Անանիայի մասին մատենագրական այլ աղբյուրներից տեղեկութիւններ չունենք: Գիտենք, սակայն, թէ X-XI դարերում Վարագը յիրաւի մշակութային ճանաչուած գործիչներ ունեցող դպրութեան օջախ է եղել: «Վկայաբանութիւն սրբոյն Ատոմայ եւ որդւոյ նորա Վարոսայ եւ Ներսէհի եւ նոցին ընկերացն» երկի խորագրում եւ որոշ ընդօրինակութիւնների յիշատակարանային մասում ասուած է, որ նրա հեղինակը Հայր Տաճատ Վարազագի (var. Վարագեցին) է. «Եւ զիր վկայութեան նոցա ոչ եւս պատմէր ի միջի մերում մինչեւ ի ժամանակս ինչ, ապա գտեալ եղեւ յաւուրս Կենատրոյ, սպասաւորի սրբոց Ատոմեանց ի ձեռն Հոգեւոր առաջնորդի տեառն Տաճատայ Վարագացւոյ...»²:

Այսպիսով, եթէ 1069թ: ընդօրինակուած ձեռագրի նախօրինակը կամ միջնադարեան տերմինով՝ գաղափար օրինակը պատկանել է Նարեկայ վանքի վանահայր Անանիա Նարեկացուն եւ, բնականաբար, գտնուել նոյն Նարեկայ վանքում, ապա նրանից կատարուած ընդօրինակումը եւս կարող էր կամ պէտք է տեղի ունենար Նարեկում, ուստի արդարացի է N 10434 ձեռագրի գրչութեան տեղի «Նարեկայ վանք» վերականգնումը, որ եւ կատարուած է այս ձեռագրին վերաբերող արձարձումներում:

Անանիա Վարագացու ընդարձակ յիշատակարանում գրչութեան վայրը չի յիշատակվում, սակայն պատմւում են գաղափար օրինակին վերաբերող այնպիսի իրողութիւններ, որոնք, եթէ ստուգապատում են, հետազօտողին տեղափոխում են 600 տարի առաջ՝ ոսկեդար: Կարգանք յիշատակարանի այդ հատուածը.

«Ի ՇԺԸ (1069) թուաբերութեան Հայոց, ես Անանիա Վարագացի՝ նուաստ ի կրանաւորս եւ տրուպ եւ կրտսեր ի գիտնաւորս, ցանկացաւ եղէ սրբոյ Աւետարանիս եւ մեծաւ փափագանաւք եւ սրտաջան յաւժարութեամբ իմով, զոր ունէի յոգւոջ իմում ի բազում ամաց զցանկութիւն սորին եւ զմեծ անձուկ սէրն որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին սուրբ, ըստ իմում կարի քրիստոսասէր գոլով, ետու զրել զսուրբ Աւետարանս Յովհանէսի գրչի, եւ ստացայ զսա իմոց արդար եւ

¹ Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշ., 1871, էջ 7-15 (վերջին էջում նա կոչուած է «Հոչակաւոր Հոետոր»), Հմմտ. Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 178:

² Տե՛ս օ. յժՅԼԵՆԻՆ, յճՌՕՄԵՆՈ ՋԵ ԵՐՄԵՅՅԵՐԻՆ, յՅՅ. 95, 195-196. Հմմտ. Գալուստ Տէր-Մկրտչեան, Հայագիտական ուսումնասիրութիւններ, գիրք Բ, աշխատասիրութեամբ պրոֆ. Պ. Յ. Յակոբեանի, էջմիածին, 1998, էջ 134-135: Ինչպէս երեւում է, Գ. Տէր-Մկրտչեանի Տաճատ Վարագացուն վերաբերող այլ տեղեկութիւններ էլ է ունեցել, ուստի մտադիր է եղել նրան վերագառնալ «ուրիշ անգամ»:

իրաւացի արդեանց, զոր ի վեր համարիմ, քան զամենայն աշխարհս եւ զփառս, եւ զմեծութիւն սորա, եւ հանապաղ ուրախանամ եւ փարթամանամ անթափելի ճոխութեամբ ի սորին աստուածային եւ անհամեմատ յիութենէս: Մանաւանդ վասն ստուգութեան սորին եւ ընտրութեան բանի եւ հրամանի, եւ տնահատի եւ ամենայն արուեստի, որ էր վկայեալ աւրինակն յամենայն զիտնականաց Հայոց, զոր ասէին յաւանդութենէ գրեալ է ձեռամբ սրբոյն Մաստրովբայ վարդապետի եւ թարգմանչի: Եւ իմ այսմ ամենայնի հասու եղեալ եւ տեղեկացեալ վասն լաւութեան սորա, զոր ոչ արժէ աշխարհ զփոքրիկս զայս, որ է մեծ եւ պատուական ի սրտի իմում եւ ամենայն զիտնականաց, որք ճանաչեն զգաւրութիւն սորա: Եւ ես զամ մի ողջոյն աշխատասէր վաստակաւք իմով, անձամբ եւ ծախիւք շատ ջանացեալ մինչեւ ի կատարումն գրչութեան սորա, զոր ստացայ ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ յուրախութիւն ընթերցաւդաց, յիշատակ ինձ եւ ծնաւդաց իմոց եւ եղբարց, կենդանեաց եւ ննջեցելոց:

Արդ՝ աղաչեմք զամենեսեան, որք ընթեռնուք եւ լուսաւորիք, զիս՝ Անանիա յիշելոյ արժանի համարիք:

Ընդ նմին եւ ես աղաչեմ՝ անպիտան գրիչս, յիշել զիս եւ ծնաւդան իմ, եւ Աստուած ամենեցուն ողորմեսցի, ամէն»¹:

Յիշատակարանի ընդգծուած գրուագը մի քանի յոյժ կարեւոր տեղեկութիւն է հաղորդում, մասնաւորապէս՝

ա) Անանիա Նարեկացուն պատկանող եւ ընդօրինակման ենթարկուող գաղափար օրինակը ստոյգ (իմա նախնական, ոչ վերանայուած կամ միջամտուած), հստակ (բառուբանով ընտիր), պատգամ, պատվիրան հանդիսացող (Աստծո հրաման) նմուշի համարում է ունեցել:

բ) Բնագիրը եղել է տնատուած, ասել է թէ ունեցել է գրուագների (նաեւ գլուխների) հնաւանդ համարակալում, որ նոյնութեամբ ներկայացուած է ընդօրինակութեան մէջ:

գ) Ընտիր է համարուել նրա «ամենայն արուեստի» (իմա զարդարանքի) կնիք կրելը (խաչ, խորան, զարդագիր, բաժանարար պատկեր, կարմրադեղով ցուցում եւ այլն):

դ) Ժամանակի հայոց գիտունները տեղեակ են եղել գաղափար օրի-

¹ «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ». Ե-ԺԲ դարեր, էջ 107: Օ. Եզանեանի ձեռագիր ընդօրինակութեան մէջ կան վերծանման որոշ տարբերութիւններ. փարթամանամ] փարթանամ, բանի եւ հրամանի] բանին Աւետարանի, տնահատի] տնահատի: Արդարացուածը, ինչպէս ցոյց տուեց բնագրական ստուգումը, հրապարակուածն է: Այս յիշատակարանի վերաբերող որոշ արժարժումներ տե՛ս «Գիրք ծննդոց» քննական բնագիր, աշխատասիրութեամբ Ա. Ս. Զէյթունեանի, Երեւան, 1985, էջ 67, նաեւ՝ Շահէ արք. Աճէմեան, Ցուցակ..., էջ XIV:

նակի գոյութեանը եւ նրա՝ Մաշտոցի ձեռքով գրուած լինելու աւանդութեանը (ուրեմն այդ մասին գրաւոր յիշատակարան չի ունեցել):

ե) Պատուիրատու Անանիա Վարադադին վերորերեայր իմանալուց եւ հաւաստիանալուց յետոյ է («իմ այսմ ամենայնի հասու եղեալ եւ տեղեկացեալ վասն լաւութեան») մի ողջ տարուայ վաստակը յատկացնում ընդօրինակութիւն ունենալուն:

Յիշատակարանի այս հաղորդումները կասկածի տակ առնելու հիմքեր չենք տեսնում, որովհետեւ 500-600 տարիա հնութեան գրչագրի գոյութիւն ունենալը բնավ անկարելի չէ, մանաւանդ որ այդպիսիք քիչ չեն նաեւ մեր օրերի հաւաքածոներում:

Մաշտոցի ձեռքով գրուած լինելու աւանդութիւնը եւս ստուգելի է նման բովանդակութեան մի այլ յիշատակարան էլ ունենք 1113 թուականից, երբ Կիրակոս անուն պատվիրատուն Գէորգ գրչին Դրադարկում ընդօրինակել է տալիս «ի սոոյդ եւ յընտիր գաղափարէ սրբոյն Սահակայ թարգմանչի» Աւետարանից¹: Եւ ապա՝ Մաշտոց Մեսրոպի «Մաստրովբոս» հորջորջումը այնքան հաղուագիւտ է հայոց մատենագրութեան մէջ, որ միայն յունական գրաւոր աւանդոյթին քաջածանօթ հայոց վարդապետական միջավայրում կարող էին այն իմանալ եւ գրառել: Իսկ որ Նարեկայ վանքի վանականները ճանաչում էին յունական աշխարհը՝ ակնբերեւ է նաեւ Անանիա եւ Գրիգոր Նարեկացիների մատենագրական աղբիւրներով: Տեղական սոսկական աւանդութիւնը անուանակոչման այդ տարբերակը յօրինել կամ անառիթ մտաբերել չէր կարող²:

Թուարկուած պարագաները, կարծում ենք, ուսումնասիրողին մղում են բնագրական համեմատութեան, որով կարելի կլինի պարզել նրա նախնականութեան՝ Սահակ-Մաշտոցեան ժամանակներին վերաբերելու հաւաստիութեան աստիճանը: Բնականաբար՝ համեմատութեան առնելիքը Զօհրապեան հրատարակութիւնն է³:

¹ Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 321: Հմմտ. «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, էջ 142: Ս. Սահակին պատկանող կամ թերեւս նրա ձեռքով գրուած Աւետարանի մասին յիշատակութիւն կայ նաեւ Ս. Շուշանիկի «Վկայաբանութեան» հայերէն ընդարձակ տարբերակում. «Եւ ունէր Աւետարան մի փոքրիկ, որ էր նախնոյ նորա Սրբոյ Սահակայ, զոր ընդ իւր ունէր եւ նովաւ աղաչէր զԱստուած ի ծածուկ» (Պ. Մուրահան, Սուրբ Շուշանիկի վկայաբանութիւնը, Երեւան, 1996, էջ 26): Աւետարան ունենալու մասին խօսուում է նաեւ հին վրացերէն բնագրում, սակայն չի մասնաւորեցւում ս. Սահակին պատկանելը (անդ, էջ 79):

² «Մաստրովբոս»-ի կապակցութեամբ տե՛ս Ն. Աղոնց, Մաշտոցը եւ նրա աշակերտները ըստ օտար աղբիւրների. «Մեսրոպ Մաշտոց» յօդուածների ժողովածու, Երեւան, 1962, էջ 199-241:

³ Տարբնթերցումներում սողաղարձի ը-ն նկատի չի առնուում:

Ձեռ 10434, էջ 138v Աւետարան ըստ Ղուկայ

Ա 138v-144r

2^x ականատեսք

3 Թեոփիլոզ

4^x դճրչմարտութիւն

8 քահանայալն

11^x խնկոցն

14 ի ծննդեան

19 Գաբրիէլ

22 Թէ

23^x պաշտամանն

25^x յորս

26 Գաղիղեացւոց

31^x կոչեացես

35 եկեցէ

^x ի քէն]

38^x լեռնակողմն

43 եկեցէ

44 քո

46^x ասէ

62 ակն արկանէին

68 զի]որ

79^x ճանապարհ

Բ 144r -147v

1 յԱւզուստոս

^x աշխարագիր

2 աշխարագիր

3 յաշխարագիր

4 Բեթղեեմ

5 աշխարագիր

8^x գիշերւոյ

10 ժողովրդեանն

15 ցԲեթղեեմ

24 պատարագ

31 ժողովրդոց

37 պահովք

41 ծնողք

44 դրացիսն

50 բանսն

21 ժողովրդեանն մկրրտելն

24^x Յովսեփայն

25^x Ամովսայն

Նաումայ

26 Մաաթայն

Յովսէքայն

27 Զորաբաբէղին

^x Ներեայն

31 Մեղթայն

37 Ենովքայն

Մաղաղաեղին

Դ 150v -154r

10 պարհել

13 ժամա[նա]կ (տեղը պահած է)

16^x յաւուրն (ն-ն աւելացուած է)

^x շաբաթուց

23 ապաքէ՞՞ (քէն-ը աւելացուած է տողի վրայ) բժիշկ բժրչկեա

28 ժողովրդեանն

29 դան (ա-ն լրացուած է նոյն ձեռքով)

32 էր (աւելացուած է նոյն ձեռքով)

33 ժողովրդեանն

34 եւ] (առաջին)

38 ժողովրդենէ

41 բը-ժրչկէր

Գ 147v -150v

1 ի] (նախավերջին)

4 եւ] (վերջին)

11^x ոչն

13^x գհրամայեալն

16 մկրրտեմ

մկրրտեսցէ

19 չարեաց

20 բանդի

Ղուկասի Ավետարանի Ա-Դ գլուխներում թիւ 10434 ձեռագիրը Զօհրապեանի նախընտրած բնագրի համեմատութեամբ տալիս է 69 միաւոր տարբերակներով, որոնցից 20-ի համապատասխանութիւնը գտնուում ենք տողատակի ընթերցումներում (այդ միաւորները մատնացուցել ենք աստղանիշով): Հետեւաբար 1805 թ. հրատարակութեան ձեռագրերում չի եղել այնպիսի մի օրինակ, որը ունենար N 10434 ձեռագրի տարբերակիչ 49 ընթերցումը: Այս փաստն արդեն մեզ մղում է պատասխան որոնելուն: Տարբերակների որոշ խումբ վերաբերում է անորոշ առումին կամ դիմորոշ ն-ի գործածութեանը (դրացիան, բանան, պաշտաման, կոչեցես եւ այլն): Բաւարար հետեւողականութիւն չենք տեսնում բառամիջի ու>ը հնչիւնափոխութեան արտայայտման դէպքում՝ ժողովրդեանն, ժողովրդոց բազմակի գործածութեան դիմաց չունենք սպասելի խ(ը)նկոց, ծն(ը)նդեան, որ առկա է Զօհրապեան բնագրում, թէեւ որոշակի նկատելի է N 10434 ձեռագրի գրչի հակումը բացելու կիսաձայն ը-ի ներկայութիւնը (մկրրտեմ, մկրրտեսցէ, մկրրտելն), իհարկէ, եթէ այդ ը-ն գաղափար օրինակում տողադարձի մնացուկ չէ: Պատահականութիւն չպիտի համարել եկեցէ-ի փոխարեն երկու անգամ եկեցէ (Ա. 35,43) գրութիւն ունենալը, որ ամենայն հաւանականութեամբ կենդանի արտասանութեան հետեւանք է, ինչպէս որ այդ ներկայ է աշխարագիր (Բ 1, 2), Բեթղեմ (Բ 4, 15) գրութիւնների մէջ եւս: Բառային էական տարբերութիւններից է Զօհրապեանի «...քանդի որ ծնանելոցն է ի քէն սուրբ է եւ որդի աստուծոյ կոչեցի» նախադասութեան «ի քէն» մասնաւորեցումի բացակայութիւնը մեր ձեռագրում, որ միանգամայն յարիր է յունարէն բնագրին՝ διὸ καὶ τὸ γεννώμενον ἄγιον κληθήσεται υἱὸ θεοῦ: Այդ պարագայում, թերեւ, «ի քէն»-ը գալիս է նախնական թարգմանութիւնից եւ կամ՝ արդիւնք է հետագայ ոճաւորման փորձի (վրացերէն DE եւ C տարբերակներում նոյնպէս «ի քէն» չկայ):

Նոր Կտակարանի այս կարգի հատուածական դիտարկումների հիմամբ չափազանց վաղաժամ է որեւէ պատմա-մշակութային եզրակացութիւն կատարելը: Նախ պէտք է համեմատութեան առնել բոլոր վաղագոյն գրչութիւն ունեցող ձեռագրերը եւ հստակ սահմանել, թէ քանի խումբ կամ խմբագրութիւն են նրանք ներկայացնում, ապա ճշգրտել նրանց ձեւաւորման ժամանակագրական յաջորդականութիւնը, իսկ այնուհետեւ քննութեան հարց դարձնել որ խմբագրութիւնից գալու եւ խմբագրութիւնների ծնունդ տալու ոչ դիւրին պարագաները: Այս առումով նորից ու նորից պիտի կարգալ երանայիչատակ հայագէտ Յակոբ Անասեանի «Աստուածաշունչ մատեանի հայկական բնագիրը» աշխատութեան եօթերորդ բաժինը՝ «Ի՞նչ է մնում անելու՝ բնագրի վե-

րականգնման բնագաւառում», որ աւարտում է Հայագիտութեան նոր սերնդին պարտաւորեցնող յորդորով. «Հայկական թարգմանութեան դասական բնագրի վերականգնման խնդիրը գտնւում է առաջին գծի վրայ եւ մնում է հրամայական պահանջ, որի իրագործման համար մեր օրերում կան աւելի շատ հնարաւորութիւններ, քան կային մեր դարի սկզբներին: Դրա մասին մեր մասնագէտները պիտի մտածեն թէ՛ հօգուտ հայրենի գիտութեան եւ թէ՛ ի շահ ոչ միայն Հայ-յունական, այլեւ Հայ-ասորական, Հայ-վրացական մշակութային հնօրեայ կապերի ճիշտ լուսաբանման, կապեր, որոնց անխարդախ վկան է հանդիսանալու Սահակ-Մեսրոպեան վերականգնուած բնագիրն իր գիտական կերպարանքով: Հայագիտութեան հերթական խնդիրներից մէկը պէտք է լինի Աստուածաշունչ մատեանի Հայ դասական բնագրի վերջնական վերականգնումը»¹, իսկ մինչ այդ անհրաժեշտ է ճանաչել հին ու ընտիր գրչադրերի բնագրական ընթերցումները:

¹ Յ. Անասեան, նշւ. աշխ., էջ 37:

ՍԱՀԱԿԻ ԵՒ ՄԵՍՐՈՊԻ «ԿԱՏԱՐ ԵՍԼ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԽՆԴԻՐԸ

Խորենացու Պատմութեան երրորդ գրքի ՄԱ - ՄԳ, ՄԵ, ՄԶ, ՄԹ, ԿԳ գլուխներից քաղուած 12 դրուագ, այդ թւում գրերի գլուխի պատմութեանը վերաբերող որոշ հատուածներ, իրենց համապատասխանութիւնն ունեն, երբեմն նոյնիսկ բառացի, Փարսեցու Պատմութեան էջերում: Ն. Բիւզանդացին արձանագրել ու համադրել է այդ ընդհանրութիւնները և «Ուստի՞ են ապա այն նմանութիւնք իմաստից և բանից ի գիրս երկոցուն պատմչաց» սեփական հարցադրումին պատասխանել այսպես. «Հասարակաց աղբերէ՛ յորմէ առած են երկոքին: Այս աղբիւրս հաւանական է որ ըլլայ յիշատակեալն ուրեք ի հին մատեանս մեր Կատարեալ պատմութիւնն Սահակայ և Մեսրոպայ (տե՛ս Սոփերք Հայկականք, հ. Բ, երես 37): Կորիւն վարդապետի Պատմութիւնն չի կրնար համարուիլ Կատարեալ Պատմութիւն, և պէտք է ենթադրել թէ ետ նորա մի ոմն յերկրորդ կամ ի Կրտսեր թարգմանչաց, դասակից Խորենացւոյն գրած է ընդարձակագոյն զՊատմութիւն Սահակայ և Մեսրոպայ, յորմէ քաղած են ազատութեամբ թէ Փարսեցի և թէ Խորենացի»¹:

Ն. Բիւզանդացին հակված է այդ Կատարեալ Պատմութեան մաս համարելու Փարսեցու Պատմութեան կաղմում և ճառընտիրներում անկախաբար ներկայացող «Տեսիլ սրբոյն Սահակայ» բնագիրը իր մեկնությամբ:

Գուցէ խնդիրը հեշտ լուծելի կլինէր՝ եթէ կարելի լինի յենուել Խորենացու և Փարսեցու կենսագրութիւնների ստույգ ժամանակագրութեան վրայ: Սակայն Փարսեցին գիտէ Մովսէս փիլիսոփային (գուցէ Խորենացին է), բայց անտեղեակ է նրա Պատմութեան գոյութեանը (թէև մասնագէտները հակառակ ապացոյցներ են բերում), ուստի Ազաթանգեղոսից ու Փաւստոսից յետոյ երրորդ պատմիչն ինքն է: Այս պարագայում միակ բացատրութիւնն այն է, ինչ առաջարկում է Ն. Բիւզանդացին՝ երկու պատմիչն էլ քաղում են մէկ ընդհանուր աղբիւրից: Սահակին ու Մաշտոցին վերաբերող Կորիւնի երկից աւելի

¹ «Բննասեր». ինքնագրութիւնք Նորայրի, պրակ Բ, Ստոքհոլմ, 1887, էջ 17-18:

ընդարձակ (կատարեալ) աղբիւր հայագիտութեանը ծանօթ չէ: «Սոփերքի» Բ հատորում եղած և Սահակ Պարթևին առնչուող նիւթերը Խորենացու և Փարպեցու երկերում առկայ այդ տասերկու ընդհանրութիւնների աղբիւրագիտական հիմք չեն տալիս¹:

Աւելին, Փ. Անթարեանի կատարած պրպտումների շնորհիվ այժմ պարզուած է, որ Սոփերքի Բ հատորում հրատարակուած այդ բնագիրն ինքն է քաղումներ կատարում պատմիչներ Մ. Խորենացու, Ղ. Փարպեցու, նրանցից օգտուող Դրասխանակերտցու երկերից և, փաստօրէն, Վարդան Արևելցու գրչին պատկանող XIII դարի ստեղծագործութիւնն է²: Եվ յիրաւի, Ն. Բիւզանդացու ուշադրութեան առած տեղեկութիւնը որոշ տարբերակումով առկայ է նաև Վարդան վարդապետի «Բան գովեստի պատմագրաբար՝ վասն սրբոյն Սահակայ և Մեսրոպայ և այլոց թարգմանչացն» երկում:

Սոփերք

Այսպիսիք էին վարք երանելեացն սրբոյն Սահակայ և մեծին Մեսրոպայ, և այսպիսի քաղաքավարութիւնք նոցա, մանաւանդ թէ ևս առաւել քան զսոյն զոր գրեալ է ի Կատարեալ պատմութեանն նոցա:

(ՍՀ, Բ 37)

Բան գովեստի

Այսպիսին էին վարք երանելեացն և այսպիսի հանդէս քաղութեան նոցա և բարւոք քաղաքավարութեան նոցա, մանաւանդ թէ ևս առաւել, որպէս և յայտ է ի Պատմութեանց նոցա, ի բանից և ի գործոց

(ԲՄ, 7, էջ 393)

Մեզ հետաքրքրող հիմնական տարբերութիւնը Սահակին և Մեսրոպին վերաբերող պատմութեան կամ պատմութիւնների «կատարեալ» լինել-չլինելն է, սակայն կարևորը ոչ այնքան նրանց բնութագրումն է, որքան այն հարցը, թէ Վարդան Արևելցին նկատի ունի Կորիւնի մեզ ծանօթ աշխատութիւնը, թէ՞ պատմագրական մի այլ երկ, որի գոյութիւնը ենթադրելի է թեկուզ «Տեսիլի» և նրա մեկնութեան ինքնակայ առկայութեան փաստով: «Կատարեալ պատմութեան» գոյութեան հնարավորութեան օգտին է խօսում վաղմիջնադարեան մի այլ

¹ Այստեղ ներկայացուած և մասամբ մեր խնդիրներին առնչուող բնագիրը «Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ հայրապետին և Մեսրոպայ վարդապետին» է, որ աւելի շուտ ներբողեան պիտի կոչել (Սոփերք, Բ, էջ 5-42):

² Փ. Փ. Անթարեան, Սահակ Պարթևի «Վարքի» և նրա հեղինակի մասին, ՊԲՀ, 1968, N 2, էջ 129-146: Նույնի՝ Վարդան Արևելցու ներբողը՝ նուիրված Հայոց գրերի գիւտին, «Բանբեր Մատենադարանի», N 7(1974թ.), էջ 365-398:

բնագիր ևս, որի գոյութիւնն արձանագրուած է Հայ-վրացական բանասիրութեան մասնագէտների աշխատութիւններում: Աթոսի Իւերոն վանքի ձեռագրական հաւաքածոն ներկայացնելիս Ն. Մառը ուշադրութեան է առել N 8 գրչագրի (նախկին թուահամարը՝ 57) 249r₁ - 250v₂ թերթերի «Կատարումն Ներսէս Մեծի որդի սուրբ Սահակ Պարթևի, որը սուրբ Գրիգորի վեցերորդ սերնդից էր» հայերէնից թարգմանուած բնագիրը¹: Նրա նախնական դիտարկմամբ՝ այս երկի հայերէնը եղել է Ղաղար Փարպեցու ձեռքի տակ և նրա Պատմութեան աղբիւր ծառայել²:

Տասնամեակներ անց, IX-X դարերի վրաց և Հայոց գրական փոխյարաբերութիւններն ուսումնասիրելիս Ի. Աբուլաձէն Հայկական ճանրնաիրներում պրպտեց ու հրատարակեց վրացերէն թարգմանութեանը աղբիւր ծառայած հայերէն մոտաւոր բնագիրը³, որը, բնականաբար, Վարդան Արևելցու «Բան գովեստից» քաղուած լինել չէր կարող, եթէ չասենք ճիշտ հակառակը՝ ինքը կարող էր Վարդանի ճանաչած աղբիւրներից մէկը լինել: Կարծում ենք, աղբիւրագիտական առումով բնաւ զանցառելի չէ X դարի առաջին տասնամեակների մատենագիր Ահարոն Վանանդեցու վկայութիւնը, թէ ս. Նունէի խաչի պատմութիւնը գրելիս ինքը տեղեկութիւններ է քաղել նաև «ի Վարուց սրբոյ, Սահակայ»⁴: Ուստի այդ յուշարձանի երբեմնի գոյութեան հախուռն մերժումը Փ. Անթարեանի կողմից արդարացի չենք կարող նկատել⁵:

Վաղմիջնադարեան այդ վարքագրական երկի, աւելի շուտ քաղուածքի, աղբիւրագիտական նշանակութիւնը պարզելու համար նախ բերենք նրա գրաբարով աւանդուած տեքստը, այն օժտելով Ի. Աբուլաձէի հաւաքած տարրնթերցումների մասամբ պարզեցուած առկցումով և ապա հայերէնի թարգմանենք հին վրացերէն թարգմանութեամբ պահպանուած բնագիրը, որի լիարժէք հայերէն համապատասխանութիւնն առ այսօր երևան չի բերուած:

¹ Նկարագրութիւնը տե՛ս R. Blake, Catalogue des manuscrits géorgiens de la Laure d'Iviron au Mont Athos.- Revue de l'Orient Chretien, 28 (1931-1932), N 3-4, p. 326. N 8 (57) Ձեռագրի բովանդակութիւնը տե՛ս Պ. Մուրադեան, Ագաթանգեղոսի հին վրացերէն խմբագրութիւնները, Երևան, 1982, էջ 112-123:

² H. Mapp, Из поездки на Афон (О грузинских переводах с армянского), ЖМНП, 1899, март, стр. 19.

³ ილია აბულაძე, ქართული და სომხური ლიტერატურული ურთიერთობა XI-X ს.-ში, თბილისი 1944, გვ. 80-84.

⁴ Տե՛ս Պ. Մուրադեան, Սուրբ Շուշանիկի վկայաբանութիւնը, էջ 138:

⁵ Փ. Անթարեան, Սահակ Պարթևի վարքի և նրա..., էջ 145-146:

Կատարումն սրբոյն
Սահակայ Պարթևի

Եւ յայնմ հետէ¹ ամփոփեալ
զինքն առաքինւոյն² յամենայն
աշխարհածուփ զբաւսանաց³
աղաւթից միայն սլարապէր⁴ և
վարդապետութեան⁵ :

Վասն զի⁶ բազումք⁷ յեպիսկո-
պոսաց և յայլոց սլատուական
քահանայից⁸ ոչ երբեք ժուժէին⁹
մեկուսանալ ի մշտաբուղիս¹⁰
աղբերէ¹¹ վարդապետութեան
սրբոյն¹² :

Եւ կեցեալ¹³ ամս բազումս¹⁴
և հասեալ¹⁵ յերկար¹⁶ ծերու-
թիւն¹⁷ նստէր¹⁸ ի սուրբ եկե-
ղեցւոջն ի վերայ բեմբին մերձ ի
սեղանն Աստուծոյ ի սուրբ կա-
թողիկէին :

Եւ վասն զի ոչ գոյր իւր¹⁹
արու²⁰ որդի, բայց միայն դուստր
մի, զոր էր տուեալ²¹ ի կնութիւն²²
Համազասպայ տեառն Մամիկո-
նէից²³ և Հայոց²⁴ սպարապետի²⁵,
որ ծնաւ ի Համազասպայ²⁶ երիս
արու²⁷ որդիս²⁸ զսուրբն Վար-
դան և զսուրբն Հմայեակ²⁹ և զե-
րանելին Համազասպեան, որոց³⁰
ետ և կնքեաց սուրբ³¹ այրն³²
Աստուծոյ Սահակ³³ զստացուածս
գեաւղից³⁴ իւրոց³⁵ և ազարա-
կաց, և որ³⁶ ինչ միանգամ³⁷ էր
իւր³⁸ ետ նոցա ի ժառանգու-
թիւն³⁹ և գաւակաց⁴⁰ նոցա⁴¹
մինչև յաւիտեան⁴² :

Աւրհնեաց զնոսա աւրհնու-

Կատարումն Ներսէս Մեծի որդի
սուրբ Սահակ Պարթևի, որը սուրբ
Գրիգորի վեցերորդ սերնդից էր

Հայրերի վաղեմի սովորոյթի հա-
ճաճայն [ս. Սահակը] կարգով
ամուսնացած էր և չունէր արու զա-
ւակ, այլ միայն մէկ դուստր, ուստի
տխուր էր՝ «Մի գուցէ մեղքիս սլատ-
ճառով ընդհատուում է իմ նախնյաց
տոհմը» :

Եւ Քրիստոսի այս սպասաւորը
ձեռք քաշեց այսրաշխարհային բո-
լոր հոգսերից ու զբազուեց աղօթե-
լով : Նա իր մօտ ունէր եօթանասուն
աշակերտ և անասպատում վարում էր
հրեշտակային կեանք :

Եւ այնուչեաւ, երբ եպիսկոպոս
եղաւ՝ վարում էր նախնեաց կարգա-
ւորութեամբ, ուստի սրբազան եպիս-
կոպոսներից և արժանաւոր քահա-
նաներից շատերը չէին բաժանուում
նրա անընդհատ վարդապետութիւ-
նից ու յորդորից, քանի որ աղբիւրի
պէս բխում էր իմաստութեամբ և
նրա մօտ հաստատուած աստուածա-
յին հոգով :

Այսպէս հասաւ բարի ծերու-
թեան, և մէկ օր, երբ նա նստած էր
սուրբ Կաթողիկէ եկեղեցում՝ սուրբ
խորանին մօտիկ, զարմանահրաշ
տեսիլ ներկայացաւ նրան. յայտ-
նուեց տիրօջ հրեշտակը և ասաց, թէ՛
«Քեզ Դանիէլի պես ուղարկեցի, ով
սրտաբուխ մարդ, դու չես մեղանչել,
այլ զօրականների գործած մեղքերի
սլատճառով նրանցից վերացաւ ձեր
տոհմը» : Եւ մխիթարեց նրան հրեշ-

թեամբ բազմա⁴³ և պատուի-
 րեաց նոցա պահել զվարդա-
 պետութիւն⁴⁴ պատուիրանի⁴⁵
 սրբոյն Գրիգորի, զոր ուսոյց և
 աւանդեաց⁴⁶ ամենայն աշխար-
 հիս⁴⁷ Հայոց⁴⁸ ճշմարտութե-
 ամբ⁴⁹: Եւ ամբարձեալ զձեռս⁵⁰
 իւր վախճանեցաւ⁵¹ խաղաղու-
 թեամբ⁵² ի դաւառին Բագրևան-
 դայ⁵³, ի գիւղն⁵⁴ որ անուանե-
 ցաւ⁵⁵ կոչի Բլուր, ի սկզբան⁵⁶
 ամին երկրորդի⁵⁷ Յազկերտի⁵⁸,
 որդւոյ⁵⁹ Վռամայ, թագաւորին
 Պարսից⁶⁰, յամսեանն Նաւասար-
 դի որ նաւր երեսուն էր⁶¹ ամսոյն⁶²,
 յերկրորդ⁶³ ժամու աւուրն, որ եւ
 դաւր ծննդեան⁶⁴ սրբոյն ի
 ստոյգ⁶⁵ գիտողաց⁶⁶: Որոց⁶⁷
 առեալ զտենչայի⁶⁸ նշխարս⁶⁹
 սրբոյն⁷⁰ բազմութեամբ⁷¹ քահա-
 նայից և ազատաց⁷², տարան ի
 դաւառն Տարաւնոյ⁷³, ի բնիկ
 գիւղն⁷⁴ իւր սեպհական⁷⁵, յա-
 նուանեալն⁷⁶ Աշտիշատ⁷⁷ և անդ
 կազմեալ զհանգստարան⁷⁸
 սրբոյն⁷⁹ պատեցին⁸⁰ զպար-
 կեշտ⁸¹ մարմինն⁸² արդարոյն⁸³
 ըստ արժանի կայանից⁸⁴ ճշմար-
 տին⁸⁵: Ուր⁸⁶ և շինեալ եկեղե-
 ցի⁸⁷ մեծապայծառ⁸⁸ և վկայա-
 րան⁸⁹ սրբոց⁹⁰ զարդարեցին⁹¹
 պատուական և մեծագին սպա-
 սուք⁹² հիմնացուցեալ⁹³ կանգնե-
 ցին ի տեղւոջն վանս⁹⁴ բազմու-
 թեան⁹⁵ պաշտաւնէից կարգեալ⁹⁶
 դարման⁹⁷ անպակաս պտղոց ի
 հանգիստ⁹⁸ առաւելեալ⁹⁹ եղբայ-
 րութեանն¹⁰⁰ ժողովս¹⁰¹ տարևո-

տակը, և քանի որ բազում էին նրա
 արժանաւորութիւնները՝ ուստի սոյն
 գրութեամբ [այստեղ] պատմել չենք
 կարող:

Եւ [իշխանները] ըմբոստացան
 թագաւորի դէմ, ուստի ուղեցին
 [Սահակին] տանել Պարսկաստան՝
 անհաւատ թագաւորի և պարսից
 աստիճանաւորների գնդի առաջ
 ասելու [այն], ինչ մենք չկարողա-
 ցանք կռահել նրա խօսքերի խորքը:

Եւ զարմացան թագաւորն ու ամե-
 նայն բազումք, թէ ինչպէս [Սա-
 հակը] մահուան վախ չունի իր
 սրտում և այսպիսի հանգիստ խղճով
 իմաստութիւն է խորհում:

Եւ հրամայեց իբրև քաջ այրի և
 մտքով անվախի՝ նրան արժաթ տալ:
 Սակայն նա չվերցրեց և ասաց. «Քո
 արժաթը թող քեզ մնա», և ողոր-
 մածութիւն խնդրեց նրանց յանդէպ,
 ովքեր զայրացել էին իրենից: Եւ
 այսպէս ուղարկեց:

Երանելին իր դատերը կնութեան
 էր տուել Համազասպին՝ Մամի-
 կոնէից տիրօջը, որը Հայաստանի
 սպայապետն էր: Իսկ նա Համա-
 զասպին շնորհեց երեք որդի՝ սուրբն
 Վարդան, սուրբն Հմայեակ և երա-
 նելին Համազասպեան, որոնց այդ
 աստուածային այրը տուեց իր
 ժառանգութիւնն ու աւանները:

Իսկ այն ժամանակ, երբ նրա մօտ
 եկան Հայաստանի իշխանները և
 խնդրում էին նրան, որպէսզի վերս-
 տին նստի իր աթոռին, [քանի որ]
 նա թողել էր աթոռը և անցել Յու-
 նաց բաժին: Իսկ նա չէր հնազանդ-

րականս¹⁰² աշխարհայորդոր¹⁰³
 բազմութեամբ¹⁰⁴ հաստատե-
 ցին¹⁰⁵ ի տեղւոջն, որ ըստ ժամա-
 նակի¹⁰⁶ բազմամբոխ ժողովր-
 դաւք կամաւոր յաւժարութեամբ
 ազատք և քահանայք գաւառին,
 այլ և կարի¹⁰⁷ յոյժ ի հեռաւոր
 տեղեաց^{107ա} դիմեալք յաւր կար-
 գադրութեան^{107բ} նորա կատա-
 րեն¹⁰⁸: Որ և¹⁰⁹ բազում աւզնա-
 կանութիւնս¹¹⁰ առողջութեան¹¹¹
 ըստ իւրաքանչիւր ախտից¹¹²
 շահէին¹¹³ ի նշխարաց սրբոյն
 եւ¹¹⁴ ուրախայից սրտիւ¹¹⁵ դառ-
 նային ի բնակութիւն¹¹⁶ յիւրա-
 քանչիւր¹¹⁷ փառաւորելով¹¹⁸
 զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին
 այժմ և միշտ և յաւիտեանս
 յաւիտենից, ամէն:

ւում ու հարկադրեալ նրանց պատ-
 մեց տեսիլը:

Եվ իշխանները մեծապէս տխրե-
 ցին: Ու նա որպէս կաթողիկոսական
 աթոռի պահապան նրանց տուեց
 երանելի Մաշտոցին, որը Մեսրոպ էր
 կոչւում և չէր ուզում հեռանալ նրա-
 նից: Սակայն աստուածային այն այ-
 րը նրան յորդորեց ու ասաց. «Գնա
 սրանց հետ, երբ ես ելնեմ այս աշ-
 խարհից՝ դու նոյնպէս հեռացիր
 կեանքից»:

Եվ այնուհետև, երբ հասաւ այս
 սրբի վախճանի ժամանակը, օրհնեց
 այդ մանուկներին և իր ողջ ժառան-
 գութիւնը յաւերժ տուեց նրանց ու
 նրանց տոհմակիցներին: Եւ խրա-
 տում էր ամուր պահպանել սուրբ
 Գրիգորի վարդապետութիւնը, որը
 աւանդեց ու կարգաւորեց ամենայն
 Հայաստանը ճշմարտութեամբ: Ապա
 ձեռքերը պարզեց դեպի երկինք և
 աղօթքով խաղաղութեամբ վախ-
 ճանուեց Բագրևանդի երկրում,
 Բլուր կոչուող գիւղում՝ Պարսից ար-
 քայ Վռամի որդի Յազկերտ արքայի
 երկրորդ տարուայ սկզբին:

Նա վախճանուեց Նաւասարդ ամ-
 սի, որ է Ապրիլ, 30-ին, օրուայ երկ-
 րորդ ժամին, հետևաբար նոյն ամսի
 հենց այն օրը, որ ծնուել էր այդ
 երանելին: Եւ քահանաների ու ազ-
 նուականների բազմութիւնը վերց-
 րեց նրա բաղձալի նշխարները և
 տարաւ Տարօնի երկիր, իր սեփական
 բնիկ ժառանգութեան գիւղ, որ
 կոչում են Աշտիշատ: Եւ անդ շինե-
 ցին նրա հանգստարանը, ու տեղը

մեծ կարգաւորութեամբ վանք հաստատեցին և նրանում՝ լիառատ պարէն ու հազուատ ունեցող եղբարց բազմութիւն: Ասլա սահմանեցին նրա յիշատակի տօն, որին ժողովրդային բազմութիւն է հաւաքում, հեռաւորներ ու մերձաւորներ. իրենց կամօք երանելու յիշատակին են գալիս ազնուականներ և քահանայից բազմութիւն: Եւ նրա բարեխօսութեամբ շատերը բուժւում էին իրենց ամէն մի ցաւից ու այդպէս վերադառնում իրենց տուն՝ ի փառաւորութիւն Հօր և Որդու և Սուրբ Հոգու, որին է փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Համեմատութեան առնուած Մատենադարանի ձեռագրեր

- | | |
|------------------------|----------------------------------|
| D - 4871 (XIII դ.) | O - 993 (1456 թ.) |
| E - 4709 (1344 թ.) | Թ - 4869 (1482 թ.) |
| F - 7443 (XIV դ.) | Չ - 4822 (1491 թ.) |
| J - 3797 (XIV - XV դ.) | R - 3791 (XV դ.) |
| K - 1524 (1401 թ.) | T - 4676 (XV դ.) |
| M - 4802 (1404 թ.) | Ls - Ղ. Փարպեցու Պատմ. (1904 թ.) |
| N - 996 (1442 թ.) | |

Խորագիր Կատարումն... Պակ[թեխի] Հանգիստ Սահակայ սրբոյ Հայրապետին հանուրց Հայոց N, Հանգիստ սրբոյն Սահակայ Հայրապետին Հայոց F, Մահ սրբոյն Սահակայ Հայրապետի O, Կատարումն սրբոյն Սահակայ Հայրապետին EJ KMP, Բարեկենդանի յատարումն սրբոյն Սահակայ կատարումն T, Սրբոյ ուղի շաբաթուն՝ շաբաթի աւր սրբոյն Սահակայ կատարումն D.

1 յայնմ հետէ FNLS], այնուհետև + դինք K, առաքինւոյն] առ ի նոյն JKP, առաքինոյն + սրբոյն Սահակայ DEFJ KMNPR, + սրբոյն Q, 3 դբաւսանաց] դբաղմանց MQR, 4 պարապեալ R, 5 ~ և վարդա-

պետութեան պարապէր FN, վարդապետութեան + ի փառս Աստուծոյ Q, 1-5 և յայնմ հետէ... վարդապետութեան] O, 6 եւ փասն դի Q, 7 բազումն K, 8 և յայոց պատուական քահանայից] և ի քահանայից DEJKMPT, ի պատուական F, 9 երբեք ժուժէին] կարէին Q ժուժէին + տեւել և LsOR, 10 մշտնջենարուխ DEJKMNPQRT, 11 աղբերէն R, 12 վարդապետութենէ սրբոյ N, սրբոյն + ուր ուրեք ի դէպ երիս ոստայնի (ոստանի D) կամ ի հովս DEJKMPRT, ուր (ուրեք O, ուրեք] R) ուրեք դիմէր (դիպէր FOQR) ի տեղիս ոստայնի (ոստանին F, ոստայնին N, մենաստանին R, ոստայնի] Q, յոստանի O) կամ (J և F) ի հովս (հովիտս N, + ոստանի Q) FNOQR, 13 կացեալ FN, 14 բազում FNOQ 15 և հասեալ] հասեալ EIKMP, եհաս N, 16 ի երկար RLs, 17 ծերութեան DIKNQR, ծերութիւնս F, ծերութիւն + բաց ունելով զեպիսկոպոսապետութիւնն ամս :ՄԱ: O, 18 նստէր... Կաթողիկէին [դրուազը քաղուած է Տեսիլքի խորագրից - ծան. Ի.Ա.] Ls, 19 իւր] նմա Q նորա FMNR, 20 արու] DFKNOR, ~ որդի արու Q, 21 ~ տուեալ էր DEJKMOPQT, 22 ի կնութիւն]յամուսնութիւն N, կնութեան Ls, 23 ~ Մամիկոնէից տեառն EJKMPRT, Մամիկոնենից տեառն D, 24 և Հայոց] Հայոց EJMOPQ, 25 սպայապետի Q, ասպարապետի, DEFJKMOPT, ասպարապետի, որ + և EFJKMNOPT, 26 ի Համադասալ R, 27 արու]EJKMOPQ 28 արու որդիս] ուստերս T, 29 զսուրբն Հմայեակ] զՀմայեակ JKMPRT, Հմայեակ DE, Հմայեկ MO, 30 որոց + կտակ EJKMOP, 31 սուրբն F, 32 այրն] F, 33 Իսահակ Q, ~ այրն Աստուծոյ սուրբն Սահակ NRT, 34 գեղից EJPR, գիւղից F, գեղից DKMNOQ, 35 իւրոց] Q, 36 գոր Q, 37 միանգամ] FNQ, 38 էր իւր] ունէր Q, ~ իւր էր DJKMNOPQT, 39 ի ժառանգութիւն] F, ի ժառանգութեան R, 40 զաւակի DEFN, 41 նոցա + յետ նոցա KR, 42 յաւիտեանս DEKT, ցյաւիտեան PLs, և զաւակաց նոցա մինչև յաւիտեան] Q, 43 աւրհնութեամբ բազմաւ] FOQLs., 44 զվարդապետութիւն] զպատուիրանս F, զհրամանս N, 45 պատուիրանի OQ, պատուիրանին R, 46 աւանդեաց]պատուիրեաց F, աւանդեաց+ճշմարտութեամբ FNQRLs, 47 ամենայն աշխարհիս]աշխարհիս FNQ, ամենայն երկրիս R, երկրիս DEJKMP, 48 Հայոց+ճառայել (+Աստուծոյ F) և երկիր պազանել (+միումն FO) միայնոյ (+միումն Q), 49 ճշմարտի (ճշմարտին FOQR,]N) Աստուծոյ] KMNP+ և OQR) տեառն մերոյ] QR, և] MNQR, փրկչին] MNOR, Յիսուսի Քրիստոսի (+և ամենակալ սուրբ հոգւոյն, որում վայել է փառք յաւիտենից յաւիտեան O) DEFJKMNOPT, 50 դձեռն, 51 վախճանեցաւ + երանելի սուրբ հայրապետն EJKT + երանելի OQ], 52 խաղաղութեամբ DEJKRT, խաղա-

դուժեամբ + Հանգստիւ DEJMPTLs, + Հանգստութեամբ OQ, +
 Հանգստեամբ R, 53 Բագրեանդեայ F, 54 ի գեղն DEFJKMNOQ, 55
 անուանեալ] OQRLs., 56 ի սկզբան] FNORLs., 57 երկրորդի] J,
 երկրորդ DRT, յառաջին Q, 58 Աղկերտի Q, 59 որդւոյն
 DEFKMNOPQT, 60 Պարսից արքային DEJKMOPT, արքային Պարսից
 NQR, թագաւորի Պարսից F, 61 էր] FN, 62 ամսոյն] OQR, 63
 յերկրորդ]յերրորդ N, և յերրորդ F, 64 ծննդեանն JKNQLs., 65 ի
 ստոյգ]ստոյգ R, 66 գիտողացն R, գիտողաց + և ի սլատմութենէ
 երանելի (JK) առն սրբոյ (JK) Հաստատեալ գրեցաք զաւր ծննդեան
 սրբոյն (JQ) ի նմին ամսեան (ամսոյ Q) եղեալ (JQ) KQ, + և (JR) ի
 սլատմութենէ երանելոյն (երանելոյ RLs) սրբոյն (JNLs) առն (առնն R,
 + Կորեան Ls., + Կորենայ N) Հաստատեալ (Հաստատուն R) գրեցաք
 (+ լինել նոյն Ls., + լինել և նոյն R) աւր (JN, + և Ls.) ծննդեան (JN)
 սրբոյն (JN, + լեալ N) ի նմին ամսեանն (ամսեան Ls.) NRLs., + և ի
 սլատմութենէ սրբոյն սրբոյ T,] F) առնն (~ առն սրբոյն JMOP)
 Կորեան (DJMOPT) Հաստատել (Հաստատեցաք F) գրեցաք (JF, +
 լինել FT) նոյն (DJMOPT) զաւր (աւր FT) ծննդեան սրբոն (սրբոյ M,
 + Սահակայ O) ի նմին ամսեան եղեալ (JFT, լինել JMOP) DJMOPT,
 67 որոյ JRT, 68 զտենչալին D, 69 նշխար Q, 70 սրբոյն + Սահակայ
 EJKP 71 բազմութեան F, բազմութիւն NR, 72 ~ ազատաց և քահա-
 նայից DEJRT, արանց և քահանայից F, ազատաց + սրբոց O, 73 Տա-
 րունոյ DRT, Տարաւն F, Տարոնոյ M, 74 գեղն DKMNPQR, գեաւղն
 EJT, գեղն F, 75 սեպական]DEFJKMPT, 76 յանուանեալն]EJKMPT,
 77 Յաշտիշատ DJKPT, 78 անդ կազմեալ զՀանգստարան] J
 զՀանգստարանն Ls., 79 սրբոյն]J, 80 պատեցին] R, և պատեցին
 EKMP, և պատուեցին FJ, 81 պատուեցին զպարկեշտ] FR, 82 մարմին
 DJKMOPQT, մարմին]R, զմարմինս F, 83 արդարոյն] FOQ,
 արդարոյն] երանելոյն NR, 84 Կայենիցն R, Կայենից DEJKMT, 85 ~
 ճշմարտին կայանից F, ճշմարտին] սրբոյն DEJKNPT, սրբոց M,
 երանելոյն Q, ճշմարտին + ազատաց և քահանայից N, 86 ուր որ
 EJMKNPQR, 87 եկեղեցիս JMOT, 88 մեծապայծառս EJKMOPT, 89 ի
 վկայարանի DEJKMOP, վկայարան]Q, 90 սրբոյն DEFJKMNOPT,
 սրբոց]Q, 91 և զարդարեցին DEJKMNOPQT, 92 մեծագին սպասիւք
 DEJKMPQT, մեծագին և պատուական սպասիւք O, պատուական
 սպասիւք F, պատուական սպասիւք N, 93 Հիմնեցուցին N, Հիմնա-
 ցուցին EO, 94 ի տեղւոջն վանս] յաղագս Q, վասն ի տեղւոջն և N, ի
 տեղւոջն վասն R, 95 բազմութիւնն MN, բազմութեան]Q, բազմութիւն
 DEJMOP, բազմութեամբ F, 96 և կարգեալ JKMOPT, կարգեալ]Q,

97 դարձան QR , դարձան J կերակուրս EJK , դպեաւ N , 98 պտղոց ի հանգիստ $FNRLs.$, 99 առաւելեալ... ամէն J պտղաբեր ծառոց ի պէտս պաշտաւնէիցն, և ամ յամէ գլխատակս սրբոյն կատարէին, որ և բազում աւզնութիւն առողջութեամբ ի հեռաւորաց և մերձաւորաց դային և շահէին ի նշխարաց սրբոյն Q , 100 եղբայրութեանցն $EJMOP$, 101 և ժողովս N , 102 տարևորս տարեկանս $EFJMPT$, 103 աշխարհի այս յորդոր D , աշխարհաց որդորս R , 104 բազմութեամբ + կարգեալ R , 105 զայս հաստատեալ O , հաստատեցին ի տեղւոջն NO , 106 որ ըստ ժամանակի... յաւժարութեամբ $JDEJKMPT$, 107 և կարի J կարի F , 107ա տեղաց O 107բ յաւր կարգադրութեան J - հանդստեան R , յիշատակի N , 108 այլ և կարի... կատարեն $JDEJKT$, կատարեն J տաւնեն FNR , 109 որ և J ուստի և FNR , 110 աւզնականութիւն R աւզնութիւն N , աւզնականութիւնս JDE , 111 առողջութիւն $DEJKMPT$, և առողջութիւն R , 112 ախտիցն DT , 113 շահեալ F , շնորհեալք DR , շահեալք N , շնորհեալ $EJKMPT$, 114 և $JDFR$, 115 սրտիւք F , 116 ի բնակութիւնս DFO ի բնակութիւն $JNJR$, 117 յիւրաքանչիւր J իւրեանց FO , + տեղիս N , ~ յիւրաքանչիւր բնակութիւնս R , դառնային ի բնակութիւնս յիւրաքանչիւր $JFJKMP$, 118 փառաւորելով զհայր և զորդի և զսուրբ հոգին (զհոգին F) այժմ (JDF) և (JFN) միշտ (JDF) որում ($JFNR$) փառք ($JFNR$) յաւիտեանս յաւիտենից, ամէն (JFN) J փառաւորելով զԱստուած և Քրիստոսի անճառ մարդասիրութեանն (մարդասիրութեան E) փառք յաւիտեանս, ամէն (JM) $EKMP$, փառաւորելով զՔրիստոս Աստուած և մեզ ամենեցուն բարեխաւս ունիմք զսուրբ հայրապետն առ Քրիստոս Աստուած, զի թողցէ զմեզս մեր և զննջեցելոց մերոց T ($JL.s.$)

Ամէնից առաջ արձանագրելի է, որ գրաբար այս կարճառօտ բնագրի կազմողը կամ խմբագրողը անտեղեակ չէ Կորինի հեղինակած վարքին, այլև որոշ տեղեկություններ քաղում է նրանից ու տալիս նրա անունը՝ թեկուզ աղաւաղումով (Կորենայ N): Այդ, իհարկէ, բնաւ չի նշանակում, թէ մենք կասկածի տակ ենք առնում վրացերէնի թարգմանուած հայերէն բնագրի անկախ գոյութիւնը: Արձանագրենք այն ակնյայտ իրողութիւնը, թէ բերուած գրաբար տեքստը ամբողջութեամբ և աննշան տարրնթերցումներով քաղուած է այսօր Ղազար Փարպեցու Պատմութեան Ա դրուագ ներկայացող բնագրից, մասնավորապէս նրա ԺԸ հատուածն է, ինչը նկատուած է վաղուց՝ Ն.Մառի նախնական ծանուցումից սկսած: Սակայն նոյնքան վաղուց էլ ասուած է, որ այդ դրուագը՝ Սահակի Պատմութիւնը կամ Տեսիլը, ինքնակայ երկ է,

Ն. Ակինեանի կարծիքով արարուած VIII դարի առաջին կէսին¹, սակայն եթէ Շահապիվանի 446/7թ. ժողովի կանոնների նախաբանում Սահակի Տեսիլը յիշատակւում է («...ի փոխել նոցա յերկրէս (իմա՛ Սահակայ և Մեսրոփայ - Պ. Մ.) լինէր եղծումն և քայքայումն կարգաց և աւրինաց սրբոյ եկեղեցոյ, որպէս և տեսանէր ի տեսլեան յառաջա- դոյն սուրբ քահանայապետն Սահակ...»)², ուրեմն այն կամ նրա ինչ- որ տարբերակ յիրաւի արդէն գոյութիւն ունէր³: Փարպեցին ինքն է այդ դրուազը սեփական Պատմութիւն մուծել, թէ՞ այն տեղի է ունեցել հետագայում, որևէ խմբագրի ձեռքով՝ դժուար լուծելի հարց է և ներկայ դէպքում մեզ առանձնապէս չի զբաղեցնում: Ուժի մէջ պիտի մնայ Ն. Մառի աշխատանքային այն դրոյթը, թէ վրացերէն թարգմա- նութեամբ պահպանուածի հայերէն բնագիրն աղբիւր է ծառայել պատ- միչի համար:

Թարգմանաբար աւանդուած այդ բնագրում կան առկայ գրաբար տարբերակի համեմատութեամբ յաւելումներ, որոնք քաղուած են Մովսէս Խորենացու Պատմութեան երրորդ գրքի մի քանի գլուխներից, միանգամայն այլ յաջորդականութեամբ՝ III, ԽԹ + ԾԱ + ԽԹ + ԿԵ + ԿԶ և այլն: Այստեղ արժէ ուշադրութեան առնել երկու հանգամանք.

ա) Խորենացին ընթերցողին զգուշացնում է «Բայց թէ ասիցէ ոք, պարտ է մեզ զասացեալսն մեծին Սահակայ ի Պարսից հրապա- րակախօսութեանն գրել՝ զիտասցէ, զի ոչ յուժեքէ ի լսելիս մեր հասեալ է բովանդակին ճշմարտութեամբ, և ոչ մեք ի պատմութեանս հիւսել հաւանիմք»: Ուրեմն Խորենացու ձեռքի տակ եղած աղբիւրը ման- համասնություններ չի բովանդակել, ինչպէս որ այդպիսիք չկան «Կա- տարումն ...սրբոյն Սահակայ» այս բնագրում. բայց խիստ ուշադրաւ է, որ Խորենացու ճիշտ նոյն գլուխներից քաղուած մի բնագրական յարասում էլ գտնում ենք «Ս. Շուշանիկի վկայաբանութեան» հայերէն համառօտ խմբագրութեան կազմում, որին մենք երիցս անդրադարձել ենք⁴: Այս բոլորի հիման վրայ վստահաբար կարող ենք ասել, թէ V դա- րից արդէն գոյութիւն է ունեցել Սահակ Պարթևի վարքն ու քա-

¹ Հ. Ներսէս վ. Ակինեան, Տեսիլ ս.Սահակայ, Վիեննա, 1948, էջ 10:

² Կանոնագիրք Հայոց, Ա, աշխատասիրութեամբ Վ.Ա.Յակոբեանի, Երևան, 1964, էջ 425:

³ Գոյութիւն ունեցող կովանների ու կարծիքների հանգամանայի քննութիւնը տրուած է Ն.Ակինեանի յիշեալ աշխատութեան մէջ:

⁴ Պ. Մուրադեան, Մովսէս Խորենացու բնագրական հետքերը..., «Էջմիածին» 1992, N 6-7, էջ 94, հմտ. նոյնի՝ Սուրբ Շուշանիկի վկայաբանութիւնը, Երևան, 1996, էջ 112, նաև՝ Բնագրական դիտարկումներ Խորենացու Պատմութեան հեղինակային իսկազիրը վերականգնելու ստնչութեամբ. - Հայկազեան հայագիտական հանդէս, հատ. ԻԱ, Պէյրութ, 2001, էջ 80-82:

դաքաւարութիւնը պատմող մի երկասիրութիւն, որից անկախաբար օգտուել են Խորենացին, Փարպեցին, Շուշանիկի վարքի համառօտ խմբագրութեան կաղմողը, Ահարոն Վանանդեցին և վերջապէս, «Կատարումն... սրբոյն Սահակայ» երկի վրացերեն թարգմանիչը VII-VIII դարերի շրջանակում: Բայց եթէ նկատի ունենանք նաև Խորենացու Պատմութեան մէջ չներկայացուած առանձին իրողութիւնների առկայութիւնը վրացերէն թարգմանութեան մէջ, մասնավորապէս նրա առաջին իսկ նախադասութիւնը, թէ «Հայրերի վաղեմի սովորոյթի համաձայն [ս.Սահակը] կարգով ամուսնացած էր և չունէր արու զաւակ, այլ միայն մէկ դուստր, ուստի տխուր էր՝ «Մի գուցէ մեղքիս պատճառով ընդհատուած է իմ նախնեաց տոհմը», որը միայն մասամբ է արձագանքում Խորենացու ունեցածին, ապա այն, որ Սահակին յայտնուած է տիրոջ հրեշտակը և մխիթարում, թէ տոհմի ընդհատումը քո մեղքի պատճառով չէ, այլ՝ զօրականների գործած մեղքերի, կարող ենք ասել, թէ որոնելի է մէկ այլ աղբիւր ևս: Ուստի արդարացի պիտի նկատել Ի. Աբուլաձէի այն եզրակացութիւնը, թէ «Խորենացու և վրացերէն թարգմանութեան բնագրի համապատասխան տեղիները, իրարից անկախ սկիզբ են առնում հայկական ինչ-որ մէկ ուրիշ աղբիւրից»¹, և այդ աղբիւրն է «Պատմուածք Պատմութիւնից» երկը²: Վերջինիս կապակցութեամբ Լ. Մելիքսեթ-Բէկը պարզել է, որ այն թարգմանութիւն է յունարէնով պահպանուած Διήγησις... նշանաւոր երկի և նրան կից դարձեալ յունարէնով աւանդուած Catholici Armeniae քաղկեդոնական գրուածքի³: Սակայն խօսքը բառացիորէն նրանից քաղուած լինելուն չի վերաբերում, որովհետև վերջինիս մէջ Սահակը միայն մահուան առիթով է յիշուած⁴: «Պատմուածք Պատմութիւնիցը» Խորենացու և «Կատարումն սրբոյն Սահակայ» հին վրացերէն թարգմանութեանն աւելի մոտ է. բերում ենք այդ հատուածը Լ. Մելիքսեթ-Բէկի թարգմանութեամբ.

«Սրանից յետոյ Հայոց ազատները (ազատնի) գնացին սուրբ Սահակի մօտ՝ խնդրելով, որ նրանց ի չարն չյիշի և վերադառնայ իր աթոռը: Բայց նա չլսեց նրանց և պատմեց նրանց այն տեսիլքը, որ տեսել էր

¹ Ծ. ճշգրտւած, նշվ. աշխ. էջ 0146:

² Վրացերէն թարգմանութիւնը տե՛ս Թ. յԹՃԾԾԾԾ, յԹՈՆՈՅՅԾԾ, I, թ. 336-341

³ Լեւոն Մելիքսեթ - Բէկ, Վրաց աղբիւրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 77-86:

⁴ Բնագրի ու թարգմանութեան վերջին հրատարակութիւնը տե՛ս В. А. Арутюнова-Фиданян, Повествование о делах армянских. VII век. Источник и время, М., 2004, стр. 159 (§ 28):

նրանց քակուելու (վարատման - Պ. Մ.) մասին: Բայց իր փոխարէն ասթուի սրահապան տուեց երանելի Մաշտոցին (Մաստոցին): Եվ նրա (Սահակի) ու Մաշտոցի (Մաստոցի) մահից յետոյ երիցապետական ասթուի վրա կարգեցին Գիւտին (Կիտին), որը...»¹:

Մաշտոց անուան Մաստոց տառադարձումն իսկ բաւական է «Պատմուածք Պատմութիւնիցի» յունական աղբիւր մատնացուցելու համար², բայց քանի որ «Կատարումն Սահակայն» թարգմանուած է հայերէն բնագրից՝ այնտեղ ի շարս բազում այլ հայկաբանութիւնների, ունենք նաև «Մաշտոց»: Թէրևս աւելի հաւանական պիտի համարել այն ենթադրութիւնը, թէ գոյութիւն է ունեցել հայերէն նախնական մի բնագիր - տարբերակ, որից հաւասարապէս օգտուում են թէ՛ Փարպեցին ու նրանից յետոյ եկող հայ հեղինակները և թէ՛ յոյն և վրացի թարգմանիչները:

Յամենայն դէպս հին վրացերէն թարգմանութեամբ մեզ է հասել վաղմիջնադարեան մի բնագիր, որը չի նոյնանում իրէն աղբիւր ծառայած պատմիչների երկերի հետ կամ, թէրևս, ինքը կարող էր աղբիւր հանդիսանալ պատմիչների համար: Այն քաղուած պիտի լինի երբեմնի մի ամբողջական երկից, որը, ի տարբերութիւն միւս մատենագիրների մօտ եղած տեղեկութիւնների, այդ թւում և Կորիւնի երկի, հաւակնել է կոչուել «Կատարեալ պատմութիւն Սահակայ և Մեսրոպայ» կամ «Վարք սրբոյն Սահակայ»: Այդ աղբիւրը հնարաւորութիւն է տալիս կռահելու Մեսրոպ Մաշտոցի կրկնանուան ձևաւորման եղանակը՝ «Մաշտոց, որը Մեսրոպ էր կոչուում»³: Չենք կարծում, թէ սա արդիւնք է Խորենացու և Փարպեցու յիշած անունների հաշտեցման փորձի, թէև ինքը բնագիրը խարսխուած է այդ զոյգ պատմիչների գործերում ներկայացուած հատուածների վրայ, բայց իւրովի կառոյցով:

¹ Լ.Մնլիքսեթ-Բէկ, նշվ. աշխ., 77-78:

² Յունարէն տառադարձման շուրջ տե՛ս Ն. Աղոնց, Մաշթոց և նրա աշակերտները... 202-203:

³ Այդ վկայութիւնն ուշադրութեան ենք առել վաղուց, տե՛ս մեր «Հայ-վրացական գրական-մշակութային փոխյարաբերութիւնների պատմութիւնից» - Հայկ. ՍՍՈՒ ԳԱ Տեղեկագիր, 1964, N 10, էջ 66-67:

ԱՐՑԱԽԸ ՎՐԱՑԱԿԱՆ ՆՈՐԱՅԱՅՏ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

ՄԱՄՈՒԼԻ հաղորդումներից արդեն յայտնի է, որ 1975թ. Սինայի ս. Եկատերինէ վանքում պատահած հրդեհը հանգցնելիս միջնադարեան ձեռագրերի մինչ այդ անյայտ պահոց յայտնաբերուեց: Ի թիւս Քրիստոնեայ Արեւելքի այլեւայլ լեզուներով գրուածների լրատուները յիշատակում էին նաեւ հայերէն եւ վրացերէն գրչագրերի առկայութիւնը: Հայկականներին վերաբերող տեղեկութիւնը տակաւին կարօտ է մասնագիտական ճշգրտման: Պարզ է, սակայն, որ Սինայ այցելող եւ ս. Եկատերինէի վանք տանող ճանապարհներին պատկանելի-քանակութեան ու հնութեան վիճազիր յիշատակարաններ թողնող հայ ուխտաւորները վանքիս միաբանների կազմում կարող էին համագրիներ ցտնել կամ առնուազն՝ իրենց այցելութեամբ հետաքրքրութիւն բորբոքել հայոց մշակոյթի հանդէպ: Դարասկզբին Ն. Մառի եւ մեր օրերում Մ. Սթոնի կատարած ուսումնասիրութիւններից յետոյ այլեւս կասկած չկայ, որ ուղղափառ դաւանութեան այդ վանքն ու նրանում ստեղծուած մշակութային-մատենագրական յուշարձանները տեւականօրէն ու մասնագիտօրէն պիտի զբաղեցնեն հայագիտութեանը: Յուսանք, որ նման արթնացում տեղի կունենայ նաեւ Հայաստանի մասնագիտական շրջաններում: Եթէ նոյնիսկ պարզուի, թէ հայկական գրչագրերին վերաբերող տեղեկութիւնը ստոյգ չէ, մենք դարձեալ պարտաւոր պիտի զգանք զբաղուելու Քրիստոնեայ Արեւելքի այդ նշանաւոր միաբանութեան պատմութեամբ ու վանքում պահուող այլալեզու գրչագրերով՝ նրանցում բացայայտելով հայերին վերաբերող տեղեկութիւններ կամ հայոց մատենագրութեանը աղերսուող բնագրեր: Ստորեւ կփորձենք մէկ-երկու իրողութեամբ հիմնաւորել մեր սոյն հարցադրումը:

Վրացական մամուլի հաղորդումներից տեղեկանում ենք, որ 1990 թուականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ս. Եկատերինէ վանքի ս. Գէորգ աղօթարանի նկուղում յայտնաբերուած վրացական ձեռագրերն ուսումնասիրելու եւ ցուցակագրելու համար Սինայ են գործուղուել Կ. Կեկելիձէի անուան Ձեռագրերի ինստիտուտի տնօրէն պրոֆ. Զ. Ալեքսիձէն եւ նրա տեղակալ պրոֆ. Մ. Քաւթարիան: Ըստ նախնա-

կան հաղորդման այստեղ յայտնաբերուել է 135 մինչ այս գիտութեանը անյայտ ձեռագիր. գերազանցապէս մագաղաթեայ, 10-13—րդ դարերի գրչութեան, մատենագրութեան տարբեր բնագաւառներ ընդգրկող բովանդակութեամբ՝ պատարագամատոյցներ, շարակնոցներ, վարքագրական ժողովածուներ, պատմական երկեր եւ այլն, օժտուած յիշատակարաններով ու յիշատակագրութիւններով: Ձեռագրերի վիճակը, տեւականօրէն փակուած պահուելու պատճառով, մխիթարական չէ: Վրացի մասնագէտները առաջիկայում մտադիր են տեղում շարունակել ուսումնասիրութիւնը եւ, հաւանաբար, վերականգնման-փրկութեան աշխատանքներ տանել: Կովկասագիտութեան, մասնաւորապէս վրացագիտութեան համար 135 միաւոր հաւաքածոյի գիւտը դարակազմիկ մշակութային իրողութիւն է, որից ոչ քիչ նորոյթների սպասելիքներ ունեն արեւելագիտութեան զանազան մարզեր, այդ թւում եւ հայագիտութիւնը:

Վերջերս «Լիտերատուրուլի Սաքարթւելո» շաբաթաթերթում (1991 թ. 5 ապրիլի) լոյս տեսաւ Զ. Ալեքսիձէի «Նոր տեղեկութիւն «Ռուվիսթաւելների տան մասին» յօդուածը, ուր Սինայի նորայայտ «Ռուվիսթաւելների տան մասին» յօդուածը, ուր Սինայի նորայայտ ձեռագրերից քաղուած երկու կարեւոր վկայութիւն է հրատարակուած: Նոր հաւաքածոյի N 50 ձեռագիրը, ըստ այդ յօդուածի, թուագրւում է 10—րդ դարի առաջին կէսից ոչ ուշ եւ ընկալւում է որպէս վարքագրական երկերի ժողովածոյ, որի առաջին մասը «Վրաց դարձի» պատմութիւնն է, երկրորդը՝ «Տասներեք ասորի հայրերի վարքը»: Երկուսն էլ աւելի հին են, քան մինչեւ օրս գիտութեանը յայտնի ընդօրինակութիւնները եւ միանգամայն նոր խմբագրութիւն են ներկայացնում: Այդ նշանակում է, թէ առ այսօր առեղծուածային համարող ոչ քիչ հանգուցային խնդիրներ, մանաւանդ վրաց դարձի ու «Նինոյի վարքի» հետ կապուած, նորովի լուսաբանութեան կենթարկուեն: Զ. Ալեքսիձէն մասնաւորեցնում է, որ «Տասներեք ասորի հայրերի վարքը» ընդմիջարկւում է «Անուանք սրբոց Զեղա Զաղնեցի արեղայ տանուտեարց եւ ի Քրիստոս հանգուցելոց» բնագրով, ուր տրւում է մինչեւ սոյն ձեռագիրը կամ նրա մայր օրինակը գրելը Զեղազէնում եղած տանուտէրերի (իմա՝ վանահայրերի) ժամանակագրական ցանկը՝ Յովհան Զեղազնելուց սկսած (6—րդ դար): Այս բնագրի այլ տարբերակը գիտութեանը վաղուց է յայտնի (տե՛ս «Քրոնիկներ» Ա. 73-75), սակայն առանց ստորեւ մեզ զբաղեցնող վկայութիւնների: Այնուհետեւ կցուած է Զեղազէն եւ Գարեջա մենաստաններին կատարուած նուիրատուութիւնների առարկայական թուարկումը, այսինքն՝ «Հոգոց գիրքը» կամ օտարամուտ տերմինով՝ «Քէօթուկը»: Գարե-

ջայի վանքում պահուող նուիրատուութիւնների նկարագրութեան հատուածում կարդում ենք. «Խորանի երկու այլ զգեստ եւ երկու վարագոյր Մեծկեւեցիների տանից են եւ անունները վրան գրուած»: Զ. Ալեքսիձէն այս կապակցութեամբ դիտարկում է. «Բնագիրը ոճական առումով այնպէս է կազմուած, որ փորձուած աչքի համար պարզորոշ է՝ երբ այն գրում է «Մեծկեւեցիների տունը» իրականորեն գոյութիւն ունի: Նրա անդամները կենդանի հաւակնութիւն ունեն իրենց կողմից նուիրուած իրերի պահպանութեան հանդէպ, եւ, հնարաւոր է, բնագրի շարադրանք ներածողը ինչ-որ կապի մեջ էլ է այս տոհմի հետ, որովհետեւ առարկաների վրայ «Մեծկեւեցիների տան» ներկայացուցիչների անունների պահպանուածութիւնը նրա համար գրեթէ փաստարկման արժէք իսկ ունի»: Տոհմի ինքնութիւնը պարզելու համար հեղինակը դիմում է 11-րդ դարի մատենագիր Սմբատ Դաւթայ որդու ցայսօր եղակի համարուող վկայութեանը, ուր ասուած է, թէ վրաստան կատարած արշաւանքի աւարտին (627/628 թ.) բիւզանդական Հերակլ կայսրը «Տփղիսում թողեց Զիրզու էրիսթաւին՝ Տփղիսի բերդի դէմ կռուելու, իսկ ինքը ուղեւորուեց Բաղդադ: Գնաց՝ Գարդարան՝ վարազ Գագեցու մօտ, արշաւեց այն վայրը, որ Խուզաշէն է կոչուած, եւ Հերակլը մկրտեց վարազ Գագեցուն ու նրա ողջ ժողովուրդը: Սկսեց եկեղեցի կառուցել, որը բոլոր եկեղեցիներից սլայծառագոյնն է: Գնաց Բերդուջ եւ կանգ առավ դիւղի կենտրոնում: Կանգնեցրեց քարէ խաչ եւ հիմք դրեց սուրբ Աստուածածնի եկեղեցուն ու աւարտեց նրա զմբէթը: Իսկ Զիրզուն գրաւեց Կալան ու վերցրեց Տփղիսի բերդը, բռնեց բերդասլան իշխանին (ցիխիսթավի), յանդգնութեան համար մորթաղերձ արեց եւ թաղաւորին (իմա՝ Հերակլին) հասաւ Գարդարանում՝ վարազ Գագեցու մօտ: Եւ թաղաւորը Գարդարանից փոխադրուեց Լալ ու կանչեց Մեծկեւեցիների իշխանին, մկրտեց եւ դնաց Բաղդադ» («Քարթլիս ցխովրերա» Ա., 375):

Սոյն վկայութեան վերլուծութիւնից առաջ ասենք, որ մասնագէտները նրանում երկու կարեւոր սրբագրութիւն են կատարել: Ակադ. Ս. Երեմեանն առաջարկել է «գուլսա սոփլիսասա»-ն (նախորդ հրատարակութիւնում՝ «գուլու Մոփիսասա», կարդալ «Մոփի կենտրոնում» («Տեղեկագիր», 1941, N 9, էջ 27-30), իսկ «վարազ Գագեցի» ընթերցումը ճշտել է «վարազ Գրիգոր» (իմա՝ Գգլի հասլավումը վերծանել է Գրիգոլի եւ ոչ Գագելի): Զ. Ալեքսիձէն այս պարագայում երկրորդում է Ս. Երեմեանին: Յիշեալ ճշգրտումների օգնութեամբ Հերակլ կայսեր վերագարծի երթուղին շատ աւելի յստակ է դառնում, վարչական կազմավորումներն ու մարդիկ՝ ճանաչելի: Հերակլը Թիֆլիսից գալիս է Գար-

դարան՝ Վարազ Գրիգորի մօտ, այստեղից արչաւում Խուղաշէն, ապա գնում Բերդուջ (ԲերդաՏոջ՝ Դերեգի ստորին հոսանքը), կանգ առնում Ծովում, ապա անցնում Լալ (բնակավայր այժմյան Իջևանի շրջանում) եւ այստեղից կանչում մեզ հետաքրքրող Մեծկեւնեցիների իշխանին (բնադրում՝ Մեծկեւնեցիների):

Մինայի N 50 ձեռագրի ընձեռած տուեալի եւ Սմբատ Դաւթայ որդու այն հողարդման համադրմամբ Զ. Ալեքսիձէն եզրակացնում է, որ Մեծկեւնեցիների իշխանական տան գոյութիւնը այլեւս փաստ է եւ որ «Մեծկեւնեցիների իշխանի» տիրոջթը Վրաստանում է, իսկ նոր հաւաքածոյի N 50 ձեռագիրը ցոյց տուեց, որ այս իշխանութեան գլուխ է կանգնած վրաց աւատատէր տուն: Սմբատ Դաւթայ որդու հիմամբ այն էլ կարելի է ասել, թէ «Մեծկեւնեցիների իշխանը» Գարդարանի մօտ՝ արեւելք կամ հարավ-արեւելք է բնակւում: «Մինայի N 50-ի տեղեկութեամբ «Մեծկեւնեցիների տունը» անմիջականօրէն է կապւած Գարեջայի հետ: Պիտի կարծենք, որ 7-րդ դարի առաջին կէսին (երբ տեղի են ունենում Սմբատ Դաւթայ որդու երկում նկարագրուած զէպքերը) այն Կուխէթի աւատատիրական նշանաւոր տոհմ է ներկայացնում, իսկ 10-րդ դարի առաջին կէսին (երբ Մինայի N 50 ձեռագիրն է գրւում)՝ Կախէթի»:

Այսպիսով, փաստօրէն, հակառակ աղբիւրագիտական կարեւոր տուեալների առկայութեան, Մեծկեւնեցիների ինքնութիւնը շարունակում է անորոշ մնալ: Պատճառը, կարծում ենք, հայկական աղբիւրներին եւ մասնագիտական գրականութեանը չզիմելն է: Սակայն մինչեւ հայկական ու վրացական աղբիւրների համադրութեանն ու քննութեանն անցնելը, անհրաժեշտ ենք համարում թարգմանաբար ներկայացնել Զ. Ալեքսիձէի պրպտումների շնորհիվ Մինայի N50 ձեռագրում երեւան եկած երկրորդ վրացական նորայայտ տեղեկութիւնը «Մեծկեւնեցիների տան» մասին: Այստեղ կարդում ենք. «Եւ երբ սարակինոզութիւնն էր հակառակւում, Ռուվիսթաւցիների եւ Մեծկեւնեցիների այս երկու տները Զեղա Զաղէն եկան եւ սրբատաշ քարերով երեք արկղ եւ երկու գեղեցիկ տապան շինեցին»:

Ապա գնացին ու հանեցին իրենց թագաւորների եւ ծնողների ոսկորները եւ լցրին այդ տապանների մէջ Զեղա Զաղէնի եկեղեցում: Եւ այդ են տապանները՝ ծայրեծայր անխառն արանց ու կանանց ոսկորներով լեցուն, իսկ այն երկու արկղի մեջ միայն մէկ տան [ոսկորներ] են լցւում եւ մէկում՝ թագաւորաց ոմանց: Մէկ տապանը դայակաց ու ստնտուաց է եւ մէկ տապանը՝ Վարազ Բակուր Խիղարեցի թագաւորի ու նրա երկու որդոց՝ Վարազի, Վարազ-Հարանի եւ երեք

դատեր ու նրանց մայր Սիմենաւրի՝ Վասպուրականի իշխանների գաւակի»:

Այս դրուագում եւս վերծանութեան կարօտ եւ հայագիտութեան համար ուշագրաւ արձագանքներ կան, սակայն առայժմ մեզ դրադեցնող հիմնական հարցը Մեծկեւենեցիների հետ է կապուած: Ովքեր են նրանք եւ ուր է տեղորոշուած նրանց երկիրը, ինչո՞վ եւ ինչո՞ւ են նրանց իշխեցողները կապուած Դաւիթ Գարեջայի մենաստանի, Զեղազէնի վանքի հետ: Սմբատ Դաւթայ որդու նկարագրած տեղագրական մանրամասնություններից, մանավանդ Լալ բնակավայրի ու Վարազ Գրիգորի յիշատակութեան պարագայում դժուար չէ կռահել, որ խօսքը վերաբերում է «Աշխարհացոյցում» եւ Մովսէս Կաղանկատուացու երկում տարբեր առիթներով յիշատակուող Արցախի Մեծ Կուէնք գաւառին, որ ձեռագրերում աւանդուած է մի քանի այլընթերցումներով՝ Մեծկուէնք, Մեծկուեանք, Մեծ Կուեանք: Վրացերէնը՝ «Մեծկեւենեկնի», «Մեծ կեանքի» ստոյգ համապատասխանութիւնն է: Ակադ. Ս. Երեմեանը «Աշխարհացոյցի» ցանկը կաղմելիս արդէն նկատել է, թէ Արցախ նահանգի 4-րդ գաւառը Մեծ Կուէնքն է (Մեծ Կուանք), որ համապատասխանում է արաբական Մեսկուան, վրաց, Մեծկեւենեկնի յորջորջումներին եւ «տեղագրուած է այժմեան Իջևանի շրջանում՝ շուրջ 975 կմ² տարածութեամբ: Այս գաւառում յայտնի էր Լալ աւանը, որը յիշատակում է Պտղոմէոսը (V, 12 5)՝ Lala եւ վրացական աղբիւրները՝ Լալի (այժմ՝ Լալի գիւղ), եւ Տաղձանք վանքը (այժմ՝ Դեղձնուտ վանքի աւերակներ) («Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երեւան, 1963, էջ 66):

«Մեծկեւենեցիներին» ու Վարազ Գրիգորին յիշատակելու իրողութիւնը Զ. Ալեքսիձէին բերել է այն եզրակացութեան, որ Սմբատ Դաւթայ որդու ձեռքի տակ յիշեալ դրուագի համար «Վրաց դարձից» բացի «այսօր մեզ անձանօթ ինչ-որ աղբիւր է եղել»: Սա, անշուշտ, ճիշտ կռահում է, եւ այդպիսի աղբիւր եղել է նաեւ Կաղանկատուացու եւ նրա շարունակող Դասխուրանցու ձեռքի տակ: Ըստ «Պատմութիւն Աղուանից աշխարհի» Հերակլ կայսեր ու Հայոց Եզր կաթողիկոսի օրոք Աղուանից իշխանն ու Գարգմանի տէրը Վարազ Գրիգորն էր, յայտնի Զիվանչիւրի հայրը (տե՛ս Մ. Կաղ. էջ 173, 189, 280, 339), Միհրանեան տոհմի սկզբնաւորողներից մէկը: Անհրաժէշտ է, սակայն մասնաւորեցնել, որ Վարազ Գրիգորը ոչ թէ Կախէթի Գարգաբանի գաւառի տիրակալն էր, այլ նրանից Բերդահոջի ստորին հոսանքով ու Խոււնան

ամբողջով բաժանուող «աղուանական» Գարդմանի¹: Հետեւաբար թիւր պիտի համարել Չ. Ալեքսիձէի եզրակացութիւնը Վարազ Գրիգորի տիրոջիժը Վրաստանում գտնուելու եւ նրա իշխանական տան վրացական լինելու մասին: Ինչ վերաբերում է Սմբատ Դաւթայ որդու հաղորդած այն տեղեկութեանը, թէ «Հերակլը մկրտեց Վարազ Գրիգորին եւ նրա ողջ ժողովուրդը», ապա՝ վաղուց արդէն նկատուած է, որ խօսքը կրկին մկրտութեանն է վերաբերում, այսինքն՝ միաբնակութիւնից երկաբնակ դարձնելուն (Ն. Արտամոնով, Բ. Ուլուբաբեան):

Գարդմանից Լալ փոխադրուելուց յետոյ Հերակլը կանչում է «Մեծ կենեցիներին» (իմա՝ Մեծ Կուէնքի) իշխանին եւ նրան եւս մկրտում: Մեծ Կուէնքը տեղորոշելիս ակադ. Ս. Երեմեանը, ինչպէս երեւում է «Աշխարհացոյցի» նրա քարտեզից, ելակէտ է ունեցել՝ Սմբատ Դաւթայ որդու սոյն տեղեկութիւնը, ուստի եւ այն նոյնացրել է այսօրուայ Իջեւանի շրջանի հետ, սակայն եթէ այդպէս լինէր, Լալում իջեւանած Հերակլը Մեծ Կուէնքի իշխանին կանչելու առիթ չէր ունենա, եւ ապա՝ Գարդմանի նմանողութեամբ մկրտութեան կենթարկէր տեղիս բնակչութեանը եւս: Այդպէս չի եղել, որովհետեւ Մեծ Կուէնքը նրա դարձի ճանապարհից հեռու է գտնուել²: Մովսէս Կաղանկատուացու երկում «խորախորում անտառայար եւ մայրաստանիկ աշխարհ» Արցախի Մեծ Կուէնից գաւառի հիւսիսային մասում է գտնվում Աստղաբլուրը, իսկ «մայրոլորտ հովտի պուրակ» Չղախը՝ հարաւում, Տրտու գետից այն կողմ (էջ 98, 99): Այս գաւառում է գտնւում Գլխո Վանքը, «Ի բարձրավանդակ լեռուն» (էջ 212, 218), «նախնական եպիսկոպոսանոց» Տաղճանար (էջ 235), ընդ որում գաւառը կոչւում է նաեւ Մեծ Կողմանք եւ Միջնարցախ (էջ 234), իսկ «Չղախեան հովիտն յԱսպարիտաձեւ դաշտակն առ ափն Տրտուական գետոյն» է ի վիճակի Մեծիրանայ (էջ 205): Կարծում ենք՝ առկա տուեալները լիովին բաւարար են Մեծ Կուէնքը Տրտու (այժմ Թարթառ) գետի միջին հոսանքի շրջանում տեղորոշելու համար՝ Վայկունիք եւ Մեծիրանք գաւառների միջեւ, որ եւ կատարել են Ղ. Ալիշանը («Բաղմավէպ», 1988, N 1-4, էջ 252-253), Մ. Բարխուտարեանը («Արցախ էջ 24), Բ. Ուլուբաբեանը («Խաչենի իշխանութիւնը 10-16—րդ դարերում», Երեւան, 1975, էջ 32-33):

Այսպէս, ուրեմն, «Մեծկենեցիների տան» յիշատակութիւնը վրացական նորայայտ երկու աղբիւրներում ամենեւին չի ապացուցում, թէ

¹ Գարդման գաւառի տեղորոշման քննութիւն տե՛ս Բ. Ուլուբաբեան, Դրուագներ Հայոց արեւելից կողմանց պատմութեան, Երեւան, 1981, էջ 35-36:

² Հերակլի երթուղու ճշտելուն յատուկ յօդուած է նուիրել Յ. Մանանդեանը (BB, III, 1950, էջ 146-153):

Միջնարցախը (Մեծ Կուէնքը, Մեծ Կողմանքը) մինչեւ 10-րդ դարի կէսերը երբեւէ Վրաստանի կազմ է ընդգրկուել եւ կամ վրացական իշխանութեան ազդեցութեան ոլորտում գտնուել: «Մեծկեւեցիների տան» ներկայացուցիչների այցելութիւնը (ուխտագնացութիւնը) Դաւիթ Գարեջայի մենաստան եւ «խորանի երկու այլ զգեստ եւ երկու վարագոյր» նուիրելը բացատրում է միանգամայն ուրիշ պատճառներով: Այս մենաստանի հայերէն արձանագրութիւնների վերծանութեան կապակցութեամբ մենք առիթ ենք ունեցել հանգամանօրէն խոսելու սոյն տարածքում հայկական էթնիկական տարրի առկայութեան, «Սարեբեբի» կոչուող հատուածում հայկական եկեղեցու գործառնութեան, Դաւիթ Գարեջեցու պաշտամունքի, Մայրազոմեցու առաքելութեան, Դաւիթ Անյաղթի հետ կապուած աւանդութեան գոյացման եւ, ի վերջոյ, դարեր շարունակ հայոց այցելութիւնը վկայող արձանագրութիւնների մասին¹: Յիշենք նաեւ, որ մինչեւ Դինար թագուհին ու նրա որդի Իշխանիկը Դաւիթ Գարեջան միաբնակ դաւանութեան էր հետեւում: Այս ամէնից յետոյ զարմանալու ոչինչ չկայ, եթէ Գարեջայ էին այցելում ու նուիրատութիւններ անում հայաշխարհի արեւելեան հատուածի՝ Արցախի իշխանական տները: Եթէ գայիս էին Անիից, որը շատ աւելի հեռու էր եւ միաբնական յիշատակագրով վկայուած, ապա «Աղուանից» եկեղեցու եւ իշխանաւորների այցելութիւնն աւելի պատճառաբանուած էր՝ նախ մոտիկութեան եւ ապա՝ Հերէթի այս հատուածի ու աղուանական մարդպանութեան բնակիչների գործնական երթեւեկի թելադրանքով: Ի դէպ, նոր աղբիւրում «Գարեջայի» փոխարէն ունենք «Գարեռչա», որ աւելի մօտ է «արտաքին իմաստնոց» ենթադրեալ ստուգաբանութեանը (Լ. Մելիքսեթ-Բէկ):

Համեմատաբար աւելի բարդ է «Մեծկեւեցիների տան» առնչութիւնը Զեղաղէնի մենաստանին, ուր, համաձայն առաջնորդների ցանկի նոր խմբագրութեան տեղեկութեան, «Ռուվիսթաւցիների հետ իրենց նշխարներն են տեղափոխում ու պահ տալիս նաեւ Մեծկուէնացիք՝ «Մեծկեւեցիները»:

Ցանկի հեղինակային պատկանելութեան եւ կաղմութեան ժամանակին վերաբերող հարցերը քննութեան առարկայ կդառնան նորայայտ բնագիրը ամբողջութեամբ հրատարակելուց յետոյ: Նշենք, սակայն, որ մինչ այդ գիտութեանը յայտնի տարբերակի հեղինակ էր ճանաչում Արսէն կաթողիկոս Սափարացին (955-980թթ.), հայ-վրա-

¹ П. М. Мурадян, Армянская эпиграфика Грузии: Картли и Кахети, Ереван, 1985, с. 171-198.

ցական փոխյարարելութիւններին քաջածանօթ մի անձնաւորութիւն (տե՛ս Կ. Կեկելիձէ, Դրուագներ, Ա, էջ 21), բայց, ինչպէս նշուեց, նրա անունով յայտնի տարբերակը չէր բովանդակում այստեղ մեզ դրադեցնող վկայութիւնը: Զեղազէնը (բնագրում՝ Զեղա Զաղէնը) 6-րդ դարի կէսերին հիմանդրուած մենաստան է, միջնադարեան տերմինով՝ անապատ, Գարեջայի համեմատութեամբ նուազ նշանաւոր ու յայտնի, գտնուում է Մցխեթից հիւսիս-արեւելք, լեռան վրա, Կախէթի ծայր արեւմուտքում (տե՛ս Լ. Մենարդէ, Վրաց հին մատենագրութեան գրչութեան օճախներ, Ա, էջ 268-273): Իր տեղի ու դիրքի շնորհիւ հարաւից եկող փտանգի պահին իրօք կարող էր նշխարների պահոց ծառայել, առաւել եւս տեղիս ամրոցի առկայութեան սլարազայում, թէեւ աղբիւրներից յայտնի է նաեւ, որ 9-րդ դարում վանքի առաջնորդ Յովհանը «սարակիւնողների սրով սպանուեց»: Այնուամենայնիւ, մայրողիներից հետու գտնուելը ապահովութեուն խոստանում էր՝ եթէ չհաշուենք հիւսիսային Կովկասի լեռնաբնակիների պատճառած աւերածութիւնները:

Նորայայտ դրուագը հրատարակելիս Զ. Ալեքսիձէն գրադուել է «Ռուվիսթաւցիներին» եւ 4-րդ դարի երկրորդ կէսի թագաւոր Վարազ Բակուրի ինքնութեամբ: Վերջինիս ծննդաբանութեան առիթով նա վկայակոչում է Սինայի N 48 նորայայտ ձեռագրում պահպանուած «Վրաց դարձի» այլ խմբագրութիւնից քաղուած մի հատուած, որ «ուշադրաւ է նաեւ հայագիտութեան համար: Այն հետեւեայն է. «Եւ նրանից (իմա Տրդատ Ռեւի որդուց - Զ. Ա.) յետոյ չորրորդը թագաւոր նստեց Վարազ Բակուրը եւ նրա օրօք Պարսից թագաւորի մարդպանները մուտք գործեցին Սիւնիք, եւ նա ետ եկաւ Խիղարում նստեց: Եպիսկոպոսապետը նոյն Յորն էր: Այն ժամանակ Տփղիս, Կալա բերդ Եպիսկոպոսապետը նոյն Յորն էր: Այն ժամանակ Քարղամխուար Բարդաղուրը, եւ եկաւ Պարսից թագաւորի բղեչյա Քարղամխուար Բարդաղուրը, եւ Քարթլին, Հայքը, Սիւնիքն ու Վասպուրականը նրան հարկատու դարձան: Եւ նրա օրօք աղնուականները Մցխեթում կառուցեցին սուրբ Եկեղեցին ու օժտեցին այդ մեծ եկեղեցին զիւղերով եւ ձեռակերտերով»: Խոսքը Ամմիանոսի ու Խորենացու պատմած իրադարձութիւններին է վերաբերում՝ 360-370-ական թուականներին, բայց բաւական խառնակ շարադրանքով: Յորը, ի դէպ, մինչեւ Վիրքում Եպիսկոպոսապետ կարգուելը հայոց Ներսէս Մեծի սարկաւազն էր, ուստի վրաց պատմագրութեանը յայտնի է Յոր Հայ անունով: Բերուած դրուագում ուշադրութեան արժանի ուրիշ տեղեկութիւններ էլ կան, որ այստեղ մեզ չեն գրադեցնում:

Արդէն նշեցինք, որ Արցախը սերտ առնչութիւններ ունէր Կա-

խէթի (Հերէթի) եւ նրա միաբնակութիւն դաւանող մենաստանների հետ: Գարեջից բացի, ինչպէս այժմ ենք տեղեկանում, մեծկուենացիք կապեր են ունեցել նաեւ Ջեղաղէնի հետ, ուր սարակիւնողներից եկող վտանգի պահին թաքցրել են իրենց սրբութիւնները՝ նախնեաց նշխարները: Հաղիւ թէ խօսքը վերաբերէր Արցախ արշաված հոների ու խաղարների կատարած աւերածութիւններին, որովհետեւ հիւսիսից եկող վտանգի պահին անիմաստ կլինէր Ջեղաղէնին ապաւինել, ուստի թերեւս արդարացի է Ջ. Ալեքսիճէի ենթադրութիւնը, թէ «սարակիւնողների» անուան տակ արարներին, մասնավորապէս Բուդա Թուրքի 853 թ. արշաւանքը նկատի ունի: Դժուար է այս հարցում վստահ դատողութիւններ անել, բայց, անշուշտ, հաղորդման հիմքում պատմական իրողութիւն կայ: Այդ յուշող կուռաններից մէկը Արցախում, յատկապես Մեծ Կուէնքի վանական կենտրոններում նշխարների առատութիւնն ու պահպանութեան հոգածութեան փաստն է: Կաղանկատուացու տեղեկութեամբ Մաշտոցի արցախցի աշակերտները երեք խմբով Երուսաղէմ են գնում եւ վերադառնում «բազում նշխարօք յամենայն սրբութեանցն Աստուծոյ», բերելով նաեւ ոսկեղէն ու արծաթեղէն սպասքներ, եւ զետեղում դրանք Մեծ Կուէնի Աստեղնաբլուր եւ Չղախ սրբարաններում (էջ 98-99): Հոների արշաւանքի ժամանակ Աստեղնաբլուրում սպասաւորող հոգեւորականները նահատակում են, իսկ սպասքները աւարւում, նշխարները՝ բլուրն ի վար ցիրուցան արւում, մինչեւ Չղախի հոգեւորականները փրկում են իրենց ունեցածը՝ երկու արծաթէ կողովի մեջ հաւաքելով ու գետնի մեջ պահելով «զմասունս նշխարացն ամենայն»: Ահա, այս նշխարներն են, ինչպէս երեւում է, որ մեծկուենացիները՝ մեծկուէնացիները տանում են Ջեղաղէն՝ փրկելու նոր պատուհասից: Վրացական աղբիւրի «երկու գեղեցիկ տապանը (կողովիը)» եւ Կաղանկատուացու «երկու արծաթէ կողովիը» յուշում են, որ անկախ բովանդակութեան պատկանելութիւնից, աղբիւրագիտական առումով գործ ունենք միեւնոյն տեղեկութեան հետ, ասել է՝ Կաղանկատուացուց է օգտւում վրացական ցանկ կազմողը՝ հարասելով այն այլ աղբիւրից քաղած աւանդութեան հետ: Կարելի է աւելի կարեւոր եղրակացութեան յանգել, Մեծ Կուէնք (Մեծ Կուանք) հազուադէպ յիշատակուած գաւառանունը վրացի հեղինակը վերցրած պիտի լինի հէնց Կաղանկատուացու երկից՝ իր հերթին աղբիւր դառնալով Սմբատ Դաւթայ որդու համար: Խօսքը, հարկաւ, բառացի քաղում կատարելուն չի վերաբերում, այլ տեղեկութիւնը վերցնելուն եւ այն իրէն յայտնի ուրիշ աղբիւրներից ու աւանդութիւններից յայտնի իրողութիւններով հարստացնելուն:

Այսպիսով, Սինայի վրացական նորայայտ ձեռագրերից քաղուած այս նախնական հրատարակումն իսկ հայագիտական նշանակալի նորութիւններ է բերում: Պարզուած է, որ «Հայոց արեւելից կողմանք» Արցախի Մեծ Կուէնք գաւառը մասնաւորապէս, մինչեւ այժմ անյայտ վերաբերումներ է ունեցել վրաց քաղաքական իշխանութիւնների եւ հոգեւոր կենտրոնների հետ: Պակաս կարեւորութիւն չունի նաեւ թուարկածս հայկական ու վրացական մատենագրական յուշարձանների աղբիւրագիտական աղերսի խնդիրը: Պիտի յուսալ, որ առաջիկայում հայագէտ-կովկասագէտները եւս առիթ ու հնարավորութիւն կունենան ի մոտոյ զբաղուելու Սինայի վանքի ձեռագրական հաւաքածոներով՝ անկախ նորայայտ գրչագրերի շարքում հայկականներ լինել-չլինելուց: Բրիտտոնեայ Արեւելքի մշակութային կենտրոնների ու նրանցում պահպանուած արժէքների պատշաճ ուսումնասիրութիւնը հայագիտութեան աղնիւ, բայց տակաւին վճարելիք պարտքն է:

* * *

Կովկասի էթնիկական, քաղաքական ու գրական-մշակութային պատմութեանը նոյնիսկ թեթեակի ծանօթութիւն ունեցող մէկն առանց դժուարութեան կարող է կռահել, թէ ի՞նչ կարեւորութեան ու ծաւալի խնդիրներ է արժարժում «Կովկասեան Աղուանք» խորագիրն ունեցող մենագրական ուսումնասիրութիւնը: Աղուանք անունը կրող կովկասյան երրորդ պատմամշակութային միաւորը մինչեւ օրս գիտական արժարժումի առարկայ է բացառապէս ոչ աղուանական աղբիւրների հաղորդած տեղեկութիւնների հիման վրա, որոնց ի մի կարկատումը, ցաւօք, զօրու չէ փոխարինելու աղուան անուան տակ ներկայացող բնիկների սեփական ձեռքով կատարուած գրառումներին: Ակադեմիական իմաստով մինչեւ օրս վիճարկելի է նոյնիսկ աղուան հաւաքական անուան նույնացումն այն քսանվեց ցեղանուններից մէկի հետ, որոնք, Ստրաբոնի տեղեկութեամբ, կաղմում էին այդ երկրի բնակչութեան զանգուածը եւ լեզուական առումով իրար վատ էին հասկանում:

Արդարութիւնը պահանջում է ասել, որ Աղուանքի պատմութեան, էթնիկական կաղմի, դաւանական կացութեան, եկեղեցական նուիրատեւութեան, դպրութեան ու հարակից խնդիրների վերաբերմամբ կայուն հետաքրքրութիւն բորբոքողը միջնադարեան հայկական աղբիւրներն են եղել՝ ներառեալ «Աղուանից պատմութեան» եւ «Աղուանից գրի» պահպանութիւնը: Յունական, արաբական, պարսկական ու վրացական մատենագրութիւնների մէջ եղած եւ Աղուանքին վերաբերող

տեղեկութիւնները դիպուածային են, խիստ հատակոտոր եւ այդ պատճառով՝ միայն օժանդակ: Իրերի այս դրութիւնը, բնականաբար, դուռ է բացել բազում ենթադրութիւնների ու վարկածների, կարելի եւ անկարելի նոյնացումներ ու մեկնաբանութիւններ առաջարկելուն: Աղուանական վիճագիր նշխարները նոյնիակ հին թուրքերէն կարդայու փորձեր եղան, իսկ որովհետեւ բոլոր վերձանութեան առաջարկները փաստահութիւն չներշնչեցին՝ մեզանում եղան լուրջ մարդիկ, որոնք ամէն աղուանականի մերժման դուռը թակեցին:

Եթէ բուն աղուանագիտութեան մարդում մինչեւ օրս եղած կարեւորագոյն նուաճումները թուարկելու լինենք, ապա քաղաքական պատմութեան եւ պատմական աշխարհագրութեան բնագաւառում պիտի յիշատակենք Վ. Մինորսկուն եւ Ս. Երեմեանին, լայն ընկալմամբ մշակոյթի պատմութեան մարդում՝ Կ. Վ. Տրեւերին, իսկ լեզուի, գրի ու գրչութեան ճանաչման հարցերում՝ Ա. Շանիձէին: Հարկաւ կան նաեւ ուրիշներ՝ Ի. Աբուլաձէ, Աշ. Աբրահամեան, Գ. Կլիմով, Աս. Մնացականեան, Ա. Յակոբեան, Ի. Ալիւ եւ այլք, որոնք նշանակալիօրէն նպաստել են աղուանագիտութեան հանդէպ հետաքրքրութիւնը ծաւալելուն:

Կարծում ենք, սխալուած չենք լինի՝ եթէ աղուանագիտութեան համար ելակետային համարենք 1937 թ., երբ Մատենադարանի N 7117 ձեռագրում, այլ այբուբենների շարքում (յունական, վրացական, կուպտական, հնդկական, արաբական) արձանագրուեց նաեւ աղուանականը՝ «Աղուանից գիրն է» (էջ 145r-v): Ի. Աբուլաձէին երեք տասնամեակով կարող էր կանխել Լ. Մսերեանցը, երբ իրենց ընտանեկան սեփականութիւնը կազմող այդ ձեռագրում, «Աղուանից գրից» երկու թերթ յետոյ ընթերցեց եւ նամակով Ն. Մառին յայտնեց հայատառ «Յունաց սուրբ Աստուած» աղօթքի աւելայութիւնը: Բայց փաստն այն է, որ այդ պատիւը վերասպահուած էր հայագէտ-վրացագէտ Ի. Աբուլաձէին, իսկ վերջինս էլ աշակերտի պատկառանքով գիւտի գիտական գնահատութեան առաջնութեան իրաւունքը յանձնեց ուսուցչին՝ ալադ. Ա. Շանիձէին:

Այբուբենի, ապա նաեւ Մինգեչաուրի վիճագրի յայտնութիւնը (1948 թ.) աղուանագիտութեան նոր շրջան պիտի նշանաւորէին՝ եթէ այբուբենի տառապատկերների ու տառանունների մէջ աղաւաղումներ չլինէին եւ փաստահամբ կարելի լինէր վիճագրի լեզուն համարել ուտիերէնը: Տարակուսանքներն ու ենթադրութիւնները երկար պիտի շարունակուէին՝ եթէ Մինայի թերակղզու Ս. Եկատերինէի վանքի հրդեհի տարածքը մաքրելիս 1975 թ. մայիսի 26-ին չբացուէր ձեռագրական անյայտ պահոցը եւ եթէ նորայայտ ձեռագրերից երկուսում (N/Sin 13

և 55) Զ. Ալեքսիձէն չնշմարէր լուսանցքներում պահպանուած աղուանից գրերի տառահետքեր:

Վրացական ձեռագրական նորայայտ հաւաքածոն խնամելու և ուսումնասիրելու համար 1990-2000 թթ. չորս անգամ այս մայրափանք այցելած Զ. Ալեքսիձէն վրացագէտ-հայագէտի պատրաստութեան բերումով լիովին պատկերացնում էր գիւտի կշիռն ու ընդգրկումը, ուստի 1991 թ. սկսած մէկ տասնեակից աւելի նախնական հաղորդումներ ու հրատարակումներ է կատարել այլեւայլ լեզուներով եւ բազմաթիւ գեկուցումներով այս ու այն միջազգային համաժողովներում տեղեակ պահել իր պրպտումների ընթացքին:

Կատարուած աշխատանքի առաւել ամբողջական պատկերը ներկայացուած է «კავკასიის ძეგლები და ძეგლები» (տծ. 2003, 224 թթ.) «Կովկասեան Աղուանքի գրչութիւնը, լեզուն եւ դպրութիւնը» գրքում: Ի միջի այլոց նկատենք, որ տողերի հեղինակը հետեւել է հրատարակումների ընթացքին եւ արձագանքել առաջարկուող մեկնաբանութիւններին («Գրական թերթ», 1991, 24 մայիսի):

Գրքի առաջին գլուխը վերաբերում է անելիքը սահմանելուն եւ վերծանութեան նախատարածութեանը՝ Ս. Եկատերինէի փանքը, վրացիները Սինայի լեռան վրայ, Սինայի լեռան վրացական հնութիւնների ուսումնասիրութիւնը, Սինայի լեռան նոր հաւաքածոյի յայտնուելը եւ վրաց-աղուանական կրկնագրի գիւտը (էջ 12-25): Կատարուող կարեւոր ամփոփումների թւում յիշատակելի են. Սինայի վրաց միաբանութիւնը թերեւս կապ է ունեցել Աթոս լեռան վրացի գործիչների հետ, N/Sin-67 ձեռագրում ներկայացուած են սինայեցի հայրերի խրատներ ու հրաշագործութիւններ, ուր նոր անուն է հայր Սամուէլ Վրացին: X դ. երկու ձեռագրերից մէկը՝ N/Sin - 48, բովանդակում է «Վրաց դարձի» երկմասնեայ պատմութեան ընդարձակ հատուած: Նոր խմբագրութիւնը (նաեւ ձեռ. N/Sin - 50) բաւականաչափ տարբեր է մինչ այդ յայտնի կրկին խմբագրութիւններից, որով X դարում արդէն վրաց այդ հնագոյն պատմագրական երկի չորս տարբերակ է գոյութիւն ունեցել, ինչը, ըստ հետազօտողի, բացառում է յուշարձանի ստեղծման թուագրումը IX դարով (տողերի հեղինակը շարունակում է պաշտպանել Կ. Կեկելիձէի տեսակէտը): Յիշատակուած երկրորդ ձեռագրում ներկայացուած են նաեւ Ասորի հայրերի վարքերի նոր խմբագրութիւններ: Վրաց նոր հաւաքածոյի N 2 ձեռագրում առկայ է Կիրակոս Միջնաձորեցու նուիրած 45 գրքերի ցանկը:

Նոր յոյս աշխարհ եկած կրկնագիր ձեռագրերից երկուսը գրչու-

թյան ստորին (նախնական) շերտում հայերէն բնագիր են ունեցել: Հաւաքածոյի N/Sin - 13, 55 ձեռագրերում երեւան են եկել վրաց-աղուանական կրկնագրեր (հրդեհի պատճառով դրանք քարացած դանդում են ներկայացրել):

Երկրորդ գլուխը նուիրուած է Կովկասեան Աղուանքի ներկայացմանը (էջ 26-32), հետեւեալ ենթախորագրերով. Հայկական աղուանագիտութիւն, այսպէս կոչուած «նոր հայեացք», ազրբեջանցի գիտնականների կարծիքը: Մինչեւ 60-ական թուականները մեզանում եղած աղուանագիտական հայացքները Զ. Ալեքսիձէն համարում է «բաւականաչափ ուսցիոնալ» (էջ 27), ըստ որի 552 թուականից հաստատուեց նուիրապետօրէն Հայոց եկեղեցուց կախում ունեցող աղուանական կաթողիկոսութիւն: VII դ. սկզբներից Աղուանից եկեղեցին, Վրացականի հետ միասին, քաղկեդոնական դաւանութեան յարեց, իսկ VIII դ. արարական տիրապետութեան հաստատման հետեւանքով՝ առյաւետ վերադարձաւ միաբնակութեան: V դ. 10-ական թուականներին թարգմանիչ Բենիամինի օժանդակութեամբ Մաշտոցն ստեղծեց աղուանից այբուբենը: 60-ականներից յետոյ մեզանում ձեւաւորուած նոր հայեացքի հիմնական էութիւնը, ըստ Ալեքսիձէի, հետեւեալն է.

ա) Աղուանից պետութիւնը կազմաւորուել է միայն մ. թ. ա. I դ. սկզբին, որի հարաւային սահմանը Կուրն է:

բ) Աղուանական ցեղերի կոնսոլիդացիա տեղի չի ունեցել:

գ) 462 թ. լուծարուեց Աղուանից պետութիւնը եւ ստեղծուեց Աղուանք անունով մարզպանութիւն, որի մէջ մտան Ուտիքն ու Արցախը (387 թուականով եւս թուադրում են) եւ ընտելացան այդ նոր անուանը, որը քաղաքական իմաստով է եւ ոչ էթնիկական: Աստիճանաբար մշակուեց «աղուանական աշխարհայեացք»՝ պահպանելով հայկական ինքնագիտակցութիւնը:

դ) Պարսիկ Արշակունիները հայացան: Եկեղեցու եւ երկրի լեզուն հայերէնն էր («ինչպէս Քարթլիում»՝ փակագծում ավելացնում է հեղինակը):

* Նորայայտ վրացական ձեռագրերի եռալեզու (վրաց., յուն., անգլ.) նկարագրութիւն տե՛ս «Խոնոս Թոսեյ Մ. ԵԿԵՂԵՐՈՅԵՆ ԹՈՆԱՆՇԵՐՄՈ 1975 ՄՅԵՆ ԵԾԹՈՅԵՆՈՑ ԵՐՈՒՅԸ ԵՅԼՈՐՄՅՐՈՒ ԵԾՄՅՐՈՑԼՈՒԾ», Մյաջցօնց Կ. ԵԼԵՅԵՆՈՅԵՄ, ՄԿ. ՄԵՆՈՅԵՄ, Ը. ԵՅՅԵՄՐՈՅԵՄ ԸԵ Մ. ԵՅՅՈՒՐՈՅԵՄ, ԵՅԵՆՈ, 2005. Առաջարանում ներկայացուած է հաւաքածոյի գոյացման ու ուսումնասիրութեան պատմութիւնը: Առանձնակի գնահատութեան ու երախտիքի են արժանի մերօրեայ վրացի գիտնականների թափած ջանքերը՝ ձեռագրերը փրկելու եւ ճանաչելու գործում:

ե) Բուն աղուանները իրենց դպրութիւնը չկարողացան ստեղծել եւ շուտով ձուլուեցին այլ ժողովուրդների մէջ:

զ) Հայկական աղբիւրների յիշատակած աղուանական դպրութիւնը Ուտիք-Արցախ-Գարդմանի բնակիչների համար ստեղծուած հայալեզու դպրութիւն է:

Այս ամէնը, փաստօրէն, «Armeniaca»-ում Յ. Անասեանի հրատարակած յօդուածի վերաշարադրանքն է: Նորն այն է, որ Զ. Ալեքսիճէն առանձնացնում է «չափաւոր դիրքորոշում» ունեցող հայագէտների խումբ, որոնք ընդունում են աղուանական դպրության գոյութիւնը V-VII դդ. շրջանակում: Ըստ նրանց՝ աղուանական գրչութիւնն ու դպրութիւնը չկարողացան գտնել անհրաժեշտ գործառնութիւն, քանի որ պետական եւ եկեղեցու լեզուն հայերէնն էր: Այստեղ Զ. Ալեքսիճէն մեղանշում է իրողութեան առաջ եւ յայտարարում, թէ այս խմբի հայ գիտնականները մինչեւ VII դ. եկեղեցական բաժանումը Վրաց եկեղեցու սրաշտօնական լեզուն եւս հայերէնն են համարում: Սա կատարեալ յօրինուածք է: Պէտք է ճիշտ հասկանալ Primus inter pares կարգաւիճակը, որը նաեւ լեզուին է վերաբերում:

Ազրբեջանցի մասնագէտների մոտեցումը Ալեքսիճէն համարում է հայոց «նոր հայեացքի» չափազանցուած զգայական արձագանք: Ըստ նրանց, VIII-X դդ. արաբ զաւթիչներն ու հայոց եկեղեցին ոչնչացնում են աղուանական դպրութեան յուշարձանները, իսկ մինչ այդ Աղուանից պատմութեան երկերն ու եկեղեցու կանոնները թարգմանում են հայերէնի: X-XIII դդ. Կուրի աջափնեակից սերող հայալեզու բոլոր նշանաւոր գործիչները (Գօշ, Գանձակեցի եւ այլք) պիտի համարուեն հայալեզու աղուան գրողներ: Ըստ Զ. Ալեքսիճէի, այս աստիճան հակադիր հայացքները խոչընդոտում են, բայց եւ մի տեսակ սատարում աղուանագիտութեան առաջընթացը: Բոլոր սլարագաներում՝ աղուանագիտութիւնը այլեւս հինը չէ:

Երրորդ գլուխ. Տեղեկութիւններ աղուանական գրչութեան եւ դպրութեան մասին (էջ 33-54): Վկայակոչում է Կորիւնի երկի («նշանակալիօրէն կերպարանափոխուած»), Մովսէս Կաղանկատուացու, Ղեւոնդի, «Գիրք թղթոցի» տեղեկութիւնները, ապա անցնում հայերէն ձեռագրում այբուբենի յայտնաբերմանը, վիմագրերի յայտնութեանը: Ծանօթ չլինելով Մատենադարանի N 7117 ձեռագրի Լ. Խաչիկեանի քննութեանը, Զ. Ալեքսիճէն կրկնում է այբուբենի նախագաղափարը Ղրիմից բերելու դրոյթը: Նշում է այբուբենում տառապատկերների եւ դրանց հնչական արժէքների աղաւաղման առկայութիւնը, եղած աղուանական նմոյշների ընձեռած հնարաւորութեան սահմանափա-

կուժիւնը, ուտիերէնով կարգալու փստահութեան պակասը եւ այլ պարագաներ: Այնուհետեւ թուարկում է աղուանական վիմագրերը, բերում եղած վերժանութեան փորձերը (Ա. Աբրահամեան, Գ. Կլիմով, Ս. Մուրալյով, Վ. Շուլց): Զ. Ալեքսիձէն առանձին ենթավերնագրով անդրադառնում է Դադաստանի Վերին Լաբլո գիւղում գտնուած աղուանական այբուբեն կրող սայիկին եւ Ս. Մուրալյովի հետեւողութեամբ կեղծիք համարում այն:

Գլուխ չորրորդ. Մինայի կրկնագրերը: Հեղինակը VII դ. սկզբից մի քանի տասնամեակ առաջ է տանում Վրաց եւ Աղվանից եկեղեցիների քաղկեդոնական կողմնորոշումը, նրան նախորդած համարելով Զենոն կայսեր Հենոտիկոնը, բուն բաժանումը դնում VII դ. սկզբին: Ըստ հեղինակի՝ VII-VIII դդ. Այսրկովկասի դաւանական միասնութիւնն ապահովողը մոնոթելիտականութիւնն է: Մանազկերտի ժողովով Հայոց եկեղեցին դարձեալ միաբնակութեան է վերադառնում: Արարների օժանդակութեամբ Աղուանից եկեղեցին եւս միաբնակ դաւանութեան է դառնում: «Աղուանքի ողբերգութիւնն այն է,- գրում է հեղինակը,- որ նա չկարողացաւ գտնել վրացիներից ու հայերից տարբերուող դաւանութիւն՝ իբրեւ իր գաղափարական դիրքորոշում» (էջ 57): Նա աղուանական դպրութեան ազատ դարգացման շրջան է համարում VI-VII դդ., երբ Հենոտիկոնն էր գործում եւ ապա՝ Վրաց եկեղեցու հետ հակադրւում էր հայկականին: Այնուհետեւ ընկնում է Հայոց եկեղեցու զօրեղ ազդեցութեան տակ, որը (Հայոց եկեղեցին) ոչնչացնում է նրանց քաղկեդոնական համարուող գրականությունը: Միաբնակ Աղուանքը անցնում է Հայոց լեզւի ու գրչութեան եւ «այսպէս կորչում»: Ուստի, աղուանական պատասխիկների պահպանումն ակնկալելի է քաղկեդոնական աշխարհում, մասնաւորապէս Վրաստանում: Վրաց ձեռագրերի կազմում աղուանից գրչութեան նմոյշների պահպանումը Զ. Ալեքսիձէն համարում է վերջին 20-25 տարիների վրացական միջավայրում առաջ քաշուած դրոյթների հաստատում (նկատի ունի, հաւանաբար, մեզանում առարկութիւններ յարուցող իր դրոյթները): Երուսաղէմում աղուանական սրբարանների առատութիւնը (ըստ Դասխուրանցու) հակուած է առնչել Եղիշայի այնտեղից լինելուն եւ համոզուած է, որ այդ վանքերը VI-VII դդ. քաղկեդոնական պիտի լինէին (ապացոյցներ չկան):

Զ. Ալեքսիձէն աղուանական ձեռագրի Մինա հասնելը կապում է Աղուանքի՝ միաբնակութեան դառնալու հետ, ձեռագիրն ընկնում է Վիրք կամ Պաղեստին, յետագայում կորցնում է իր աղուան գործածողը, ուստի X դ. մասնատւում եւ նոր կիրառութիւն գտնում: Հնարաւոր

վարկած է՝ եթէ հիմք ունենայինք աղուաներէն տեքստը իսկապէս քաղկեդոնական նկատել:

Մեզ հասած երկու ձեռագիր կրկնադրի թերթերի քանակը 170-ի է հասնում, 12 հատակոտորով: Ամէն քայլափոխին N 7117 ձեռագրի սլաճապանած տառապատկերներին ու դրանց հնչիւնական արժէքին դիմելով հանդերձ, հեղինակը յայտարարում է, թէ «1937 թ. յայտնաբերուած այբուբենը բանալու դեր չի կատարում» (էջ 60): Աղուաներէն ձեռագրի նախնական դնահատութիւնից յետոյ (երկսիւն, լայն լուսանցներ, տողագծում, սիւնակում 22-24 տող, թերթատման թոյլ հետքեր, խնամքով գրչութիւն եւ այլն), եզրակացնում է. «Աղուանքը տնտեսապէս լաւ դարգացած եւ բաւական հարուստ երկիր էր (ձեռագրի սլատրաստումը շատ թանկ էր նստում)»: Աղուանական գրչութիւնը եւս ձախից աջ է (ինչպէս հայերէնն ու վրացերէնը), որի ապացոյցը տողասկզբում ձախից գլխադիր ունենալն ու յապաւման նշանների ձախից աջ ուղղուածութիւնն է: Այդ է վկայում եւ հայերէնի, յունարէնի եւ վրացերէնի նմանողութեամբ ՈՒ-ի կառուցուածքը: Ի վերջոյ, սիւնակի ձախ եզրը միշտ մէկ գծի վրայ է (Ն. Ռդաւել անունով մէկը 1964 թ. աղուանական արձանագրութիւնը թուրքերէն էր կարդում՝ աջից ձախ գրչութեամբ): Աղուաներէն գրչագրի տառանշանների ոճը հիշեցնում է հայերէն, եթովպերէն եւ վրացերէն գրածերը, հատկապէս վերջինս: Ձեռագրում կարելի է տարբերակել երկու (գուցէ եւ երեք) գրչութիւն:

Անցնելով վերձանութեան ընթացքի նկարագրութեանը՝ Զ. Ալեքսիձէն բերում է այլեւայլ նկատառումներ, որոնք մղում են աղուաներէն ձեռագրում արարողական գրքի՝ ճաշոցի որոնման, որի մեջ շատ են սուրբգրական դրուագները, շուտ են հնանում, լուսանցներում մեկնաբանութիւններ են ունենում: Վրացական եւ հայկական ճաշոցների կազմութեան նկատառումը հեղինակին յուշել է, որ համեմատաբար մանր գրերով առանձնացողները ընթերցումների խորագրեր են: Քառասուն այդպիսի խորագրերի մէջ «սլաճապանուած այբուբենի օգնությամբ» նա կարդում է Թեոսալոնիկէ[] տեղանունը, որն արդեն յուշում է, թէ խօսքը Պողոս առաքեալի «Առ Թեոսալոնիկացիս» թղթի մասին է: Նիւթն այլեւս ճանաչելի է դառնում, եւ հատուկ անունների օգնութեամբ ստուգումներ ու վերականգնումներ կատարելով՝ հայերէն ձեռագրի ընձեռած այբուբենի 52 գրերից գրապատկերի նոյնութեամբ ճշտում է 42 գրանշան, 10 գրանշան այբուբենում եւ կրկնագրում իրար չեն ծածկում, սակայն հնչիւնական առումով 36 գրի ճշգրտութիւնը անվերապահ է:

Նորկապարանային դրուագների ճանաչումը հեղինակին հնարա-
ւորութիւն է տալիս, յատուկ անուններից բացի, կռահելու հայերէնի եւ
վրացերէնի հետ ընդհանուր գործածութիւն ունեցող բառեր (Ա.Բ.Ա.ԶԱ.Կ
- աւաղակ, ՀԵԹՒԱՆՈՍ - հեթանոս, ՔԱԼԱՔ - քաղաք): № 7117 ձե-
ռագրում ղ գրի բացակայութիւնը եւ նրա փոխարէն 37-րդ տեղն զբա-
ղեցնող «խամ»-ը ապացոյց է համարում, որ ձեռագրի աղուանից այ-
բուբենի զաղափար օրինակը կատարուած է եղել մինչեւ IX դ., երբ հա-
յերէնը ղ-ն ըից խիստ չի տարբերակել: Մի խումբ բառերի իմաստն էլ
ճշտում է ժամանակակից ուտիերէնում դրանց ներկայութեամբ (բուս-
ին - սով, դի - օր, շու - գիշեր եւ այլն): Այս ճանապարհով Զ. Ալեքսի-
ձէն մէկ առ մէկ բերում է հայերէն ձեռագրի այբուբենի տառերը,
թուարկում դրանց նշանակութեան վերաբերեալ եղած կարծիքները եւ
իր վերձանած տեքստերից վկայակոչում կատարելով՝ սահմանում իւ-
րաքանչիւրի հնչիւնական արժէքը (էջ 85-105): Այնուհետեւ կազմում
է հայերէն ձեռագրի այբուբենի եւ կրկնագրի գրերի համեմատական
աղիւսակ: Պարզեյիք է մնում հայերէն ձեռագրի 6 տառանշանի համե-
մատելիները: Գլուխն աւարտում է աղուանական եւ եթովպական
գրչութիւնների (էջ 110), աղուանական եւ վրացական գրերի (էջ 111-
112) եւ աղուանական ու հայկական գրերի (էջ 113) համեմատական
աղիւսակների հրատարակումով: Նկատի են առնուել տառապատկեր-
ները եւ ոչ հնչիւնական արժէքը: Ըստ հեղինակի՝ եթովպականի հետ
նոյնապատկեր է 14 միաւոր, վրացերէնի հետ՝ 19 գիր, հայերէնի հետ՝
10 տառապատկեր: Սպասելի էր, որ հեղինակը կկազմէր նաեւ հայկա-
կան եւ վրացական այբուբենների այն տառանիշերի աղիւսակը, որոնք
նոյնական կամ ազգակից են միմեանց ու նաեւ աղուանականին՝ թէ՛
տառապատկերով եւ թէ՛ հնչական արժէքով: Այս պարագայում կունե-
նայինք՝

Աղուանական - վրացական 5 նույնութիւն Յ(Ի), Ո (եղուստի
բարձրացմամբ՝ Թ), Ի (Վ), Ք, ՈԻ:

Աղուանական - հայկական 3 նույնություն (Փ, Ք, Հ):

Հայկական - վրացական տառապատկերի ընդհանրութիւն - 10
միաւոր Դ (Վ), Ժ (Ձ), Կ (Կ), Ղ (Գ), Ն (Պ), Ո (Ղ), Տ (Ճ), Ի (է), Փ (փ),
Ք (Օ, Ք):

Աղուանական եւ հայկական գրերի համեմատութեան աղիւսակի
մեկնաբանութեան մէջ Զ. Ալեքսիձէն նշում է, որ հայերէնի հետ յարա-
բերելիս մի քանի բացառութիւն (=ներողամտութիւն) է արել: Ան-
շուշտ՝ վատ չէր լինի, եթէ նոյնքան զիջողութեամբ կազմէր հայկական
եւ վրացական նոյնանիշ գրերի համեմատութեան աղիւսակ, մոտավո-

րապէս այսպէս.

Հայ. Գ Է Կ Ն Ս Վ Ի Փ Ք

Վրաց. Ղ Ի Կ Ե Ե Դ Վ Փ Ի

Ասդա եւ համեմատութեան առնէր աղուանականի եւ վրացականի նոյնանիշ գրերը՝

Աղու. Դ^(Գ) Չ^(Ն) Գ^(Կ) Կ^(Ե) Կ^(Ե) Կ^(Ե) Կ^(Ե) Կ^(Ե)

Վրաց. Դ^(Գ) Չ^(Ն) Դ^(Կ) Կ^(Ե) Կ^(Ե) Կ^(Ե) Կ^(Ե)

Եւ օգտուելով «եթէ երկու մեծութիւններ դատ-դատ հաւասար են մի երրորդի, ապա նրանք հաւասար են» օրէնքից՝ ասել, թէ Այսրիով կասի երեք դպրութիւնների այբուբենները ստեղծուել են միեւնոյն ժամանակ, մշակութային նոյնական միջավայրում, նոյն անհրաժեշտութեամբ ու նոյն հնչիւնական – գրապատկերման սկզբունքով, ջանալով որքան կարելի է քիչ կրկնել միմեանց, եւ այնուամենայնիւ՝ նոյն օրոցի ծնունդ լինելն անդէն աչքով դիտելի է: Զ. Ալեքսիձէն բոլոր հիմքերն ու իրաւունքներն ունէր այս վերձանութեան պատահութեամբ յաղթահարելու դարաւոր կաշկանդուածութիւնը (յիշենք վարդանի խօսքը վարձիոյ խաչի մասին) եւ ընդունելու Մաշտոցի, Զաղայի («այր գրագէտ եւ ճշմարտահաւատ»), Բենիամին երէցի եւ նրանց գործը քաջալերող վրաց Բակուր արքայի, Մովսէս եպիսկոպոսի, Աղուանից թագաւոր Արսւաղի, Երեմիայ եպիսկոպոսի պատմականութիւնը, ուրեմն եւ Կորիւնի հաղորդման պատմականութիւնը: Սակայն նա զգուշացել է իր արդիւնաւոր աշխատանքից մակարերուող եզրակացութիւնը բարձրաձայնել:

Գլուխ հինգերորդ: Աղուանական «Ճաշոցը»: Կրկնագրի «Ճաշոց» լինելու կռահումը դուռ է բացել երկլեզու – եռալեզու տեքստ ունենալու համար, որից յետոյ ընթացքն այլեւս պարզ է: «Ճաշոցի» առկայութիւնը նաեւ ապացոյց է, թէ ս. Գիրքը, յիրաւի, թարգմանուած է եղել աղուաներէն, եւ քանի որ «Ճաշոցի» որոշ ընթերցումներ (օրինակ՝ Բ Կորնթ. 11,23-27, Ա թես., 2,5-8) հայերէնում կամ վրացերէնում (ճաշոցներում) դուրահեռութիւն չունեն, հեղինակը եզրակացնում է, թէ այն թարգմանական չէ եւ կազմուած է ըստ այսօր կորած յունական օրինակի: «Ճաշոցը» պարզունակ է եւ ընդգրկում է տերունական տօներ, աւելի պարզունակ, քան 438 թուականով թուադրվող հայկական օրինակը, ուրեմն եւ նախորդում է նրան: Զ. Ալեքսիձէն այն

* «Ճաշոցների» նշանաւոր գիտակ Շ. Ռընուն իմ հարցումին ի պատասխան՝ կասկած չայտնեց աղուանական ձեռագրի «Ճաշոց» որակման կապակցութեամբ, ուստի

Թուագրում է IV-V դդ. սահմանագլխով, բնականաբար, ս. Գրքի թարգմանութիւնը այդ սահմանագծից առաջ սխառի լինէր (միտքը այբուբենի՝ չորրորդ դար հասցնելն է): Յոհանան (իմա Յոհաննէս) անձնանունն ու «Կորբա» (մատաղ, ընծայ, «դուրբան») տերմինը հեղինակին թոյլ են տալիս մտածելու, որ աղուանական «Ճաշոցը» ստեղծված սխառի լինի երուսաղէմեան միջավայրում, պատկանելով երուսաղէմեան ճաշոցների ամենավաղ տիպին: Նրանում եղած նորկտակարանային որոշ ընթերցումներ կարող են օգտակար լինել ս. Գրքի բնագրի վաղ խմբագրութիւններն ուսումնասիրելիս:

Գլուխ վեցերորդ: Աղուանական «Ճաշոցի» լեզուն: Ենթադրութիւններն այլևս աւարտուած են՝ ուտիերէնը նոր աղվաներէնն է: Ուտիերէնը կովկասեան լեզուների լեզգիական խմբին է պատկանում, նրա հարաւային ճիւղին: «Ճաշոցի» բառազանձը հնարավորութիւն չի տալիս որոշելու սերումը (կան այլևայլ ընդհանրութիւնների հետքեր): Այնուհետև բերում են հապաւումները (էջ 128-129), գրերով արտահայտուած թուականները:

Յաջորդ գլխում (VII) բերում են «Ճաշոցի» ընթերցանելիքների խորագրերը՝ աղուաներէն, վրացերէն գրադարձութեամբ ու վրացերէն համապատասխանութեամբ (40-ից 11-ը), ապա եւ ճանաչուած ու ընթերցուած ընթերցանելիքներից նմոյշներ (Բ Կորնթ. 11²³⁻²⁷, Եփես. 5²⁵⁻²⁸, Ա Կորնթ. 12²⁸⁻²⁹, Գործք ԺԲ¹⁻² Եբր. ԺԱ. 17-19, Մատթ. Ժէ 1-5, Եբր. Գ¹⁻⁵)՝ աղուանագիր եւ հին վրացերէն համապատասխանութեամբ: Կարելիի սահմաններում Զ. Ալեքսիձէն անդրադարձել է աղուաներէն լեզուի քերականութեանը՝ հնչիւնաբանութեանը, ձևաբանութեանը, խօսքի մասերին (էջ 151-153), բառազանձի եկեղեցական տերմիններից հայերէնի կնիք են կրում սալմոս, քահանայ, աբաղան, թարգման, վարտապետ, հեթանոս, կորբա (կորսլան), տալաւար: Սակայն դարմանք է յարուցում հայ. մարմին բառի ներկայութիւնը աղուաներէնում (կարծում ենք՝ սանսկրիտի mārmīn-ը, որ բերում է հեղինակը, կարող է սոսկ ստուգաբանական հետաքրքրութիւն ներկայացնել): Անձնանունների գրադարձութեան մէջ, հայերէնի նմանողութեամբ, պահպանում է յունարէնի -ος վերջաւորութիւնը, ուշագրաւ է նաեւ Յակոբ գրութիւնը: Ինքնատիպ է այոյա (ալէլուիա) եւ մարդաւէն (մարգարէ) տերմինների կրած հնչիւնափոխութիւնը աղուաներէնում:

Ի վերջոյ, հայագէտ հեղինակը, հասկանալի է, անուշադրութեան չէր մատնի N/Sin-13 եւ 55 ձեռագրերի ստորին շերտերում եղած հայե-

Զ. Ալեքսիձէի այս եզրակացութիւնները սխառի համարել նախնական ու աշխատանքային:

րէն բնագրերը, որ քաղուած են երեք ձեռագրերից: Դրանցից մէկ թերթը հեղինակի ճշումամբ հատուած է Եւթաղ Աղեքսանդրացու ներածութեան, որ կցուած է Պօղոս առաքեալի թղթին: Զ. Ալեքսիձէն յաջողութեամբ այն վերծանել է, համեմատել Ա. Վարդանեանի գիտական հրատարակութեան հետ եւ դուրս գրել առկայ տարրնթերցումները (էջ 163):

Մէկ էջանոց վերջաբանում (էջ 167) աշխատասիրողը թուարկում է ապագայ անելիքները, որոնց թւում է աղուանական այբուբենի գրչական համակարգի ճշգրտումը եւ ապա միայն նրա ծագման խնդրի քննարկումը:

Գրքի վերջում ծանոթագրութիւններին ու ցանկերին յաջորդում է ուսումնասիրութեան թեմային առնչուող գրականութեան մատենագիտութիւն (էջ 202-216):

Ա. Շանիձէի «Новооткрытый алфавит Кавказских албанцев и его значение для науки» (1938 г.), Կ. Տրեւերի «Очерки по истории и культуре Кавказской Албании» (IV в. до н.э. – VII в. н.э.) (1959 г.) եւ Ս. Երեմեանի «Идеология и культура народов Албании III–VII вв.», «Политическая история Албании в III–IX вв.» (1958 թ.) աշխատութիւններով սկիզբ առած ալաղեմիական աղուանագիտութիւնը Զ. Ալեքսիձէի սոյն բարեպատեհ, ամենայն քաջալերանքի ու զնահատութեան արժանի գրքի հրատարակութեամբ աւարտում է իր կազմաւորման շրջանը: Այբուբենի առեղծուածն այլեւս լուծուած է, կլուծուեն արդեօք Աղուանքի էթնիկական, քաղաքական, մատենագրական ու մշակութային պատմութեան բուն առեղծուածները այբուբենն ունենալու պարագայում՝ ցույց կտայ գիտութեան այդ բնագաւառի ապագայ սպասաւորների սլատրաստութեան, բարեխղճութեան ու հմտութեան աստիճանը:

Աղուանական այբուբենի ճանաչումը լիովին հաստատեց ալաղ. Ա. Շանիձէի ոչ առանց ոգեւորութեան կատարած ամփոփումը, թէ «Անկասկած է այն, որ հայոց այբուբենը խելամտորէն կազմած այբուբեն է: Նրանում իւրաքանչիւր գիր ունի իր նշանը եւ իւրաքանչիւր նշանի իր գրին է համապատասխանում (բացի ՈՒ-ից, որին երկու նշան է պետք): Այս սկզբունքը վրաց ու աղուանից գրչութիւնների մէջ էլ է կիրառուած: Այս ամէնը ցոյց է տալիս, որ Այսրկովկասի երեք մշակութաւոր ժողովուրդների այբուբեն[ներ]ը միանման սկզբունքի վրայ են կառուցուած»:

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԲՆԱԳՐԱԿԱՆ
ՀԵՏՔԵՐԸ 6-7-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Պատմաճօր ապրած ժամանակի եւ «Հայոց պատմութեան» հաղորդումների գնահատութեան շուրջ տարուող տեւական պրպտումներն ու քննարկումները անշուշտ պիտի խթանէին բնագրական աղբրսների բացայայտումը: Երկու պարագայ, սակայն, կանխորոշեցին այդ փնտրտութեան միտումաձութիւնը. «Պատմութեան» ընդգրկած ժամանակագրական շրջանակները հետազօտողները գերազանցապէս ծանրացան Խորենացու օգտագործած աղբիւրների վերհանման եւ ստուգութեան աստիճանը սահմանելու վրայ՝ առանձնակի կարեւորութիւն չտալով Խորենացուց քաղուած նիւթերին եւ ապա՝ որպէս հեղինակ տարուբերուելով երեքից աւելի դարերի արանքում, Խորենացին իբրեւ աղբիւր շատ յաճախ շփոթուեց նրան իսկ աղբիւր ծառայած նիւթերի հետ, որով եւ մթագնուեց Պատմաճօր երկի առկայութեամբ պայմանաւորուած բնագրական իրողութիւնների վերհանումը ետխորենացիական մատենագրութեան մէջ՝ գէթ 6-7-րդ դերերի ընդգրկմամբ: Ծիշտ է, կասկածանքների եւ գերքննադատութեան Կարիերեան դրոյթներին եւ դիտարկումներին յաջորդեցին նաեւ դրանք մասամբ կամ ծանրակշռօրէն փարատող բնագրական փաստարկներ, բայց այլեւս տեղի ունեցաւ խորենացիագիտութեան երկբեւեռում: Մինչեւ այսօր էլ, փաստօրէն, գերքննադատութեան հետեւորդները անտեսում են այսպէս կոչուած աւանդականութեան ապացոյցները, իսկ Խորենացու հաւատաւորները դժուարանում են հերքել կասկածայարոյց տեղիների ներկայութիւնը «Հայոց պատմութեան» մեզ հասած բնագրում:

Խորենացու երկի յարուցած խնդիրները շատ են ու բազմաբնոյթ, եւ քանի դեռ գիտաքննական բնագիր չի կազմուած (հրատարակի վրայ եղածը այդպիսին չէ, այլեւ՝ համահաւաք-համեմատական), հստակօրէն չեն սահմանուած ու տարբերակուած յետագայ ընդմիջարկութիւններն ու խաթարումները՝ իրարամերժ կարկած-մեկնաբանութիւններն անխուսափելի են:

Խորենացու կենաց ժամանակի, հաղորդումների հաւաստիութեան,

երկի գործառնական շրջանակի, նշանակութեան ու ազդեցութեան, համարումի, ճանաչողութեան եւ մի շարք այլ կարեւոր պարագաների ճշգրիտ հաւաստումը կարող է կատարուել, եթէ ոչ բացառապէս, գէթ գլխաւորապէս բնագրագիտական քննութեան ճանապարհով: Եթէ Խորենացու «Հայոց պատմութեան» բնագիրը կար 5-րդ դարի աւարտին, ապա նրան յաջորդող հեղինակները, եւ ոչ միայն պատմիչները, չէին կարող անհաղորդ մնալ նրան, առաւել եւս՝ չդիմել այդ գործին, քանի որ չէին կարող գտնել աւելի ընդգրկուն, առաւել ամբողջական, աւելի քննական ու շարադրանքի մէջ խիստ յստակ մէկ այլ երկ:

Մեր հարցադրումը՝ Խորենացու երկի բնագրական հետքերի պրպտումով լուծում տալ տեւականօրէն վիճարկուող խնդիրներին, հայագիտութեանը անձանօթ չէ: Նորայր Բիւզանդացին 1898-1899 թուականներին «Մշակում» հրատարակած «Հայերէն հին գրականութեան խնդիրներ. Մովսէս Խորենացի» յօդուածում փաստօրէն այդ կարգի մասնական աշխատանք կատարել է եւ շատ չանցած՝ Խորենացու բնագրին առնչուող հեղինակների ու երկերի ժամանակագրական դասդասում առաջարկել՝ «Ընդդէմ Կարիերեանց» խօսուն վերտառութեամբ: Ցաւօք, այդ ոչ ծաւալուն յօդուածը տասնամեակներ անտիպ է մնացել եւ միայն վերջերս Մ. Մինասեանի հրատարակմամբ լոյս աշխարհ եկել¹: Քաղաժոյ համադրութիւնների մի մասը Խորենացու մօտ եւ նրան յաջորդած հեղինակների երկերում պահպանուած առանձին բառերի ու բառակապակցութիւնների ընդհանրութեանն է վերաբերում, որ անշուշտ ուշագրաւ է, բայց հաստատուն եղրակացութեան կռուան չի կարող ծառայել, որովհետեւ երաշխիք չկայ, թէ հէնց Խորենացուց է առնուած²: Ստորեւ ներկայացուող քննութեան ժամանակ մենք դանց կառնենք նման իրողութիւնները՝ մեր դիտարկումները

¹ «Հանդէս ամսօրեայ», 1984, էջ 19-28:

² Մասամբ այդպիսին է նաեւ Խորենացու եւ Դաւիթ Անյաղթի երկերում Գ. Սարգսեանի նկատած եւ քննութեան առած ընդհանուր տեղին (տե՛ս Кавказ и Византия, 1, Ереван, 1979, с. 67-72): «Մասամբ» վերապահութիւնը պայմանաւորուած է հեղինակի արդարացի այն դիտարկմամբ, թէ Խորենացու երկում «գոահմանս գիւղից եւ ագարակաց» որոշելը Արտաշէս թագաւորի գործերի բնականոն շարադրանքում է յիշուած, իսկ Դաւիթ մօտ՝ արդէն պատրաստի օրինակը վկայակոչելու, «առաջնոյ» դիմելու առիթով (տե՛ս Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք եւ Թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ, Վենետիկ, 1932, էջ 48): Խորենացու հետ ունեցած առնչութիւնը գնահատելուն խանգարում է եւ այն, որ ստուգապէս չգիտենք Դաւիթի անունով յայտնի երկի բնագիր թէ թարգմանութիւն լինելը, ինչպէս որ խնդրական է դիտվում նաեւ Անյաղթին պատկանելու իրողութիւնը (տե՛ս Հ. Ներսէս Ակինեան, Դաւիթ Հարքացի Անյաղթ փիլիսոփայ. Կեանքն եւ գործերը, Վիեննա, 1959, էջ 11-29):

Հիմնելով բնագրական հին ու նոր աներկբայ քաղուածների վրայ, նշանակալիօրէն ընդարձակելով ժամանակագրուող հեղինակների ու երկերի ցանկը:

1. Վստահաբար Խորենացու «Հայոց պատմութիւնը» ճանաչող եւ վերապատմութեամբ նրանից քաղուած կատարող առաջին մատենագիրը Յովհաննէս Գաբեղենացի կաթողիկոսն է, որի գահակալութեան տարիները որոշակի են (557-574), մահուան թուականը՝ ստոյգ¹: Հայկական աղբիւրներից բացի, նրա կեանքի վերջին՝ կոստանդնուպոլսեան շրջանի մասին տեղեկութիւններ է հաղորդում ասորի Յովհան Եփեսացին²: «Գիրք թղթոցում» պահպանուել են Գաբեղենացու երեք գրուածքներ՝ նուիրուած եկեղեցու դաւանական, նուիրապետական եւ ծիսական խնդիրներին: Նրանցից մէկը Սիւնիքի հոգեւոր պետերին հասցեագրուած թուղթն է, միւսը՝ «Առ Աղուանից եպիսկոպոսունս» ուղերձը, երկուսն էլ կարեւոր իրենց արծարծած խնդիրներով³: Վերջին պարագան հաստատում է նաեւ այն փաստով, որ Մովսէս Կաղանկատուացու երկում բերուած է այդ երկրորդ թուղթն ամբողջութեամբ⁴: Երրորդ գործը, որ «Գիրք թղթոցում» անմիջապէս յաջորդում է «Առ Աղուանից եպիսկոպոսունս» ուղերձին, կրում է «Յովհանու Հայոց կաթողիկոսի՝ ի Յայտնութիւն Քրիստոսի», խորագիրը⁵: Քննարկման նիւթը Ծննդեան եւ Յայտնութեան տօների առանձին-առանձին թէ միաժամանակ կատարման հարցն է: «Եւ զոր յայլ քաղաքս ըստ Արտեմոնաղիր ընթերցուածոց դեկտեմբերի ամսոյ ի քսան եւ հինգն Ծնունդ առնեն. - գրում է Գաբեղենացին, - դայն Յակովբայ առաքելոյ եւ Դաւթայ մարգարէի յիշատակի աւր եղ Կիւրեղ, քանդի եւ սուրբ հարքն որ ի Նիկիա ժողովեալ, եւ երանելին սուրբն Գրիգորիոս, եւ սուրբն Արիստակէս ոչ կարգեցին երկուս տաւնս՝ զԾնունդն եւ զՅայտնու-

¹ Տե՛ս Մաղաքիա արքեպ. Օրմանեան, Աղգապատում, Ա հատ. մասն Բ, Պէյրութ, 1959, էջ 557-566: Նաեւ՝ Հ. Պօղոս Անանեան, «Եւտիքիոս Կ. Պոլսոյ պատրիարքին կորսուած եւ անտիպ մէկ գրութիւնը» Armeniaca, Venize, 1969, p. 320-322: Հ. Ներսէս Ակինեան, Հ. Ն. Տէր-Պօղոսեան, Մատենագրական հետազոտութիւններ, «Հանդէս ամսօրեայ», 1975, էջ 139-163:

² Johannis Epesini Historia, 1c, p. 61=62. (Հատուածների թարգմանութիւնը տե՛ս Ն. Ակինեան, Ն. Տէր-Պօղոսեան, նշւ. աշխ., էջ 150-154):

³ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 78-80, 81-84: Երուսաղէմ, 1994, էջ 206-209, 210-214:

⁴ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երեւան, 1983, էջ 122-126:

⁵ «Գիրք թղթոց», էջ 85-89, (Երուսաղէմ, էջ 215-220): Ճառիս հեղինակային պատկանելութեան վերաբերեալ Ն. Ակինեանի եւ Ն. Տէր-Պօղոսեանի տարակուսանքը միանգամայն անտեղի ու անփաստարկ է (տանց նշւ. աշխ., էջ 159-163):

թիւնն, այլ մի տաւն: Եւ ըստ նոցունց հոգեկիր վարդապետքն եւ թարգմանիչք, որք յԱղեքսանդր եւ յայլ յայտնի քաղաքս վարժեալ, ոչ աւելիս եւ նորս ինչ թարգմանեցին, եւ ոչ ընկալան, եւ ոչ մեզ աւանդեցին. այլ հաստատեալ եմք ի վերայ հիման սուրբ առաքելոցն եւ երանելի հարցն, որ զմի եւ նոյն տաւն կատարեցին...»¹:

Արդ, թէ ովքեր են Աղեքսանդրիա եւ այլ յայտնի քաղաքներում կրթութիւն ստացած Հայոց հոգեկիր վարդապետներն ու թարգմանիչները՝ յայտնի է Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնից»: Սակայն Պատմահօրն ու նրա ընկերակիցներին վերաբերող ակնարկումը այսքանով չի վերջանում: Գաբեղենացի կաթողիկոսը ստուգախօս է նաեւ տօնի օրը յիշատակելիս: Խորենացու Պատմութեան երրորդ գրքի 62-րդ գլխում Աղեքսանդրիայի մասին խօսելիս ասվում է նաեւ, որ «Եւ ոչ ի քսան ի հինգ Տուբի՝ լորտուաց եւ աթերաց առնել բաշխումն, այլ ի մետասան նորին Տուբի՝ Յայտնութեան տեառն կատարի տօն»²: «Տուբին» Աղեքսանդրեան տարվա 5-րդ ամիսն է, որի սկիզբը համապատասխանում է դեկտեմբերի 27-ին, ըստ Յուլեան տոմարի, հետեւաբար այդ ամսի 11-ը կհամընկնի յունուարի 6-ին: Ուրեմն Ծննդեան եւ Յայտնութեան տօների նոյն օրը նշելը Խորենացին գիտէ հաւաստիօրէն եւ նրանից է քաղում Յովհ. Գաբեղենացին:

Որ Գաբեղենացու աղբիւրը հաստատապէս Խորենացու «Հայոց պատմութեան» համապատասխան դրուագն է՝ կարելի է ապացուցել ոչ միայն բնագրային ընդհանրութեամբ, այլեւ կաթողիկոսի մանրամասնող ցուցումով՝ Աղեքսանդրիայում եւ այլ յայտնի քաղաքներում ուսանած Հայոց հոգեկիր վարդապետներն ու թարգմանիչները այդպէս են ընկալել, թարգմանել ու աւանդել: Աւելորդ է ասել, թէ այդ հեռագնայ ուսումնառութիւնը, մանաւանդ նրա հետ կապուած հանգամանքների պատմութիւնը կաթողիկոս հեղինակը գիտէ միայն Խորենացուց³: Ի դէպ, «հոգեկիր վարդապետք եւ թարգմանիչք» բնութագրութիւնը եւս թելադրուած է Խորենացու բնագրով՝ «յիմն ասեմ վարդապետէ, որում ոչ անարժան գտայ աշակերտ, եւ ոչ անկատար վարժամար ի յանգ ելեալ արուեստից՝ ինքնացայ» (III, ԿԲ):

¹ Նոյն տեղում, էջ 88-89: (Երուսաղէմ, էջ 220):

² Սոյն դրուագի՝ այլ կտրուածքով ընդարձակ քննութեամբ վերջերս հանդէս եկաւ բանասէր Յ. Սիմոնեանը, մատնացուցելով Խորենացու աղբիւրը՝ Աղեքսանդրի պատմութիւնը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1991, N 2, էջ 90-92):

³ Հետեւողականօրէն տեղաշարժելով Խորենացուն, Ն. Ակինեանը «Հայոց պատմութեան» III գրքի 61, 62 եւ 68 գլուխները, ուր ուսումնառութեան մասին է պատմվում, յայտարարում է եկամուտ (տե՛ս նրա՝ Մատենագրական հետազօտութիւններ, հ. Գ, էջ 179, հմմտ. «Հանդէս ամսօրեայ» 1956, էջ 130):

Ուրեմն՝ Պատմահոր երկը 557-574 թուականներին կար, եւ Հայոց կաթողիկոսը կարդացել ու քաղում է կատարել նրանից:

2. Երեւանի Մատենադարանում պահուող N 2679 թղթի հնագոյն ձեռագիրը հայագիտութեանը անյայտ միաւոր է (առաջին մասը գրուած է 981 թ., երկրորդ մասը՝ որոշ ժամանակ անց): Ձեռագրի խմբագիր-կազմողին Ն. Ակինեանը առանձին յօդուած է նուիրել՝ նախնական կուսումներով¹, սակայն այստեղ ներկայացուած, մասնաւորապէս տարբեր ժամանակներում ու հեղինակների ձեռքով կազմուած ժամանակագրութիւնները աղբիւրագիտական առումով ճանաչելի դարձան միայն վերջերս՝ Ա. Մաթեոսեանի հրատարակմամբ²: Պարզուում է, որ ձեռագրի 159 ա-165 ա էջերում ղետեղուած ժամանակագրութիւնը, որը վերջանում է Հայոց ՆԶԱ (=1032) թուականով, ըստ երկրորդ հատուածի գրչի կամ խմբագրի տեղեկութեան, կազմուած է Եւսեբիոս Կեսարացու եւ Աթանասի ժամանակագրութիւնների հիմամբ («Լաւ համարեցա[յ] զՀոռովմոցն զ[Եւ]սեբեայ եւ զԱթանասի ժամանակագրութիւնս շարադրել»)՝ շարունակելով ու լացնելով այն³: «Ժամանակագրութեան» Հայոց Ա. (1) թուականի դիմաց եղած «դարձեալ սկիզբն արարի նոր թուականիս» տեղեկութեան առաջին դեմքով լինելը եւ գրչի վերոբերեալ «զԱթանասի ժամանակագրութիւնս» ցուցումը հիմք են տուել եզրակացնելու, որ խօսքը Հայոց տոմարը կարգաւորող Աթանաս Տարօնացու մասին է, որի գլխաւորութեամբ կայացավ 584 թ. Դւինի հաւաքը⁴: Պարզուում է՝ «Աթանաս Տարօնացին իր ժամանակագրութիւնը կառուցել է Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» փաստական հարուստ նիւթի վրայ», նրանից քաղելով 74 պատմական վկայութիւն, որոնցից «55-ը վերաբերում են Հայ իրականութեանը, 7-ը՝ պարսկական թագաւորներին, 12-ը՝ Եւսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնից» յետոյ եկած հռոմեական կայսրերին»⁵: Որ ժա-

¹ Ն. Ակինեան, Դաւիթ քահանայի խմբագիր ժամանակագրութիւնը, «Հանդէս ամսօրեայ», 1957, էջ 181-185:

² Ա. Ս. Մաթեոսեան, Մովսէս Խորենացին եւ Աթանաս Տարօնացու ժամանակագրութիւնը, «Պատմա-բանասիրական հանդէս», 1989, N 1, էջ 220-234: Հեղինակը անձանօթ է Ն. Ակինեանի յօդուածին:

³ Բնագրի հրատարակութիւնը տե՛ս «Մանր ժամանակագրութիւններ», կազմեց Վ. Ա. Յակոբեան, հ. 2, Երեւան, 1956, էջ 1-32:

⁴ Վկայութիւնը տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 65, նաեւ՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961, էջ 42: Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 63:

⁵ Ա. Մաթեոսեան, նշւ. աշխ., էջ 225: Այժմ ձեռագիրն ամբողջութեամբ հրատարակուած է նմանահանութեամբ եւ վերձանեայ տարբերակներով՝ «Մատենան գիտու-

իրողութիւնների յիշատակումներ: Կարծում ենք, սակայն, որ իրաւացի պիտի լինի Նորայր Բիւզանդացին, երբ այն վերագրում է «ի ժամանակի մարգպանացն Պարսից (այսինքն յամուն 514-608)» ըստ Ղ. Այիշանի կազմած ժամանակագրութեան¹: Մասնաւորապէս այդ է մատնացուցում արարական արշաւանքների, Բագրատունեաց հարստութեան հաստատման ժամանակաշրջանների ակնարկի իսպառ բացակայութիւնը:

Թղթի հեղինակը ոգեշնչուած է Խորենացու Պատմութեամբ եւ նրանից է քաղում ազգային պատմութեան թուարկուող բոլոր դրուագները՝ «վիրագ եւ անկարգ հրոսակ» Բէլի կործանումը հայոց քաջերից (Խոր. I, ԺԱ), Արշակունի թագաւորների շիրիմների տեղի «ամուրն Անին» (Խոր., III, Ժ, Իէ), «արի, հայրենասէր եւ անխոնջ» Արամի հաղթութիւնը «ոխերիմ Նիւքարի» հանդէպ (Խոր., I, ԺԳ): Ընդ որում, Խորենացուց են գայիս նաեւ բնութագրական մանրամասները՝ Հայկի «սակաւածեռն զնդից» լինելը (Խոր.՝ «թուով յոյժ նուագունս»), ճակատամարտի տեղանքը՝ «ի Գերեզմանսն, ի բլուրն անբարտաւան» (Խոր.՝ «Իսկ զբլուրն, ուր քաջամարտիօրէն անկաւ Բէլ՝ անուանեաց Հայկ Գերեզմանս»), Բէլի պարտութիւնը ի «Դաշտին մեծի» (Խոր.՝ «ի միջոց ինչ դաշտածեւ») եւ այլն: Թերեւս աւելի ուշագրաւ է թղթի երրորդ դրուագում «ոխերիմ Նիւքարին» «ի ծայր ամբարտակացդ հանեալ» արտայայտութիւնը: Խորենացու երկում ասուած է՝ «եւ անդ ուրեմն ի ծայր աշտարակի պարսպիցն ցից վարեալ երկաթի ընդ ճակատն՝ յորմն վարսել (var վարել) հրամայէ» (I, ԺԳ): «Ամբարտակ» եզրի «աշտարակ» իմաստով գործածութիւնը հատկորոշ է, ինչպէս կարելի է եզրակացնել ՆՀԲ վկայակոչութիւններից (Ա., 55) միայն Խորենացուն:

Այսպիսով, 6-րդ դարում Աթէնքում ապրող կամ գտնուող Բագրատ Հայր իր ձեռքին Խորենացու «Հայոց պատմութիւն» ունի, ոգեշնչուած է նրանով եւ դրուագներ է քաղում նրանից: Միայն Անի ամրոցի մասին կարող ենք ասել, թէ Արշակունիների հանգստարանի այնտեղ գտնուելը նա կարող էր իմանալ եւ «Բուզանդարան պատմութիւնից» (III, ԺԱ, IV, ԻԴ)²:

4. Վրթանէս Քերթողը Հայոց եկեղեցու եւ մատենագրութեան պատմութեանը քաջ ծանօթ դէմք է: Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսի մահից յետոյ (604 թ.) մինչեւ Աբրահամ Աղբաթանեցու ընտրութիւնը

¹ Ն. Բիւզանդացի, նշւ. աշխ. էջ 21:

² Հմմտ. Ն. Բիւզանդացի, նոյն տեղում:

Թեան Պարթևների թագաւորների ցանկի համար իբրև գլխաւոր եւ տիրապետող աղբիւր է ծառայել Մ. Խորենացու Պատմութիւնը, որի զանազան տեղերից (գիրք Բ, գլ. Բ, ԿԸ, ԿԹ, ՀԱ) հեղինակը խմբագրել է միայն ժամանակագրական նիւթը, բաց թողնելով պատմական միւս տեղեկութիւնները»¹: Այս դրոյթի շուրջ որեւէ առարկութիւն չի եղել², որովհետեւ հէնց բնագրային խորագրում ասուած է, թէ «երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացւոյ եւ Ստեփանոսի Տարաւնացւոյ հաւաստի եւ ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հաւրէ ճանաչել»³: Ստեփանոս Տարօնացուն Ասողիկի հետ չնոյնացնելու կռուանները Ստ. Մալխասեանցի կողմից այլեւս թուարկուած են, ուստի պատմութեան այդ հատուածը ետին դարեր տեղափոխելն անկարելի է: Չմտնելով յիշեալ Ա. եւ Բ դպրութիւնները «Պատմութիւն Սերէոսի» բաղկացուցիչ մաս լինել-չլինելու ծեծուած հարցի մէջ, նշենք, որ հաւաստիօրէն Սերէոսի անունը կրող երկը եւս անձանօթ չէ Խորենացու Պատմութեանը: Տարիներ առաջ գիտական հրատարակութիւնը գրախօսելու առիթով մենք ուշադրութեան ենք առել Պատմահօրից քաղեալ ինքնատիպ մի բնութագրութիւն: Թեօդորոս Ռչտունու եւ Ներսէս կաթողիկոսի մասնակցութեամբ կազմած եւ Կոստանդին կայսերն ուղարկուած պատասխան թղթի աւարտամասում կարդում ենք. «Իսկ մեք որպէս ընկալաք զհրամանս երկնաքաղաքացի եւ բարեպաշտ քո թագաւորութեանդ, քաջ յարանց արքայ Կոստանդին, լաւագոյն համարեցաք զսահմանագրութիւնն ուղղափառ հաւատոյն, զոր ընկալանն հարքն մեր...»⁴: Ընդգծուած «քաջ յարանց արքայ» բանաձեւումը բառացիօրէն քաղուած է Խորենացու Պատմութեան մէջ առկայ Խոսրով թագաւորի «առ նախարարսն» թղթից («Քաջ յարանց Խոսրով Հայոց արքայստրատելատիդ Գազաւոնի եւ ամենայն նախարարացդ մերոց ողջոյն շատ», Խոր., III, ԽԸ)⁵: Սերէոսը մասնակից է Կոստանդիանոս (Կոստանդ Բ) կայսեր չորրորդ տարում, Ներսէս Շինողի օրօք կայացած Դուինի ժողովին (645 թ.)⁶ եւ իր Պատմութիւնն աւարտում է 661 թ. անցուդարձերի արձանագրումով, հետեւաբար 7-րդ դարի կեսերին Խո-

¹ Ստ. Մալխասեանց, Սերէոսի Պատմութիւնը եւ Մ. Խորենացի, Թիֆլիս, 1899, էջ 39, Հմմտ. էջ 43-44:

² Կարծիքների քննութիւնը տե՛ս Ստ. Մալխասեանցի նշուած աշխատութեան ներածական մասում:

³ Պատմութիւն Սերէոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարեանի, Երեւան, 1979, էջ 55:

⁴ Անդ. էջ 161:

⁵ Հմմտ. «Պատմա-բանասիրական հանդէս», 1981, N 1, էջ 276:

⁶ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», Բ, Երեւան, 1971, էջ 200 եւ 214:

րենացու Հայոց պատմութիւնը շրջանառում է Հայաստանում, ընդ որում նրանից ոչ միայն դէպքեր ու ժամանակագրութիւններ էին քաղում, այլ նաեւ բանաձեւային կիրառութիւն ստացող բնութագրումներ¹ :

6. Թաղէոս առաքեալի եւ նրա աշակերտ Ադդէի քարոզչութեան մասին պատմող աղբիւրները շատ են եւ տարժամանակեայ: Խորենացին երկու անգամ յիշեցնում է, որ նրանց մասին «յառաջագոյն գրեալ [է] յայլոյ», «գտանի յայլոց պատմեալ յառաջագոյն քան դմեղ»: Վ. Հացունին մասնաւորեցրել է, որ Խորենացու յղումը վերաբերում է «Վկայաբանութիւն Թաղէոսի առաքելոյն» երկին եւ Փաւստոսի մօտ եղած յիշատակումներին² : Հայագէտների մի խումբ կասկածում է այդ յիշատակումների նախնականութեան հանդէպ³, սակայն ներկայ դէպքում մեզ զբաղեցնողը այլ հարց է, յատկապէս այն, որ Խորենացու Պատմութեան երրորդ գրքի 34-րդ գլուխը՝ «Յաղագս վկայութեան առաքելոցն մերոյ», անկախ հեղինակի ապրած ժամանակին վերաբերող իրարամերժ կարծիքների, բնագրային չլինելու կասկած չի հարուցում:

Ինչպէս նշուեց, Խորենացուց առաջ նրանց մասին պատմող երկեր իրօք կան: Պատմահօր ապրած ժամանակը տեղաշարժող հետեւողական հայագէտներից ամենահետեւողական Ն. Ակինեանը Թաղէոսի եւ Սանդուխտի «Վկայաբանութեան» քննութեան առիթով գրում է. «Անանուն ժամանակագրութիւն Մ. Խորենացիէն առնելով կը գրէ. իսկ ըստ հրամանի Փրկչին մերոյ Թաղէոս, որ էր մի յեւթանասնիցդ, եկն յՈւռհա առ Աբգար թագաւոր եւ բժշկեաց զնա ամենայն տամբ իւրով եւ շինեալ անդ եկեղեցի՝ ձեռնադրեաց քահանայ զԱդէ, որ էր կեպասագործ թագաւորին: Եւ եկեալ զնաց անտի ի Հայս՝ քարոզել զբանն կենաց: Իբրեւ զգաց զգալուստ նորա Սանատրուկ արքայ Հայոց, զնաց ընդ առաջ նորա եւ սպան զնա յԱրտազ գաւառի, ի գեաւղն Բագրոտ»⁴ : Քաղումը, յիրաւի, կատարուած է Խորենացու Պատմութիւնից, բացառութեամբ Բագրոտ գիւղանունը: «Անանուն ժամանակագրու-

¹ Ի դէպ՝ որ մեր բերած արտայայտութեան հեղինակը իրօք Խորենացին է եւ ոչ նրա աղբիւրը կամ մեկ այլ բնագիր, կարելի է ապացուցել նիկեական որոշումներն ուղեկցող թղթի այլ ընդօրինակութիւններով (տե՛ս «Կանոնգիրք Հայոց», Ա. Երեւան, 1964, էջ 566):

² Վ. Հացունի, Հայաստանեայց եկեղեցին Լուսաւորչէն յառաջ, «Բազմավէպ», 1925, էջ 225, 257, 289:

³ Կարծիքների քննութիւնը տե՛ս Ն. Ակինեան, Մատենագրական հետազօտութիւններ. Վկայաբանութիւն ս. Թաղէի եւ Սանդխտոյ կուսին եւ կանոնք Թաղէի, «Հանդէս ամսօրեայ», 1969, էջ 403-426:

⁴ Ն. Ակինեան, նշւ. աշխ., էջ 221-22:

թիւն» անուան տակ Ն. Ակինեանը նկատի ունի Մատենադարանի 981 թ. թղթէ ձեռագրի (N 2679) 28v-70v էջերի բովանդակութիւնը, որ երկիցս հրատարակուած է¹: Անկախ Անանուն, Անանիա Շիրակացի թէ մեկ այլ հեղինակի պատկանելու հանգամանքից (Ն. Ակինեանը այն համարում է «Դաւիթ քահանայի խմբագիր ժամանակագրութիւն»², խորագրում իսկ ասուած է՝ «Մովսէս Խորենացույ եւ Անդրէասի», որ ինքնին աղբիւրի յղում է նշանակում³: Արդ, արծարծուող «Ժամանակագրութիւնն» աւարտում է կայսր Յուստինոսի երկու տարուայ դահակալութեան եւ Հայոց ՃԼԴ (134=685 թ.) թուականին կատարուած դէպքերի յիշատակութեամբ: Եթէ այն կազմուէր այս թուականից աւելի ուշ, ապա հեղինակը կիմանար կայսեր դահակալութեան յաջորդ տարիները եւս եւ կշարունակէր եղելութիւնների թուարկումը: Ուստի իրաւացի են հայագէտները, երբ այն ճանաչում են իրապէս որպէս 7-րդ դարի յուշարձան, որով ունենք Խորենացու բնագրից քաղումներ կատարող այդ դարում ապրած մեկ հեղինակ եւս⁴:

7. Խորենացու Պատմութեանն առնչուող յաջորդ երկը «Նկարագիր կարգաց ի բանից Եզնկան երիցու» խորագիրը կրող կարճառօտ բնագիրն է, բաղկացած երեք դրուագից («Յաջորդութիւն թագաւորացն ի Տրդատայ», «Նորոգումն վկայարանին ս. Հռիփսիմէի ի Կոմիտասէ», «Ժամանակք հայրապետացն Հայոց»)⁵: Եթէ հետեւելու լինենք խորագրի եւ երկրորդ մասի աւարտի յիշատակութեան տվուալներին⁶, հե-

¹ Անանուն ժամանակագրութիւն, խմբագիր յորինեալ յէ դարու ի հնագոյն ժամանակագրաց, Վենետիկ, 1904: Նաեւ՝ Ա. Աբրահամեան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Երեւան, 1944, էջ 357-399:

² Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1957, էջ 181-185:

³ Տե՛ս «Մատենան գիտութեան եւ հաւատոյ» էջ 84: Միւս աղբիւրներն են, ըստ Ն. Ակինեանի, Եւսեբիոսի Քրոնիկոնը եւ Եկեղեցական պատմութիւնը, Եպիփան, Կայսերաց գիրք, Վրթանէս Քերթող, Անդրէաս (վերջինիս նոյնացնում է «Հիպոդիտոսի» կամ «Ազգաց գրքի» - Liber generationis (hominum) հետ: Տե՛ս նշլ. աշխ. էջ 184:

⁴ Մովսէս Կաղանկատուացու անունով հրատարակուած «Աղուանից պատմութեանը» չենք անդրադառնում, թէեւ նրանում կան Խորենացուց քաղուած ոչ քիչ տեղիներ (1, 3-6, 12, 13, 15, 11, 3), որովհետեւ վաղուց արդեն ասացուցուած է, որ այն վերջնական ձեւաւորում է ստացել 10-րդ դարում Մովսէս Դասխուրանցու ձեռքով: Խորենացուն վերաբերող տեղիների մասին տե՛ս Հ. Ներսէս Ակինեան, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 58-59: Հմմտ. А. А. АКОПЯН, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, с. 201-202.

⁵ Քննական հրատարակութիւնը տե՛ս Հ. Ն. Ակինեան, Նկարագիր կարգաց ի բանից Եզնկան երիցու, «Հանդէս ամսօրեայ», 1937, էջ 517-532:

⁶ «Եղիցի յիշատակ Եզնկան (ձեռագրում՝ Եզ) թարգմանել զգիրս այս»:

դինակը 618/619 թուականից յետոյ ասլրած ժամանակագիր է, իսկ եթէ նրա ժամանակը սահմանենք ըստ Հայրապետների թուարկման, ասլանրան պիտի համարենք Ստեփանոս կաթողիկոսի (788-790թթ.) ժամանակակիցը: Յամենայն դէպս՝ այս Եղնիկ / Եղնակին Կողբացու հետ նոյնացնելու եւ բնագրի մեծ մասը անագանագոյն – հետամուտ յայտարարելու ն. Ակինեանի դրոյթները համոզիչ չեն: Այդ կարելի է փաստել «Նկարագիր կարգացի» առաջին իսկ դրուագի վերջում Սահակի եւ Մեսրոպի աշակերտ Եղնիկի յիշատակման փաստով, որից ազատուելու համար երախտաշատ հայագէտը ընդմիջարկութիւն է համարում ողջ պարբերութիւնը: Այս յուշարձանի տարբեր հատուածներում կան Խորենացու Պատմութեանն աղերսուող տեղիներ: Ն. Ակինեանը հաւատացած է, որ քաղազրոյր Պատմահայրն է, մինչդեռ նրա իսկ մատնացուցած իրողութիւնները հակառակն են ասլացուցում:

ա) Մաշտոցի աշակերտներից «Նկարագիր կարգացը» գիտէ Ղեւոնդ, Արձան, Կորիւն, Եղնիկ, որ անշուշտ Խորենացուց է գալիս (III, 4), ընդ որում՝ այդ իսկ պատճառով էլ ինքը՝ Խորենացին չի յիշուած (այդ դրուագում նա իրեն չի յիշատակում):

բ) Խորենացին գիտէ Սահակի Շահակ տարբերակը (III, 1թ, ԽԱ), իսկ «Ժամանակ հայրապետաց Հայոցը» նրանց տարբեր անձիք է համարում:

գ) Տրդատի որդի Խոսրովին միայն Խորենացին է «ոչ համեմատ հասակի ծնողաց իւրոց» (II, 29) եւ «փոքր էր յանձնէ եւ անօսր ոսկերօք» որակում, որտեղից եւ նա կարող էր «փոքր» յորջորջուել, ինչպէս ունենք «Նկարագիր կարգացի» առաջին իսկ պարբերութիւնում: «Կոմէս» տերմինը եւս Խորենացուց է գալիս (III, ԽԶ) ընդ որում՝ գրեթէ ողջ կապակցութեամբ՝ «...եւ աշխարհին իւրեանց մասինն կացուցին Յոյնք կոմէսս իշխանս» (Մ. Խոր.) «Յետ սորա կոմէսք կալան» («Նկարագիր կարգաց»):

Տ. Մովսէս Խորենացու Պատմութիւնը ճանաչող հեղինակներից է Մովսէս Քերթոզահայրը, որի առանձնութեանը վերաբերող աշխատութիւն է հրատարակել Հ. Պողոս Անանեանը¹: Նա Քերթոզահօր գործ է համարում Խորենացու անունով տպագրուած «Ի յիշատակի սրբոյն Հռիփսիմեանց եւ նորին վկայակցութեան, ներբողեան ի հանդէս նոցա հրաշագարդ յօրինուածովք» ճառը² եւ ցոյց տալիս, որ «Մովսէս Քեր-

¹ Հ. Պողոս Անանեան, Մովսէս Քերթոզահայր եւ Մովսէս Խորենացի, «Բաղմավէպ», 1991, թիւ 1-2, էջ 7-24:

² «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 304-325:

Թողահայրը իր ճառին մէջ օգտագործած է թէ Աղաթանգեղոսի եւ թէ մանաւանդ Մովսէս Խորենացիի պատմութիւնները, որոնցմէ մէջբերումներ ունի Տրդատի մասին խօսուած ատեն»։ Պարզուում է՝ այստեղ Խորենացու Բ, ձբ, եւ Բ, ՀԹ. երկու գլուխներից քաղուած տեղեկութիւնները միացրել է միմեանց եւ ստացել «Բռնաւորն (Տրդատ) պերճացեալ զօրութեամբ հանդիսից, որ ի մարտս Պարսից զփղաց պուղէր զերամակսն, եւ զըմբշամարտս Յունաց զցլուցն ձեռամբ թափէր զեղջիւրսն եւ բռամբ զսկայն հերձուցանէր»¹։ Պ. Անանեանի իրաւացի եզրակացութեամբ «Այս վկայութեան կարեւորութիւնը յայտնի է այնու, որ է դարուն առաջին կէսին Խորենացիի Պատմութենէն եղած յիշատակութիւնն է։ Ան կը կազմէ հնագոյն սահմանը Հայոց պատմութեան, որմէ անդին կարելի չէ տանիլ անոր գոյութիւնը»²։

9. Խորենացու Հայոց պատմութեան բնագիրը ճանաչող եւ նրանից բառացի քաղումներ կատարող յուշարձանների մի առանձին խումբ են ներկայացնում վաղ-միջնադարեան վարքերն ու վկայաբանութիւնները։ Ափսոսանքով պիտի արձանագրել, որ Պատմահօր ապրած ժամանակի շուրջ վէճեր ծաւալելիս այդ երկերը բնագրագիտական քննութեան չեն ենթարկուել, իսկ յաճախ էլ, իբրեւ Խորենացու աղբիւր ընկալելով՝ տեղաշարժել են նրան։ Հակառակ պարագայում, Խորենացուց քաղուած վիճելը ընդունելիս, տեղաշարժման են ենթարկուել իրենք՝ այդ յուշարձանները։ Երկու դէպքում էլ մասնագիտական քննութիւնը կատարուել է իբրեւ նախնական կռահում կամ խորենացիագիտութեան մարզում չըջանառող պատրաստի դրոյթների կիրառում։ Նախ թուարկենք այդ յուշարձանները.

ա) «Վկայութիւն սրբոյն Շուշանկայ, որ ի Վիրս կատարեցաւ յառնէ իւրմէ յանթիպատրեայ Վրաց առաջնորդէ», կարճ՝ «Շուշանիկի վկայաբանութեան» համառօտ խմբագրութիւն³։ Կազմուած է հայերէն ընդարձակ խմբագրութեան այսօր մեզ անյայտ տարբերակի համառօտումով։ «Բղեշխ» տերմինի փոխարէն «անթիպատրոս» ունենալը յուշում է, թէ խմբագրումը տեղի է ունեցել 6-րդ դարի վերջերից ոչ վաղ⁴։

¹ Անդ, էջ 13։

² Հ. Պ. Անանեան, նշւ. աշխ., էջ 15։

³ Հրատ. «Սոփերք հայկականք», Թ., Վենետիկ, 1853, էջ 49-55, նաեւ՝ Լ. Մելիքսեթ-Բէկ, Հին հայերէնի քրեստոմատիա, Տփ., 1920, էջ 100-103 (վրաց.)։ Յակոբ Տուրտաւեցի, Վկայաբանութիւն Շուշանիկի, Հրատ. Ի. Աբուլաձէի, Տփ., 1938 էջ 49-53 (վրաց.)։ Վերահրատարակութիւնը՝ 1978, Տփղիս, էջ 122-126։ Վերջին Հրատ. Պ. Մուրադեան, Ս. Շուշանիկի վկայաբանութիւնը, էջ 108-122։

⁴ Հմմտ. «Հանդէս սմսօրեայ», 1907, էջ 123, նաեւ՝ Իլիա Աբուլաձէ, նշւ. աշխ., էջ 138 (48)։

Առաջին իսկ հրատարակութեան իրացնողը նկատել է, որ վկայութեան ներածական մասը «առեալ է ի բանից Խորենացւոյն ի ԾԱ եւ ի ԽԹ գլխոց Գ գրոց Պատմութեան Հայոց»¹: Եւ յիրավի, քաղուժը բառացի է, աննշան միջարկումներով կամ տարրնթերցումներով, ընդ որում՝ ի մի են բերուած «Հայոց պատմութեան» տարբեր գլուխներում եղած եւ Սահակին վերաբերող տեղեկութիւններն ու բնութագրումները (III, ԾԱ+III, ԽԹ+III, ԾԱ)²:

բ) «Վկայաբանութիւն սրբոյն Ոսկեայ եւ ընկերաց նորա» եւ «Վկայաբանութիւն սրբոց քաւչիցն, որք վկայեցան ի Բագրեւանդ գաւառի ի Սուկաւէտ լեառն»³: Այս երկու յուշարձանի ընդհանրութիւնը պայմանաւորուած է Ալանների երկրից Սաթէնիկի հետ կամ նրա հետեւողութեամբ Հայաստան եկած քրիստոսադաւանների նահատակութեան սիւժէով: Վկայաբանութիւնների հեղինակը, ըստ բնագրերում իսկ պահպանուած յիշատակարանային տեղեկութեան, ոմն Անտոն անապատական է «ի Հռովմայ»: Ղ. Ալիշանի կարծիքով այդ «Անտոն Հռովմայեցին» ինքը Մովսէս Խորենացին է⁴: Ճշտուած է, սակայն, որ նման նոյնացման հիմքեր չկան, որովհետեւ հեղինակը յականէ-յանուանէ յիշատակուած է⁵: Սակայն աներկբայ է սոյն վկայաբանութիւնների աղերսը Խորենացու Պատմութեանը: Ն. Մառի կարծիքով, Սաթէնիկի յիշատակութիւնը Խորենացու երկում հնարովի չէ, քանի որ մինչեւ 7-րդ դարի կէսերը գրուած Վկայաբանութիւնները եւս գիտեն նրան⁶: Կ. Կեկելիձէն արդարացիօրէն նկատել է, թէ Ոսկեանց ու Սուքիասեանց ալանական ծագումը Ալանք եւ Աղուանք եղբերի շիոթի արդիւնք է, որը հատուկ է նաեւ յունական աղբիւրներին եւ որ վկայաբանութիւններում առկայ այդ շիոթը գալիս է Մովսէս Խորենացու Պատմութիւնից (I, L, II ԽԹ, Ծ, ԾԲ)⁷: Ուրեմն պիտի եզրակացնել, որ գիտնականը այս երկու յուշարձանի աղբիւր է համարում Խորենացուն:

¹ Ղ. Ալիշան, «Սոփերք Հայկականք», Թ, էջ 60, ծան. 12: Նոյնը հետագայում ասել են Ն. Մառը, Ի. Ջաւախիշւիլին, Ն. Ակինեանը, Ի. Աբուլաձէն:

² Տե՛ս Ի. Աբուլաձէի հրատ., էջ 49 (122)9-50 - 50 (123)32:

³ Բնագրերի գիտական հրատ. տե՛ս Ի. Աբուլաձէ, IX-X դարերի վրաց-հայկական գրական առնչութիւնները, Թիֆլիս, 1944, էջ 9-21, 22-61 (վրաց.):

⁴ Ղ. Ալիշան, Արշարոյս քրիստոնէութեան Հայոց, Վենետիկ, 1901, էջ 66:

⁵ Անտոն Հռովմայեցու յիշատակարանային ներածութիւնը եւ մանաւանդ Սուքիասեանց վկայաբանութեան վերջաբանը (պահպանուել է վրացերէն թարգմանութեամբ) նշանակալի չափով յիշեցնում են Խորենացուն վերագրուող «Հոփսիմեանց պատմութեան» ներածական մասը:

⁶ H. Mapp, Из поездки на Афон, СПб., 1899, стр. 17-18.

⁷ Կորնելի Կեկելիձէ, Դրուագներ վրաց հին գրականութեան պատմութիւնից, հատ. X, Թիֆլ., 1968, էջ 126 (վրաց.):

Եւ իրօք, վկայաբանութիւնների հեղինակը քանիցս նշում է, թէ ինքը տեղեկութիւնները քաղում է «ի գրոց պատմագրաց», իսկ մէկ դէպքում ուղղակի ասում. «իսկ ինչպէս տեղեկացայ ճշմարիտ պատմողներից ու հոգեւոր գրքերից, որոնք հաղորդում են Հայքի պատմութիւններն ու կարգաւորութիւնները, այս երանելիները Պարսից խմբից ու տոհմից էին, օսերի թագաւորներից շարգուած ու անուանի...»¹: Փատորէն այստեղ ունենք աղբիւրի անմիջական յիշատակութիւն՝ Հայոց մի այնպիսի պատմութեան, ուր ալաններին, մասնաւորապէս Սաթէնիկին վերաբերող տեղեկութիւններ կան, որպիսին է միայն Խորենացու Պատմութիւնը: Ուրեմն՝ 7-րդ դարի առաջին տասնամեակներից ոչ ուշ գրուած վարքագրական երկու յուշարձան եւս իբրեւ աղբիւր են գործածում Խորենացու երկը:

գ) «Վկայութիւն սուրբ հայրապետացն Հայոց Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկան, Գրիգորիսի, Դանիէլի»²: Նախորդների հետ նոյն շարքին պատկանող յուշարձան է, բայց եթէ այլ դէպքերում անհրաժեշտ էր լինում ապացուցել Խորենացու Պատմութեանն ունեցած առնչութիւնը, այստեղ արդէն դրա կարիքը չկայ: Վկայաբանութեան տարբեր հատուածներում առկայ են Պատմահօր երկից մեծ մասամբ բառացի քաղուած մի շարք հատուածներ (Մ. Խոր., II, ՂԱ., III, Գ, III, Բ, ԺԱ., ԺԳ, ԺԴ), ընդ որում առանձին դէպքերում կարելի է այդ հատուածների հիմամբ սրբագրութիւններ առաջարկել Խորենացու բնագրին³:

Ն. Մառը հակուած էր այս վկայաբանութեան մէջ եւս Խորենացու աղբիւր տեսնել, բայց եւ միաժամանակ չէր բացառում Պատմահօր երկից քաղած լինելու հաւանականութիւնը, ուստի եղրակացնում էր: «այս պարագային յոյժ էական կռուան կունենայինք յօդուտ այն բանի, որ Մովսէս Խորենացին 7-րդ դարի կէսից ոչ ուշ ապրած պատմիչ է»⁴: Ի. Աբուլաճէն Խորենացուց քաղած լինելը չի մերժում, բայց որովհետեւ հայերէնից կատարուած հին վրացերէն թարգմանութեան սկզբնամասում Ագաթանգեղոսի մեզ հասած բնագրից հատուած կայ, իսկ

¹ Տե՛ս Ի. Աբուլաճէ, նշւ. աշխ., էջ 22: Ներածական սոյն գրուագի հայերէն բնագիրը դեռ երեւան չի հանուած:

² Բնագրի հրատ. տե՛ս «Սուրբ հայկականք», Ժ, էջ 47-56: Գիտական հրատ. Ի. Աբուլաճէ, նշւ. աշխ., էջ 62-68:

³ Այսպէս, օրինակ, Խորենացու բնագրում կարդում ենք. «Թէպէտ եւ յանլիութիւն աւուրցն հայելով պարականոն՝ դիրն վարկանէր, այլ տեսեալ զհոգւոյն մեծանձնութիւն...» (III, Գ): Յունարան «պարականոնի» փոխարէն վկայաբանութեան մէջ ունենք «թէպէտ եւ յանլիութիւն աւուրցն հայելով պատանւոյն, այլ տեսեալ զհոգւոյն մեծանձնութիւն...»:

⁴ H. Mapp, նշւ. աշխ., էջ 18:

Ագաթանգեղոսի երկը Ն. Մառի, Ն. Աղոնցի եւ Ի. Զաւախիչլիու հետեւողութեամբ 8-րդ դարի խմբագրութիւն է համարում, վկայաբանութեան ստեղծման ժամանակը համարում է այդ դարից ոչ առաջ¹: Այժմ, Գ. Լաֆօնտայէնի հրատարակութիւնից յետոյ, գիտենք, որ այդ թուագրութիւնը թիւր է, 7-րդ դարի սկզբին Ագաթանգեղոսի ընդարձակ (այսպէս կոչուած ազգային) խմբագրութիւնը արդեն հայերէնից յունարէնի էր թարգմանուել²: Ուրեմն պարզ է՝ եթէ ոչ աւելի վաղ, գէթ 7-րդ դարում, ինչպէս Ն. Մառն էր թուագրում, վկայաբանութիւնը լայնօրէն քաղուածներ է կատարում Խորենացուց:

դ) «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայրապետին եւ Խաղայ եպիսկոպոսին»: Բնագիրը Երուսաղէմի ձեռագրերից մէկում երեւան է բերել Ն. Մառը³, իսկ գիտական հրատարակութիւնը իրացրել է Ի. Աբուլաձէն⁴: Երկուսն էլ ըստ ամենայնի դիտարկել են, որ բացառութեամբ Փաւստոսից եկող մի դրուագի, բնագիրն ամբողջութեամբ քաղուած ու հարասուած է Խորենացու Պատմութեան երրորդ գրքի տարբեր գլուխներից (մասնաւորապէս՝ III, Ի, ԻԹ, Լ, ԼԱ, ԼԲ, ԼԳ, ԼԵ, ԼԶ, ԼԷ, ԼԸ): Նախորդի պէս այս յուշարձանը եւս սրբագրութիւնների հնարաւորութիւն է ընձեռում: Այսպէս, օրինակ՝

Խորենացի

Եւ զերկուս զայսոսիկ յազգաց նախարարացն բառնայ. մի՛ զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն ազահելոյ սեպհական ազատութեանն առնէին. եւ միւս՝ որ ի վերայ մեռելոց գործէին ոճիրս ըստ հեթանոսական սովորութեան (III, Ի):

«Պատմութիւն Ներսիսի»

Եւ՝ զերկուսս զայսոսիկ բառնայ ի նախարարացն ազգաց. մի՛ զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն ազահելոյ սեպհական ազատութեանն առնէին. եւ միւս՝ որ ի վերայ մեռելոց գործէին ոճիրս, կոծելով ըստ հեթանոսական սովորութեանն:

Պարզ է, որ նախնականն ու բնագրայինը «Ներսիսի պատմութեան» ընթերցումն է: Ինչպէս միւս դէպքերում, այս յուշարձանն

¹ Ի. Աբուլաձէ, նշւ. աշխ., էջ 0140: Ագաթանգեղոսի հատուածի հայերէն թարգմանութիւնը տե՛ս Պ. Մուրադեան, Ագաթանգեղոսի հին վրացերէն խմբագրութիւնները, Երեւան, 1982, էջ 122-123:

² Guy Lafontaine, La version greque ancienne du livre arménien d'Agathange, Louvain-la Neue, 1973, p. 33-41:

³ Н. Марр, Предварительный отчет о работе на Синае, веденных в сотрудничестве с И. А. Джаваховым, в Иерусалиме, в поездку 1902 г., с. 15.

⁴ Տե՛ս նշւ. աշխ., էջ 69-79:

էլ Ն. Մառը թուագրում է 7-րդ դարից ոչ ուշ ժամանակով:

ե) «Կատարումն սրբոյն Սահակայ Պարթեւի»: Սոյն խորագրի տակ առանձնացուող երկը փաստօրէն Ղազար Փարպեցու Պատմութեան առաջին դրուագի 18-րդ հատուածն է¹: Ներկայ դէպքում հեղինակային ստուգութեան հարցը մեզ չի դրադեցնում², այլ այն, որ յիշեալ վերտառութեամբ երկը մեզանում գործառնել է իբրեւ առանձին միաւոր եւ պահպանուել հին վրացերէն թարգմանութեամբ: Քանի որ այդ թարգմանութեան մէջ նկատելի է 700-ական թուականներին դրուած *Narratio...*-ի բնագրային ազդեցութիւնը³ եւ վրացերէն բնագրի առաջին իսկ տողում ասուած է, թէ Սահակը «ըստ հարց նախնի կարգի ամուսնացած էր», իսկ եպիսկոպոսների ամուսնացածութիւնն արգելուեց վեցերորդ տիեզերական ժողովի որոշմամբ 692 թուականից⁴, ուրեմն համապատասխան հայերէն բնագիրը գոյացել կամ թարգմանուել է 7-րդ դարի աւարտից ոչ շուտ: Մենք այստեղ չենք քննարկելու նաեւ Փարպեցուց քաղուած հատուածների առնչութիւնը Խորենացու «Հայոց պատմութեան» համապատասխան դրուագներին, որոնցով ի մասնաւորի զբաղուել են Խայրթեանցը, Ն. Բիւզանդացին, Ն. Ակինեանն ու Պ. Տէր-Պողոսեանը⁵, այլ անհրաժեշտ ենք նկատում արձանագրել, թէ հայերէնից հին վրացերէն թարգմանուած «Կատարումն սրբոյն Սահակայ Պարթեւի» բնագրում կան ուղղակիօրէն Խորենացուց վերցրած հատուածներ, որոնք ճանաչել եւ առանձնացրել է այդ երկի ուսումնասիրութեամբ զբաղուած հայագէտ Ի. Աբուլաձէն⁶: Իրողութիւնը փաստելու համար ասենք միայն, որ քաղագրողը անհրաժեշտ է համարել կրկնել Խորենացու այն վերապահութիւնը, թէ «Բայց թէ ասիցէ ոք՝ պարտ է մեզ զասացեալսն մեծի Սահակայ ի Պարսից հրապա-

¹ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տիփլիս, 1904, էջ 37-38: Պատմութեան Սահակին վերաբերող հատուածը յայտնի է նաեւ առանձին ընդօրինակութիւններով (տե՛ս Նորայր եպս. Պողարեան, Նորագիւտ հատուած Ղազար Փարպեցու «Հայոց պատմութեան», «Բանբեր Մատենադարանի», N 8, Երեւան, 1967, էջ 263-274, նաեւ՝ Պարոյր Մուրադեան, Հատուած Ղազար Փարպեցու «Պատմութիւնից», «Հայագիտական հետազոտութիւններ», Ա, Երեւան, 1974, էջ 194-226:

² Խնդրի քննութիւնը տե՛ս Հ. Ն. Ակինեան, Պատմական աղբիւրները 380-450 չրջանի համար, «Հանդէս ամսօրեայ», 1972, էջ 403-414:

³ Յունարէն բնագրի հրատ. տե՛ս Gererd Garitte, *La Narratio de rebus Armeniae*, Louvain, 1952, Հ. Բարթիկեանի հայերէն թարգմանութիւնը տե՛ս «Բանբեր Մատենադարանի», N 6, Երեւան, 1962, էջ 457-470:

⁴ Հմմտ. Կ. Կեկելիձէ, նշւ. աշխ., էջ 403-414:

⁵ «Հանդէս ամսօրեայ», 1972, էջ 403-414:

⁶ Ի. Աբուլաձէ, նշւ. աշխ., էջ 0143-0149

հրատ. տե՛ս նշւ. աշխ., էջ 80-84:

րակախօսութեանն գրել՝ գիտասցէ, զի ոչ յուսեքէ ի լսելիս մեր հասեալ է բովանդակն ճշմարտութեամբ, եւ ոչ մեք ի պատմութեանս հիւսել հաւանիմք» (III, ԿԵ): Այս խօսքերի դիմաց հին վրացերէնում կարդում ենք. «...անվախ էր խօսում, սակայն չհասցրինք գիտենալ նրա խօսքերի խորքը»: Կարծում ենք նոր ապացոյցներ վկայակոչելու հարկ չկա:

Այսպիսով, վերելում մենք անուն առ անուն թուարկեցինք տարբեր ժանրերի պատկանող վեց յուշարձան եւս, որոնք աղերսւում են Խորենացու Պատմութեանը կամ քաղումներ կատարում նրա բնագրից: Այդ յուշարձանների առանձնացումը պատահական չէր. նրանք բոլորը միջնադարում հայերէնից թարգմանուել են վրացերէն եւ պահպանուել Աթոսի Վրաց մայրավանքի «Վարք սրբոցում»¹: Ն. Մառը հակուած էր Աթոսի Վրաց մայրավանքի հայ-վրացական եկեղեցական միաս-թարգմանութիւնները թուագրել հայ-վրացական եկեղեցական միաս-նութեան շրջանով, ուստի մատնացուցում էր 7-րդ դարը: Այս եզրակա-նութիւնը անհամեմատ աւելի հիմնաւոր է, որովհետեւ նրանցում քաղ-ցութիւնը անհամեմատ աւելի հիմնաւոր է, որովհետեւ նրանցում քաղ-կեղծական դաւանութեան հետքեր չկան եւ, ինչպէս Կ. Կեկելիձէն էր ապացուցում², Տայքի վրացախօս հայերի գրական գործունեութեանն առնչելու Ի. Աբուլաձէի վարկածը չի հաստատուում: Կարծում ենք, այդ առնչելու Ի. Աբուլաձէի վարկածը չի հաստատուում: Կարծում ենք, այդ է հաստատում նաեւ գրչագրի նախօրինակի «երկաթագիր» լինելու հանգամանքը: Մի բան պարզ է՝ այս յուշարձանների հայերէն բնագրե-րը գոյացել ու շրջանառել են աւելի վաղ, քան կատարուել է նրանց հին վրացերէն թարգմանութիւնը: Եւ քանի որ նրանք բոլորը բնագրական առնչութիւններ ունեն Խորենացու Պատմութեան հետ՝ ՊատմաՏօր եր-կը այդ դարում արդէն կար:

Մեր եզրակացութիւնն արդէն պարզ է. կամ պիտի ապացուցել այս շուրջ երկու տասնեակ յուշարձանների, յիշուած հեղինակների ու թարգմանութիւնների անվաւերականութիւնը, կամ ընդունել, որ Խո-րենացին այն դարի ու միջավայրի հեղինակ է, որոնցով ինքը ներկայա-նում է: Կարծում ենք, գիտութեան, մանաւանդ բնագրագիտութեան նորմերով ու մեթոդներով առաջնորդուող հետազօտողի համար այլեւս

¹ Ձեռագիրը ընդօրինակուած է 10-րդ դարի վերջերին կամ ԺԱ դարի կէսերին, «նուսխուրի» գրչութեամբ, Ն. Մառի ճշտմամբ՝ «մրգլովանի» (երկաթագիր) գա-ղափար օրինակից: Ի. Աբուլաձէն թարգմանութիւնները ղետեղելի է համարում 840-960-ական թուականների արանքում, սակայն Կ. Կեկելիձէն ցոյց է տուել, որ նման եզրակացութեան հիմնաւոր կռուաններ չկան: Ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս R. Blake, Catalogue des manuscrits. géorgiens de la bibliotheque de la Laure d' Iveron au Mont Athos, Revue de l'Orient chretien, 1931, No. 28, pp. 318-329. Հմմտ. Պ. Մուրադեան, Ազգաթանգեղոսի հին վրացերէն խմբագրութիւնները, էջ 112-120:

² Կ. Կեկելիձէ, նշւ. էջ 127-128:

տարակուսելու հնարաւորութիւն եւ առիթ չպիտի լինի: Բայց այդ ամենեւին չի նշանակում, թէ պիտի բանադրել Խորենացու քննադատութեամբ պարապողներին. նրանց բերած նպաստը եւս քիչ չէ՝ եթէ ուզում ենք մեր պատմութիւնը հիմնել աղբիւրագիտական վստահելի խարխիսների վրայ:

Խորենացու «Հայոց պատմութիւնը» կարօտ է քննական հրատարակութեան, որով կղատորոշուեն ընդմիջարկութիւններն ու հետագայ յաւելումները, աղաւաղումները կպարզուեն, եւ մենք ի նորոյ կսկսենք հասկանալ ու ճանաչել Պատմահօրը (մենք նրան այլեւս Քերթողահայր չպիտի կոչենք, տարբերելու համար միւս Մովսէսից): Մեր քննութեան առած յուշարձանները նշանակալի նիւթ են ընձեռում այդ սպասելի գիտական հրատարակութիւն իրացնելուն:

Եւ այնուամենայնիւ, մեր խօսքը աւարտուն չէր լինի, եթէ չարձանագրէինք, որ Հայոց մատենագրութեան աւանդած «երանելի փիլիսոփա», «մատենագիր», «ճարտասան», «Պատմահայր», շփոթով նաեւ «քերթող, քերթողահայր» եւ այլ որակումները պարզ հաճոյախօսութիւններ չեն, այլ նրա իրական վաստակը ներկայացնող եղբեր: Դժուար է ցոյց տալ մեկ այլ մատենագիր, որի ստեղծած երկը յաջորդ երկու հարիւր տարիների ընթացքում այդքան յաճախ եւ այդքան բառացի շրջանառութիւն ունենար, արգասաւորելով ճառերի, վարքերի, վկայաբանութիւնների, ժամանակագրութիւնների ու թղթերի պատկառելի մի քանակութիւն, որպիսիք են արդեն ներկայացուած յուշարձանները: Փաստօրէն Խորենացու տեղաշարժը խառնաշփոթի կմատնի տակաւ առ տակաւ, օղակ առ օղակ հիւսուած մատենագրութեան շղթան: Եթէ Խորենացին պայմանաւորում է իրենից օգտուող հեղինակների ու յուշարձանների երեւան գալը 6-7-րդ դարերում, ապա վերջիններս էլ պայմանաւորում են Խորենացու կենաց ու գործի ժամանակը, նշանակութիւնը:

ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Պատմահայր Մովսէս Խորենացու Պատմութիւն Հայոց (սրբագրեալ վերտառութեամբ՝ Պատմութիւն Հայոց Մեծաց) երկը բովանդակող ամբողջական հնագոյն ձեռագիրը, որ ներկայումս պահուած է Երեւանի Մատենադարանում Հմր. 2865 տակ, ընդօրինակուած է ԺԴ. դարում¹ եւ պատկանում է Խ (խառնուրդ) ձեռագրախմբին, այսինքն՝ հին մասը Ա խմբին է պատկանում, նորը՝ Տ խմբին²։ Այդ նշանակում է, թէ հեղինակի ժամանակներից մինչեւ մեզ հասած վերոյիշեալ ձեռագիրը՝ Պատմութիւն Հայոց Մեծացը բազմակի ընդօրինակումներից է անցել, տասնակ գրիչներ ու սրբագրող-խմբագիրներ ունեցել եւ նոյնքան անգամ ենթակայ եղել դիտակցուած կամ ակամայ միջամտութիւնների ու փոփոխութիւնների։ Թէկուզ միայն գրիչների վրիպելու կարելիութիւնը բաւական է, որ բնագրագէտները այսօր եւս շարունակեն երկն ընդմիջարկութիւններից ազատելու, սխալագրութիւնները բացայայտելու եւ հեղինակային իսկագիրը վերականգնելու մտահոգութիւն ունենալ։

Հիմքեր կան պնդելու, թէ Խորենացու երկը միւս պատմագրքերից աւելի ենթակայ պիտի լինէր ընդօրինակում-«թարմացումների», որովհետեւ տեւականօրէն ազգային պատմութեան ձեռնարկ է եղել՝ հետեւ տեւականօրէն ազգային պատմութեան ձեռնարկ է եղել՝ հետեւ տեւաբար իր վրայ կրել նորանոր սերունդների ըմբռնումների ու ճանաչած նորմերի կնիքը։ Օրինակ, ինչպէս ասել ենք, Բագրատ Հայ կամ Աթէնացի անունով վաղ միջնադարում ապրած մի անձնաւորութիւն՝ առ Սուրէն անունով իր հայաստանցի բարեկամը յղած թղթում, նրան կոչ է անում որդիներին պատմել ազգային պատմութեան այն դրուագ-

¹ Այս ձեռագրի ամփոփ նկարագրութիւնը տե՛ս Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տիղիս, 1913 [այսուհետեւ՝ Խորենացի (1913)], էջ Ժէ։ Տե՛ս նաեւ՝ Յուլիանի ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հատ. Ա. կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթարեան, ներածութիւնը՝ Օ. Եգանեանի խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Աս. Մնացականեանի, Երեւան, 1965, սիւնակ 891-892։

² Խորենացու ձեռագրերի Մ. Աբեղեանի ծագումնաբանութիւնը տե՛ս Խորենացի (1913), էջ ԼԹ։

ները, որ նկարագրուած ենք դառնում Խորենացու մօտ¹: Այդ նշանակում է թէ ՊատմաՏօր երկը յիրաւի ձեռնարկային կիրառութիւն էր ստացել, ճանաչելի դառնալով Հայաստանից դուրս ապրող Հայութեան միջավայրում եւս:

Խորենացիագիտութեանն այսօր ծանօթ է Պատմութիւն Հայոց Մեծացի շուրջ 50 ձեռագիր ընդօրինակութիւն ու պատառիկ-պահանակ, երկի շուրջ 15 հրատարակութիւն եւ վերահրատարակութիւն: Կատարուել եւ կատարւում են ոչ քիչ թուով թարգմանութիւններ²: Այնուամենայնիւ այդ երկը այսօր էլ կարօտ է մանր ու մեծ բնագրագիտական բազում ճշգրտումների, սրբագրութիւնների ու վերականգնումների: Արդէն ասացինք, որ հնագոյն ամբողջական ձեռագիրը Ժ՛- դարից վաղ չէ:

Ինչ վերաբերում է եղած հրատարակութիւններին, ապա դրանց մէջ առաւել գիտականն ու նախընտրելին Ստեփանոս Մալխասեանցի խմբագրութեամբ, Մանուկ Աբեղեանի եւ Սէթ Յարութիւնեանի աշխատութեամբ 1913-ին Տփղիսում լոյս տեսածն է: Կազմողներն ու խմբագիրը ոչ-պատահականօրէն չեն կամեցել իրենց հրատարակութիւնը «քննական» կամ նոյնիսկ «գիտական» որակել, որովհետեւ պարզորոշ տեսել են եւ ազնուօրէն արձանագրել, թէ իրենց հաւաքած ձեռագրական «բոլոր ընթերցուածները մի անգամից աչքի առաջ կարելի է ունենալ՝ աւելի ճիշտ կերպով կարելի է բնագիրը վերակազմել, եւ այժմ իսկ տեսնում ենք, որ շատ ընթերցուածներ պէտք էր բնագրի մէջ դնել, որ մենք ծանօթութիւնների մէջ ենք առել, կամ ընդհակառակն»³:

«Աւելի ճիշտ... վերակազմելու» ենթակայ բնագիրը ամենեւին անհարկի է «քննական բնագիր» որակել, ինչպէս այդ կատարուած է Խորենացու 1991-ին Երեւանում նմանահանութեամբ վերատպուած, բայց խմբագիր Ստ. Մալխասեանցի անունը մոռացած տիտղոսաթերթում⁴: Ի լրումն նախորդի, այս նոր հրատարակութեանը իբրեւ յաւելում կցուած են Աշոտ Սարգսեանի հաւաքած 10 ամբողջական եւ 10 միաւոր պատառիկի ընձեռած ընթերցումները՝ համեմատելով Աբեղեանի եւ Յարութիւնեանի տողատակերի հետ⁵: Սա, հարկաւ, նախնա-

¹ «Յառաջդիմութիւն Ազգային», «Բաղմավէտ», Բ տարի, թիւ 13, Յուլիսի 1, 1844, էջ 202-203 համտ. Պարոյր Մուրադեան, «Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» բնագրական հետքերը Զ-է դարերի երկերում», էջմիածին, Զ-է, 1992, էջ 89-90:

² Պետրոս Յովհաննիսեան, Մովսէս Խորենացու երկասիրութիւնների մատենագիտութիւն, Երեւան, 1991, էջ 5-48:

³ Խորենացի (1913), էջ ԽԹ:

⁴ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, նմանահանութիւն, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երեւան, 1991 [այսուհետեւ՝ Խորենացի (1991)]:

⁵ Խորենացի (1991), էջ 399-485:

կան աշխատանքի կարեւոր լրացում է, որ կոչուած է օժանդակելու բնագիրը վերակազմելուն: Նման պարագաներում յետին թուով այն «բնական» որակելը կատարելիք աշխատանքը չպատկերացնել եւ հայագիտութեան նոր սերնդին կամաւոր մոլորութեան մատնել է նշանակում¹:

Հայագէտը, մասնաւորապէս՝ խորենացիագէտ հայագէտը պարտաւոր է աշխատանքային մեկնակէտ ունենալ Աբեղեանի եւ Յարութիւնեանի «Յառաջաբանի» եղբակացութիւնը, թէ «բնագրի վերակազմելը չի կարող մի մարդու գործ լինել, դրա վրայ դեռ շատերը պիտի աշխատեն, եւ կարծում ենք այսուհետեւ ուրիշները հեշտութեամբ կարող են վերակազմել բնագիրը՝ ի նկատի ունենալով ոչ միայն մեր տուած ընթերցուածները, այլ եւ ուրիշ աղբիւրներ, եւ ամէն մի հատուածի համար առանձնապէս ուսումնասիրութիւն անելով»²: Ձեռագրական խմբերի առաջացման պատճառներին եւ ժամանակին անդրադառնալիս, Աբեղեանը ամփոփում է «կան ձեւեր, որ մի խմբի մէջ աւելի հարազատ են պահուած, ուրիշ ձեւեր էլ ուրիշ խմբի մէջ: Դա արդէն բնագիրը վերականգնելուն է վերաբերում, որ իմ նպատակից դուրս է»³ (ընդգծումը մերն է - Պ. Մ.):

Ստորեւ, հարիւրամեայ այդ սլատուիրանը կիրառելուց առաջ, արձանագրենք, որ բնագրագէտ-խորենացիագէտները դեռ պիտի շարունակեն Պատմութիւն Հայոց Մեծացի ամբողջական կամ հատուածական ձեռագրերի ու պատառիկների պրպտումը եւ վերծանում-հրպարակումը:

Մատենադարանի նոր նմանահանութիւն-վերահրատարակութեան յաւելուածային ընթերցումների մէջ չի ընդգրկուած նոյն հաստատութեան 1671-ին գրուած Հմր. 10000 ձեռագիրը⁴, որն օժտուած է ոչ քիչ տարրնթերցումներով: Հաւանաբար վրիպած կամ հասու չեղած կը լինեն այլուր գտնուող ուրիշ ձեռագրեր եւս: Սպասելիքներ կան տարբեր հաւաքածոներում պահպանուող հատակոտորներից՝ առանձին կամ պահպանակի տեսքով, որոնց գիտական նկարագրութիւնն ու ճանաչումը երկար ժամանակ պահանջող գործ է, ինչպէս որ ապագայ տեխնիկական միջոցների կատարելագործմանն է թողնուած այսօր արդէն յայտնի կրկնագրերից շատերի ուսումնասիրութիւնը:

¹ Խորենացի (1913), էջ ԽԹ-Ծ:

² Նոյն, էջ Ծ:

³ Նոյն, էջ ԽԱ:

⁴ Այդ իրողութիւնը հրապարակաւ արձանագրել է ձեռագրագէտ Արտաշէս Մաթեւոսեանը:

Մենք առիթ ենք ունեցել ասելու, թէ «որպէս հեղինակ տարուբերուելով երեքից աւելի դարերի արանքում, Խորենացին իբրև աղբիւր շատ յաճախ շփոթուեց նրան իսկ աղբիւր ծառայած նիւթերի հետ, որով եւ մթազնուեց Պատմահօր երկի առկայութեամբ պայմանաւորուած բնագրական իրողութիւնների վերհանումը ետխորենացիական մատենագրութեան մէջ»¹ : Բայց վաղուց եւ արդարացիօրէն նկատուած է, թէ Խորենացու «ընթերցուածոց հնութեան համար ի խորհուրդ կրնային կոչուիլ հին պատմագրութիւնք, որոնք կամ Խորենացույ աղբիւր եղած են եւ կամ զայն իրենց աղբիւր ունեցած են, զոր օրինակ Ագաթանգեղոս, Փաւստոս, Յովհ[աննէս] Կաթ[ողիկոս], Անանուն Ժամանակագիր, Թովմ[այ] Արծրունի, Մխիթար Անեցի եւ այլն»² :

Շարունակելով հայագէտներ Նորայր Բիւզանդացու³ եւ Հ. Ներսէս Ակինեանի նախանշուած մեթոդով Խորենացու Պատմութեան բնագրական հետքերի պրպտումը, մենք, ի թիւս այլ երկերի, անուն առ անուն յիշատակել ենք վարքագրական-վկայաբանական վեց յուշարձան⁴, որոնք ունեն բառացի քաղումներ Խորենացուց եւ չեն ընդգրկուած 1913-ի հրատարակութեան համեմատութեան առնուած նիւթերի ցանկում: Այժմ պիտի փորձենք այդ յուշարձաններից երկուսից բերուող մի քանի բնութագրական քաղումներով խորենացիագիտութեան համար ակնառու դարձնել նրանց բովանդակած ընթերցումների կարեւորութիւնը:

Ա. «ՇՈՒՇԱՆԻԿԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ»

Ասպուրակէսին յաջորդած Սահակ Պարթևի եպիսկոպոսապետութիւնը ներկայացնելիս, Խորենացին Գ. Գրքի խթ. գլխում թուարկում է նրա նախնիներին եւ ասլա աւելացնում. «Սա ամենայն առաքինութեամբ հարցն նմանեալ, աղօթիցն մասամբ առաւելեաց: Բանգի ստացաւ աշակերտս վաթսուն ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուդէից, արք կրօնաւորք, խարաղնազգեստք, երկաթապատք, բոկազնացք, որք յար ընդ նմա շրջին, որովք մշտնջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնն, որպէս զայնս որք յանապատսն էին»⁵ : Մեր ընդ-

¹ Պ. Մուրադեան, Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» բնագրական հետքերը..., տե՛ս նախորդ բաժինը:

² Հ. Ներսէս Վ. Ակինեան, «Մովսիսի Խորենացու «Հայոց Պատմութեան» բնագրի վերակազմութեան խնդիրը», «Հանդէս ամսօրեայ», սիւնակ 684:

³ Նորայր Ն. Բիւզանդացի, «Ընդդէմ Կարիէրեանց», սիւնակ 19-28:

⁴ Պ. Մուրադեան, նշւ. աշխ., էջ 93-97:

⁵ Խորենացի (1913), էջ 320:

գծած «ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուղէից» միջանկեալ նախադասութիւնն ու «երկաթապատք» բառը բովանդակային այլընթերցում չունեն, եղածը քերականական կամ շարահիւսական է, բայց գերազանցապէս սխալագրութիւն¹:

Բանասիրութեանը վաղուց է յայտնի, որ Սուրբ Շուշանիկի վկայարանութեան մէկ ձեռագրով յայտնի համառօտ խմբագրութեան առաջին հատուածը քաղուած է Խորենացու երկի Գ. գրքի ԽԹ. եւ ԾԱ. գլուխներից², եւ մեզ այստեղ զբաղեցնող Խորենացու խօսքերը վկայարանութեան տեքստում քաղուած են բառացի, սակայն՝ մէկ էական տարբերութեամբ. նրանում չկան ընդգծուած «ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուղէից» եւ «երկաթապատք» միաւորները:

Նախ փորձենք ճշտել, թէ մասնագէտները ինչպէս են հասկացել կամ մեկնարանել բնագրի այդ մասը: «Ըստ մայրաքաղաքացն սպուղէից» արտայայտութիւնը թարգմանիչներից շատերն ընկալել են միադէից՝ «մայրաքաղաքների Սպուղէների նմանութեամբ»³, «Следова-կերպ՝ «մայրաքաղաքների Սպուղէների նմանութեամբ»⁴, «ли примеру столичных Спудеев»⁵, «сходных со столичными спудеями»⁵, «the Spudaioi of the capital»⁶ եւ այլն: Նրանք իրաւացիօրէն «Սպուղէից» եզրը (ուղղ. Սպուղէք) սերել են յունարէն σπουδαίοι «Սպուղէից» եզրը (ուղղ. Սպուղէք) սերել են յունարէն σπουδαίοι փութաջաններ, նախանձայոյզներ բառից եւ նոյնացրել «ակումիտներ» (արթմնիներ, արթունների կամ անքունների) միաբանութեան հետ:

Թարգմանութեան ինքնատիպութեամբ է օժտուած Խորենացու երկի վենետիկեան հայերէն-ֆրանսերէն հրատարակութիւնը՝ «sous la règle de l'ordre des grands couvents Spoudées»⁷ (այսինքն՝ «Սպուղէ-

¹ Խորենացի (1991), էջ 320, 475:

² «Սովերք Հայկականք», հատ. Թ., Վենետիկ, 1853, էջ 60, ծան. 12. Н. Марр, Из поездки на Афон, ЖМНПр. 1899, март, с. 19-20. օ. ձծյղձձծ, յարտյլլո ճձ եօձեյրօ ճոօ. յրօտ., թթ. 0153-0156. Պարոյր Մուրադեան, Սուրբ Շուշանիկի վկայարանութիւնը. էջ 108-113:

³ Մովսէս Խորենացու Հայկական պատմութիւն, աշխարհաբար թարգմանեց եւ լուսարանեց Խորէն Ծ. Վ. Ստեփանէ, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 303-304, ծան. էջ 253-254. Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, թարգմանութիւն, ներածութիւն եւ ծանօթագրութիւններ ակադ. Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1961, էջ 319, 402:

⁴ История Армении Моисея Хоренского, нов. пер. Н. О. Эмина, М., 1893, с. 186, 276:

⁵ Перевод Г. Х. Саркисяна, Ереван, 1990, с. 188, 261 (ծան. 677):

⁶ Movses Khorenats'i, History of the Armenians. Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson (Cambridge, 1978), p. 313.

⁷ Moïse de Khorène, Histoire d'Arménie, texte arménien et traduction française par P. E. Le Vaillant de Florival, tome second (Venise, 1841), p. 423.

ների մեծ միաբանութիւնների կանոնքի համաձայն»): Բնագրի նման ընկալում ունի նաեւ Փրանսերէն վերջին նորացուած հրատարակութիւնը. «à la façon des Spoudaioi des grands monastères»¹ (այսինքն՝ «ըստ նմանութեան մեծ վանքերի սպուդէների»):

Յիրաւի, հակառակ թարգմանիչների մեծ մասի միաձայնութեան, «ըստ մայրաքաղաքացն սպուդէից» կապակցութեան «մայրաքաղաքը» յունարէն (μητρόπολις)-ի «մայրավանք» իմաստի պատճենումն է, որ վկայուած է այլ աղբիւրներով եւս: Ահաւասիկ մէկ օրինակ կանոնք սրբոյն Սահակայ Հայրապետի բնագրից. «Գ. Եւ պաշտաւն սաղմոսերգութեանն անխափան լիցի ի տուրնջեան եւ ի գիշերի, ըստ աւրինակի մայրաքաղաքացի հաւրն հովուապետի. դի ամենայն ումեք չէ աւրէն եւ իշխանութիւն յապաղել զայն կարգ պաշտաման, կամ նորաձեւութիւնս ինչ առնել, այլ միշտ ի նմին յարամնալ»²: Այստեղ էլ խօսքը ճիշտ եւ ճիշտ խորենացու յիշատակած սպուդէների (ակմիթների՝ աննինջների) միաբանութեան՝ վանք-մայրաքաղաքի հովուապետ հօր մասին է: Թարգմանիչներից Ռոբերտ Թոմսոնը յիշեցնում է, թէ սպուդէները նոյն «ակմետներն» են, որոնց կարգին է դասւում, ըստ Կորիւնի, նրա ուսուցիչ եւ հայերէն այբուբենի ստեղծող Մաշտոցը («ուստի եւ հրաման ելանէր՝ վայելուչ մեծարանօք զՍուրբն՝ Ակումիտ անուն կոչելոյ»)³: Սակայն, հանգուցեալ բանասէր Հայկ Պէրպէրեանի գնահատութեամբ, Մաշտոցին «ակումիտ» տիտղոս շնորհելը «կատարեալ անհեթեթութիւն է»⁴, ուստի հայագէտները տարբեր սրբագրութիւններ են առաջարկել՝ «յարքունիս կոչելոյ» (Թորոսեան), «յար-

¹ Moïse de Khorène, Histoire de l'Arménie. Nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé (d'après Victor Langlois) avec une introduction et des notes (Paris, 1993), pp. 294, 405.

² Կանոնագիրք Հայոց, հատոր Ա, աշխատասիրութեամբ Վազգէն Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 369. К. А. Мслянк - Оганджанян, Еще раз о национальности Мх. Гоша..., տե՛ս՝ «К освещению проблем истории и культуры Кавказской Албании...», Ереван 1991, էջ 191: «Մայրաքաղաք» եզրի այս իմաստը կայ նաեւ ԺԳ. դարի մատենագիր Ստեփանոս Օրբէլեանի հեղինակած Պատմութեան մէջ, ըստ որի Շաղատը է «մայր եկեղեցեաց եւ մայրաքաղաք ամենայն աշխարհին Սիւնեաց» տես՝ Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 48:

³ Կորիւն, Վարք Մաշտոցի, բնագիրը..., ծանօթութիւններով ի ձեռն պրոֆ. դ-ը Մանուկ Աբեղեանի, Երեւան, 1941, էջ 64-65:

⁴ Հայկ Պէրպէրեան, «Հայկականք». Ակումիտ անուն կոչելոյ, Հանդէս ամսօրեայ, 1968, թիւ 4-6, սիւնակ 172-173:

քունիս ուղարկելոյ» (Ակինեան)¹ :

Անկախ Կորինի բնագրի սրբագրելի լինելուց կամ ոչ, կարծում ենք Խորենացու Պատմութիւն Հայոց Մեծացի «ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուղէից» համեմատութիւնը հեղինակային բնագրում չի եղել, այլ ընդմիջարկուել է է-Ը դարերից յետոյ: Վերելում ասացինք, թէ Պատմութեան այդ հատուածը նոյնութեամբ աւանդուած է սուրբ Շուշանիկի Վկայաբանութեան համառօտ խմբագրութեան մէջ, սակայն առանց միջանկեալ նախադասութեան: Բարեբախտաբար, վկայաբանութեան այդ խմբագրութեան հին վրացերէն թարգմանութեան գոյութեան շնորհիւ մենք հնարաւորութիւն ունենք ժամանակագրելու յիշեալ ընդմիջարկումը: Վրացերէն թարգմանութիւնը, ենթադրաբար, կատարուած պիտի լինի 726-ի Մանազկերտի ժողովից յետոյ, ուրեմն Խորենացուց քաղում կատարող հայերէն բնագիրը կազմուել ու շրջանառուել է մինչ այդ, նիկողայոս Մառի թուագրմամբ՝ «է դարի վերջից կամ Ը դարի սկզբից ոչ ուշ»² :

Այսպիսով, մեր ձեռքի տակ կայ ստուգելի բնագրական փաստ, որով փստահաբար կարող ենք ասել, թէ սուրբ Շուշանիկի Վկայաբանութիւնը համառօտողի ասլրած տարիներից առաջ՝ Զ կամ է դարերում Խորենացու Պատմութիւնը գոյութիւն ունէր, եւ վարքագիրը նրանից քաղումներ էր անում:

Ի դէպ, Խորենացու հեղինակային բնագրում, ինչպէս երեւում է, չի եղել նաեւ մեզ հետաքրքրող նախադասութեան շարունակութեան մէջ աւանդուած «երկաթապատք» բնութագրումը, որը նոյնպէս անյարիր է եւ չկայ Վկայաբանութեան բնագրում ու վրացերէն թարգմանութեան մէջ:

Բ. «ՎԿԱՅՈՒԹԻԻՆ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՀԱՅՈՑ ԱՐԻՍՏԱԿԻՍԻ, ՎՐԹԱՆԻՍԻ, ՅՈՒՍԿԱՆ, ԳՐԻԳՈՐԻՍԻ, ԴԱՆԻԷԼԻ»

Խորենացու Պատմութիւնից քաղուած մի քանի ծաւարուն հատուածներ ենք գտնում «Վկայութիւն սուրբ հայրապետացն Հայոց Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկան, Գրիգորիսի, Դանիէլի» վաղմիջ նադարեան վկայաբանական երկում, մասնաւորապէս Պատմահօր Բ գրքի զա., Գ գրքի բ, գ, ժա, ժգ, եւ ժդ գլուխներից:

¹ Նոյն, սիւնակ 173-176. Հ. Յ. Թորոսեան, «Քանի մը խնդրական կէտեր Կորեան գրքին մէջ», Բագմավէպ, 1931, թիւ 11, էջ 473. Հ. Ներսէս Վ. Ակինեան, Կորին, Վարք Ս. Մաշտոցի, Վիեննա, 1952, էջ 38 (= ԺԴ, 114-15), 97:

² H. Mapp, նշւ. աշխ., էջ 19-20: Հմմտ. ճծյլճճճ, նշւ. աշխ., էջ 0155-0156. Պ. Մուրադեան, Սուրբ Շուշանիկի վկայաբանութիւնը, էջ 114-115:

Գրիգոր Լուսավորչի որդու, Արիստակէս Հայրապետի սպանութիւնն ու նրան փոխարինած Վրթանէսին վերակացու նշանակելը եւ Տրդատ Արքայի փութաջանութիւնը ներկայացնելուց յետոյ, Խորենացին շարունակում է «Վասն որոյ եկեալ գործակալք կողմանցն արեւելից [...] հիւսիսոյ, վերակացուք հեռաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան՝ ասեն ցարքայ. «Եթէ կամիցիս ուղղութեամբ վարել կողմանցն այնոցիկ ըստ այսմ հաւատոյ՝ առաքեա նոցա եպիսկոպոս ի զաւակէ սրբոյն Գրիգորի, զի յոյժ փափագելով խնդրեն, եւ գիտեմք հաւատի, թէ ի հռչակեալ անուանէն Գրիգորի՝ ակնածեսցեն եւ ի նորին զաւակէ, առնել զամենայն ըստ հրամանի»։ Այսմ հաւանեալ երանելին Տրդատ՝ տայ նոցա եպիսկոպոս զմանուկն Գրիգորիս, զերէց որդին Վրթանիս։ Թէպէտ եւ յանլիութիւն աւուրցն հայելով՝ պարականոն զիրն վարկանէր, այլ տեսեալ զհոգոյն մեծանձնութիւն...»¹ (ընդգծումները մերն են-Պ. Մ.):

Վկայաբանութեան հայերէն բնագիրն ու մանաւանդ նրա Աթոսեան զրչագրով աւանդուած Ը-Թ դարերի հին վրացերէն թարգմանութիւնը² հնարաւորութիւն են տալիս այս հատուածում մի քանի սրբագրութիւն առաջարկել.

ա) «Կողմանցն արեւելից հիւսիսոյ» արտայայտութիւնը ընկալւում է իբրեւ Փայտակարանի գտնուած տեղի սահմանում, մինչդեռ նրան վերաբերում է «վերակացուք հեռաւոր քաղաքին» բնորոշումը։ Ուստի նախորդ արտայայտութիւնը պիտի սրբագրել «կողմանցն արեւելից [եւ] հիւսիսոյ», ինչպէս եղել է վրացերէնի համար հիմք ծառայած հայերէն բնագրում։

բ) «Առաքեա՛ նոցա եպիսկոպոս ի զաւակէ սրբոյն Գրիգորի» նախադասութեան «ի զաւակէ»ն բացորոշ աղաւաղում է, որովհետեւ բացառական հոլովի ցուցիչը վկայում է, թէ Գրիգորի զաւակներից մէկին ուղարկելու մասին է խօսքը, ուստի պիտի ունենայինք «ի զաւակաց», ինչպէս եւ կայ վրացերէնում։

գ) Եթէ հետեւելու լինենք Վկայաբանութեան վրացերէն տարբերակի բնագիր հայերէնին, Խորենացու տեքստում առկայ «առնել զամենայն ըստ հրամանի» բացատրութիւնը պիտի դիտուի իբրեւ ընդմիջարկութիւն։

դ) Առաւել կարեւոր է Խորենացու բնագրի ընդօրինակութիւնների ժամանակ տեղի ունեցած հետեւեալ փոփոխութիւնը, մեզ հասած

¹ Խորենացի (1913), էջ 259։

² Հայերէն բնագրի եւ հին վրացերէն թարգմանութեան գիտական հրատարակութիւնը տե՛ս Օ. Նժդեան, նշւ. աշխ., էջ 62-68։

«պարականոն զիրն վարկանէր» արտայայտութիւնը, ինչպէս արդէն ասել ենք, հետեւանք է «պատանւոյն» բառի «պարականոն» ընթերցման, որին իբրեւ բացատրութիւն պիտի աւելացուէր «զիրն վարկանէր» (փաստը անկանոն էր համարում): Սրբագրութիւնը հաստատում է ՏԽ՝ ձեռագրական ու տպագրական խմբերի ընթերցումներով եւ Վկայաբանութեան վաղմիջնադարեան վրացերէն թարգմանութեամբ՝ «թէպէտ պատանին տարիքով (օրերով) լի չէր»: Հետեւաբար՝ սրբագրելի են առկայ բոլոր թարգմանութիւնները:

Խորենացու Գ գրքի բ գլուխը խմբագրելիս, Մայխասեանցը կասկածել է բնագրի նախնականութեանը եւ տողատակին առաջարկել ենթադրելի ընթերցումը «12Տa ինքեամբ / Խ չիք ինքեան: Նախնական ձեւն երեւի եղել է «կամ առ նովին ինքեամբ Քրիստոսիւ...» Ստ. Մ.»¹:

Քննարկուող Վկայաբանութեան հայերէն բնագիրը նոյնութեամբ ընդօրինակում է Խորենացու ընդմիջարկուած-խաթարուած տեքստը, մինչդեռ հին վրացերէն թարգմանութեան հիմք ծառայած հայերէն օրինակում «այնուիկ ի հնումն կամ առ նովիմբ ինքեամբ Քրիստոսիւ Աստուած մերով զարկուցեալ Հրեայքն» հատուածն ամբողջութեամբ բացակայել է, ուստի շարադրանքն աւելի յստակ է եւ անխաթար: Դժուարանում ենք ասելու՝ թարգմանիչի ձեռքի տակ Վկայաբանութեան ա՞յլ տարբերակ է եղել, թէ՞ նա ինքն է կռահել խաթարումը եւ կրճատել ընդմիջարկումը: Բոլոր պարագաներում՝ այժմ Խորենացու Պատմութեան այդ հատուածը սրբագրելու համար բնագրական հիմք ունենք:

Սրբագրելիք տեղիներ է յուշում Վկայաբանութեան յաջորդ պարբերութիւնը եւս: Հանդիպադրենք այդ հատուածները.

Խորենացի

Իսկ յետ լնլոյ հնգետասան ամաց եպիսկոպոսութեան Մեծին Վրթանայ՝ փոխի յաշխարհէս յերրորդ ամի Տիրանայ: Եւ ի հրամանէ նորին տարեալ հանգուցանեն ի գեօղն Թորդան, իբրու մարգարէական ակամբ հայեցեալ՝ որ զկնի բազում ժամանակաց եւ հօրն ի նոյն տեղւոջ հանգուցան նշխարք: Եւ յաջորդէ զաթոռն Յուսիկ որդի նորին ի չորրորդ ամին Տիրանայ, յոյժ հետեւող եղեալ հարցն առաքինութեան²:

Վկայաբանութիւն

Իսկ յետ լնլոյ հնգետասան ամի եպիսկոպոսութեան Մեծին

¹ Խորենացի (1913) էջ 258:

² Նոյն, էջ 269:

Վրթանիսի փոխի յաշխարհէս յերորդ ամի Տիրանայ: Եւ ի հրամանէ նորին տարեայ հանգուցին ի գեաւղն թորդան: Եւ յաջորդէ զաթոռն Յուսիկ որդի նորին ի չորրորդ ամին Տիրանայ, յոյժ հետեւող եղեալ հարցն առաքինութեան¹:

Կարծում ենք, ընդգծուած դրուագը կրճատուելու ենթակայ չափ-տի լինէր՝ եթէ այն կար Խորենացու հեղինակային բնագրում: Ինչպէս երեւում է, Ե դարի պատմիչ Ազաթանգեղոսի երկի նման, Խորենացու գործը եւս յետադայում ոճական-գեղարուեստական որոշ վերամշակում է ապրել:

Վկայաբանութեան վրացերէն թարգմանութեան լրացուցիչ տարբերութիւնը «հնգետասանի» փոխարէն «յեօթտասան» (հետեւանք՝ Ե-է շփոթի) եւ «եպիսկոպոսութեան» դիմաց «քահանաապետութիւն» ունենայն է²:

Ընդմիջարկութեամբ պիտի բացատրել Խորենացու Գ, ժգ գլխի սկզբի «ամբարիշտն Յուլիանոս» արտայայտութեան մեկնաբանու-թիւնը՝ «ուրացաւ նա զԱստուած եւ սլաշտեաց զկուռս», որ չկայ Վկայաբանութեան քաղած դրուագում: Անհասկանալի է նաեւ «յա-րոյց հալածանս եւ խռովութիւն ի վերայ եկեղեցոյ» արտայայտու-թեան «եւ խռովութիւն» լրացումը:

Վկայաբանութեան շարունակութիւնը նոյնութեամբ կրկնում է Խորենացու «Վկայութիւն Սրբոյ Յուսիկանն եւ Դանիէլի» գլուխը (Գ, ժգ)³: Ունեցած տարրնթերցումներից համեմատաբար կարեւորը նահա-տակուող Դանիէլ Ծերունի քահանային Սուրբ Գրիգորի «եւ հիւպե-րետ» (ὕπηρετης, այսինքն՝ «ծառայ», «սպասաւոր», «փոքրաւոր») լինելու յիշատակութեան բացակայութիւնն է, որ չկայ նաեւ Խորենա-ցու բնագրի 1699-ին ընդօրինակուած օ ձեռագրում⁴: Եթէ նախնա-կանը Վկայաբանութեան տարբերակն է, ապա յիշեալ փոխառեալ բառի հնագոյն խորենացիական վկայութիւնը պիտի նկատել անգոյ:

Այսպիսով, մինչեւ Է-Ը դարերը Ազաթանգեղոսի⁵ եւ Խորենացու հեղինակած պատմութիւններից քաղածոյ դրուագների յարասումով կազմուած Վկայաբանութիւն սուրբ Հայրապետացն Հայոց Արիստա-

¹ օ. ճժՊՁՊՃժ ԾՅ 67:

² Նոյն:

³ Խորենացի (1913) էջ 272:

⁴ Նոյն:

⁵ Պարոյր Մուրադեան, Ազաթանգեղոսի Հին Վրացերէն Խմբագրութիւնները, 1982, էջ 112-123:

կիսի, Վրթանիսի, Յուսկան, Գրիգորիսի, Դանիէլի կարճառօտ երկը եւ նրա վրացերէն թարգմանութիւնը բնագրական հիմքեր են տալիս քննարկելու այժմ պատմիչների երկերի առանձին դրուագների նախնականութեան խնդիրը եւ իրական ընթերցումներ առջարկում նրանց սրբագրութեան համար:

Մենք այստեղ արժարձեցինք միայն երկու վկայաբանութեան ընձեռած ընթերցումները, մինչդեռ կան եւ ուրիշները, որոնց խորենացիագիտութիւնը դեռեւս չի դիմել Պատմահօր աշխատութիւնը յետագայ ընդմիջարկութիւններից ու վերամշակում-փոփոխութիւններից քայլ առ քայլ ազատելու համար:

Այս մարդում խորենացիագիտութեան դանդաղումը ամենեւին արդարացում չունի, որովհետեւ Խորենացու երկից ժ դարի պատմիչ Յովհաննէս Կաթողիկոս Դրասխանակերտցու Պատմութեան մէջ պահպանուած վկայակոչական հատուածների համեմատութիւնը Պատմահօր ձեռագրական երկու խմբերի (Ա եւ Տ) ընթերցումներին, հիմք են տուել Մ. Աբեղեանին եղրակացնելու, թէ՛ «Յովհաննէս Կաթողիկոսի ձեռին եղած օրինակը իր մէջ ունի թէ՛ Ա եւ Տ խմբերի ընթերցուածներ եւ թէ նոյն օրինակը «ոչ Ա խմբին է պատկանում եւ ոչ Տ խմբին այլ դա հաւասարադաս է Ա եւ Տ խմբերի ընդհանուր մայր օրինակին»¹: Գրեթէ նոյն արդիւնքն է արձանագրել եւ Ն. Ակինեանը՝ Խորենացու ընթերցումները համեմատելով է դարի մատենագիր Անանիա Շիրակացուն վերագրուած ժամանակագրութեան² հեղինակ Անանունի մօտ եղած քաղումներին, ապա եւ Թ-Ժ դարերով թուագրուող կրկնագիր բնագրի մէկ էջը վերծանել-հրապարակելիս³: Մեր քննարկած վարքագրական բնագրերը ժամանակագրորէն նախորդում են ե՛ւ Դրասխանակերտցուն, ե՛ւ կրկնագիր պատառիկին, նրանք կարող են ժամանակակից համարուել Անանուն ժամանակագրին, ուստի նրանց ընձեռած բնագրական սրբագրութիւնները վերաբերում են Ակինեանի կողմից այսպէս անուանուած «ընդհանուր մայր օրինակին» եւ նիւթ են տալիս նրա մատնանշած «քննադատական բոլոր պահանջմանց համաձայն» բնագիրը վերակազմելու համար:

¹ Խորենացի (1913) էջ Խ-ԽԱ:

² «Անանուն ժամանակագրութիւն»..., Վենետիկ, 1904: Հմմտ. Պրոֆ. դ-ը Ա. Գ. Աբրահամեան, Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը, Երեւան, 1944, էջ 357-399:

³ Հ. Ն. Ակինեան, նշլ. աշխ., սիւնակ 690-692:

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ ՕՐԻՆԱԿԸ

Մովսէս Խորենացու աշխատութեան 1913-ի հրատարակութեան «Առաջարան»-ում երկի ձեռագրերն ու տպագրերը ներկայացնելիս, աշխատասիրողներ Մանուկ Աբեղեանն ու Սէթ Յարութիւնեանը տեղեկացնում են, թէ «մեր այս հրատարակութեան համար ի նկատի ենք ունեցել նաեւ ուրիշ երկու ձեռագրի ընթերցուածները, որ հրատարակուած են Թիֆլիսում 1858 թուին «Բաղդատութիւն Պատմութեան Մովսէսի Խորենացոյ տպագրելոյն ի Վենետիկ ընդ երկուց ձեռագրաց երկասիրութիւն Յակովբայ վարժապետի Կարենեանց»։ Այս բաղդատութիւնը եղել է Վենետիկի 1843 թ. տպագրի հետ, ուրեմն սովորական (Վ) օրինակի հետ»¹ :

Շարունակութեան մէջ ասուում է, որ յիշեալ երկու ձեռագրերից մէկը պատկանել է բանասէր Աբգար Յովհաննիսեանին եւ Ստեփան Կանայեանի ձեռքով ուղարկուել է Էջմիածնի գրադարան։ Պատմութեան աշխատասիրողները փաստօրէն հասցրել են քաղել նրա ընթերցումները, համեմատել Յակոբ Կարենեանցի հրատարակման հետ եւ Կ¹ նշումով արտացոլել իրենց հրատարակութեան ծանօթագրութիւններում։ Այն պատկանել է Պատմութեան ձեռագրերի Խ (խառնուրդ) խմբին, գրուած է Ռ.ՂԳ. (1624) թուին «յոյժ դառնագոյն աշխատութեամբ եւ փոփոխմամբ անհմուտ գրչաց եւ անհանգիստ տատանմամբ ի գաւառէ ի գաւառ հալածելով ի ձեռաց մահմետականաց»² : Ձեռագիրը (Կ¹) բովանդակութեամբ «Պատմագիրք» է եւ այժմ կրում է Մաշտոցի անուան Մատենադարանի 2748 թուահամարը։

Կարենեանցի նկարագրած ու համեմատած երկրորդ ձեռագրի (Կ²) ընթերցումները Աբեղեանն ու Յարութիւնեանը քաղել են յիշեալ նկարագրութիւնից, ի մասնաւորի նշելով, թէ «այդ ձեռագիրներից երկրորդը յայտնի չէ թէ այժմ որտեղ է», սակայն լրացուցիչ տեղեկացնում են որ «Այս ձեռագիրը, Կարենեանցի ասելով, պատկանել է Թիֆլիսի

¹ Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1913, էջ 5:

² Նոյն, էջ ԻԲ: Հմմտ. «Հայերէն ձեռագրերի ժէ դարի յիշատակարաններ (1621-1640 թթ.)», հատ. Բ., կազմեցին Վազգէն Յակոբեան, Աշոտ Յովհաննիսեան, Երեւան, 1978, էջ 139:

Ս. Կարապետ եկեղեցու Տէր Յակոբեան Խաչատուր ծերունի աւագ քահանային, որի պապերն են յիշատակ տուած եղել Թովմայ առաքեալի վանքին, բայց Նազիր շահի գալու ժամանակ հետները բերել են Թիֆլիս: Յետագայում սոյն ձեռագիրն անցել է Գիւտ քահանայ Աղանեանցին, որ տուել է Թիֆլիսեցի Միքայէլ Թամամշեանին, եւ վերջինիս մահից յետոյ, Տ. Գիւտի ասելով, մնացել է նրա ժառանգների մօտ»¹:

Կարենեանցի հրատարակած նկարագրութիւնն ու ընթերցումների ընտրութիւնը, սակայն, մասամբ են միայն փոխարինում Ψ^2 ձեռագրին, որովհետեւ իր իսկ զնահատութեամբ՝ «Ներկայ տետրակիս մէջ դուրս բերինք միայն այն զանազանութիւնքը, որոնք շատ ու քիչ բանի մտքին փոփոխութիւն կը տան, տեղ-տեղ եւս այն բաները եւ բառերը, որոնք քերականութեան ճիշտ կանոնները պահպանելուն ապացոյց կարեն լինիլ իսկ եթէ երկրորդ օրինակի միջի բոլոր անզգալի զանազանութիւնքը, կէտադրութիւնքը, ուղղագրութիւնքը, մակբայից բայերի մօտ յարմար դասաւորութիւնքը եւ այլ այսպիսիքը դնելու լինէինք»²:

Այնուամենայնիւ, հրատարակուած ընթերցումների հիմամբ պարզուած է, որ Ψ^2 ձեռագիրը պատկանել է Ա. ձեռագրախմբին, որի տակ պիտի հասկանալ «Ամստերդամի անդրանիկ տպագրին պատկանող օրինակներ»³ (խմա՝ $abcdef Lt\Psi^2 +$ վենետիկի երկու ձեռագիր): Պատմութեան երեւանեան 1991 թ-ի նմանահանութեամբ կատարուած հրատարակութեանը կցուած Ա. Սարգսեանի պատրաստած «Լրացման» մէջ (նոր համեմատած ձեռագրեր) Ա խմբի զրհագրերի թիւն աւելացել է եւս երեքով (EFL):

Այսպիսով, Ա խումբն այժմ ներկայանում է 14 ընդօրինակութեամբ եւ բաժանւում երկու ենթախմբի ($abc\psi + EFL\Psi^2 det$): Սակայն ձեռագրական նոր միաւորների աւելացումն ու վիեննայի 10 թերթանոց կրկնագրի ու Մաշտոցի անուան Մատենադարանի 8 պատառիկներ

¹ Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն, էջ Ը:

² «Բաղդատութիւն Պատմութեան Մովսիսի Խորենացոյ՝ տպագրելոյն ի վենետիկ ընդ երկուց ձեռագրաց», երկասիրութիւն Յակովբայ վարժապետի Կարենեանց, ի Տիֆլիս, 1858, էջ 7:

³ Ձեռագրական խմբերի առանձնայատկութեան նկարագրութիւնը տե՛ս Պատմութեան 1913-ի հրատարակութեան Առաջաբանի Ը-ԺԲ էջերում: Աշխատասիրողների բացատրութեամբ՝ «Ա խմբի մէջ պէտք է հասկանալ ուրեմն Ամստերդամի անդրանիկ տպագրին պատկանող օրինակներ, Տ խմբի մէջ մտնում են այն օրինակները, որոնք պատկանում են վենետիկի սովորական դարձած տպագրին» (էջ Թ): «Ա եւ Տ խմբերի խառնուրդ են կազմում մի շարք ձեռագիրներ, որ նշանակել ենք Խ տառով» (էջ Ժ):

րի ամբողջական կամ մասնակի վերծանութեան իրողութիւնը թելադրում է եթէ ոչ բոլոր ԱԽՏ խմբերի, ասլա գոնէ նրանց ենթախմբերի բաժանման առաւել ճշգրտուած չափանիշներ կիրառել, որով կը սահմանուեն նաեւ «երկրորդական խմբակցութիւններ» որակում ստացած ձեռագրերի տեղն ու դերը, ուստի ձեռագրերի յարաբերակցութեան Աբեղեանի կազմած աղիւսակները կարող են որոշակի սրբագրութեան ենթարկուել¹ :

Եւ այնուամենայնիւ, կարծում ենք՝ Մ. Աբեղեանը իրաւացի պիտի լինի Ա խմբի մայր օրինակից (X) սերող երեք ընդօրինակութիւնների (X_1X_2 (Լամբր. օր.) $_{\text{ա}}$) մերձաւրութիւնը սահմանելիս, ինչպէս նաեւ Լամբրոնացու (X_2)² չափանիշով գրչագրից ընդօրինակուած ձեռագրական ենթախումբ [$\Psi^2 ed$ եւ $t(v\ell)$] առանձնացնելիս³ : Ցաւօք, այս ձեռագրերից ոչ մէկը ժէ դարից առաջ չէ գրուած (Ψ -1671, e-1675, d-1676, իսկ t -ն որ Ամստերդամի 1695ի տպագրի հիմք ձեռագիրն է՝ նոտրգրով է եղել⁴), բայց նրանց ծագումը անմիջապէս կամ միջնորդաւորուած կերպով Լամբրոնացու ժԲ դարի մայր օրինակից (անկախ միմեանց հանդէպ ունեցած յարաբերութիւնից) նշանակալի չափով դիւրացնում է Խորենացու Պատմութեան բնագրաքննութիւնը եւ հետազոտողին ուղեկցում դէպի Պատմահօր սկզբնագիր :

«Պատմութեան» 1695ի հրատարակութեան նախաձեռնող ու խմբագիր Թովմայ եպս. Նուրիջանեանը իր ձեռքն անցած գրչագրի մասին միայն այսքանն է ասում, թէ «Բայց սակայն աղաչեմ մեծաւ թախանձանօք զդասս եղբարցդ սրբազանից ի պատահիլն ձեր սմին ընթեռնելով եւ տեսանելով, եթէ գտանիցի ի սմա սխալումն ինչ, ներել մաղթեմ, զի ոչ հաւանութեամբ մերով եղան այնոքիկ, այլ յօրինակէն լեալ ընկալլիք, զի զմի միայն ունէաք օրինակ, եւ այն նոտր գրով եւս, վասն որոյ կարեկցութեան սիրով հայցեմ ներել մեզ»⁵ : Եթէ զանց առնենք այդ փոփոխութիւնների վերականգնումը 1913ի հրատարա-

¹ Նոյն, էջ ԼԵ-ԼԹ : Ասում ենք «Մ. Աբեղեանի կազմած աղիւսակները», որովհետեւ «Առաջաբանը» Յարութիւնեանի հետ միասին ստորագրելով իսկ՝ յաճախ խօսում է եզակի թուով :

² X-երի համարակալումը տողերիս հեղինակին է պատկանում :

³ Լա ցուցիչի տակ պիտի հասկանալ Խ (խառնուրդ) խմբի մայր օրինակի (ԺԳ-ԺԴ դդ.) առաջին (հին) մասը (նրա նկարագրութիւն տե՛ս՝ «Առաջաբանի» 29րդ պարբերութեան տակ, էջ ԺԹ-ՀԱ) :

⁴ Տե՛ս Ն. Ա. Ոսկանեան, Ք, Ա. Կորկոտեան, Ա. Մ. Սաւալեան, Հայ Գիրքը 1512-1800 թուականներին, Երեւան, 1988, էջ 117 :

⁵ Անդ : Տպագրիչների եւ տպագրութեան պարագաների մասին տե՛ս՝ Դր. Մեսրոպ ծ.-վ. Գ. Գրիգորեան, Նոր նիւթեր եւ դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցոց մասին, Վիեննա, 1969 : Խորինապատն են վերաբերում գրքի 24-27 էջերը :

կութեան մէջ, ապա, դատելով նրա տողատակի ընթերցումների կազմում *ւ-ի* (իմա՝ ամստերդամեան հրատարակութեան) հազուադէպ ներկայութեամբ՝ կարող ենք ասել, թէ Աբեղեանի եւ Յարութիւնեանի հրատարակութեան հիմք է ծառայել Ամստերդամի 1695-ի բնագիրը, որի հետ համեմատութեան են առնուել միւս բոլոր ընդօրինակութիւնները:

Կարենեանցի նկարագրած երկրորդ ($Կ^2$) ձեռագիրը *ւ-ի* հետ Լամբրոնացու գաղափար օրինակը հիմք ունենալով հանդերձ, ընթերցումներով նշանակալի չափով հեռանում է նրանից, հետեւաբար Խորենացու «Պատմութեան» դիտական-քննական հրատարակութեան համար նրա ընձեռած ընթերցումները պահպանում են իրենց կարեւորութիւնը: Բարեբախտաբար, այդ ձեռագիրը եւս ի վերջոյ հանգրուանել է Մատենադարան, ուր եւ գրանցուած է 10000 համարակալումով¹: Տողերիս հեղինակը արդէն առիթ ունեցել է ափոսանքով արձանագրելու, որ այդ ընդօրինակութիւնը դուրս է մնացել «Պատմութեան» 1991-ի «Լրացումից»²:

Թէեւ ձեռագրի նկարագրութիւնը տրուած է Կարենեանցի «Բաղդատութեան» մէջ եւ Մատենադարանի «Ցուցակում», այնուամենայնիւ այստեղ երկրորդենք որոշ իրողութիւններ. «Պատմութեան» խորագիրը աւանդական է՝ «Հայոց պատմութիւն յերիս հատածս, ասացեալ Մովսէսի Խորենացոյ ի խնդրոյ Սահակայ Բագրատունոյ» (էջ 2r):

Բնագիրն սկսւում էջ 4r-ով, որ խորան ունենալու պատճառով մագաղաթեայ է (մագաղաթի շարունակութիւն կազմում է 7r^v թերթը): Հանդիսաւոր բոլոգիր, բաւականաչափ մանրագիր եւ իջադաշտում լայն լուսանցներ պահող գրչագիր է: Գլուխների խորագրերը կարմրադեղով են: Տպագիր յիշեցնող յստակ գրչութիւն է, խորագրերի դիմաց լուսանցազարդեր են, որոնց մէջ ներգրուած են «Պատմութեան» գլխահամարները: Բնագիրն ու յիշատակարան-յիշատակագրութիւններն աւարտւում են 214^v էջով, որին յաջորդում է երեք չգրուած էջ: Այս ու այնտեղ կան ուշ շրջանի անվարժ յիշատակագրութիւններ, մագաղաթանքներ:

Մագաղաթեայ երկաթագիր երկթերթ պահպանակին (հատակոտոր Աւետարանից) յաջորդում է ուշ շրջանի գրչափորձերով, յիշատակագրութիւններով ու Սիմէոն Աստրախանցու (ԺԹ դար) երկու քառա-

¹ Կարճառօտ նկարագրութիւնը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատ. Բ., Երեւան, 1979, էջ 1027:

² Պարոյր Մուրադեան, «Բնագրական դիտարկումներ...», էջ 78-79:

տողով ներկայացող մէկ թերթ(1rv): Ստացողի 1802ի յիշատակագրութիւն կայ 3v էջում (գլխացանկի աւարտից յետեոյ): Այդպիսիք կան եւ այլ էջերում, մասնաւորապէս «Յամի տեառն 1838, յունուար 30 օրն Տփլիս քաղաքումն լիտր երեք արասի մէկ մէկ շահի բանբակ ծախուցաւ, որ է շատ էժան» (144r): «Ի 1843 ամի սեպտեմբերի 23-ին Տփլիս քաղաքումն կարկուտ էկաւ մէկն մէկ լաւ մեծ գազալի չափ» (144r):

Խորենացու «Պատմութեանը» յաջորդում է նոյն գրչագրութեան երեք քառատող բանաստեղծութիւն (էջ 213r), որի առաջին երեկու քառատողերը նոյնութեամբ եղել են Թովմայ Վանանդացու տպագրութեան գրչագրում: Այս փաստը ենթադրել է տալիս, թէ այդ երկու տունը գալիս է Կ² եւ t- գաղափար օրինակից, որ կարող էր Լամբրոնացու ժամանակներից լինել: Թիւ 10000 ձեռագրի ստացող Մովսէսը եղածի վրայ աւելացրել է նոյնայանգ մէկ քառատող, արձանագրելով իր ստացող լինելը¹: Ստորեւ բերում ենք չափածոյ եւ արձակ յիշատակարանները (նրանք առկայ են նաեւ Կարենեանցի «Բաղդատութեան» ներածականում):

«Երրեակ հատածք սոյն մատենի վիպագրութեան
է Մովսէսի Խորենացույ գերայրական,
Յորս եւ պատմէ զգործոց քաջաց մեր նախնական՝
Առ ի նոյն սերունդ զարմից Աբեթական:

Որք տերութեամբ բընակին Հայկայ զաշխարհս կալան
Մինչեւ զԱրշակ արքայ հզօր Պարթեւական,
Որդի ըղհայր փոխանակեալ հետեւական՝
Բարեբախտեալ թողին զանուն յաղթողական:

Սոյն մատենի եղէ ստացող ըստ փափազման
Պիտակ անուն Մովսէս ի դասս ուսուցչական՝
Առ ի դբօսանս մտաց իմոց զուարճական
Եւ յետ մեր որք զայս վայելեն ունակական»:

Ստացողի բուն յիշատակարանը բաւականաչափ հանգամանալի է եւ կարելոր տեղեկութիւններ բովանդակող. «Յամի հազարերորդի հարիւրերորդի եւ քսաներորդի թուականութեան Հայկայինս տոհմի ես

¹ Արդ եւս լրացուցիչ տպացոյց է, որ Ամստերդամի տպագրի ձեռագրական հիմքը մեզ գրադեցնող թիւ 10000 գրչագրից չի ընդօրինակուած, ինչպէս կարծել են 1913-ի հրատարակութեան աշխատանքները (էջ է):

երկրորդս ի պարս քարոզչաց, ստացայ զգիրս Պատմութեանց Մովսէսի Խորենացւոյ՝ մեծի Քերթողաձօր հռչակելոյ, որ է յայտարարութիւն նախնեաց մերոց պսակաւորաց եւ պայադատասերունդ իշխանաց յաւէտ իմն ճոխ եւ հարուստ ոճով եւ ճշմարտագիւտ զրուցաբանութեամբ եւ ամէնիմաստ յեղանակաւ: Բայց օրինակ եւ նախագաղափար, յորմէ ածանցեցաւ սոյն այս մատեան, գտաւ հնագոյն գծագրութեամբ եղեալ յաղագս Ներսէսի Լամբրոնացւոյ արքեպիսկոպոսի սրբոյ Տարսոնի քաղաքի, զոր եւ ընտրեալ մեր օրինակել տուաք ուրումն գրչի եւ սրբագրեցաք ըստ կարի մերում սակս առ ուրեք-ուրեք տարածանելոյ:

Արդ, ոյք գաղափար զայս մատեան առնուք եւ որք ընթեռնուք եւ շահիք իմիք, յիշեսցիք զմեզ բարեգոյն մտօք առ Աստուած թողութիւն շնորհել բազում յանցանաց մերոց յաւուրն աներեկի՝ հանդերձ ծնողօք եւ համօրէն ի սմա աշխատաւորօք, զի եւ ձեզ նոյն պարգեւեսցի յերանականն զաւառի: Ամէն, Եղիցի:

Ընդ որս եւ զիս Յովհաննէս սպասաւոր վեհիս մեծի, սակաւ աշխատող եւ կազմող այս մատենի յիշեսցիք հանդերձ ծնողք» (էջ 213v)

Մովսէս պատուիրատու-խմբագրի (սրբագրողի) ինքնութիւնը պարզելուն օգնում են այս ու այլ ձեռագրական յիշատակարաններում պարզելուն ներկայացնող որակումները՝ «վերջինս ի խումբս ուսումնականրան ներկայացնող որակումները՝ «վերջինս ի խումբս ուսումնականաց», «երկրորդս ի պարս քարոզչաց»: Բառացիօրէն նոյն արտայայտութիւններն ենք գտնում Վիեննայի Մխիթարեան մատենադարանի 1666-ի նորոգման յիշատակարանում, որ կաթիւ 55 Աստուածաշնչի նորոգման յիշատակարանում, որ կատարուած է «մեծի քաջ հռետորի եւ անյաղթ փիլիսոփայի Մովսէս տարուած է հոգիացեալ բարունապետի, դիտապետի եւ արքեպիսկոպոսի Բջնոյ մեծ նահանգի Արարատեան երկրի» պատուէրով: Մովսէսը այստեղ էլ իրեն կոչում է «վերջինս յուսումնականաց եւ երկրորդս ի խումբս քարոզողաց»¹: Յանձին նրա մենք ունեցել ենք Խորենացու Պատմութեան ուսումնական եւ քառօրէն ու պատմելաոճը ըստ ամենայնի գնահատող ուսումնական եւ քարոզիչ, «սակս առ ուրեք-ուրեք տարածանելոյ» ընդօրինակել տուող ու «սրբագրող» մշակութային երեւելի մի գործիչ: Գրչագրի էջերին նկատելի են ընդօրինակութիւնը գաղափար օրինակի հետ վերահամեմատելու հետեքրը՝ գրչի վրիպմամբ եղած կրկնութիւնները հանելով, բացթողումները լրացնելով եւ վրիպեալ ընթերցումները ուղղագրելով: Այս պարագաները գալիս են վկայելու, որ Մովսէսի պատուէրով գրչա-

¹ Տե՛ս Յ. Տաշեան, Յուցակ Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց Ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 260: Յիշատակարանին մինչեւ այդ ծանօթ է եղել Ալիշանը (տե՛ս նրա՝ Այրարատ՝ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ 1890, էջ 275):

գրուած օրինակը ստուգապէս հարադատօրէն վերարտադրուած է Ներսէս Լամբրոնացու ձեռքին եղած խմբագրութիւնը: Եւ ապա՝ խորանները լուսանցադարդ-գլխագարդերը եւ յատկապէս բացառիկ յատակութեամբ ու խնամքով կիրառած մանրատառ բոլորագիրը նախատակունեն «դայս մատեանս» «դադափար առնել» տալ (իմա՝ օրինակել, բազմացնել), ընթերցողին հասու դարձնելու «յայտարարութիւն նախնեաց մերոց պսակաւորաց եւ պայազատասերունդ իշխանաց յաւէտ իմն ճոխ եւ հարուստ ոճով եւ ճշմարտագիւտ զրուցաբանութեամբ եւ ամէնիմաստ եղանակաւ» գրուած «Հայոց Պատմութիւնը»: Մովսէսը Բջնիի նախկին առաջնորդ եւ Հայոց ապագայ կաթողիկոս Փիլիպոսի աշակերտն է, Բջնիի առաջնորդութեան նրա յաջորդը եւ տեղիս Ս. Աստուածածին եկեղեցու արդիւնաշատ բարեկարգողը: Հայր Ղեւոնդ Ալիշանը նրա առաջնորդութեան տարիները որոշուած է՝ 1646-1666, սակայն խորենացու «Պատմութեան» յիշատակարանը այն երկարացնում է դոնէ մինչեւ 1671 թուականը: Ընդ որում պարզուած է, «քարոզող» յորջորջումը սոսկ մեծարում չէ, այլ նաեւ Հռոմի «միաբանութիւն փափագողներ»ի համակիր լինելու արտայայտութիւն¹:

Մովսէսի յիշատակարանի գրութիւնից 23 տարի յետոյ (ՌՃԼՄԳ-1143/1694), հաւանաբար ձեռագրի անանուն գրչի կենդանութեան իսկ օրօք, այն դարձել է նոր ստացող Մեսրոբի սեփականութիւն եւ «եստ սուղ ինչ ժամանակաց» նուիրուել ս. Թովմայ առաքեալի վանքին: Այդ առիթով վերջում գրուել է նոր յիշատակարան, կատարուած ձեռագրի բուն գրչութեամբ. «Զվերջին ստացող սորին պաշտելի վերոյ գրեցելոյ տեառն Մովսիսի, լոկ անուն Մեսրոբա յիշել մաղթեմ ի մաքրափայլ յաղօթս ընթերցողաց սուրբ եւ երջանիկ եղբարցդ, որ եւ զկնի մահուան սորին ստացողի առաջնոյ բազում փափագանօք ստացայ զսա ի հալալ արդեանց իմոց եւ ետ սուղ ինչ ժամանակաց ետու կամօք եւ յօժարութեամբ սրտիս յիշատակ հոգւոյ իմոյ ի դուռն սրբոյ առաքելոյն Թովմայի եւ ի ձեռն տեառն բազմաշխատ եւ քրտնաջան Յովհաննու քաջահանճար բարունեաց պետի, զոր եւ մեր այսպիսում վշտաշատ ժամանակի շինեաց զեկեղեցիս զանկակատանովն հանդերձ, ուր եւ յամենայն տեղեաց ամենայն ոք ընծայաբերք լինէին նորաշէն եկեղեցեացս: Որ եւ ես նուաստ եւ պիտականուն Մեսրոբ յետնեալ ամենից աշակերտ տեառն Յովհաննու հանճարազօն բարունւոյ ըստ կարի իմում իբրու երկուս լոմայս այրւոյն արկի զսա ի գանձանակ տեառն ի յիշատակ հոգոյ իմոյ եւ իբրեւ ընծայ նորընծայ եկեղեցոյս: Եւ

¹ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 275:

1647) եւ Աստուածատուր քահանան (Իսաղահան, 1660)¹: Գրչութեան այդ տեսակը, ուրեմն, մէկ կենտրոնի ստեղծանք չէ եւ մշակուած ու տարածուած պիտի լինի ոչ առանց ժամանակի դործածուն տարանական տառածեւերի ազդեցութեան:

Վերջին համեմատաբար ծաւալուն յիշատակագրութիւնը կատարուել է «Պատմութեան» առաջին գրքի գլխացանկի երկտողեայ աւարտից յետոյ բաց մնացած գրադաշտում, նոտրգրով: Նրա բովանդակած հիմնական տեղեկութիւնն այս է. «Մեծի Քերթոզահօր հռչակելոյ ճառապատումս զայս գիրք՝ կոչեցեալ Մովսէս Խորենացի, շնորհեցաւ ի Յակոբայ շնորհազարդ քահանայէ յաներ որդւոյ իւրում անիմաստ Գրիգոր դպրիս, յորմէ շնորհակալեալ մեր շահիմք ոչ սակաւս: Յիշեցէք ի բարին: Այլ զայս ես եմ, զի որք յորդոց իմոց յինքեանս սեփականեն իմ զկնի՝ անդանդաղ դսա ընթերցեն, եւ որքան օգտին ի սմանէ՝ յիշեսցեն ի բարին զվերոյ գրեալ այրն հօրաքեռ իւրեանց զՏէր Յակոբն եւ զիս՝ զհայրս իւրեանց զԳրիգոր անհրահանգ դպիրս, որ եղէ...

Գրեցաւ ի 1803 թուին Փրկչի, իսկ Հայոցս 1252 մայիսի օր առաջին, ի Տրէթուն գիւղս մեր, որոյ եմք՝ տէր եւ աղնիս որդիք ընդ այլ տերանցն տեղւոյս» (էջ 2v):

Ըստ Կարենեանցի աշակերտ Յովհաննէս Տէր-Խաչատուրեանի աւանդած տեղեկութեան² ժԸ դարի 40-ականներին՝ Նազիր Շահի արշաւանքի ժամանակ Ազուլիսից Թիֆլիս վերաբնակած իր նախնիք բերել են այս ձեռագիրը եւ, ինչպէս սոյն յիշատակարանից ենք տեղեկանում, իբրեւ Տէր Խաչատուրի հօր՝ Տէր Յակոբ քահանայի սեփականութիւն, որոչ ժամանակ գտնուել է Հիւսիսային Հայաստանի այժմ գոյութիւն չունեցող Տրէթուն գիւղում: Ապա վերստին դարձել է Թիֆլիս, ուր եւ արժանացել է Կարենեանցի գնահատութեանը:

Ներսէս Լամբրոնացու պատուիրած օրինակը նախագաղափար ունենալը երկու ուշագրաւ իրողութեան է մղում մեզ՝ նախ, նշանակալիօրէն կանխում է Խորենացու «Պատմութեան» առ այսօր յայտնի բոլոր ամբողջական ընդօրինակութիւնները եւ ապա՝ կարելի է վստահ լինել, թէ Լամբրոնացու համար գրուած օրինակը բաւականաչափ խնամեալ եւ ժամանակին շրջանառած եւ ճանաչում ունեցող պիտի լինէր: Այս պարագաները բնագրական քննութեան համար ամենեւին շրջանցելի կամ զանցառելի մանրուքներ չեն: Կարենեանցի արդարացի դիտարկմամբ «այն ամենայն կատարելութիւն ունի, զորս կարելի է

¹ Նրանց նմոյշները տե՛ս Michael E. Stone, Dickran Kouymjian, Henring Lehmann, Album of Armenian Paleography, Copenhagen, 2002, SM 446, 456 (N 165, 170):

² Կարենեանց, Բաղդատութիւն..., էջ 5-6:

տեսնել մեծ զգուշութեամբ լաւ տպարանումը տպած գրքերի հետ»։
Կարծում ենք՝ այս գնահատութիւնը վերագրելի է նաեւ Ներսէս
Լամբրոնացու օրինակին։

Հաւաստիանայու համար, թէ 1913-ի հրատարակութեան բնագրի
ու նրա տարրնթերցումների առկայութեան իսկ պարագայում այս
ձեռագրի ընթերցումները բնագրական ասելիք ունեն, ստորեւ ներկա-
յացնում ենք «Պատմութեան» երրորդ գրքի վերջին գլխի (ԿԸ)
նշանաւոր Ողբի բնագրի համեմատութեամբ եղած ընթերցումները։

Էջ	1913	ձեռագիր թիւ 10000	նոյնակ. ընթերց.
358	11 վեհագոյն	վերագոյն	վ ³ cklprs
	11-12 եւ	եւ իմաստուն	abde
359	2 սնեայ	տածեայ	bdek
	5-6 ողջախոհութեամբ	ողջախոհութեան	bde
	9 բռնութիւնն	բռնութիւն	Աև
	որդոց	որդոց	Վ adenr
	10 արժանեացն	արժանեաց	abdep
	11 յայնմ	յայնմ ամենայնի	bde
	ամայի	ամայի]	bde
	12 յուսայով	յուսով գայուստն	abde
	13 տայգերբ	տայգերբ	-
	14 յերրորդ	երկրորդ	ոմանք (վ)
	15 մարմնոյս	մարմնոյ	a
	եւ	եւ]	abdeoprs
360	1 յԱբրահամեանն	յԱբրահամեան	Beo
	2 զպարաւորութիւնս	պարաւորութիւնս	Shab
	3 այրութեամբ	այրութեամբ	abde
	4 հնումն	հնումն	he
	ժողովուրդն	ժողովրդեանն	abde
	5 թշուառութիւն	թշուառութիւնս	bdeos
	6 յերկիրն	յերկիր	de
	Ռոբովամ	Րոբովամ	abde
	7 ժողովրդենէն	ժողովրդենէ	bde
	9 Եղիսէէ	Եղիսէոս	bdegk
	գՅէու	գՅէսու	brs
	10 Սեղեկիայ	Սեղեկիա	-
	11 ուրեք է	ուրեք գոյ	bdeopqrs

	12 Մատաթիայ	Մադաթիա	-
	ընդդիմակայէ	ընդդիմակցէ	bde
	դմեց	մեղ	bde
	13 պաշարէ	պաշարեաց	ի ³
	Մակարէ	Մակակարէ	-
	15 յարմարէր	յարդարէր	bde
361	1 դրանս	դրան	bde
	2 եւ սնուցին	եւ սնուցին զիս	իւկ ¹ bde
	3 դդարձ	դարձ	վabdenogrs
	4 արուեստիւս	արուեստիս	de
	յարմարութեամբս	յարմարութեամբ	իւadc
	5 Բիւզանդիոյ	Բիւզանդիոն	deqkn
	յուսայաք	յուսացեայք	իւկ ¹ de
	7 խրախճանութեանն	խրաճանութեան	իւde
	8 ասելով	ասեմ	իւ կ ¹ e
	տեսութեանն	տեսութեան	degkopqrs
	աչաց	աչացն	իւ կ ¹ de
	9 նոցա	նոցա]	-
	բարբառն	բանն	կ ¹ ի ² adegk
	10 վտանգիմ	փղձկիմ	իւ կ ¹ ի ² ade
	12 ո՞ւր գուարթ	ո՞ւր է գուարթ	իւ ade
	13 ո՞ւր խնդամիտ սիրտն	ո՞ւր է խնդամիտ սէրն	իւկ ¹ լde
	արբանեկաց	աշակերտացն	իւ d
	14 ո՞ւր՞ճանապարհաց	ո՞ւր է ճանապարհացն	իւ ade
	աշխատութեանցն	աշխատութեանց	իւ ade
	15 ժողովողն	ժողովիչն	իւկ ի ³ de
362	2 յառաջադիմութիւն	յառաջադիմութեանն	e
	3 մասամբ ինչ	մասամբ	իւկ ¹ de
	յորդույս	յորդուցս	de
	7 դայն	դար	degl
	8 դմեօք	դմեւք	Տիւ
	որ ինչ	որ ոչինչ	մեծ մասը
	15 վատթարն	ծատթար	մեծ մասը
	դադգաւ	ադգաւ	մեծ մասը
	ընկեցիկն	ընկեցիկ	degk
	17 գլխոյս	գլխոցս	-

363	1 խմ	[ւմ]	degk
	զմիտան	զմիտա	deq
	վանմացեայս	վսամացեայ	dl
	2 բան	բանն	hude
	վարէրն	վարէր	adeg
	դերասանակա	դերասանակ	degk
	3 զղէման	զղէպսն եւ կամ զվէպսն	h ⁴ de
	օտարաձայնս	ունայնաձայնեայս	h ⁴ v ² de
	4 խանդից	խանտի	h ³ v
	աղբիւր	զաղբիւր	dek
	5 զարդարութեանն	զարդարութեան	deg
	7 աղէտս	զաղէտս	hude
	9 յայտոսիկ	զայտոսիկ	degk
	10-11 զարթիր Երեմիա	զարթիր, զարթիր Երեմիայ	h ⁴ de
	12 թշուառացարս	թշուառանայոց	h ⁴ aden
	13 Զաքարիաս	Զաքարիա մարգարէ	h ⁴ k ¹
	14 եւ ինքնահաճք	ինքնահաճք	dek
	15 ընտրեալք	ընտրեալ	h ⁴ dep
364	1 Աստուած բնակէ	բնակէ Աստուած	h ⁴ de
	2 զիւրանց	զինքեանց	h ⁴ do
	6 բանից	բանից եւ	hude
	8 առ ուսումն	առ ի ուսումն	a
	9 զտեսութիւնն	զտեսութիւն	adegl
	15 կծիլք	կրծիլք	-
	16 ազահք	եւ ազահք	degk
	աշխարհաւերք	յաշխարհաւերք	-
	19 անհաստատք	անհաւատք	de
	22 փոփոխել	փոխել	h ⁴ en
365	1-2 սաստկասառոյց	խառնակառոյց	h ⁴ v ² de
	2 բքարարք	բքարերք	h ⁴ v ³ degl
	խորշակաբերք	խորշակաբերք]	h ⁴ degl
	4 անպիտանք	անպիտան	de
	առաւելույն	առաւելույ	h ⁴ e
	5 անբերութիւնք	անբերութիւն	h ⁴ de
	6 անաճելութիւնք	անաճելութիւն	h ⁴ de
	9 տիրեալք	տիրեալ	eg

	10 Հրամանս տայով	Հրամանս տայով խիտ եւ	h ¹ if ³ hde
	15 նեղութիւնք	նեղութիւն	egk
366	4-5 յամենայն եղանակացս	յաւիտեան	h ¹ de
	6 Աւարտեցան գիրք երրորդ, յանկ երանելոյ Պատմութեան Հայոց Մեծաց		-

Բնաւ չենք կարծում, թէ մեր նկարագրած ձեռագրի բերած ընթերցումները անպայմանօրէն նախընտելի են, բայց որ նրանք միւսներից ոչ պակաս մասնակցութիւն կբերեն առկայ ընթերցումների հիմամբ բնագիրը նախնական վիճակին մօտեցնելուն՝ կարելի է փաստելինել: Մենք արդէն առիթ ունեցել ենք յիշեցնելու, որ Մ. Աբեղեանը 1913-ի հրատարակութիւնը քննական չէր համարում, որովհետեւ ի՛ր իսկ հավաքած տարրնթերցումների մէջ բնագիր մուծելիք բաղում տարբերակներ էր տեսնում: Այսուհետ Խորենացու «Պատմութեան» նոր հրատարակութիւն ձեռնարկելիս պատշաճ տեղ պէտք է յատկացնել Ներսէս Համբրոնացու օրինակը պատճէնող գրչագրին:

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ
«ՏՈՒՀԱՑ ԳԱԻԱՌԻ» ՏԵՂՈՐՈՇՄԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Թրակացու Քերականութեան 'Εθνικὸν δέ ἐστὶ τὸ ἔθνος
 δηλωτικὸν, ὡς Φρύξ, Γαλάτης բանաձեւի դիմաց հայերէն թարգմա-
 նութիւնն ունի «Ազգական է, որ ազգի է յայտական, որպէս Գողերձա-
 կան, Տուհ, Վրացի»¹: Ն. Ադոնցն այս կապակցութեամբ դիտել է.
 «Դիտնիսիսի բնագրի սոյն հասուածում ուշագրաւ են անուան էթնի-
 կական կերպի (11) հայկական օրինակները՝ Գողերձական, Տուհ,
 Վրացի՝ բնագրի Փրաք (կարդա՛ Փրύξ - Պ. Մ.), Գալաթիս-ի փոխարեն:
 Առաջին անունը արդեօք անշուշտ չունի՞ Պտղոմէոսի մօտ առկայ
 Κοταρζήνη գաւառի անունը, որը սովորաբար ընդունւում է իբրեւ
 աղաւաղեայ Καλαρζήνη հայ. կղարջք: Տուհ անունը հանդիպում է
 Խորենացու մօտ, իսկ Վրացի-ն, ըստ երեւոյթին, բացատրութիւն է»²:

Յիշեալ աշխատութեան գրախօսութեան առիթով Ն. Մառը անդ-
 րադարձել է այս փաստին եւ, ընդունելով Ն. Ադոնցի բացատրութիւն-
 ները, որոշ մասնաւորեցումներ առաջարկել: Նա եւս գտնում է, որ
 «Վրացի տերմինը որոշ է եւ ըստ ձեւի, ուշ ընդմիջարկութիւն է, բայց
 յամենայն դէպս ուշագրաւ է, որ յետագայ ընդմիջարկողը հայկական
 օրինակներում դիտարկում է վրացական ցեղերի անուններ»³: Վրացի
 տերմինը Ն. Մառը համարում է տուհ-ի բնորոշում-բացատրութիւն եւ
 աւելացնում. «Ընդմիջարկողը հարկաւ իրաւացի է. Տուհ-ը էթնիկական
 Թուշ անուան բարբառային, մասնաւորապէս սուանական ձեւն է: Հէնց
 այս սուանական թագ ձեւը -ar սուանական հոգնակիակերտի հետ,
 այսինքն՝ թագ-ar, պահպանուել է Տբէթի վանքի հանդիման գտնուող

¹ Н. Адонт, Дионисий Фракийский и армянские толкователи, Пг., 1915, с. 20, հմմտ. Nicolas Adontz. Denys de Thrace et les commentateurs arméniens, Louvain, 1970, էջ 20:

² Н. Адонт, նշւ. աշխ., էջ CLXXII, հմմտ. Փրանս. թարգմ., էջ CLIX.

³ Н. Марр, [Рец. на книгу] Н. Г. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Х.В., т. V, вып. I, Пг., 1916, с. 59:

տ՞յեճճոնո-Թագ-ar-is-i հին ամրոցի վրացական անուան մէջ, որը տեղորոշում է այն Կղարջք գաւառի հարեւանութեամբ, որի հետ հիմնաւոր կերպով Ն. Աղոնցը նոյնացնում է Պատմաստի Καταρχήν: Այստեղից հետեւում է, թէ ոչ միայն ընդմիջարկութեամբ, այլև Դիոնիսիոս Թրակացու հիմնական հայկական պատումում հայ թարգմանիչը ցուցաբերում է վրացական տերմիններ գործածելու նոյնպիսի յակում, ինչպէս Դաւիթ [Փիլիսոփան]»¹:

Թրակացու ἔθνικὸν աղգական տերմինը Դաւիթ Փիլիսոփան մեկնում է այսպէս՝ «Աղգական է, որպէս միում (var. միոյ) աղգի մարդ ինքեամբ յատուկ կարող է գրովանդակն յայտնել զաղգ»²: Նշանակում է՝ Գողերձական, Տուհ, Վրացի տերմինները առանձին միաւորներ են, եւ «Վրացի»-ն «Տուհ»-ի բնորոշում-բացատրութիւնը չպիտի չինի, քանի որ այն ինքնին կարող է «գրովանդակն յայտնել զաղգ»: Սոյն տերմինը յաւելում համարելիս Ն. Աղոնցը ելակետ է ունեցել յունարէն բնագրի երկու էթնիկոնի դիմաց հայերէն երեքի առկայութեան փաստը եւ ոչ Տուհ-ին լրացնել-բացատրելու կոչուածութիւնը, ինչպէս թուացել է Ն. Մառին:

Այսպիսով, Ն. Մառն ու Ն. Աղոնցը արձանագրել են, որ հայերէնում վկայուած է Տուհ ցեղանուն եւ Տուհաց գաւառ (Խորենացի, Բ, 65): Գաւառի տեղորոշմանը նրանք ի մասնաւորի չեն անդրադարձել, թէեւ Ն. Մառը փաստորէն այդ կատարել է՝ թուշերի սուանական Թագ անուանն ու Թագarisi տեղանուանը առնչելով:

Մի քանի տարի առաջ Ա.ս. Մնացականեանը քննութեան առաւ «Վարդգէս Մանկան» վիպական հատուածը եւ աղբիւրների ու գրականութեան ուսումնասիրութիւնից եկաւ այն եզրակացութեան, թէ «Վարդգէս Մանկան հայրենիքը՝ Տուհաց գաւառը, պիտի որոնել Հիւսիսային Հայաստանում»³: Ընդհանուր առմամբ այս եզրակացութիւնը ճիշտ է, որովհետեւ տուհ-երը, ըստ Թրակացու թարգմանչի յիշատակութեան, ապրել են գողերձականների եւ վրացիների հարեւանութեամբ: Սակայն թուարկման հերթականութիւնը տեղաբաշխման յաջորդականութիւն չի պայմանաւորում: Թարգմանչի օրօք այլևս ոչ

¹ Նոյն տեղում, էջ 59-60:

² Н. Адонц, нзл. աշխ., էջ 110: Տարբերակը տե՛ս N. Adontz, нзл. աշխ., էջ 326:

³ Ա. Շ. Մնացականեան, Դիտողութիւններ «Վարդգէս Մանկան» վիպական հատուածի վերաբերեալ, ՊԲՀ, 1975, N 2, էջ 232: Ե. Դուրեանն ու Ա. Ալպոյաճեանը «Տուհաց գաւառը» նոյնացնում են «Կապադովկիայի» հետ (տե՛ս Ա. Ալպոյաճեան, Պատմ. հայ Կեսարիոյ, Ա., Գահիրե, 1937, էջ 47, 153):

տուհեր կային, ոչ էլ գողերձականներ:

Մովսէս Խորենացու տեղեկութեամբ Վարդգէսը Տուհաց գաւառից շարժուել է դէպի հարաւ եւ Քասաղ գետի հունին զուգընթաց հասել է Շրէշ բլուր ու Վաղարշապատ. «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, դՔասաղ գետով, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, դՔասաղ գետով, կռել կոփել զղուռնն Երուանդայ արքայի»¹: Ուրեմն՝ յիրավի հիւսիսից:

Վերջերս Տուհաց գաւառի տեղագրութեան խնդիրն արծարծեց Հ. Բարթիկեանը: Նրա կարծիքով Տուհ-ն ու Տուհաց գաւառը «ոչ այլ ինչ է, քան տառիս-ն ու տառիս-ների գաւառը», որ յիշատակուած են Քսենոփոնի «Անաբասիսում»²: Ըստ հեղինակի՝ «Եթէ Քսենոփոնը լսել է տառհ (գուցե տայոհ), ապա նա միայն տառիս կարող էր գրել, քանի որ յունարէնում չկայ «հ» տառ: Ինչ վերաբերում է «առ» (այոհ) ձայնաւորներին, ապա տեղի է ունեցել սովորական ձայնափոխութիւն, երկու կից գտնուող ձայնաւորները տուել են «ու», եւ «տառհ»-ը դարձել է «տուհ»:

Սոյն եզրակացութիւնը, մեր համոզմամբ, փաստարկուած չէ, որովհետեւ՝

ա) Քսենոփոնը տառհ կամ տայոհ լսել չէր կարող, քանի որ Տայ-ք Տայո-ց-ի հիմքը Տայ/տայո-ն է³, ուստի յունարէնում առկա է Դաօ (այստից՝ Դաօի եւ Դաօχοի), վրացերէնում՝ Ծաօ (այստեղից՝ Ծաօնօ, Ծաօցօ): Յունական միջավայրում այս տեղանունն ու ցեղանունն երկօրինակ արտասանութեան եւ գործածութեան փաստը վկայուած է Ստեփանոս Բիւզանդացու (VI դար) Ἐθνικὰ ἀνατολικῶν քառարանում. Դաօχοι, ἔθνος ἐνδοτέρω τοῦ Πόντου καὶ ἡ χώρα οὕτω, τούτους τινες Դαօս καλοῦσιν, ὡς Σοφαίνετος ἐν τῇ ἀναβάσει φησί⁴ - «Տառիսներ՝ տուհմ ներքին Պոնտոսում: Երկիրը եւս այդպէս է կոչուած. ոմանք նրանց տառ-ցի (իմա՛ տայեցի-Պ. Մ.) են անուանում՝ ինչպէս Սովիայինետոսը իր Անաբասիսում»: Ո՛չ հայերէնում եւ ո՛չ էլ

¹ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տիղիս, 1913, էջ 199: Ն. Մառը փորձել է հատուածը տողատել (նշվ. աշխ., էջ 59):

² Հ. Մ. Բարթիկեան, «Տուհաց գաւառի» տեղագրութեան հարցի շուրջը, «ՊԲՀ», 1976, N 4, էջ 201:

³ Հմմտ. Heinrich Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, Amsterdam, 1969, S. 277.

⁴ Տե՛ս Georgica - ბიზანტიელი მწერლების ცნობები საქართველოს შესახებ, ტ. III, ბერძნული ტექსტი ქართული თარგმანითურთ გამოცემა და განმარტებები დაურთო სიმონ ყაუხჩიშვილმა, ტფ., 1936, გვ. 284. Հմմտ. H. Hübschmann, նշლ. աշխ., էջ 277:

վրացերէնում յիշյալ անուան մէջ & հնչիւն կամ հազադ չկար ու չէր արտասանուած¹:

բ. Քսենոփոնի օրօք (V դար մ. թ. ա.), ինչպէս եւ նրանից հարիւրամեակներ յետոյ, յունարէն լեզուն իս հնչիւն եւ համապատասխան հնչոյթ չունէր: X-ն գրուած եւ արտասանուած էր իբրեւ լիարժէք Ք, ուստի չ-ի համարժէքը ստանալու համար հոռմեացիները c-ին h էին աւելացնում՝ ch, իսկ V դարի մեր թարգմանիչները Χριστὸς-ը Քրիստոս էին տառադարձում: χωρεπίσκοπος-ը՝ քորեպիսկոպոս, χρο-νικὸν-ը՝ քրոնիկոն եւն²: Այդպէս էին վարւում եւ յունարէնին առնչուող վրաց մատենագիրները (հմմտ. յրօնՅոյ, յոռօյճոնկոճոնկո, յրօնոյճոնկո եւ այլն): Այստեղից հետեւում է, որ եթէ նոյնիսկ մեզանում երբեւէ տառ համ տայոհ արտասանուէր, ապա դարձեալ Τάοχ-Օւ տառադարձուել չէր կարող, քանի որ <>ք հնչիւնափոխութիւնը պատճառաբանութիւն չի դառնում:

գ. Հայերէնում առ երկհնչիւնը կամ այո հնչիւնախումբը պարզեցման ճանապարհով ու չի տայ: Այսպէս, օրինակ, հայոց սեռականը վիմագիր եւ մատենագրական յուշարձաններում վկայուած է եւ հնչիւնափոխուած ձեւերով՝ հայոց (Արուծ, VII դար), հայոց (Գառնի, IX դար, Նորատուք, X դար), բայց ոչ երբեք հուց, մինչդեռ Տայոց-ից տուհաց ստանալու համար ճիշտ այդպիսի անցում է պահանջուած:

դ. Տայոց-ի ուղիղ ձեւը աղբիւրներից քաջ յայտնի Տայք-ն է, իսկ Խորենացու յիշատակած Տուհաց-ի ուղղականը *Տուհք կլինի³: Արդ, եթէ այս երկու տեղանունները նոյնական լինէին կամ ընդհանուր ծագում ունենային՝ պիտի որ սեռականում միաձեւ հոլովուէին, մինչդեռ մի դէպքում Տայ-ոց է, միւս դէպքում՝ Տուհ-աց: Ինչպէս երեւում է, Խորենացու համար Տայոց եւ Տուհաց գաւառները նոյնացման եզր չեն ունեցել, ուստի նա իր բերած վիպական հատուածի մէջ Տուհացը Տայոց սրբագրելու անհրաժեշտութիւն չի տեսել:

¹ Յ. Կարապետեանը վերջերս փորձեց հիմնաւորել, որ Ταοχ - ձեւի մէջ չ-ն ոչ թէ ուրարտերէնի -ehē ածանցի h-ն է, այլ «Հայերէնի հոգնակիութեան ցուցիչ ք-ի արտացոլումը յունարէնում» («Լրաբեր», 1978, N 6, էջ 72-73): Ի հաստատումն այս դրոյթի աւելացնենք, որ հայերէնի ք-ն փոխանցուել է եւ վրացերէնին՝ համազօր հոգնակիակերտ Ծ-ի վերածուելով (ՅճՈԾ):

² Ամբողջական ցանկը տե՛ս Հ. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, II, Երեւան, 1951, էջ 33-34:

³ Խորենացու գիտական բնագրի հրատարակիչները յատուկ անունների ցանկում նախընտրել են արտացոլել հոլովուած բառաձեւը (ուղղականի վերականգնմանը չանդրադառնալու պատճառով):

ե) Վարդգէս Մանկան վէպը ձեւաւորուել ու կյանք է մտել կենտրոնական Հայաստանում, կարելի է ասել՝ Այրարատում: Պահպանուած գրուագի համաձայն, Վարդգէսը «հատուած գնացեալ...ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, զԱրտիմէղ քաղաքաւ, զՔասաղ գետով...»: Իրաւացիօրէն նկատուած է, որ Քասաղ գետով Շրէշ բլուր եւ Արտիմէղ քաղաք գալու համար ուղեւորուողը Հիւսիսային Հայաստանից է ելնելու, այնինչ Տայքը Հայաստանի հիւսիս-արեւմուտքում է գտնուած եւ հիմք չկայ ենթադրելու, թէ ժողովրդական ասքը Վարդգէս Մանկան ճանապարհը երկարացնելու միտում ունի:

Այսպիսիով, Թրակացու քերականութեան թարգմանութեան տուհ-երը տայեցիք չեն եւ ոչ էլ Տայոց գաւառն է Խորենացու *Տուհք-Տուհաց գաւառը:

Ուտիքի մասին խօսելիս Յովհ. Դրասխանակերտցին երկու անգամ յիշատակում է Տուս անունով մի բնակավայր. Խաչենից ու Գարդմանից յետոյ Բուղան գալիս է «յՈւտի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփանոս, որում եւ Կոն անուանէին գնա. որ ի նախնւոյ իւրմէ Սեւիոյ՝ Սեւորդիք աղգքն անուանէին»¹: Եւ ասլա՝ Սմբատ արքան Ալանաց Դոնից հարաւ ընկած այլ գաւառների թւում նուաճում է եւ Ուտիքը. «եւ անտի ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչեւ ի քաղաքն Տիխիս. եւ զՈւտի գաւառ մինչեւ ի քաղաքն Հունարակերտ եւ մինչեւ ի Տուս եւ ի Շամքոր»²:

Մասնագիտական գրականութեան մէջ բաւական վաղուց յայտնի է, որ Տուսը գետեղելի է Տաուշի (Տաւուշի) տեղում կամ նրա մերձակայքում: Յովհ. Դրասխանակերտցին անկախ Տուսից յիշատակում է ե՛ւ «Տաւշոյ ձորը», ե՛ւ «Տաւշոյ ամրոցը»³, որը կարծէք խանկում է Տուսի եւ Տաուշի նոյնացմանը: Բայց այստեղ փաստօրէն գործ ունենք մի այնպիսի ժամանակաշրջանի հետ, երբ Տուսը իբրեւ գաւառանուն եւ բնակավայրի յորջորջում արդէն դուրս էր մղւում գործածութիւնից, իսկ Տաուշը նոր էր սկսում տարածում ստանալ, ուստի Դրասխանակերտցին Տուսը միայն իբրեւ բնակավայր, գիւղ է յիշում, իսկ գաւառը նրա համար այլեւս Տաուշն է (այստեղից էլ Տաւշոյ ձոր, Տաւշոյ ամրոց): Որ աւելի վաղ շրջանի աղբիւրները Տաուշ առհա-սարակ չգիտէին եւ նրա տեղում Տուսն էին գործածում՝ երեւում է

¹ Յովհանու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 127 (Հմմտ. վրաց. հրատ., էջ 24):

² Նոյն տեղում, էջ 161 (Հմմտ. վրաց. հրատ., էջ 64):

³ Նոյն տեղում, էջ 311, 321:

«Աշխարհացոյցի» յիշատակութիւնից. «Ուտիք... ունի գաւառս, զոր <այժմ> Աղուանք ունին, եւթն՝ Առան-ռոտ, Տոխ, Ռոտ-Պարսեան, Աղուէ, Տուս Քստակ, Գարդման...»¹: Ակադ. Ս. Երեմեանը որեւէ կասկած չունի, որ բնագրի «Տուչքատակ» ընթերցումը² աղաւաղեալ է եւ պիտի լինի Տուս-Քստակ (Քուստակ), իսկ «քուստ, քստակ» սլարսկական տերմինը քաջ ծանօթ է «Աշխարհացոյցի» հեղինակին (քուստի նմուշ, քուստի Խորասան, քուստի Կապկոճ եւ այլն) եւ վարչական միաւոր-գաւառ է նշանակում: Ուրեմն՝ VI-VII դդ. աղբիւրներին Տուս գաւառը (Տուս-Քուստակը) ծանօթ է եղել եւ գտնուել է Ուտիքում, ուր եւ գտնուում էին Դրասխանակերտցու Տուս գիւղն ու Տաւրշոյ ձորը, ամրոցը:

Հետեւաբար Տուս գետի (Տաւուշ գետ, Թուվուղ-չայ) եւ Տուս քուստակի երեմեանական տեղորոշումը լիովին արդարացի է, թէեւ գիտնականը այդ կատարել է ենթադրաբար:

Արդ, հնչիւնական ի՞նչ փոփոխութիւն է արտացոլուած Տուս անուան մէջ: Հայագիտութեանը ծանօթ են մի քանի տասնեակ նոյնահանգ տեղանուններ, որոնք հայցական հոլովածեւն են ներկայացնում (հմմտ. Մասիս, Գորիս, Արամուս, Նորատուս եւ այլն)³: Ուղղականում նրանք ստանում են հոգնակի-ուղղական ք ցուցիչը (Մասիք, Գորիք, Արամունք, Նորատուք): Բնականբար Տուս-ի ուղղականը Տուք-ն է, սեռականը՝ Տուաց (հմմտ. Նորատուք-Նորատուաց-Նորատուս): Այս իրողութիւնը առանց որեւէ քննութեան յայտնի է եղել Հ. Հիւբշմանին, ուստի Տուսի դիմաց գրել է. «Հյց. «Տուք»-ի»⁴: Այլեւս երկմտանք չի մնում, թէ Տուհ ցեղանունից կազմուած Տուհք գաւառանունը նոյն Տուս*Տուքն է՝ հ հազագի կորուստով:

Տուհք-ից գործածական է դարձել Տուհս-ը, իսկ ասլա հ-ի անկումով՝ Տուսը, ինչպէս որ՝ սլահք>սլահս> պաս:

Խորենացու երկում պահպանուած «Վարդգէս Մանկան» վիպական հատակոտորը, ինչպէս ենթադրւում է, մ. թ. ա. VI-III դդ. սահմանգծում տեղի ունեցած պատմական իրադարձութիւնների արձագանքն է: Որքան էլ վիճելի լինի այստեղ յիշատակուող «Երուանդ

¹ Ս. Տ. Երեմեան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963, էջ 109, հմմտ. էջ 86:

² Տե՛ս «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացու», Վենետիկ, 1881, էջ 33:

³ П. М. Мурадьян, Винительные формы в именительном по данным топонимики Армении (к постановке вопроса) ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1971, N 4, էջ 21-30:

⁴ Н. Hübschmann, ... արդ., էջ 240, ծան. 1:

արքային» Երուանդ Ա-ի կամ մէկ այլ իրական անձնաւորութեան հետ նոյնացնելու խնդիրը, դրուագի պատմաաշխարհագրական ընդգրկումը վէսլում պատմուող անցուդարձերի կարեւորութեան վկայութիւն է: Այդ իսկ առումով էլ «Տուհայ գաւառի» տեղորոշման շնորհիւ մասամբ աւելի ընկալելի է դառնում վէպի իրական հենքը, իսկ նրա յիշատակութիւնը ապացոյց է, թէ այդ գաւառի հայ բնակչութիւնը նշանակալի մասնակցութիւն պէտք է բերած լինի երկրի քաղաքական ու մշակութային անցուդարձերին՝ կենտրոնական Հայաստանում ձեւաւորուած վէպի յիշատակութեան արժանանալով:

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Ե դարի վերջին խոշոր մատենագիրը Ղազար Փարպեցին է, որին վիճակուած էր դեռևս պատանեկութեան տարիներին ականատես լինելու դարակէսի արհաւիրքներին ու փորձութիւններին, իսկ հետագայում դառնալու այդ անցուդարձերի ստուգախօս պատմիչը:

Դատելով «Փարպեցի» կոչուելու փաստից (իսկ այդ վկայուած է իր իսկ Պատմութեան առաջաբանում¹)՝ պատմիչը ծնուած պէտք է լինի Արագածոտնի Փարպի գիւղում, քանի որ այդ անունը կրող ուրիշ տեղանուն Հայաստանում յայտնի չէ: Այսպէս կարող էր կոչուել նաեւ նշեալ վայրում վանահայր կամ հոգեւոր վերակացու լինելու պարագայում:

Բայց քանի որ մեր պատմիչի՝ այնտեղ պաշտօնավարելու մասին վկայութիւններ չունենք, ուրեմն, իրօք, ծննդավայրն է²:

Բանասիրութիւնը երկու-երեք տարուայ մօտաւորութեամբ ճշտել է Փարպեցու ծննդեան թուականը. «Թղթի» սկզբնական մասում Վահան Մամիկոնեանին նա յիշեցնում է, որ «Թէպէտ եւ ըստ տիոց աւագագոյն քան դձեղ էաք, այլ սննդակիցք էաք ձեզ եւ խաղակիցք» (էջ 606): Վարդան եւ Հմայեակ Մամիկոնեանների նահատակութիւնից յետոյ, նրանց ու միւս նախարարների «դեռևս ի տղայութեան հասակի» որդիք ու նաեւ կանայք «ի նեղութեան էին», ուստի Հմայեակի քենակալ Աշուշայ բղեշխը «խնդրեաց պարգեւս ի յարքայէն Պարսից Յագկերտէ»: 455 թուականին նա ստացաւ այդ պարգեւը՝ նեղութիւնից ազատեց ու իր նստոց տարաւ Չուիկին, նրա երեք որդիներին (Վահան, Վասակ, Արտաշէս) եւ այլոց: Ահա այդ խմբի մէջ է եղել եւ Ղազար Փարպեցին: Եթէ Հմայեակի աւագ որդի Վահանը 8-10 տարեկան էր, նշուած 455-ից այդքան տարի ետ գնալով՝ կը ստանանք 441/43, որ եւ մեր պատմիչի ծննդեան թիւը կը լինի: Հարկաւ պատահական չէր Մա-

¹ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, [ի ձեռն. Հ. Գրիգոր Սարգիսեանի], Վենետիկ, 1933, էջ 15: Իբրեւ վերջին եւ առաւել սրբագրեալ հրատարակութիւն, ստորեւ վկայակոչութիւնները քաղում ենք այստեղից: Փարպեցուն վերաբերող ամփոփ մատենագիտութիւն տե՛ս Տիգրան Գույումճեան, Ղազար Փարպեցի (մատենագիտութիւն), Երեւան, 1999:

² Փարպին ժամանակին կոչուել է նաեւ գեղաքաղաք (տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, 158-160):

միկոնեան զարմերի հետ սննդակից լինելը, մանաւանդ որ Չուիկը Ադան Արծրունու քոյրն էր, իսկ վերջինիս Փարպեցին բազմիցս է յիշատակում՝ իբրեւ իր ուսուցիչ: Ուրեմն, Փարպեցին, թերեւս, արենակցական ինչ-որ մերձաւորութիւն ունէր Մամիկոնեան կամ Արծրունեաց տոհմի հետ: Հէնց այս պարագան էլ նպաստեց ապագայ պատմիչի հիմնաւոր կրթութիւն ստանալուն: Հայոց նախարարների այրիացած տիկիները «թէպէտ եւ ի նեղութեան էին, սակայն ուսուցեալ եւ բազում յաջողութեամբ ուսուցանել տուեալ եւ խրատեալ... իբրեւ զքաջայրս՝ առաջիկայ զօգտաբեր շքեղաբար հրահանգս մանկանցն հոգացեալ ընուին» (էջ 355), իսկ Չուիկը «եղեւ կին անուանի եւ առաւելեալ ամենայն լաւ եւ մտաւոր մասամբք...» (էջ 356): Ի դէպ, Յուրտաւը, ուր ապաստանել էին հալածական ժառանգները, կրթութիւն ստանալու նպաստաւոր վայր էր, ինչպէս պարզ երեւում է Մովսէս Յուրտաւեցու թղթերից ու Ուխտանէսի վկայութիւններից¹: Թէ ինչքան ժամանակ է Փարպեցին մնում Յուրտաւում, յայտնի չէ, բայց պիտի կարծել, որ 60-ական թուականներին նա այլեւս մեկնել էր: Նրա կեանքին ու գործունէութեանը քաջածանօթ մէկը, որն անհրաժեշտ է համարել Փարպեցու թուղթն օժտել փաստալից առաջաբանով, գրում է, թէ երկնաւոր արուեստի սիրող ու պարապող Ղազարը «անդատին ի մանկական տիոցն սկիզբն արարեալ բանական գիտութեան» (էջ 598), Յոյն աշխարհ (Բիւզանդիա) է ճանապարհորդում եւ այնտեղ, «քաջաց եւ առաքինի մարդոց» ձեռքի տակ պարապելով, հմտանում աստուածաբանութեան մէջ, ապա վերադառնում «յիւր աշխարհ»: Պատմութեան առաջաբանում Փարպեցին մեծ համարումով եւ տեղագրական մանրամասներով է խօսում Կոստանդնուպօլսի վերաբերեալ՝ նշելով, թէ «վտակք գիտութեան, որպէս ի թագաւորանիստ վայրի, յորդեալ բղխեն ի քաղաքէն» (էջ 11), իսկ Յունաստանի (Բիւզանդիայի) բոլոր կողմերից «քաջ ուսեալն անդ փութան հանդիսանալ» եւ այլն:

Բնական կը լինէր եղրակացնել, թէ Փարպեցին ինքն էլ հէնց այստեղ է ուսանել, «ըստ կարի պարապեալ յունական ուսմանցն եւ կարդացեալ զգիրս արանցն սրբոց...»: Եթէ այս տեղեկաթիւնն էլ չունենայինք, ապա միեւնոյն է, պիտի նշէինք, որ նա կարդացել է Աթանաս Աղեքսանդրացուն, Կիւրեղ Աղեքսանդրացուն, Կիւրեղ Երուսաղէմացուն, Բարսեղ Կեսարացուն, Գրիգոր Աստուածաբանին եւ այլոց:

¹ «Յուրտաւն... յայնժամ լի եւ ընդարձակ մայրաքաղաք մեծ եւ հռչակաւոր... ի նահանգին, որ կոչի Վրաց-դաշտ, որ է միջասահման երկուց աշխարհացն Հայոց եւ Վրաց...» (Ուխտանէս, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, Վաղ., 1871, էջ 34):

Թղթում թուարկուած են նաեւ «ուղղափառութիւնից» խոտորուած հեղինակները (Արիոս Աղեքսանդրացի, Ապողինարոս Լաւողիկեցի, Նեստոր Անտիոքացի, Եւտիքէոս Կոստանդնուպօլսեցի եւ այլն), որոնց ուսմունքին ու մատենագրութեանը եւս ծանօթ է մեր պատմիչը: Նրա հեռագնաց ուսումնառութիւնը նկատելիօրէն տարբերուած է Մաշտոցի աւագ ու կրտսեր աշակերտների՝ նոյն նպատակով թելադրուած ճամփորդութիւնից: Փարպեցին Հայաստանում մինչ ուղեւորութիւնը ուսուցիչներ էր ունեցել եւ ապա ճամփորդել բիւզանդական գիտութեանը հմտանալու: Պատմիչը առանձնակի սիրով ու երախտագիտութեամբ է յիշատակում Աղան Արծրունուն, որը «կեցեալ յանապատս ընդ արս ընտիրս ի ճգնութիւնս մեծամեծս» (էջ 15) «տքնութեամբ եւ պահօք եւ անդադար աղօթիւք զցայգ եւ զցերեկ միշտ հոգեւոր անսպառ վաստակօք զանամարմնոցն զվերին զօրացն բերեր յանձին զքաղաքավարութիւն» (էջ 16): Ահա այս ճգնակեաց ուսուցչի մօտ է կրթւում Փարպեցին՝ «սնեալ եւ ուսեալ առ ոտս առաքինակրօն երանելոյն Աղանայ, որ էր աղգաւ ի հոյակապ եւ յականաւոր տոհմէն Արծրունեաց, որդի Վասակայ...»:

«Աքանչեյի եւ հրեշտակակրօն» (էջ 134) Աղան Արծրունին 450-451 թուականների անցքերի անմիջական մասնակիցներից էր, Յազկերտ Բ-ին տրուած դաւանական պատասխանի հեղինակներից մէկը, ուստի նրա յիշատակը, ինչպէս Փարպեցին է վկայում, «ընդ անուանս վկայիցն սրբոց պատմեալ քարոզի մինչեւ ցայսօր եւ յաւիտեան անուն սրբոյն յամենայն եկեղեցիս Հայաստանեայց աշխարհիս, Վրաց եւ Աղուանից» (էջ 16): Ընդ որում պատմիչը Աղանից է ստանում իր «պարեգօտը»՝ հոգեւոր աստիճանն ու ձեռնադրութիւնը: Փարպեցին Վահան Մամիկոնեանին հասցէագրած Թղթում ուղղակի վկայում է, որ Բիւզանդիա (Հռոմք) ուսումնառութեան մեկնելը եւս եղել է իր ուսուցիչների հրամանով, հարկաւ, ամէնից առաջ Աղան Արծրունու՝ «տարեալ զիս ըստ վարդապետաց իմոց հրամանի ի Հռոմս, ժամանակեցի անդ» (էջ 604):

Դժբախտաբար, հնարաւոր չէ ճշտել վերադարձի ստոյգ թուականը: Յայտնի է, սակայն որ Փարպեցին որոշ ժամանակ Կամսարական նախարարական տոհմի հովանաւորութիւնն էր վայելում, նրանց մօտ հոգեւոր սպասաւորութեան ծառայում («եւ եկեալ անտի կեցի առ Կամսարականդ յամենայն ամբոխսն...»): «Յամենայն ամբոխս» արտայայտութիւնը թոյլ է տալիս ժամանակագրական ճշգրտում կատա-

րել. ինչպէս Մ. Նալբանդեանն է կոահել¹, խօսքը վերաբերում է Վահան Մամիկոնեանի եւ նրան զինակցող Կամսարականների պայքարին, որ ծայր առաւ 80-ական թուականներին եւ աւարտուեց Վահանի մարդպան նշանակամբ (485 թ.): Այս վերջին սահմանը թղթում ուղղակի է յիշուած «մինչեւ յամս նուաճման ձերոյ» (էջ 604): Ուրեմն, շուրջ հինգ տարի պատմիչը Կամսարականների մօտ է եղել, թերեւս իբրեւ դրան երէց, ընդ որում, դատելով «որպէս թէ ձանձրացեալ յաշխատութենէ շփոթիցն» արտայայտութիւնից՝ նա գործուն մասնակցութիւն է ունեցել մղուող պայքարին, այլապէս պատճառաբանութիւնը անհասկանալի կը մնար: Արդէն ճգնութեան առանձնանալու փաստն էլ նախորդող շրջանի եռանդուն գործունէութիւն է ենթադրում:

Ուշագրաւ է, որ Փարպեցին Հայաստանում եղած ճգնարաններից առանձնութեան համար նախընտրում է Սիւնիքը: Սոյն փաստը ինքնին վկայութիւն է, որ Ե դարի 80-90-ական թուականներին Սիւնիքը շարունակում էր հայոց հոգեւոր կարեօրագոյն կենտրոններից մէկը մնալ: Հնարաւոր է, այս շրջանում դեռեւս Սիւնեաց տիրոջ՝ Վասակի վերաբերմամբ մատենագրական միաբերան պարսաւանք չէր մշակուել, որին հետագայում, իբրեւ Մամիկոնեան տոհմի պատմագրող, պիտի միանար եւ ինքը Փարպեցին: Սիւնիքում նա մնում է «ամս երկուս»՝ համակից դառնալով «առ միում հռչակելոյ ի բնակչաց գաւառին յամենայն կրօնաւորութիւնս, որում անում էր Մովսէս» (էջ 605): Այստեղ յիշատանաւորութիւնս, որում անում էր Մովսէս Սիւնեցին հռչակուած է եղել իր մաքրակրօն ճգնակեցութեամբ եւ ոչ մատենագրութեամբ: Մովսէս Սիւնեցու համակեցութեամբ ապրելն ու ամառուայ շոգ օրերին Սիւնեաց հոգեւոր առաջնորդ (եպիսկոպոս) Մուշեղի հետ «ի հովու» գնալը պերճախօս ապացոյց են Փարպեցու ունեցած լայն ճանաչման ու համարումի: Եւ իզուր չէ, որ Վահան Մամիկոնեանին տուած բացատրութեան մէջ իր անմեղական լինելու վկաներ է կոչում Ներսէհ եւ Հրահատ Կամսարականներին, իսկ Սիւնիքում ապրած երկու տարուայ համար՝ «եպիսկոպոս աշխարհին» Մովսէսին:

Մարդպան Վահան Մամիկոնեանը, պատմիչների միաձայն վկայութեամբ (Փարպեցի, Սեբէոս, Ասողիկ), հոգ է տանում նորոգելու եկեղեցիները, աշխուժացնելու սակաւաժողով միաբանութիւնները, երկիրը «բարեշէն առնելու»: Մասնաւոր հոգացողութեան կարիք ունէր Վա-

¹ Ղազար Փարպեցու գրած թուղթը, թարգմանութիւն եւ բացատրութիւնք Մ. Նալբանդեանց, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 84:

ղարչապատի Կաթողիկէն, որի «հիմնարկեալ նորոգում»-ից յետոյ մարդպանը որոնում ու գտնում է Սիւնիքում ճգնող իր խաղակցին՝ Ղազար Փարպեցուն, իսկ «նորա՝ ընկալեալ զբանն մարդպանին, խնամած էր գտեղին» (էջ 600): Հետագայում Փարպեցին անհրաժեշտ է համարել բացատրել հէնց հրաւիրելու շարժառիթը, որ ամենեւին էլ ողորմածութեան թելադրանքով չի եղել, այլ ըստ մարդպանի ու այլոց խոստովանութեան՝ «որում ոչ ոք զոյ փոխանակ»: Ինչպէս երեւում է, Վաղարչապատում վանահայրութեան շրջանում պատմիչը եռանդուն գործունէութիւն է ծաւալել՝ չնկատելով անգամ որոշ կուսակիցների օր-աւուր զօրացող ատելութիւնը: Փարպեցին այդ շրջանի իր կատարածը համեմատութեան մէջ է դնում երկրի քաղաքական կեանքում Վահանի կատարածի հետ, թէեւ հետագայում ավստոսում է, որ ժամանակին չի զգուշացել, չի հրաժարուել այդ հոգաբարձութիւնից:

Իբրեւ ճանաչուած ու մեծարեալ հոգեւորական, նա յաջողում է վանքի ու միաբանութեան շէնութեան համար միջոցներ հայթայթել, հաւանաբար ոչ միայն Մամիկոնեան եղբայրներից: Իր իսկ վկայութեամբ՝ «Արծաթ եւ ոսկի, զոր թէ իմ ի շատ ումեքէ գտեալ էր... զայն ի պէտս տեղւոյդ ծախէի» (625-26): Ընդ որում, բարեխիղճ վանահայրը անհրաժեշտ է համարում հաշուառել՝ «ի գիր արկանել» Կաթողիկէի ինչքը, եկամուտները, նուէրները եւ այլն, այդ թւում եւ իր ունեցածը: Խստակրօն պատմիչը հոգեւոր այդ կենտրոնին է յատկացնում Շիրակից (Կամսարականներից), Սիւնիքից, Արշարունիքից, Աղուանքից, Վիրքից (իմա՝ Գուգարքից) ստացած շնորհումները, իրերը՝ միաժամանակ սատարելով ձեռնհաս բարեգօտեւորների մուտքն այնտեղ:

Թղթից որոշակի երեւում է, որ Փարպեցու շուրջ ծաւալւող բանասարկութիւններին մասնակցողներն իսկ չեն փորձել ժխտել, որ նա «յառաջնումն քաջ համեղս ասէր եւ զօրաւորս» (էջ 636), իսկ ոմանք էլ ավստոսացել են նրա կրած հալածանքների համար՝ նոյնիսկ գտնելով, որ «Ոչ եղեւ իրաւացի հեռանալ առն յաշխարէս, քանզի զարդ էր եղեկեցւոյ» (էջ 636): Յատկապէս ուշագրաւ է թղթում պահպանուած մէկ այլ տեղեկութիւն. պատմիչը դանդատւում է, որ Վաղարչապատից հեռանալիս հալածողները զլացել են նոյնիսկ իր յունարէն գրքերը տալ, «որք կան այդր ընկեցեալ ի կերակուր ցեցոյ» (էջ 628): Հարկաւ, յունարէն գրքեր (ձեռագիր մատեաններ) հաւաքող, «գրադարան կազմող» պատմիչը պիտի հոգար եւ հայերէն մատեանների գոյութիւնն այնտեղ, իսկ այս փաստը առաւել բնութագրական է դարձնում Փարպեցու կեանքի վանահայրութեան շրջանը: Նկատելու է, որ ապագայ պատմիչի դէմ ոտքի ելած մարդիկ յանդիմանում էին եւ վերջինիս երի-

տասարդութիւնը՝ համոզելով մարդպանին, թէ «մանուկ մի հոգաբարձ տեղւոյն չկարէ առնել» (էջ 629): Բայց իրականում այդ տարիներին (487-ից յետոյ) Փարսեցին քառասունն անց էր, իսկ այս իրողութիւնն ապացոյց է, թէ երկրի քաղաքական ու հոգեւոր կենտրոնում վանահայրութիւնը այնքան նշանակալի է դիտուել, որ այն մերժելու համար այլեւայլ բացատրութիւն են տուել. քաղկեդոնական են համարել (Մալխասեանց), մծղնեայ աղանդի մէջ կասկածուող (Աբեղեան), տգիտութեան զոհ (Սարաթեանց), կաթողիկոսական թեկնածու լինելը (Օրմանեան) եւ այլն:

Թղթում պահպանուել են նրան վերագրւող մեղադրանքները, որոնցից, սակայն, դժուար է կտրուկ եզրակացութիւն հանել: Եթէ այդ հալածանքը սահմանափակուէր միայն հոգեւորականների շրջանակով, ապա հազիւ թէ կաթողիկոսը զգուշանար իրեն դիմող հալածականի տեսակցութիւնից՝ «Ես ի տեսանել իսկ չիշխեմ զքեզ առ երկիւղի» (էջ 634): Այստեղ կարելի է թուականների որոշ ճշտում կատարել: Կաթողիկոս Յովհան Մանդակունու (478-490 թթ.) վերաբերալ պատմիչը նախատինքով չէր արտայայտուի, որովհետեւ իր Պատմութեան մէջ նրան կոչում է «հրեշտակակրօն», «երանելի» «սուրբ», «պատուական», հետեւաբար հալածումը եղել է Մանդակունու յաջորդի՝ Բաբգէն Ոթմսեցու օրօք (490-516)՝ 90-ական թուականներից ոչ շատ անց: Փարսեցին, ուրեմն, 485-ին վերադարձել է ու վանահայր նշանակուել, իսկ 3-4 տարի անց հալածանքի ենթարկուել¹:

Փարսեցու դէմ յարուցուած մեղադրանքներից (թուով 6) առաւել սկզբունքային են երկուսը՝ աղանդաւոր համարելը (պատմիչը գիտակցաբար չի կոչում աղանդի անունը) եւ պոռնկութիւնը մեղք չդիտելը: Հայագէտները արդէն դիտել են, որ այստեղ մծղնեաց աղանդին յատուկ որակումներ կան, իսկ որ Հայոց եկեղեցին այդ ուսմունքին առնչուելու շարժառիթներ ունեցել է, պարզ է Շահապիւլանի ժողովի կանոններից: Ե. Տէր-Մինասեանի կարծիքով, մծղնէութեան հետ պէտք է նոյնացնել եւ թղթում յիշատակուած «Հայոց աշխարհի աղանդը»²: Ինչպէս երեւում է, Փարսեցին երկար է փորձել մերժել իրեն ուղղուած մեղադրանքները, նոյնիսկ «սեպուհ մի յականաւոր տոհմէ» միջնորդ է ուղարկել, բայց այլեւս անկարող ու անպաշտպան մնալով, հեռացել է

¹ Այս թուականները վերանայելի կդառնան՝ եթէ հաստատուեն Հ. Ն. Ակինեանի և Հ. Պ. Տէր-Պօղոսեանի առաջարկած գահակութեան տարիները՝ Մանդակունի 480-502/3, Բաբգէն 502/3-507/8 (նե՛ս «Հանդ. ամս.», 1971, թիւ 4-6, էջ 151-155):

² Ե. Տէր-Մինասեան, Միջնադարեան աղանդների ծագման ու զարգացման պատմութիւնից, Երեւան, 1968, էջ 84:

Վաղարշապատից՝ զրկուելով նոյնիսկ իր անձնական իրերից. «զիս հանին մերկ եւ թշնամանօք... Եւ արդ իմով ընչիւք չըջին պճնեալք՝ ծաղր առնելով զիս» (էջ 627, 629): Ամբաստանութիւններն այնքան են դօրացել, որ Փարպեցին մերժելի է դարձել եւ իր սննդակից Վահան Մամիկոնեանի աչքում: Ուստի հարկադրուած է եղել հեռանալ, Ամիդ գնալ, թէեւ այնտեղից էլ չի դադարել հետեւել Հայաստանում իր շուրջ ծաւալւող լուրերին. Թղթում մի քանի անգամ նա յիշեցնում է, թէ մեկնելուց յետոյ այսպէս են ասում եւ այլն: Թէ ե՞րբ է տեղի ունեցել այդ արտաքսում-հեռացումը, դժուար է ասել, սակայն, ինչպէս նկատեցինք, 490 թուականից ոչ շուտ: Բարեբախտաբար, թշնամանքը համատարած չի եղել, իսկ Համադասպ Մամիկոնեանը չի հաւատացել ամբաստանութեանը, ուստի հալածական շրջանում էլ սատարել է Փարպեցուն, նրա «կերակրիչը» եղել: Այս շրջանում պատմիչը պայքար է մղում իր վիրաւորուած արժանապատուութիւնը սրաշտպանելու եւ հակառակորդների միտումնաւորութիւնը ապացուցելու համար: Պատահական չէ, որ մէկ-մէկ թուարկում է մեզանում իրենից առաջ եղած հալածականներին՝ Մովսէս Փիլիսոփային (հաւանաբար, ինչպէս ասուեց, Խորենացին չէ), Խոսրովիկ թարգմանչին (= Մեկնիչ), Աբրահամ եպիսկոպոսին (թարգմանիչ) եւ ուրիշների՝ նրանց կարգը դասուելու սեփական ճակատագիրը գիտակցելով:

Թղթին կից գրութեան անանուն հեղինակի խօսքերից կարելի է եզրակացնել, որ Ամիդում Փարպեցին շատ երկար չի մնացել, այլ «անդ առ ժամանակ մի գտեղի առնոյ» (էջ 600): Հարկաւ, այդ «առ ժամանակ մի»-ն գոնէ մէկ-երկու տարի պիտի նշանակէ: Այստեղից նա «ի ձեռն բարեսէր մեծի եւ պատուական նախարարին՝ Մամիկոնէին Համադասպայ» իր նշանաւոր թուղթն է ուղարկում մարդպանին եւ, հաւանաբար, գրաբերի իսկ միջնորդութեամբ, տունդարձի հրաւիրում («պատճառ իսկ եղեւ նմա այսրէն դարձին»): Աստանդական եղած Փարպեցին վերադառնում է հայրենիք եւ կեանքի վերջին տարիներին (493/95 թուականներից յետոյ) ձեռնարկում է դարի հայ մատենագրութեան վերջին կոթողի՝ «Հայոց պատմութեան» շարագրումը:

Գործիս հանգամանքների մասին Փարպեցին անհրաժեշտ է համարել խօսել Առաջաբանում, ամենեւին չթաքցնելով, որ այդպիսի մեծ գործ գլուխ բերելու համար իրեն «տկար» է նկատում: Սակայն Վահան Մամիկոնեանի, այլ իշխանների ու «սուրբ վարդապետների» յանձնարարութիւնը դժուար կամ անկարելի էր մերժել, ուստի «տուաք զանձինս յայսպիսի գործ կարեւոր, չիշխեցեալ ընդդիմանալ» (էջ 3): Կասկած չհարուցող այս եղելութիւնից կարելի է երկու եզրակացու-

Թէ իր Պատմութիւնը ճանաչողական նշանակութիւն պիտի ունենայ, ինքնատիպ խրատականք լինի գալիք սերնդի համար, «որպէս զի զհոգեւորացն դբարի վարսն լուեալ բաղմութեան ժողովրդոցն՝ նմանողք լինել ցանկասցին մարդիկ եւ պարտեալ եռանդեանն չարութիւնն՝ արդէն եւ անդ դադարեալ ցածնուն: Եւ քաջքն լսելով զայլոց զգործսն յառաջագոյն քաջացելոցն՝ յաւելեալ յանձանց քաջութիւն՝ անուանի յիշատակ թողցեն զկնի իւրեանց անձանց եւ ազգի» (էջ 14):

Փարպեցին հոգում է նաեւ, որ շարագրանքը հասու եւ պարզ լինի, հնարաւորին չափ հետեւողական ու ախորժալուր, ինչպէս իր ժամանակի «յարմարութիւնք բանի»-ն եւ պահանջում, աչքի առաջ ունի «իմաստասէր լսողաց» գոյութիւնը, ուստի ջանում է գործածել «ստուգութիւն անպարսաւ», «չյաւելուլ զանեղեալսն՝ յընդունայն աճմունս բանից, չնուազեցուցանել զեղեալսն», այսինքն՝ անաչառ լինել: Եթէ այս ամէնին գումարենք «կարճակտուր պատմելու», «ողջախոհ զգուշութեամբ» դէպքերն ու իրողութիւնները ներկայացնելու Փարպեցու պատրաստակամութիւնը, ապա կարելի կլինի բացայայտուած համարել պատմագրելու նրա սկզբունքը:

Պատմութեան ուսումնասիրութիւնը վկայում է, որ հեղինակը հիմնականում հարադատ է մնացել առաջադրուած իր դրոյթներին, եթէ իսկ նահանջումներ կան՝ տոհմական որոշ նկատառումով պիտի բացատրել, թէեւ արդարացի չէր լինի, պատուիրատուի փաստից ելնելով, Փարպեցուն զուտ Մամիկոնեան տան պատմիչ համարել:

Նկարագրելիք իրադարձութիւնների նշանակալի մասը արդէն Մամիկոնեաններին էր վերաբերում, եւ Ե դարի կէսերից այդ տան հետ կապուած անցուդարձերը, փաստօրէն, արտացոլում են համահայաստանեան անցքերի գերակշիռ մասը:

Պատմութիւնը, մեզ հասած վիճակում, բաղկացած է երեք դրուագից, որոնք տարբեր աղբիւրագիտական արժէք են ներկայացնում: Ինչպէս Առաջաբանում է խոստացւում, առաջին դրուագն սկսւում է Հայաստանի՝ երկու մասի բաժանմամբ, այնուհետեւ համառօտակի փոխնիփոխ ներկայացուած են Պարսից արքաները, Արշակունեաց թագաւորութեան շարունակութեան պատմութիւնն է արուած՝ յատկապէս մանրամասնելով Վռամշապուհի գահակալութեան տարիների եղելութիւնները: Այս բաժնի կարեւոր հատուածներից է Մաշտոցի եւ Սահակի գործունէութեանը նուիրուածը. թէեւ տառերի զիւտի պատմութիւնը տրւում է բաւականաչափ համառօտ, բայց կան եւ վկայակոչութիւններ, որոնք մասնաւոր ուշադրութեան են արժանի: Ամէնից առաջ խօսքը վերաբերում է Հայոց եկեղեցու ժամասացութեան լեզուին, քա-

րողչական գործունեութեան դժուարութեանը եւ այլ պարագաներին՝ ասորերէնի անհասկանալի լինելու պատճառով: Պատահական չէ, որ Փարպեցին շեշտում է «ժողովրդոցն անշահութիւնը» հէնց «յանլրութենէ լեզուին ասորւոց»՝ աչքի առաջ ունենալով թագաւորութեան բաժանումից յետոյ Արշակունեաց «բնիկ ժառանգութիւն» մնացած արեւելեան (պարսկահայատակ) մասը՝ Այրարատեան գաւառ կենտրոնով:

Պատմիչը անհրաժեշտ չի համարել կրկնել Կորիւնի երկը, ուստի բարեխղճօրէն յղել է «եւ զայս եթէ կամիցի ոք դիտել հաւաստեալ՝ ի Պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան՝ աշակերտի նորին երանելոյն Մաշթոցի կարդացեալ տեղեկասցի զվարս կենաց նորա...» (էջ 38), որտեղից եւ պատմիչն ինքն է «բազում անգամ կարդալով» տեղեկացել: Փարպեցին կրճատել է նոյնիսկ Վրաց ու Աղուանից այբբենների ստեղծմանը վերաբերող տեղեկութիւնը: Այնուամենայնիւ, եղածով էլ գիտնականները հնարաւորութիւն են ստանում երրորդ աղբիւրով հաւաստիանալու Կորիւնի ճշմարտախօս լինելու մէջ (այդ վերաբերում է եւ Խորենացուն), թէեւ գրերի գիւտին վերաբերող աղբիւրների ցանկը այդ երեքով չի աւարտուում (ինքնակայ աղբիւր է Բ. Կիւլեւէրեանի հրատարակած պատառիկը):

Դրուագում, հասկանալի պատճառով, մեծ տեղ է յատկացուած Սահակ Պարթեւին, բայց գրեթէ առանց չափազանցութիւնների: Հետագայում Պատմութեան այս հատուածը համալրուել է որոշ ընդմիջարկութիւններով՝ Սահակի Տեսիլով ու նրա մեկնութեամբ, իսկ ամփոփում է նորից բնագրային հատուածով, ուր խօսւում է Յովսէփ Վայոցձորեցու կաթողիկոս դառնալու մասին՝ «հրամանաւ երանելոյն Մաշտոցի»: Ուրեմն՝ առաջին դրուագն ընդգրկում է 387-437 թուականների դէպքերը՝ ուրուագծային շարադրմամբ, տեղ-տեղ զահակալութիւնների համաժամանակութեան խաթարումով: Պարզ երեւում է, որ Փարպեցին փաստական աղբիւրների մեծ քանակութիւն չի ունեցել՝ երբեմն հարկադրուած լինելով նիւթը ի լրոյ քաղել «ի ստոյգ գիտողաց»: Այս բաժնում նկատելի է Ագաթանգեղոսի Պատմութեան ազդեցութիւնը՝ Գրիգոր Պարթեւի եւ Սահակի մասին խօսելիս, եթէ անգամ ընդունենք Տեսիլի հետսմուտ լինելը:

Երկրորդ դրուագը հիմնականում վերաբերում է Վարդանանց պատերազմի պատմութեանը եւ իբրեւ այդպիսին՝ ոչ միայն լսած, այլ եւ պատմիչի համար մասամբ տեսած իրողութիւններ են: Փարպեցին չի փորձել ըստ ամենայնի վերլուծել այդ պատերազմի (=ապստամբութեան) շարժառիթները, թէեւ առանձին ակնարկումներ ունի Յազկերտի ու Միհրնեսեհի ակնկալութիւնների վերաբերեալ, այլ մեկնաբա-

նութեան ելակէտ է ընտրել նախարարական առանձին տների ներքին փոխյարաբերութիւններն ու նրանց արձագանքը Պարսից արքունիքում: Այս պատճառով էլ դրուագն սկսում է Վասակ Սիւնեցու ու նրա փեսայ Վարազվազանի ընդհարումով, երբ «անօրէնն Վարազվազանը» արհամարհելով մերժում է Գրիգորի հաւատը: Դրուագում ներբողականի հասնող դրուատումներով ու մանրամասնութեամբ է պատմւում Վարդան Մամիկոնեանի ու Ղեւոնդ երէցի մասին: Տեղ-տեղ նոյնիսկ գեղարուեստական - հոգեբանական հնարանքների է դիմում՝ նկարագրական կատարելութեան հասնելու համար: Այդ առումով չափազանց ուշագրաւ է կայացրած վճռի մասին Վարդանին տեղեկացնելու վախճանութիւնը, ընդ որում՝ դրանց թւում են եւ Աղուանքի ու Վրաստանի նախարարները: Դրանով իսկ շեշտուած է Հայոց սպարապետի քաղաքական ազդեցութեան ոլորտը, խիստ համահնչիւն դարաշրջանի հոգեւոր ոլորտին: Նկատելու է, որ Պատմութեան այս մասում Եղիշէի երկից եղած հիմնական տարբերութիւններից մէկը յիշեալ սպարապետի ընդգծումն է: Վարդանանց պատերազմից յետոյ տարիներ Գուգարքում եւ Սիւնիքում ապրած Փարպեցին, հարկաւ, խնդրի այս կողմին վերաբերող առաւել հաւաստի տեղեկութիւններ կունենար: Բայց այս դրուագի ու Եղիշէի Պատմութեան մէջ կան եւ մի շարք այլ փաստական տարբերութիւններ. Եղիշէն եւ Փարպեցին թուարկում են 18 եպիսկոպոս, սակայն, բացի թուարկման յաջորդականութեան տարբերութիւնից, Փարպեցու մօտ չենք գտնում «Եւղաղ եպիսկոպոս Մարդոյաղւոյ», իսկ Եղիշէի մօտ՝ «տէր Զաւէն՝ Մանանդւոյ եպիսկոպոս»: Եթէ Եղիշէն գոհացել է նշելով, թէ կային եւ «պատուական երիցունք ի տեղեաց-տեղեաց», ապա Փարպեցին կոչել է նրանց՝ Ղեւոնդ, Խորէն, Դաւիթ եւ «այլ պատուական երիցունք»: Նկատենք միաժամանակ, որ կան որոշ անունների գրութեան տարբերութիւններ (տարրնթերցումներ). Մեղէտ (Եղ.) - Մելիտէ (Փարպ.), Քասու (Եղ.) - Քասուն (Փարպ.), Եղիշայ (Եղ.) - Եղիշէ (Փարպ.) եւ այլն: Երկու պատմիչն էլ թուարկում են Պարսից մօտ կապեալ նախարարներին, սակայն Եղիշէի մօտ նրանք 35 են, ըստ Փարպեցու՝ 31: Չեն ներկայացուած, օրինակ, Ներսէս եւ Աշոտ Կամսարականները, որոնց մասին Փարպեցին հաւաստի տեղեկութիւններ կունենար, չկայ Զուարէն Անձեւացին եւ այլն: Այսպիսի տարբերութիւններ բաւական շատ կան, թէեւ, Գ. Խալաթեանցի ապացուցումներով, Փարպեցին օգտուած պէտք է լինի Եղիշէից¹: Յիրաւի, այդ վկայող բնագրական հատուածներ կան. յիշեալ

¹Գրիգոր Խալաթեանց, Ղազար Փարպեցի եւ Գործք նորին, Մոսկուա, 1883, էջ 74-90:

նախարարական ցանկում թափուլ եւ Սատոյ Դիմաքսեանց յիշատակումից յետոյ Եղիշէն աւելացնում է. «Երկու եւս այլովք ընկերօք», որ բառացի կրկնուած է Փարպեցու երկում՝ «Երկու եւս այլովք տոհմակցուօք» (էջ 273): Տակաւին ճշգրտելի է՝ մեր պատմիչները միմեանցի՞ց են օգտուում, թէ՞ մեզ անծանօթ երրորդ աղբիւրից, ինչպէս նաեւ՝ որքա՞ն անաղարտ ու նախնական է մեզ հասած Եղիշէն (հնագոյն պատառիկները էական տարբերութիւն են վկայում): Մեր երկու պատմիչն էլ անհրաժեշտ են համարել խօսել Վասակ Սիւնու վերջին օրերի մասին. Եղիշէն այնպիսի սարսափելի տանջանքներ է պատմում, որ նոյնիսկ վարքագրական երկում դժուար է հանդիպել (տես էջ 138-140), մինչդեռ Փարպեցին անհամեմատ զուսպ է, առաւել իրապատում եւ ամենակարեւորը՝ յղում է իր աղբիւրը. «Եւ զայսպիսի բանս հառաչանաց նորա եւ լալոյ մինչեւ յօր մահուան իւրոյ՝ խօսէին ընդ մեզ զայս արդարապատումն սպասաւորք նորին իշխանին Վասակայ» (էջ 272):

Փարպեցու Պատմութեան երկրորդ դրուագը նշուած շրջանի եղելութիւններն ուսումնասիրելու կարեւորագոյն աղբիւրներից մէկն է, իսկ Եղիշէի համադրութեամբ՝ միակը: Հայագիտութեան մէջ իրաւացիօրէն ընդհանրացած կարծիք է, որ Պատմութեան ամենակարեւոր հատուածը երրորդ դրուագն է: Այստեղ նկարագրութիւնն սկսում է Յազկերտի թագաւորութեան 17-րդ տարում (455 թ.) Վրաց Աշուշաբդեշի խնդրանքով՝ «զի շնորհեսցեն նմա զորդիս երանելոյ նահատակին Հմայեկայ...» (էջ 344): Դրուագում հանգամանօրէն պատմւում է նախարարական ընտանիքների ապագայ ճակատագրի, Պերոզի թագաւորութեան տարիների (459-484) անցուղարձերի, Վրաց ու Աղուանից՝ Հայաստանի ու Պարսից արքունիքի հետ ունեցած յարաբերութիւնների, դաւանական շարունակող հալածանքների, Հայաստանի ներքին վիճակի, նախարարական տների փոխհարաբերութեան եւ տասնեակ այլ եղելութիւնների մասին: Սակայն առաւել յանգամանօրէն խօսւում է Վահանանց պատերազմի, նրա նախապատրաստման, շարժառիթների, ելեւիջումների, Վահանի բարձրացման, նրա շուրջը համախմբան ընթացքի ու, վերջապէս, տարած յաղթանակի մասին: Դրուագը վերջանում է Վահան Մամիկոնեանի՝ մարզպան եւ սպարապետ նշանակուելու հրովարտակի ստացմամբ ու այդ առիթով Հայաստանում, յատկապէս Դուինում, ծայր առած տօնախմբութիւնների նկարագրմամբ, Մանդակունի կաթողիկոսի ողջագուրական քարոզ-ճառով (485 թ.):

Առանց Փարպեցու այս դրուագի, մենք խիստ աղօտ պատկերացում կունենայինք Հայաստանի, Աղուանքի, Վրաստանի ու մասամբ՝

Պարսկաստան-Բիւզանդիայի պատմութեան վերաբերեալ՝ 5-րդ դարի երկրորդ կէսի շուրջ երեք տասնամեակի ընթացքում: Ոչ Պրոկոպիոս Կեսարացու, ոչ Ագաթոսի, ոչ էլ «Շուշանիկի վկայաբանութեան» ու «Վրաց պատմութեան» հատուկոր տեղեկութիւնները կկարողանային լրացնել այդ բացը: Նոյնիսկ պատմական աշխարհագրութեան առումով այս յուշարձանին ենք սլարտական մի շարք տեղանունների ու նրանց տեղադրութեան իմացութեան համար: Բայց ամենից կարեւորը Պատմութեան թելադրած ոգին է՝ արտաքին վտանգի առաջ համաձուլել ուժերը, միաբան ու միակամ լինել, չերկնչել բռնութեան առաջ, չզիջել դաւանութիւնը՝ նաեւ երկրի քաղաքական ու տնտեսական շահերը զիջած չլինելու համար, զինակցել բախտակից քաղաքական ու ազգային կազմաւորումների հետ, բայց յուսադիր լինել ներքին կարողութեանը, անգօսնել ուխտադրութիւնը, պարսաւել ազգադաւներին, հաւատալ ու զօրաւիգ լինել ճշմարիտ առաջնորդողներին, մաքառել ու անձնուեր լինել: Փարպեցին, եթէ անգամ անմիջականօրէն չի աշակերտել իր պատմիչ նախորդներին՝ Խորենացուն ու Եղիշէին, այնուամենայնիւ իրականութեան թելադրանքով դէժ ժառանգել է նրանց ոգին: Դրանով իսկ, Փարպեցու Պատմութիւնը շարունակութիւնն է նախորդների ոչ միայն ժամանակագրական, այլ նաեւ նախանձախնդրութեան առումով՝ միանգամայն հաւատալով իր երկի ճանաչողական նշանակութեանը:

Դիտենք, որ Փարպեցու պատմելաոճը պարզ է, շարադրանքը՝ հստակ, յաճախ կենդանի բառութեանի գործածութեամբ, երբեմն ունի նկարագրելու պատկերաւոր եղանակ, բայց ամենակարեւորը՝ հետեւողական է յաջորդականութեան, չափազանցութիւնների սակաւ հակում ունի: Լինելով հմուտ ճարտասան, նա Պատմութեան մէջ հազուադէպ է կիրառում այն՝ ելնելով շարադրանքի բնոյթից ու նպատակադրումից: Մի խօսքով, Ղաղար Փարպեցին 5-րդ դարի դասական մատենագրութեան վերջին եւ արժանաւոր ներկայացուցիչն է, որին վիճակուած էր ամփոփել նախորդների նուաճումները, սեփական պատմելաձեւը պահպանելով:

Դժուար է հաւատալ, թէ մինչեւ 500-ական թուականներն ապրած պատմիչը Պատմութիւնից ու Թղթից բացի ուրիշ գործեր հեղինակած չլինէր, բայց առ այսօր նրա անունով ձեռագրերն այլ երկ չեն աւանդում (չփորձենք շփոթել 5-րդ դարի Ղաղրիկ թարգմանչի հետ): Հազիւ թէ նա չունենար եւ ուրիշ թղթեր, որոնք եթէ յայտնի թղթին զիջէին ճարտասանական առումով, ապա նոյնքան փաստալից սլիտի լինէին: Ի դէպ, մեր մատենագրութիւնը հարուստ է թուղթ-ուղերձներով, նոյնիսկ

այդ կարգի նիւթերի ժողովածուներ կան, բայց Փարսեցու Թուղթը իր ընդգրկմամբ եւ վերլուծական-քննական խորութեամբ թերեւս համեմատուի միայն Ներսէս Լամբրոնացու առ Լեւոն արքան յղածի հետ: Առհասարակ, Փարսեցու պահպանուած երկու գործն էլ դէպքերի երջանիկ բերումով են փրկուել ժամանակի անողոքութիւնից: Հայկական ձեռագրական հաւաքածոներում նրա Պատմութեան ընդամենը 5 օրինակ է յայտնի, ըստին է արտագրուած մէկ մայր օրինակից, ընդ որում, մեզ հասած հնագոյն ձեռագիրը 1672 թուականից է (Երեւանի Մատենադարան, նո. 2639):

Վերջին տարիներս Փարսեցու Պատմութեան համեմատաբար աւելի հին շրջանի յատուածներ բացայայտուեցին Երուսաղէմի եւ Երեւանի մատենադարանների երկու ձեռագրում (Ն. Պողարեան, Պ. Մուրադեան), որոնք ընդօրինակուած են 15-րդ դարի սկզբներին: Հայագիտական ուսումնասիրութիւնների ընթացքում Կ. Իւզրաշեանին եւ տողերիս հեղինակին յաջողուեց երեւան բերել Պատմութեան 10-11-րդ դարերի ընդօրինակութեան առանձին հատակոտոր, որ նշանակալի նպաստ է բերում Փարսեցու երկի սկզբնական սրբագրեալ վիճակը վերականգնելուն:

Անժխտելի իրողութիւն է, որ միւս պատմիչների գործերի պէս, Փարսեցու Պատմութիւնը եւս տասնեակ ու հարիւրաւոր ընդօրինակումների ընթացքում կամայ թէ ակամայ ինչ-ինչ փոփոխութիւնների է ենթարկուել¹, ուստի այդ կարգի նիւթերի երեւան գայր հիմք է նախապատրաստում Պատմութեան ապագայ քննական հրատարակութեան համար:

Ղաղար Փարսեցու Հայոց պատմութիւն ու Թուղթ առ Վահան Մամիկոնեան երկերը 5-րդ դարի հայ մատենագրութեան լաւագոյն յուշարձաններից են:

¹ Տասնեակ սրբագրութիւններ է առաջադրել Հայագէտ Նորայր Բիւղանդացին:

չութեանը¹ : Նրա յօդուածից պարզ դարձաւ, որ Վենետիկում կայ Փարպեցու Պատմութեան երեք ձեռագիր (N 1206, 1088, 129), ընդօրինակուած 1781 (N 1088), 1782 (N 1206) եւ 1784 (N 129) թուականներին : Գրչագրերից երկուսը (NN 1088 եւ 1206) գրուած են Գէւորգ Պալատեցի Տէր-Յովհաննիսեանի ձեռքով, իսկ երրորդը (N 129) ընդօրինակուած է յիշեալ N 1206-ից : Ընդ որում, ըստ Բ. Սարգիսեանի ապացոյցների, վերջինս էլ հէնց հիմք է դարձել վենետիկեան անգրանիկ տպագրութեան : Վենետիկի N 1088 ձեռագիրը ընդօրինակուած է էջմիածնում (1781թ.), մինչ N 1206-ի ընդօրինակման տեղն ու մայր օրինակն անյայտ են, իսկ Բ. Սարգիսեանի եղբակացութեամբ այն կա՛մ N 1088-ից է արտագրուած, կա՛մ «յաւ եւս՝ երկուքն ալ իրարմէ տարբեր գրչագրերէ ընդօրինակուած են»² :

Այսպիսով, իրականութիւնն այն է, որ Փարպեցու Պատմութեան հնագոյն օրինակը, գուցէ եւ առ այսօր եղածների մայր օրինակը, 1672 թուականին ընդօրինակուածն է (Մատենադարան N 2639), որի հիմքում ընկած է եղել մի «հին աւրինակ», նորոգուելուց յետոյ էլ՝ սլակասաւոր³ :

1904 թ. հրատարակութեան աշխատասիրողները իրենց կազմած բնագիրը վերջնական չեն համարել եւ գրել են. «Ընթերցողին մնում է հաւատալ հաւաստիացմանը, մինչեւ որ լոյս տեսնի Փարպեցու մի նոր քննադատական հրատարակութիւն...»⁴ : Յիրաւի, Բ. Սարգիսեանի եւ Ն. Բիւզանդացու գրախօսութիւն-քննութիւնները ցոյց տուին, որ այդ հրատարակութիւնը կամայ թէ ակամայ՝ սխալաշատ է, Բիւզանդացու խօսքով «կատարեալ ուսումնասիրութիւնն կարող էր սրբագրել դայնոսիկ 400 անգամ, միտ դնելով մատենագրին լեզուին յատկութեանց եւ պատմութեան ընթացքին»⁵ : Բայց միաժամանակ նկատելու է, որ «միտ դնելով» անհնար էր հարթել Առաջաբանի ու Ա գրքի բացորոշ ետեւառաջութիւնները, ակներեւ ընդհատումները եւ այլն : Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանցի հրատարակութիւնը կոչուած էր խթանելու ապագա բնագրագիտական աշխատանքը : Եւ իրօք, 30-ական թուականներին այդ դժուարին դործն ստանձնեց Հայր

¹ Բ. Սարգիսեան, Երկու խօսք Ղ. Փարպեցույ նոր տպագրութեան առթիւ, «Բազմավէպ», 1905, էջ 52-62, 129-133.

² Բ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 58:

³ Յիշատակարանը տե՛ս 1904 թ. հրատ. Առաջաբանում, էջ 6:

⁴ Նոյն տեղում, էջ 6:

⁵ Ն. Բիւզանդացի, Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ազատանգեղոսի եւ Ղաղարայ Փարպեցույ, «Յուշարձան», 1911, էջ 173:

Գրիգոր Սարգսեանը: Սկզբնապէս նա անհրաժեշտ համարեց «ազգիս զխոնոց» ծանօթացնել իր նախընտրած սկզբունքներին, իբրև նմոյշ հրասարակելով Փարպեցու Պատմութեան Յառաջաբանը¹: Նրա ծանուցմամբ «մօտալուտ հրատարակութիւնս ամենուն կատարելութիւնները (խօսքը բանասէրների ճշգրտումներին է վերաբերում) պիտի ամփոփէ իր մէջ, ջանալով միշտ, կարելի եղածին չափ՝ ձեռագրաց հեղինակութիւնը վեր սլահել, յարգելով միանգամայն՝ ուր հարկը կը պահանջէ, քաջաբիբ բանասիրաց սրամիտ տեսութիւնները»²: Դատելով Յառաջաբանի բնագրից, գիտնականը իսկապէս ծանր ու մանրախոյզ աշխատանք է կատարել: 1933 թ. լոյս տեսաւ Փարպեցու Պատմութեան (ու Թղթի) նրա կազմած բնագիրը, սակայն առանց տարրնթերցումների ու ծանօթագրութիւնների, քանի որ «ի մեծագիր անդ տպագրին, ընդ հուպ՝ յընթացս տարւոյս երեւելոյ կարգեսցուք մանր գամենայնի ի վայելս բանասիրաց եւ յարածուն փառս Հայրենեաց»³: Ցաւօք, սպասելի այդ հրատարակութեան որեւէ օրինակ մեզ ծանօթ չէ:

Այս է, համառօտակի, Փարպեցու Պատմութեան ձեռագրերի ու հրատարակութիւնների վիճակն առ այսօր⁴: Դժուար է պատկերացնել V դարի երկը մինչեւ 1672 թ. ձեռագրին հասնելը քանի տասնեակ ընդօրինակութիւններ է ունեցել եւ ինչպիսի այլափոխութիւններով, աղաւաղումներով ու «խմբագրում-սրբագրութիւններով» հասել մեզ: Ընդօրինակութիւնների միջոցին առաջացած ակամայ վրիպումներն իսկ բաւական էին, որպէսզի այսօրվա բանասիրութիւնը նախնական բնագիրը վերականգնելու մտահոգութիւնն ունենար: Մինչդեռ նոյնիսկ էջակորուստներ կան:

Այսօր, երբ հիմնականում հաւաքուած եւ գերակշիռ մասով նկարագրուած են մեր գրչագիր մատեանները, Փարպեցու Պատմութեան XVII դարից հին եւ ամբողջական ձեռագիր յայտնաբերելու յոյս գրեթէ չկայ, ուստի մնում է մէկ ելք՝ ձեռագրական հաւաքածոներում երեւան բերել Պատմութիւնից քաղուած հատուածներ (ցանկալի՝ XVII դարին նախորդող շրջանից), պրպտել երբեմնի ամբողջական ձեռագրերից պոկուած-պահպանուած հատակոտորներ (պահպանակ կամ պատառիկ)

¹ Հ. Գրիգոր Սարգսեան, Փարպեցույն Յառաջաբանը յղկուած, «Բազմավէպ», 1932, էջ 444-459:

² Գ. Սարգսեան, նշւ. աշխ., էջ 444:

³ Ղազար Փարպեցույ Պատմութիւն Հայոց..., Վենետիկ 1933, էջ Բ:

⁴ 1907 թուականի «Ղուկասեան մատենաշարով» եղած հրատարակութեանը չանդրադարձանք, որովհետեւ այն վերատպութիւնն է 1904-ի՝ առանց ներածական մասի ու տարրնթերցումների:

գրուել է իբրև Շարակնոց, մինչդեռ իրականում Մանրուսմունք է: Սկսում է՝ Երգ տեառն Ներսիսի ասացեալ՝ զիշերային սլաշտամանց. Յիշեսցուք ի զիշերի զանուն քո, տէ՛ր... (Թ. 1ա)¹: Ձեռագիրն այժմ ունի 139 թերթ, բաղկացած է 12 պրակից, իւրաքանչիւրը 12 թերթ (7-րդ պրակն ունի 8 թերթ): Ձեռագրի առաջին թերթը կարուած է: Մեծութիւն՝ 12,5x10 սմ, գրութիւն՝ միասիւն, տողեր՝ 18-20, տողերը, ինչպէս եւ աջ ու ձախ լուսանցները նշուած են բարակ գծերով, նիւթը՝ լավ որակի բարակ մագաղաթ, հաղուաղէպ նորոգումները՝ թղթով, գրչութիւն՝ բոլորգիր խաղերով: Ունի ճոխ կիսախորաններ, լուսանցազարդեր, զարդագրեր եւ դիւատառեր: Ծաղկողը յաճախ է օգտւում ոսկուց: Կաղմը՝ խնամքով պատրաստուած, դրոշմազարդ, կաշեպատ տախտակ: Պահպանուել է գրչի երկու յիշատակարան:

ա. «Ձստացաւղ տեառն եղանակացս զսուրբ րաբունապետն Եսայի եւ զգրիչս՝ զՊաւղոս աղաչեմ յիշել ի տէր» (էջ 16ա).

բ. «Ձստացաւղ եղանակիս զսուրբ եւ գերանաշնորհ րաբունապետն Եսայի յիշեսցիք ի տէր» (էջ 89ա)²:

Գրչութեան ժամանակ կարելի է համարել XIV դարը, երակետ ունենալով մագաղաթի սլատրաստման որակը, բոլորգրի ինքնատիպութիւնները, մանաւանդ զարդագրերն ու լուսանցազարդերը: Այդ է յուշում եւ ձեռագրի ուղղագրութիւնը: Ամենայն հաւանականութեամբ յիշատակարանի «սուրբ եւ երանաշնորհ րաբունապետ Եսային» նշանաւոր Եսայի Նչեցին է, քանի որ այդ շրջանում նման մեծարանքի արժանի մէկ ուրիշ Եսայի չգիտենք: Եթէ այդ ճիշտ է, ապա ձեռագիրը գրուած պէտք է լինի մինչեւ 1338 թուականը (մինչեւ Նչեցու մահը), Գլաձորում, նրա րաբունապետութեան օրոք (1284-1338 թթ.): Ձեռագրի խնամեալ ու զարդարուն լինելը միանգամայն վայել է ստացողի անուան ու գրչութեան դպրոցի հեղինակութեանը: Եւ իրօք, Գլաձորից

¹ Նոյն խմբագրութեան Մանրուսմունքի նկարագրութիւն տե՛ս Յ. Տաշեան, Յուդակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 499-500 (ձեռ. N 183):

² Կան ետին շրջանի յիշատակագրութիւններ.

ա. «Զվերջին ստացող սուրբ գրոցս զԱտոմս Աղուբենց եւ զճնաւղսն իմ զԿարապետ եւ զԹուխութանկ եւ զեղբայրք իմ եւ զամենայն արեան մերձաւորքն իմ յիշեցէք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ, ամէն» (էջ 139r):

բ. «Ով /// եղբայր սիրուն,

Տնորակս ի ձեռք հաստատուն.

Դու զաւրննաս ի սուրբ հոգւոյն

Եւ հասանես յաւարտ բարոյն» (էջ 139 r):

գ. «Յիշեցէք ի տէր զՄկրտիչըն Թուրաւաղէն եւ Աստուած ողորմի ասացէք, Աստուած ձեզ ողորմեսցէ, ամէն (էջ 139.)»:

յայտնի նշանաւոր գրիչներից մէկը եղել է Պօղոս Կիլիկեցի կամ Ակներցի վարդապետը, Գ. Յովսէփեանի որակմամբ՝ «Շնորհալի գրիչ եւ մանրանկարիչ»¹, որը «յաղագս փափագման իմաստասիրական արհեստից տարաշխարհիկ եղեալ ի կայս եւ ի կոյս արեւու»², բնակութիւն է հաստատում Գլաձորում: Յիշեալ փաստը որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում եւ լրացուցիչ ուսումնասիրութիւն պահանջում ինչպէս գրչագրի բովանդակութեան, նրա կիրառութեան, այնպէս էլ մանրանկարչութեան ու գրչութեան արվեստի առումով³:

Ահա այս ձեռագրում իբրեւ պահպանակ է գործածուած Ղաղար Փարպեցու Պատմութիւնից պոկուած կամ պահպանուած մէկ թերթ, որը միջին մասից կիսուած է եւ երկու պահպանակ-պատառիկի վերածուած, որոնցից իւրաքանչիւրը երկծալ կարուել է ձեռագրին՝ կադմելու ժամանակ: Սկզբի պահպանակի չափերն են 19,3x 12,1սմ, վերելի աջ անկիւնը երեք տողի սահմանում պոկուած է, վերջինը՝ 15,8x12,1 սմ: Ուրեմն, թերթի սկզբնական չափը եղել է աւելի քան 24,2x19,3սմ: Գրութիւնը երկսիւն է, մագաղաթը՝ հաստ ու լաւորակ, ժամանակի ընթացքում դեղնած: Տողերը նշուած են ճնշումով, էջում՝ 21 տող: Գրուած է սեւ թանաքով, տեղ-տեղ այժմ ներկաթափ է ու խունացած: Որոշ տառանիշեր ու բառեր ուշ շրջանում այլ թանաքով թարմացուած են, որը սակայն չի խանգարում հնի տարրորոշմանը: Գրչութիւնը ուղղագիծ երկաթագիր է, միայն որոշ տառաձեւեր մասամբ բոլորգծային են: Ժամանակ՝ X-XI դար:

Ստորեւ տալիս ենք պատառիկի վերձանութիւնը, թերթերի յաջորդականութիւնը նշելով հոռմեական թուանշանով, միաժամանակ այն համեմատութեան մէջ դնելով Փարպեցու Պատմութեան գիտական հրատարակութեան հետ (վերջինս իբրեւ ընդտողեայ տարրնթերցում)⁴:

¹ Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռչեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 177:

² Լ. Խաչիկեան, ԺԴ դարի Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Երեւան, 1950, էջ 99-100, համտ. Լ. Խաչերեան, Մատենագրական տեղեկութիւնները Գլաձորի համալսարանի մասին, ՊԲՀ, 1965, N 4, էջ 200:

³ Անհրաժեշտ է համադրել Պօղոսի ընդօրինակութեամբ հասած միւս ձեռագրերի, ինչպէս եւ նրանցում եղած մանրանկարների հետ:

⁴ Տողատակի սովորական փակագծում, գիտական բնագրի համեմատուող ձեռագրերի ցուցանիշների պահպանումով, անհրաժեշտ ենք համարել վկայակոչել այն ընթերցումները, որոնք մերձ են մեր պատառիկին, բայց հրատարակիչների կողմից նախընտրուած չեն:

ՅԵԱԼՔ¹⁰ ՀԱՆՏՈՒԺԵԼ¹¹ [ԵՏՈ-
 ԻՆ ԶԱՆՁԻՆՄ¹² Ի ՄԱՀ ԵՒ ՊԸ-
 ՍԱԿԵՑԱՆ, ՈՐՈՅ ԳՈՐ-
 ԾՈՅ ԵՎ ՄԵՔ ՔԱՋԱԼԵՐԻՉՔ
 ԵԱՔ ԵՒ ԶԱԻՐԱՑՈՒՑԻՉՔ
 ՈՐՊԷՍ ԶԱՐԴԱՐ ՈՒՍՈՒՑԻ-
 ՉՍ ԵՒ ԶՃՇՄԱՐԻՏ ՎԱՐԴԱ-
 ՊԵՏՄ¹⁵ :

1 նոցունց 2 հանապաղօր 3 [թէ 4 մարդոց] 5 չլսէիք 6 վասն] 7
 բռնութիւնք 8 տան 9 այժմդ իսկ չճանաչէք] այժմ 10/ ||| ցեալք] 11
 հանդուրժեալք 12 + իւրեանց 13 գործոց] 14 էաք 15 եւ դաւրացու-
 ցիչք՝ որպէս դարդար ուսուցիչս եւ դճմարիտ վարդապետս] եւ ար-
 դարեւ ճմարիտ վարդապետք նոցա :

Տ17-13

/ / / / / /

ԲԵՐԱՆ ԳՈՎԵՑԻՆ ԱՄԵ-
 ՆԱՅՆ¹ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՅՔԻՆ
 ՄԵԾԱԶԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՎ
 ԵՒ ՈՒՐԱԽ ԵՂԵՆ² :
 ԵՒ ԼՈՒԵԱԼ ԶՄԵԾԱԲԱՐԲԱՌ¹ Ռ¹
 ԳՈՎՈՒԹԻՒՒՆ ՄՐԲՈՅՆ ԵՒ
 ԶԲԵՐԿՐՈՒՄՆ ԵՐԵՍԱՑ Ն¹ Ռ¹
 ՑԱ ՏԵՍԵԱԼ ԱՆԱԻՐԷՆ
 ԻՇԽԱՆԻՆ³ ՄԻՐՀՆԵՐՍԵՀ⁴
 ԵՒ ԱՅՂ⁵ ԱԻԱԳԱՆԻՈՅՆ⁶, ՈՐ Ն¹ Ս¹
 ՏԵԻՆ⁷ ԱՌԱՋԻ ՆՈՐԱ, Ի ՑԱ-
 [ՍՈՒՄՆ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ԳՐ-]
 ԳԸՌԵԱԼ⁸ ԱՍԷ ՑՆՈ[ՍԱ. ՈՉ]
 ՀՐԱՄԱՅԵՆ ՄԵՉ ԱԻՐ[ԷՆՔՆ]
 ՄԵՐ ՑԱՄՆՈՒԼ ՈՒՄԵՔ [ՄԻ-]
 ՆՉ ՉԵՒ ԻՆՉ ԼՈՒԵԱԼ ԻՑԷ⁹ Ի
 ԲԵՐԱՆՈՅ ՆՈՐԱ: ԱՐԴ, ՈՐ-
 ՊԷՄ¹⁰ ԶՈՒԱՐԹԱՅԵԱԼՍ ԻՄ¹¹
 ՏԵՍԱՔ ԶՉԵՉ ԸՆԴ ԽԱ-
 ԻՍՍ ԱՇԽԱՀԱԿՈՐՈՅՍ¹² ԿՈՐ¹ 13

1 ամենայն | 2 +յոյժ 3 իշխանին] 4 Միհրենբերսեհի 5 այլ 6 +Արեաց
7 նատէին 8 գրգռեալ] եղեալ 9 իցէ] 10 որպէս] 11 իմ] իմն 12 աշխարհ-
հակորուսիդ 13 կոր[ուսիդ]

Բնականաբար, առաջին հերթին մեզ դրադեցնում է այն հարցը, թէ առաջարկուող պատասխիկը ի՞նչ էական ճշգրտւած է կատարուած, բնագրական ի՞նչ աղաւաղութիւններ է բացայայտուած: Փորձենք այդպիսիք փայլակոչել մէկ առ մէկ.

1..«Որ դիւր զեղբայր եւ զծնող որպէս թշնամիս ծախէ, զի՞արդ նա զթշնամմանիչս իւր եւ կամ զերկրպագունս զիտէ պատուել եւ կամ թշնամանել. եւ դարձեալ յորմէ ծնանին՝ զնոյն ուտեն եւ անխնայ: Ոչ պակասէ յամենայն նիւթս հուր...» (ՏՕ₂₅₋₂₈):

Այստեղ բնագրի ակներեւ խաթարում կայ Փարպեցու մօտ խօսվում է կրակի մասին, թուարկելով ու բացայայտելով նրա առաջացման ու «կորնչման» պարագաները, ուստի «ծնանին» եւ «ուտեն» հոգնակիութիւնը միանգամայն աւելորդ է, սխալ, մանաւանդ որ՝ այդ նոյն նախադասութեան մէջ կայ «նա» ենթական (հուրը): Մէկ նախադասութեան սահմաններում, երբ խօսքը հրի հետ կապուած գործողութիւնների մասին է, սպասելի չէր բայական դիմաւոր եւ անդեմ ձևերի զուգահեռ գործածութիւն (պատուել եւ կամ թշնամանել...) զնոյն ուտեն (resp. ուտէ): Աւելի բնականոն կլինէր այս դէպքում եւս ունենալ «ուտել»: Ի վերջոյ, ամենեւին անհասկանալի է «եւ անխնայ»-ն. նման որակումից յետոյ բայական շարունակութիւն էր անհրաժեշտ, փաստօրէն արտայայտութիւնը մնում է կիսաւարտ, թեեւ հրատարակիչները վերջակէտ են դրել¹: Յաջորդ նախադասութեան սկիզբը եւս կասկած է յարուցում. նախ՝ շարադասական առումով նախընտրելի կլինէր ունենալ ոչ թէ «Ոչ պակասէ յամենայն նիւթս հուր...», այլ «Յամենայն նիւթս հուր ոչ պակասէ» կամ թեկուզ՝ «Յամենայն նիւթս ոչ պակասէ հուր», ապա՝ ընդգծուած «ոչ պակասէ»-ն փաստօրէն նախադասութեան ընդհանուր եւ հիմնական իմաստին որեւէ բան չի աւելացնում: Գրաբարեան բնագրերի հմուտ ընթերցողը «Յամենայն նիւթս հուր» կարդալով էլ հասկանում է, որ խօսքը նիւթերի՝ հուր առաջացնելու ընդունակութեան մասին է, հետեւաբար՝ ամեն նիւթի մէջ հուր լինելու: Փարպեցին նախորդ հատուածում արդէն ասում է, թէ «կրակ ի բազում նիւթոց լինի»:

Մեր պատասխիկը ճշգրտում է վերելում թուարկած աղաւաղում-

¹ Տողատակին գրելով «թերեւս ուղղելի զնոյն ուտէ նա անխնայ»:

տարեկապէս հոմանիշ ուրիշ բառ՝ կարգել, յաւրինել (կարգեալք յաւրինին):

4. «Եւ յարձաթոյ զկէսս ըմպելիս կաղմէք, եւ զկէսս անօթս աղտեղութեան կաղմէք» (80³²⁻³³):

Ափսոսանքով պէտք է նշել, որ պատառիկում մէկ սոյ կտրուած ընկած է, ուստի դժուարանում ենք ասել, թէ վկայակոչուած այս նախադասութեան սկզբի բառերը (Եւ յարձաթոյ զկէսս) արդեօ՞ք նոյնութեամբ են եղել այնտեղ: Դիտելով նախորդ օրինակից, դիտական բնագրի «զկէսս»-ի փոխարէն «ի կիսոցն» պիտի ունանայինք: Կարելի է հետեւյալ սպարագան. ինչպէս ասուեց, նոյն նախադասութեան մէջ բառական կրկնութիւնը Փարպեցու ոճին առանձնայատուկ չէ, մինչդեռ այստեղ նորից ունենք «ըմպելիս կաղմէք» եւ «անօթս... կաղմէք»: Պատառիկը ճշտում է ոճական այդ խաթարումը, մի դէպքում տալով «յաւրինէք», միւսում՝ «կաղմէք», որ եւ նախընտրելի է: «Ըմպելիք» բառի փոխարէն (ըմպակ, բաժակ) պատառիկը տալիս է «հանդերձք մեծապայծառք», ուր «հանդերձ» նշանակում է արձաթից պատրաստուած «սպասք, դարդ»¹, այն էլ՝ մեծապայծառ: Նախադասութեան երկրորդ կէսի «անօթս աղտեղութեան» արտայայտութեան դիմաց պատառիկը տալիս է նրանց իրական անուանումը՝ «խաւղամանս եւ խրչնանոցս արարեալ կաղմէք»: Դժուար չէ կռահել, որ Փարպեցու պատմութեան հետագայ խմբագիրները աշխատել են խուսափել նման տհաճ մասնաւորեցումից. ի դէպ, չենք կարող հակառակը պնդել, որովհետեւ «խաւղամանս» եւ «խրչնանոց» բառերը մեր մատենագրութեան մէջ սովորական եւ տարածուն գործածութիւն չունեն, հետեւաբար ուշ շրջանի արտագրութիւն չեն կարող լինել:

Եթէ առաջարկուող սրբագրութիւն-փոփոխութիւնները արտացոլենք գիտական տեքստում, ապա կունենանք. «Եւ [ի միոյն] արձաթոյ հանդերձս մեծապայծառս յաւրինէք, ընդ նմին՝ խաւղամանս եւ խրչնանոցս արարեալ կաղմէք»:

Նկատենք, որ վերականգնման մէջ մէկ հիմնական սրայմանականութիւն կայ՝ ի միոյն: Նախադասութեան երկրորդ կէսի «զկէսս»-ը պատառիկում չկայ, ուրեմն այն չկար եւ սկզբում, ապա «[ընդ ն]մին»-ի գոյութիւնը փաստում է, որ խօսքը նոյն արձաթից պատրաստելու մասին է եւ ոչ՝ կիսից այս, կիսից՝ այլն լինելու, թեեւ բուն միտքը մնում է նոյնը:

5. «Հրով՝ աստուածոցն զարջառս եւ զոչխարս խորովէք եւ եփէք» (80³³⁻³⁴):

¹ Տե՛ս ՆՀԲ, II, 41:

Պատառիկը այս նախադասութեան մէջ աւելացնում է՝ «անուանեալս, ի ձէնջ պատուածս»։ Նկատելու է, որ աւելացուողը երկաթագիր մէկ տող կարող էր կազմել, ուստի, հաւանաբար, վրիպմամբ բաց է թողուել։ Նման դէպքեր շատ են յայտնի, ընդ որում տողը վերաբերում է «արջառ»-ին (դարջառ անուանեալս, ի ձէնջ պատուածս)։

6. «Եւ ջրով՝ զղաշտանս եւ զթարախս եւ զաղբս լուանայք, եւ զկէսն առանձինն եւ կամ խառնեալ ընդ գինի՝ ըմպէք, եւ ոչ զարհուրիք եւ սոսկայք» (80³⁴⁻³⁶)։

Սոյն հատուածում եւս խաթարում կայ. սկզբում խօսում է ջրի մասին ընդհանրապէս եւ ապա՝ կէսի, մինչդեռ համարնոյթ նախորդ վկայակոչութիւններից գիտենք, որ Փարպեցին վիճելիքը ակներեւ դարձնելու համար նախընտրում է ասել՝ կէսից այս եք անում, կէսից՝ այն։ Այստեղ եւս նման հարցադրում էր սպասվում։ Նորայայտ պատառիկը լիովին հաստատում է սրբագրելիքը՝ «ի ջրոց կիսոցն»։ Սակայն շարունակութեան մէջ ինքը պատառիկն է խաթարուած, աւելի ճիշտ՝ ընդօրինակելիս բաց է թողած մեկ տող, ուր պարտադիր պէտք է լինէր «լուանայք» ստորոգեալը եւ «ի կիսոցն» հարաբերողը։ Առայժմ անբացատրելի է մնում «արիւն աչխարաց ա[...]» տողը. եթէ ենթադրենք, որ նախորդ տողի վերջում «զ» նախդիր է եղել, ապա պարզապէս շարունակում է թուարկումը (զղաշտան... զարիւն ոչխարաց), իսկ եթէ ոչ՝ ապա այդ տողը կապուելու է «խառնեալ ընդ գինի ըմպէք» արտայայտութեանը։ Մենք հակուած ենք դէպի առաջին ենթադրութիւնը եւ տողիմաստի վերականգնումը համարում ենք քննելի։ Պատառիկի ընձեռած միւս տարրնթերցումները սկզբնունքային չեն, իսկ ետեւառաջութիւնների առկայութիւնը իմաստային փոփոխութիւն չի բերում։ Թէական ենք համարում եւ «յոտս [մարդկ]ան» վերականգնումը (մարդկանց առաջ, ներկայությամբ), ուստի վաղաժամ է այն գիտական տեքստ մտցնել։ Ակներեւ է, սակայն, որ նախադասութեան այդ մասում էլ որոշակի տարրնթերցումներ են եղել։

Այսպիսով, վկայակոչուած հատուածում ընդամենը մէկ-երկու սրբագրում լրացում է կատարում։

7. «Եւ զի՞ եւս մի ըստ միոջէ հարկաւորիցիմք ասել եւ կամ թուել զանզգայութիւն ձեր» (80³⁶⁻³⁷)։

Գիտական բնագրի հրատարակիչները, ընդունելով Ն. Բիւզանդացու առաջարկած ոճական սրբագրութիւնը՝ «Եւ զի... եւս մի ըստ միոջէ»¹, ձեռագրերի «Եւ զի մի եւս մի ըստ միոջէ» ընթերցումը տողատակ են իջեցրել։ Պատառիկը լիապէս նոյնական է ձեռագրերի հետ։ Հաւաս-

¹ Ն. Բիւզանդացի, Հայկական բառաքննութիւն, Կ. Պոլիս, 1880, էջ 82։

տիանալու համար, թէ տարբերակներից որն է ճիշտ, պէտք է պարզել նախադասութեան բնոյթը. եթէ այն հարցական է, ապա ճիշտը Բիւզանդացու առաջարկած ուղղումն է «Եւ զի՞ եւս...», բայց նոյնքան եւ աւելի տեղին է հրամայական-արգելական ոճի կիրառումը այստեղ՝ «Եւ զի մի՛ եւս մի ըստ միողէ» (իմա՝ եւ որպէսզի մէկ առ մէկ հարկադրուած չլինենք պատմել): Եւ իրօք, Փարպեցին կտրուկ եղանակով վկայակոչում է Վարդանին ու Վարդանանց, որոնք հրաժարուել են այդ խաբէութեանը ծառայելուց: Նման ընկալման դէպքում բնագիրը սրբագրելու անհրաժեշտութիւնը վերանում է, մանաւանդ որ պատառիկը եւս հաստատում է այդ: Ի դէպ, հրատարակիչները ուշադրութիւն չեն դարձրել, որ Բիւզանդացին օգտուել է այն ձեռագրից, ուր «զի» չի եղել, ուստի նրա գոյութիւնը ենթադրող գիտնականը անհրաժեշտ է համարել «զի» սրբագրել այնտեղ առկայ «մի»-ն: Երբ ձեռագրում «զի» կար, սրբագրելիք այլեւս ոչինչ չէր մնում, մանաւանդ որ Ն. Բիւզանդացին բաւական թէական է հարցադրում: Փաստօրէն նրա առաջարկութիւնը ճիշտ է, բայց ոչ փոխանակ «մի»-ի: 1904 թ. հրատարակութեան «զանգագայութիւնը»-ի դիմաց պատառիկն ունի «զանգագայ ապշութիւն յիմարս», որ հետաքրքիր է իբրեւ տարրնթերցանութեան փաստ, թէեւ ըստ իմաստի նոյնական:

8. «զոր արթուն եւ քաջ նահատակն Վարդան եւ նոցունց նմանիքն, որք ոչ կարացեալք այսպիսի խաբէութեան ծառայել՝ բողոքէին ձեզ հանապազօր, թէ սուտ են պաշտամունքդ ձեր եւ անմտաց վարդապետութիւնք եւ չլսէիք» (8037-812):

Նախապէս դիտենք, որ «զոր արթուն եւ քաջ նահատակն» հատուածը պատառիկում չի ներկայացուած՝ տողի անկման հետեւանքով: Թիւրիմացութիւն պէտք է համարել «նոցունց» բառի գոյութիւնը, որովհետեւ մինչեւ այդ վկայակոչուած է «արթուն եւ քաջ նահատակն Վարդան», իսկ խօսքը նրա նմանների մասին է եւ ոչ նրանց նմանների: Պատառիկը պահպանել է ճիշտ ու նախնական ընթերցումը՝ «նորին»: Նախընտրելի ենք համարում նաեւ պատառիկի «հանապազ»-ը, թէեւ դրանով բուն տեքստը որեւէ իմաստային փոփոխութեան չի ենթարկվում (հանապազօր):

Ըստ պատառիկի, «անմտաց»-ից առաջ պէտք է դրուի «մարդոց» (մարդոց անմտաց), որ միտքն աւելի պարզ է դարձնում:

9. «զի բռնութիւնք՝ զիրաւունս ոչ տան ճանաչել, որպէս եւ այժմ» (812-3):

Նախ արձանագրենք, որ «զի»-ի փոխարէն պատառիկում ունենք «վասն զի», իսկ ապա, դատելով ողջ շարադրանքից, «բռնութիւնք»

11. «Եւ ասացեալ զայս ամենայն սրբոյ առն աստուծոյ Ղեւոնդի՝ որպէս ընդ մի բերան գովեցին սուրբ քահանայքն մեծաձայն բարբառով եւ ուրախ եղեն յոյժ» (816-8):

Յայտնի է, որ վաղ միջնադարեան բնագրերի հետագայ փոփոխութեան պատճառներից մէկը լուսանցագրութիւնների ներառումն է բնագրի մէջ: Ներկայ դէպքում գործ ունենք հէնց այդպիսի բացորոշ լուսանցագրութեան հետ՝ «զայս ամենայն սրբոյն առն աստուծոյ Ղեւոնդի», գրուած Ղեւոնդ երէցի խօսքի վերջը շեշտած լինելու համար: Պատառիկը գերծ է այդ ընդմիջարկութիւնից, եւ չպահպանուած մէկ տողում կարող էր տեղաւորուել միայն «Եւ ասացեալ, որպէս ընդ մի»: Այս տողի առկայութիւնը պարզորոշ է դառնում յաջորդ տողի սկսուածքից՝ բերան գովեցին... իբրեւ «ընդ մի բերան»-ի շարունակութեան:

Յաջորդ լրացում-ճշգրտումը սոսկ բառական է եւ ոչ էական. «սուրբ քահանայքն»-ի փոխարեն պատառիկը տալիս է «ամենայն սուրբ քահանայքն», «ուրախ եղեն յոյժ»-ի փոխարեն՝ «ուրախ եղեն»: Սրանք ապացուցելի ճշգրտումներ չեն, քանի որ որեւէ երանգ չեն փոխում, բայց որովհետեւ գտնում ենք գիտական հրատարակութեան հիմք ձեռագրից շուրջ 600-700 տարի առաջ գրուած պատառիկում՝ ընդունելի ու նկատելի են:

12. «Եւ լուեալ զմեծաբարբառ գովութիւն սրբոցն, եւ զբերկրումն երեսաց նոցա տեսեալ անօրէն Միհրներսեհի եւ այլ աւագանւոյն Արեաց, որ նստէին առաջին նորա՝ ի ցասումն բարկութեան եղեալ, ասէ ցնոսա» (818-11):

Սոյն հաստուածում էական փոփոխութիւնների անհրաժեշտութիւն չկայ, իսկ պատառիկի ունեցած տարբերութիւնները աննշան են. այստեղ հրատարակութեան «անօրէն Միհրներսեհի» դիմաց առկայ է «անաւրէն իշխանին Միհրներսեհ» (գրուած է՝ Միրհներսեհ), որ առումով աւելի հարազատ է շարունակութեանը՝ «աւագանւոյն»: Փարպեցին այդպիսի արտայայտութիւններ ուրիշ հաստուածներում էլ ունի, այսպէս՝ «Եւ լուեալ... հաղարապետին Արեաց Միհրներսեհի, եւ զամենայն դրանն աւագանւոյն» (էջ 79²²⁻²⁴):

էական չէ նաեւ «Արեաց» բառի գոյութիւն-չգոյութիւնը. պատառիկը այն չունի: Կարծում ենք, որ ելնելով Փարպեցու մասնաւորեցման սկզբունքից, կարելի է համարել բնագրային, իսկ չգոյութիւնը պատառիկում՝ երբեմնի գրչական վրիպման արդիւնք:

Միակ համեմատաբար կարեւոր տարբերութիւնը «գրգուեալ» թէ «եղեալ» բառերի մէջ է. ո՞րն է ճիշտ՝ «ի ցասումն բարկութեան

տուեալ ի շքեղութեան գործ մատուցանէք, զկէսն՝ ծախեալ թշնամանէք: Որպէ՞ս յաղիւսոց եւ ի քարանց ի կիսոցն ապարանս եւ սենեակս թաղաւորաց շինէք, եւ ի կիսոցն՝ որմ սնատանց եւ դաշտանատանց կարգեալք յաւրինին: Որպէ՞ս ի միոյն արծաթոյ հանդերձս մեծապայծառս յաւրինէք, ընդ նմին՝ խաւղամանս եւ խնանոցս արարեալ կազմէք: Հրով՝ աստուածոցն զոչխարս եւ զարջառ անուանեալս ի ձէնջ պատուածս խորովէք եւ եփէք, ի ջրոց կիսոցն՝ զդաշտանս եւ զթարախս վիրաւորաց եւ զաղբս լուանայք եւ զկէսն՝ առանձինն եւ կամ խառնեալ ընդ զինի ըմպէք յոտս մարդկան, եւ ոչ սոսկայք եւ զարհուրիք:

Եւ զի մի՛ եւս մի ըստ միոջէ հարկաւորիցիմք ասել եւ կամ թուել զանզոյ ապշութիւն յիմարս, զոր արթուն եւ քաջ նահատակն վարդան եւ նորին նմանիքն, որք՝ ոչ կարացեալք այսպիսի խաբէութեան ծառայել, բողոքէին ձեզ հանապաղ, թէ՛ սուտ են պաշտամունքդ ձեր եւ մարդոց անմտաց վարդապետութիւնք: Եւ չսէիք, վասն զի բռնութիւն գիրաւունս ոչ տայ ճանաչել, որպէս եւ այժմդ իսկ չճանաչէք: Յաղագս որոյ ոչ խոստացեալք հանդուրժել՝ ետուն զանձինս ի մահ եւ պսակեցան, որոց գործոց եւ մեք քաջալերիչք էաք եւ դաւրացուցիչք՝ որպէս զարդար ուսուցիչս եւ զճշմարիտ վարդապետս:

Եւ ասացեալ՝ որպէս ընդ մի բերան, գովեցին ամենայն սուրբ քահանայքն մեծաձայն բարբառով եւ ուրախ եղեն: Եւ լուեալ զմեծաբարբառ գովութիւն սրբոցն եւ զբերկրումն երեսաց նոցա տեսեալ անաւրէն իշխանին Միհրնբերսեհ եւ այլ աւագանւոյն Արեաց, որ նստէին առաջի նորա՝ ի ցասումն բարկութեան գրգռեալ, ասէ ցնոսա. «Ոչ հրամայեն մեզ աւրէնքն մեր ցասնուլ ումեք, մինչ չեւ ինչ լուեալ իցէ ի բերանոյ նորա: Արդ՝ զուարթացեալս իմն տեսաք զձեզ ընդ խաւսս աշխարհակորոյս կործանումիդ այդորիկ...»:

Հին պատառիկների ուսումնասիրութիւնը ուշագրաւ է նաեւ հայոց լեզուի պատմութեան առումով: Այստեղ ակնկալելի են բառագանձային նորոյթներ, քերականական ինքնատիպութիւններ, վաղ շրջանի բարբառայնութիւններ եւ այլն: Պարզուով է, որ Փարպեցու Պատմութեան այս ոչ մեծածաւալ պատառիկը նշանակալի հետաքրքրութիւն է ներկայացնում եւ նշուած խնդրի առնչութեամբ: Ուսումնասիրութիւնն այստեղ բացայայտեց այնպիսի նոր բառեր կամ բառաբարդութիւններ, որոնք արձանագրուած չեն մեր առաւել հեղինակաւոր բառարաններում: Ստորեւ վկայակոչենք այդ բառերը:

Մնատուն. ՆՀԲ-ը եւ Մայխասեանցը չունեն, բառիս գոյութիւնն առաջին անգամ է արձանագրուում: Դատելով գործածութեան տեղից՝

որոշակի իմաստ ունեցող տերմին է (ի կիսոցն որմ սնատանց եւ...): Փոխարինում է Փարպեցու գիտական հրատարակութեան մէջ եղած «տուն աղտեղութեան» հասկացողութեանը: Դիտելու է, որ «աղտեղութիւն» բառը գրծածական է այլեւայլ իմաստով՝ աղտ, աղտեղութիւն, արատ, աղբ, անսրբութիւն, պղծութիւն (ՆՀԲ, I 45): Սակայն չենք կարող այս նշանակութիւններից որեւ մեկը դիտել իբրեւ «սին» բառի լիարժէք հոմանիշ, որ նշանակում է՝ սնոտի, ունայն, թափուր, զուր, դատարկ, նանիր: Թէրեւս կարելի է ենթադրել, թէ «սնատուն» գաղափարը ինչ-որ պաշտամունքային կառոյց, տեղի նկատի ունի, որին գերազանցում է «սին» յորջորջել: Բայց նման ենթադրութիւնը տեքստից չի բխում. այստեղ «սնատուն» ու «դաշտանատունը», երկուսն էլ իբրեւ «աղտեղութեան տուն», հակադրուած են «ապարանքներին» ու թագաւորաց կամ իշխանաց «սենեակներին», որոնք նոյն քարով են կառուցւում: Ուրեմն՝ խօսքը նեղ նշանակութիւն ունեցող հաստակաւորութեան մէջ եւ նոյնանում է վրացերէն ԵճՈ-ին (ախտ. հիւանդագրութեան մէջ եւ նոյնանում է վրացերէն ԵճՈ-ին (ախտ. հիւանդագրութեան մէջ)՝ Իհարկե, շատ հարմար կլիներ «սնատունը», «հիւանդատուն», «բորոտանոց» եւ հասկանալ իբրեւ «ախտատուն», «հիւանդատուն», «բորոտանոց» եւ այլն, բայց ինչպէ՞ս կարող էր հայերէնում «սեն»-ը «սն» դառնալ, ինչ վրացերէնում բնականոն է (հմմտ. ԵճՈ):

Դաշտանատուն. Վերոյիշյալ բառարանները այսպիսի բառ չգիտեն, թէեւ նրա բաղադրիչները առանձին-առանձին քաջ յայտնի են. ՆՀԲ-ում (I, 595) եւ այլուր վկայակոչուած է եւ Փարպեցու բնագիրը, ուր այս բառը հանդիպում է երկու անգամ: Ի տարբերութիւն նախորդի, այս բառի իմաստը շատ որոշակի է, եւ նորը ոչ թէ բառիմաստն է, այլ ինքը բառաբարդութիւնը (գիտ. հրատ. մէջ ունեինք՝ տուն դաշտանաց, պատառիկում՝ դաշտանատուն)²:

Խաւդաման. Նախորդի նման բաղադրիչներով յայտնի բառ է, իսկ

¹ Ժորժեանի Յեղոյի ժրգոյցի ԵճՈ-ի մասին, տձ., 1955, թ. 2184, հմմտ. Է. Աճառեան, ՀԱԲ, IV 182: Այստեղ տրուած ստուգաբանութիւնը համոզիչ չէ (այդ մասին գրում է ինքը, Է. Աճառեանը, տե՛ս նրա՝ Հայոց լեզվի պատմութիւն, II, Երեւան, 1951, էջ 225), հմմտ. Ի. Արուստի, Բարթիլի ցիւղերբայի կամ Վրաց պատմութեան հին հայերէն թարգմանութիւնը, «Գիտ. նիւթերի ժողովածու», N 1, 1941, էջ 39:

² Է. Աճառեանը «տուն դաշտանաց»-ը բացատրում է իբրեւ «արտաքնոց» (ՀԱԲ, II, 412), որ սպառիչ չէ:

բառաբարդումը՝ անծանօթ բառարանագիրներին: «Խաւղ»- (խօղ) նոյն «խօխ», «խուխ» բառն է (բարբառներում՝ «խորխ»): «Խաւղ»-ը բառիս ոչ յաճախադէպ գործածուող ձեւն է, դրանով իսկ ուշագամ¹: Ինչպէս արդէն նշել ենք, «խաւղաման» ունեցող նախադասութիւնը Փարպեցու հրատարակութեան մէջ չկայ, իսկ քանի որ այլուստ յայտնի չէ, ապա առ այսօր յայտնի գործածութեան միակ դէպքն է: Դժբախտաբար, մենք հնարաւորութիւն չունենք ճշտելու, թէ ամանիս գոյութիւնը յայտնի² է պահլաւերէնին կամ հնագիտութեանը, իսկապէ՞ս խաւղ//խուխ-ը ծագում է պրսկ. պարսկերէն kulk-ից²:

Խ(ը)լնանոց. Գործածուած է «խաւղաման»-ի հետ նոյն նախադասութեան մէջ. իբրեւ հաւասարապէս աղտեղի, անարժան աման: Առաջին կէսը «խլնիք» կամ «խլինք» բառն է, եղական ձեւը՝ խլին: Բառարաններին «խ(ը)լնանոց» բառն անծանօթ է. «ը» գաղտնավանկի բացումը պայմանաւորուած է այլ ձայնաւորների չգոյութեամբ եւ ոչ տողադարձով կամ գրչութեան հետ կապուած այլ պարագայով:

Այսպիսով, վկայակոչուած չորս բառն էլ անծանօթ է մեր բառարանագրութեանը եւ նորոյթ լեզուի բառադանձում, կամ, ինչպէս լեզուաբանական գրականութեան մէջ է ասուում՝ նորագիւտ բառ:

Այժմ անդրադառնանք բարբառային ձեւերի գործածութեան փաստին: Վաղ շրջանի պատառիկներում, հասկանալի պատճառով, այդպիսիք քիչ են սպասելի, բայց այնուամենայնիւ՝ կան: Արդէն նշել ենք, որ հրապարակի վրայ եղած «Յաղագս որոյ ոչ հանդուրժեալք՝ ետուն զանձինս իւրեանց ի մահ...» (813-4) նախադասութիւնը մեր պատառիկում այլ խմբագրութեամբ է ներկայացուած՝ «[Յաղագս որոյ ոչ խոստա]ցեալք հանտուժել՝ ետուն զանձինս ի մահ...» (I, 1): Թէ ինչու է կայանում շարադրական տարբերութիւնը՝ վերելում նշուեց: Այստեղ ուշագրաւը «հանտուժել» ձեւն է: Բառս վկայուած է V դարի յուշարձաններով՝ իբրեւ «հանդուրժել»³, իսկ Փարպեցու պատառիկում, գրաւոր մատենագրութեան մէջ առաջին անգամ, հանդէս է գալիս դ>տ խլացմամբ եւ «ը»-ի անկմամբ՝ հանտուժել: Արդ, ինչպէ՞ս բացատրել այս փոփոխութիւնը: Կարող է լինել երկու մեկնաբանութիւն. բառիս ստուգաբանութիւնը տակաւին վերջնականապէս ճշգրտուած չէ, իսկ ենթադրութիւնների մէջ կայ եւ այսպիսին՝ «հան մասնիկով դուրժ>դուժ=սանս. դուշ «հանդարտիլ, խաղաղիլ» բառից»⁴: Եթէ այս վարկածը հաստատուէր, ապա «հանտուժել» ձեւը

¹ Հմմտ. Նորայր Բիւզանդացի, Հայկական բառաքննութիւն, էջ 76 (N 72):

² Հմմտ. Հ. Աճառեան, ՀԱԲ, III, 654:

³ Վկայակոչութիւնները տե՛ս ՆՀԲ, II, 45:

⁴ Տե՛ս Հ. Աճառեան, ՀԱԲ, IV, 125:

կարելի էր դիտել իբրև առաւել հնագոյն (արխայիզմ), զուգահեռներ փնտրելով միայն դ> տ խլացման համար: Սակայն, մեր համոզմամբ, այստեղ կարող է առաջադրուել եւ երկրորդ հաւանական վարկած. «կ» ճիւղի բարբառների որոշ խօսուածքներում (Ախալքալաքի) այսօր էլ «հանտուժել» են ասում, ուր օրինաչափ է ինչպէս դ> տ, այնպէս էլ ր> - հնչիւնափոխութիւնը: Սեր մատեանգրութեան պատմութեան մէջ եւ փիմագիր արձանագրութիւններում բարբառային ձեւերի օգտագործման բաղմամբ օրինակներ են յայտնի, որոնց ն. Մառը ВУЛЪГАР-НАЯ ФОРМА էր կոչում: Զարմանալու ոչինչ չկայ, եթէ խորհենք, որ Փարսեցու հնագոյն պատառիկում աւանդուած ենք գտնում հէնց բարբառային հնչումը: Այս նոյն տեքստում առկայ է եւ մէկ այլ բառի ինքնատիպ գրութիւն՝ աշխարհակորոյս-ի փոխարէն աշխահակորոյս: Իհարկէ, դիւրին կլինէր այն ընդունել իբրև զրչի սովորական վրիպում, դրանով իսկ՝ հարցը սպառուած համարել: Բայց տակաւին քննելի է, թէ նորից բարբառային գրութեան հետ գործ չունենք, քանի որ այս օրինակը եղակի չէ: Տիմոթէոս Կուզի «Հակաճառութեան» ձեռագրում եւս բազմիցս հանդիպում ենք «աշխահ» գրութեան¹, որ կրկնուած են գտնում նաեւ Փիլոնի Հերրայեցու «Ճառք-ում»²: Ընդ որում, երկու հեղինակի հայերէն թարգմանութեան ձեռագրերում էլ գրութեան այս ձեւը պատահական չէ, քանի որ երբեմն նոյն էջում ունեն «աշարհ» եւ «աշխահ», աւելին՝ Փիլոնի «Կեանք իմաստնոց» ճառի գրիչը նախապէս գրել է «աշխարհ», իսկ յետոյ դարձրել «աշխահ», հրատարակիչների խօսքով «քերելով զնախ գրել r տառ» (էջ 33, ծան. 1):

Նման գրութիւն յատուկ է «Ճառքի» համեմատուող ձեռագրերից մէկին (տե՛ս էջ 143, ծան. 4):

Ուրեմն, կարելի է փստահ ասել, որ մեր պատառիկի «աշխահակորոյս»-ը պատահական չէ եւ իր զուգահեռն ունի այլ ձեռագրերում: Իսկ քանի որ այդ ձեռագրերը տարբեր ժամանակների ու գրիչների արտադրանք են, ապա բառիս այս ինքնատիպ գրութիւնը բացատրելի է միայն պատմական Հայաստանի որոշ գաւառների բարբառային ինքնատիպութեամբ: Դժբախտաբար, յիշեալ երեք անկախ աղբիւրների ձեռագրի գրչութեան վայրի մասին քիչ գիտենք, այլապէս հարցը ինքնին կմասնաւորանար, պարզելով թե՛ որ բարբառին յատուկ լինելը,

¹ Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Բաղկեղովնի, ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ ծ. վարդապետի եւ Երուանդ վարդապետի, Էջմիածին, 1908, էջ 216₄, 297₁₀, 300₃ եւ այլն (Հմմտ. Հ. Աճառեան, ՀԱԲ, 1, 396):

² Փիլոնի Հերրայեցոյ Ճառք..., Վենետիկ, 1892, էջ 33, 143: Հմմտ. Հ. Աճառեան, անդ.:

թէ՛, մանաւանդ, պատառիկիս որտեղ գրուելու պարագան: Նկատառելի է միայն, որ Կուզի «Հակաճառութեան» ձեռագիրը (այժմ՝ Մատենադարան, N 1958) X-XI դարի մագաղաթեայ հնագոյն գրչագրերից է: Այստեղից բխում է, որ լեզուական իրողութիւնը գրառուած է վաղ շրջանի ձեռագրերում եւ որ, նաեւ ըստ գրչութեան, մեր պատառիկն ու «Հակաճառութեան» ձեռագիրը իրար ժամանակակից են:

Ի վերջոյ, պատառիկներ ուսումնասիրելիս անհրաժեշտ է անդրադառնալ եւ կետադրութեանն ու տրոհութեան նշաններին, քանի որ այդ ամէնը կարող է օգտակար լինել գրչութեան ժամանակի հետ կապուած հարցեր արծարծելիս¹: Փարպեցու պատմութեան այս ոչ մեծ պատառիկը հարուստ է եւ կետադրութեան նշաններով: Ընդամենը մէկ թերթում գործածուած են այնքան նշաններ, որքան երբեմն դժուար է լինում գտնել հին ձեռագրի մի պրակի մէջ: Պարբերութեան վերջում մեկ անգամ գործածուած է երկու կէտանոց վերջակէտ, գրուած վերջին տառից մեկ տառաչափ հեռու եւ տողի վերին եզրին հաւասար. «...ԵՒ ԶՃՇՄԱՐԻՏ ՎԱԴԱ/ՊԵՏՍ : (I 1բ): Նոյն դիրքով հանդիպում է եւ միջակէտի գործածութիւն (ՊԸ/ՍԱԿԵՅԱՆ , I 1բ): Սակայն կան եւ այլ դէպքեր. մէկ կէտը գրւում է նաեւ տողի ստորին եզրին (Ի ՅԱ/ՍՈՒՄՆ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ԳՐ]ԳԸՌԵԱԼ. I 2ա) կամ՝ բուն տողամիջում (ՅԱ/ՄԵՆԱՅՆ ՆԻԻԹՍ ՀՈՒՐ ԱՅԴՊԷՍ ԳԻՏԷՔ. II 1բ, ԽԱԻՂԱՄԱՆՍ ՎԻՐԱԻՈՐԱՅ . II 2ա, ԽԱԲԷՈՒԹԵԱ/ԱՆ ԾԱՌԱՅԵԼ. ԵՒ ՉԼՍԵԻՔ. II 2բ), ընդ որում նախավերջին օրինակի դէպքում միջակէտը քառակուսի տեսք չունի, այլ՝ կլոր: Պատառիկում երեք անգամ ստորակէտ է հանդիպում (ՅԱՄՆՈՒԼ ՈՒՄԵՔ [ՄԻ]/ՆՉ, I 2ա, ԱՄԵՆԱՅՆ ՆԻԻ/ԹՔ, II 1բ, ՆՄԱ/[ՆԻՔՆ], ՈՐՔ II 2բ):

Առողջանութեան նշանի գործածութեան հանդիպում ենք մէկ անգամ, որ երկու տառի տարածութիւն ծածկող նշան է, դատելով տեղից՝ շեշտի կամ բացականչականի նշանակութեամբ, աջից ձախ վայրընթաց թեքութեամբ (ԵՒ ԶԻՄԻ ԵԻՍ ՄԻ ԸՍՏ ՄԻՈՋԷ I 1ա):

Այս նշանների համադրութիւնը այլ պատառիկներում ու հին ձեռագրերում հանդիպող նշանների հետ նկատելիօրէն կօզնի նրանց գործածութեան պատմութիւնն ուսումնասիրելուն, մանաւանդ երբ նկատի առնուեն հայոց հին քերականների աշխատութիւններով աւանդուած սահմանումներն ու բնութագրումները:

¹ Միջնագարեան կետադրութեանը վերաբերող նախնական հաղորդում տե՛ս Յ. Մխիթարեան, Կետադրական նշանները հայերէնում, ՀԱ, 1971, N 4-6, էջ 190-206:

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ՄԻ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱ- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ազգուրաց վարազվաղան սեպուհին հասած «հատուցման արդար դատաստանի» եւ «քաղում ժամանակս չարալլուկ կտտանօք զարկուցեալ» մահուան մասին խօսելիս Ղազար Փարպեցին իր Պատմութեան երկրորդ դրուագի սկզբնամասում ասելիքն ամփոփում է ԶԺ սաղմոսից քաղուած այսպիսի վկայակոչութեամբ. «Որ եւ զմնացորդս ժահահոտ չարահամ խորտկին իւրոյ եթող զաւակին իւրում, ըստ գրեցելումն ի վեշտասաներորդումն սաղմոսին. «Յագեցան կերակրօք, ասէ, - որ միւս եւս թարգման՝ խոզենեաւ ասէ, եւ թողին զմնացուածս տղայոց իւրեանց»¹:

Փարպեցու քաղումը կատարուած է սաղմոսի հայերէն ընկալեալ թարգմանութիւնից եւ ըստ ամենայնի նոյնական է այսօր գիտութեանը յայտնի բնագրին՝ «Յագեցան կերակրովք եւ թողին զմնացուածս տղայոց իւրեանց» (ԺԶ, 14): Բայց պատմիչի դիմումը սաղմոսին ընկալելի չէր լինի, եթէ չունենայինք նրա իսկ նախապէս տուած մեկնութիւնը եւ ասպա՝ բնագրագիտական միջարկումը: Յիրաւի, յագեցան կերակրօք արտայայտութեան մէջ «ժահահոտ չարահամ խորտկի» իմաստ չկայ, ուստի Փարպեցու բնորոշման աղբիւրը միւս եւս թարգմանի «խոզենեաւ» բառն է²:

Հետագայ քննութեան համար կարեւոր է ճշտել, թէ թարգման տերմինի տակ հեղինակն ի՞նչ է հասկանում՝ թարգմանիչ թէ մեկնիչ: Աստուածաշնչում այդ բառը յիշեալ ձեւով մէկ անգամ է գործածուած (ՕՆն. ԽԲ, 23), եւ համապատասխանում է յուն. ἐρμηνευτής, լատ.

¹ Ղազար Փարպեցու Պատմութիւն Հայոց..., աշխատութեամբ Գ. Տէր-Սևրտչեան եւ Ստ. Մայիսասեան, Տփղիս, 1904, էջ 41:

² Սուրբգրական աղբիւրից քաղում կատարելու Փարպեցու այս օրինակը բարեկանական աղբիւրի տարբերակը, որի հիմամբ էլ մեկնաբանում է բուն վկայութիւնը, բայց կանոնական դիտուած բնագրին հարադատ մնալու համար բերում է եւ այդ հատուածը: Այստեղից հետեւում է, թէ սուրբգրական յուշարձանների քննութեան հրատարակութեան ժամանակ առանձնակի վստահութեամբ պիտի դիմել Փարպեցու քաղումներին:

interpretes, վրաց. տარցճանո եւ, այնուամենայնիւ, դժուար է դատարարել նրանց թարգմանիչ եւ մեկնիչ իմաստները:

Վերստին դիմելով Փարպեցուն, պիտի նկատենք, որ միւս եւս թարգման ասելով պատմիչը նոյնական որակում է տալիս իր բերած երկու տարբերակներին, իսկ դրանք քաղուած են սաղմոսի թարգմանութիւնից եւ ոչ մեկնութիւնից: Հետեւաբար՝ ընդգծուած արտայայտութիւնը պիտի նշանակի «իսկ միւս թարգմանիչը», «իսկ մէկ այլ թարգմանիչ»¹: Կորիւնը թարգման է կոչում Ջաղային. «Գտեալ դայր մի թարգման վրացերէն լեզուին»²:

Այս ամենից հետեւում է, թէ Ղաղար Փարպեցին ճանաչել ու բաղադրել է սաղմոսի տարրնթերցումաւոր երկու թարգմանութիւն: Սոյն պարագան հայագիտութեան մէջ աննկատ չի մնացել: Ի թիւս մինչեւ գրերի գիւտը սաղմոսները գէթ բերանացի թարգմանած լինելու կռուանների՝ բանասէրները յիշատակում են եւ այս փաստը³: Սակայն նրանք ի մասնաւորի բնագրագիտական քննութեան չեն ենթարկել ժՁ սաղմոսի համապատասխան տունը, մինչդեռ այլազեզու խմբագրութիւնների համեմատութիւնից այլ իրողութիւն է բացայայտուում: Նախ կատարենք այդ հանդիպադրումը.

Biblia Hebraica (Ps. XVII, 14)

...wušəponəka təmalle, bitnam jišbə'u **bānim** wəhinnihu jitrām lə'ōlalehem

[Միք. Չամչեանի թարգմանութեամբ՝ «յագեալ (են) որդիք (նոցա) եւ թողին զմնացուածս իւրեանց տղայոց իւրեանց»⁴ :]

¹ Թարգման բառը պատմիչը երկրորդ անգամ գործածում է իր թղթում՝ վաղամեռիկ Խոսրովիկի յանդէպ եղած ընդդիմութիւնը մատնացուցելիս. «Ահա՛, ուր գայ միւս եւս թարգմանն» (նոյն տեղում, էջ 202): Այստեղ էլ բառը միեւնոյն կապակցութեան մէջ է հանդէս գալիս («միւս եւս թարգման») եւ անշուշտ թարգմանիչ է նշանակում. Խոսրովիկին Սահակն ու Մաշտոցն էին ուղարկել թարգմանութեան արուեստի մէջ հմտանալու, եւ աղբիւրները նրան են յատկացնում Բարսեղ Կեսարացու երկու կանոնախմբերի թարգմանութիւնը: Մանրամասն տե՛ս Կ. Մ. Մուրադեան, Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրութեան մէջ, Երեւան, 1976, էջ 171-174: Եզրի յատուկ քննութիւն տես է. Պիվազեան, Մովսէս Խորենացու «Պատմութեան» մի կարեւոր հատուածի թարգմանութեան մասին. ՊԲՀ, 1963, N 2, էջ 266-268:

² Կորիւն, Վարք Մաշտոցի, Երեւան, 1941, էջ 62:

³ Հարցին վերաբերող գրականութեան մատենագիտութիւնը, փաստարկներն ու նրանց դէմ եղած առարկութիւնները տե՛ս Լ. Յ. Տէր-Պետրոսեան, Սաղմոսների հայերէն թարգմանութիւնը եւ նրա նախօրինակը, «էջմիածնի», 1975, N 9, էջ 55-56:

⁴ Մեկնութիւն Սաղմոսաց, յօրինեալ ի հ. Միքայէլ վարդ. Չամչեան, Վենետիկ, 1823, հատ. Ա, էջ 135:

Pešitta (Ps. XVII, 14)

...nesb' ūn bnāye wa-nesbqum šarka la-bnayhōn

[յազենան որդիք եւ թողուն զմնացուածս որդւոց իւրեանց]

Septuaginta (Ps. XVI4 14) .

...ἐχορτάσθησαν υἱὼν (var. υειων - BS) καὶ αφηκαν τὰ κατάλοιπα τοῖς νηπίοις αὐτῶν

Vulgata (Ps. XVI, 14)

...saturati sunt **filiis** et dimiserunt reliquas suas parvulis suis

Վրացական խմբագրութիւն (Մ. Շանիձէի հրատ.)

...განძღეს ჭამადითა მათითა, დაუტევეს ნეშტო მათი ყრმათა მათ.

Բ խմբ. განძღეს] განძղენ

Գ խմբ. მათითა] და
მათი]

Հայկական խմբագրութիւն (1805 թ.)

...յազեցան կերակրովք եւ թողին զմնացուածս տղայոց իւրեանց:

Առկոչուած խմբագրութիւնների մէջ Հայկականն ու վրացականն ունեն նոյնական ընթերցում եւ հաւասարապէս տարբերում են միւսներից:

Այդ հեռացումը անկարելի է բացատրել հայերէնում եւ վրացերէնում գրչական, բառապատճենման, նմանակութեան կամ մէկ այլ ճանապարհով տեղի ունեցած խաթարում-աղճատումով եւ եթէ այդճանապարհով տեղի ունեցած խաթարում-աղճատումով եւ եթէ այդպիսին վնէր՝ չէր վրիպի այդ խմբագրութիւնները անկախաբար ու զատ-զատ յունական նախօրինակի հետ համեմատող-սրբագրողների ուղղութիւնից: Յիրաւի, կերակուր նշանակութեամբ յունարէնում ունենք βρῶμα (ՀԸ, 2) (Հմմտ. նաեւ βρώσιμος, որ հայ թարգմանիչը շփոթել է βρῶμος բառի հետ եւ թարգմանել գէշ¹: Որդիք եւ կերակուր տարրնթերցումները անմիջական որեւէ աղերս չունեն, ուստի նորից

¹ Տե՛ս Լ. Յ. Տէր-Պետրոսեան, նշւ. աշխ., «Էջմիածին», 1975, N 1, էջ 45-46: Սխալը նկատել է Մովսէս Խորենացին եւ իր քաղած հատուածում աւելացրել է կերակուր, բայց՝ «հաւատարիմ մնալով Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան հեղինակութեանը, պահպանել է նաեւ գէշ բառը» (անդ):

պիտի վերադառնալ Փարպեցու վկայութեանը¹: Նրա յիշատակած «միւս եւս թարգմանի» խոզենեալ (ուղղ. խոզենի, իմա՛ խոզի միս, խոզակերպ) ընթերցումը կայ եւ յունական ձեռագրերում: 862թ. սաղմոսի մեզ հետաքրքրող արտայայտութիւնը Պ. Ուսպենսկին այսպէս է ծանօթագրել. «ἐχορτάσθησαν ὕῳν. Այսպէս է կարգացում Աթոսում իմ տեսած լաւագոյն ձեռագրերում»²: Պարզ է այլեւս, թէ խոզենեալ ընթերցումը գայիս է յունարէն նախօրինակից, ուր ὕῳν է եղել:

Այս պարագան ինքնին նշանակում է, թէ հայկական ու վրացական կանոնական խմբագրութիւնների կերակուր-ჭამადო-ն յունարէն նախօրինակից անկախ է գոյացել, ինչպէս որ անկախ է եւ այլ լեզուներով եղած խմբագրութիւններից³: Ժամանակագրական առումով նախնականը, անշուշտ, միւս եւս թարգմանի ընձեռած խոզենեալ-ն է, քանի որ հետագա սրբագրութիւն-խմբագրութիւնների ժամանակ «ախորժալուր» դարձնելու համար ա՛յն կարող էր կերակուր դառնալ, եւ ոչ կերակուրը՝ խոզենի: Ի դէպ, խոզենի տերմինը մէկ անգամ էլ գործածուած է «Մարգարեութիւն Եսայեայ» գրքում (ԿԵ, 4) - «որք ուտէին զխոզենին եւ զարգանակ զոհիցն». ընդգծուած հատուածի դիմաց յունարէնում ունենք՝ οἱ ἔσθοντες κρέα ὕεια (var. κρεα υ(ε)ια - SAC] κρεας υειον-BL, κρεα υιωv - Q), որ նշանակում է խոզի միս (= խոզենի): Հայերէն նախօրինակի կնիքը պահած Օշկի Աստուածաշնչում համապատասխանօրէն առկայ է րոմբլնի խոզեն Գորիսնա, իսկ Սինայի օրինակում ըստ յունարէնի է՝ րոմբլնի խոզեն Եօրիսնա⁴:

¹ Միք. Չամչեանը բնագրի ստուգութեանը չի անդրադարձել, ուստի մեկնութեան ժամանակ ելել է կերակուր ընթերցումից (նշւ. աշխ., հատ. Բ. Վենետիկ, 1815, էջ 497):

² "Труды Киевской Духовной академии", 1869, апрель, с. 55, համատ. միջոցառում Պանոսյ, օրհանգիստի Վոցնիս ձեռնարկի յարտադրութիւնը, տձ., 1979, թ. 212. Սաղմոսների հայերէն թարգմանութիւնը ասորական եւ յունական խմբագրութիւնների համագրութեամբ ուսումնասիրած պրոֆ. Ա. Բաումշտարկի հետապից աշխատութեան մէջ մեզ հետաքրքրող արտայայտութեանը վերաբերող որեւէ դիտարկում չգտանք (տե՛ս A. Baumstark, Der armenische Psaltertext, sein Verhältnis zum syrischen der Pešitta und seine Bedeutung für die LXX-Forschung, "Oriens Christianus", Neue serie, Bd. 12-14, Leipzig, 1925, S. 180-213; Dritte Serie, Bd. 1, 1927, S. 146-169, Bd.2, S. 319-333.)

³ խոզենի բառի ստուգաբանական քննութիւնը տե՛ս օշ. օրհանգիստի, միջոցառում Պանոսյ, օրհանգիստի Վոցնիս ձեռնարկի յարտադրութիւնը, տձ., 1967, թ. 165-170.

⁴ Տե՛ս օ. ձեռնարկ, յարտադրութիւնը, տձ., 1973, թ. 463. Սպասելի էր, թէ Սաղմոսի «խոզենին» «կերակուր» սրբագրողը նոյն նկատառումներով այստեղ էլ պիտի փոփոխէր, բայց խոզի միս եւ զոհի արգանակ ուտելը կասուած է

Տրամաբանօրէն, իհարկէ, արդարացի է ենթադրել, թէ շուրջ հարիւր տարի հայոց պաշտօնական եկեղեցին կղժուարանար ժամերգութիւն կարգաւորել՝ առանց սաղմոսների այսպէս կոչուած բանաւոր թարգմանութեան: Թւում է, թէ Փոքր Հայքի հովուապետներից պահանջուող հայոց լեզուի իմացութիւնը եւս թելադրուած պիտի լինէր արարողութեան ժամանակ այդ լեզուին դիմելու անհրաժեշտութիւնից¹: Բայց եթէ գէթ սաղմոսերգութիւնը հայերէն լինէր, ապա Խորենացին ու Փարպեցին չէին խօսի յունարէն կամ ասորերէն կատարուող արարողութեան մասին²: Յամենայն դէպս՝ Փարպեցու յիշատակած տարբեր թարգմանութիւնը, ինչպէս համոզուեցինք, բանաւոր աղբիւրից չի գալիս: Հէնց այս փաստը, որ V դարի վերջերին, երբ Փարպեցու Պատմութիւնն էր շարադրւում, ընդհանուր ճանաչում գտած խմբագրութեան կողքին կար ու գոյատեւում էր եւ այլ թարգմանութիւն, ինքնին վկայում է, թէ գործ ունենք գրաւոր աւանդոյթի հետ: Այս դրոյթը առաւել հաստատուն է դառնում վրաց մատենագրութեան մէջ պահպանուած փաստերի ու հաղորդումների օգնութեամբ: Ինչպէս արդէն տեսանք, վրաց հնագոյն (նախասուրբասարեցեան) խմբագրութիւններն ու նոյնիսկ սուրբասարեցեանը (XI դ.) պահպանել են հայերէնի կերակուր ընթերցումը (ჭამადო) որը, անշուշտ, սկզբնապէս հայերէնի միջնորդաւորմամբ թարգմանուած լինելու վկայութիւն է³: Գէորգի Սուրբասարեցին վրացական պրոտոփուլգատան (B խմբ.) յունարէնին բաղդատելիս, ի նորո խմբագրել կամ թարգմանել է բնագիրը՝ նոյնականացնելով Եօթանասնիցին, բայց եւ վրիպմամբ թէ վրաց գրաւոր աւանդոյթին տուրք տալով, առանց ճշգրտման-սրբագրման թողել կերակուր խամածո-ն: Սակայն առկայ ABC խմբագրութիւններից անկախ վրացերէն լեզուով գոյութիւն է ունեցել եւ մի այնպիսի թարգմանութիւն-խմբագրութիւն, ուր խամածո-ի (կերակուր) փոխարէն եղել է լոռոնսո (խողենի): Սաղմոսների հնագոյն վրացական թարգմանութեան տերմինների եւ բնագրական առանձնայատկութիւնների պատմամշակութային նշանակութեան ուսումնասիրութեան կապակցութեամբ ակադ. Կ. Կեկելիձէն անդրադարձել է եւ ԺԶ սաղմոսի մեզ դբա-

«ամենայն անօթք նոցա պղծեալ էին» եզրակացութեան հետ, ուստի «մեղմացնելու» անհրաժեշտութիւն չի եղել:

¹ Հմմտ. Կ. Մուրադեան, նշլ. աշխ., էջ 110:

² Մ. Շանիձէն հիմնաւորապէս ապացուցեց, որ վրացական A եւ B տարբերակների նախօրինակը (արխետիպը) հայերէնից է թարգմանուած, Յ. Պճնոժք, նշլ. աշխ., էջ 153-155):

³ Ժ. ԿՅԿՅԼՈՅԺ, յԾՕ՞ՅԸՅԺԾԻ..., Ծ. III, տձ., 1955, թՅ. 125-126.

ղեցնող տանը եւ միջնարդարեան ուշագրաւ մեկնութիւն հրապարակել¹: Պարզուամ է, յիշեալ ընթերցումը գրաւել է վրաց մեկնիչների ուշագրութիւնը, որոնք եւ առաջադրել են բնագրագիտական խիստ պատճառաբանուած լուծում: 1035 թ. Շատրերդում ընդօրինակուած վրացական A-135 ձեռագրում², Բարսեղ Կեսարացու «Սաղմոսաց մեկնութիւնից» յետոյ ընդօրինակուած է վրաց Անանուն մեկնիչի գործը, ուր մեկնաբանուած է եւ արծարծուող տունը (էջ 217^v): Այստեղ սաղմոսի բնագիրը տրուած է նախասուրբսարեցեան խմբագրութեամբ եւ ապա յետեւում է բացատրութիւնը. «Ոչ ինչպէս ոմանք են կարծում, թէ սաղմսերգուն այստեղ խողենի ուտելիքն է յիշատակում..., այլ որդու մասին է խօսում. պարզորոշ այդպէս գրուած գտանք եւ եբրայերէնում, քանի որ եբրայական սաղմոսում բանին բառն է գրուած, որ որդի է թարգմանուած»: Այնուհետեւ մեկնիչը տալիս է բնագրագիտական իր բացատրութիւնը. «յունարէն լեզուամ խող անունը [հնչում է այնպէս], ինչպէս մարդս որդի ասի. շիոթում է ակնկալելի, քանի որ խողին լիոն են ասում, եւ երբ մեկը [ուզենայ] որդիք ասել՝ դարձեալ լիոն [սլիտի] ասի: Արդ պատճառով էլ թէ հայոց, թէ վրաց բազում թարգմաններից ոմանք խողենի են ասել, ոմանց էլ այդ բառն իբրեւ անգտաների է թուացել եւ, փոխարինող բառ (տառացի՝ վերաբառ -Պ. Մ.) նկատելով (բառացի՝ ձայնել), կերակուր են թարգմանել ե՛ւ հայոց մէջ, ե՛ւ վրաց: Իսկ մենք Աստուծո ողորմածութեամբ սուրբ Երուսաղէմի եկեղեցում արեղա եղած, չորս ամբողջական գրքով Սաղմոսները մեկնած Իսուիքոս Երանելու մեկնութեան գրքի մէջ այնպիսի տեսքով գտանք, ինչպէս որ գրեցինք երկիւղածութեամբ»³: Թէ ո՞վ է եղել եւ ե՞րբ է ապրել այս մեկնութեան վրացի հեղինակը՝ յայտնի չէ, բայց արժանոյնը պիտի հատուցել նրա պրպտելու կարողութեանը եւ բանասիրական հմտութեանը: Փարպեցու տեղեկութիւնից այլեւս գիտենք, որ մեզանում նման թարգմանութիւն իրօք եղել է: Անանուն մեկնիչի խօսքերից պարզ երեւում է, որ խողենի բառը գործածող թարգմանութիւն գոյութիւն է ունեցել եւ վրաց մատենագրութեան մէջ: Յամենայն դէպս՝ «...թէ հայոց, թէ վրաց բազում թարգմաններից ոմանք խողենի

¹ Նկարագրութիւնը տե՛ս «Ենթոյնը եղեմա՛յրտա յը՛յրոցլո՛ծա», A-2, տձ., 1976, թթ. 154-158.

² Ե. ԵՅՅՅՅՅՅՅ, նչւ. աշխ., էջ 126:

³ Գէորգի Սուրբսարեցու խմբագրութիւնը մեկնութեան բնագիր ծառայեցնող Եփրեմ Կրտսերը անհրաժեշտ է նկատել Յամաձո-ն փոխարինել Յոցլոյծո-ով («որդոցով») (տե՛ս, Թ. Մանուկ, նչւ. աշխ., էջ 210): Այս դէպքում ճշգրտումը կատարուած է ըստ Յոթանասնիցի ընթերցման, ելնելով Աթանասի ու Կիւրէղի մեկնութիւններից:

են ասել» տեղեկութիւնը ուղղակիօրէն այդ է ապացուցում¹: Այդ թարգմանութեան կամ խմբագրութեան արձագանքը դիտելի է նոյնիսկ XI դարի երկրորդ կէսի «Քաղուածոյ մեկնութիւն» կոչուող երկում: Նրա հեղինակը մեկնելիք հատուածը քաղում է դարձեալ G խմբագրութիւնից, բայց անհրաժեշտ է նկատում մեկնել ճանձղցն լոճոտօճան («յագեցան խոզենեալ») արտայայտութիւնը: Նա, ինչպէս երեւում է, ծանօթ է վրացական նախորդ մեկնութեանը, ուստի փորձում է պատճառաբանել միայն, թէ խոզենին հրեաների համար անսուրբ է եւ լոճոտօճան-ի տակ (խոզենի) անսրբութեամբ յագենալ պիտի հասկանալ («լոճոտօճան յիս յրօճոճոջօճօ ճամօհօհօ: ճանձղցն յրօճօճօջօճօ ճոտօ...»)²:

Այս վկայութիւնները կարեւոր մի հարց են առաջադրում՝ ե՞րբ պիտի թարգմանուած լինէր սաղմոսների վրացական այն խմբագրութիւնը, ուր, Փարպեցու քաղումին համապատասխան, կերակուրի փոխարեն խոզենի է եղել, որը եւ հետագայ մեկնութիւն-բացատրութիւնների առիթ է դարձել: Խնդրի ժամնակագրութիւնը ստուգագրելու համար դարձեալ պիտի դիմենք Աստուածաշնչի, մասնաւորապէս՝ սաղմոսների, հայերէն թարգմանութեան պատմութեանը: Կորիւնի եւ Խորենացու տեղեկութիւնների, ինչպէս նաեւ աստուածաշնչական տարբեր գրքերի մասնագիտական քննութեան շնորհիւ այժմ ճշգրտուած է, բեր գրքերի մասնագիտական քննութեան շնորհիւ այժմ ճշգրտուած է, որ հայոց այսօրուայ ընկալեալ բնագիրը Սահակի ձեռքով ու գլխաւորութեամբ վերջնական թարգմանութեան-խմբագրման է ենթարկուել Եփեսոսի տիեզերական ժողովից յետոյ (431 թ.), բայց մինչեւ Սահակի մահը (439)³: Այդ թուականներից յետոյ հայերէնի միջնորդաւորմամբ կատարուած վրացական թարգմանութիւնը այլեւս «խոզենի»-ի փոխարեն կերակուր պիտի ունենար, ինչպէս որ իրօք էլ ունեն գիտութեանը յայտնի հնագոյն վրացական խմբագրութիւնները: Փարպեցու յիշատակած «միւս եւս թարգմանի» խոզենեալը վերաբերում է նախնախնայական «միւս եւս թարգմանի» (Կորիւն) թարգմանութե-

¹ Բնագիրը տե՛ս Ժ. յՅՅՅՅՅՅՅ, նշւ. աշխ., էջ 125: A-14 ձեռագրից կատարուած այս քաղումը (էջ 21r) Կ. Կեկելիձէն վերագրել է Եփրեմ Կրտսերին, մինչդեռ, ըստ Մ. Շանիձէի, «Քաղուածո մեկնութիւնից» է (նշւ. աշխ., էջ 209, 212):

² Աղբիւրներն ու գրականութիւնը տե՛ս Յ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, Բ, էջ 311-358:

³ Դատելով հայկական եւ վրացական խմբագրութիւնները բաղդատութեամբ գնահատելու եւ այդ կապակցութեամբ երկմտանք ու վէճ չյարուցելու փաստից, կարելի է ենթադրել, թէ ի դէմս Անանուն մեկնիչի գործ ունենք եթէ ոչ հայ-վրացական եկեղեցական միասնութեան շրջանի, ապա մշակութային մերձութեան շրջանից ոչ շատ ուշ սպրած մատենագրի հետ:

անը, որ կատարուել էր գրերի գիւտից յետոյ (405/6 թ., բայց մինչեւ Եփեսոսի ժողովը, մինչեւ «զմի անգամ թարգմանեալն փութանակի» (Խորենացի) դարձեալ թարգմանելը: Այստեղից հետեւում է, թէ սաղմոսների առաջին վրացերէն թարգմանութիւնը, ուր «խողենի» ընթերցում է եղել, կատարուած պիտի լինէր նախեփեսոսեան հայերէն խմբագրութեան վրայից՝ մինչեւ սահակեան կրկին թարգմանութիւնը: Դրանից յետոյ վրացերէն թարգմանութեան խմբագրման երկրորդ շրջանն էր սկսուելու՝ դարձեալ հայերէնի միջնորդաւորմամբ, բայց արդէն Եօթանասնիցին համապատասխանեցուած խմբագրութեամբ: Ինչ խօսք, հայկական եւ վրացական այս նախնական թարգմանութիւնները, նոյնիսկ ընկալեալ բնագրի առկայութեան պայմաններում, դեռ երկար պիտի շարունակէին իրենց գոյութիւնը, մինչեւ որ եղած գրչագրերը աստիճանաբար հնանային ու դուրս գային գործածութիւնից: Եւ յիրաւի, այդ թարգմանութիւնը V դարի վերջերին կար Ղազար Փարպեցու ձեռքի տակ, բայց կար եւ աւելի ուշ՝ թէ՛ Անանուն վրաց մեկնիչի օրոք (VII-VIII դարեր), երբ վերջինս փորձում էր բնագրագիտական բացատրութիւն տալ «խողենի» ընթերցմանը, թե՛ XI դարի երկրորդ կէսին, երբ «Քաղուածոյ մեկնութիւնն» էր կազմուած: Թովմայ Արծրունին եւս գիտէ «զսաղմոսն զհին թրգմանեալսն վարդապետացն Հայոց, զոր հանապազ ի բերան ունին»¹:

Ի վերջոյ, «փութանակի» թարգմանութեան ասորական նախօրինակ ունենալը եւ ԺԶ սաղմոսի մեզ հետաքրքրող տան խողենի-ՋՌՃՈՆՈ ընթերցման յունաբանութիւն լինելու իրողութիւնը հակասում են միմեանց: Մնում է ենթադրել, թէ «փութանակին» բացառապէս Պեչիտայից չի գալիս եւ կամ, եթէ ասորական եւ յունական խմբագրութիւնների համադրական գործածութիւնը անկարելի նկատենք, այն եւս զերծ չի եղել ըստ յունական նախօրինակի սրբագրուելու հնարաւորութիւնից: Վճռական եզրակացութեան համար մեր ունեցած այս օրինակը ամենեւին բաւարար չէ, բայց եւ չկան աղբիւրներ, որոնցից յուսայինք նախնական թարգմանութեան նոր տուեալներ քաղել: Թերեւս հայերէնով եւ վրացերէնով գոյութիւն ունեցող մեկնութիւնների ուսումնասիրութիւնը այդպիսիք ընձեռի:

¹ Թովմայ Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 121:

րեւ հայրանուն-տոհմանուն, թէ՞ տեղանք, որտեղից նա եկել է: Բնականաբար, Փաւստոսի թարգմանություններում պիտի փնտրենք հարցումի հստակ պատասխանը. Մ. Էմինի Փրանսերէն թարգմանութեան մէջ «Վահրիճ [որդի] Վահրիճի» է (Vahridch [fils] de Vahridch, տե՛ս Վ. Լանգլուայի Collection-ի 1 հատորը, Փարիզ, 1867, էջ 262): Մ. Լաուերը տառացիորեն հարադատ է մնացել գրաբարեան բնագրին, ուստի գերմաներէնում պահպանել է նոյնիսկ հայերէնի հոլովական վերջավորութիւնը՝ Wahridch aus Wahridcha (Քյոլն, 1879, էջ 116): Պարզ է, որ նա չի հետեւել Փրանսերէնին եւ Վահրիճայ-ն ընկալել է իբրեւ տեղանուն, ուստի եւ գործածել aus նախդիրը (-ից): Փաւստոսի հաջորդ թարգմանիչները ուշադրության չեն առել Մ. Լաուերի այս կռահումը՝ հաւանաբար Վահրիճ տեղանուն կամ վարչական միաւորի չգոյութեան թելադրանքով: Ստ. Մալխասեանցը հետեւել է Մ. Էմինին, իսկ Մ. Գեւորգեանն ու Ն. Գարսոեանը՝ Ստ. Մալխասեանցին («Վահրիճի (որդի) Վահրիճը» Вахрич, сын Вахрича, Vahric the son of Vahric):

«Վահրիճի որդի» թարգմանողները թերեւս նկատի են ունեցել պահլավերէնի քերականական նորմը, երբ հատկացուցիչն ու հատկացեալը յարաբերվում են իզաֆեղով (օրինակ՝ «Farraxvmar i Vahraman» - Վահրամի Ֆառախւմարտ, իմա Վահրամի որդի Ֆառախւմարտ, որ «Սասանյան դատաստանագրքի» հեղինակն է): Նման ենթադրութիւնը բնականոն կլինէր երեք պարագայում՝ ա) եթէ զօրապետի երեք յիշատակումներում էլ ունենայինք անուն-հայրանունը, այլապէս հասկանալի չէ, թէ ինչո՞ւ երկու անգամ սոսկ Վահրիճ է եւ մէկ անգամ՝ Վահրիճի որդի Վահրիճ: բ) եթէ պահլաւերէնի իզաֆեղի առկայութեան դէպքում չունենայինք հայերէնի թեք հոլովածելը՝ Վահրիճայ, որ փաստօրէն կրկնութիւն է (աստեղ խօսքը չի վերաբերում լեզուների պատմութեան մէջ յայտնի այն դէպքերին, երբ մասնիկն այլեւս չի գիտակցւում, ուստի կրկնւում է նորով, ինչպէս օրինակ՝ mardom+an, գիք+եր եւ այլն): գ) եթէ Փաւստոսը պահլաւական կապակցութիւնը պահպանելու յակում ունենար, ապա նրա երկը կարող էր մէկից աւելի գործածութեան օրինակներ տալ: Հետեւաբար ի Վահրիճայ գրեյիս Փաւստոսը նկատի պիտի ունենար այն վայրը, որտեղից Պարսից զօրքը եկել-հասել էր Մախազեան եւ պարտութիւն կրել: Եւ քանի որ Պարսկաստանի պատմական աշխարհագրությունը Վահրիճ անունը կրող բնակավայր կամ վարչական-աշխարհագրական միաւոր չգիտէ՝ ստիպուած ենք առկա տեղանուն մէջ գրչական հիմքի վրայ առաջացած վիրպակ ենթադրել: Յիրտի, Պարսկաստանում Լա-

ջրով սնուող: Թուարկած այս պարագաների շարքում «Աղօթագիրքը» անելիք չունի, որովհետև նրա մեծ կամ փոքր լինելը Շուշանիկի կրած գրկանքը չի բացայայտում: Աւելին, «աղօթանոցը» կա՛մ հանդերձանքի շարքը պիտի լրացնէր, կա՛մ մարմնական ինչ-որ վիճակ ներկայացնէր, որին յաջորդելու էր «բոկոտն եւս» լինելը: Քանի որ երկրորդ պարագան ինքնին բացառում է (աղօթ-ք բառի ներկայութիւնն այդ է ասում), ուրեմն «աղօթանոց փոքրիկը» վերաբերում է բարձի առկայութեան հետ համատեղուող կենցաղային մի ինչ-որ հարմարանքի կամ առարկայի:

«Վկայաբանութեան» հայերէն միւս խմբագրութիւնները (համառօտ, յայսմաւուրքային) ընդարձակի այդ դրուագը չեն ներառում, ուստի նրանց օգնութեանը դիմելու անհրաժեշտութիւն չկայ, մինչդեռ վրացական ընդարձակ խմբագրութեան ընձեռած նիւթը մեծապէս նպաստում է մեզ հետաքրքրող տերմինի իմաստը հասկանալուն: Ահա վրացերէնի համապատասխան դրուագը հայերէն թարգմանութեամբ. «Եւ այն օրից սկսած, նրան բանտարկեցին բերդի մէջ, բարձի վրայ գլուխ չէր դրել, այլ մի աղիւս էր դնում գլխատակին, եւ ներքնակ էր ծառայում մի հին քուրձ ՅՈՐՃՈՅՈՅՈՅ մարդկանց ի տես, բրդեայ մի բարձ ձեւացնում սնարի կողմում, եւ երկրպագութեան համար մի փոքրիկ խսիր էր գետին փռած» (Ի. Աբուլաձէի հրատ., էջ 38-39, § 14): Ինչպես տեսնում ենք, հայերէն «աղօթանոց փոքրիկի» դիմաց վրացերէնում ունենք «երկրպագութեան փոքրիկ խսիր», ուրեմն խօսքը վերաբերում է ծնրադիր աղօթելու ժամանակ գետնին փռելիք առարկային, որ վրացերէնում կոչւում է յՈՐՃՈՅՈՅՈՅ, խսիր, ճիլոպ: Վրացերէն այս տերմինը երկու անգամ գործածուած է Լեոնտի Մրովելու երկում՝ խիստ որոշակի նշանակութեան տեքստում. «Եւ ինչ յՈՐՃՈՅՈՅՈՅ վրայ միշտ աղօթում էր Նինոն՝ հրամայեց նրա վրայ դնել այդ տղային» (Յ.Յ., 1, 104₁): «Երբ գնացին սուրբ Նինոյի կացարան եւ թագուհուն դրին նրա յՈՐՃՈՅՈՅՈՅ վրայ, սկսեց սուրբ Նինոն աղօթել...» (նոյն տեղում, էջ 104₂₂): «Քարթլիս ցխովրեբայի» հայերէն թարգմանութեան բնագրում, բարեբախտաբար, մեզ զբաղեցնող դրուագները կրճատուած չեն, եւ երկու դէպքում էլ վրացերէն այդ տերմինի դիմաց ունենք «մահիճ» «եւ եղեալ դտղայն ի մահիճիս իւր՝ խաչակնքեաց...», «եւ տարեալ՝ եղին զնա ի մահիճսն Նունայ: Եւ նա աղօթեալ երկար...» (տե՛ս Ի. Աբուլաձէի, հրատ. էջ 98 եւ 100):

Այլեւս պարզ է, որ «աղօթանոց փոքրիկը» մահճին փոխարինող փոռոց է, որ գործածւում է ծնադիր աղօթելիս, այսինքն այն, ինչ այսօր էլ գործածական է, այդ թւում եւ մահամեղականների ու մովսիսական-

ների աղօթատեղիներում: Ըստ պատրաստման նիւթի այն կարող է կոչուել փսիաթ, խսիր, ճիլոպ, իսկ լայն առումով, անկախ նիւթի բնոյթից, ըստ գուտ պաշտամունքային կիրառութեան՝ այն կարելի է կոչուել աղօթագորգ, որ աղօթագրքի հետ բնաւ շփոթելու չէ: Անշուշտ, նման մի աղօթագորգ կամ խաղագորգ նկատի ունի Ղազար Փարպեցին, երբ Վահան Մամիկոնեանին յիշեցնում է, թէ ինքը նրա սննդակիցն ու խաղակիցն է եղել՝ «կրելով ի խաղու զարկնելիս ձեր զկնի ձեր» (1904թ. հրատ., էջ 188, 11-12): Հայագէտ Յ. Քիւրդեանը վաղուց է ճշտել, որ արկանելին գորգն է, աւելի ստոյգ՝ գորգի մի տեսակ, փոոց, բազմական (տե՛ս նրա՝ Գորգը Հայոց մօտ. Վենետիկ, 1947, էջ 12-14):

Շուշանիկի արկանելին «աղօթանոց փոքրիկն» է եղել, որի վրայ նա աղօթել է եւ որը քուրճի հետ նրան իբրեւ մահիճ է ծառայել: ՆՀԲ-ի կազմողները տերմինիս այս գործածութիւնն ու իմաստը չէին կարող իմանալ, որովհետեւ «Շուշանիկի վկայաբանութեան» հայերէն ընդարձակ խմբագրութիւնը դեռ յայտնաբերուած չէր:

3. «Ամենայն ցեղ»

XI դարից սկսած սոյն կապակցութիւնը յաճախ է գործածւում խօսակցական կենդանի լեզւի կնիքը կրող մատենագրական երկերում ու վիմագրերում: Մասնավորապէս՝ այն կայ նաեւ Գագիկ I Բագրատունու 1013թ. արձանագրութեան բնագրում, որ վերջերս յայտնաբերուեց Աշտարակի Ծիրանաւոր եկեղեցու կրկնապատը հեռացնելիս եւ վերձանուեց ու հրատարակուեց վիմագրագէտ Ս. Սաղումեանի կողմից («Լրաբեր հասարակական գիտութիւնների», 1989, N 94 էջ 91-96): Կարելորդ ու ընդարձակ այդ վաւերագիրը ընդհանուր առմամբ յաջող է ընթերցուած ու մեկնաբանուած՝ եթէ չհաշուենք մի քանի վրիպումներ, որ տեղ են գտել բնագրում կամ նրա մեկնաբանութեան մէջ: Այսպէս, կարդացուած է ԿԱՏԱՐԱՆԻԴԵԱ փխ. ԿԱՏՐԱՆԻԴԵԱ (տող 7), ԻՄՈՅ փխ. ՄԵՐՈՅ (տ. 11) ՆՁՈՎԵ, փխ. ՆՁՈՎԻ (տ. 15), ՅՈՅՆՍ փխ. ՅԱՅՆՄ Ի (տ. 16), ՏԷ()Ր փխ. Տ(ԵԱՌ)Ն (տ. 17):

Վաւերագրի սկզբնամասում Գագիկ I -ը ներկայանում է իբրեւ «հղաւր եւ տիեզերակալ շահինշահ եւ Հայոց Մեծաց արքայից արքայ» եւ ապա տալիս իր տոհմաբանութիւնը: Ինչպէս յաճախ, այս անգամ էլ «Հայոց Մեծացի» բախտը չի բերել. հրատարակիչն այն ընկալել է իբրեւ «հօր, ականաւոր» (էջ 94), մինչդեռ իրականում Մեծ Հայք-ի բնականոն թեք ձեւն է: Ուշագրաւն այստեղ այն է, որ Բագրատունի-

ները այլևս ոչ միայն փորձում են որպէս Արշակունեաց հարստութեան ժառանգորդներ հանդէս գալ, այլև իրենց տիտղոսաշար մուծել «արքայ Մեծաց Հայոց» յորջորջումը: Որ նման քայլը սոսկ ինքնամեծարման արդիւնք չէ եւ ունի նաեւ իրաւական հիմք՝ կարող ենք հաւաստիանալ օտար աղբիւրների վկայութեամբ եւս. Բագրատունիներին Մեծ Հայքի իշխանաց իշխան է ճանաչում Կոստանդին Միրանաձինը (Հ. Բարթիկեանի թարգմ., 1970, էջ 10-11, 151), բովանդակ Մեծ Հայքի տէր՝ Յովհաննէս Սկիլիցէսը (տե՛ս նույն թարգմ., էջ 146-148): Հայաստանը Մեծ Հայք են կոչում նաեւ XII-XIII դդ. ասորական աղբիւրները (Միք. Ասորի, Անանուն Եղեսացի եւ այլն): Նման վկայութիւններ կան XI-XIII դդ. վրացական աղբիւրներում, այդ թւում եւ Գրիգոր Պարթեւի Վարքի թարգմանութեան խորագրում եւ «Օրհնութիւն մեռոնի» ծիսակարգի բնագրում, որ «Մեծ Հայքի միտրոպոլիտ» ասելով նկատի է ունեցել Բագրատունեաց Անիում նստող Հայոց քաղկեդոնական եկեղեցու առաջնորդին (տե՛ս Armeno-Georg., I, 63, II, 145): Նշանակում է Գագիկի «Հայոց Մեծաց արքայից արքայ» յիշատակուելը բնաւ էլ պատահական չէ: Առհասարակ Ստ. Մալխասեանցի տուած մի թիւր մեկնաբանութիւնից յետոյ (տե՛ս Խորենացու «Պատմութեան» 1940 թ. հրատ., էջ 255, ծան. 1), «Հայոց Մեծացը» «Հայոց մեծեր» ընկալելը դարձել է սովորական, թէեւ դրա համար մտացի հիմքեր չկան: Ա. Մաթեւոսեանը վերջերս համոզիչ փաստերով ապացուցեց, որ պիտի վերականգնել անգամ Խորենացու «Պատմութեան» իսկազիր անուանումը՝ «Պատմութիւն Հայոց Մեծաց» («Հայ. ձեռ. յիշատակ. Ե-ԺԲ դարեր», էջ ԺԳ):

Ս. Սաղումեանի մեկնաբանութիւններում կան ուրիշ վերանայելի տեղիներ եւս, օրինակ՝ վիճաբանութեամբ ժամանակի կաթողիկոս Սարգսի յիշատակութիւնը ամենեւին չի նշանակում, թէ նա «հանդէս է գալիս իբրեւ գերագոյն իրաւական դէմք, որն առանց վերապահութեան, ակնկալիքի ու փոխհատուցման համաձայնութիւն է տալիս թագաւորի որոշմանը՝ Աշտարակի ծանր հարկապարտոյթի զիջման վճուին» (էջ 93): Կաթողիկոսի ներկայութիւնը վիճաբարի սկզբում ընդամենը թուագրութեան նպատակ ունի, որ սովորական է: Արձանագրութեան 9-րդ տողի աւարտամասում վերձանութեան մէջ բառ է բաց թողած՝ առանց նշումի:

Դառնալով բուն խնդրին՝ մեզ զբաղեցնող «ամենայն ցեղ» կապակցութեանը, պիտի նկատել, որ այն գործածուած է վաւերագրի հիմնական նպատակը արտացոլող նախադասութեան մէջ, ուստի նրա նշանակութեան յստակ ընկալումը կարելոր է: Ահա այդ դրուագը. «կամ

եղեւ ինձ... ազատել զԱշտարակս ի շարիյատէ ամենայն ցեղի, զոր եւ սերմանէ ոք...»: «Շարիյատ»-ը («շարիաթ, շարէտ» այլընթերցումներով) հողից, հացաբոյսերից, այգիներից, անասուններից, բամբակից, իւղից ու ձէթից աւատատիրոջը արդիւնքով կամ դրամով վճարուող հարկ էր, արդիւնքի 1/10 չափով: Գաղիկ Բագրատունին ոչ պատահականօրէն մասնաւորեցրել է, որ աշտարակցիներին ազատում է «ի շարիյատէ հացի ամենայն ցեղի», իսկ տնտեսութեան միւս բնազավառներից դանձուողը պահպանել է: Վիմագրի հրատարակիչը «ամենայն ցեղի»-ն ընկալել է իբրեւ «Աշտարակի բոլոր ցեղեր» եւ փակագծում բացատրել այդ ցեղերի ով լինելը՝ «առանց խտրութեան բոլոր խաւերին, ազատներին ու շինականներին» (էջ 95): Իրականում «ամենայն ցեղը» վերաբերում է հացին, այսինքն՝ հացահատիկային բոլոր բոյսերին՝ ցորեն, գարի, վարսակ եւ այլն: Գաղիկ Բագրատունուց երկու տարի յետոյ (1015թ.) այդ նոյնը կատարել է Վահրամ իշխանաց իշխանը՝ «թոտոյ (1015թ.) այդ նոյնը կատարել է Վահրամ իշխանաց իշխանը՝ «թոտոյ զի ըզՄասդարաի շարէթս ամենայն» («Բանբեր Երեւանի համալս.», 1976, N 1, էջ 51): Ուրեմն՝ մի դեպքում գործ ունենք հացահատիկի բոլոր տեսակներից դանձուող շարիաթը վերացնելու հետ (Գաղիկ 1), միւս դեպքում՝ «ամենայն շարէտի»՝ բոլոր արդիւնքներից վճարուող շարիաթը զիջելու հետ (Վահրամ): Որ «Ամենայն ցեղը» հացահատիկի տեսակներին է վերաբերում եւ ոչ համայնքի խաւերին՝ շատ պարզ է այդ իսկ կապակցութեան մէկ այլ գործածութիւնից, որին հանդիպում ենք Տիգրան Հոնենցի նշանաւոր վիմագրում. նա թուարկում է եկեղեցուն նուիրուած «բազում զարդերը»՝ ոսկէ եւ արծաթէ սուրբ խաւեր, պատկերազործ խատեր, ոսկէ եւ արծաթէ կանթեղներ, մասունքներ «եւ ամենայն ցեղ սպասք՝ յոսկո եւ արծաթո» («Դիվան», Ա., էջ 63):

Հետեւաբար «ամենայն ցեղը», «բոլոր տեսակ»-ն է (ВСЯКОГО РОДА), Գաղիկ I Բագրատունու վիմագրում՝ հացի (իմա հացահատիկի, ընդեղէնի) բոլոր տեսակները, ամենեւին կապ չունենալով համայնքի խաւերի կամ տոհմերի հետ: X-XIII դդ. Անիում այդ կապակցությունը բաւական հաստատուն գործածութիւն ունէր: Գաղիկ Բագրատունու անունով յայտնի «Բժշկարանում» եւս այն կայ:

4. «Բամեւնցավ/բամբեւնցավ/բամբնցավ»

Վ. Ն. Բենեշելիչի համոզմամբ Անիի Մայր տաճարի արեւմտեան պատին 1060թ. Բագրատ մագիստրոս Վիսկացու հրապարակած արտոնագրի քննախոյզ ուսումնասիրութիւնը «խոստանում է առատ ար-

դիւնքով հատուցել թափուած աշխատանքը»¹: Մասնադէտները, պիտի խոստովանել, այդ արդիւնքից մաս ունենալու քիչ ջանք չեն թափել: Վերջերս լոյս տեսած մի յօդուածում բաւականաչափ հանդամանօրէն եւ հիմնաւոր կռուաններով պարզաբանուած է յիշեալ արձանագրութեան «շալակաւոր» տերմինը, որ մինչ այդ ընկալուած էր իբրեւ «բեռնակիր», «շալակին բեռ ունեցող»²: Ըստ նոր լուսաբանութեան այն յունարէն «սակկուլարիոս»-ի (քսակաւոր, լուծայափոխ, սեղանաւոր, բանկիր) բառացի թարգմանութիւնն է³, եւ քանի որ «շալակաւոր» վկայուած է նաեւ աւելի վաղ՝ Սմբատ Աշոտայ որդի Բագրատունու 987 թ. Արուծի վիճագրում⁴, ապա յիշեալ ինստիտուտը նոր չէ եւ ոչ իսկ պայմանաւորուած կայսրութեան կողմից Անիի նուաճման փաստով: Տուր եւ առի այս նշանաւոր կենտրոնատեղին բնականաբար պիտի ունենար «սեղանաւորի», «լուծայափոխի» եկամտաբեր դրաղմունքով պարապող մարդիկ, որ այժմ ճանաչելի են դառնում «շալակաւորի» վերծանմամբ:

Բայց ի՞նչ է նշանակում արձանագրութեան բնագրում «շալակաւոր» տերմինին յարող եւ հաւանաբար նրա ինքնութեանը վերաբերող «բամէնցավ/բամբէնցավ»-ը՝ «Եւ շալակաւոր անեցի բամբէնցավ բաժին կէսն ազատ է»⁵: Որեւէ քննութիւն կատարելուց առաջ պիտի պարզել, թէ գրականութեան մէջ առկայ «բամէնցավ-բամբէնցավ» ընթերցումից ո՞րն է իրապէս բնագրական: Պահպանուած լուսանկարն ու գրչանկարը լիովին ստուգելի են: Փորագրողը վրիպմամբ սկզբնատառը (Բ) բաց է թողել, բայց շուտով նկատել է այդ և Բ գիրը փորագրել ԱՆԵՑԻ ԵՎ []ԱՄԲԷՆՑԱՎ բառերի արանքում, տողի գլխին, բայց հարկադրեալ միւս գրերից 2,5-3 անգամ փոքր: Վրիպում է տեղի ունեցել նաեւ բառամիջում. ծաւալուն ու յստակ ընթերցող արձանագրութեան մէջ փորագրողը կցագրութեան կամ փակագրութեան ոչ մի դէպք չի կիրառել, բացառութեամբ մեզ դրաղեցնող բառի Բ եւ է գրերի: Պարզ

¹ В. Н. Бспетсвич, Три анийские подписи XI в. из эпохи византийского владычества, СПб., 1921, с. 24.

² Հր. Բարթիկեան. Բագրատունեաց Հայաստանի արհեստներից (Շալակաւոր՝ բեռնակիր, թէ՞ բանկիր). - «Պատմա-բանասիրական հանդէս», 1992, N 2-3, էջ 154-155:

³ Նոյն տեղում, էջ 156-158:

⁴ Վերջին հրատարակութիւնը տե՛ս Կ. Ա. Մաթեւոսեան. Արուծ. Երեւան, 1987, էջ 61 («...ազատեցի... զշալակաւոր ի բաժէ»):

⁵ Դիւան հայ վիճագրութեան. I Երեւան, 1966, էջ 37, լուսանկար՝ տախտակ XII: Արձանագրութեան նախորդ հրատարակութիւնների մատենագիտութիւնը տրուած է Ս. Աւագեանի այստեղ վկայակոչուած յօդուածներում:

է, որ կցազիրը վրիպումն ուղղելու արդիւնք է, բայց դժուար է ասել՝ Բ-ն է է ուղղել, թէ՞ է-ն Բ: Հնարաւոր է նաեւ երրորդ տարբերակ՝ է-ն կամ Բ-ն Ը է ուղղել: Քանի որ բառակազմում հէնց Բ գիրն էր բաց թողել՝ հնարավոր է ԱՄԲԷՆՅԱՎ դրափոխված արտասանութիւն մակարերել, ուղղւած՝ ԲԱՄԷՆՅԱՎ կամ ԲԱՄԸՆՅԱՎ: Իբրեւ որեւէ օտար բառի դրադարձում (= ձայնադարձում) այս երկուսը էապէս իրարից քիչ են տարբերւում, բայց հաւասարապէս վկայում են, թէ փորագրողի համար օտարամուտ այդ բառը սովորական չէ եւ ոչ իսկ դիւրին արտասանելի (բառավերջում Ի-ի փոխարէն Վ ունենալը եւս Վ/Ի-ից արտասանությամբ ինչ-որ չափով հեռացող գրի ձայնադարձում է յուշում):

Մենք հնարաւոր ենք համարում այստեղ պարսկերէն monsef տերմին ենթադրել՝ նորից պարսկերէն be կամ ba նախդրով, որ նրան պիտի հաղորդի հայցական կամ գործիական հոլովի կիրառութիւն: Եթէ այս վարկածը հիմնադուրկ չէ, ապա բառիմաստն է «արդար», «ճշմարիտ», «իրաւադատ», «երդուեալ», կիրառուած առումը՝ «արդարությամբ», «արդարապէս», «արդարեւ», «յիրաւի» են:

Փորձենք իմաստաւորել արձանգրութեան քննարկուող դրուագը՝ «Եւ շալակաւոր (= սեղանաւոր) անեցի (= անեցին) բամընցավ (= արդարութեամբ) բաժին (= հարկի) կէսն (= կիսից) ազատ է»: «Արդար սեղանաւորի» կամ «արդար բաժի» գաղափարը, հետեւաբար եւ նրա իրաւական ձեւակերպումը, անտեղի չէ: «Սեղանաւորներին» (սակկուլարիոսներին) անդրադարձող բիւզանդագէտները «էպարքոսի գրքի» (X դար) համապատասխան գլխի թարգմանութեան կամ ծանօթագրութեան առիթով արձանագրել են դրամ կեղծող կամ վերահսկողութեան խուսափող (իմա պահանջուող պետական հարկը չվճարող) սեղանաւոր-լուծայափոխների առկայութեանը բիւզանդական քաղաքներում (մասնաւորապէս Կ. Պոլսում)¹: Ենթադրելի է, որ այդպիսիք կարող էին լինել եւ բիւզանդական շրջանի Անիում, ուստի կայսրութեան պաշտօնեան անհրաժեշտ է նկատել մասնաւորեցնել խօսքը՝ արտօնազիրը վերապահելով օրինապահ «շալակաւոր-սեղանաւորին»: «Բամընցավ» օտարամուտ, սակայն ոչ բիւզանդական տերմինը, եթէ նրա իմաստաւորումը արդարացուած է, կարող է նաեւ ապացոյց ծառայել, թէ Անիում «ոչ արդար» (ուրեմն՝ խարդախ) լուծայափոխ-սեղանաւորներ կային բիւզանդական նուաճումից շատ առաջ:

¹ Աղբիւրի եւ գրականութեան վկայակոչութիւնը տե՛ս Հր. Բարթիկեանի յօդուածում, էջ 156-157:

«Բամէնցավ/բամբէնցավ/բամբնցավ» տառաչարքը առ այսօր համարուել է առեղծուածային¹ :

5. «Տանուտրութիւն»

«Տանուտէր» եւ «տանուտիրութիւն» տերմինները քաջ ծանօթ են հայագիտութեան՝ իրենց լայն ու նեղ առումներով, եւ նոր քննութեան անհրաժեշտութիւն չկայ: Սակայն Անիի Մայր տաճարի վերոյիշեալ արձանագրութեան «Յորժամ առին զտանուտրութիւնս» կապակցութիւնը, ուր բառը գործածուած է հոգնակի հայցականով եւ է՝ Ի սպասելի հնչիւնափոխութեան հապաւման նշան չկայ, Հր. Բարթիկեանին մղել էր ենթադրելու, թէ այս պարագային խօսքը վերաբերում է ոչ թէ տանուտէրերին, այլ տան տուրքերին (տնահարկերին): Եվ քանի որ նոյն Անիի մէկ այլ վիմագրում նման հարկ (սլախտ տանց) վկայուած է, «տանուտրութիւն»- «սլախտ տանց» հարկերը նույնացնում էր բիւզանդական «էնիկիոն» հարկի հետ²: Շատ չանցած՝ նման մեկնաբանութեան դէմ հանդէս եկաւ այժմ հանդուցեալ Ս. Աւագեանը եւ փաստեց, որ «առին զտանուտրութիւնս» նշանակում է «տանուտիրութիւններն ստանձնեցին» վիմագրում յիշատակուող «Մխիթար իպատոսն Կրտին որդին եւ Գրեգոր Լապաստակա որդին սպաթար կանդիտատն եւ Սարգիս Արտաւազա որդին սպաթար կանկիտատն»: Այդ է ապացուցում բնագրի յաջորդ յատուածում՝ «ղայլն տանուտէրքն առնեն» տերմինի հոգնակի գործածութիւնը: Ս. Աւագեանն այնուհետեւ բերում է իր դրոյթը հաստատող բազմաթիւ փաստեր ու նկատառումներ³: Նրա եզրակացութիւններն ընդունել եւ որոշ մասնաւորացումներ է կատարել Կ. Իզրբաշեանը: Վերջինիս կարծիքով Անիի տանուտէրերը մոտաւորապէս նոյն պաշտօնն են կատարել, ինչ «մահմեդական» քաղաքների ուսիաները: Նրանք տեղական ինքնակառավարման ներկայացու-

¹ «Ամէն ցաղ» եւ «Յամէն ցաղ» վերծանելու փորձերը, հակառակ «աւելի հաւանական թուարու» Ս. Աւագեանի գնահատութեանը, չեն արդարանում ո՛չ գրչութեամբ եւ ո՛չ էլ իմաստով (տե՛ս Ս. Ա. Աւագեան. «Տանուտրութիւն» տերմինը Անիի XI դարի արձանագրութեան մէջ. «Պատմա-բանասիրական հանդէս», 1971, N 2, էջ 176, ծան. 5): «Բամբնցավ»-ին վերաբերող լրացուցիչ անդրադարձ տե՛ս մեր «Սուրբ Շուշանիկի վկայաբանութիւնը գրքում (էջ 187-8):»

² P. M. Бартияян, «Эникон в Византии и столице армянских Багратидов Ани в эпоху византийского владычества (1045-1066гг.)» ИФЖ, 1968, N 2. с. 126.

³ Ս. Աւագեան, նշւ. աշխ., էջ 175-190: Վերահրատարակութիւնը տե՛ս հեղինակի «Վիմագրական պրպտումներ» գրքում, Երեւան, 1986, էջ 26-45:

(Ս. Տէր-Աւետիսեանը «ժողովրդականը» թարգմանում է «ПРИХОДСКИ-МИ»` «ծխական», որ դարձեալ թաղերին է վերաբերում): Բազրատ մագիստրոսի արձանագրութեան «առին զտանուտրութիւնս» արտայայտութիւնից դժուար է եզրակացնել «առին» ասելով «ընտրութիւն» է հասկանում, թէ՞ «ստանձնում»: Յամենայն դէպս` նրանց պաշտօնեայ լինելը կասկածից դուրս է: Կան եւ այլ օրինակներ:

բ) Ս. Աւագեանը ցոյց է տուել, որ կապալառուական կարգը վերաբերում է միայն պետական հարկերի ու տուրքերի գանձմանը, բայց ոչ երբեք կոռերին եւ պարտոյթներին¹, իսկ Բազրատ մագիստրոսի վիճազրում տանուտէրերը «ազատեցին զվեցկէ կոռ եւ զմայլի, եւ զկամին, եւ զանգարիոն», որոնք հարկ կամ տուրք չեն, ինչպէս որ այդպիսին չեն նաեւ այդ նոյն տանուտէրերին յանձնարարուող, հնձելուց յետոյ կատարուող միւս աշխատանքները («զայլն տանուտէրքն առնեն»), որ են` կալսել, աղալ եւ այլն:

Տանուտէրերի թէ տանուտրութեան ինստիտուտի հետ կապուած հարցեր քննարկելիս ուշադրաւ տեղեկութիւններ կարելի է քաղել վրաց Բազրատ IV թագաւորի` 1054-1072 թթ. տուած մի հրովարտակից, որ պահպանուել է բնագրով²:

Միջնաձորցի եւ օպիզցի վանականների միջեւ ծագած կալուածքային վէճը լուծելու համար Բազրատ IV-ը հաւաքում է հոգեւոր ու աշխարհիկ բոլոր մեծաւորներին, լսում վիճող կողմերին, զննում վաւերագրերը եւ վիճարկուող անտառներն ու սահմանները թողնում միջնաձորցիներին (բնագրում` միջնաձորոելնի). «Եւ այնու, որ օպիզցիներին էլ գոհացում տամ` յաղօթս իմ հոգու ինքեան յանձնառու եղայմեր տանուտրական (սամամասախլիսո) ծառայութիւնից վերցրի Բարեւան գիւղը եւ տուեցի օպիզցիներին` ի սեղան»:

Այնուհետեւ թագաւորը յանձնարարում է. «Արդ, ով էլ տեսնի մեր սոյն հրամանն ու հրովարտակը` մեզանից յետոյ գալիք թագաւորներ, էրիսթաւաց էրիսթաւներ, էրիսթաւներ, Տայքի (Տաոյի) եւ Կղարջքի (Կլարջէթի) տանուտէրեր (տանուտեր-թա) եւ ամենայն իշխանաւորներ եւ գործաւորներ, հաստատեցէք եւ ոչ ոք ձեռք զարկէք սոյնը խախտելուն ու փոփոխելուն»:

¹ Ս. Աւագեան, նշւ. աշխ., էջ 39-40:

² Գիտական նորագոյն հրատարակութիւնը եւ բնագրին վերաբերող գրականութեան մատենագիտութիւնը տե՛ս յճրտօյցճո օ՛՛ճ. Նճծօյտցծօ IX-XIII ՆՆ., տծ., 1984, թթ. 32-34): Սոյն վաւերագրի վերջին ուղեւերէն թարգմանութիւնը տե՛ս Грузинские документы IX-XV вв. в собрании Ленинградского отд. Института восток. АН СССР. Перевод и комментарии С. С. Какабадзе. М., 1957, с. 36-38.

Այլեւս պարզ է, որ Բագրատ մագիստրոսի վիմագրի հրապարակման տարիներին տանուտէրեր կային ոչ միայն Անիում, այլեւ Տայքում ու Կղարջքում, ընդ որում նրանք իշխանաւորներ էին (ոչ հարկահաւաքներ), աւատատիրական վարչա-կառավարչական մարմնի միջին կարգի պաշտօնեաներ: Հետաքրքիր է, որ թագաւորն ինքն էլ որոշ տարածքներում տանուտրական իրաւունքից է օգտւում, ու նաեւ այդ բնակավայրերը նրան ոչ թէ հարկ կամ տուրք են վճարում, այլ ծառայութեամբ կատարում իրենց պարտոյթը:

Պակաս ուշագրաւ չէ XII դարի առաջին կէսի էրիսթաւաց էրիսթաւ Բեչքէնի արտոնագրում եղած հաղորդումը. Կորիդէթի վանականներին նա ազատում է «տանուտրական դրամից» (սատանուտրոի դրաներին նա ազատում է «տանուտրական դրամից» (սատանուտրոի դրամի), «ինչքան էլ այն կազմի»¹: Տասնամեակներ անց նրա թոռ Բեչքէնը անհրաժեշտ է նկատում վերստին հաւաստել, որ Կորիդէթի բոլոր վանականներին ինքը եւս ազատել է «տանուտրականից» (սատանուտրոյ), իսկ «եթէ վանականը տանից բացակայի եւ աղօթքի չկարողատրոյ), իսկ «եթէ վանականը տանից բացակայի եւ աղօթքի չկարողատրոյ», նայ գնալ՝ «տանուտրական (սատանուտրոի) վճարի»²: Ուրեմն տանուտէրի օգտին սահմանուող պարտոյթը կարող էր փոխարինուել եւ դրամով: Այս դէպքում տանուտրական իրաւունքից օգտւում է բարձր դրամով: Այս դէպքում տանուտրական իրաւունքից օգտւում է բարձր դրամով: Այս առիճան աղնուականութեան ներկայացուցիչը՝ ժառանգաբար: Այստեղ կարելի է թէ՛ հոգեւորականութեան հարկման փաստը եւ թէ՛ այն, որ համապատասխան ծառայութիւն կատարել չկարողանալու պատճառով (հարկաւ՝ գիւղատնտեսական աշխատանք) այդ դասի պարտոյթը փոխարինւում է դրամով: Իսկ որ կորիդէթցիների պարտապարտոյթը փոխարինւում է գանելը, քաղելը, հաւաքելը եւ կալսելը՝ պարզ երեւում է այդ նոյն Բեչքէն կրտսերի մէկ այլ յիշատակագրությունից, ընդ որում այս անգամ խօսքը վերաբերում է ողջ գյուղին, որի հանդէպ նորմալ է գործել էրիսթաւը՝ իր պետքի թելադրանքով գիւղի պարտոյթն աւելացնելով, որից այժմ վերստին ազատում է³: Պարզ է, որ խօսքը նոյն «տանուտրութեանն» է վերաբերում:

Թիւրիմացութեան տեղիք չտալու համար աւելացնենք, որ վրացական աղբիւրների «սամամասախիսո», «սատանուտրո» տերմինների բառացիօրէն նշանակում են «մամասախիսին տրուող», «տանուտրութեան տրուող, յատկացուող» հարկ կամ պարտոյթ, բայց ոչ երբեք

¹ «յորօջյոս եսծ'յոյծօ» (IX-XIII) տձ. 1989, տձ., 1984, թթ. 24: Հմմտ. Н. Я. Марр, Грузинские приписки греческого Евангелия из Коридии, Известия ИАН, 1911, N 4, с. 226.

² Նույն տեղում, էջ 30. Հմմտ. N. Marr. Ukaz. soh. s. 228.

³ Նույն տեղում, էջ 29. Հմմտ. Н. Марр, նշլ. աշխ., էջ 233-234.

«Հարկ տանց», «տնահարկ», այլապէս պիտի մտածել, որ Վրաստանը նուաճած թաթարներն էին վրացիներին վճարում «սաթաթրո» հարկը եւ ոչ հակառակը:

դ) «Տանուտրութիւնը» տանու տուր(ք) վերժանելիս Հր. Բարթիկեանը շեշտում է նրանում յապաւման նշանի բացակայութիւնը: Եթէ նոյնիսկ համաձայնենք, որ XI դարում գրութեան ու արտասանութեան միակ ընդունուած ու ճիշտ ձեւը «տանուտիրութիւնն» էր, ապա պիտի յիշեցնենք, որ Բագրատ (Բագարատ) անձնանուան սեռական հոլովը Բագրատայն է եւ ոչ Բագրտայն, ինչպէս կայ վիմագրում եւ դարձեալ առանց յապաւման նշանի, ուրեմն պիտի ճանաչել գրչի նախասիրութիւնը կամ գուցէ եւ գրագիտութեան աստիճանը (վիմագրում կան բազում այլագրութիւններ ու շեղումներ): Բայց մենք յակուած ենք կարծելու, թէ «տանուտրութիւն» գրելիս գրիչը չի թերացել, այլ պարզապէս նա արձանգրել է իր միջավայրին ընտանի արտասանութիւնը: Որ «տանուտիրութիւնը» կարող էր արտասանուել ու գրուել «տանուտրութիւն» փաստում է դարձեալ վրացական վաւերագրերի բովանդակած նիւթով: Կորիդէթեան յունական նշանաւոր Աւետարանի XII դարի լուսանցագիր վրացերէն նուիրագրում կարդում ենք. «Գրուեց Յովհան (Իովանէ) Փաշուէթի կառավարչութեան՝ Կորիդէթի տանուտրութեան (տանուտրորբասա) օրօք»¹:

Այսպիսով, «տանուտրութիւն» տերմինը վարչական բովանդակություն ունի եւ անկարելի է նրան այլ վերժանութիւն պարտադրել:

* * *

«Տանուտէր», «տանուտրութիւն» (տանուտիրութիւն) տերմինը, ինչպէս կարելի էր հաւաստիանալ բերուած օրինակներից, XI դարից սկսած գործածական էր նաեւ Վրաստանի հարաւ եւ հարաւարեւմտյան գաւառներում, ուստի Պետրիժոնի վանքի «Սահմանքի» յունարէն խմբագրութեան տեղեկութիւնը, թէ «կելարիոսին» վրացի-

¹ Վերջին հրատարակութիւնը տե՛ս «კორიდავთის საბუთებში». Գրքի 22-րդ տախտակում տպուած է վաւերագրի լուսանկարը, ուր մեզ հետաքրքրող տերմինը գրուած է «տանուտրորբաս» (նուախուրի գրչութեան ուն «ո»-ի եւ «ւ»-ի համադրում էր, ուստի հաճախ գրի առաջին բաղադրիչն է գրւում, բայց կարդացւում է «ու»): «Տանուտրորբաս» (տանուտրութիւն) է փորագրված եղել նաեւ Տանձոտ գիւղում Ն. Մառի գտած վրացերէն արձանագրութեան մէջ (XIV դար): Տե՛ս Н. Мара, Аркаун..., СПб., 1905, с. 24.

ները «տանուտէր են կոչում» անսպասելի չէ¹: Դարասկզբին Ն. Մառը բաւական հանգամանօրէն քննութեան էր առել այս փաստը², սակայն խնդիրը մասամբ բարդացաւ յիշեալ «Սահմանքի» վրացական խմբագրութեան երեւան գալով: Յունարէնի «տանուտէրի» դիմաց, իբրեւ «կելարիոսի» համապատասխանութիւն, այստեղ ունենք «օստիգանի» (օստիկան)³: Տողերիս հեղինակը ժամանակին կարծիք է յայտնել, թէ բնագրայինն ու նախնականը յունարէնի «տանուտէրն» է (իսկ «օստիգանը»՝ հետագայ միջամտութեան արդիւնք)⁴: Գրիգոր Բակուրեանի ինքնութեան եւ նրա «Սահմանքի» վրացերէն բնագրի ուսումնասիրութեան կապակցութեամբ «տանուտէր» եւ «օստիգան» տերմինների առնչութեանն անդրադարձաւ ակադ. Ա. Շանիձէն⁵: Նրա համոզմամբ՝ «տանուտէր-տանուտիրութիւն» ինստիտուտը քաղաքացիական-վարչական բովանդակութիւն ունի եւ անյարիր է վանական միաբանութեան «կելարիոս»-«մառանապետի» պաշտօնավարութեանը, ուստի հետմուտ է յունարէն բնագրում, իսկ նախնականը «օստիգանն» է: Անհասկանալի է, սակայն, ինչո՞ւ նոյնքան աշխարհիկ-քաղաքացիական «օստիկանը» կարող էր տրանսֆորմացիայի (բովանդակօրէնական «տանութեան») ենթարկուել եւ վանական պաշտօնեայ դառնալ, իսկ «տանութեանը»՝ ոչ: Եւ ապա՝ վաստակաշատ գիտնականի ուշադրութիւնից վրիպել է 1281-1282 թթ. Քարթլիի կաթողիկոս Նիկողայոսի արտօնագիրը, որով Մցխեթի Շեուբանը (բառացի՝ Ներքին թաղ) նախկին տիրոջը՝ Արւանբէգ Սաբայի որդուն, վերադարձնելիս վճռում է. «Շեուբանի ջը՝ վրայ կար հին բեգարը՝ տասնմէկ լիտր մոմ: Նրա վրայ ինը լիտր եւս աւելացրինք եւ դարձրինք քսան լիտր՝ նախկինում եղած լիտրի հետ միասին: Քեզ տուեցինք Շեուբանը, ժառանգեցէք սոյնը կատարելու պարագայում՝ որ ամէն տարի աւագ հինգշաբթի այս քսան լիտր մոմը Սախլորանի մեր տանուտէրին (տանուտերս) տրուի ու հաշուի»⁶: Այստեղից դժուար չէ եզրակացնել, որ Շաւշեթի Սախլորանի

¹ «Զյորճոյկ», Թ. V, ք. 152 (յունարէն), 153 (վրացերէն): Նաեւ Типик Григория Пакуриана, издала В.А. Арутюнова-Фиданян, Ереван, 1978, с. 87.

² Н. Марр, укр. соч., с. 22, 24.

³ Հին վրացերէն բնագիրն ու նրա ուսերէն թարգմանութիւնը տե՛ս Վ. Յանով, Վարդգէս Բաղդասարեանի «Սահմանքի» մասին, Երևան, 1971, ք. 82, 295 (ուս.):

⁴ «Պատմա-բանասիրական հանդես», 1968, N 1, էջ 110:

⁵ Հմմտ. Վ. Յանով, Երևանի թանգարանի տարածքում տեղադրված շէնքի մասին, «Մշակույթ», 1970, N 6, ք. 161-166: Նոյնի Վարդգէս Բաղդասարեանի «Սահմանքի» մասին, Երևան, 1978, N 4, с. 173-174:

⁶ «Վարդգէս Բաղդասարեանի ժողովրդական գործեր», Երևան, 1970, ք. 170-171.

գիւղում կաթողիկոսն ուներ իր «տանուտէրը», որի սլարտականութեան մէջ էր մտնում կաթողիկոսապատկան «բեզարի»՝ «քսան լիտր մոմի» գանձումը: Հարկաւ չպիտի զարմանալ՝ եթէ Պետրիժոնի վանքի պարենային խնդիրները (հաց, կաթնեղէն, իւղ, մեղր եւն) վարող «կելարիոսը» եւ «տանուտէր» յորջորջուէր եւ թերեւս վանական միաբանութեան անդամ լինէր:

Վանական հաստատութեան վարչական կազմում «տանուտէրի» ներկայութիւնը հաստատուում է նաեւ Լմբատավանքի արեւելեան սլատին Անիի եւ Շիրակի արքեպիսկոպոս (XIII դարի առաջին քառորդ) Ապուղամբի որդի Գրիգորի հրապարակած նուիրագրով: Վիմագրի աւարտամասում իբրեւ յիշատակագրություն կարդում ենք. «Զերջանիկ հայր զԱռաքեալն եւ զտանուտէր զարդիւնարար տանս զՌուբէն յիշեցէք ի Քրիստոս»¹: Վանահօր հետ միասին յիշատակուող «արդիւնարար տան» տանուտէր Ռուբէնը վանքի տնտեսութիւնը վարողն է, երկրագործական աշխատանքները վերահսկողը, գուցէ նաեւ ծախսարարն ու սլարտոյթների վերակացուն: Ուրեմն՝ յիրաւի, Պետրիժոնի վանքում «տանուտէրի» ներկայութիւնը պատահական չէ, եւ հիմքեր չկան յունարէն խմբագրութեան այդ հատուածում հետագայ միջամտութիւն ենթադրել²:

¹ Ղ. Ալիշան, Շիրակ. Վենետիկ, 1881, էջ 165:

² «Տանուտէր» եզրի ուշ միջնադարեան կիրառութեան վերաբերեալ տե՛ս Լ. Ս. Խաչիկեան, 14-15-րդ դարերի հայկական գիւղական համայնքի մասին, ՊԲՀ, 1958, N 1, էջ 113-114:

գորի», «տեղի նահատակին Գրիգորի»)¹, կարելի է եղբակացնել, թէ «երեք եկեղեցիներից» (թէ՞ խորաններից) մէկն էլ Լուսաւորչի պաշտամունքին է նուիրուած եղել: Պահպանուածն ու բազում առումներով ուշագրաւը, սակայն, VII դ. եկեղեցին է, որի նկարագրութեանն ու վիմագրերի վերծանման - հրատարակմանն է նուիրուած Յ. Օրբէլու երկու աշխատութիւն²: Գիտնականն իր կատարած չափագրութիւնն ու գնահատութիւնը վերջնական չի համարում եւ յոյս ունի այդ կատարուած տեսնել «մօտ ապագայում»³: Սակայն, հանգամանքների բերումով, Յ. Օրբէլու հրատարակուածը վերջինը եղաւ ու առաւել ամփոփը: Հարկաւ ոչ պատահականօրէն, գիտնականը Բագաւանի եկեղեցին համարում է «միանգամայն բացառիկ յուշարձան», որն ունի 46 մ երկարութիւն, 27 մ լայնութիւն եւ 20 մ բարձրութիւն, աւագ խորանից աւանդատների վրայ բարձրացող գաղտնուղիներ, տարբեր հարթութիւններ ունեցող եւ պաշտպանական նպատակների յարմարեցուած տանիք եւ մանաւանդ ըստ բիւզանդական Հերակլ կայսեր տարիների եւ Հայոց ՁԸ (88) թ. թուագրուած շինարարական արձանագրութիւններ: Ի դէպ, հէնց Բագաւանի 639 թ. այդ վիմագրերի գոյութեան փաստը Յ. Օրբէլուն հարկադրեց վերանայել նախորդ յօդուածներում արտայայտած այն համոզմունքը, թէ Հայոց մեծ թուական բովանդակող VII-VIII դդ. վիմական ու պատմողական աղբիւրները աւելի ուշ շրջանի ընդօրինակութիւններ են կամ ընդմիջարկումներ⁴:

Յ. Օրբէլուն հիմնականում զբաղեցրել է այն գրականութիւնը, ուր Բագաւանի արձանագրութեան վերծանութեան փորձ կայ, որպիսին են Յ. Շահխաթունեանցի, Ժ. Բարթոլոմէոսի, Մ. Բրոսէի, Ղ. Ալիշանի աշխատութիւնները⁵: Պարզում է, սակայն, որ ոչ պակաս կարեւոր դիտարկումներ ու հաղորդումներ կան գիտնականին անձանօթ մնացած կամ նրա կողմից ուշագրութեան չառնուած ուղեգրական-տեղագրական այլ աղբիւրներում եւս: Մասնաւորապէս այդպիսին է Բարունակ Ֆերուհիանի «Ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան յա-

¹ Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց..., էջ 139, 141:

² И. А. Орбели, Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII века, СПб., 1913 (վերահրատ. տե՛ս И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, ст. 371-397). Նոյնի՝ Багаванский храм и его надписи, СПб., 1917 (վերահրատ. տե՛ս И. А. Орбели, указ соч. с. 455-468):

³ И. А. Орбели, Избранные труды, с. 456, прим. 5.

⁴ Տե՛ս նոյն տեղում, էջ 456, ծնթ. 1: Հմմտ. Ս. М. Мурадян, Хронология систем летосчисления по армянским источникам, "Армянская эра", - Вестник обществ. наук АН АрмССР, 1976, N 1, с. 49-64:

⁵ Յղումները տե՛ս И. А. Орбели, Избранные труды... 372-373.

թուականին շինեցաւ արդի հրաշակաւոյց տաճարը Հերակլէս կայսեր օժանդակութեամբ. այն է որ Իւզ Քիլիսէ կանուանի:

Վանքին արեւելեան կողմը՝ քառորդ մը հեռի է Հայոց՝ Եփրատի մէջ մկրտութեան տեղը, որուն եզերքի քարաժայռերուն վրայ շատ մը խաչադրոշմ փորուածներ կան մինչեւ հիմա:

Նպատ լերան զագաթին վրայ մեծին Ներսիսի մատուռներն ու աղօթատեղիները կան, ուր երանելին աղօթքի կայնած՝ լերան առջեւ Զիրաւ դաշտին մէջ Պարսիկներու հետ Հայոց ըրած պատերազմն ու յաղթութիւնը կը դիտէր»¹:

Որ վանահայրն ու միաբանութիւնը ջանացել են կողմնակի աչքից հեռու պահել թաքստոց-մատենադարանում պահուող ձեռագրերը՝ ակնյայտ է թէ՛ Ֆերուհիսանի բառացի վկայութիւնից եւ թէ՛ մանաւանդ՝ Բագաւանի եկեղեցի այցելած, նոյնիսկ նրա նկարագրութեամբ զբաղուած անձանց կատարեալ անտեղեակութիւնից: 1850-ական թթ. Ուչքիլիսա-Բագաւանում է եղել եւ «ահեղ մեծութեան» եկեղեցին նկարագրել մխիթարեան հայր Ներսէս Սարգիսեանը. նա գիտէ, որ զմբեթ պահող սիւները սնամէջ են «եւ ելանելիք ի նոսին եւ սենեակք, եւ ի սենեկացն դարձեալ այլովք սանդղօք յայլ սենեակս մինչեւ ցտանիսն, առ հասարակ քարաշէնք»²: Միաբանութեան չորս-հինգ անդամներից ոչ մէկը հայոց ձեռագրական արժէքներին այնքան նախանձախնդիր մխիթարեան գիտնականին չի յուշել զաղտնարանի սնդուկների պարունակութեան մասին: Կարելի է մտածել, թէ միաբանները կաթոլիկ ազգակցի առաջ սրտաբաց լինելուց զգուշացել են, բայց 1882 թ. Բագաւան պաշտօնական եկեղեցական յանձնարարութեամբ եկած Մաղաքիա եպս. Օրմանեանը եւս ձեռագրերի սնդուկների մասին տեղեկութիւն չունի, թէեւ վանահայր Յովհ. վրդ. Աստուածատրեանի մասին նպաստաւոր է արտայայտուում³: Տեղեկութիւններ

¹ Բարունակ Պէյ Ֆերուհիսան, նշւ. աշխ., էջ 160-162: 624 թուականը գօտեւորող արձանագրութեան սկզբում հետագայում փորագրուած 29 գրերի վերձանութեան արդիւնք է (83+551):

² Ներսէս Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 221: Բագաւանի եկեղեցու վերաբերեալ տե՛ս նաեւ Պօղոս Մուրատեանց, Նկարագիր Ս. Յովհաննու վանուց, «Արարատ», 1889, էջ 34-41, 108-116, 139-153, 194-212, 263-278, 308-321:

³ Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Խոհք եւ խօսք, Երուսաղէմ, 1929, էջ 117, 133: Թեմակալ առաջնորդ եւ վանահայր Յովհ. վրդ. Աստուածատրեանը, Օրմանեանի գնահատութեամբ, «Բաղմաշխատ եւ բաղմաչարչար խնամակալ եղած էր իւր վիճակին՝ վերջին պատերազմին եւ սովին միջոցներուն գերութեան եւ մահուան երկիւղ կրելով եւ սովեալները կերակրելու համար մինչեւ ժամացոյցը վաճառելու հասնելով» (նշւ. աշխ., էջ 133-134):

չունեն նաև Բագաւանի մասին խօսող եւրոպացի հեղինակները¹, բացառութեամբ X. Marmier-ի, որը «Ճանապարհորդութիւն ի Պարսկաստան» նօթերում արձանագրում է, թէ Բագաւանի վանքում «Հարիւրաւոր ձեռագիր ունին փոշոյ մէջ թաղած, Անգղիացի մը Խորենացւոյ գեղեցիկ օրինակ մը գտաւ լատին թարգմանութեամբ եւ հարցնելով թէ ինչ գրուած է, պատասխանեցին, թէ գիրք մ'է, որ չենք հասկնար («Բագմավէպ», 1907, էջ 234)»:

Բագաւանի ձեռագրական հաւաքածոյի մասին մի վերջին տեղեկութիւն գտնում ենք Ս. Հայկունու «Բագրեւանդ ջրաբաշխ գաւառ» աշխատութեան էջերում.

«Այս հռչակաւոր վանքը ունէր ձեռագրաց մատենադրաան, որ պահուած էր վանքի որմերուն մէջէն սանդուխներով դէպի գմբեթ բարձրացած մի դարանի մէջ. այս ձեռագիրներ ամբողջովին 77-ի պատերազմին վանքի մէջ թողուած են եւ ի կորուստ մատնուած: Մի ամենարնտիր ձեռագիր՝ մագաղաթեայ Աստուածաշունչ քրդերու ձեռք նանցնի, կը բերեն Ղարաբէկ հայ գիւղն, կը դնեն վայր ու փայտով հարուածներ կը տան ձեռագրին, որպէսզի հայեր մեծ գին տան, գերու թիւնից ազատեն. կողոպտուած հայեր աստի անտի ցորեն հաւաքելով կը տան, կը ստանան Աստուածաշունչն»²:

Դժուար է ասել՝ «ի կորուստ մատնուած» ասելով 1877-1878 թթ. ուս-թուրքական պատերազմի ժամանակ տեղի ունեցած այրում-ոչնչացում պիտի հասկանալ, թէ՞, ինչպէս ընդունուած է կոչել՝ գերեզմանապատ հասկանալ, թէ՞, ինչպէս ընդունուած է կոչել՝ գերեզմանապատ հասկանալ: Թերեւս նոյն հաւաքածոյի մաս կազմած Աստուածաշունչի վե-վարում: Թերեւս նոյն հաւաքածոյի մաս կազմած Աստուածաշունչի վե-վարում: Թերեւս նոյն հաւաքածոյի մաս կազմած Աստուածաշունչի վե-վարում: Թերեւս նոյն հաւաքածոյի մաս կազմած Աստուածաշունչի վե-վարում: Թերեւս նոյն հաւաքածոյի մաս կազմած Աստուածաշունչի վե-վարում: Թերեւս նոյն հաւաքածոյի մաս կազմած Աստուածաշունչի վե-վարում:

¹ Տե՛ս, օրինակ, Էլիզէ Ռեկլիւի «Հաղիստան, Հայաստան եւ Քուրդիստան» գիրքը, որից գրուածներ է թարգմանել ու ծանօթագրել Գալուստ Տէր-Մկրտչեանը (տե՛ս նրա «Հայագիտական ուսումնասիրութիւններ», գիրք Բ, աշխատասիրութեամբ Պ. Յ. Յակոբեանի, Երեւան, 1998, էջ 401): Ուշքիւրիսէ է այցելել նաև գերպրոֆ. Պ. Յ. Յակոբեանի, Երեւան, 1998, էջ 408-409):

² Ս. Հայկունի, նշ. աշխ., էջ 277: Շահէ արքեպս. Աճէմեանի խմբագրած «Յուզակ Աստուածաշունչ մատենանի հայերէն ձեռագիրներուն» (Լիզպոն, 1992) գրքում չկարողացանք Ղարաբէկ գիւղում փրկուած այս ձեռագրի նկարագրութիւն գտնել. ճանաչելու համար մեր ունեցած տեղեկութիւնները խիստ սահմանափակ են:

³ Ս. Հայկունի, նշ. աշխ., էջ 281-283

նացի (2 օրինակ): Լրացուցիչ տեղեկութիւնների պակասը մեզ հնարաւորութիւն չի տալիս ճշտելու, թէ յիշեալ հեղինակներից որը տպագիր է եղել, որը՝ ձեռագիր¹: Ամենեւին բացառուած չէ, որ Ֆերուհիանի տեսած «մագաղաթի վրայ գրուած նախնեաց ձեռագիր ընտիր մատեանները» գէթ մասամբ ներկայացուած են 1860-ին կազմած ցանկում: Մ. Օրմանեանը սովն ու պատերազմական արհաւիրքը յիշատակում է, ձեռագրերի կորուստը՝ ոչ: Սակայն կորուստի մասին չխօսելը պահպանուած լինելու երաշխիք չէ: Հաւանաբար թաքստոցներում պիտի գտնուէին «Շարժական ու անշարժ կայից» ցանկում ներկայացուած ոսկեջուր եւ արծաթէ առարկաները, որոնք նոյնպէս կորուստի են մատնուել:

Թւում է, պարագաները վերջնականապէս պարզ պիտի դառնային 1912 թ., երբ յատկապէս Բագաւանի եկեղեցին ու նրա արձանագրութիւնները ուսումնասիրելու համար Ն. Մառը այստեղ էր գործուղել Յ. Օրբէլուն: Բայց, ինչպէս արդէն ասուեց, երիտասարդ Յ. Օրբէլին հիմնականում զբաղուել է տեղիս վիմագրերի, մանաւանդ գօտեւորող շինարարական արձանագրութեան վերծանման ոչ դիւրին աշխատանքով: Աւանդատների վերնայարկում եղած սենեակներն ու այնտեղ տանող ուղիները նկարագրելուց յետոյ, Յ. Օրբէլին շարունակում է. «Բացի այս փոքրիկ սենեակներից, եկեղեցու պահակի խօսքերի համաձայն, գոյութիւն ունի նաեւ ինչ-որ մի դժուար մատչելի գաղտնարան, բայց թէ յատկապէս որտեղ՝ նա չկարողացաւ ինձ բացատրել»²: Խօսքը, անշուշտ, Ֆերուհիանի տեսած գաղտնարանի մասին է, սակայն բացատրութեան կարօտ է պահակի անտեղեկութիւնը՝ միաբանութիւնը շարունակում էր թաքո՞ւն պահել գաղտնարանը (ուրեմն նրանում պահած արժէքներ կային), թէ՞ ժամանակի ընթացքում (1878 թ. յետոյ) այն այլեւս մոռացութեան էր տրուած (նրանում այլեւս թաքցնելիք չունենալու հետեւանքով)³:

Ձեռագրական հաւաքածոների պատմութեանը վերաբերող գրականութեան մէջ մեզ չյաջողուեց Բագաւանի սնդուկների բովանդակութեանը եւ նրանց իրական ճակատագրին վերաբերող ստուգելի

¹ Օ. Եզանեանը 1974 թ. հրատարակած մի յօդուածում խոստանում է Բագաւանի այդ գրացանկին անդրադառնալ առանձին ուսումնասիրութեամբ (տե՛ս «Էջմիածին», 1971, յունիս-յուլիս, էջ 84), բայց չկարողացանք ճշտել՝ նման հրատարակում կատարե՞լ է, թէ՞ ոչ:

² И. А. Орбели, указ соч. с. 462.

³ Ս. Էփրիկեանի տեղեկութեամբ «1877-ի պատերազմի ժամանակ վանացս ձեռագիրները գետնի տակ թաղելով ի կորուստ մատնուած են: Այժմ ունի ձեռագիր եւ տպագիր ընդամէնը 250 կտոր գիրք» (Բնաշխարհիկ բառարան, Ա, Վենետիկ, 1902, էջ 344):

երեք եկեղեցի): Այստեղ XIX դ. սկզբին Դանիէլ կաթողիկոսը օծուեց կաթողիկոս: Բայց, աւա՛ղ, այդ հոյակապ վանքը, որ դեռ շատ լաւ մնացել է, այսօր դարձել է բուերի եւ ոչխարների բնակարան. նա եւս ողբում է Հայաստանի անհետացումը եւ հայերի թշուառութիւնը: Նրա հոյակապ գմբեթի գագաթից լաց է լինում տանջուած Հայաստանը»¹:

Նոյն գրքում տպագրուած է նաեւ Շիրուանզադէի «Պատերազմի վայրերում» յուշագրութիւնը: Նա եւս եղել է Ուչքիլիսայում, այցելել Ա. Յովհաննէս. «Ոմանք մեզնից կամեցան այցելել Սուրբ Յովհաննու վանքը, որ գտնւում էր Ուչքիլիսայում, մի վերստ հեռու: Ասում են, որ այդ վանքում մի ժամանակ կաթողիկոսներ են օծուել: Հետաքրքրականն ինձ համար նրա ճարտարապետութիւնն էր: Դժբախտաբար, այն էլ մի բանի նման չէ: Եթէ չափը որեւէ արժէք ունի, կ'ասեմ, որ հազիւ թէ մեծութիւնն ունենայ մեր վանքերից որեւէ մէկը՝ 59 քայլ երկայնութիւն եւ 33 քայլ լայնութիւն: Շրջապատուած է վանքը բազմաթիւ քարաշէն սենեակներով, որոնք, սակայն, հիմնովին աւերուած են: Երբ ներս մտանք, աղաւնիների մի երամ թուաւ մեր գլխի վրայով եւ թառեց վիթխարի, բայց տձեւ գմբեթի տակ: Սալայատակը, պատերը, նոյնիսկ սեղանը ծածկուած էին նրանց կղկղանքով: Երկու ահագին խորաններ ծառայում էին իբրեւ մթերանոց եւ լի էին ալիւրով, ցորենով, գարիով: Սեղանը կողոպտուած էր եւ կիսախարխուլ: Ահագին քարերը դուրս էին ցցուել պատերի միջից պառաւի ատամների պէս եւ սպառնում էին ընկնել»²: Շիրուանզադէի այս գնահատութիւնը կառոյցը ճանաչելու վկայութիւն չի բովանդակում: Նրա յուշագրութիւնից անբաւական է եղել նաեւ ուղեւորութեան մասնակից Յովհ. Թումանեանը³: Վերջինիս ծոցատետրային անտիպ գրառումներում Բագաւանի վերաբերեալ ասուած է. «Մտանք ս. Յովհաննէս: Համիդիէն նահանջելիս կողոպտել են վանքը, գրքերը կրակել, ձիանքը մէջը կապել, միւս օրը փախել» (Գ.Ա.Թ., Յովհ. Թումանեանի Փոնդ. թիւ 258, էջ 41բ): Վերջին տարիներին Բագաւանի տարածք այցելած մարդկանցից տեղեկացանք, թէ Արմաշի վանքի պէս ճարտարապետական այդ եզակի կառոյցի տեղում քար իսկ չի մնացել:

¹ Հ[ամբարձում] Ա[ռաքելեան], Տանջուած Հայաստան. ուղեւորութիւն թիւրքաց Հայաստանում, «Զիթենի», Թիֆլիս, 1915, էջ 517-518:

² «Զիթենի», էջ 52

³ Տե՛ս Լուսիկ Կարապետեան, Յովհաննէս Թումանեանի հասարակական գործունէութիւնը, Երեւան, 1992, էջ 135:

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ
ՀԱԻԱՔԱԾՈՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ
ԵՒ ԵՂԻՇԷՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՄԻ ՆՈՐ ՊԱՏԱՌԻԿ

Հայոց միջնադարեան ձեռագիր յուշարձանները ուղեկցել են ազգային գաղթականութեանը եւ աստիճանական կուտակումներ տուել այնտեղ, ուր հանգրուանել է հայրենի միջավայրից պոկուած տուեալ դանգուածը: Համաքայլութեան այս պարագան երկու հիմնական դրդումներով է թելադրուած. նախ՝ ձեռագիր նիւթերն անհրաժեշտ էին արարողական առանձին պէտքերին գոհացում տալու համար, ապա նաեւ՝ նրանք կոչուած էին պահպանելու հայրենի հոգեւոր միջավայրի զգացողութիւնը, դաւանական պատկանելութիւնը:

Երբ Ղրիմի հայութիւնը տեղափոխուած էր Դոնի Ռոստովի շրջակայք, ճանապարհին անլուր գրկանքներ կրող ընտանիքներն ու հոգեւոր պետերը, այդ թւում եւ վանական միաբանութիւնները, իրենց հետ բերում էին հարիւրամեակների ընթացքում Ղրիմի վանքերում ու բնակավայրերում կուտակուած կամ տեղում ընդօրինակուած նշանակալի քանակութեամբ ձեռագրեր: «Լումայ» հանդէսի 1902 թ. 2-րդ (էջ 175-195) եւ 3-րդ (էջ 210-256) համարներում տպագրուած Ե. Շահադիզի «Նոր Նախիջեւանի ձեռագրերը» մեզանում անհասկանալիօրէն աննկատ մնացած յօդուածում, տեղի Ս. Լուսաւորիչ Աւագ եկեղեցում եւ այլ եկեղեցիներում ու անհատների մօտ պահպանուող ձեռագրերի թիւը հասնում է 196 միաւորի (էջ 182), իսկ մէկ այլ ցուցակում՝ 226-ի: Եթէ սրանց գումարենք նորահաստատ գիւղերում եղած ձեռագրերը, ապա այդ թիւը կը հասնի 325-ի (էջ 222): Ձեռագրական այդ հաւաքածոյի մէջ է եւ «Բայլէշահինենց» տոհմանունով կոչուած Յայսամաւուրքը՝ Ղրիմի հայոց գաղթականութեան պատմութեանը վերաբերող նիւթերով: Ձեռագրական այս պատկառելի հաւաքածոն 1845 թ. գրաւել է ազգային եկեղեցական ու մշակութային նշանաւոր գործիչ Ներսէս Աշտարակեցու ուշադրութիւնը, որի պահանջով կազմուել է ցուցակ: Այս ձեռագրերով հետաքրքրուել է 1886 թուականին էջմիածնից տուն վերադարձող Կոնիբիրը:

Ափսոսանքով պիտի արձանագրել, որ Ղրիմի եւ Նոր Նախիջեւանի հայութեան պատմութիւնը մենագրորէն ուսումնասիրող մեր պատմաբանները հետամուտ չեն եղել ձեռագրերի բովանդակած նիւթերն ու նրանց հետագայ ճակատագիրը ճանաչելուն: Նրանցից քանի՞սն է պահպանուել եւ ձեռագրական ի՞նչ հաւաքածոյի մաս կազմել: Ե. Շահագիզի յօդուածը պատշաճ հետաքրքրութիւն պիտի առաջացնէր նաեւ ձեռագրական հաւաքածոներով դրադուող գիտնականների շրջանում, որ դարձեալ անկատար է մնացել:

Եթէ հաւաքածոյի գոյացման վաղեմութիւնը պատկանում է Ղրիմ-Նոր Նախիջեւանի ձեռագրերին, ապա Ռուսաստանի տարածքում եղած հայկական մեծագոյն հաւաքածոն Սանկտ Պետերբուրգի մշակութային-գիտական կենտրոններում հաւաքուած ձեռագրերն են կազմում՝ 472 միաւոր: Նրանք տեղաբաշխուած են հետեւեալ հաստատութիւններում.

1. Ռուսաստանեան ազգային գրադարան
2. Ռուսաստանեան ԳԱ Արեւելագիտութեան ինստիտուտի Սանկտպետերբուրգեան բաժանմունք
3. Սանկտ Պետերբուրգի պետական համալսարան
4. Պետական էրմիտաժ
5. Ռուսաստանեան ԳԱ Արխիւի Սանկտ Պետերբուրգի բաժանմունք
6. Ռուսաստանեան ԳԱ Ռուս գրականութեան ինստիտուտ

Սանկտպետերբուրգեան հաւաքածոյի գոյացման պատմութիւնը միանգամայն այլ է. այն ձեւաւորուել է հայագիտութեան հանդէպ ցուցաբերուող գիտական հետաքրքրութեան աստիճանական ծաւալմամբ:

Շուրջ հինգ տասնամեակ Ս. Պետերբուրգում ապրող եւ Արեւելագիտութեան ինստիտուտի բաժանմունքում պաշտօնավարող հայագէտ Բիւզանդագէտ Կարէն Իւզբաշեանը այդ հետաքրքրութեան վերջին կրողներից է եւ ձեռագրական հաւաքածոյի համազումար նկարագրութեանը ձեռնամուխ է եղել 1960-ական թուականներից: Բազմազբաղ, գիտական միջազգային ասուլիսներին ասելիք ունեցող եւ ներկայութեան անթաքոյց ցանկութիւն ցուցաբերող գիտնականը համոզուած էր, որ իր կազմած նկարագրութիւնը պիտի խմբագրուի ու հրատարակուի Երեւանում՝ կազմելով նորօրեայ ցուցակ-նկարագրութիւնների շղթայի օղակներից մէկը: Եւ ապա՝ Երեւանի Մատենադարանի խոշորագոյն հաւաքածոյի ներկայութիւնը լուծելի է դարձնում նոր նկարագրուող ձեռագրերի առաջ բերած շատ խնդիրներ, ճանաչելի դարձնում նիւթն ու նրա շուրջ եղած գրականութիւնը: Ուստի, ինչպէս կազմողն է առաջաբանում արձանագրում, 70-ական թուականներից սկսած եր-

կար ժամանակ ցուցակը գտնուել է Երեւանում եւ խմբագրուել անխոնջ ձեռագրագիտակ Օնիկ Եգանեանի ձեռքով, բայց մնացել է անտիպ (ինչպէս որ մինչեւ այսօր անտիպ է մնում Ս. Լալաֆարեանի կազմած Թ. Բիլիսիի հայկական ձեռագրերի հաւաքածոյի նկարագրութիւնը):

Ուրախութեամբ պիտի արձանագրենք, որ Կ. Իւզրաշեանի կազմած նկարագրութեան հրատարակութիւնն ստանձնել է արեւելագէտներին քաջ յայտնի «Православный Палестинский сборник» տարեգրքի խմբագրութիւնը՝ իր 104-րդ պրակը յատկացնելով ձեռագրացուցակին (Ս. Պետերբուրգ, 2005, 342 էջ):

Ինչպէս հայագիտութեանը վերաբերող շատ այլ խնդիրներում, ձեռագիր նկարագրելիս էլ Կ. Իւզրաշեանն ինքնատիպ եղանակ է ընտրել. խորագրերում պահպանել է «Տաղարան», «Գանձարան», «Շարակնոց» վերտառութիւնները՝ գրադարձութեամբ: Հեղինակային անունները պահպանում են իրենց հայեցի հնչումը: Նկարագրական մասը համառօտ է, բայց ոչ Մատենադարանի երկհատորեակի չափ. յաճախ յղում է Յ. Տաշեանի նկարագրութեան համապատասխան միաւորը:

Առանձին դէպքերում կան աղբիւրագիտական կարգի յղումներ (օրինակ Շնորհալու «Յիսուս Որդին» ներկայացնելիս նկատուած են «Հոմերական» քաղաքները, էջ 83-84), մասնաւորեցուած է ո՛ր կամ ո՛ւմ հաւաքածոյից սերումը (Բրոսէ, Մառ, Օրբէլի եւն): Գրչութեան բնութագրումը համապատասխանեցուած է բիւզանդականին. մեծատառ-երկաթագիր, փոքրատառ-բոլորգիր, նոտրգիրն ու շղագիրը նկարագրական բացատրութեամբ են, ընդգծումով: Մատենագիտական յղումները վերաբերում են ձեռագրին եւ ոչ թէ նրանում եղած բնագրին:

Առաջաբանում տրուած է ներկայացուող հաւաքածոների գոյացման համառօտ պատմութիւնը՝ առանց նրանցով պայմանաւորուած մատենագրական-մշակութային եւ համայնքային պատմութեան մասնաւորեցման: Ուստի, օրինակ, Կ. Իւզրաշեանը առաջաբանում ոչ մի խօսք չի ասում նոյն Ս. Պետերբուրգում Սանասարեան վարժարանին պատկանող եւ Կ. Եգեանի խնամակալութեան տակ գտնուող 121 ձեռագրերի մասին, որոնք 1903 թ. ամռանը հրդեհի ճարակ դարձան: Մեսրոպ Մագիստրոսի՝ 1901 թ. կատարած նկարագրութեան շնորհիւ (այն լոյս տեսաւ Վենետիկում 1981 թ. Իւր. Հ. Վարդանեանի աշխատասիրութեամբ, որը նոյն Գեւորգ Հ. Տէր-Վարդանեանն է) այժմ գիտենք այդ կորուստի բովանդակութիւնը:

Բարեբախտաբար, նկարագրողը զանց չի առել ձեռագրական յի-

չատակարանների ներկայացման անհրաժեշտութիւնը. դրանք նա հաւաքել եւ, իբրեւ յաւելուած, հրատարակել է բնագրի լեզուով՝ 130 միաւոր համարակալմամբ, օժտել յատուկ անունների առանձին ցանկով:

Սանկտ-Պետերբուրգի հայկական ձեռագրական հաւաքածոների նկարագրութեան հրատարակութիւնն արձանագրելի իրողութիւն է մերօրեայ հայագիտութեան համար եւ պարտաւորեցնող լրացում՝ կադմոդի գիտական կենսագրութեանը: Ընդգծենք, որ մեր սիրելի գործընկերն իր ութսունամեայ տարելիցից յետոյ էլ պահպանում է գիտական բորբոքուն հետաքրքրութիւնը եւ հանդէս բերում նոր խնդիրներ լուծելու աներկբայ կարողութիւններ:

* * *

Պետերբուրգում հանգրուանած ձեռագրերը, որոնց մի ստուար մասի մանրաժապաւէնները ժամանակին բերուել են Մատենադարան, մանաւանդ նրանց առանձին երկաթագիր պահպանակներն ու հաւաքածոյ պատառիկները գիտական ուսումնասիրութեան կարեւոր աղբիւր կարող են ծառայել: Տարիներ առաջ գրութեանս հեղինակն ու նոյն Կ. Իւզբաշեանը Արեւելագիտութեան ինստիտուտի հաւաքածոյի ձեռագրերից մէկի (A 82) պահպանակում տեսան ու հրատարակեցին Ղազար Փարպեցու հնագոյն մի պատառիկ («Բանբեր Մատենադարանի», թիւ 11): Այժմ այդ կարգի նիւթերի որոնումն անհամեմատ հեշտացել է: Ձեռագրացուցակի 423 համարի տակ մէկտեղուած է հայագէտ Կարապետ Կոստանեանի հաւաքածոյից պահպանուած 50 պատառիկ-միաւոր, այդ թւում՝ մի նոր պատառիկ Եղիշէի երկից (Կ. Իւզբաշեանը մասնաւորեցրել է նրա պատկանելութիւնը, էջ 193):

Եղիշէի երկից պատառիկների տեսքով պահպանուած հատուածների բնագրագիտական կարեւորութիւնը հայագիտութեան մէջ վաղուց արձանագրուած իրողութիւն է: Լիոնի մատենադարանի թիւ 15 գրչագրի պահպանակներն ուսումնասիրելիս հայագէտ Ֆ. Կ. Կոնիբիրը նկատեց, որ նրանք «չատ հին երկաթագիր տառերով են գրուած» եւ «այս Ա սեան մէջ եղած բնագիրը չէր նմանէր երբեք այն բնագրին հետ, զոր այսօր կ'ընթեռնունք հրատարակութեանց Բ սեան նախընթաց մասին մէջ» (ՀԱ., 1893, էջ 129): Շարունակութեան մէջ գիտնականն աւելի որոշակի է արտայայտուած. «Հատակոտորքս որչափ ալ պակասաւոր են, կ'ապացուցանեն, որ Եղիշէի բնագիրը յառաջ շատ տարբեր էր անկէ, զոր այսօր տպագրութիւնք մեր առջեւ կը դնեն» (ն. տ., էջ 133): Ֆ. Կոնիբիրը 5-րդ դարի պատմիչի ձեռագրերում կատա-

րուած կերպարանափոխութիւնները հակուած է ժամանակագրելու «Ժ դարէն ետքը»:

Գրեթէ նոյնական եզրակացութիւն է բխում Հ. Յ. Աստուրեանի կատարած հրատարակումից («Բազմավէպ», 1906, էջ 7-9, 59-64, 110-114): Նա Մարաշի մէջ տեսել է 8 էջ (=4 թերթ) իբր պահպանակ օգտագործած երկաթագիր պատառիկ՝ քաղուած «Եղիշէի Ա, Բ, Դ, Ե յեղանակներէն» եւ գրուած «ամենահին թղթի վրայ», որ համարում է ԺԲ դարի գործ ու խիստ տարբեր Անձեւացեաց օրինակից: Կարելի է ասել, նոյն կարգի տարբերութիւններ են առկայ Հ. Թորգոմ Գուշակեանի հրատարակած բնագրում (Հատակոտորներ Եղիշէի Վարդանանց պատմութենէն, «Սիօն», 1932, էջ 210-218):

Պետերբուրգեան պատառիկի ընդօրինակութեան փաստով ու Եղիշէի Պատմութեան ձեռագիր ու տպագիր օրինակներին վերաբերող՝ Կ. Կոստանեանի հրատարակումներից կարելի է վստահօրէն եզրակացնել, թէ գիտնականն առանձնակի հետաքրքրութիւն է ունեցել այդ մատենագրի նկատմամբ, սակայն ափսոս, որ չի հասցրել իր դիտարկումներն ամփոփել՝ բնագրական մի նոր հրատարակում ձեռնարկելով:

Մեր սոյն հրատարակումը մի նոր լրացում է սրբագրութիւններ ու խմբագրութիւններ թելադրող նիւթերին: Յուսանք, որ երբեւէ կը համատեղուեն Եղիշէի երկից պահպանուած հին ու նոր պատառիկների տեքստերը եւ, գումարուելով բանասիրական ճանապարհով ձեռք բերուած արդիւնքներին, վերակազմութեան խնդիր կ'առաջադրեն առայժմ գոհացում տուող Ե. Տէր-Մինասեանի կազմած համեմատական բնագրին:

С 44/42 պատառիկը բաղկացած է երկու առանձին թերթից՝ գրուած անցման շրջանի երկաթագրով (ուղղագրիծ), ամենայն հաւանականութեամբ, XII դարից ոչ շուտ: Թերթերի աջ եւ վերին լուսանցքներն ու սիւնակների եզրերը կտրուած են ու քայքայուած, խոնաւութիւնից ծայրայեղ խունացած: Չախ եւ ներքին լուսանցքները հիմնականում պահպանուել են: Կան ցեցկեր տեղեր թերթերի աջընթեր մասում: Պահպանուած մասում առկայ է 21-ական տող, իսկ վերեւից պակասում է 2-3 տող եւս: Չեռագիրը եղել է ոչ մեծ ծաւալի, հաստ եւ ոչ շատ ողորկ թղթի վրայ գրուած: Այժմեան չափերն են՝ 19,4x11,8 (ըստ Կ. Իւզրաշեանի նկարագրութեան՝ 19,5x11,7), թերթերը պատկանել են Կ. Կոստանեանին, որի ստորագրութիւնը պահպանուել է 1rև2r էջերի ձախակողմեան լուսանցքի ստորին մասում:

1r էջում կայ հետեւեալ թուագրում-համարակալումը՝ «1919 N 698 թ. 42»: Պատառիկի հետ միաժամանակ պահպանուել են Կ. Կոստանեանի վերձանութեան թերթերը: Ընթերցումը կատարուած

է Եղիշէի Պատմութեան՝ Վենետիկի 1893 թուականի հրատարակութեան համեմատութեամբ, ըստ որի եւ նա յղում է էջերը¹: Վերծանողի կողմից որոշ բառեր ու բաղադրումներ կապոյտ մատիտով ընդգծուած են:

Տրոհման նշաններից օգտագործուած է միայն միջակէտը, գրչութեանը բնորոշ է Յ-ի եւ Յ-ի գրութեան բացարձակ նոյնականութիւնը, փ-ի միջին ստեղծ հիմնականում տողից վերեւ է. 1v էջում մէկ անգամ Յ-ն գրուած է յ ձեւով: Տառաձեւերի համաչափութիւնը մասամբ խախտուած է: Վայրակախ եւ վերընթաց ելուստները տողից դուրս են (բոլորգրի անցման յատկանիշ):

Եղիշէի՝ 1957 թ. գիտական հրատարակութեան համապատասխան բնագիրն ամփոփուած է 4 պատառիկ էջի 8 սիւնակում²:

Եղիշէ, 67₁₇ - 68₁

[.....]
 1r Ա.ՋԵԱ.Լ Ի ՔԱ.ՋՈՒԹԵՆԷ [ՄԻ ՍԻՐ]
 Տ ՅԱ.ԻԺԱՐՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԵՑՈՒ[Ն ԱՐ-]
 ԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՑ, ԾԵՐՈՑ ԵՒ ՏՂ[ԱՅՈՑ]
 ԱՄԵՆԱՅՆ ՄԻԱԲԱՆԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ [ԱՍՏՈՒԱԾ]
 ՁԻ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ ՁՄԻ ՁԻՆՈՒՈՐ[ՈՒԹԻԻՆ]
 ՁԻՆՈՒՈՐԵՑԱՆ ԵՒ ՁՄԻ ՁՐ[Ա.ՀՍ Ա-]
 ԳԵՑԱՆ ՁՀԱ.ԻԱՏՈՑ ՊԱՏՈՒ[ԻՐԱՆ-]
 ԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԻՈՎ ԳԱ.ԻՏՈՎ ՃՇՄԱ[ՐՏ-]
 ՈՒԹԵԱՆՆ. ՊԵՂԵՑԻՆ ՁՄԷ[ՁՍ]
 ԱՐՔ ԵՒ ԿԱՆԱՅՔ: ԸՆԿԵՑԵ[Ա.Լ ԿԱՅՐ]
 ԱՅՆՈՒՀԵՏԵԻ ՈՍԿԻ ԵՒ ՈՉ Ո[Ք]
 ԱՌՆՈՅՐ ԻԻՐ ԱՌԱՆՁԻՆՆ. Ա[ՐԾ-]
 ԱԹ ԱՐՀԱՄԱՐՀԵԱԼ ԱՌԱՆՑ Ա[ԳԱ.Հ-]
 ՈՒԹԵԱՆ ԱՆԱՐԳԵԱԼ ՊԱՏՈՒ[Ա.ԿԱ-]
 Ն ՀԱՆԴԵՐՁ. ԱՌ Ի ՁԱՐԴ ՄԵ[ԾԱՐ-]
 ԱՆԱՑ. ՆԱԵԻ ԻԻՐԱՔԱՆՁԻԻՐ [ՍՏԱՑ-]
 ՈՒԱԾ ՈՉ ԻՆՉ ՀԱՄԱՐԵԻՆ ՅԱՉ[Ս ՍՏ-]

¹ Եղիշէին վերաբերող նրա հրատարակումը տե՛ս Կ. Կոստանեան, Եղիշէի Պատմութեան բնագիրը, «Լուծայ», 1902, թիւ 1, էջ 183-193: Այստեղ նա գնահատում է իրեն յայտնի ձեռագրերն ու տպագրութիւնները՝ մասնաւորապէս արծարծելով եղանակների քանակի եւ գործի ամբողջականութեան խնդիրները: Յօդուածն աւարտուած է մատենագիտական ցանկով:

² Վերջերս Եղիշէից քաղուած մի նոր պատառիկ հրատարակեց Ա. Բանուչեանը («Բանբեր Մատենադարանի», N 17 (2006 թ.), էջ 261-287):

ԱՅԱԻՂԱՅ ԻԻՐԵԱՆՑ. ՏԵՍԱՆ[ԵԻՆ ԶԱՆ-]
ՁԻՆՍ ԻԻՐԵԱՆՑ ՈՐՊԷՍ ՄԵՌ[ԵԱԼ]
ԴԻԱԿՈՒՆՍ. ԵՒ ԶԻԻՐԱՔԱՆՁ[ԻԻՐ]
ԳԵՐԵԶՄԱՆ ԻՆՔԵԱՆՔ ՓՈՐԵ[ԻՆ]

Եղիշէ, 68₄ - 14

[.....]

[.....]

[.....] ԸՆԹԱՆԱՅՐ ՔԱԶ-
ՈՒ]ԹԵԱՄԲ ՄԵՌՑՈՒՔ ԶԱՆՈՒՆ ԵՒ ԶՈԳ-

1v ԻՍ] [ԵԻԵԹ] ԺԱՆԳԵՍՑՈՒՔ, ԶԻ
ԿԵՆ]ԴԱՆԻ Է Ի ՄԵԶ ՔՐԻՍՏՈՍ, ՈՐՈՒՄ ԴԻ-
ԻՐԻ]Ն Է ՄԻԻՍ ԱՆԳԱՄՆՈՐՈԳԵԼ ԶՄԵ-
Զ Ի Հ]ՈՂՈՅ. ԶՄԵԶ ԵՒ ԶՅԱՌԱԶԱԳՈՅ-
Ն] ԶԱՍԵՆԱՅՆ ԶՆՆՁԵՑԵԱԼՄՆ, ԵՒ
ՀԱՏ]ՈՒՑԱՆԵԼ ԸՍՏ ԻԻՐԱՔԱՆՁԻԻՐ
ԳՈՐ]ԾՈՑ ԻԻՐԵԱՆՑ: ԶԱՅՍ ԵՒ ԱՌԱԻ-
ԵԼ] ՔԱՆ ԶՍՈՅՆ ԽԱԻՍԵԼՈՎ ԵՒ ՄԽԻ-
ԹԱՐ]ԵԼՈՎ ԶԱՆՁԻՆՍ ԵՒ ԶՄԻՄԵԱՆՍ:
ԴԱՐ]ՁԵԱԼ ԶԻՆՈՒՈՐՔՆ ՄԻԻՍ ԱՆԳԱՄ
ՊԱՏ]ՐԱՍՏԵԻՆ ԶԶԷՆՍ ԻԻՐԵԱՆՑ, ԵՒ
ԱՂԱԻ]ԹԱԿԱՆՔՆ ԱՆԴԱԴԱՐ ԼԻՆԵԻՆ
ՅԱՂ]ԱԻԹՍ ԻԻՐԵԱՆՑ. ԵՒ ՊԱՀՈՂՔՆ
ՃԳՆ]ԵԻՆ Ի ՊԱՀՍ ԻԻՐԵԱՆՑ ԵՒ ԶԱՅ-
Ն Պ]ԱՇՏԱԻՆԵԻՑՆ Ի ՏՈՒԷ ԵՒ Ի ԳԻ-
ՇԵՐԻ] ԱՆՀԱՏ ԵԻՆ Ի ՍԱՂՄՈՍ:
ԸՆԹ]ԵՐՑՈՒԱԾՔ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿՏԱԿԱ-
ՐԱ]ՆԱՅՆ ՈՉ ԵՐԲԵՔ ԱՌՆՈՅԻՆ ԴԱ-
ԴԱՐ]ՈՒՄՆ ՅԱՍԵՆԱՅՆ ԺԱՄ:

Եղիշէ, 72₁₉ - 73₆

[.....]

ԹԱԳԱԻ[.....]

ԳԻՐՍ ՊԱՂԱՏԱՆԱՅ ՀԱՅՈՑ [.....]

ՀԻՆ. ԶՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՍ ՆԱԽՆ[...]

ՑՆ ԻԻՐՈՑ. ԵՒ ԲԱԶՈՒՄ ՄԱՏԵԱ[...]

Ի ՄԷՉ ԵԿԵԱԼ ԸՆԹԵՐՑԱՆ ՈՐ Զ[...]

Ն ՈՒԽՏ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ Ի ՆԵՐՔ[...]

* Գիտակցաբար քերուած է կրեք տառ. պիտի լինի «խսկ»:

ԳՏԱՆԵԻՆ: ԵՒ ՄԻՆՁԴԵՌ ԵՐԱ[...]
 ԻՆ ԹԵՌԴՈՍ ՀԱՐՑԱՆԷՐ ԶԱՄԵ [...]
 ՍԻՆԿՂԻՏՈՄԸՆ ԵՒ ՀՆԱՐՍ Ի[...]
 2r Ն ԿԱՄԷՐ ԳՏԱՆԵԼ ԽԱՂԱՂՈՒ[...]
 ԵՒ ՀՈԳ ՏԱՆԷՐ [III]* ՄԵԾԱԻ Յ[...]
 ԱՐՈՒԹԵԱՄԲ. ԶԻ ԵԿԵՂԵՑԻՔ ԱՐ[...]
 ԻՑ ՄԻ ՅԱՓՇՏԱԿԵՍՑԻՆ ՅԱՆԱԻ[...]
 ՀԵԹԱՆՈՍԱՑՆ. Ի ՆՄԻՆ ԺԱՄ[...]
 ԱԿԻ ԱՆԴԷՆ ՎԱՂՎԱՂԱԿԻ ՀԱՍԱ[...]
 ՎԱԽՃԱՆ ԿԵՆԱՑ ՆՈՐԱ ԵՒ Կ[...]
 ՉԱՐ ԽԱՓԱՆՈՒՄԸ ԼԻՆԷՐ ԳՈՐԾ[...]
 ԱԻԳՆՈՒԹԵԱՆՆ. ԵՒ ԹԱԳ[...]
 ԷՐ ՓՈԽԱՆԱԿ ՆՈՐԱ ՄԱՐԿԻԱՆ[...]
 ԿԱՅՍՐ. ԵՒ Ի ՉԵՌՆ ՎԱՏԹԱ[...]
 ԱՆՑ ԽՐԱՏՏՈՒԱՑ ԾԱՌԱՅ[...]

Եղիշէ, 738-17

[.....]
] ԼԵԱԼ ԹԱԳԱԻՈՐՆ
] ՆՍԱԼ ՄԻԱԲԱՆ ՈՒ-
] ԱՄԵՆԱՅՆ ՈՒԺՈՎ
] ԴԷՄ ԿԱՑԵԱԼ ԵԻՆ
] ԵԹԱՆՈՍԱՑՆ ԱՆԱՐ
] ԵՑԱԻ ԶՈՒԽՏ ՀԵԹԱՆ
] ՊԱՀԵԼ ՎԱՄՆ ՄԱՐՄՆԱԿԱՆ
] ՂԱՂՈՒԹԵԱՆՆ, ՔԱՆ ՊԱՏԵՐ
] ԱԿԻՑ ԼԻՆԵԼ ՈՒԽՏԻՆ ՔՐԻՍՏՈ
] ՆՆ: ՎԱՄՆ ԱՅՆՈՐԻԿ ՓՈՒ-
 2v] ԱՐԴԱԿԵԱՑ ԴԵՍՊԱՆՍ ԱՌ
] ԱԻՈՐՆ ՊԱՐՍԻՑ. ԶՆՈՅՆ ՓՂԱ-
] Ն, ԵՒ ԵՄՈՒՏ ԸՆԴ ՆՈՍԱ ՅՈՒԽ-
] ԱՏՈՒԹԵԱՆ, ԵՒ ՉԵՌՆԹԱՓ
] Ի[] ԲԱՑՆ ՀԱՅՈՑ ԶԱԻՐՈՒ-
] ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԱԻԳՆԱԿ-
] ԵՒ ԻԲՐԵԻ ԱՅՍ ԱՅՍՊԷՍ
] ԱԻ ԵՒ ՀԱՏԱԻ ԱԻԳՆԱԿ-
] Յ ՆՈՑԱ Ի ՄԱՐԴԿԱ-
] ԱՐՉԵԱԼ ՍՈՒՐԲ ԵՊԻՍԿՈՊՈՍՔՆ

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ (V-X ԴԱՐԵՐ)

1. 1. 297 թ. Փոքր Հայքի (Մելիտինէ կենտրոնով), ապա եւ 385/7-ին Մեծայ Հայոց արեւմտեան դաւառների միացումով նորակազմ Արեւելա-հռոմէական կամ Բիւզանդական կայսրութիւնը փաստօրէն դառնում է Հայոց միջնադարեան պատմութիւնը ներառող կարեւոր կազմաւորումներից ու կենտրոններից մէկը: Եւ եթէ մասնագիտական գրականութեան մէջ (Ն. Ադոնց, Ա. Կաթղան, Պ. Խարանիս եւ այլք)¹ այն դիտւում է իբրեւ մասամբ հայկական հաւաքականութիւն, ամենեւին կայսերական ընտանիքներից մի քանիսի հայկական սերումը նկատի չունեն, այլեւ՝ հայերի էթնիկական ներկայութիւնը, նրանց շարունակական մասնակցութիւնը կայսրութեան քաղաքական, ռազմական, տնտեսական ու մշակութային անցուղարձերին: Դատելով Յուստինիանոսի նովելների վկայութիւններից, մինչեւ 536 թ. Բիւզանդական Հայաստանում եւս պահպանւում էր նախարարական կարգը, ուրեմն եւ հողի սեփականատիրութեան հայկական աւանդական ձեւերը²:

1. 2. Մենք շատ տուեալներ չունենք պարզելու համար, թէ կայսրութեան պատմութեան առաջին դարերում այլէթնիկ բնակչութիւնը լեզուական ու մշակութային շփման ինչ աստիճանի սերտացում էր ապրում: Երկու փաստ, սակայն, թելադրում են կարծել, որ այլէթնիկ համայնքները յունախօս դարձնելու հարկադրանք չի եղել. զուցէ դա մասամբ էլ պայմանաւորուած է նրանով, որ ինքը Բիւզանդիան եւս առաջին դարերին շարունակում էր երկլեզու մնալ՝ արքունիքի-պաշտօնէութեան առումով լատինախօս, եկեղեցին՝ գերազանցապէս յունալեզու: Բարսեղ Կեսարացու 372 թ. գրած նամակից յայտնի է, թէ կապաղով-

¹ Nicolas Adontz. Etudes arméno-byzantines. Lisbonne, 1965: A. П. Каждан Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв., Ереван, 1975. Պ. Խարանիս. Հայերը Բիւզանդական կայսրութեան մէջ, թարգմանեց Հ. Պէրպէրեան. Վիեննա, 1966:

² Հմմտ. Ն. Ադոնց. Հայ հին շինականութիւնը. - Պատմական ուսումնասիրութիւններ, լոյս ընծայեց Ա. Խոնդկարեան, Պարիս, 1948, էջ 164:

կեան այդ խոշոր հեղինակութիւնը նախընտրելի էր համարում, որ հայկական դաւառների եպիսկոպոսական աթոռներին հայերէնին դիտակ հոգեւորականներ նստեն¹: Փաստերից երկրորդը բիւզանդական արքունիքի, հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութեան սատար կանգնելն է նորաստեղծ ազգային դպրութիւնը կայսրութիւն ընդգրկուած հայաբնակ դաւառներում գործադրելու Մաշտոցի առաքելութեանը: Կորիւնը շատ հստակ վկայում է, թէ նա «ի կողմանս Յունաց» «ընտանեբար յեպիսկոպոսաց աշխարհին եւ յիշխանաց եւ ի դաւառականացն պատուեալ լինէր, մանաւանդ ի սպայապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Անատողիս»²: Ապա կայսերական «ղանընդդիմակաց» հրաման է ստանում «վասն մանկտոյն յաշակերտութիւնն առ կէս ազգէն Հայոց ժողովելոյ», «բաղմութիւն մանկտույ ժողովել եւ նոցին ռոճիկս կարգել ի պատեհագոյն տեղիս, յորս եւ երանելին զվարդապետութիւն իւր ի գործ արկեալ եւ ժողովելոցն քաղցրացուցանէր»³:

1. 3. Մաշտոցը Կոստանդնուպոլիս էր հասել Դերձանի եպիսկոպոս Գինթի եւ սակաւաթիւ աշակերտների ուղեկցութեամբ: Թէ այստեղ նրանց ընդունողների մէջ հայերը ինչ թիւ էին կազմում կամ իր գոյութեան մէկ դարը բոլորած մայրաքաղաքում հայկական համայնք կար թէ ոչ՝ դժուար է ասել: Գիտենք միայն, որ այդ այցելութեան ընթացքում «բաղում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ ստացեալ՝ ծովացուցանէր զվարդապետութեանն ղխորութիւն եւ լցեալ զեղոյր ամենայն բարութեամբ»: Կորիւնի խօսքերից չի երեւում, թէ Մաշտոցն իր Ենովք եւ Դանան աշակերտներին ո՞ւր էր «վերակացուս հաւատացելոցն» թողնում՝ մայրաքաղաքո՞ւմ, թէ՞ Փոքր Հայքում: Բայց վստահաբար կարող ենք ասել, որ «ի քաղաքն Եդեսացւոց» ասորերէնից հայերէն թարգմանութիւններ կատարելու ուղարկուած Եզնիկն ու Յովսէփը՝ «կատարեալ զհրամանսն եւ առ պատուական հարսն առաքեալ, անցեալ գնային ի կողմանս Յունաց, ուր եւ ուսեալք եւ տեղեկացեալք, թարգմանս կարգէին ըստ հեյլենական լեզուին»⁴: Յաջորդ պարբերութիւնից պարզ է դառնում, որ այդ «ի կողմանս Յունացը» Կոստանդնուպոլիսն է, քանի որ Հայաստանից եկած Ղեւոնդէսն ու Կորիւնը

¹ Աղբիւրներն ու քննութիւնը տե՛ս Կիմ Մուրադեան, Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրութեան մէջ. Երեւան, 1976, էջ 110 եւ շար.: Յատկապէս ուշագրաւն այն է, որ նման պահանջ էր առաջադրուած Հայոց գրի ու դպրութեան ստեղծումից տասնամեակներ առաջ, երբ ժամասացութեան լեզուն առաւելապէս յունարէնն էր, եւ մասամբ ասորերէնը:

² Կորիւն, Վարք Մեսրոպ Մաշտոցի. Երեւան, 1994, էջ 96 [Ժէ]:

³ Նոյն տեղում, էջ 97:

⁴ Նոյն տեղում, էջ 100:

Եղնիկին են միանում (յարէին) «ի Կոստանդինական քաղաքին եւ անդ միարանութեամբն հոգեւոր պիտոյիցն զխնդիրն վճարէին»¹:

Այսպիսով, եթէ այս ամենին գումարենք Տիրանի որդի Տրդատի եւ թոռ Տիրիթի, ինչպէս նաեւ Պապի եւ Ներսէս Սեծի պատանդութիւնները Բիւզանդիոնում², Սահակի թոռ Վարդանի մասնակցութիւնը Մաշտոցի առաքելութեանը Կոստանդնուպոլսում (Խորենացին նամակների տեքստեր է բերում)³ եւ մի շարք այլ իրողութիւններ (Խորենացու տեղեկութեամբ Բիւզանդիոն ուսումնառութեան էին մեկնել նաեւ Յովհան ու Արձան աշակերտները, Աթէնքից Բիւզանդիոն էր դարձել եւ ինքը պատմիչը)⁴, ապա հիմքեր կունենանք ասելու, թէ արդեն IV դարից իսկ Բիւզանդիայի մայրաքաղաքում հայերի որոշ քանակութիւն պիտի լինէր, այլ կերպ՝ Հայոց համայնք պիտի գոյութիւն ունենար:

1. 4. Թէ հայոց այդ ենթադրելի քանակութիւնը այսպէս կոչուած ազգային կազմակերպւածութեան որեւէ եղանակ՝ հաստատութեան ձեւով ունէր թէ ոչ՝ չենք կարող ասել, թէ եւ յաճախակի երթեւեկի իրողութիւնը նման մի բան յուշում է: Այս պարագային վճռականօրէն անհրաժեշտ է տարբերակել կացութիւնը մինչեւ V դարի վերջ եւ նրանից յետոյ: Մինչեւ Դուինի 506 եւ 554 թթ. ժողովները, քանի դեռ եկեղեցին պահում էր իր տիեզերականութիւնը, հայերը Կ. Պոլսում ազգապատկան եկեղեցի ու նաեւ ազգային հանգստարան ունենալու անհրաժեշտութիւն չէին տեսնում, որովհետեւ բիւզանդական հայրապետական իրաւասութեան սահմանները ամփոփում էին ողջ երկիրը եւ բոլոր քրիստոնեաները, մինչդեռ Քաղկեդոնի որոշումները մերժելուց յետոյ բիւզանդարձակ հայր, եթէ նա մնում էր «ազգայնացուած» դաւանութեան հետեւորդ, այլեւս տեղի հայրապետութեան ենթակայութիւն չունէր, որովհետեւ Մ. Օրմանեանի խօսքերով՝ «Մեր ուղղափառ եկեղեցին հայրապետութեան սահմանները... կը հաստատուին Հայաստանեայց բոլոր անձերուն մէջ»⁵: Նոր պայմաններում արդեն Կոստանդնուպոլսում հաստատուող հայերը պէտք է ունենային իրենց

¹ Նոյն տեղում, Մաշտոցի կենսագիրը մասնաւորեցնում է եւ այդ «հոգեւոր պիտոյից» ինչ լինելը՝ Ս. Գրքի հաստատուն օրինակ, Ս. հայրերի մեկնութիւններ, Նիփիական եւ Եփեսոսական կանոններ բերել՝ թարգմանութեան գործը Սահակի գլխաւորութեամբ շարունակելու համար:

² Մովսէս Խորենացի, III, ԺԳ, ԻԱ, ԻԹ: Ներսէսի հետ առնչուող խնդիրների քննութիւնը տե՛ս Nina Garsoian. Quidam Nerseus? A Note on the Mission of St. Nerses the Great, "Armeniaca", Venise, 1969, p. 148-164.

³ Նոյն տեղում, III, Ծէ:

⁴ Նոյն տեղում, III, Կ. ԿԲ, ԿԸ:

⁵ «Սիոն», 1970, էջ 418:

աղոթատեղին (եկեղեցի, մատուռ) ու գերեզմանատուներ: Բնաւ պատահական չէ, որ Յովհ. Գարեղենացու եւ նրա ուղեկիցներին Կ. Պոլսում հաստատուելը պատմող, դէպքերին ժամանակակից ու ականատես Յովհ. Եփեսացին ի մասնաւորի արձանգրում է, թէ հայերը դատուեցին յոյներից եւ «մի մեծ պալատի (սրահի) մէջ, որ շնորհել էր իրենց իշխանը, հաւաքուում էին եւ պատարագ մատուցում իրենց պատրիարքի մահից յետոյ»¹:

Այդ սրահ-աղոթարանի եւ «ուղղափառաց հանդստարանի» գոյութիւնը, ինչպէս նաեւ հայոց եպիսկոպոսների ու իշխանների ներկայութեամբ 572-574 թթ. միջոցին դաւանական խնդիր քննարկող ժողովի գումարումը, կարծում ենք, անվերապահօրէն ասպացոյց են Բիւզանդիայի մայրաքաղաքում իր ինքնուրոյն հոգեւոր-մշակութային խնդիրներով դբադուող, բաւականաչափ բազմանդամ, հետաքրքրութիւններ ու կարողութիւններ դրսեւորող համայնքի առկայութեան:

2. 1. Որ այդ համայնքը, անկախ նրա անդամների դաւանական պատկանելութիւնից, միջամուխ էր Բիւզանդիայի մայրաքաղաքի մշակութային անցուդարձին եւ իւրովի արձագանքում էր նրան, կարելի է հաւաստիանալ Եւտիքիոս Կոստանդնուպոլսեցու «Յաղագս զանազանութեան բնութեան եւ առանձնաւորութեան» երկի հայերէն թարգմանութեան փաստով²: Արտաքին հանգամանքները (հեղինակի երկրորդ պատրիարքական գահակալութիւնը 577-582 թթ., աշխատութեան գրչագիր օրինակների հաւաքումն ու շրջանառութիւնից հանելը 577-578 թթ.) յուշում են, որ թարգմանութիւնը կատարուած պիտի լինի ճիշտ այն ժամանակահատուածում, երբ աշխատութիւնը ի մասնաւորի ուղարկուած էր պատկան հաստատութիւններին ու անձանց՝ առ ի ծանօթութիւն: Այդ նշանակում է, թէ պոլսահայութիւնը յիշեալ թուականներին յոյն աստուածաբան-փիլիսոփաների առաջ ներկայանում էր որպէս կաղմակերպուած, հասու եւ հասարակաց խնդիրներին մասնակից մի համայնք, որի անդամների ձայնը լսելի էր միաբնակ-երկաբնակ վեճերի ու հիմնաւորումների լսարանում: Աւելորդ է յիշեցնել, թէ հայ

¹ Joh. Ephesini. Hist. Eccles. Louvain, 1952, p. 61-62: Հայերէն թարգմանութիւնը տե՛ս Հ. Ն. Ակինեան, Եղիշէ վարդապետ եւ իւր Պատմութիւն Հայոց պատերազմի. Վիեննա, 1932, էջ 187: Հ. Պ. Անանեան, Եւտիքիոս Կ. Պոլսոյ պատրիարքին... մէկ գրութիւնը. "Armemiaca", Venise, 1969, p. 321:

² Հրատարակութիւնը տե՛ս Հ. Պողոս Անանեան, նշւ. աշխ., էջ 316-354: Իտալերէն թարգմանութիւնը՝ նոյն տեղում, էջ 355-382, նաեւ՝ Հ. Ն. Ակինեան, Եւտիքի եպիսկոպոսի Կոստանդինուպոլսեցոյ՝ Յաղագս զանազանութեան բնութեան եւ առանձնաւորութեան. -«Հանդես ամսօրեայ», 1969, էջ 17-40, 159-198:

եւ Զ (627) էր թուականն Հայոց»¹ : Ինչպէս երևում է, VI-VII դդ. սահմանազլխին Բիւզանդիայի մայրաքաղաքում Քրիստոսի բնութեան խնդրին վերաբերող դաւանական քննարկումները զբաղեցնում էին ո՛չ միայն հոգեւոր գործիչներին. բիւզանդական կայսրերին «սուրբ» մեծարանքով յիշատակող «առաջին սուսերակիրը» (προτοσπάυταριος) Հայոց եկեղեցու որդեգրած դաւանութեան հետեւորդ ու ջատագով է, ուստի ազգային հեղինակութիւններին պատկանող կամ վերագրուող ստեղծագործութիւններից մի տեսակ «լիազէն դաւանաբանական» կամ «Հաւատարմատ» է պատուիրում եւ ստանում՝ ի բաւարարումն իր եւ իր միջավայրի նախանձախնդրութեան² :

2. 3. Պատմական պարագաները թելադրում են պնդել, որ VII դարում Կ. Պոլիս հաստատուած Հայոց դպրութեան սպասաւորների թիւը նկատելիօրէն աւելացած պիտի լինէր: Դարի կէսերին կայսրութեան մայրաքաղաք ուսումնառութեան եկած Անանիա Շիրակացին պատմում է, թէ «ի Կոստանդինուպոլիս... պատահեաց ինձ ծանաւթից իմոց, որք անտի էին ուղեւորեալք» հարկաւ դարձեալ կրթութիւն ստանալու³ : Աղբիւրները թոյլ չեն տալիս անուն առ անուն ճշտելու Կ. Պոլիս եկած Հայոց ինքնութիւնը: Նրանցից մէկը պիտի լինէր, օրինակ, Դավիթ Բագրեւանդցին, որը Ասողիկի տեղեկութեամբ էր «ուսեալ զարուեստ փիլիսոփայութեան» եւ յայտնի նաեւ կայսր Կոստանդին (641-668), ուստի «զնա հրամայեաց արձակել ի Հայս, զի երթեալ ի բաց հատցէ զհակառակութիւն եւ արասցէ միաբանութիւն»⁴ : Լիովին կարելի է պատկերացնել, թէ որպիսի պատրաստուածութեան պարագայում նա կարող էր կանգնել Հայ բարձրաստիճան հոգեւորականութեան դիմաց՝ կայսեր հանձնարարութիւնը կատարելու, ասել է՝ Հայերն ու յոյները միադաւանութեան բերելու⁵ :

Դավիթ Բագրեւանդցու կրտսեր սերնդակիցներից պիտի լինէր

¹ Նոյն տեղում:

² Պաշտօնեան, ի դէպ, ծանօթ է նաեւ Հայոց այլ հեղինակութիւնների գործերին՝ Մամբրէ, Պօղոս, Աբրահամ, որոնց «պէս-պէս խորհրդոց» հետեւորդ է:

³ Սրանց խորհրդով էլ ապագայ հանրագիտակը թողնում է մայրաքաղաքը եւ մեկնում «ի Տրապիզոնս Պոնտացւոց»՝ Հայերէնագէտ Տիւբիկոսին աշակերտելու: «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, էջ 18-20:

⁴ Ստեփանոս Տարօնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 91:

⁵ Ի դէպ, այս Դավիթ Բագրեւանդցուն չպիտի շփոթել Դավիթ Թարգմանի հետ, որը Տարօնացի էր եւ կիւրապաղատ Համազասպ Մամիկոնեանի յանձնարարութեամբ 660-ական թթ. «Դամասկացւոց քաղաքում» Հայերէն էր թարգմանում Բարսեղ Կեսարացու «Ի ծնունդ Փրկչին» ճառը: Խնդրին վերաբերող աղբիւրների ու գրականութեան ցանկը տե՛ս Կիմ Մուրադեան, նշւ. աշխ., էջ 174-177:

նաեւ Կ. Պոլսում թարգմանութեամբ ու դարութեամբ պարապող Փիլոն Տիրակացին: Ասողիկը Շիրակացու անշարժ տոմարը հաստատելու կաթողիկոս Անաստասի մտադրութեան մասին պատմելիս ավելացնում է. «Ի սորա ավուրս էր եւ Փիլոն Տիրակացին, որ զՍոկրատայ Պատմութիւն թարգմանեաց ի հայ լեզու»¹:

Մեսրոպ վրդ. Տէր-Մովսէսեանը ժամանակին, Սոկրատի Պատմութեան հայերէն դոյզ խմբագրութիւնները հրատարակելիս, հանգամանօրէն քննել է թարգմանութեան ժամանակի, թարգմանչի ինքնութեան եւ հարակից բազում այլ խնդիրներ²: Երկին վերաբերող միակ անմիջական տեղեկութիւնը պահպանուել է յիշատակարանում, ուր հինգ ժամանակագրական եղանակով տրուած է նոյն 695/696 տարին եւ ապա՝ «թարգմանեաց Փիլոն Տիրակացի առաջին ձեռնարկութեամբ զգիրս զայս մասնաւոր ծայրաքաղ ի Սոկրատայ Եկեղեցական պատմութենէն, թողեալ զինքնախաւսութիւն եւ զթուղթս այլոց եւ զճառս՝ յազգս նուազութեան քարտի եւ մազաղաթի եղելոյ յաւտարութիւն»³: Թարգմանութիւնը, ինչպէս ցոյց է տուել բազմաձևութեամբ հրատարակիչը, բառական է, հիմնականում՝ ստոյգ, «բայց շատ թոյլ է քերականութեան մէջ եւ անտեղեակ՝ երկու լեզուների ոճական նրբութիւններին»⁴: Սակայն այս պարագան ամենեւին չի մերժում մեր թարգմանչի՝ պոլսաբնակ լինելու իրողութիւնը: Թերեւս «առաջին ձեռնարկութեամբ» արտայայտութիւնը մի տեսակ վերապահութիւն է՝ թարգմանութեան անդրանիկ փորձ իմաստով⁵:

¹ Ստեփանոս Տարօնեցի, էջ 99: Այստեղից չափաի եզրակացնել, թէ Սոկրատի Պատմութեան թարգմանութեան տարին անպայմանօրէն զետեղելի է Անաստասի գահակալութեան (661-667) միջոցին, այլ որ Տիրակացին ապրել է յիշեալ կաթողիկոսի օրօք:

² Սոկրատայ Աքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն: Թարգմանեաց Փիլոն Տիրակացի, եւ Պատմութիւն վարուց Սրբոյն Սեղբեստրոսի, թարգմանեալ Աբասուն Տիրակացի, եւ Պատմութիւն վարուց Սրբոյն Սեղբեստրոսի, թարգմանեալ Աբասուն Տիրակացի Զորոփորեցոյ. հ. Ա եւ Բ. Աշխատասիրութեամբ Մեսրոպ վրդ. Տէր-Մովսէսեան. Վաղարշապատ, 1897, էջ 2Ա-ձԱ: Սոկրատի երկի յունարէն բնագրի նորագոյն գիտական հրատարակութիւնը տե՛ս Sokrates, Kirchengeschichte. Herausgegeben von Cünter Christian Hansen. Berlin, 1995.

³ Բազմաթիւ վերատպութիւններից կարեւորներն են Սոկրատայ Աքոլաստիկոսի..., էջ 49-50, «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ժԲ դարեր, էջ 21-22:

⁴ Սոկրատայ Աքոլաստիկոսի..., էջ 27-28:

⁵ Մատենադարանի ձեռագրերից մեկում (N 5254) VII դարի «Անանուն ժամանակագրութիւն» վերտառութեամբ յայտնի բնագրի սկզբում գրուած է «Խօսք Փիլոնի»: Անուան այդ յիշատակութիւնը եւ մանաւանդ Հիպոդիտոսից քաղած հատուածներում Սոկրատի Պատմութեան թարգմանութեանը բնորոշ թիւրընկալումների առկայութիւնը թելադրել են վարկած առաջադրելու, թէ 686 թուականով ավարտուող «ժամանակագրութիւն» կազմողը եւս նոյն Փիլոն Տիրակացին է:

3. 1. VIII դարի 20-ական թթ. Գերմանոս պատրիարքի դաճակալութեան տարիներին, Դուլինի եւ Սիւնիքի վարդապետարաններն անցած Ստեփանոս Սիւնեցին, Այրիվանից միաբան Գրիգոր Գոզիկի հետ, Աթէնքում փիլիսոփայութեան եւ աստուածաբանութեան մէջ հմտանալուց յետոյ, հաստատուած է Կ. Պոլսում: Տեղիս հայոց միջավայրում Սիւնեցու պատրաստութիւնն ու հմտութիւնը նկատողներից մէկն է յունական աստուածաբանական գրականութիւնը հայերէն թարգմանելու նախանձախնդիր պաշտօնեայ եւ գիտուն Դաւիթ Հիւպատոսը: Դատելով Գերմանոս պատրիարքի հետ ունեցած շփումների փաստից, ինչպէս նաեւ նրա՝ Առ. Հայս գրած նամակը Հայաստան բերելու իրողութիւնից, Ստեփանոսը ճանաչում է ունեցել եւ յոյն հոգեւորականութեան միջավայրում: Սակայն կարեւորը կենսագրական այս մանրամասները չեն, այլ այն, որ Բիւզանդիայի մայրաքաղաքում գտնուելու տարիներին ճիշտ այդ Դաւիթ Հիւպատոսի հեղինակակցութեամբ նա հայերէն է թարգմանում աստուածաբանական մի քանի երկ, որոնք յունական վաղբրիատոնէական, մատենագրութեան նուաճումների թուին են պատկանում¹: Մասնաւորապէս, ըստ պահպանուած յիշատակարանների, այդ երկերն են.

ա) Մատենագրութիւնք Դիոնեսիոսի Արիոպագացոյ, ուր ներառուած են «Պատճառ Դիոնեսիոսի» («Վարք Դիոնեսիոսի եւ լուծումն գրոց նորին, թարգմանեալ ի Ստեփանոսէ Սիւնեցոյ»), «Թուղթ Դիոնեսիոսի Արիոպագացոյ առ Տիտոս, վասն ննջման Մարեմայ», «Թուղթք ղանաղանք», «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց»: Թարգմանութիւնը յստակօրէն թուագրուած է 712 թուականով եւ կատարուած «ի ստոյգ օրինակաց ի Կոստանդինուպոլսի, ի ձեռն Դաւթի Հիւպատոսի եւ թագաւորական սեղանոյն կինառի եւ ի ձեռն Ստեփաննոսի քահանայի եւ քերթողի, աշակերտի տեառն Մովսիսի Սիւնեաց եպիսկոպոսի»²:

բ) Գիրք պարապմանց Կիւրղի Աղեքսանդրացոյ, թարգմանութեան ժամանակը՝ 716թ. եւ գրեթէ բառացիօրէն նախորդ յիշատակարանը կրկնող տեղեկութիւններով³:

(Հրաչ Բարթիկեան, Անանիա Շիրակացուն վերագրուող «Ժամանակագրութեան» եւ նրա բանաբաղի հարցը.- «Բանբեր Մատենադարանի», N 8 (1967), էջ 71-76): Ենթադրութեան դէմ առարկութիւն տե՛ս Գէորգ Աբգարեան, Անանիա Շիրակացու «Ժամանակական կանոնը» կամ «Բրոնխիոնը».- «Բանբեր Մատենադարանի», N 15 (1986), էջ 34-42:

¹ Տե՛ս Մեսրոպ վրդ. Գրիգորեան, Ստեփանոս Սիւնեցի. Պեյրութ, 1958:

² Տե՛ս «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, էջ 24:

³ Նոյն տեղում, էջ 24-25:

գ) Մեկնութիւն Ղեւտիկոնի, որի 716 թ. կրող յիշատակարանը պահպանուել է¹:

4. Ժողովածոյ գործոց Գրիգորի Նիւսացւոյ²: Յիշատակարանը նոյնական է նախորդների հետ, թուականը՝ 717:

Ստեփանոս Սիւնեցին հայոց մատենագրութիւնը հարստացրել է աստուածաբանական-փիլիսոփայական եւ բնագիտական առաւել հեղինակաւոր նուաճումների թարգմանութիւններով, նաեւ, անհրաժեշտութեան պարագային, այդպիսիք օժտել «պատճառներով» կամ մեկնաբանութեամբ: Աղբիւրների վկայութեամբ, օրինակ, «Սուրբն Ստեփանոս՝ ըստ տուեցելոյ նմա իմաստութեան ի վերուստ, եղ ի վերայ նորա (իմա՛ Արիտպազացու «Յաղագս երկնային քահանայապետութեանց»՝ Պ. Մ.) լուծմունս մեկնաւորէն, որ երեւի մինչեւ ցայսաւր»³: Խօսուել է եւ հետեւեալ իրողութիւնը. Պատրիարքի նամակը Հայաստան բերող նոյն Ստեփանոսն էլ «յոզնապաճոյճ հանճարով եւ գիտութեամբ՝ բան առ բան լուծանելով» գրում է նրա պատասխանը⁴: Ուրեմն՝ կարելի էր տարիներով կայսրութեան մայրաքաղաքում ապրել, հարաբերութիւններ ունենալ տեղի պատրիարքի հետ եւ սակայն պահպանել իր դաւանութիւնը, անհրաժեշտութեան պարագային հերքել «ղառասպելայաւոր բան նոցա», ամենայն իմաստութիւն նոցա»: Աւելին, երկարնակ իշխան Սմբատ Բագրատունու հետ ունեցած դաւանական վեճից յետոյ, մահուան սպառնալիքից ազատուելու համար մեր արդիւնաւոր մատենագիրը ապաստան է գտնում Կ. Պոլսում բնակուող «հմուտ արտաքին իմաստից» ուղղափառ միայնակեցի մօտ⁵: Քանի որ հայոց եկեղեցականութեան պատկերացմամբ «ուղղափառը» ազգային եկեղեցու պաշտօնական որակումն է, ուրեմն «արտաքին իմաստից» (իմա՛ փիլիսոփայութեան) այդ հմուտը եւս Բիւզանդիայում ապրող ու գործող հայ ազգի էր: Հետաքրքիր է, որ այս երկրորդ «այցելութեան» ժամանակ Ստեփանոսը առիթ է ունենում դաւանական խնդիրներ քննարկել

¹ Նոյն տեղում, էջ 25:

² Ժողովածոյ ընդգրկուած եւ Ստեփանոսի մասնակցութեամբ թարգմանուած գործերի ցանկն ու քննութիւնը տե՛ս Կիմ Մուրադեան, Գրիգոր Նիւսացին հայ մատենագրութեան մէջ. Երեւան, 1992, էջ 59-74: Մենք այստեղ չենք անդրադառնում «Յաղագս բնութեան մարդոյ» երկի հեղինակ Նեմեսիոսի եւ Գրիգոր Նիւսացու շփոթութեան խնդրին: Այդ մասին մանրամասնօրէն տե՛ս Հ. Յ. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք. մասն առաջին, Ա.-Ձ, Վիեննա, 1895, էջ 1-22:

³ «Սիոն», 1931, էջ 215, հմմտ. Մ. Գրիգորեան, նշւ. աշխ., էջ 15:

⁴ Նոյն տեղում: Պատրիարքի նամակի հրատ. տե՛ս Գիրք թղթոց, Երուսաղէմ, 1994, էջ 435-466:

⁵ «Սիոն», 1931, էջ 237: Մ. Գրիգորեան, նշւ. աշխ., էջ 18:

Հեռոն Իսաւրացի (717-741) կայսեր հետ, օգտուել արքունի գրադարանից («բանալ առաջի իւր զարկեղս սրբոցն»), ապա եւ կայսեր յորդորով Հռոմ գնալ՝ «յարկեղս մեծի եկեղեցւոյն» պրապոստամներ կատարելու համար¹ :

Թէ յունարէնից կատարած իր միւս թարգմանութիւններից² ուրիշ որը կարող էր Կ. Պոլսում իրագործած լինել՝ դժուար է ասել, սակայն որ նա էր «վասն թարգմանութեան հասնալ ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս»՝ հասկանալի է ինքնին³ :

3. 2. Թերեւս Կ. Պոլսում հայերէնի թարգմանուած մատենագրական յուշարձանների շարքը պիտի դասել տակաւին պատմաբանասիրական ուսումնասիրութեան կարօտ «Պատմութիւնն սուրբ Քեղարդեանն եւ այլ տնօրինականացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ» երկը, որն ըստ յիշատակարանի «ի հռոմ գրէ ի հայ թարգմանեցաւ եւ բերաւ ի Հայս, յորում էր թուկանն ՃՀԶ (727)»⁴ : Մէկ այլ ընդօրինակութեան տարբերակում ասուած է «որ էր ի պատմագրի թագաւորութեան քաղաքին Կոստանդնուպոլսի եւ այս պատմեցաւ... ի հռոմ գրոյ ի հայ գիր թարգմանեցաւ եւ աւրինակն բերաւ ի Հայս ի թվիս Հայոց ժԱ. եւ Ճ-ն» (662) : մասնաւոր քննութիւն է անհրաժեշտ՝ պարզելու համար երկիս ինչ լինելը, բիւզանդական ո՞ր պատմագրի երկն ի նկատի ունենայր եւ թարգմանութեան ստոյգ ժամանակն ու թարգմանչի ինքնութիւնը :

4. 1. Հայերի աստիճանական եւ երբեմն-երբեմն խմբային գաղթը կայսրութեան տարածք, ապա եւ Բիւզանդիայի արեւելեան ու հարաւարեւելեան սահմանների ծաւալումը IX դարում հարկաւ պիտի ստուարացնէին Կ. Պոլսում հաստատուած հայութիւնը : Այդ դարում կատարուած ներքաղաքական գրեթէ բոլոր անցուղարձերին, ներառեալ կայսրերի բարձրանալ-իջնելը, ապստամբութիւնները, արտաքին զօրաց դէմ հաղթութիւն-պարտութիւնները եւ այլն, հայկական ծագում կամ ազգակցութիւն ունեցող տարրի մասնակցութիւնը անվերապահ է⁵ : Ակտիւութեան այդ մթնոլորտում, բնականաբար, պիտի աշխուժանար

¹ Նոյն տեղում :

² Նրանց ցանկը տե՛ս Մ. Գրիգորեան, նշւ. աշխ., էջ 29-36 :

³ Գիրք թղթոց, էջ 435 : «Պատասխանի թղթոյն, զոր գրեաց Տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս առ Տէր Գերմանոս Կոստանդնուպոլսիս հայրապետն, որք երկու բնութիւնս եւ երկուս ներգործութիւնս եւ երկուս կամս խոստովանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ որք ի կենդանարար խորհուրդն ջուր խառնեն՝ հետեւեալք ժողովոյն Քաղկեդոնի» :

⁴ «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, էջ 27-28 :

⁵ Սկզբնաղբիւրների հիմամբ նրանց շարունակական թուարկումն ու գնահատութիւնը տե՛ս Պ. Խարանիս, նշւ. աշխ. էջ 38-49 :

եւ հայոց մշակութային գործունեութիւնը մայրաքաղաքում: «Հայ տարրը,- գրում է Պ. Խարանխար,- գերակշիռ էր նաեւ իններորդ դարուն կայսրութեան մտաւորական կեանքին մէջ: Բիւզանդական կայսրութեան մէջ մտաւորական գործունեութիւնը երբեք չէր դադրած գոյութիւն ունենալէ, բայց զգալի կերպով տկարացած էր յոթներորդ եւ ութերորդ դարերուն, եւ կրթական հաստատութիւններէն ոմանք, ինչպէս այն համալսարանը, զոր Թեոդոսիոս Բ հիմնած էր հինգերորդ դարուն, հետզհետէ անկման ենթարկուած էր: Բայց իններորդ դարուն վերածնունդ մը տեղի ունեցած է, նոր զարկ մը տալով ուսման, որ առաւել կամ նուազ չափով պիտի շարունակէր մինչեւ Կոստանդինուպոլսոյ վերջնական անկումը: Այս վերածնունդին մէջ ոմանք կարեւոր դեր մը կատարեցին: Ասոնց մէջ առաջին տեղը կը զբաւէր Փոտ ապագայ պատրիարքը, որ անկասկած ուրիշ ոեւէ մեկէ մը աւելի համայնագիտական հմտութեան տէր անձն էր Բիւզանդական կայսրութեան մէջ: Յովհաննէս, որ 815-ին պատկերամարտութեան վերանորոգման աստուածաբանական հիմերը դրած էր, իր ժամանակակիցների մէջ ծանօթ էր իբրեւ նախնեաց գիտութեան քաջահմուտ անձ մը: Ուսուցիչը եղած էր Թեոփիլոս կայսեր, որ ուսման առաջադիմութիւնը իր իշխանութեան կարեւոր մէկ գործը նկատեց: Ուսման վերածնունդը իր պատկումը ունեցավ Կ. Պոլսոյ համալսարանին վերահաստատումով Մանգաուրայի պալատին մէջ եւ այս պատճառաւ ծանօթ է Մանգաուրայի դպրոց անունով: Կեսար Վարդաս հիմնեց եւ Լեւոն Իմաստասէր, որուն մտնամատիկոսի եւ հնութեան գիտութեանց վարդապետի համբաւը մինչեւ Պաղտատ հասած էր, դպրոցին գլուխը կը զտնուէին: Բաղմաթիւ ուրիշներ, ինչպէս Սլաւներուն առաքեալը Կոստանդին, ծանօթ են այն նպաստով, զոր բերած են այդ շրջանին մտաւորական գործունէութեան: Բայց Յովհաննէս Քերական, Փոտ, կեսար Վարդաս եւ Լեւոն Իմաստասէր կը թուին եղած ըլլալ նախաձեռնարկները եւ մղիչ ուժերը: Չորսն ալ գէթ մասամբ հայկական ծագում ունէին... Այս մարդիկը, բնականաբար, բոլորովին հեղինականացած կ'երեւին: Արդարեւ, անհեթեթ պիտի ըլլար Փոտը յոյն չհամարիլ: Այսու հանդերձ, կարելի է խորհիլ թէ արդեօք այս հայերը ձուլուելով չե՞ն փոխած այն մշակոյթը, որ գիրենք ձուլած է»¹:

4. 2. Նրբին հարց է պարզել, թէ բիւզանդական մշակոյթին ծառայող յիշեալ հայ-հեղինները ի՞նչ են իրենց հետ բերում հայկականութիւնից եւ հակառակը՝ նրանց հեղինականացումը իր կնիքը չի՞ թող-

¹ Նոյն տեղում, էջ 49-51:

նույն Հայոց մշակույթի դարձադրաման վրայ: Եթէ Հարցադրումը մասնաւորեցնենք դարի խոշորագոյն գործչի՝ Փոտ Պատրիարքի օրինակով, ապա ամենեւին ոչ պատահական պիտի համարել նրա առանձնակի ջանադրութիւնը՝ շահելու Հայոց քաղաքական ու դաւանական գործակցութիւնը: Փոտի հայերէնով պահպանուած թղթերը ինքնին ապացոյց են այն կարեւորութեան, որ Կ. Պոլսի պատրիարքի աչքում ունեն Հայոց եկեղեցին, նաեւ հայկական իշխանութիւնները:

Նրա գրութիւններից մէկը հասցէագրուած է Զաքարիա կաթողիկոսին (855-877), միւսը՝ Աշոտ Բագրատունի իշխանին¹: Հաղիւ թէ կարելի լինի տարակուսել, թէ Փոտի առ Հայս թղթեր գրելու թելադրանքը միայն պատրիարքական իրաւասութեան ծաւալման ցանկութիւնն ու Հայոց եկեղեցու որդեգրած դիրքորոշման նշանակալիութիւնը չէ, այլ նաեւ՝ այդ աշխարհի ու նրա մշակույթի հանդէպ հելլենացած գործչի ցուցաբերած իմացութիւն, նաեւ կապ: Պիտի կարծել, որ Փոտի այդ թղթերը որոշակի հետաքրքրութիւն են յարուցել Հայոց մատենագիրների միջավայրում: Նման եզրակացութեան հիմք է տալիս Տիգրան Պահլավունու կորած պատմութեան այն դրուագը, որ պահանուել է Մատենադարանի N4166 ձեռագրում²:

Մեր համոզմամբ, անտեղի չէ նաեւ Պ. Խարանիսի այն հարցադրումը, թէ «արդեօ՞ք այս հայերը ձուլուելով չեն փոխած այն մշակույթը, որ գիրենք ձուլած էր»: Միայն պատկերայարգութեան եւ պատկերամարտութեան խնդրում հայազգիների կատարած դերը բաւական է, որ մենք ճանաչենք ոչ դուռ հունական միջավայրից եկող տատանումների մի ողջ շերտ: Գումարենք դրան Հայոց միջավայրում ձեւաւորուող աղանդների եւ այլախոհ վարդապետութիւնների արձագանքը Բիւզանդիայում, Հայոց Լուսաւորչի պաշտամունքի ճանաչումն ու նրա խճանկար պատկերի ղետեղումը Ս. Սոփիայի տաճարում դարձեալ Փոտի պատրիարքութեան տարիներին կամ նրա մերձաւոր շրջա-

¹ Այդ թղթերը Ն. Ակինեանի հրատարակութեամբ տե՛ս ՀԱ, 1968, էջ 129-156, 439-450: Նորագոյն ուսումնասիրութեան հրատարակութիւնը՝ Հ. Պողոս Անանեան, Հայոց կաթողիկոս Զաքարիայի եւ իշխանաց իշխան Աշոտի թղթակցութիւնը Փոտ պատրիարքի եւ Նիկողայոս Ա պապի հետ. Վենետիկ, 1992: Տե՛ս նաեւ՝ Կ. Ի. Юзбациян. Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв. М., 1988, с. 261-267, П.М. Мурадян. Идея конфессиональной толерантности и межнационального согласия в армянской книжности XII-XIII веков. Ереван, 1997.

² Հրատ. տե՛ս Ա.Օ. Кесеян. Новонайденный отрывок из неизвестной истории Тиграна Пахлавуни, вып. 5(1987), с. 145-155. Տիգրան Պահլավունու մասին տե՛ս Հ. Ն. Ակինեան, Ներսես Լամբրոնացի..., Վիեննա, 1956, էջ 355-356:

նում¹, եւ մենք գէթ մասամբ կպատկերացնենք մշակութային այն ազդեցութիւնը, որ իբրեւ հետեւանք կարող էր ունենալ բիւզանդա-հայկական վերաբերումը: Կրկնում ենք, եւ այդ ամբողջը տեղի էր ունենում հայոց, հատկապէս պոլսահայոց քաղաքական ու ռազմական գործուն, յաճախ նոյնիսկ կայսրութեան համար բախտորոշ ակտիւութեան պարագայում:

4. 3. «Հելլենականացում» միջնադարի համար պայմանական հասկացութիւնը երկակի կիրառութիւն ունի. մէկ դէպքում այն ներկայացնում է հայկական ծագում ունեցող, բայց լեզվով, դաւանութեամբ ու ծառայութեամբ բիւզանդականացած գործիչների մի շերտ, միւսում՝ իր միջավայրի լեզուական-մշակութային կնիքը կրող, բիւզանդական քաղաքակրթութեանը ոչ խորթ, բայց ազգային մշակոյթը եւ կեանքը սպասաւորող գործիչների ներկայութիւն: Այդպիսիք են, մասնաւորապէս, պոլսաբնակ կամ հանգամանքների բերումով առժամանակ այնտեղ յայտնուած գրիչները, հեղինակներն ու թարգմանիչները, նրանց հովանաւորող պատուիրատու-ստացողները: Այսպէս, օրինակ, Թութայէլ անունով գրիչը 909 թ. Պոլսում «Հայոց սպարապետ Աշոտի» պատուերով (ենթադրւում է, թէ խօսքը Սմբատ I-ի եղբայր Շապուհի որդի Աշոտի մասին է)² ընդօրինակում է Աւետարան եւ թողնում աւանդական յիշատակարան³: Վերջինիս յունաբանութիւնների քննութեամբ կարելի է պարզել գրչի «հելլենականացման» աստիճանը՝ ընդամէնը մի քանի տող կազմող եւ բանաձեւումներով գրելիք այդ տեքստում ունենք ներանձնացեալ, ունախոհ, մտահարուստ, ուշմագուն, առլնլով, ներընծայել, արտաճառութիւն եւ այլն: Ուրեմն վստահաբար կարելի է ասել, թէ հայոց դպրութեան պոլսաբնակ սպասաւորները անհաղորդ չէին յունարենին ու նրանում գործառնող տերմինաբանութեանը, ասել է՝ յունական դպրութեանը:

Հայ սպարապետի ստացող վիճելը ամենեւին չի նշանակում, թէ այն պիտի անվերապահօրէն բերուեր Հայաստան: Կարելորն այն է, որ Բիւզանդիայի մայրաքաղաքում շարունակաբար կային ազգային դպրութեան մշակներ, եւ նրանց ինքնութիւնը յայտնի էր հայաստանաբնակներին, ներառյալ թաղաւորական արքունիքը:

¹ Հայկ Պէրպէրեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի խճանկարը Այա Սոփիայի մէջ. - «Անդաստան», N 8/9, 1958, էջ 113-131:

² Նրա մասին տե՛ս Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց. Թիֆլիս, 1912, էջ 215: Ենթադրութեան հեղինակը Գ. Յովսէփեանն է («Յիշատակարանք», էջ 108):

³ Հրատ. տե՛ս Գ. Յովսէփեան. Յիշատակարանք, էջ 107: «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, էջ 50:

4. 4. Կարելի է մատնացուցել եւ ուրիշ դէպք, երբ գրիչը կամ թարգմանիչը թագաւորական հանձնարարութեամբ՝ «զնայ զճանապարհս ուղեւորութեան», հասնում է «Բիւզանդիոն ի նորն Հռոմ, յերկրորդն Բաբելոն», «բազում աշխատութեամբ» «յարկեղաց Սրբոյն Սոփիա» գտնում-հանում յունարէնով փնտրուող գիրքը եւ թարգմանում կամ թարգմանել տալիս «ի յունականէ ի հայ լեզու»: Ճիշտ այդպիսին է «Պատմութիւն յաղագս մատին սրբոյ Առաքելոյն Պետրոսի եւ բերմանն ի Հռոմէ ի Հայք» երկի հայերէն թարգմանութեան ձեռագրում առկա առաջաբան-յիշատակարանի տուած տեղեկութիւնը¹: Գրիչ Պանտալեոն/Պանտալէոնին ուղարկողը «արքայից արքայ մեծ պետութեանս տանս Հայոց» Ապուսահլ Համադասպն է, Կոստանդնուպոլիս հասնելու ժամանակը՝ Հայոց 414 (=965) թուականի յունուարի 6-ը²: «Թարգմանեցի ի յունականէ ի հայ լեզու ձեռամբ աւրհնելոյն Յովսէփայ» ձեւակերպումը կարելի է հասկանալ այսպէս՝ Յովսէփը յունարէնից թարգմանողն է, ինքը Պանտալեոնը՝ գրիչը, գրառողը: Սակայն այստեղ ուշադրաւր ոչ այնքան թարգմանութեան փաստն է, որքան այն տեղեկութիւնները, որ գրիչը հաղորդում է Սուրբ Սոփիայի տաճարում ունեցած իր քննարկումների մասին: Նա «հիացեալ ուշ յապուշ զարմանցմամբ» ներբողական է արտասանում «ի խորանն լուսոյ», ինչը տեղի «քաջ իմաստասէրները» «յոյժ հաճոյական» են գտնում, պատմում կայսեր: Ուշադրութեան առնելիք պարագայ է՝ միաբնեայ քահանան ու մատենագիրը հաշտ ու խաղաղ է Սոփիայի զիտունների հետ, խաղաղութեամբ վերադառնում է «յաշխարհս մեր» եւ հայոց Հարպմարդպանից ստանում նրա ձեռքով գրուած «զՊատմութիւն սրբոյ առաքելոցն յաշխարհս մեր»³:

4. 5. Հնարաւոր, նոյնիսկ հաւանական է, որ Պանտալեոնի հետ 965 թ. թարգմանութիւն կատարող «աւրհնեալն Յովսէփը» նոյն Յովսէփ Կոստանդնուպոլսեցին է, յունական Յայսմաւուրքի 991 թ. հայերէն թարգմանիչը⁴: Նրա թողած յիշատակարանը մեզ հետաքրքրող կարեւոր հարցեր ու պատասխաններ է թելադրում: Մասնաւորապէս՝ «Եւ

¹ Ն. Ակինեանի համոզմամբ յիշատակարանը վերաբերում է այժմ անյայտ մէկ այլ երկի թարգմանութեան պարագային (Հ. Ն. Ակինեան, Յովսէփ Կոստանդնուպոլսեցի թարգմանիչ Յայսմաւուրքի, ՀԱ, 1957, էջ 4-5):

² Գ. Յովսէփեան, նշւ. աշխ., էջ 118-120, «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, էջ 57-58:

³ Այս ու այլ մանրամասնութիւններ տե՛ս Գ. Յովսէփեան, նշվ. աշխ., 118-120:

⁴ Այդպէս համոզուած է Ն. Ակինեանը: Աւելին, նա վերոյիշյալ Պանտալեոնին նոյնացնում է Մատթէոս Ուռհայեցու երկում եղած Ղեւոնդի հետ, որը սերտ հարաբերութիւններ ունէր հայոց թագաւորների եւ բիւզանդական կայսր Յովհաննէս Զմշկիկի հետ (Հ. Ն. Ակինեան, Յովսէփ Կոստանդնուպոլսեցի, էջ 4-7):

ես՝ անարժանս եւ տգէտս եւ մեղաւոր թարգմանիչս Յովսէփի, ծնեալ եւ սնեալ եւ ծերացեալ յաստուածապահ քաղաքիս Կոստանդինուպուլիս, եւ զհայրէնի լեզու եւ զգիր ի տեղիս ուսեալ, ի միոյ հոռոմ Տաւնացոյցէ թարգմանեցի զճառ առաւատի (կարդա՛ զճառս կարճառաւտի - Ն. Ակինեան) ի թորգոմական բարբառ ի Ն. եւ Խ (991 թուականիս հայ (հայոց - Ն. Ակինեան), եւ էր յԱդամայ ԶՌՇ (6500) անցեալ ամաց: Եւ յուղարկեցի ի Հայոց եկեղեցիս, որ ընթեռնուն եւ գրեն զիւրաքանչիւր սրբոցն ճգնութիւնս եւ յիշեն յանուանէ զմեղաւոր հոգիս, եւ վարձս ի վարձատուողէն առցեն, ամէն»¹: Նախ տեղեկանում ենք, որ մեր թարգմանիչը «ծնեալ, սնեալ եւ ծերացեալ է» մայրաքաղաքում: Թերթեւում է յուշել, թէ դրանով ինքը տարբերում է ժամանակակից եւ դասակից այլ գործիչներից, որոնք կարող էին տեղում ծնուած ու սնուած, ծերացած չլինել: Եւ իրօք էլ, այդպիսին էր, օրինակ, երբեմնի իր գործակից Պանտալեոնը²: Բիւզանդիոնի արքունական եւ Ս. Սոփիայի մատենադարանին (արկեղաց) ծանօթ մատենագիրը չէր կարող իր քաղաքում նմանօրինակ հաւաքածոյ փնտրել հայոց դպրութեան համար, ուստի ուղարկում է՝ «առ որ անկ է»: Հարկաւ իրաւացի է Ն. Ակինեանը, երբ եզրակացնում է, թէ «Յովսէփ ունեցած ըլլալու է հմուտ հայերէնագէտ մը իրեն ուսուցիչ, որ սորուեցուցած է իրեն հայրենի լեզուն եւ յորդորած է հետեւող ըլլալ դասական գրականութեան, ըստ կարի խորշելով հելլենարան դպրոցի նորաբանութիւններէ»³: Հարկաւ թէ կարելի լիներ կասկածել, որ նման ծրագրեալ ուսումնառութիւնը միաժամանակ ապացոյց է տեղում ազգային դպրոցի գոյութան⁴:

¹ Հրատ. տե՛ս Ն. Ակինեան, նշւ. աշխ., էջ 3: Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա. հ. Բ. Կազմեց Հ. Համադասպ Ոսկեան. Վիեննա, 1963, էջ 693: Նաեւ՝ «Հայերէն ձեռագրերի յիշատակարանը», Ե-ԺԲ դարեր, էջ 72-73:

² «Զհայրէնի լեզու եւ զգիր ի տեղիս ուսեալ» մասնաւորեցումը երկու նպատակ է հետանալնդում՝ նախ ներողամտութիւն հայցել իր թարգմանութեան մէջ առարկութիւն կամ դիտողութիւն յարուցող լեզվաոճական հնարաւոր անհարթութիւններ ի համար, մանաւանդ որ՝ թարգմանութիւնն ուղարկում է «ի Հայոց եկեղեցիս, որ ընթեռնուն» եւ լրացնեն նոր դրուագներով: Այս դէպքում «ի Հայոց եկեղեցիս» որ ընթեռնուն» եւ արագնէն նոր դրուագներով: Այս դէպքում «ի Հայոց եկեղեցիս» որ ընթեռնուն է, ինչ որ «ի Հայոց աշխարհ» եւ ապա եթէ խօսքը միայն լեզուին ասելը նոյն է, ինչ որ «ի Հայոց աշխարհ» եւ արագնէն: Պիտի կարծել, թէ վերաբերէր անհրաժեշտ չէր լինի «զգիր ուսեալ» եւս ընդգծել: Պիտի կարծել, թէ նշեալ արտայայտութեամբ նա փորձում է բացատրել, թէ ինչու լրացնելիքը ինքը տեղում չի կատարում:

³ Ն. Ակինեան, նշւ. աշխ., էջ 3:

⁴ Ն. Ակինեանի խօսքերով «գիտենք, թէ կար հոն հայ գաղութ մը ազդեցիկ ոյժերով (Լեւոն Սարկաւազ)»: «Զինքը եկեղեցական ճանաչելու, եւ այն հայ-հոռոմերու (Լեւոն Սարկաւազ)»: «Զինքը եկեղեցական ճանաչելու, եւ այն հայ-հոռոմերու համայնքին մէջ» Ն. Ակինեանի վարկածը որեւէ հիմնաւորում չունի. ո՛չ Պանտա-

Յովսէփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած «Յայսմաւուրքի» տարրեր հատուածներից Ն. Ակինեանի բերած քաղումները ցոյց են տալիս, որ մատենագիրը յաճախ թարգմանած նիւթը հարստացնում է սեփական տեղեկութիւններով ու վկայութիւններով: Այդպիսին է մասնաւորաբար, Չմչկիկ կայսեր Հեմսում եւ Վռիտոնում (Բիւրիտոն) աւարած սրբութիւնների (Քրիստոսի կաղամար, հողաթափ, տերունական պատկեր) թուարկումը (յունուար, ԼԱ, 3), 740 եւ մանաւանդ 989 թուականների երկրաշարժերի նկարագրումը, երբ «անկաւ մեծ եկեղեցւոյն Սոփիայ կամարն արեւմտից: Եւ բազում եկեղեցիք եւ բարձրաշէն ապարանք եւ կամարակապ փողոցք կործանեցան: Եւ եկաց Զ տարի մի, եւ ահ մեծ ի քաղաքին եղեւ»¹:

Ուրեմն՝ «իր Յայսմաւուրքը, զոր կոչած է Տօնացոյց, լոկ թարգմանութիւն չէ, այլ թարգմանաբար խմբագրութիւն»², քրիստոնէական գրականութեան կարեւորագոյն յուշարձաններից մեկի հայկականացման առաջին տիտանական քայլը, որին պիտի հետեւեին Գրիգոր Վկայասէրը, Կիրակոս Արեւելցին, Գրիգոր Անաւարզեցին, Գրիգոր Մերենցը եւ այլք³:

5. 1. Աւելորդ չէ յիշել Յովսէփին ժամանակակից մի քանի այլ երեւելի հայագրի գործիչների ներկայութիւնը Կոստանդնուպոլսում: Գրիգոր Նարեկացու «Ապարանից ս. Խաչի պատմութիւն» ներբողեանի տեքստում երկար ու պերճաբան խօսվում է հայրենի Մոկաց երկրից «ի բուն բնակութիւն ծովածաւալ, ջրափակ, անդրնդափոս, ահազնապարիսպ, բազմաբնակ քաղաքին եւ անմարտնչելի ամրոցն սքանչելւոյն Կոստանդնուպոլիս»⁴ եկած եւ պալատում «գինուորող» մի «երագամիտ», «պատկանաւոր», «ըստ կարգաբանութեան խօսից անթարթափ լեզուոյ», իսկ «ըստ աստուածային հոգելից իմաստութեան յաւետ պարուրեալ» անձի մասին (Ստեփանոս Մոկաց եպիսկոպոսի մորեղբայրը),

լեռնի, ո՛չ էլ իր սեփական յիշատակարանում նրա անունը չի ուղեկցւում հոգեւորականութիւն յուշող տերմինով, իսկ «հայ-հոռոմ» լինելու դէպքում իր գործի լրացումը հայրենի երկրի մատենագիրներից չէր ակնկալի (X դարի վերջերին միաբնակ-երկաբնակ խնդիրները վերստին թարմացել էին):

¹ Ն. Ակինեան, նշւ. աշխ., էջ 8-9: Ս. Սոփիայի գմբեթի խոնարհման մասին խօսում են նաեւ Ասողիկը (էջ 250-251), Գրիգոր Նարեկացին (Մատենագրութիւնք, էջ 374-375), Մ. Ուռհայեցին (էջ 89):

² Ն. Ակինեան, նշւ. աշխ., էջ 12:

³ «Յայսմաւուրքին» վերաբերող գրականութեան ցանկ տե՛ս Ն. Ակինեանի վերաբերեալ յօդուածի սկզբում, էջ 1-2:

⁴ Սրբոյն հօրն մերոյ Գրիգոր Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 377:

որին ականջալուր են արքաները եւ որի ձեռքով 983 թ. ս. Կարապետի վանք (Ապարանք) է բերվում սուրբ մասունք կրող եւ բազմազարդ խաչը:

Վերելում արդեն խօսք եղաւ Հայոց վարդապետ Ղեւոնդ/Պանտալեոնի մասին, որի հետ գրագրութիւն էր վարում Յովհաննէս Չմշկիկը եւ հրաւիրում «որ գտանեմ գքեզ յաստուածապահ քաղաքին մեր եւ անդ արասցուք տօն մեծ հողաթափացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ եւ սուրբ հերացն Սկրտչին Յովհաննու: Եւ այդ ահա հաճեալ ունիմ եւ զայս ինչ ի քէն, վասն զի խօսեսցիս ընդ մեր իմաստասէրսն եւ ընդ փիլիսոփայիցն մերոց, եւ ուրախասցուք մեք ի ձեզ»¹:

Իր արդիւնաւորութեամբ առանձնակի նշանակալի պիտի նկատել Տրդատ ճարտարապետի ներկայութիւնը Կոստանդնուպոլսում. Յովսէփի տեղեկութիւնից գիտենք, որ 991-ին, երբ նա թարգմանում էր, երկրաշարժից խարխլած Ս. Սոփիայի գմբեթն ու արեւմտեան սիւնը դեռ վերականգնուած չէին, իսկ Ղեւոն Սարկաւազի վկայութեամբ Վասիլ կայսրը այն նորոգեց «վեց տարիներու ընթացքին»², ուրեմն 991-997թ.: Հետեւաբար այդ տարիներին Բիւզանդիայի մայրաքաղաքում էր գտնւում Հայոց մեծաշնորհ ճարտարապետ Տրդատը: Ասողիկը ՆՂ (989/990) թ. երկրաշարժին վերաբերող տեղեկութիւնից յետոյ աւելացնում է. «Նոյն ինքն Սոփիայն, որ կաթողիկէն է՝ հերձանիւր պատումամբ վերուստ ի վայր: Վասն որոյ բազում ջան եղեւ արհեստաւոր մարտնչացն Յունաց առ ի վերստին նորոգել: Այլ անդ դիպեալ տաւոր ճարտարացն Հայոց Տրդատայ քարագործի՝ տայ զօրինակ շինուածոյն իմաստուն հանճարով պատրաստեալ զկաղապարս կազմածոյն եւ ծոյն իմաստուն հանճարով պատրաստեալ զկաղապարս կազմածոյն եւ սկզբնաւորեալ զշինելն, որ եւ գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն»³:

Հարկաւ կային եւ այլ հայազգի մշակութային գործիչներ, որոնց անուններն ու թողած արդիւնքները կարօտ են նոր աղբիւրների լուսածութեան:

5. 2. Մեր նախընտրած նիւթին հետեւելով, առիթ հունեցանք քննարկելու Բիւզանդական կայսրութեան սահմաններում դաւանական կացութեան կրած վայրիվերումները: Իհարկէ, դաւանական հանդուրժողականութիւնը խորթ չէր կայսրութեան քաղաքականութիւնը վա-

¹ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 28:

² Leonis Diaconi. Caloensis Historiae, libri decem. Bonnae, 1828, p. 176 (X, 10), Հմմտ. Ն. Ակինեան. Յովսէփ Կոստանդնուպոլսեցի..., էջ 9:

³ Ստեփանոս Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 250-251:

րող շատ ու շատ գործիչներին, որի դրսևորման արտայայտութիւններինց մեկն էլ մայրաքաղաքում (առաւել եւս՝ գաւառում) ապրող այլազգիներին; այդ թւում եւ հայոց մատենագրական-մշակութային գործունէութիւնն էր, բայց եւ կան շրջաններ, երբ դաւանական հալածանքը սաստկանում էր, եւ ազգային վանականութեան երեւելի ներկայացուցիչներ հարկադրուած էին լինում հեռանալ կայսրութեան սահմաններից: Կայսր Ռոմանոս Լեկաբենոսի (920-944) եւ Բագրատունյաց Աբաս թագաւորի (929-953) օրօք, 939 թ., իբրեւ հետեւանք միաբնակութեան դեմ յարուցած հալածանքի, Փոքր Հայքի Լիկանդոն գաւառից Արշարունիք են ապաստանում Կամրջաձորի վանքի 40 միաբանները՝ Յովհաննէս Կամրջաձորեցու գլխաւորութեամբ¹: Եկեղեցական աւանդոյթը այս հալածեալների հետ է կապում նաեւ Արշարունիքի Կապուտքարի, Շիրակի Հոռոմոսի եւ Գուգարքի Սանահին վանքերի հիմնարկեքը²: Հարկաւ կլինէին նաեւ մայրաքաղաքից հեռացող գրիչներ ու մատենագիրներ, մանաւանդ այն հոգեւորականները, որոնք չունէին կայսրութեան արքունիքում, բանակում կամ այլուր ծառայող հայազգի ազդեցիկ հովանաւորներ:

5. 3. Որքան էլ Բիւզանդիայի պատմութիւնը դիտենք միաժամանակ իբրեւ այլազգեաց, այդ թւում եւ հայոց պատմութիւն, մոռանալու չէ, որ կայսրութիւնն ուներ իր խնդիրներն ու առաքելութիւնը, որոնք չէին կարող ծրագրուած լինել այլէթնիկ բնակչութեան համայնքային շահերը անպայմանօրէն յարգելու պարտականութեամբ: Աւելին, ոչ քիչ դէպքերում այդ այլէթնիկ համայնքները կարող էին դաշնակցել կայսրութեանը արտաքին փտանգ ներկայացնող քաղաքական ուժերի հետ: Եւ այդ խնդրում եւս հայերը նկատելի նախանձեռնութիւն էին ցուցաբերում (օրինակ՝ դաշնադրութեան փորձերը արաբների հետ, նրանց մասնակցութիւնը երկրի ներսում աշխուժացող աղանդներին եւ այլն): Բիւզանդական քաղաքակրթութեան ոլորտ ընդգրկուած հայութիւնը կայսրութեան անցուդարձի գնահատութեան մէջ միասնական

¹ Ասողիկ, էջ 173: Առաւել մանրամասն է «Պատմութիւն ս. Կենարարին եւ սոսկայի ս. Նշանին՝ թէ որպէս բերաւ յաշխարհն Արշարունեաց ի Կամրջաձորոյ» (Ալիշան, Այրարատ. 1890, էջ 547-549): Այստեղից են տեղեկութիւններ քաղում Կիրակոս Գանձակեցին (էջ 84-85) եւ Վարդան մեծը (1862 թ., էջ 88): Հարցի ուսումնասիրութիւնը տե՛ս Սեդրակ Բարխուդարեան, Նորայայտ արձանագրութիւն Հաղբատափանքում. - «Էջմիածին», 1967, էջ 56-64:

² Ս. Բարխուդարեան, նշւ. աշխ., էջ 59-60: Ստուգման կարօտ է խաչքարի արձանագրութեան մէջ յիշատակուող անձանց նոյնացումը Բիւզանդիայից փտարեալ անձանց հետ:

չէր կարող լինել: Ազգայնացուած եկեղեցու բիւզանդարնակ զաւակները կրում էին յոյն հոգեւորականութեան անհանդուրժողական վերաբերումը, ուստի եթէ թշնամիներ չէին, ապա իբրեւ բարեկամ գոնէ կասկածելի էին: Ինչ վերաբերում է յունադաւան հայոց, վերջիններս արդէն սկսել էին իրենց դիտել իբրեւ հայկական միջավայրից, համայնքից օտարուածներ, թէեւ բաւական յստակ գիտակցում էին նաեւ սոսկ դաւանութեամբ յոյն լինելու պարագան, բայց այլեւս աւելի յոյն էին մտածողութեամբ, մշակոյթով ու քաղաքական կողմնորոշմամբ, քան հայ:

Այս ամենը, բնականաբար, իր արձագանքը պիտի գտներ հայոց թէ՛ քաղաքական եւ թէ՛ մշակութային գործունեութեան ոլորտում: XI դարում այդ հակասականութիւնը աւելի ցցուն դրսեւորուեց՝ մաւաւանդ քաղաքական նոր խմորումների պարագայում:

ԲԻՒՉԱՆԴԻԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆԻՆ

VIII դարի վերջին տասնամեակներին, յատկապէս Մուշեղ Մամիկոնեանի գլխավորած 781 թ. ապստամբութեան անյաջող աւարտից յետոյ, Բագրատունիները հարկադրուած եղան իրենց նստոցը Դարոյնքից (հետագայում Բայազետից) տեղափոխել Ճորոխ գետի ստորին հոսանքի շրջան՝ Աշոտ Մսակերի հիմնած Կամախ ամրոցը (վրացական աղբիւրների Կարմախին է)¹ : Տարածաշրջանի անցուդարձերին հետեւող եւ Խալիֆաթի ներսում ծայր առած անջատողական նկրտումներին տեղեակ այս տոհմը շուտով արաբներից ետ նուաճեց Կամսարականների տիրոջթներից Արշարունիքի ու Շիրակի նշանակալի մասը եւ, դանձագին անելով, Աշոտ Մսակեր եւ Շապուհ եղբայրները անհրաժեշտ նկատեցին Բագրատունեաց տոհմի նստոց դարձնել նախ Բագարանը, ապա Երազզաւորքը կամ Շիրակաւանը : Ասել է թէ՛ ծայրագաւառից դէպի միջնաշխարհ շարժուելով՝ Բագրատունիները ընդարձակուած էին իրենց դերակատարման հնարաւորութիւնները : Մասնագէտների համոզմամբ՝ այս շրջանում արդէն սկսում է ձեւաւորուել նրանց լեզուի մութիւն ապահովող աւանդազրոյցը հրէից Դաւիթ արքայի ցեղից սերելու մասին՝ միաժամանակ մոռացութեան չտալով «թագադիր ասպետութեան» պարագան Արշակունեաց շրջանում² : Հայաստանում տեղի ունեցող անցքերը, անշուշտ, արձագանք պիտի գտնէին Բիւզանդիայում, որի քաղաքական շրջանակները քաջալերում էին արաբական գերիշխանութեան դէմ ուղղուած ելոյթները : 858 թ. արաբական գերութիւնից վերադարձած Աշոտը (Բագարատի որդին), իբրև «հայոց իշխան» (861 թ.-ից՝ իշխանաց իշխան) եւ Տարօնի կառավարիչ միաժամանակ կիւրոպաղատի տիրոջն է կրում³, որ նշանակում է թէ մեր-

¹ Աղբիւրներում ու գրականութեան մէջ Սպերի այս կամախը յաճախ նոյնացուել է Դարանաղի Կամախի (կամ Անի-Կամախի) հետ. դիտարկումը պատկանում է Ն. Մառին. տե՛ս նրա *Ани, книжная история города и раскопки на месте городища*, Л.-д.-М., 1934, с. 21.

² Հմմտ. *Н. Марр*, անդ :

³ Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Ք. Պատկանեան], Ս. Պետերբուրգ, 1887, էջ 218-219; *Adontz N.*, *Etudes arméno-*

եւ կամէր պսակիլ ի Բագրատունւոյն»¹: Քաղաքական հողի վրայ ձեւաւորուած դրոյցը անարձագանք չի մնում եւ հոգեւոր շրջաններում: Յոներն ընդունում են իշխանաց իշխանի ուղարկած «տասն հազար արծաթ ընծայ նորաչէն եկեղեցւոյն» եւ իրենց հերթին Լուսաւորչի Նշխարաց գիւտի տօն սահմանում (հարկաւ այս շրջանին պիտի պատկանի Ս. Սոփիայի տաճարում Գրիգոր Լուսաւորչի խճանկար պատկերը)²: Այս կարգի իրողութիւնների շարքին է դասուում Կ. Պոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի (901-907, 912-925) թղթակցութեան փաստը Հայոց Աշոտ Բ Բագրատունու եւ Յովհաննէս Դրասխանակերտցի կաթողիկոսի հետ³: Հայոց «իշխանաց իշխանին» հասցէագրուած թղթի թուագրումը տարակարծութիւնների տեղ է տալիս, բայց անվերապա է, որ այն 924-925 թուականից ուշ գրուել չէր կարող, ինչ վերաբերում է պատրիարքի դրդումին, ապա թղթում ուղղակի ասուած է. «Այնպէս, ինչպէս բարեկամութեան խոստովանութեամբ դու մերձաւոր ես մեր քրիստոսասէր կայսեր եւ Աստուծոյ սրբազնագոյն մեր Եկեղեցուն, ապա նմանապէս անհրաժեշտ է, որ դու անքակտելիօրէն կապուած լինես հաւատոյ խոստովանութեամբ եւ ուղղափառ դաւանանքին»⁵: Բիւզանդիայում յստակօրէն գիտակցում են, որ Կովկասում գործող հիմնական զօրական ուժը Մեծաց Հայոց իշխանաց իշխանի ձեռքի տակ եղածն է, եւ որ Հայոց պարտութիւնը «ընդ ձեռօք այլ եւս մերձաւորաց ազգաց սասանումն բերցի», ուստի եւ կայսրը «ի դէպ ժամանակի պիտոյից առաքեսցէ զօր բազում յօգնակաութիւն ձեզ»⁶: Ուշագրաւ է Հայոց կաթողիկոսի ուղերձը Կոստանդին կայսեր, ուր դաւանական խնդիրները շրջանցւում են, իսկ քաղաքական օգնութեան անհրաժեշտութիւնը պատճառաբանւում ըստ ամենայնի⁷:

¹ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի՝ լուսաբանեալ [ի Հ. Ղ. Ալիշանէ], Վենետիկ, 1862, էջ 85:

² Հմմտ. Հայկ Պէրպէրեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի խճանկարը Այս Սոփիայի մէջ, «Անդաստան», N 8/9, 1958, էջ 113-131:

³ PG, CXI, col. 361-369: Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլ., 1912, էջ 267-269: Միստիկոսի երկու նամակի հայերէն թարգմանութիւնը տե՛ս Հ.Մ. Բարթիկեան, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ եւ 139-րդ թղթերը՝ ուղղուած Յովհաննէս Դրասխանակերտցուն եւ Սմբատ Ա թագաւորին, ՊԲՀ, 1966, N 4, էջ 251-256:

⁴ Հմմտ. K.H. Юзбашьян, նշ. աշխ., էջ 111-112:

⁵ ՊԲՀ, 1966, N 4, էջ 256:

⁶ Յովհ. Դրասխանակերտցի, էջ 268. Մ. Օրմանեանի հաշուարկներով Դրասխանակերտցին պատրիարքի նամակը ստացած պիտի լինի 918 թուին: Տե՛ս «Ազգապատում», Ա հատոր, մասն Բ, Պէյրութ, 1959, էջ 1045:

⁷ Յովհ. Դրասխանակերտցի, էջ 271-277:

եւ տնօրինել զհասարակացն օգուտս»¹): Դաւանական խնդիրներից հետոս մնալու համար տեսակցութիւն նախաձեռնող կաթողիկոսը փաստօրէն կայսրութեան մայրաքաղաք չի հասնում, իսկ Աշոտ Բ-ը վերադառնում է՝ ձեռքին ունենալով «բազում զօրավարս եւ զօրս Հռովմայեցիս»², որոնց օգնութեամբ «ի գերութիւն Յունականացն» է մատնում անհնազանդ Կողբ դաստակերտի բնակիչներին:

Յոյների զինակցութիւնը եւս երկրին խաղաղութիւն չբերեց, քանի որ արաբ կուսակալ Յուսուփը կարողանում էր կայսեր «հոգեւոր զաւակի» դէմ հանել հակասութիւններ ունեցող իշխանական տներ՝ ներառեալ Շապուհի որդի Աշոտ Բագրատունին, որին արաբ կուսակալը նոյնիսկ թագ յանձնեց: Բիւզանդիայի արեւելեան քաղաքականութիւնը համեմատաբար վճռական դարձաւ X դարի 40-ական թուականների վերջերին, որը բերեց 949 թ. Կարինի գրաւմանը ու հետագայում բիւզանդական բանակաթեմ կազմելուն: Թէեւ գերակայ-ստորակայ յարաբերակցութեան ընկալումը (Բիւզանդիայում իշխող քաղաքական ուսմունքը հայերին դիտում էր իբրև կայսրութեան հպատակներ)³ թոյլ չէր տալիս այդ առաջխաղացումը բռնատիրութիւն նկատել, բայց փաստօրէն ոչ այնքան Մեծ Հայքի անկախութեան դէմ ոտնձգութիւն կատարելը, որքան մահմեդական կազմաւորումների հետ բախման վտանգը կայսրութեանը ստիպեց ձեռնպահ մնալ աւելի առաջ գնալուց: 929-943 թուականների արանքում գրուած եւ Հայաստան՝ անյայտ հասցէատիրոջը ուղղուած Ռոմանոս Լակապէնոս կայսեր թուղթը վկայում է, թէ Բիւզանդիան պատրաստ է օգտագործել իշխանական տոհմերի միջեւ եղած հակառակութիւնները եւ, Վասպուրականի ու Մեծ Հայքի թագաւորութիւնները միացնելով, ստեղծել «արքոնների արքոնի» տիրութեան տակ գտնուող Հայաստան. «Մենք կը հրամայենք Գագիկին եւ Աբասիկին եւ միւս իշխաններին, - գրում էր Լակապէնոսն այդ անանուն հասցէատիրոջը, որոնք բնակւում են նոյն այդ վայրերում, հպատակուել քո խօսքին ու վճռին»⁴: Ծրագրային այս սցենարը մարմին չառաւ, բայց Լակապէնոսին ու Ծիրանածնին յաջողած կայսերը եւս արեւելեան քաղաքականութեան մէջ մասնաւորեցումներ ունեցան:

¹ Յովհ. Դրասխանակերտցի, էջ 284:

² Նոյն տեղում, էջ 293:

³ Հմմտ. Կ. Իւզրաշեան, «Բագրատունեաց շրջանի» Հայաստանը միջազգային իրաւունիքի տեսանկիւնից, ՊԲՀ, 1975, N 1, էջ 40:

⁴ Տե՛ս Կ. Իւզրաշեան, Ռոմանոս Լակապէնոս կայսեր անյայտ հասցէատէրը, - «Լրաբեր» (Հաս. դիտ.), 1974, N 1, էջ 35-43. Հմմտ. նոյն, Армянские государства..., с. 268-270.

Թագաւորն Վասպուրականի, եղբայր Գուրգէնայ: Ընդ որս առաւել ուրախ եղել թագաւորն Վասիլ, եւ պատուեց զնոսա (իմա՛ Սենեքերիմին ու Աբաս Կարսեցուն – Պ.Մ.) արքունատուր պատուով»¹: Մասնագէտները իրաւացիորէն ենթադրում են, թէ հէնց այդ հանդիպման ժամանակ է ծրագիր մշակուել Վասպուրականը առաջիկայում կայսրութեանը միացնելու վերաբերեալ²: Թիւրքական յարձակումներից կրած անյաջողութիւնները դրդեցին Սենեքերիմին ու նրա որդի Դաւթին Բիւզանդիային դիջել թագաւորութեան տարածքը եւ, ինչպէս Յովհաննէս Սկիլիցէսն է պատմում, 1021/2 թուականներին փոխարէնն ստանալ «պատրիկի պատուաստիճանը եւ Կասպաղովկիայի զօրավարի <պաշտօնը>, տուածի դիմաց որպէս տիրութիւն ստանալով հետեւեալ քաղաքները. Սերաստիան, Լարիսան, Աբարան եւ այլ բազում տիրոյթներ»³:

Այսպիսով, մօտենում էր Անիի Բագրատունիների թագաւորութիւնը կայսրութեան ենթարկելու, աւելի ստոյգ՝ Մեծ Հայքը նուաճելու ծրագրեալ ժամանակը: Հայկական կազմաւորումների տիրակալները բաւականաչափ յստակ զիտակցում էին կայսրութեան ծրագրերի վտանգաւորութիւնը, ուստի մէկ-երկու փորձ արեցին միասնական ճակատ կազմելու այդ վտանգի դէմ: Այսպէս, երբ 973 թ. զօրաժողով գումարած Չմշկիկ կայսրը պատրաստում էր հակահարուած տալ Ամիդի մատոյցներում բիւզանդական յիսուն հազար զօրքերին պարտութեան մատնած արարներին, Մատթէոս Ուռհայեցու հաղորդմամբ՝ կայսրը կամեցաւ հաւաքած զօրքով նաեւ Հայոց աշխարհ մտնել, «Յայնժամ ամենայն թագաւորագունքն Հայոց՝ ազատքն եւ իշխանքն եւ ամենայն մեծամեծքն աշխարհաց Տանն արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Բագրատունի, թագաւորն Կապանին Փիլիպպէ եւ թագաւորն Աղուանից Գուրգէն, Աբաս Կարուց տէրն եւ Սենեքերիմ Վասպուրականիս տէրն եւ Գուրգէն Անձեւացեաց տէրն եւ բովանդակ ամենայն տունն Սասունու, եւ բանակ հարեալ ի Հարքայ գաւառին արք իբրելութսուն հազար»⁴: Հայոց պատրաստութիւնը տեսած կայսրը զգուշացաւ բախումից եւ «Հաստատեաց ուխտ սիրոյ ընդ Հայք եւ խնդրեաց զօրս Աշոտոյ գալ նմա յօգնականութիւն»⁵: Հայոց ազնուականութեան յիշողութեան մէջ թարմ էր նախորդ կայսեր՝ Նիկեփոր Փոկասի օրօք

¹ Ասողիկ, էջ 277:

² Հմմտ. К. Юзбашев, УК. СОЧ., с. 150.

³ Յովհ. Սկիլիցէս, էջ 86, այդ փաստի վերլուծութիւնը տե՛ս Ղ. Ալիշան, Յուշիկք Հայրենեաց Հայոց, հտ. Բ, Վենետիկ, 1870, էջ 415-431:

⁴ Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 17:

⁵ Նոյն տեղում, էջ 18:

ղաք եւ դամենայն տունն Շիրակայ ի Յովհանն[իս]է որդւոյ Գազկայ Հայոց թագաւորէն: Իսկ Յովհաննէս յաղագս տկարութեան մարմնոյ իւրոյ խոստացաւ տալ զԱնի ի թագաւորն Հոռոմոց զկնի մահուանն իւրոյ»¹:

Հարկաւ նման որոշումները պարզ ցանկութեան կամ «տկարութեան» արդիւնք չեն, այլ ներքին ու արտաքին բազմաստիճան վերուվարումների հետեւանք: Պատահական չէ, որ Սկիլիցէսը Մեծաց Հայոց թագաւորին կոչում է սոսկ «տոպարքոս», որին կայսրը մագիստրոսի պատուաստիճան է շնորհում: Արտաքին պարագաների ազդեցութիւնը կշռադատելիս կարելոր պիտի նկատել Դուինի էմիրի՝ Աբուլ Ասուար Ա Շեղդաղեանի դիրքորոշումը: Անհրաժեշտութեան պահին կայսրութիւնը կարող էր նրան հակաանիական գործողութիւնների հրահրել, թէեւ նա Գազիկ Բ-ի քրոջ ամուսինն էր: Ի վերջո, Հայոց «գլխաւոր ազատաց» շարքերում կային թագաւորութեան յաւակնող բիւզանդամէտ ուժեր, որոնցից մէկի՝ Սարգիս Հայկազնի մասին խօսում են Լաստիվերոցին եւ Ուռհայեցին²: Խժկոնքի 1033 թ. արձանագրութեան մէջ Սարգիսը կոչուած է «Երից թագաւորաց Հոռոմոց առեալ երից պատիւ՝ անթիպատ պատրիկ, վեստ եւ դուկ արեւելից»³: 1041 թ. կայսր Միքայէլ Դ-ի եւ Անիի Յովհաննէս-Սմբատ Բագրատունու մահից յետոյ, երբ Կոստանդին Մոնոմախը վերստին Վասիլ կայսեր ստացած կտակի իրագործման ձեռնամուխ եղաւ, Սարգիսը ամրացաւ Անիի ներքին բերդում, եւ Վահրամ Պահլաւունու զարմիկներին, այդ թւում եւ Սարգսի աներ Գրիգոր Մագիստրոսին, մեծ պայքարի գնով միայն յաջողուեց պահպանել Բագրատունեաց գահը՝ նրա վրայ նստեցնելով Աշոտի որդի Գազիկ Բ-ին: Մագիստրոսի ու նրա փեսա Սարգսի միջեւ եղած այս պայքարից կարելի է պատկերացնել, թէ քսան հազարանոց բիւզանդական բանակին ընդդիմանալու ինչ խոշոր դժուարութիւններ կային: Աւելացնենք, որ Սարգսի զօրավիգների թւում էր նաեւ վրաց Բագրատ IV թագաւորը, որին Սարգիսը դիջել էր Անիի թագաւորութեանը պատկանող ինը ամրոց՝ պատրուակ ունենալով նրա մօր՝ Արծրունեաց Սենեքերիմ թագաւորի դուստր լինելու հանգամանքը⁴: Ճիշտ է, Գազիկ Բ-ը թագ ստացաւ Պետրոս կաթողիկոսի

¹ ՄՄ, ձեռ. N 1865, էջ 85r. Հմմտ. Н. Марр, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, СПб., 1895, с. 19.

² Արխտ. Լաստիվերոցի, էջ 57-58. Մատթէոս Ուռհայեցի, էջ 84:

³ «Վիմական տարեգիր», կազմեց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 17. Հմմտ. К. Юзбашьян, Армянские государства..., с. 161.

⁴ «Քարթլիս Յիսովրեբա», 1, 299 (վրաց.), Հմմտ. Մատթէոս Ուռհայեցի, էջ 84-85:

ների դէմ կռուելու¹: Աղբիւրները չեն հաղորդում, թէ Անիում ո՞վ եղաւ նրան անմիջապէս փոխարինողը եւ միայն Կաթողիկէ եկեղեցու վրայ եղած արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ ինքնակալ ծիրանածին թագուհու (Թէոդորա, 1055-1056) կամօք Անի է եկել Վասպուրականի երբեմնի կառավարիչ Ահարոն (Առաւն) Մագիստրոսը: Նրա գործունէութեան անխական շրջանից պահպանուել է նաեւ մի կնիք, ուր Ահարոնը կոչուած է Իբերիայի ու Մեծաց Հայոց դուքս եւ մագիստրոս²: Անիի վերոյիշեալ արձանագրութիւնը հնարաւորութիւն է տալիս բաւականին ճշգրիտ պատկերացում կազմել կայսրութեան նոր միացած տարածքների հանդէպ տարուող քաղաքականութեան վերաբերեալ: Կայսերական արքունիքը լիովին գիտակցում էր հակաբիւզանդական տրամադրութիւնների ծաւալումը, բայց նաեւ՝ արեւելեան այդ տարածքների ու նրանց բնակչութեան կարեւոր դերը կայսրութեան արեւելեան սահմանները նոր սպառնալիքներից պաշտպանելու գործում: Ուստի, Ահարոնի հաւաստմամբ, առաջին հերթին անհրաժեշտ է եղել բարձրացնել Անիի բոլոր պարիսպները՝ դրանք օժտելու մեծկակ քարերով եւ հաստահեղոյս բուրգերով («բարձրացուցի բաւանդակ զպարիսպ սորին կառկառակոյտ արձանաւք եւ հաստահեղոյս ամրութեամբ»³): Ահարոնը փորձել է նաեւ սեփական միջոցները ծախսելով համակրանք սերմանել անեցիների մէջ, ուստի ջանացել է առատ ջուր բերել Անի («ի յիմոց մեծածախ գանձուց ածի ջանիւ ջուր յորդաբուխ ի մէջս ամրոցիս յուրախութիւն եւ ի զովացումն ծարաւեաց»), ապա եւ ինքնակալ ծիրանածին թագուհու հրովարտակով ազատել անեցիներին տնահարկերից («պախտից տանց քաղաքիս») եւ տարեկան ութ լիտրի չափով վճարուող «թաստակից» (տասանորդի՞ց)⁴: Ի լրումն այս ամէնի պաշտօնեաների խնդրանքով մութասիբներին (առեւտրի վերակացուներին) Ահարոնն ազատել է երկու լիտր չափով գանձուող «Գիւտ» կոչուող հարկից:

¹ Հմմտ. *Б. Н. Бенешевич*, Три анийские надписи XI в. Из эпохи византийского владычества, Петроград, 1921, с. 6-7.

² *В. Шацковская*, Неизвестные печати Аарона, магистра и дуки Иверии и Великой Армении и проедра и дуки (XI в.), - "Сообщ. Гос. Эрмитажа", вып. 37, Л-д, 1973, с. 60-63.

³ *Б. Н. Бенешевич*, նշ. աշխ., էջ 2-3: «Դիւան հայ վիմագրութեան», 1, Երեւան, 1966, էջ 38 (N 107):

⁴ «Թաստակ» հարկանունը աղբիւրներում վկայուած է վեց անգամ (Անի, Տեկոր, Հոռոմոս, Երեբոյք, Ալաման, Բիւրական), սակայն նրա բուն նշանակութիւնը տակաւին ստուգաբանուած չէ (Հմմտ. Ս. Ա. Աւագեան, Վիմագրական պրպտումներ, Երեւան, 1986, էջ 44-45):

Բ. Բենեշելիչի կռահմամբ՝ Ահարոնի Անիում պաշտօնավարելը պայմանաւորուած էր Թողրուլ-բէկի կողմից Վասպուրականի ամրոցների գրաւման հետեւանքով Անիի պաշտպանական դերի մեծացմամբ¹: Սակայն նա Անիում երկար չմնաց. Գրիգոր Մագիստրոսի մահից յետոյ (1058 թ.) Ահարոնը տեղափոխուեց Միջագետք, որ կայսրութեան ոչ պակաս խոցելի միաւորներից էր:

Առկայ աղբիւրները հնարաւորութիւն չեն տալիս պատկերացնել, թէ բանակաթեմի վարչական կենտրոնում, այս դէպքում՝ Անիում, բիւզանդական վարչակազմը ի՞նչ պաշտօնեաներով էր ներկայանում, եւ նրանց օգտին գանձուող ինչպիսի՞ հարկեր ու տուրքեր կային: Յայտնի է միայն, որ Իսահակ Կոմնենոսի ապստամբութեան միջոցին (1057 թ.) Անիում կար բանակաթեմի դատաւոր, որը անչափ գանձ, ձիեր ու ջորիներ էր ժողովել Արեւելքում (իմա՛ Իբերիա բանակաթեմում), ինչը նշանակում է թէ հարկային թեթեւացումը յարաբերական էր²: Անիում կառավարչից բացի, կային այլ «գլխաւորներ» եւս, որոնցից մէկին Անիի կառավարիչ մագիստրոսը (Ահարոնը) ուղարկեց Կարինին տիրանալ փորձող Իւանէ Լիպարիտեանի դէմ³: Հաւանաբար «գլխաւորների» շարքին պիտի դասել եւ բանակաթեմի կառավարչակցին, որպիսին Բագրատ Վիսկացու կառավարչութեան տարիներին (1060-1064 թթ.) էր Գրիգոր Բակուրեանը:

Անիում յայտնաբերուած յունարէն պատառիկային արձանագրութիւնից գիտենք, որ Ահարոն Մագիստրոսին փոխարինող կառավարիչը՝ Հայաստանի եւ Իբերիայի վեստարքոս կատապանը Յովհան Մոնաստիրիոտն է եղել (1059 թ.)⁴, յաջորդ տարին կամ մի փոքր ուշ այդ տեղը դիջելով Արեւելքի մագիստրոս եւ կատապան Բագրատ Վիսկացուն: Ի դէպ, քաղկեդոնադաւան այս Բագրատի ու Բակուրեանի ծագուն: Ի դէպ, քաղկեդոնադաւան այս Բագրատի ու Բակուրեանի ծագուն: Ի դէպ, քաղկեդոնադաւան այս Բագրատի ու Բակուրեանի ծագուն: Ի դէպ, քաղկեդոնադաւան այս Բագրատի ու Բակուրեանի ծագուն: Ի դէպ, քաղկեդոնադաւան այս Բագրատի ու Բակուրեանի ծագուն:

Անիի վարչական ու տնտեսական կեանքի վերաբերեալ արժէքաւոր նիւթ է պարունակում Մայր տաճարի պատին փորագրուած Բագրատ Վիսկացու արձանագրութիւնը⁵: Նախ պարզուում է, որ քաղաքը

¹ Б. Н. Бенешевич, *նշ. աշխ.*, էջ 8-9:

² Արիստակէս Լաստիվերտցի, էջ 106:

³ Անդ:

⁴ Б. Н. Бенешевич, *նշ. աշխ.*, էջ 11-20:

⁵ Н. Марр, *Ани*, с. 23.

⁶ Б. Н. Бенешевич, *նշ. աշխ.*, էջ 21-28, Դիւան, 1, էջ 37 (N 106):

Թաղամասերի է բաժանուած եղել եւ նրանց կառավարիչները «տանուտէր» են կոչուել, որպիսիք են՝ Սխիթար Հիւպատոսը՝ Կրտի որդին, Գրիգոր սպաթարկանդիտատը՝ Լապաստակի որդին, եւ Սարգիս սպաթարկանդիտատը՝ Արտաւազայ որդին: Երեքն էլ տեւականօրէն բիւզանդական ծառայութեան մէջ գտնուող եւ տիտղոսներ ստացած անձիք են: Յաջորդ կարեւոր հաղորդումը անեցիների հարկերի ու պարհակների հերթական թեթեւացմանն է վերաբերում. նրանք ազատուում են վեցկիի (գութանի), սայլի, կամի կոռերից եւ անգարիոն պարհակից: Անիի գինեվաճառն ու մորթելիք գնողը ազատուում են բաժ մուծելուց, բայց յիրաւի շալակաւորն (լումայափոխ) ու մսագործը՝ բաժի կէսից, առհասարակ մէկ կապիճի բաժը 6-ի փոխարէն դառնում է 4 դրամ եւ այլն:

Կայսեր անունից արտօնագիր հրապարակող կատապանը պարտաւորեցնում է իրեն փոխարինելու եկողներին հոգալ ցանքսի համար անհրաժեշտ 600 մող սերմացուն, վճարել հունձքի դիմաց, որպէսզի «չհասնի ի յԱնի ոչինչ ոյժ», այսինքն՝ քաղաքը դժուարութիւններից զերծ մնայ¹: Միքայէլ Աթալիատոսը բաւական մանրամասնօրէն է խօսում Անիի՝ այդ «մեծ ու բազմամարդ քաղաքի» պաշտպանունակութիւնը բարձրացնելու Կոստանդին Ժ-ի մտահոգութեան մասին², եւ վերոբերեալ արձանագրութիւններն էլ այդ են փաստում: Սակայն բիւզանդացիները չէին հասցրել բաւականաչափ բանակ կենտրոնացնել այստեղ, եւ «կայսեր ծառայի»՝ Գրիգոր Բակուրեանի³ ներկայութիւնն իսկ չօգնեց 1064 թ. սելջուկների յարձակումից քաղաքը պաշտպանելուն: Ամենակարեւորը՝ բիւզանդական կառավարիչներն ու զօրականները չէին կարողացել ապահովել բանակի եւ բնակչութեան համատեղ պաշտպանութիւնը, ուստի, Ուռհայեցու տեղեկութեամբ, բիւզանդացիները քաշուել էին վերին եւ ներքին բերդերը, իսկ քաղաքի յուսալքուած բնակչութիւնը խուճապի էր մատնուել⁴: Նման պարագաներում «անօրէնք իշխանքն Հոռոմոց», այսինքն՝ Բագրատ Վսկացին ու Գրիգոր Բակուրեանը վիճակը փրկել չէին կարող: Բիւզանդիայի արեւե-

¹ Հմմտ. Ս. Ա. Աւագեան, նշ. աշխ., էջ 28-32:

² Corpus Scriptorum Historiae Byzantinae, Michael Attaliota, Bonnae, 1853, p. 79-80.

³ В. А. Арутюнова-Фиданян, К истории падения Ани (О личности "Царского раба" в Истории Атталиата), ВОН, 1967, N 9, с. 97-103; Հմմտ. Типик Григория Пакуриана, введение, перевод и комментарий В.А.Арутюновой-Фиданян, Ереван, 1978, с. 50-51.

⁴ Մատթէոս Ուռհայեցի, նշ. աշխ., էջ 147-149:

լեան քաղաքականութիւնը մշակուած էր միայն կայսրութեան շահերի հաշուառմամբ, իսկ տեղական բնակչութեան հետ յարաբերութիւնների սերտացումը նրան քիչ էր մտահոգում: Մէկ-երկու արտօնագրով հարկերի թեթևացումը բաւարար չէր վաղեմի հակասութիւնները հարթելու եւ երկու տասնամեակ զոյատեւած բիւզանդական տիրապետութիւնը դիմացկուն դարձնելու համար:

Անիի անկմամբ իր աւարտը գտաւ նաեւ Կարսի Բագրատունեաց հարիւրամեայ թագաւորութիւնը. Գագիկ Կարսեցին 1065 թ. Կոստանդին Ժ-ին յանձնեց իր իշխանութեան տարածքը՝ փոխարէն ստանալով տիրոջթներ Փոքր Հայքում¹:

Հայրենի եզերքը օտար բնակավայրի հետ փոխանակելն ու նոր հայրենիք ստեղծելու փորձը, որքան էլ հարկադրական ու պատճառաբանուած, հայոց պատմութեան ամէնից աւելի խոցելի ու ողբերգական էջերից է:

¹ С. Т. Еремян, Присоединение северо-западных областей Армении к Византии, с. 12.

«ՆԱՐԵԿԻ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՐԸ
ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԻՏԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒԻՆԸ

Ա. «Մատեան ողբերգութեան» 1985 թուականի երեւանեան հրատարակութիւնը աշխատասիրողները իսկ հաշուումներով 60-րդն է: Այժմ՝ 2003 թ. լրացած հազարամեակի աւարտին, հրատարակութիւնների կամ առաւել ստոյգ՝ վերահրատարակութիւնների թիւն աւելացել է շուրջ մէկ տասնեակով, եւ նրանցից մէկը տիտղոսաթերթին կրում է «Հազարամեակի հրատարակութիւն» պարտաւորեցնող վերտառութիւնը¹: Խմբագիր Զարէհ եպս. Աղնաւորեանի «Բացատրականում» «Նարեկի» բնագրի կապակցութեամբ ասուած է հետեւեալը. «Մատեան ողբերգութեանը» հիմնականին մէջ 1986-ին Անթիլիաս, «Գէորգ Մելիտինեցի» գրական մրցանակի մատենաշարին մէջ տպուած բնագիրն է, խմբագրութեամբ Արտաւազդ արքեպս. Թրթռեանի, որ իր կարգին բաղդատական բնագիր մըն էր՝ կազմուած երեք տարբեր հրատարակութիւններէ՝ վենետիկեանէն [1840 թ.], Գարեգին եպս. Տրապիզոնիէն [Պուէնիոս Այրէս, 1948], եւ Հայկական ՍՍՀ Գիտութիւններու ակադեմիային կողմէ հրատարակուած քննական բնագրէն [1985]»:

Եթէ մի կողմ թողնենք Գարեգին պատրիարքի գրաբար-աշխարհաբար հանդիպադիր հրատարակութիւնը, որի նպատակը ոչ այնքան բնագիրը սրբագրելն է, որքան ստոյգ ու տաղաչափեալ թարգմանութիւն տալը², միւս երկու տպագրութիւնները, փաստօրէն, ամփոփում են «Նարեկի» պահպանուած ձեռագրերի բնագրական գրեթէ բոլոր ընթերցումները, նարեկագէտների (Յ. Նալեան, Գ. Աւետիքեան, Թ. Գուշակեան եւ այլք) առաջարկած հիմնաւոր սրբագրութիւնները եւ կարեւորագոյն տպագրութիւնների բերած նորոյթները: Եւ այնուամե-

¹ Ս. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան եւ այլ երկասիրութիւնք, «Հազարամեակի հրատարակութիւն», տպարան կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ: Անթիլիաս, 2003:

² Այս հրատարակութեան հանգամանալի գնահատութիւնը տրուած է Յ. Սիրուանու «Գարեգին Պատրիարք Խաչատուրեան. մենագրութիւն» գրքում (Ստանպուլ, «Արաս», 2003, էջ 83-131):

ուագրական տարբեր հիմքեր ունեցող հրատարակութիւնները միմեանցից այդքան քիչ տարբերութիւններ են ներկայացնում¹ :

Սուրբ հեղինակի խօսքի հանդէպ գրիչների երկիւղածութեան աստիճանի վկայութիւն է եւ այն, որ Նարեկացու երկում հանդիպող ոճական, քերականական, բառային-իմաստաբանական անկանոնութիւնները սրբագրութեան չեն ենթարկուել (դիզի/դիզեցի, լուո'/լսեցո', երբեքի, անկաւ ստինք եւ բազում այլ իրողութիւններ): Այլ հարց է, թէ նման տարբերակները բարբառի՞ց են գալիս, թէ՞ հեղինակային հնարանք են: Չմոռանանք, որ այդպիսիք առկայ են նաեւ հեղինակային յիշատակարանում (ընդոտնեցաւ թշնամիք, կառուցի, դիզի): Ի վերջոյ ասենք, որ Նարեկացու դարաշրջանում, նրա իսկ ասլրած միջավայրում գրչի մարդիկ բարբառային տարբերակից կամ արտասանութիւնից այնքան էին խուսափում, որ պատրաստ էին ծայրայեղութեան գնալ եւ Ախթամարի վանքի պատին Ստեփանոս Նախավկայի քանդակի կողքին փորագրել «ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱՀԱՎԿԱՅ» կամ «Շատախ»-^{*}ի փոխարէն «Շատահ» գրել մի յիշատակարանում² :

2. Տարբերակները սակաւութեան կարեւոր պատճառներից մէկն էլ «Նարեկի» վաղ ընդօրինակութիւններից մի քանիսի պահպանուածութիւնն ու տպագիրներից շատերի հիմքում ընկած լինելն է: Արդէն Ներսէս Լամբրոնացու պատուէրով 1173 թուականից ոչ ուզ գրուած, գրչի ու ստացողի սրբագրութիւններ բովանդակող գրչագրի առկայութիւնը (ՄՄ ձեռ. թիւ 1568) հրատարակիչներին ու աշխատասիրողներին ազատում է հետագայ ընդօրինակութիւնների մէջ թարթափելու բազում հոգսերից: Բնական էր յուսալ, որ երեւանեան (1985 թ.) հրատարակութեան հիմքում այն պէտք է դրուէր, ինչպէս եւ կատարուած է³ : Աշխատասիրողները պահանջուելիք հմտութեամբ ու

¹ Պաշտամունքային գրքեր ընդօրինակող միջնադարեան գրիչները անշուշտ յիշում էին Յովհաննու Յայտնութեան անէժքը. «Թէ ոք յաւելցէ ի սա՝ յաւելցէ Աստուած ի վերայ նորա գեւթն հարուածսն գրեալս ի գիրս յայս: Եւ թէ ոք պակասեցուցէ ի բանից մարգարէութեան գրոցս այսմիկ՝ պակասեցուցէ եւ հասցէ Աստուած զբաժին նորա ի ծառայն կենաց եւ ի քաղաքէս սրբոց, որ գրեալ է ի գիրս յայս» (Յայտ. ԻԲ 18-19):

² Հմմտ. *Documenti di architettura Armeni-8*, Aghtamar, Milano, 1974, 21/22; Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 182. Ս. Քոլանջեան, Նորայայտ պատառիկներ Կիւրեղ Երուսաղէմացու թ՝ դարի մի գրչագրից, «Բանբեր Մատենադարանի», 1960, թիւ 5, էջ 227. Հմմտ. Ս. Ա. Աւագեան, Վիմական արձանագրութիւնների հնչիւնափոխութիւն, Երեւան, 1973, «Ժամանակագրական տախտակ» (Խ-ի տեղում Հ):

³ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրութեամբ Պ. Մ. Խաչատրեանի եւ Ա. Ս. Ղազինեանի, Երեւան, 1985, էջ 24-26, 240:

պարզութեամբ որոշել են համեմատութեան առնուող 61 ձեռագրերի խմբային պատկանելիութիւնն ու միմեանց յարաբերութիւնը: Ինչ վերաբերում է 1985-ին նախորդած եւ գրեթէ համեմատուած գրչագրերի թուին հաւասար տպագիրների բնագրական գնահատութեանը, ապա բացատրութիւնը հետեւեալն է. «Ելնելով այն հանգամանքից, որ ներկայ բնագիրը պատրաստուած է չափազանց մեծ թիւ կազմող ձեռագրերի (61) հիման վրայ, եւ որ բուն գրչագրերից անմիջականօրէն ծագող տպագիրները հիմնականում ոչ թէ բնագրային նոր տարբերութիւններ են ի յայտ բերում, այլ գլխաւորապէս, տպագրական վրիպակներ, նաեւ այնպիսի տարրնթերցուածներ, որոնք նարեկացու բնագիրը ճշգրտելու իմաստով էական արժէք չեն կարող ներկայացնել, ձեռագրերում բացակայող այդ հազուագիւտ տարբերութիւնները վկայակոչւում են ծանօթագրութիւնների բաժնում»¹:

Գ. Այսպիսի ընդհանրացած գնահատականը «Նարեկի» տպագրերի պարագայում բաւականաչափ հիմնաւոր չէ, որովհետեւ նրանցից մի քանի կարեւորների հիմքում ընկած ձեռագիր բնագրերը այսօր յայտնի չեն կամ իրապէս կորած են: Նրանց ունեցած տարրնթերցումները չեն կամ իրապէս կորած են: Նրանց ունեցած տարրնթերցումները «տպագրական վրիպակներ» որակելը հարցի լուծման պարզունակ, հե-
«տպագրական վրիպակներ» որակելը հարցի լուծման պարզունակ, հե-
«տպագրական վրիպակներ» որակելը հարցի լուծման պարզունակ, հե-
«տպագրական վրիպակներ» որակելը հարցի լուծման պարզունակ, հե-
«տպագրական վրիպակներ» որակելը հարցի լուծման պարզունակ, հե-
«տպագրական վրիպակներ» որակելը հարցի լուծման պարզունակ, հե-
«տպագրական վրիպակներ» որակելը հարցի լուծման պարզունակ, հե-
«տպագրական վրիպակներ» որակելը հարցի լուծման պարզունակ, հե-
«տպագրական վրիպակներ» որակելը հարցի լուծման պարզունակ, հե-
«տպագրական վրիպակներ» որակելը հարցի լուծման պարզունակ, հե-

¹ Նոյն տեղում, էջ 224-225 (ընդգծումը մերն է - Պ. Մ.)
² «Պատմա-բանասիրական հանդէս», 1987, թիւ 4, էջ 104-112
³ 1985 թ. հրատ. էջ 205



«շուրջ երեսուն ձեռագրի եւ նախկին տպագիրների համեմատութեամբ» պատրաստուած լինելու, «Բան»երը պարբերութիւն-հատուածների բաժանած ունենալու հանգամանքով:

Տիկին Շ. Նազարեանին այս դնահատութիւնը չի գոհացրել, որովհետեւ պատշաճ ուշադրութեան չի առնուել 1774 թ. հրատարակութեան առաջաբանում եղած տեղեկութիւնը, թէ «ի քաղաքաց-քաղաքաց Հայաստանեայց եւ ի բուն իսկ ի Մոկաց գաւառէ՝ մեծաջան փութով գտեալ օրինակս ընտիրս՝ հնագոյնս՝ անձեռամերձս, յորոց գերկուցն՝ սրբոյս իսկ պնդէին լինիլ ձեռաց գիր, յորս էր՝ որ դմատեանս, եւ էր՝ որ զտարբերութեանց նոցա զգանազանութիւնս առձեռն բերեալ, մինչեւ թիւ օրինակացն հնոց եւ նորոց ժամանել ի համար երրեակ տասանց, եւ խրախուսեաց դմեզ աշխատակցիլ»¹: Ասել է թէ՛ հրատարակութեան հիմքում դրուած են «անձեռամերձ» (անազարտ պահպանուած, ձեռք չտուած) ձեռագրեր, որոնցից երկուսը Նարեկացու ինքնագրեր են ճանաչուել (պնդէին լինել): Ընդ որում, առաջաբանում յստակ ասուած է, թէ «Յուղղագրութիւն մատենիս ոչինչ ի մէնջ եւ ոչինչ ըստ հաճոյից կամաց մերոց սրբագրեցաք... առանց համեմատելոյ զնոսա ընդ հաւատարիմ օրինակաց»²:

Դ. Առաջաբանի տեղեկութիւնները քննարկելիս Շ. Նազարեանը գտել եւ բերել է լրացուցիչ վկայութիւններ: Դրանցից մէկը «Թուղթ ի Յակոբայ առ երջանիկ տէրդ իմ եւ հայր Կարապետ մաքրազան վարդապետ» խորագիր ունեցող գրառում է, թէ ինչպէս է ինքը Յակոբ վարդապետը Կտուցի վանահայր Կարապետ վարդապետի յորդորով Մոկս հասել՝ արթուն հսկողի «ճգնակ մատենին ինքնագիծ տառին», այսինքն՝ Գրիգորի ճգնութեան գրոց ինքնագիր օրինակ գտնելու եւ «զհաւաստին կշռել զհանգամանս» ձեռագրի հեղինակային լինելու հանգամանքները քննելու համար:

Հրաշագործութեան զօրութեամբ (Նարեկի դէպքում ինքնին հասկանալի է) հաւաստիանալով («սակս որոյ եւ մերս հաւատ ընկալեալ»)՝ ջանասիրութեամբ ձեռնամուխ է եղել ունեցած տեքստի համեմատութեանը գաղափար օրինակի հետ եւ ըստ այնմ սրբագրելուն («ձեռնարկի ջանիւ զըսպակի հանգոյն գաղափարին գտեալ սրբեցի»): Չեռնպահ է մնացել «մտահաճ աճեցումից» եւ մանաւանդ «լուսաւոր բանսն» փոփոցներուց (իմա՝ բանաստեղծութիւնը խաթարելուց), բայց եւ զգոյշ է եղել «զի մի՛ զառ իւրք զանց լիցի», գաղափար օրինակի համեմա-

¹ «Գիրք աղօթից» Գրիգոր Նարեկացոյ, հոգեկիր հռետորի, Պոլիս, 1774, էջ 11-12

² Նոյն տեղում, էջ 11

Հիւսեանի կազմած անտիպ ձեռագրացուցակում¹: Այս ամէնի թելադրանքով է, որ ուշ միջնադարի եւ նոր ժամանակների հայ գրականութեան հարցերին լաւատեղեակ դոկտոր Շ. Նազարեանը անբաւական է Նարեկի 1985 թ. հրատարակութիւնից եւ համոզուած, թէ «Տարակուսանքից վեր է, որ «Մատեան ողբերգութեան» գիտական յաջորդ հրատարակութեան հիմքում կղրուի նաեւ 1774 թ. «Գիրք աղօթից սրբոյ Գրիգորի Նարեկացոյ» հրատարակութեան բնագիրը: Դա կլինի իւրովի յաւելածացումն... եւ «երախտագիտութեան տուրք այն գործիչների յիշատակին, որոնք «անսպառ ջանիւք» եւ «հրաշիւք» հայ սերունդներին են յանձնել այս անմեռ կոթողը»²:

2. Նման եղրակացութիւնը հիմնաւոր առարկութիւնների տեղ չի տալիս, բայց եւ պիտի խոստովանել, որ այն կատարուած է բացառապէս արտաքին եւ կողմնակի հաղորդումների ու վկայութիւնների հիման վրայ: Ի՞նչ պատկեր է պարզում Մատեանի 1774 թ. եւ նորագոյն գիտական հրատարակութիւնների բնագրերի համադրական ուսումնասիրութիւնը: Ստորեւ մենք կը վկայակոչենք այն արդիւնքները, որ ստացել ենք Նարեկի հաւասարապէս իրարից հեռու չորս «ղրութիւնների» կամ Բան-երի (Ա, Լ, Կ, Ղ) քննութիւնից: Ըստ երեւանեան հրատարակութեան՝ տրուող տողահամարներին յաջորդող ընթերցումը ներկայացնում է այդ իսկ հրատարակութեան բնագիրը: Նրանից սուրանկիւն փակագծով բաժանուած միաւորը Կ. Պոլսի 1774 թ. հրատարակութեան տարընթերցումն է նախորդի համեմատութեամբ, իսկ «Հաղարամեակի հրատարակութիւն» կոչուածը նախորդ երկուսին յարաբերելու արդիւնքը արտացոլուած է ընթերցման նոյնականութիւնն արտայայտող շղագրումով:

Ա. Ա.1 ողբոց սրտից] սրտի՝ ողբոց
9 յաւելուածս բանից] բանիցս յօղուած՝

Բ 36 Ժամանելն] Ժամանել
38 Աւրինակ առեալ] առօրինակեալ
45 Կերպաւօրեն] կերպարանեն
51 Հարուածսն] Հարուածս
եղոմայեցւոց] Եղովմայեցւոց

¹ Տե՛ս Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների հաւաքածոյ, թիւ 92, էջ 10-11. Հմմտ. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անւ. Մատենադարանի, հտ. Ա, Երեւան, 1965, էջ 98. Հմմտ. Շ. Նազարեան, նշլ. աշխ., էջ 110:

² Շ. Նազարեան, նշլ. աշխ., էջ 112

59 գծագրեն] գծագրել
60 Ամէն]

- Լ Բ 20 ոչ համարձակի] ոչ երբէք համարձակի
Գ զարքայութիւնն] զարքայութիւն
Դ 73 զարեաց] զարեացն
86 եւ եթէ] եթէ
Ե 99 գերելոյս] գերւոյս
Կ Ա.31 ըստ գործս նոցա] զգործս նոցա
Բ 43 ի պատնիշէ] ի պատն(ը)շէ
53 զհետս Կենացն] զհետս Կենաց
Գ 84 Ողորց վայել է] Ուղորց վայելէ
95 ի յաւրհանեալս] ի յօրհանեալն
Դ 109 Յաւսականացն] Յաւնականացն // Յաւսնականացն
110 Քոմովսայ] Քամովսայ
111 կանացեացն] կանացեաց
Ե 134 Եւ ի նեղել նոցա] թէ ես ի նեղել նոցա
145 զզարւրավարութիւնն] զօրավարութիւնն
Մովսեսի¹] Մովսէսի
152 զմիարանեալս] զմիարանեալ
Զ 173 դիպուած] դիպուածն
176 Անիծեալ] անիծանել
183 յիշատակ] յիշատակաց
189 հոգովդ] հոգւովդ
ՂԱ 6 անքնին] անքննին
Բ 43 որ] յոր
Գ 59 սատակչաց] սատակչացն
60 հնարաւորութեամբ] հնարաւորութեան
Դ 73 խաղբիցն] հաղբիցն
99 եւ թէ] եւ եթէ
Ե 118 անթարգմանելոյդ] անթարգմանելոյդ
126 լիցի] եղիցի

542 համարակալ բանաստեղծական տող կազմող այդ չորս Բան-
երը, յիշեալ երեք հրատարակութիւններէ շրջանակում ունեն 38 տար-
ընթերցում, որոնցից 10 որոշեալ-անորոշ առմանն է վերաբերում (ժա-

¹ Մովսեսը, հարկաւ, տպագրական վրիպակ է:

մանելն/ժամանել, հարուածսն/հարուածս, դարքայութիւնն/դարքայութիւն, չարեաց/չարեացն եւ այլն)¹ : Տարբերութիւններից 6-ը սոսկական այլադրութիւն է (Եղոմայեցւոց/Եղովմայեցւոց, Յաւսականացն/Յաւսականացն, Քոմովսայ/Քամովսայ, Մովսեսի/Մովսէսի, հոգովդ/հոգւովդ եւ այլն) : Բառերի ետեւառաջութեան երկու օրինակ կայ (ողբոց սրտից/սրտի ողբոց, յաւդուածս բանից/բանիցս յօղուած) : Ունենք ոճական-քերականական այլադրութեան 9 դէպք, երբ առանց բովանդակութեանը վնասելու կարելի է ընտրել մէկը կամ միւսը (աւրինակ առեալ/առօրինակեալ, կերպաւորեն/կերպարանեն, գծագրեն/գծագրել, ի պատնիշէ/իպատն(ը)շէ, անիծեալ/անիծանել, յիշատակ/յիշատակաց, անքնին/անքննին, լիցի/եղիցի եւ այլն) : Եւ-ի առկայութեան կամ բացակայութեան, թէ/եթէ-ի ընտրութեան, ըստ/զ նախդրափոխութեան կամ եւ/թէ փոխարինման 5 օրինակ ունենք, որոնք, հասկանալի է, էական բան չեն փոխում : Եթէ այս ամէնին գումարենք նաեւ Սուրբ Գրքից եղած քաղումների մէջ պատահող այլադրութիւնները, ապա կունենանք ընդամէնը մէկ-երկու դէպք, երբ մտածելու է, թէ նախընտրութիւնը իմաստաւորման ո՞ր տարբերակին տալ :

Բան 90-ի 42-43-րդ տողերում 1985 թ. հրատարակութիւնն ունի

Երանութիւն անձկայի,

Որ զկենդանութիւն շնչոյս լքանելն է ախորժելի :

Դատելով տարրնթերցումներում բերուած օրինակներից (էջ 931, տ. 43)՝ աշխատասիրողները մեր ընդգծած ուր-ի դիմաց ունեցել են միայն մէկ սրբադրուած ընթերցում (e որ սրբւ. որ քան), մինչդեռ Պոլսի 1774 թ. հրատարակութիւնը տալիս է յոր, ինչը այլ մեկնաբանութիւն է թելադրում. շնչի կենդանութիւնը լքելն ախորժելի է անձկայի երանութեան մէջ եւ ոչ նրա առկայութեան պարագայում, ինչպէս մակաբերում է ուր-ի դէպքում : Ի դէպ, «Հազարամեակի հրատարակութիւնը» հետեւում է Յակոբ վարդապետի ընտրութեանը :

Ուշագրաւ է նոյն Բանի Գ՛60 տողի պարագան.

Եւ դյարուցեալ գումարս սատակչաց,

Եթէ սպառագէնք այսական դժնեայ հնարաւորութեամբ

Բուռն մարտակցաց պատկանեալ զինուք,

.....

Մերժեսցե՛ս, հանցե՛ս, հատցե՛ս, խափանեսցե՛ս...

¹ Բաժանարար գծից առաջ եղածը 1985 թ. հրատ. ընթերցումն է, յաջորդողը՝ 1774 :

Եթէ «Հնարաւորութեամբ»-ը դիտենք իբրեւ դժնեայ-ի ստորագելի, ապա նախընտրելի է «Հնարաւորութեանը» (դժնեայ Հնարաւորութեան), իսկ եթէ յարաբերենք յաջորդ տողի «զինուք» գործիականին՝ ընդունելին 1985 թ. ընթերցումն է՝ «Հնարաւորութեամբ», որ պիտի եղել է նաեւ Ն. Լամբրոնացու ձեռագրում: Այս դէպքում էլ, սակայն, «Հազարամեակի հրատարակութիւնը» հետեւում է 1774 թ. ընտրութեանը:

Գերազանցապէս թուաբանական այս արժարժումն աւարտելու համար ասենք, թէ արձանագրուած 38 ընթերցումներից 26-ի դէպքում «Հազարամեակի հրատարակութեան» խմբագրողը հետեւել է 1774-ի ընթերցումներին, 10 ընթերցում նոյնական են երեւանեան հրատարակութեան հետ: Մէկ դէպքում հարասում է երկուսի ընթերցումը (Յաւանականաց/Յաւանականացն=Յաւանականացն), մէկ դէպքում էլ 1985-ի պէս յաւելում է «Ամէն»:

Է. Այժմ, կարծում ենք, տեղին է հարց տալ, թէ ի՞նչ պարագաներ կարող էին 1774 թ. հրատարակութիւնն օժտել նրանից երկու հարիւր տարի յետոյ ակադեմիական միջավայրում եւ կրկնակի քանակութեամբ տարի յետոյ ակադեմիական միջավայրում եւ նարեկագիտութեան կուձեռագրերի համագրութեամբ կազմուած եւ նարեկագիտութեան կուձեռագրերի համագրութեան փորձը ամփոփող բնատակած սրբագրութիւններն ու ընտրութեան փորձը ամփոփող բնատակած սրբագրութիւններն ու երբեմն նոյնիսկ նախընտրելի ընթերցումներ առաջարկելու կարողութեամբ: Որքան էլ բացառիկ նկատենք հրատարակութիւնը նախաձեռնող Գասպար ամիրայ Մուրադեանցի, բնագրագիտական համագրութիւնը կատարած եւ նախընտրելի ընթերցումները նշանակած Յակոբ վարդապետի եւ աշխատակցող միւս անձանց (այսօր կասէինք՝ խմբագրական յանձնաժողովի) տեւական աշխատանքն ու հմտութիւնը, միեւնոյն է պիտի յիշենք նրանց զգուշացումը, թէ «Յուղղագրութեան մատենիս՝ ոչինչ ի մէնջ, եւ ոչինչ ըստ հաճոյից կամաց մերոց սրբագրեցաք» եւ որ ամէն ինչ արել են համեմատելով «ընդ հաւատարիմ օրինակաց»: Ուրեմն՝ յիրաւի 1774 թ. մատելով «ընդ հաւատարիմ օրինակ եւ որ ոչ պատահականօրէն են Մոկսից գրին հաւատարիմ օրինակ եւ որ ոչ պատահականօրէն են Մոկսից բերած գրչագրերը որակում «ընտիր», «հնագոյն», «անձեռամերձ», «սրբոյս իսկ պնդէին լինիլ ձեռաց գիր»:

Ձեռագրերը, ինչպէս երեւում է, մանրամասնութիւններ բովանդակող յիշատակարան չեն ունեցել, բայց որ նրանք իրօք Լամբրոնացու օրինակին ժամանակակից կամ գուցէ նրան կանխող միաւորներ են եղել, կարելի է հաւաստիանալ վերեւում կատարուած բնագրագիտական քննարկմամբ: Ընդ սմին՝ յիշեալ չորի Բան-երի (Ա, Լ, Կ, Ղ) կան քննարկմամբ:

չրջանակում բնագրի կրած փոփոխութեան աստիճանը ակներեւ դարձնելու համար բերենք նրանց համադրական տախտակից կատարած մեր քաղումը:

Համեմատուող Բան-երի տարրնթերցումները՝ ըստ «յայլոց ձեռագիր կամ ապագիր օրինակաց»

**Մեք եղաք ըստ ձեռագրաց
Բան Ա.**

«1 Հեծութեան սրտի՝ ողբոց
աղարակի՝ քեղ

«2 դիպուածոյն

«2 առօրինակեալ

«2 նորին վերակցումն անդ

Բան Լ

«1 հաստողին փաղջօղ

«2 տաշտք կրեցեալք

Բան Կ

«1 ծանակեցից

«2 ջնեալ

«2 ասուն կենդանեաց

«3 բազմակիս

«4 յաւնականացն

Բան Ղ

«կրթարան կամաց

Իսկ այլք եղեալ էին

հեծութեան ողբոց սրտից
աղաղակ ի քեղ

դիպուածոցն

օրինակ առեալ

նորին վերացումն: Անդ

հաստղին փախջօղ

տաշաք երկու կրեցեալք

ծածկեցից

ջնջեալ

անասուն կենդանեաց

բազմականիս

յօնականացն կամ յաւսականացն

կամ յուսականացն

կրթարան մտաց

Ը. Վերջացնելու համար մեր այս կարճառոտ քննութիւնը, նկատենք, որ Նարեկի 1774 թ. հրատարակութեան հեղինակային բնագրին յաջորդում է Նարեկացու հանրայայտ յիշատակարանը (էջ 344-345), ապա եւ «Յիշատակ վարուց հոգեկիր հռետորի սրբոյն Գրիգորի» վարքը¹: Բառագիտական եւ բառարանագիտական ինքնուրոյն արժէք

¹ «Վարքի» եւ նրանում եղած վրիպումների մասին տե՛ս Արշալոյս Ղազինեան, Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, Անթիլիաս, 1995, էջ 16-17: «Վարքի» ներկայութիւնը ամենեւին չի նշանակում, թէ 1774 թ. հրատարակութեան հիմք ձեռագիրը Համբրոնացու ժամանակներից հին չի եղել: Այն չի նոյնանում «Վարքի» Ա եւ Բ խմբագրութիւնների հետ (նրանց բնագրերը տե՛ս 1985 թ. հրատարակութեան 169-174 էջերում): Յայսմաւուրքային տարբերակուող խմբագրութիւններ տե՛ս Գրիգոր Մարդուանցու տպարանում տպուած (1179/1730) Յայսմաւուրքի 394-395 էջերը, նաեւ *Le Synaxaire arménien de Tér Israel. Public et traduit le Dr. Bayan, VII, Mois de Méhéki, Paris, 1927 pp. 100-102.*

խածանօթ զընթերցասէրսդ առնելոյ՝ նախերգութեամբ յառաջարանել աստէն սակաւութիւնը:

Նախ՝ թէ յի՞նչ պատճառաց յորդորեցաք յաշխատասիրութիւնս յայս ուղղագրութեան մատենիս, եւ երկրորդ՝ թէ որպիսի ինչ հանգամանօք անշխատասիրեցաք ի սմա, որպէս զի մի՛ ճգանք տարփանց սպասաւորութեանս մերոյ՝ հարազատութեան բանից սրբոյս, յանդգնութեան կարծեօք ստգտանք համարեսցի՝ որոց նախ քան զմեզ ձեռնամուխ եղեն ի սոյն եւ կամ քամբասանօք անդիտութեան, իբրեւ անօգուտ ինչ նորածեւութեան ինքնագիւտ աղճատանս՝ եպերեսցի ի բանասիրաց:

ա. Արդ՝ յուղղագրութիւն մատենիս յորդորեցաք հայեցեալ ի բազում այլայլութիւնս բառից եւ բանից, եւ վրիպանաց սպրդելոց մինչեւ ցարդ՝ ի գրչաց եւ ի տպագրութեանց: Յորս էր՝ որ կամայ ինքնակամ յանհմուտ իմաստակաց մուծաւ, որք ըստ քերթողահօրն Մովսէսի նախագրութեան, նախքան զտեսութիւն աստուածաբանելով՝ սրբազրիչ սրբոց եղեն, եւ սխալ՝ զանհասն մտաց խակութեան իւրեանց համարեցան, եւ էր՝ որ յանդգուշութենէ եւ յակամայ յանցանց գրչաց եւ տպագրաց սպրդեալ: Ապա յայսմ ամենայնէ ժամանակաց ի ժամանակս ձեռս ի ձեռաց անցանելով՝ այնչափ այլայլութեամբ աղաւաղեալ էին բանք մատենիս օր ըստ օրէ, մինչեւ բազում ուրեք ամենեւին օտարանալ նոցա ի հարազատութենէ մտաց եւ գրութեան սրբոյս:

1. Եւ քեզ ապացոյց նախ առաջին՝ յառաջին մակագրութենէ վերտառութեան մատենիս, ուր բազում տպագիր՝ եւս եւ ձեռագիր ինչ օրինակք եղեալ էին այսպէս Դրունք յոգնաթախանձ: Եւ ուրեք Գրութիւնք յոգնաթախանձ. որ ըստ հին եւ ըստ բուն ձեռագիր օրինակաց պարտի լինիլ Դրութիւնք յոգնաթախանձ, որպէս եղաք ի սմա: Եւ հաւաստէ զսոյն եւ խորագիր յիշատակարանի մատենիս, որ այսպիսի է ըստ ամենայն օրինակաց Յիշատակարան մատենիս գրութեան, եւ ի նոյն յիշատակարանին ասէ այսպէս՝ զբաղմաստեղնեան գրուագս գրութեան այսմ սոփերի: Եւ դարձեալ՝ ի նոյն վերտառութեան այնպիսի օրինակք ինչ եղեալ էին այսպէս Գրիգորի Նարեկայ վանաց վանականի, հոգեմատեան հռետորի, եւ հայոց փիլիսոփայի, որ է անդէպ, քանզի դէմք բանիցս են ի բերանոյ սրբոյս՝ զոր, ըստ խրատու իմաստնոյն, գովէին ընկերքն՝ եւ ո՛չ իւր բերան, վասն որոյ ըստ հին եւ ըստ բուն օրինակաց եղեալ էր միայն Գրիգորի Նարեկայ վանից վանականի. ըստ որոց եւ մեք եղաք այնպէս: Եւ ահա ունիս իմաստասիրել, զի եթէ յարտաքին գաւթին յառաջին իսկ մուտս մակարդութեան սեմոց մատենիս՝ այսչափ ինչ տեսեր այլայլութիւնս, իսկ ի ներքին մուտս տանցն

Դ. 1:

երբէք խաբելի

երբէք մատչելի

Չ. 4:

ընդ ինքեամբք

ընդ միմիամբք

4:

ո՛չ անհաւատեցէ

ո՛չ հաւատացէ

Ժ. 2:

զննեալ աստանօր

զինեալ աստանօր

2:

յաւէտ մեծասցիս

յաւէտ դիտեսցին

2:

թէ հաւատաս ի նա՝

եթէ հաւատաս թէ հաւատարիմ է նա

Ժբ. 1:

կապանօք բերիմ

կապանօք բերկրիմ

Եւ այլ այսպիսի եւ առաւել քան զսոսա վնասակար այլայլութիւնք մինչեւ ցվախճան մատենիս՝ բազում են կարի յոյժ, զորս անհնար է մեզ թուել աստանօր: Թո՛ղ զայլ անհամար փոքր փոքր բիւրազգի այլայլութիւնս. քանզի անդրէն սկսեալ յառաջնոցն՝ ի Բանն Ե. 4.

փոխանակ դնելոյ

որդի Աստուծոյ կենդանւոյ

Չ. 1:

զամբարեալ շարաւ

Է. 3:

դատաւորին ճշմարտի յանդիմնացայց

Ը. 1:

սաստիկ կշտամբանքն

Թ. 1:

զի եթէ գլիճ մի ծովուց

եղեալ էին

որդի Աստուծոյ բարձրելոյ

զշարաւ ամբարեալ

դատաւորին յանդիման եղէց

սաստիկ են կշտամբանքն

զի թէ գլիճան ծովուց

Եւ այլ ասպիսիք եւս անթուելիք, որք թէպէտ եւ փոքունք, սակայն իբրեւ զաղուեսունս Երզոց երզոյն Բ 15, ապականիչք ամենեւին՝ գեղեցկութեան այգւոյս պերճութեան բանից մատենիս:

5. Իսկ տարբերութիւնք եւ այլայլութիւնք բառիցն եւ բանից՝ թիւր միաւորութեամբ, կամ սխալ բաժանմամբ նոցա, եւ խանգարումն կէտադրութեանց եւ տնատութեանց՝ թէ ի տպագիրս եւ թէ ի ձեռա-

զիրս ինչ՝ մածեալ էր զմատեանս առհասարակ, եւ պատեալ զամենայն բանիւք մատենիս՝ իբրեւ զբաղեղն վնասակար՝ զգեղեցիկ տնկովք, եւ ցամաքեալ զպտուղ խորին իմաստից նոցա:

Որպէս ի Բանն Գ. 2. փոխանակ անջատմամբ դնելոյ գեր ելոց, միաւորելով եղեալ էին գերելոց. ահա ո՛րչափ օտար է ծառայն՝ ի տեառնէն, այնչափ օտար է եւ բանդ տպագրութեանց ի բանէն հեղինակիս: Ըստ այսմ ունիս տեսանել միաւորութեամբ շփոթութիւնս, որպէս ի Բանն ԽԸ. 5. ուր փոխանակ դնելոյ որ ո՛չ այնքան մեղաւ, որքան զղջացաւ, խառնութեամբ եղեալ էին որ ոչ այնքան մեղաւոր՝ քան զղջացաւ:

ԿԴ. 3: որով տացէ բղխեսցէ. որոտասցէ բղխեսցէ
ՂԳ. 4: զօրութիւն տեառն մատչելի. զօրութիւն անմատչելի. եւ այլն:

Իսկ զսորին հակառակն՝ բազում ուրեք մի բառն եւ մի բանն հատեալ էր յերկուս՝ չարաչար տրոհմամբ: Որպէս ի Բան ԻԷ. 3. փոխանակ դնելոյ ըստ բուն օրինակաց անդաճմունս անհնարաւորս, որ է ասել՝ մտածմունս կամ հոգս անհնարինս, որպէս ունիս տեսանել ի վախճանի մատենիս՝ ի կարգս մեկնութեան բառից, եղեալ էին անդ աճմունս անհնարաւորս. որ է անտեղի: Ըստ այսմ դիպեալ էր բազում ուրեք եւ բառից բարդելոց ի սրբոյս. որպէս անդանճառք, անդուղեկցութիւն. նախայլք. եւ այլք: Նմանապէս եւ ի կէտադրութիւնս էին անթիւ աղաւաղանք. որպէս ի Բան Ա. 1, փոխանակ դնելոյ ելցէ՛ ի խորոց աստի զգայութեանց խորհրդակիր սենեկիս՝ վաղվաղակի ժամանել առ քեզ կամաւորական նուէր. եղեալ էին ելցէ՛ ի խորոց աստի զգայութեանց խորհրդակիր սենեկիս՝ վաղվաղակի ժամանել առ քեզ: Կամաւորական նուէր: Եւ ահա՛ յայտնի է, զի խախտեալ է ի սմա եւ ի հիմանց տապալեալ՝ գեղեցիկ կազմած պարբերութեան բանիս, եւ ի բուն իմաստիցն իսպառ օտարացեալ. քանզի նուէրն՝ որ է տէր ելցէ բային, հատուածեալ եւ վտարեալ է տուն օտար՝ տնատութեամբ եւ զվսագրով: Ըստ այսմ է ի նմին Ա. 2. Վերակացումն անդ ուրեմն. վերացումն: Անդ ուրեմն: Եւ Զ. 4 կանոնին կացցէ, իմասցի. կանոնին կացցէ: Իմասցի. եւ յայլ բազում տեղիս: Եւ զսորին հակառակն բազում ուրեք զանջատ տունս բանիցն միաւորեալ, կամ զպիտանի կէտսն բարձեալ՝ աղարտեալ էին զբանս ամենեւին, զորոց մի ըստ միջոցէ ասել անհնարին է, եւ չէ իսկ պիտոյ մտադիր ընթերցողին. բայց միայն նշանակեսցուք զմի ի բիւրուց: Ի Բանն ԾԱ. 1 այսպէս ասէ սուրբս. առ երկրածին ոք պաղատեցայց եթէ, ընդունայն է աղաղակելն. ուր մի

միայն ստորակէտ առաջի եղեալ թէական շաղկապիս եթէ կերպանանէ զտեսութիւն մտաց բանին՝ յեղանակեալ յոճ չքնաղ գերահանճար սրբոյս, որպէս թէ ասէր, եթէ առ երկրածին ոք պաղատեցայց, ընդունա՛յն է աղաղակելն: Իսկ ի տպագիրս եւ յայլ ձեռագիրս ինչ՝ բարձեալ զնոյն ստորակէտն ի տեղւոջէն, կորուսեալ է բանն եւ մեռեալ գլխովին՝ իբրեւ անկերպաւոր ինչ ուրուական վիժած արդանդի մտաց. եւ այլ այնպիսի բաղում: Ահա՛ յայտոսիկ հայեցեալ՝ յորդորեցաք ի սպասաւորութիւնս յայս ուղղագրութեան մատենիս: Իսկ թէ որպիսի՞ ինչ աշխատասիրեցաք ի սոյն՝ ասասցուք յառաջիկայդ:

բ. Յուղղագրութեան մատենիս՝ ո՛չ ինչ ի մէնջ, եւ ո՛չ ինչ ըստ հաճոյից կամաց մերոց սրբագրեցաք, քանզի այնպիսի սրբագրութիւն գրոց սրբոց հարց եւ վարդապետաց, առանց համեմատելոյ զնոսա ընդ հաւատարիմ օրինակաց ո՛չ է սրբութիւն նոցա յօտարոտի խառնից, այլ գրեթէ սեղանագերծ յանդգնութիւն:

Վասն այսորիկ աշխատասիրութիւնս առաջիկայ՝ ո՛չ կատարեցաւ միոյ ուրուք կամ երկուց ոմանց սպասաւորութեամբ եւ ո՛չ վճարեցաւ երից կամ չորից ամաց շրջանակութեամբ եւ ո՛չ հաւաստեցաւ ընդ հինգ կամ ընդ տասն օրինակաց համեմատութեամբ. այլ գլխովին նպաստիւք ազնուագարմ մահտեսի Գասպար ամիրայի Մուրատեանց, որ ըստ բարեշնորհ աստուածապաշտութեան իւրոյ՝ ի մանկութենէ հետէ բարեբաղձ փափաքանօք բորբոքեալ ի սէր լուսաւոր բանից սրբոյս՝ յօժարեցաւ տպագրել զսոյնս՝ օրինաւոր ուղղագրութեամբ ի յիշատակ բարի նախնեաց եւ ծնողացն հանգուցելոց, եւ կենդանեացն իւրոց ազգայնոց՝ բարեսուն բարեմասնութեանն վիճակելոց, ուստի եւ ի քաղաքաց քաղաքաց Հայաստանեայց՝ եւ ի բուն իսկ ի Մոկաց գաւառէ՝ մեծաջան փութով գտեալ օրինակս ընտիրս՝ Հնագոյնս՝ անձեռամերձս, յորոց զերկուցն՝ սրբոյս իսկ պնդէին լինիլ ձեռաց գիր, յորս էր՝ որ զմատենս, եւ էր՝ որ զտարբերութեանց նոցա զզանազանութիւնս առձեռն բերալ, մինչեւ թիւ օրինակացն հնոց եւ նորոց ժամանել ի համար երրեակ տասանց, եւ խրախուսեաց զմեզ աշխատակցիլ: Ընդ որս համեմատելով զոր ինչ համաձայնութիւն ընտիր օրինակաց՝ ըստ յարմարութեան բանին՝ ըստ դատման ներհուն եղելոց առաջնորդեցին, զայն եւեթ կալաք, որպէս օրէն է հաւատարիմ սպասաւորի՝ հարազատութեան բանից սրբոց. եւ այն յերկար եւ մտայոյզ քննութեամբ, սպաստանեալ առաւել քան զամենայն օգնութիւն մարդկային մտաց՝ ի զօրաւոր բարեխօսութիւն սրբոյս:

1. Արդ՝ այսպէս յառաջ ընթացեալ յուղղագրութեան մատենիս, գտաք ի սմա զնորալուր ինչ բառս, կամ զանսովոր գրութիւնս ինչ բա-

ուրից, զո՛ր օրինակ. անսպուժելի, խաղբք խնձիղք, արամաթացի, ելլե-
նացի, մտեմ, աղջութիւն, առակայք, ներութիւն եւ այլն: Կամ զանսո-
վոր հոլովս անուանց, որպէս երբէք, երբէքի, իսկ, իսկոյ, ութ, ութի եւ
այլն. եւ բայից ինչ, զոր օրինակ դիդի, փոխանակ ասելոյ դիզեցի, լուո՛,
փոխանակ ասելոյ լսեցո՛ եւ այլն: Եւ թուով անհամաձայնութիւնս բա-
յին՝ ընդ անուան. որպէս անկաւ ստինք կուսութեան, չուոցն յարմա-
րութիւն պակասեցան, եւ որ այլ ինչ պարականոնութիւնս արտաքոյ
հասարակ քերթողացն կարգաց՝ զչնորհեալս բանաստեղծից՝ որք իբրեւ
զսուրբս իցեն, որպէս գտաք՝ նոյնպէս եւ եղաք, եւ ի քանի մի օրինա-
կսդ նշանակեցաք, զի մի՛ անհմուտ ոք սխալ կարծեսցէ ի հանդիպիլն
այսպիսեաց:

2. Էին եւ լծորդատառք ինչ անխտիր ի գործ ածեալք որպէս
գայթազողութիւն, մանկաղ, գինդ, թաղծանք եւ այլք, եւ եւս ի բայս
հասարակս եւ ի ձայնակրականս, յորս լծորդատառն ի, բազում ուրեք
եղեալ էր ե, ըստ հնոյ սովորութեան. որպէս խօսել, խորհել, օգտել,
հասանել, ողորմել, եւ այլն, եւ յայտոսիկ ըստ տեղւոյն, ուր բազմու-
թիւնք ձեռագրաց համաձայնէին՝ հետեւցաք:

3. Բայց ի կէտադրութիւնս, եւ մանաւանդ բազում ուրեք զզօ-
րութենական բութս՝ ներգործութեամբ եղաք, զի մի՛ անխայութեամբ
նշանախեցիցն՝ բանին վտանկեացի նշանակութիւն յանհմուտ վերծա-
նողաց: Որպէս ի Բան ԴԳ. 5 ի խորհուրդ երկար՝ խորանին, զի մի՛
համբակ ոք վերկարն խորանին՝ եւ ո՛չ խորհուրդին կարծեսցէ լինիլ
ածական, ըստ այսմ է եւ ի ԿԹ. 1 ահա՛ զուր արծաթագործդ, եւ ԿԳ. 1
եւ քեւ՝ ախտաւոր, եւ ԾԱ. 4 ողբալի զողորմածին, եւ յայլ բազում տե-
ղիս: Եւ ուրեք ուրեք աւելօրդս եւս բթեցաք զբառս ինչ, եւ այն՝ առ ի
հետեւանալ վերծանողին՝ չափաբերական ոտիցն, քանդի բութքն ի նո-
սա՝ ո՛չ դիմացուածս բանին որոչեն, այլ զոտանաւորին ընթացս հա-
սան. զորպիսիս տեսանես ի Բանն ԺԲ. 3, եւ ԻԷ. 3, եւ ԻԶ. 2, ԼԹ. 2 եւ
յայլ տեղիս տեղիս:

4. Այլ եւ յամենայն գլուխս բանից կարգեցաք համարաթիւս իւ-
րաքանչիւր գլխաւոր պարբերութեանց՝ առ ի դիւրութիւն նոցա, որք
զբան ինչ կամ զբառ որոնեն ի նոսա, ըստ կրկին ցուցակացն՝ զորս
եղաք ի վախճանի մատենիս:

5. Առաջին ցուցակն է նշանակութիւն խրթին բառից ինչ, յորոց
ո՛չ սակաւ պտուղս օգտութեան վայելէ ընթերցողն, զի կարէ իբրեւ
զցանկ վարել զսա ի գտանել զբանս. եւս ի շարադրելն բանս ինչ այս-
պիսի բառիւք առաջնորդի սովաւ գտանել զտեղիսն, եւ այնպիսի չքնաղ
գրութեամբ յօրինել: Եւ եւս ունի պարզապէս իմանալ զնշանակու-

թիւնս նոցին, զորս առաջնորդութեամբ բուն բառարանաց մերոց՝ աշխարհօրէն եւ տաճկական բառիւք մեկնեցաք զնոսա միայն ըստ նշանակութեանցն, ըստ որոց եղեալ էին ի մատենիս, եւ ո՛չ ըստ ամենայն նշանակութեանց նոցա, վասն այնորիկ ի մեկնութեան բառիս ածանցական եղաք միայն անցաւոր, թէզմի անցնօղ, զի աստ ի ՀԴ. 3 զայն եւեթ նշանակէ, իսկ զայլ նշանակութիւնս նորա ո՛չ էր մեզ փոյթ դնել, զորս տեսանել ունիս ի բառարանսն: Նոյնպէս եւ բառս աւանդ, որ աստ ի Բանն Դ. 1 նշանակէ էմանէթ, ի Բանն Թ. 2 տուրք, վերկի եւ ի Բանն Իէ. 4 թեմպի, վասիեթ. վասն որոյ մեկնեցաք զսա ըստ նշանակութեանցս ըստ այսոցիկ միայն՝ ցուցեալ զտեղսին, եւ ո՛չ ըստ այլոց, ըստ այսմ իմա՛ եւ զայլոց: Մեկնեցաք եւ զբառս ինչ, որք չէին մեկնեալ ի բառարանս մեր, որպէս *աղջութիւն. *անդանճառք եւ այլն, եւ սոցին յառաջոյ եղաք աստղանիչս՝ առ ի ծանուցանել ընթերցողին, թէ այս բառ չէ մեկնեալ ի բառարանսն: Էին եւ բառք ինչ՝ որ թէպէտ մեկնեալ էին ի բառարանսն, այլ ո՛չ ըստ նշանակութեանն գործածելոյ ի մատենիս. զո՛ր օրինակ բառս այս անքատ*, որ բազում ուրեք նշանակէ զաղքատն, որպէս մեկնեալ է ի բառարանսն, սակայն ի մատենի աստ ի Բանն ԿԹ. 2 նշանակէ տկար, փոքրիկ, զայիՓ. եւ մեք ըստ այսմ նշանակութեան մեկնեցաք, սապէս եւ զայլս, եւ սոցին ի վերջոյ եղաք աստղանիչս՝ առ ի նշանակել թէ բառս այս ո՛չ է մեկնեալ ի բառարանսն ըստ այսմ նշանակութեան:

6. Երկրորդ ցուցակն է երեւելի տարբերութեանց ինչ՝ ձեռագիր կամ տպագիր օրինակացն՝ յառաջիկայ տպագրելոյս: Բանդի ուրեք ուրեք եւ բազում ձեռագիր եւ ընտիր օրինակք տարածայնէին եւ ի միմեանց, եւ մեք ըստ յարմարութեան բանին զհետ երթեալ հնագունիցն եւ ընտրելականաց՝ ի հարկէ եղաք ըստ ոմանց, եւ վասն այնորիկ զայլոց եղեալսն նշանակեցաք ի ցուցակիս երկիւղածութեամբ, զի մի՛ կորիցէ եւ այն տարբերութիւն. մանաւանդ զի ըստ առաջնորդելոյ մեզ հնագոյն եւ ընտիր ձեռագիր օրինակաց՝ ուրեք ուրեք եւ բանք ինչ, եւս եւ պարբերութիւնք ինչ գլխովին հատան՝ կամ յաւելան ի մերումս, որպէս տեսանես ի ցուցակին ի Բանն Զ եւ Ժ եւ այլն: Իսկ ուր ամենայն ձեռագիր օրինակք համաձայնէին՝ զտարբերութիւն մերումս՝ ի տպագիր օրինակաց՝ ո՛չ նշանակեցաք ի ցուցակի անդ, վասն որոյ մինչ գտանես երեւելի տարբերութիւն ինչ ի մերումս աստ՝ յայլոց օրինակաց, եւ ո՛չ գտանես նշանակեալ ի ցուցակիս, ծանիցե՛ս, զի յայնմ ամենայն ընտիր օրինակք միաբանին առհասարակ: Զո՛ր օրինակ ի Բանն Դ. 1 եղաք խնծղիւք պարեալ. զոր տպագիր օրինակք եղեալ էին խնծոյիւք պարեալ: Ի Բանն ԻԹ. 1 եղաք իննուց յիսնից՝ եւ թուոց երից

եւ չորեակ տասանց. ուր ոմանք ի տպագրաց դնեն այսպէս իննուց յիսնից, եւ չորեակ տասանց. եւ կէսք այսպէս յիննուց: Յիսնից եւ չորեակ տասանց. եւ այլք բազումք, զորս ո՛չ գտանես նշանակեալ ի ցուցակիս՝ վասն համաձայն լինելոյ ընդ մերումս՝ ընտիր ձեռագիր օրինակացն առհասարակ:

7. Ո՛չ եղաք զհամառօտ լուծմունքն բանից մատենիս, քանզի ի խորին տեսութիւնս խմաստից նրբահայեաց սրբոյս՝ այնչափ կարճոյ դիտակամբ ո՛չ ինչ կարէ խոյանալ ակն ընթերցողին, այլ փոխանակ նորին եղաք զցուցակ մեկնութեան խրթին բառից ինչ մատենիս, զորմէ ասացաք ի վերոյ: Ո՛չ եղաք ի լուսանցսն եւ զվկայութիւնս, որպէս եղեալ կայ միայն ի տպագիր օրինակս ինչ, որք չեն եղեալ ի սրբոյս, այլ յայլոց՝ ընդ ժամանակս ժամանակս նշանակեալ, զի ուր ինքն կամեցեալ է, նշանակեալ է գտեղին ի նոյն իսկ ի կարգի բանին, որպէս ի Բանն Ա. 1, եւ Կ. 2, եւ ԿԱ. եւ ԿԲ. եւ յայլս: Եւ եթէ նշանակել ունէաք զնոսա, ո՛չ որչափ նշանակեալն էին, այլ եռապատիկ եւ աւելի եւս պարտ էր յաւելուլ զնոսին, զորս ի սակաւ լուսանցս թղթոցդ բովանդակել անհնարին էր, քանզի գրեթէ ամենայն բանք սրբոյս հիմնեալ են ի բանս Սուրբ Գրոց, որպէս յայտ է քննողաց: Փոխեցաք ուրեք ուրեք եւ զկարգ գլխոց մատենիս, որպէս ունիս տեսանել ի Բանս ԿԲ, եւ ԿԳ, եւ ՂԲ-էն մինչեւ ցՂԷ. զի այնպէս էին յամենայն ընտիր օրինակս՝ որպէս եւ եղաք:

8. Արդ՝ դու սիրելի աղօթասէր ընթերցող, ընկա՛լ առ այժմ հաճութեամբ՝ զհոգեւոր զայս բուրաստան՝ զսրբեալն յամենայն օտար եւ ի վայրենի խոտոցն վրիպանաց, զփթթեալն եւ զծաղկեալ ի միայն յիննսուն եւ ի հինգ ծաղիկս հօտոց անուշից բանից աղօթից սրբոյս՝ արբելոյ ի յորդահոսն վտակաց՝ ի հոգեբուղին ստեղծաբանութեան պարզեաց. զորմէ ինքնին իսկ վկայէ ի բանն Գ. 4: Եւ զի ի վերայ հասաւ էր եւ կարի իսկ քաջ, որպէս ասէ ինքն ի Բանն Բ. 1 թէ պարզեալսն ամենեցուն գործովք միայն գրաւի, եւ ո՛չ ստեղծաբանութեամբ կաշառի, գտուեալն նմա ի նմանէ գիմաստուն գիտհական զճարտարախօս պերճաբանութեանն զչնորհաշուքն պարզեալս՝ վարժեալ ի խօսս խօս պերճաբանութեանն զչնորհաշուքն պարզեալս, ի գրաւել ընդ նմա գործովք ընծայեաց նմին՝ գրութեամբ մատենիս, ի գրաւել իւր զնա, մանաւանդ թէ ի գրաւիլ ի նմանէ, ի դէպ իսկ յաջողեալ անուանն հսկօղ արթնութեան՝ եւ աղօթանուէր գործն բանիս մաղթանաց՝ ըստ բանի հրամանաց բանին Աստուծոյ, զոր եւ իբր կտակ վերջին՝ երանելի իւր վախճանին յօրինեաց մեզ սուփերս եւ դրուագս ճոխս իննսուն եւ հինգ ճառից հոգեւորս՝ ողբականս եւ զղջականս ի դիմաց կարեաց ամենից մեղաւորաց:

9. Իսկ զայլ ճառս նորա, դյառաջագոյն արարեալ զներբողեանս, որպէս յայտ է ի Բանն Զ. 1: եւ ԶԲ. 2 եւ դքարողս, եւ զմեկնութիւն Երգոց երգոյն, եւ որ ինչ այլ բանք իցեն ընդ ժամանակս ժամանակս արարեալք ի սրբոյս, ո՛չ ժամանեցաք ըստ փափաքանաց մերոց՝ մաքրել խնամով իբրեւ զսոսա ի սխալանաց գրչաց, քանզի ո՛չ կարացաք ի ձեռս բերել զհնագոյն եւ զընտիր ձեռագիր օրինակս նոցա, յորս հայեցեալ ուղղէաք եւ զնոսա. վասն զի ամենայն հին եւ ընտիր ձեռագիր օրինակք՝ գրեալ ունէին միայն զիննսուն եւ զհինգ բանս զայսոսիկ, եւ ո՛չ զայլ ինչ: Իսկ առանց այնպիսի օրինակաց ինքնագլուխ ձեռնամխութեամբ, եւ ի քմաց մարգարէութիւն՝ ո՛չ էր ի դէպ, զի այն ո՛չ ուղղութիւն, այլ վիրպուծն է, որպէս ի վեր անդր նշանակեցաք, եւ առանց այնպիսի ուղղագրութեան՝ ընդ սոսա դասել եւ զնոսա՝ առաւել եւս էր տարադէպ: Տացէ՛ Տէր, զի եւ ամենայն գործք սրբոյս մաքրեալ իբրեւ զսոսա եւ սրբեալ յամենայն օտարոտի խառնից՝ հաւաքեսցի ի մի, որպէս արժան է եւ կարեւոր, եւ որպէս դու եւ մեք ըղձանամք, ո՛ղջ լեր բոլորեալ բնաւ բարեբաստութեամբ ի բերկրութիւն բանասիրաց, եւ բաւ է:

Գիրք աղօթից սրբոյն
Գրիգորի Նարեկացոյ հոգեկիր հռետորի,
Կ. Պոլիս, 1774, էջ 5-18

ՅԱԻԵԼՈՒԱԾ 2

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՎԱՐՔԻ» 1774 Թ. «ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ»ՈՒՄ ՏՊԱԳՐՈՒԱԾ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Գրիգոր Նարեկացու «Վարքը» գրելու անդրանիկ փորձի հեղինակը Ներսէս Լամբրոնացին է: Այն պահպանուել է հեղինակային ինքնագրով (ՄՄ ձեռ. թիւ 1568, 119rv) եւ ունեցել բազմակի հրատարակութիւն (վերջին հրատ. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երեւան, 1985, էջ 170): «Վարքի» երկրորդ խմբագրութիւն է համարւում նոյն հաւաքածոյի թիւ 5135 ձեռագրում սլահպանուածը (259v-261v՝ գրուած 1283 թ.), որ նախորդի մասամբ լրացուած-ընդարձակուած տարբերակն է (տե՛ս նոյն տեղում, էջ 172-174):

Վերոյիշեալ խմբագրութիւնների ու բանահիւտական նոր նիւթերի յարադրումով կազմուել են յայսմաւուրքային

վարքեր, որոնք եւս ունեն նախորդներից ու միմեանցից տարբերուող որոշ տեղեկութիւններ եւ շեշտադրումներ (տե՛ս ՌՃՀԹ/1730թ. Գրիգոր Մարգուանցու Յայսմաւուրքը (էջ 394-395), հմմտ. *Le Synaxaire arménien de Ter Israel. Publice et traduit le Dr. G. Bayan, VII, mois de Méhéki, Paris 1927, pp. 100-102*):

Յիշեալ վարքային տարբերակների հետ չի նոյնանում նաեւ Նարեկի 1774 թ. հրատարակութեան 346-րդ էջում եղած «Յիշատակ վարուցը», որ կրկնուած է «Գիրք աղօթից» վերահրատարակութիւններում (տե՛ս 1807 թ. հրատ., էջ 420-421): Ստորեւ վերահրատարակում ենք այն՝ ապագայ համեմատական ուսումնասիրութիւնը հեշտացնելու համար:

ՅԻՇԱՏԱԿ ՎԱՐՈՒՑ ՀՈԳԵԿԻՐ ՀՌԵՏՈՐԻ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

Ամենափայլ նշողիւք ճառագայթից շնորհաց հոգւոյն Աստուծոյ լուսապատար պայծառազարդեալ հրեշտակն ի մարմնի՝ սուրբն առաջնորդ Էր յԱնձեւացեաց դաւառէ Վասպուրական աշխարհին, որդի տեառն Խորսովու Անձեւացեաց եպիսկոպոսի ի ժամանակս կայսրութեան Յունաց Վասլի եւ Կոստանդեայ, յաւուրս Սենեքարիմայ Հայոց թեան Յարքայի եւ ի հայրապետութեան տեառն Վահանայ կաթողիկոսի: Որ սնեալ ի կարգ կրօնաւորութեան ի վանս Նարեկայ, որում եւ եղեա առաջնորդ, ուստի եւ հռչակեցաւ Նարեկացի: Սոյն սա երկնահանճար վարդապետութեամբ գերափայլեալ՝ մեկնեաց զԵրզն երգոց Սաղոմոնի, զեղգեղեաց զՃառ խաչին եւ զՆերբողեանս ի սուրբ Աստուածածինն, ի համօրէն դունդս առաքելոյց եւ ի սուրբն Յակոբ Մծբնայ, եւ քարոզս զանձից: Ասլա բանապաճոյճ պերճամանութեամբ գրեաց զսոյն զՂԵ բանս աղօթից ի խնդրոյ հայցման հարց միանձանց, զոր թողեալ մեզ վերջին ժառանգութիւն անսպառ մթերից փոխեցաւ յաստի կենաց՝ վախճանեալ յերիտասարդական հասակի ի թուականիս Հայոց ԴՃԾԲ եւ ամփոփեցաւ ի նոյն վանս Նարեկայ: Իսկ յորժամ Սենեքարիմ արքայ փոխեաց զտէրութիւնն ի Փոքրն Հայաստան, ապա եւ միանձանցն Նարեկայ դիմեալ մերձ ի կողմանս քաղաքին Ակնայ եւ Տիւրիկեայ, շինեցին վանս յանուն Նարեկայ, ուր բերեալ հանգուցին զպատուական մարմինն, թէեւ այժմ է աւերակ եւ կոչի Ուխտ Արակայ, յորմէ լինին նշանք բժշկութեան ի փառս Աստուծոյ:

Որոյ աստուածախօս մաղթանաց օժանդակութեամբ արժանացողք զմայլական տեսութեանն Աստուծոյ, որում պատիւ փառաց ծնրադրական երկրպագութեամբ յաւիտեանս: Ամէն:

Գիրք աղօթից սրբոյն
Գրիգորի Նարեկացոյ հոգեկիր հոետորի...
նորապէս սրբագրեալ համեմատութեամբ
հնագոյն եւ ընտիր ընտիր ձեռագիր օրինակաց:
Կ. Պոլիս, 1774, էջ 346:

ՅԱԻԵԼՈՒԱԾ 3

«ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ»Ի 1774 Ք.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՅԱԿՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ «ԹՈՒՂԹԸ»

«Թուղթ» կամ «Ողջունագրութիւն վասն սրբագրութեան Նարեկին» կարճաբան եւ ուռուցիկ ոճով գրուած, սակայն խիստ կարեւոր տեղեկութիւններ բովանդակող ուղերձն աւանդուած է ձեռագրերով ու տպագրութեամբ: Գրիչները անհրաժեշտ են նկատում պատճառաբանել, թէ ինչու են ընդօրինակում խրթին ու տեղ-տեղ անհասկանալի այդ բնագիրը: Երեւանի Մատենադարանի թիւ 5037 ձեռագրի (ՌՄՆԶ, Կ. Պոլիս) գրիչը ընդօրինակութիւնն օժտել է հետեւեալ նախաբանով. «Ողջունագրութիւն վասն սրբագրութեան Նարեկին ի սորին հարազատէ (Գրիգոր աստուածիմաստ արքեպիսկոպոսի եւ աստուածաբան քահանայապետի և Պ. Մ.) եւ երջանիկ յաշակերտէ տեառն Յակոբայ աստուածաբան վարդապետէ գրեալ: Եւ մեք յայն սակս գրեցաք աստ, զի փայլեսցի վսեմ ոճ բան աշակերտի ընդ համանման բանի վարդապետին իւրոյ զուարճութիւն հարազատ մերազնէից» (էջ 160r):

Նոյն հաւաքածոյի թիւ 10185 ձեռագրում (1859 թ. Սեբաստիա) «Թղթի» նախաբանն այլ բովանդակութիւն ունի. «Օրինակ պատճէնի Տիքրանակերտի սակս հաւատոյ նահատակեալ Մոկացի արդար Յովհաննէս խստակրօն վարդապետի աշակերտի՝ տեառն Յակոբայ վարդապետի,

զրեալ առ Մուրատեան Գասպար ամիրայն վասն Նարեկացւոյ բուն ձեռագրին՝ հրաշիւք ճշգրտեալ յիւրն յղելոց, զոր Երուսաղէմ ի դիպեալ իրեարս՝ հարցեալ էր յիւրմէ, նա որպէս յայտէ նուրբ ծասքողաց զբանս» (էջ 257r):

Յակոբ վարդապետի «Թուղթն» առկայ է նաեւ Կ. Պոլսի Պատրիարքարանում պահուող Ղալաթիոյ Աղգային մատենադարանի թիւ 191 ձեռագրում (նկարագրութիւնը տե՛ս Բարզէն Աթոռակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Աղգային մատենադարանի Հայոց, Անթիլիաս, 1961, սիւն. 1083-1088): Հաւանաբար այս ընդօրինակութիւնից է քաղուած «Գիրք աղօթիցի» 1807 թ. Կ. Պոլսի հրատարակութիւնում ներկայացուած բնագիրը (էջ 498-500): Ձեռագրում եղած բնագրական ծանօթագրութիւնը նախորդ երկուսի վրայ բան չի աւելացնում:

Կարելի էր «Թղթի» այլ ընդօրինակութիւն եւս պրպտել, բայց, ինչպէս երեւում է, որքան աւելի ուշ է ընդօրինակուել, այնքան շատացել են արհեստական բառաբարդումների աղաւաղումները: Մենք փորձեցինք երեք աղբիւրների համեմատութեամբ մասամբ պարզել խրթնութիւնները: Սակայն, ցաւօք, այս պարագայում էլ մնացին անհասկանալի տեղիներ «Թղթի» պարբերութիւնները ծայրակապ են՝ «ՅԱԿՈՒԲԷՍ»: Գործածուած ցուցիչներն են.

A=ՄՄ ձեռ. թիւ 5037

B=ՄՄ ձեռ. թիւ 10185

C=Կ. Պոլսի 1807 թ. հրատ.

ԹՈՒՂԹ Ի ՅԱԿՈՒԲԱՅ ԱՌ ԵՐՋԱՆԻԿ ՏԷՐԴ ԻՄ ԵՒ ՀԱՅՐ ԿԱՐԱՊԵՏ ՄԱՔՐԱԶԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԴ

Յարտոնական¹ ջահացայտ² ճահարգոյ հոգեկան դիտասիլ³ կրիցդ, որ յաւէրժ⁴ տրփիս⁵ փղձկալի, որ արքերջանկապէս⁶ սարակալ առ մեզ՝

¹ Յարտոնական A, Յարտական B

² Ջահացայտ A

³ Դիտասիլ] B

⁴ Յաւէժ A

⁵ Տրպիս B

⁶ Արգերջանկապէս A

սիրային սիրասար¹ եւ² միջնաբուն կարողապետն³ լրականութեանն⁴ յարգիչ յարդարիչ եւ տարիս տար⁵ ծաւալմանն⁶ գերարիւոյն երփնի⁷ ծրածագ⁸ ծածուկ երիւրմամբն շողիչ շողշողիչ, եւ զառ ի սարդորակն ծովէ ամպ հոգիաչու թեթեւ սլացմամբ, տապախանձիցս ցողիչ հեղեղիչ⁹, որ եւ թեթեկոր¹⁰ շեղազյոր¹¹ մերայինս անկատար հողւոյս¹² յարունակ բաղձանօք բարդձեայս¹³ ես կարիս դատական¹⁴ կամօքդ տար ի յանգ յորդել¹⁵ յարմարիչ¹⁶ :

Արդ, ի նոյն խրախուսանացդ¹⁷ խուճապս ներածեալ¹⁸ եւ բունադատեցեալ ի սերտակի¹⁹ սիրոյդ ճէպ ընդ ճէպ²⁰ ըմբունահար²¹ դժնէխ վերայ աստուր տարածեալ, այսինքն²² մաքրադան անձինն արթուն հսկողին աշտէն²³ շափիւղային խօսուն մարգարտին՝ ճգնակ մատենին ինքնագիծ տառին խուղեալ զհաւաստին կշռել զհանգամանսն²⁴ :

Կարեւոր վարկայ եւ ես, որ ի վաղ անտի իմ կենիս հետէ աստուրեացս ելով²⁵ տեղաւոր եւ ընդ սրտահեղձ²⁶ օղաչու բանիդ քոյին հրամանի, անդանօր ըստ կարեացս ի յոտին եւ ես կացի²⁷ հանդերձեալ ի դէպ ի մայեկս ի սաստկաձիգ²⁸ լեռնոստեան փապարս¹ կորդ կոր-

¹ Սիրասոր A

² Եւ] B

³ Կատարողապետն A

⁴ Լրականութիւն B

⁵ Եւ տար խոտոր B

⁶ Ծաւալմամբն B

⁷ Երփն B

⁸ Ծրածագ A

⁹ Յեղեղիչ B

¹⁰ Թեփեկոր B

¹¹ Շիղազյոր B

¹² Հողւոյ A

¹³ Բարձեալ A

¹⁴ Զտական

¹⁵ Յորդեալք B

¹⁶ Յարմարիչ B

¹⁷ Խրախուսանաց B

¹⁸ Ներածեալ AB

¹⁹ Սրտակի B

²⁰ + յաստեղս B

²¹ Ըմբունայոյր AC

²² Այսինքն] ստացայ B

²³ Ըորշտեանն AC

²⁴ Զհանգամանս B

²⁵ Աստուրեացս ելով] աստուրխասելով B

²⁶ Սրտահեղձ] որսհեղձ B

²⁷ Եւ ես ի յոտին կացի B

²⁸ + լիր B

դաց² սարսառտես³ դժնեայ քարկուտաց սոր ի սոր սահուտ⁴ խոշոր
 ոահիւ ուշ ի մտի եղեալ արագ արշաւամբ ի Մոկս հասի:
 Որ եւ ի խորս խուղեալ ի հարուտ պատմութեանց յաւան-
 դութենէ⁵ նախնեաց ի երկարկեն⁶ հաւուց, ի զարմանահրաշ ներգոր-
 ծութեանց⁷ հաւուց⁸ արմատացեալ ներ մտի բազմաց: Գորով ի վանս
 Քաւութեանց, որ յետոյ հրաժարման տեղի վարկանի տեառն⁹ Անա-
 նիայի մեծ¹⁰ վարժապետի մաքուր սոփեստի՝ արեան ընտանի սրբոյն
 Գրիգորի պուետարանի եւ ճոխ յօղողի, եւ զի նոյն մատենի ձեռնարկ-
 ման ըստ տեառն աղղեցման¹¹ եւ փաստ անուանի¹² տէր Անանիայն՝
 յարատենչ հայցուածով խանդակարթ սիրով լցեալ անթերի, որ եւ յա-
 ւարտիլն¹³ բանի նմին ընծայեալ յիւրոցն ոգեցմամբ¹⁴ յայտնի իմանի:
 Բայց զի իմս պատահեալ տփոցս լուսածրար¹⁵ եղէ վտարանդեալ¹⁶,
 ոչ յաւակնի լրբեալ եւ ոչ վստահաբար¹⁷ ձեռնամուխ եղեալ, այլ կաս-
 կածմամբ¹⁸ մտախոհ¹⁹ կէի աղճատեալ²⁰ սակս չունելոյ ծիր յիշատակի,
 որով լինիւր բանս մեր հաւաստի: Եւ մինչ կայի ներ սոյն խորհրդեան,
 ծեր ոմն ժամանեաց զիմիս յանդիման. ժտէր աղերսէր սակս դատերն
 իւրոյ քառամեայ ամանակաւ յողն անկական ախտիւք իլիոնական²¹
 բնաւին անդամօք ընդարմ լուծնական²² ոչ ոգումն լեզուի եւ ոչ լիս
 ունկի²³, ոչ ձեռս տարբերեալ եւ ոչ յոտս²⁴ յենեալ, այլ հանգոյն կոճեղ

1 Փապարս] միապարս B
 2 Կորդուաց C
 3 Սարսառտես B
 4 Դժնեայ ... սահուտ] տարկուտաց սորիստ սրահուտ B
 5 Յաւանդութեանց B
 6 Յերկարակեն B
 7 Ներգործութեանց] նշանագործութեանց B
 8 Հաւուց] հաւատ AC
 9 Տէր B
 10 Մեծ] AC
 11 Աղղեցմանն B
 12 Անուանի] վարկանի B
 13 Աւարտիլն B
 14 Ոգեցմանց AC
 15 Լուսաբերար B
 16 Վտարանդեալ B
 17 Վստահացեալ AC
 18 Կակծմամբ AC
 19 Մտախոյղ AC
 20 Աղջատեալ AC
 21 Իլիոնական] լուսնական B
 22 Լուծական AC
 23 Լիզուակի B
 24 Ոտս B

խանձողեցելոյ¹ դիասահ գնիւր ընդարմակի մահու ցանկ տրտիակ, քան թէ կենաց ակնկալեալ²:

Էր ժամն³ իբր⁴ եօթնեկի արփւոյն մաղլաղի⁵, որ դտուին այն խնկալի ի տուն թախժողինն⁶ մուծի եւ ի⁷ նախորդաց անտի հոգեկիր ոգեցուածոցն⁸ մինչ նաւարտ⁹ երիցս եռեակ¹⁰ փնջակ¹¹ նարդոսից, հատման խալամից անդ, ուր կրկնեցի եւ յուղի անկեալ ի վանս¹² Տիրայնոյ մածեալ նշանին՝ գաւանդ վայրին՝ Ապարանից¹³ գահոյին գնացի, ուր եւ մեզ¹⁴ հետամուտ¹⁵ չոգաւ այրն¹⁶ հաւատալի հանդերձ¹⁷ նուիրօք մարմնական եւ գոհութեամբն տիրական սրտիւ¹⁸ խրախական¹⁹ իբր պատգամաբեր աւետական, թէ զդուստրն իմ, զոր²⁰ տեսեր²¹ յայնպիսի²² աղէտս²³ հանդարման, իսկոյն ընդ մեկուսանալն ի դրանէն տառին դրուատեալ ի նոյն²⁴ վայրկենի յաջողակ իմն յարմար ձեւով պնդեալ²⁵ ուղղեցան խօթազանգ²⁶ յօղուածքն ամենայն, յենեալ ի յոտին²⁷ եւ բան ի լեզուին, եւ բոլորն ի կարգին յանձսն²⁸ ճառեալ մասին հաղորդեալ, կտակ աւանդեալ եւ ի տէր հանգեալ բարւոք ապաշաւեալ՝ որպէս երբեմն Սիմէոն նախնի լուծեալ ի կապից բանիւ տիրական:

¹ Խանձողացելոյ B

² Ակնկալեալ] արգելեալ B

³ Ժամս AC

⁴ Իբրու AC

⁵ Աղլաղի B

⁶ Թաղժողինն B

⁷ Ի] B

⁸ Ոգեցուածոցն] ըսգեցուածոց B

⁹ Նաւարտ] նուարտ B

¹⁰ Եռակ B

¹¹ Փնջակ] միջնակ B

¹² Վանսն C

¹³ Ապարնից AC

¹⁴ Յուղի անկեալ... ուր եւ մեզ] ուր չոգաւ եւ մեզ B

¹⁵ + չոգաւ B

¹⁶ Այրն] այնր B

¹⁷ Հանդերձ] B

¹⁸ Սրտիս AC

¹⁹ Խրական B

²⁰ Զոր] A

²¹ Տեսեր] տիրեր B

²² Յանապիսի B

²³ յաղէտս B

²⁴ + վար B

²⁵ Պնտեալ AC

²⁶ Խթազանգ] եօթաչանկ B

²⁷ յոտին] յուժն B

²⁸ Ի յանձսն] զյանցանս AC

Սակս որոյն¹ եւ մերս հաւատ ընկալեալ՝ որոյ ձեռնարկի ջանիւ զըսպակի² հանդոյն գաղափարին³ գտեալ սրբեցի ոչ թէ մտահաճ աճեցմամբ, համաքատակ շարիւ եկամուտ ինչ մուծի եւ ոչ քերթութեան ապաստան եղեալ զսրբոյն լուսաւոր բանսն վիժեցի, երկուցեալ յառաքելոյն թէ՛ Որ յաւելու ի գիրս յայս, այլեւ նորին դիմակն, յաւելցին ի վերայ նորա հարուածքն⁴ եօթնեակ⁵, այլ յայն⁶ հանդիսացայ, զի մի զառ իւրք զանց լիցի, այլ զաւելորդ⁷ պարապատ կէտիւք պնդեցի եւ զթերիսն լուսանցսն⁸ ծիրաձիգ⁹ նշանաւ արձան կացուցի¹⁰ :

Արդ, եթէ¹¹ դժնէիս գուն¹² աշխատանս շնորհ ինչ տեառնդ իմոյ եւ ազնուագուն մերեանս¹³ պատուականացն¹⁴ ի քէն հայցողացն առաջի գտցի այն տեառն փառս լիցի եւ սրբոյն՝ սակս որոյ ի հանդէս մտի: Եւ թէ ապաշնորհ յետս ընկեացի, այն ամօթ ի յիս դարձցի, եւ սրբոյն բան մի եպերեսցի, ընդ որոյ ցելիչ¹⁵ փեռեկտիչ, փեղկիչ¹⁶ կորնթարդ¹⁷ յարկից միտաչու բանիցն եւ սիրարիդ¹⁸ աղերսանք ինձ ապրուստ լիցի այժմ եւ անկէտ¹⁹ յաւիտեան, ամէն:

Բան առ երջանիկ ծնողդ իմ Կարապետ տիեզերալոյս հեղինակդ եւ վարդապետացն վարդապետ²⁰ ի քոյին հարազատես չնչին Յակոբես²¹ ընկալ ողջամբ ի տեր:

¹ որոյն] B

² Զըսպակի] զապակի B

³ Գաղափարի B

⁴ Հարուածն B

⁵ Յայտն. ԻԲ 18

⁶ Յայն] B

⁷ Զաւելորդ AC

⁸ Լուսանցն AC

⁹ Ծիրազիծ B

¹⁰ Կառուցի AC

¹¹ Թէ B

¹² Գուն] տուն B

¹³ Մերեան B

¹⁴ Պատուանակաց AC

¹⁵ Ցելիչ] ձեղիչ B

¹⁶ Փեղկիչ] B

¹⁷ Կորնթարթ B

¹⁸ Սիրարիտ B

¹⁹ Անգէտ B

²⁰ Բան ...վարդապետ] C

²¹ Յակոբէս] Յակոբ արեղայէս պատականցւոյ C

ՅԱԻԵԼՈՒԱԾ 4

ՅԱԿՈՔ ՎԱՐՂԱՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեւանի Մատենադարանի թիւ 5037 ձեռագրում Յակոբ վարդապետի «Թղթին» յաջորդում է կարճառօտ մի տեղեկանք-յիշատակութիւն, ուր Իսկիւտարի Ս. Խաչի տիրացու Մարտիրոս վարժապետը վկայում է Նարեկի 1774 թ. հրատարակութեան հանգամանքները (ԼՂ 162rv): Այդ բնագիրը «Գիրք աղօթիցի» 1807 թ. հրատարակութեան յաւելուածում ներկայացուած է խմբագրական մէկ այլ տարբերակով: Անհրաժեշտ նկատեցինք այստեղ հրապարակել նրանց բնագրերը առանձին-առանձին:

Ի ճշմարտասէր տիրացու Մարտիրոս յիսկիւտար ի Սուրբ Խաչ եկեղեցւոյ սարկաւազ պատուելի վարժապետէն ծանուցումն զպատճառէ ի վերագրեալ Ողջունագրութեան

Ի հերուն հետէ կամ էր բազմաց, եւ ցանկային բազումք զի սրբագրեսցի Նարեկն սուրբ, յորոց մի էր եւ Մուրատեանց Գասպար ամիրայն, որոյ սակս գրէ սա Կտուցու անապատի Կարապետ երանաշնորհ վարդապետին, զի առաքեսցէ զոմն հանճարեղ յերկիրն Մոկաց՝ առ ի գտանել զձեռացագիրն երանելոյն Գրիգորի Նարեկացւոյն, եւ անտի սրբագրեալ զՆարեկն սուրբ յղիցէ մեզ: Յորմէ առաքեսցաւ տէր Յակոբ մեծիմաստ եւ աստուածաբան վարդապետն երանելի եւ որոնեալ եզիտ եւ սրբագրեալ ի նմանէ յղեաց նոյն ամիրային, ուստի եւ տպագրեսցաւ իսկ Նարեկն սուրբ: Բայց յառաջ քան զայս՝ գրէ առ տէր Կարապետ վարդապետն, թէ որպէ՞ս եզիտ եւ որպէ՞ս հաւատարմացաւ նոյնն լինել: Եւ նոյն Կարապետ վանահայր վարդապետն զնոյն գիր՝ ընդ սրբագրեալ Նարեկին յղեաց Գասպար ամիրային, որպէս ասացաք, ի ՌՄԺԸ թուին մերոյ: Եւ ի տեսանելն զնոյն գիր Սառափեան Սարգիս եպիսկոպոսին՝ իսկոյն հիացմամբ ասաց. «Ո՛ր երկիր Հայոց, դեռեւս գտանի՞ արդեօք ի քեզ այսպիսի շարադրութիւն առնող», եւ մեք կայաք յոտին անդ եւ լսէաք զասութիւն նորա: Եւ ահա նոյն գիր է, զորս գրեսցաք ի վեր անդր:

Արդ, սոյն այս երանելի վարդապետ Յակոբ յետ քանի մի ամաց նահատակեսցաւ ի Տիգրանակերտ (այսինքն՝ ի Տիեարպէքիր) վասն ի Քրիստոս հաւատոցս, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի եւ աղօթիւք նորա տէր մեզ ողորմեսցի: Ամէն:

ՄՄ ձեռ. թիւ 5037, 162rv

ԳՐԻԳՈՐ ԲԱԿՈՒՐԵԱՆԻ «ՍԱՀՄԱՆՔ»-Ի ՅՈՒՆԱՐԷՆ ԵՒ ՎՐԱՑԵՐԷՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

Տայքի եւ Կղարջքի հայ քաղկեդոնականները, ստուար հատուած լինելով հանդերձ, աւելի շուտ կանգնեցին ապագգայնացման առաջ՝ մասնաւորապէս VIII դ. կէսերից սկսած, թէեւ երբեք էլ այն բացարձակ չդարձաւ:

Այս շրջանից սկսած՝ մատենագրութեան մէջ երեւան են գայիս նոր հասկացողութիւններ, մասնաւորապէս՝ հոռոմ ասելիս այժմ նկատի ունեն ոչ միայն յոյներին (բիւզանդացի), այլ նաեւ՝ քաղկեդոնական հայերին, այստեղից էլ ունենք՝ հայ-հոռոմ, ծաթ անունները: Որոշ հայ գործիչներ այս շրջանում իրենց վրացի են կոչում՝ դրա տակ վրացադաւանութիւն (քաղկեդոնականութիւն) հասկանալով: Ուստի նշուած շրջանի մշակոյթի պատմութեան ուսումնասիրութիւնը ունի լրացուցիչ բարդութիւններ եւ համապատասխան զգուշաւորութիւն է պահանջում:

Տայքի ու Կղարջքի վարչական-քաղաքական, տնտեսական ու մշակութային պատմութիւնն ուսումնասիրելիս հնարաւոր չէ սահմանափակուել միայն հայերէն գրուած յուշարձանների հաղորդած տեղեկութիւններով: Այս պակասը լրացւում է վրացերէն ու յունարէն սկզբնաղբիւրներով: Ուշագրաւ է նաեւ մի այլ հանգամանք. այս աղբիւրներն ու գրական յուշարձանները հաւասարապէս վերաբերում են ինչպէս հայ, այնպէս էլ վրաց եւ յունական մշակոյթի պատմութեանը:

XI դ. հայոց, վրաց եւ յոյների քաղաքական, տնտեսական եւ մշակութային պատմութեան ամենաարժանահաւատ ու բովանդակալից աղբիւրներից մէկը Գրիգոր Բակուրեանի հեղինակած «Սահմանք»-ն է¹: Այն բանասիրութեանը յայտնի դարձաւ 19 դարի վերջերին²: 1888

¹ Յունարէն τυπικόν-ը թարգմանւում է նաեւ՝ մաշտոց, ծիսարան, կանոնագիրք, խրատք, ճիշտը՝ սահմանք, ժամանակակից հայերէնով՝ կանոնադրութիւն:

² «Սահմանք»-ի գոյութեան մասին առաջինը հաղորդել է Պ. Բեգորբազովը. տե՛ս նրա՝ Материалы для истории Византийской империи, I, ЖМНПp. 1887, т. 254, ноябрь, էջ 65-78, Բակուրեանին վերաբերող՝ էջ 76-77:

բնագրում, դեռևս յայտնաբերուած չէ¹ :

Սկզբնաղբիւրները հակասական տեղեկութիւններ են հաղորդում Գրիգոր Բակուրեանի ազգային պատկանելիութեան վերաբերեալ: Յունարէն «Սահմանք»-ի ներածական մասում նա այսպէս է ներկայացնում իրեն. «...կառուցեցի ես՝ Գրիգորս, Աստծոյ կամքով սերաստոսս ու ողջ Արեւմուտքի զոմեստիկոսս, երանելի Բակուրեանի՝ պայծառ իշխանաց իշխանի, հարազատ որդիս, որ սերմամբ արեւելեան կողմերից եմ, վրաց ամենապայծառ տոհմից...»:

«Ազգաւ վրացի» կամ «վրաց ամենապայծառ տոհմից» լինելու մասին նա խօսում է տարբեր առիթներով՝ յատկապէս շեշտելով այդ հանգամանքը: Հայկական աղբիւրներից Բակուրեանի ազգութեան մասին խօսում է Մատթէոս Ուռհայեցին՝ ըստ ամենայնի՝ հաստատելով «Սահմանք»-ի վերոբերեալ տեղեկութիւնը. «...Գրիգոր՝ Բակուրեանին որդին՝ վրացի ազգաւ...»²: Հին վրացական աղբիւրներից Բակուրեանի մասին խօսում է Դաւիթ Շինարարի Պատմութեան հեղինակը՝ նրան կոչելով «գօրավար արեւելից» (ՆՈՐԱՅՅՈՐՈ ՏԵՄՈՆԱՅԼՈՆԱ), բայց առանց ազգային պատկանելիութիւնը նշելու: Բիւզանդական աղբիւրներում, մասնաւորապէս՝ Աննա Կոմնենայի «Alexiadis»-ում Բակուրեանը ներկայացւում է իբրեւ «սերուած Հայոց պայծառ (անուանի) տոհմից»³:

Սկզբնաղբիւրների այս հակասականութիւնը⁴, բնականաբար, իր կնիքը պիտի թողնէր հետագայ մասնագէտների եզրակացութիւնների վրայ: Պ. Բեզոբրազովը նրան վրացի է համարում "...Ктитор был грузином, а потому монастырь предназначался для грузин"⁵.

Գ. Մուսէսը դժուարացել է լուծել «Սահմանք»-ի հակասական տեղեկութիւնը (Բակուրեանը բազմիցս հաւաստում է իր «ազգաւ վրացի» լինելը, բայց ստորագրում է «հայերէն գրով»), ուստի տեքստը հրատարակելիս ստիպուած է եղել հարցական նշան դնել վերջին արտայայտութիւնից յետոյ: Լ. Պտին Բակուրեանին համարում է վրացի,

¹ Յունարէն բնագրի ուսմերէն թարգմանութիւնը հրատարակել է Վ. Ա. Յարութինովա - Ֆիդանեանը: Типик Григория Пакуриана. Введение, перевод и комментарий В. А. Арутюновой – Фиданян, Ереван, 1978.

² Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1888, էջ 148:

³ Анна Комнина, Алексиада. Вступительная статья, перевод, комментарий Я. Н. Любарского, М., 1965, с. 97. Աշխատասիրողի կարծիքով Կոմնինան սխալում է (էջ 465):

⁴ Աղբիւրներից այստեղ վկայակոչում ենք միայն Բակուրեանի «ազգաւ հայ» կամ «վրացի» լինելու մասին հաղորդում պարունակողները:

⁵ П. Безобразов, նշւ. աշխ.

Ն. Մառի դիտողութեամբ՝ «не смущен несколько его армянской по-
дписью»¹.

Բակուրեանին վրացի է համարում նաև Գեղցերը² :

Այս աւանդական դարձած հայեցակէտը վերանայուեց Ն. Մառի
կողմից, որը հայ քաղկեդոնականութեան պատմութեանը նուիրած իր
յայտնի մենագրութեան մէջ անդրադարձաւ այլոց համար անհասկա-
նալի այդ առեղծուածին՝ հաստատելով, որ «Очевидно, сам основа-
тель грузинского монастыря Петрицона, халкедонит, был армя-
тель грузинского монастыря Петрицона, халкедонит, был армя-
нин по крови, по происхождению. Безукоризненно верно в этом
отношении свидетельство Анны Комниной...»³.

Հարցը, թուում է արդէն պարզուած էր, այսինքն՝ Գրիգոր Բակու-
րեանը ազգութեամբ հայ է, բայց քաղկեդոնական ու վրացականացող
միջավայրից (Տայքից), այդ պատճառով էլ իրեն վրացի է կոչում:
Տուեալ դէպքում «վրացի»-ն հոմանիչ է «վրացադաւան»-ին: Բայց
յունարէն նոր տեքստի եւ վրացերէն խմբագրութիւնների յայտնաբե-
րումից յետոյ Գրիգոր Բակուրեանի ազգային պատկանելիութիւնը եւ
«Սահմանք»-ի ինչ լեզուներով գրելու հարցը նորից քննութեան
առարկայ դարձաւ: Ակադ. Ա. Շանիձէն 1958 թ. հրապարակած հա-
ղորդման մէջ⁴ գտնում է, որ «Սահմանք»-ի բնագիրը գրուել է միայն
յունարէն ու վրացերէն, այսինքն՝ սկզբնական ու ճիշտ է համարում
վրացական խմբագրութեան վկայութիւնը, իսկ «հայերէն գրելու»
վկայութեան առկայութիւնը յունարէնում՝ հետագայ լրացում: Գ. Լի-
տաւրինը, վկայակոչելով նախորդ բանասէրների դիտողութիւնները եւ
հարցի քննութիւնը իր նպատակից դուրս համարելով, նկատել է, սա-
կայն, որ «МОЖЕТ БЫТЬ, ВОПРОС ЭТОТ ГОРАЗДО СЛОЖНЕЕ»⁵ :

Պրոֆ. Ա. Ղաուխչիշւիլին իր նշուած աշխատութեան առաջա-
բանում ու ծանօթագրութիւնների մէջ քննութեան է ենթարկում, ի
թիւս այլ հարցերի, նաև Գ. Բակուրեանի ազգային պատկանելիու-
թեան ու «Սահմանք»-ի ինչ լեզուներով գրելու խնդիրը եւ գալիս հե-
-

¹ Н. Я. Марр, Аркаун..., էջ 20, ծնթ. 2.

² Յ. Գեղցեր, Համառոտութիւն բիւզանդական կայսրների պատմութեան, Վաղարշա-
պատ, 1901, էջ 318:

³ Н. Я. Марр, նշլ. աշխ., էջ 21.

⁴ А. Г. Шанидзе, Страница из историята на грузино-българските културни
взаимоотношения.- "Исторический преглед", ч. XIV, N 4, 1958, с. 103-104:
Չեռքի տակ չունենալով յօդուածը՝ տեղեկութիւնները քաղում ենք Գ. Գ. Լի-
տաւրինի գրքից, էջ 98-99, ծնթ. 185 (տե՛ս ստորեւ):

⁵ Г. Г. Литаврин, Болгария и Византия в XI-XII вв., Москва, 1960, с. 99.

տեւեալ եղրակացութեան. «Սահմանք»-ի վրայերէն խմբագրութիւնն աւելի անփոփոխ է պահել բուն տեսքը, քան յունարէնը: Հայերէն գրելու անհրաժեշտութիւն առաջացել է վանքի հիմնարդումից (= «Սահմանք»-ի հեղինակումից) 20-30 տարի յետոյ, երբ միաբանութիւն են ընդունուել քաղկեդոնական հայեր: Հետեւաբար Բակուրեանը հեղինակել է ոչ թէ երեք լեզուներով՝ յունարէն, վրայերէն եւ հայերէն, այլ երկու՝ վրայերէն եւ յունարէն: Ըստ որում, «...15 Այնպէս է երեւում, կարծես յունարէն տեքստի կաղմողը կարող էր ձեռքին ունենայ վրայերէն տեքստը: Իբրեւ սրա ապացոյց՝ գուցէ կարելի է համարել յունարէն խմբագրութեան տեքստի վրայաբանութիւնը՝ յանձինն $\mu\eta\nu\tilde{\alpha}$ -ի», որը նոյնութեամբ կայ վրայական տեքստում՝ $\delta\omicron\beta\delta$ ¹.

Ս. Ղաուխչիշլիլին «Սահմանք»-ի «ազգաւ վրացի եմ», «վանքիս միաբանները վրացիներ են» եւ նման այլ արտայայտութիւններն ընդունում է ուղղակի նշանակութեամբ, որը եւ կանխորոշել է հետագայ քննութիւնը: Անուանի բիւզանդագէտի ուշադրութիւնից, ցաւօք, վրիպել է Մառի "Аркан..." աշխատութիւնը, որը կարող էր մեծապէս օգնել այս ոչ հեշտ հարցի լուծմանը:

Հրատարակիչն իր վարկածն առաջարկելով հանդերձ, անհրաժեշտ է համարել նկատել. «Սակայն այս ամէնը նախնական խօսք է. վրայերէն խմբագրութեան տեքստի նոր հրատարակութիւնն ու նրա ուսումնասիրումը, յունական խմբագրութեան տեքստի համեմատութեամբ, անշուշտ շատ նոր բան կտայ վերելում դրուած հարցերի լուծման համար»:

Առաջադրուած վարկածին պատասխանելու համար նորից անդրադառնանք Գրիգոր Բակուրեանի ազգային պատկանելիութեան խնդրին: Վերելում մենք թուարկեցինք հարցին վերաբերող սկզբնաղբիւրները՝ իրենց հակասական տեղեկութիւններով²:

Բակուրեանի հայազգի լինելը հաստատուում է ստորեւ վկայակոչուող աղբիւրներով:

ա) Դէպքերին ու անձնաւորութիւններին՝ քաջագիտակ Աննա

¹ Ե. ԿՉՅԵՏԻ ՄՅՈՋՈՏՈ, նշւ. աշխ., էջ 275-276:

² Վրայ «ՋՈՕԾ. ԵՃԻ-ՋԵԵ» թերթում (1964, 1 մայիսի, թիւ 18, էջ 4) լոյս տեսած «Գրիգոր Բակուրեան» յօդուածի հեղինակը (Օթար Գւինչիձէ) շտապել է բանասիրական ճշտումների կարօտ հարցը իբրեւ անվերապահ ճշմարտութիւն ներկայացնել՝ անտեսելով Մառի ապացուցումները: Յօդուածագիրը անհասկանալիօրէն Աննա Կոմնինայի վկայութիւնները առկոչելիս բաց է թողնում միեւնոյն նախադասութեան երկրորդ մասը, ուր ասուում է, որ Գրիգոր Բակուրեանը «սերում էր հայոց պայծառ տոհմից»: Մանրամասն տե՛ս ստորեւ:

Կոմնինյան, նկարագրելով իր հօր՝ Ալեքսիանոսի (1081-1118) վարած կռիւներն ու զահակալութեան պատմութիւնը, յատուկ ուշադրու- թեամբ է խօսում Բակուրեանի մասին՝ նրան, ինչպէս ասուեց, «հայոց պայծառ տոհմից սերած» ճանաչելով¹: Աննա Կոմնինյան հարկաւ պատրաստ էր հայ եւ վրացի ազգային պատկանելիութիւնը: Այս աղ- տարբերում էր հայ եւ վրացի ազգային պատկանելիութիւնը ներկայացում է ոչ դա- բիւրի առաւելութիւնն այն է, որ ազգութիւնը ներկայացում է ոչ դա- ւանանքով, այլ բուն պատկանելիութեամբ:

բ) Գրիգոր Բակուրեանի հեղինակած «Սահմանք»-ի 36-րդ գլխում («Մեր վանքում գտնուող ու սահուն ոսկեղրոշմների մասին») կայ մի այնպիսի տեղեկութիւն, որը կարելի է բանալի է հարցի էութիւնը քննե- լիս. «Ոսկեղրոշմ (մատանի) առ այն, որ ես իրաւունք ունեմ փոխանցե- լու (տրամադրելու) իմ տիրոջթները ում էլ կամենամ՝ իմ հարազատնե- ընդ կամ ծառայոց, թէ իսկ նրանք հայոց դաւանանքի վնեն²»:

Նշանակում է՝ Գրիգոր Բակուրեանը առանձին հրովարտակ է ունեցել իր կալուածքները հետագայում որեւէ մէկին ժառանգելու իրաւունքի մասին: Ինչ խօսք, հայադաւան ազգականներ (հարազատ- ներ) հայազգին կ'ունենար, որովհետեւ պատմութեանը յայտնի է (որեւէ փաստ, ըստ որի՝ XI դ. Տայքում (ինչպէս նաեւ մէկ-երկու դար առաջ) միաբնակ (հայադաւան) վրացիներ վնէին³: Իսկ որ X-XI դդ. համատարած քաղկեդոնականացող (վրացադաւան կամ յունադաւան) այս աշխարհում դեռեւս կային միաբնակ հայեր՝ ապացուցում է «գա- լառակալ» Եւստաթիոս Բոյիլասի «Կտակ»-ով: Բոյիլասը հաստատուել է Տայքում⁴ եւ հանդիպել այլադաւան ժողովրդի. «Հաստատուելով այլ հաւատք պաշտող եւ ուրիշ լեզուով խօսող ժողովուրդների մէջ, ես արժանացայ...»⁵: Կամ նոյն կտակի վերջում նա սպառնում է ազգա- կաններին ու ժառանգներին, անշուշտ Տայքում բնակուող, զրկել կա- լուածքներից, եթէ «որեւէ մէկը ճիշտ ուղուց շեղուի եւ ուղղափառ հա- յարեցնէ»:

¹ Anna Comnena, Alexiadis, Bonnae, 1839, p. 96 (Corpus Scriptorum Historiae Byzantinae); հմմտ. Анна Комнина, Алексиада. Москва, 1965, էջ 97, նաև էջ 465, ծնթ. 202:

² ՅՅԵԵԵԵԵԵ, V, 250-251.
³ Հանգուցեալ Ն. Ակինեանը Գ. Բակուրեանին «Հայրենօք հաւանօրէն Տաշրացի կամ Գուգարացի» է համարում (Ն. Ակինեան, Սիմէոն Պղնձահանեցի եւ իր թարգմա- նութիւնները վրացերէնէ, Վիեննա, 1951, էջ 19): Ճիշտը տայեցի վնէին է:
⁴ Այդ ճշտում է կտակում եղած տեղանուններով:
⁵ Հ. Բարթիկեան, Եւստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.)՝ որպէս Հայաստանի եւ Վրաստանի պատմութեան կարեւոր աղբիւր, «Բանբեր մատենադարանի», թիւ 5, էջ 411:

ւատքից անցնի օտար, այլադէն հաւատքի կողմը...»¹ :

Քաղկեդոնական Բոյիլասի համար վրացիներն այլադաւան չեն, եւ նշուած արտայայտութիւնները, ինչպէս նկատուած է, վերաբերում են միայն հայերին, այն էլ՝ վերջիններիս հակաքաղկեդոնական մասին: Ուրեմն, Գրիգոր Բակուրեանի «Հայադաւան» ազգականներ ունենալը իրապատում պիտի լինի: Այս դէպքում Բակուրեանի ինքնակենսագրական հաղորդումների «վրացի», «վրաց տոհմից» եւ այլ արտայայտութիւններ ամէնից առաջ «վրացադաւանութիւն» են նշանակում:

զ) Պակաս նշանակութիւն չունի Գրիգոր Բակուրեանի ծառայութիւնը «Արեւելքում» (ինչպէս ինքն է գրում), մասնաւորապէս՝ Անիում, Կարսում, Կարինում: Նա յատուկ ոսկեդրոշմ (խրիստովուլ) է ունեցել Անիի, Կարսի ու Կարինի իր տիրոյթների եւ ծառայութիւնների մասին: Բիւզանդիան աշխատում էր Հայաստանում նշանակել հայադգի, բայց իրեն նուիրուած մարդկանց: 1064 թ. Անիի գրաւման համար Ալփասլանի մղած պատերազմների ժամանակ քաղաքի պաշտպանութիւնը յանձնուած էր Գրիգոր Բակուրեանին եւ Բագրատին²: Վերջինիս մասին, իբրեւ հայադգի, խօսում է Յովհան Սկիլիցէսը³: Անիի մայր տաճարի արձանագրութիւնը եւս հաստատում է այդ⁴ :

Գրիգոր Բակուրեանը մի առանձին գոհունակութեամբ է նշում իր ծառայութիւնները Կայսեր՝ Արեւելքում պաշտօնավարելիս: Ինչպէս երեւում է, նա վճռական դեր է խաղացել Անիի, Կարսի ու Կարինի հայոց «աշխարհները» Բիւզանդիային ենթարկելիս կամ արդէն տիրած մասում հնազանդութիւն պահպանելիս:

Բակուրեանի ազգային պատկանելիութիւնը ոչ ուղղակի կերպով վկայուած է նաեւ վրացական աղբիւրում. «Պատմութիւն արքայիցարքայ Դաւթի» երկի հեղինակը (XII դ.) Մելիք-շահի ու Սարհանգի գալուստն ու դարձը ներկայացնելուց յետոյ գրում է.

¹ Նոյն տեղում, էջ 418:

² Մատթէոս Ուռհայեցի, նոյն տեղում:

³ Սկիլիցէսի «Պատմութիւն»-ը (811-1079 թթ. մասին) սկզբնաղբիւր է եղել Գէորգիոս Կեղրենոսի համար, ուստի սովորաբար նշում է իբրեւ Կեղրենոսի պատմութիւն: Բագրատը Անիի դուքս դարձաւ 1060-1063 թթ., իսկ Կեղրենոսի պատմութիւնն աւարտում է Իսահակ Կոմնենոսի թագաւորութեամբ (1057-1059): Ուրեմն Բագրատին վերաբերող տեղեկութիւնը Յովհան Սկիլիցէսին է պատկանում:

⁴ «Անուամբ տեառն ամենակալի եւ ողորմութեամբ սուրբ եւ ինքնակալ թագաւորին Կոստանդեայ Դուկի, կամ եղեւ իմ Բագրատայ մագիստրոսիս եւ արեւելից կատապանիս Վիսկացոյս՝ առնել ողորմութիւն մայրաքաղաքիս Անույ...» տե՛ս В. Н. Бенешевич, Три анийские надписи XI века из эпохи византийского владычества, Пб., 1921, с. 22:

«Եւ դնաց Գէորգի թագաւորը իր կալուած Տայք եւ [ապա] եկաւ Բանա: Իսկ անդ նրանց առաջ եկաւ Արեւելքի զօրավար Գրիգոր Բակուրանայ որդին, որ տիրում էր Ուղթիքին, Կարինին, Կարսին, եւ մեծապէս ուրախացան ու հանգստացան: Եւ [Գրիգոր Բակուրեանը] Գէորգի թագաւորին տուեց Կարսի քաղաքաբերդն ու չրջակայ դաւաւոր: Եւ բաժանուեցին¹:

Վրաց բնագրի «զօրավար» (ՆՈՐՈՅՅՈՐ) արտայայտութիւնը յուշում է, որ XII դ. առաջին քառորդում բուն վրացական միջավայրում Բակուրեանը իբրեւ հայազգի է ճանաչուել, այլապէս բնագրում սպա-սելի ձեւը «մխեղարթ-մթաւարին» էր կամ՝ մթաւարի, էրիսթաւի²: Նշանակում է «զօրավար» կոչելիս «Պատմութեան» հեղինակը (անկասկած Արսէն արեղան, ծնուած պէտք է լինի մօտաւորապէս XI դ. 70-ական թթ.) գրառել է ժամանակակից ծանօթութիւնը՝ այն, որ Գրի-գոր Բակուրեանը հայազգի է, «զօրավար»:

դ) Որ Բակուրեանի «Սահմանք»-ի «վրաց տոհմից», «սերմամբ վրացի» եւ նման արտայայտութիւնները դեռեւս բացարձակ երաշխիք չեն բուն ազգային պատկանելիութիւնը ճշտելիս, երեւում է յունարէն խմբագրութեան «տանուտէր» բառի գործածութիւնից: Այստեղ կար-դում ենք.

«[Մէկ] ուրիշն էլ կելար լինի, որին վրացիք տանուտէր են կոչում» (նոյն տեղում, էջ 152, § 11):

Հայկարանութիւններով հարուստ Ադիշի աւետարանում (897 թ.) հայոց «տանուտէր»-ի դիմաց ութ անգամ գործածուած է «մամա-սախիսի», իսկ մնացած դէպքերում՝ «սախիս ուփալի», յունարէն՝ *Ὀικοδεσπότης*-ի դիմաց:

Տանուտէրութեան ինստիտուտը յատկապէս զարգացաւ VIII-XI դդ. Տայքում ու Կղարջքում, այսինքն՝ կենցաղ է մտնում հայ բնակչութեան օտարման ընթացքի հետ միաժամանակ՝ իբրեւ արդիւնք այդ

¹ «ԺճՊՁՊՈՅ Յեռոյճոյճ», I, 3187-11. Հմմտ. Լ. Մելիքսէթ-բեկ, Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, հ. Ա., էջ 216:

² «Զօրավար» բառին հանդիպում ենք հայերէնից թարգմանուած վրացական տեքստերում՝ ս. Գէորգի վկայաբանութեան խորագրում (տե՛ս H. Mapp, Из ποezδku на Αφοη, 1899, էջ 16), Ներսէս Հայրապետի Պատմութեան մէջ (տե՛ս Ծ. ԺՅՁՁՁՁ, ԺճՊՁ. ԾՁ ԵՊՁՁ. ԾՁՁ. ԾՁՁ. IX-X ԵԵ-ՁՁ, էջ 72, 77), «Վկայութիւն սրբոյ Վարդանայ...» (նշւ. աշխ., էջ 88) եւ Սինայի վրաց ձեռագրերից մէկի յիշատակագրութեան մէջ՝ զոլաւարի ձեւով (տե՛ս ԾՅ. ՔՁՁՁՁՁՁՁ-ու Նկարագրութիւն): Թուարկուած բոլոր դէպքերում մեզ հետաքրքրող բառը գործածուած է որպէս հայկական բնագրից եկող «արմենիզմ» կամ հայազգի գործչին վերաբերող տիտղոս: Ունենք նոյնատիպ ուրիշ աղբիւրներ եւս:

պրոցեսի: Մանգլիսի արձանագրութեամբ միայն կարելի է ենթադրել (եթէ վերծանութիւնը ճիշտ համարուի), որ XI դ. այդ տխուր օտար չէ նաեւ Արեւելեան Վրաստանին¹: Վրաց Բագրատ Դ-ի նշանաւոր հրովարտակը, ուղղուած մամասախլիաներին եւ տանուտէրերին, տառացիօրէն վկայում է, որ տանուտէրութիւնը եղել է (հիմնականում) Տայքի եւ Կղարջքի հայոց պատիւներից² հաւասար տարածում չունենալով նոյնիսկ մերձաւոր Սամցխեում: Այդ նշանակում է, թէ «տանուտէրութիւնը» Վրաստանում (XI դ.) սահմանափակ կիրառում է ունեցել, աւելի ճիշտ՝ շրջանակուել է հիմնականում վրացականացող հայոց սահմաններում:

Արդ, ի՞նչ միջավայրի է վերաբերում Գրիգոր Բակուրեանի ասած «որին վրացիք տանուտէր են կոչում» արտայայտութիւնը: Հարկաւ Տայքին (եւ Կղարջքին): Ուրեմն այս դէպքում «վրացիներ» ասելով ամէնից առաջ վրացադաւան միջավայր է հասկանում, անկախ բուն ազգութիւնից: Այս մեկնութիւնը ապացուցւում է նաեւ «Սահմանք»-ի հին վրացերէն խմբագրութեամբ: Այստեղ «տանուտէր»-ի դիմաց ունենք «ոստիգան»-ի: Եթէ վրացիք իսկապէս «տանուտէր» էին կոչում, ապա ինչո՞ւ վրաց խմբագրութեան մէջ չի պահպանուել այդ ձեւը, այլ փոխարինուել է ռեցոգանով:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, թէ Գրիգոր Բակուրեանը հայազգի է, քաղկեդոնական, տայեցի³:

Այժմ անդրադառնանք «Սահմանք»-ի երեք լեզուներով՝ յունարէն, վրացերէն եւ հայերէն գրուելու խնդրին, որի շուրջ, ինչպէս վերելում տեսանք, պրոֆ. Ս. Ղաուխչիշւիլին միանգամայն նոր եւ ինք-

¹ «Տանուտէրութեան» մասին մանրամասն եւ ուշագրաւ դիտողութիւններ ունի Ն. Մառը (Արկայն..., էջ 22-24): Նա ապացուցում է, որ այս ինստիտուտը յատուկ ճանաչում ունէր Տայքում ու Կղարջքում՝ իբրեւ հետեւանք հայ բնակչութեան այդ հատուածի ապագայնացման: Մանգլիսի տաճարի արձանագրութիւններից մէկում, որի վերծանութիւնը երկար ժամանակ թերի է համարուել, Թ. Բարնաւելու ընթերցմամբ գործածուած է «տանուտէր» ը[ձ]ն[ւ]թ[ւ]թ[ւ]թ[ւ] տխուր:

² Եզրի մասին առիթ ունեցանք խօսելու Անիի արձանագրութեան «տանուտէրութիւն» մեկնաբանութեան կապակցութեամբ:

³ Ինչպէս մէկ անգամ նշել ենք, Դաւիթ Կիւրոպաղատի պատուէրով արարերէնից հայերէն կատարուած թարգմանութիւնները պերճախօս վկայում են, որ X-XI դդ. Տայքում ու Կղարջքում ոչ միայն միաբնակ հայեր կային (քաղկեդոնականների մասին խօսելն աւելորդ է), այլեւ հայոց լեզուն այնքան կենդանի էր ու տարածուն, որ «առաջի թագաւորացն ու իշխանացն» պատմելու կամ ընթերցելու համար հայերէն էին թարգմանում: Հմմտ. Պ. Մուրադեան, «Պատմութիւն Պղնձէ քաղաքի» զրոյցի հայկական եւ վրացական պատումների ու նրանց փոխարարերութեան շուրջ, «Բանբեր Մատենադարանի», թիւ 6, էջ 250 եւ 258:

նատիպ վարկած է առաջադրում՝ յունարէն բնագրի «Եւ Հայերէն» արտայայտութիւնները ոչ սկզբնական համարելով, այլ հետագայ յաւելում՝ նոր պայմաններով թելադրուած:

«Սահմանք»-ը գրուել է վանքի կառուցումից (1083 թ.) մէկ տարի յետոյ 1084 թ. (6592-5508=1084) դեկտեմբեր ամսին: Ակադ. Ն. Մառը յակուած էր կարծելու, որ 1083 թ. Պետրիժոնի վանքը ոչ թէ հիմնադրուել, այլ վերանորոգուել է¹: Ն. Մառի օգտագործած սկզբնաղբիւրը² հնարաւորութիւն չի տուել ճշտելու յիշատակարանի պատկանելիութիւնը³, մասնաւորապէս այն, որ 1030 թ. վկայող յիշատակարանը պատկանում է ոչ թէ թարգմանչին, այլ հեղինակին՝ Նիկոն Մենակեացին, ինչպէս լուսանցագրութիւնն է հաւաստում՝ «սոյն յիշատակարանը հէնց այս քարոզների հեղինակին իրեն՝ արժանաւոր սուրբ հօրն է պատկանում»⁴: Դաւիթ Պետրիժոնեցու մասին խօսւում է Արսէն Իղալթոյեցու թարգմանած «Քակտումն Հայոց Հաւատի» (հեղինակ՝ Նիկոն Մենակեաց) յիշատակարանում, որ կարելու է նաեւ Պետրիժոնի վանականների պայքարի արտացոլմամբ հակաքաղկեդոնականութեան դէմ, այսինքն՝ միաբնակ Հայոց:

«Ով հարք, աղօթեցէք թարգմանչիս՝ Արսէնիս, եւ Դաւիթի՝ Պետրիժոնեցի կրօնաւորի համար, որի ստիպմամբ (ղրղմամբ) յունարէնից թարգմանեցի Հայոց [Հաւատը] քակտող այս հինգ ճառերը (քարոզները)»⁵:

Արսէն Իղալթոյեցին մահացել է 1125 թ. յետոյ, որովհետեւ նա է հեղինակել Դաւիթ Շինարարի (մահ. 1125) չափածոյ տասլանաղբիրը, ուրեմն՝ 1030 թ. թարգմանութեան մասին խօսք լինել չի կարող: Դաւիթ Պետրիժոնեցին Արսէնի ժամանակակիցն է եւ այդ տեղանունով կարող էր կոչուել միայն 1083 թ., այսինքն՝ Գրիգոր Բակուրեանի վանքի հիմնադրումից յետոյ: Պետրիժոնի վանքի հիմնադրման եւ ոչ վերանորոգման մասին են վկայում «Սահմանք»-ի ներածութեան հետեւեալ

¹ Н. Мара, Аркаун..., էջ 17, հմտ. էջ 24, ծնթ. 1. հմտ. նոյնի՝ Иоанн Петруцкий, грузинский неоплатоник XI-XII века, СПб., 1909, с. 2:

² Այն է՝ տ. յոճճճճճճ, յճճճճճճ, I, էջ 310-311:

³ Յիշատակարանի վերահրատարակութիւնը տրուած է վրաստանի ԳԱ ակադ. Կ. Կեկելիձէի անուան Ձեռագրերի ինստիտուտի S հաւաքածոյի նկարագրութեան մէջ՝ S, II, 1961, էջ 219:

⁴ Ձեռ. S-1463, էջ 281r (ըստ նակարագրութեան S-II, էջ 219, § 35):

⁵ Ժ. յճճճճճճ, յճճճ. ջոյճ. օկճ. ճ. I¹, յճ. 279, ըստ Գեղաթի վանքի (այժմ Բութախի թանգարան) թիւ 23 ձեռագրի, էջ 266r: S-1463 ձեռագիրն այս յիշատակարանի փոխարէն 264v էջում ունի ուրիշը (Ժ. յճճճճճճ, նշ. աշխ., էջ 278-279), որ նկարագրութեան մէջ (S-II, էջ 218, § 28) չի արտացոլուած:

արտայայտութիւնները. «կառուցեցի ես՝ Գրիգորս», «Հիմնադիրն եմ այս աստուածաշէն եւ նոր վանքի...»¹: Անկասկած է, որ Պետրիժոնի Ս. Աստուածածնի վրաց վանքը Հիմնադրուել է Գրիգոր Բակուրեանի կողմից, եւ 1083 թ. առաջ այնտեղ վրաց հոգեւորականութեան առկայութեան ն. Մառի վարկածը չի հաստատուում:

«Սահմանք»-ի երեք լեզուներով գրուած լինելու հանգամանքը Մառի օրօք յատուկ քննութեան առարկայ չէր կարող դառնալ, որովհետեւ դեռեւս անյայտ էր Հին վրացերէն խմբագրութիւնը: Այժմ, երբ գիտութեանը յայտնի է դարձել վրացերէնը՝ յունարէնից տարբերուող հաղորդումներով՝ քանի լեզուներով գրելու մասին, հարցը աւելի է բարդանում: Ինչպէս տեսանք, պրոֆ. Ս. Ղաուխչիշւիլին կարծում է, որ սկզբնապէս միայն վրաց համար կառուցուած այդ վանքում հայեր չկային եւ, բնականաբար, չկար նաեւ հայերէն գրելու անհրաժեշտութիւն: Բայց յունարէն եւ վրացերէն տեքստերը որոշակի կռուաններ են տալիս մտածելու, որ նախնականը եւ ճիշտը երեք լեզուներով՝ յունարէն, վրացերէն եւ հայերէն գրելն է: Այժմ անդրադառնանք այդ կռուանների քննութեանը՝ յիշելով, որ Բակուրեանը հայազգի էր, տայեցի, քաղկեդոնական:

ա) «Սահմանք»-ում յատուկ ընդգծմամբ ասւում է, որ Պետրիժոնի վանականները վրաց գրչութեան եւ խօսակցական լեզուի գիտակներ են²: Բնականաբար հարց է առաջանում. միջնադարում կա՞ր որեւէ մենաստան, որի միանձիք՝ սարկաւազներից մինչեւ առաջնորդը, գրել կարողալ չիմանային: Այստեղ խօսքը վանքին է վերաբերում, միջնադարեան գրչութեան կենտրոնին եւ ոչ որեւէ եկեղեցու կամ մատուռի: Այդ պատճառով էլ Բակուրեանի այս յայտարարութիւնը, վրացերէն գրել-կարդալու եւ խօսելու կարողութեան մասին ինչ որ յատուկ պարագաներով պէտք է թելադրուած լինի: Մասնաւորապէս՝ վանքում պէտք է լինէին նաեւ այլազգի հոգեւորականներ, միաբանութիւնը պէտք է տարբեր ազգերի մարդկանցից բաղկանար, որպէսզի անհրաժեշտ լինէր շեշտել վրաց լեզուի ու գրչութեան իմացութիւնը: Վանքում յատուկ նկատառումով բացառուել է յոյների ընդունումը: Ուրեմն, իբրեւ այլազգի, կարող էին միայն հայերը լինել, տայեցի՝ քաղկեդոնական եւ Բակուրեանի պէս իրենց՝ վրացադաւանութեամբ «վրացի» համարող հայեր:

¹ Տե՛ս ՅՅԹՅՅՅՅՅ, V էջ 98-99, § 2: Հին վրացերէն խմբագրութեան վկայութիւնը տե՛ս Typicon Gregorii Pacuriani..., 1954, tomus 3, § 2.

² ՅՅԹՅՅՅՅՅ V, էջ 98, 18-20: Հին վրացերէն խմբագրութեան մէջ այս մասը բացակայում է (§ 2):

բ) «Սահմանք»-ի 24-րդ գլուխը վերաբերում է վանքում յոյն վանական չրնդունելուն՝ «երբեք իմ այս վանքում յոյն վանական կամ արեղայ չրնակուի, բացառութեամբ մէկ դպրի»¹, այնուհետև տրւում է այդ վճռի պատճառաբանումը: Բակուրեանը բիւզանդական դոմեստիկոս էր, հպարտութեամբ է նշում իր ծառայութիւնները, ստացած «ոսկեդրոշմները», բայց, այնուամենայնիւ, արգելում է յոյների բնակութիւնն իր մենաստանում, թէև խոստովանում է, որ «հաւատքի հարցերում մենք հետևում ենք նրանց իբրև ուսուցիչների եւ ընդունում նրանց դոգմաները»: Հայերի մասին ոչինչ չի ասւում: Պատմութիւնից յայտնի է, որ XI դ. Ֆիլիպոպոլսում (այժմ՝ Պլովդիւ, Բուլղարիա), որի մօտ եւ կառուցուած է Պետրիժոնի վանքը, շատ հայեր կային: "Вся страна в окружности Филиппополя в XI столетии была переполнена армянами, богомилями и павликианами", - գրում է Իրեչեկը²: Հայերի, մասնաւորապէս՝ բողոմիլների ու պաւլիկեանների ստուարութեան մասին հաւաստի տեղեկութիւն կայ Աննա Կոմնինայի մօտ. նկարագրելով Ֆիլիպոպոլիսն ու նրա շրջակայքը, ի թիւս այլ կարեւոր տեղեկութիւնների, նա հաղորդում է. «... այս քաղաքը իրենց մէջ կիսեցին հայերը, այսպէս կոչուած բողոմիլները... և Աստոյ ամենատեսալ պաւլիկեանները...»³:

Այս տեղեկութիւնը հաստատւում է նաեւ Թէոփիլակսի թղթերով եւ առհասարակ շատ աղբիւրներով: Ակադ. Ն. Մառը Պետրիժոնի վանքի հիմնադրումը ամէնից առաջ առնչում էր բողոմիլների ու պաւլիկեանների դէմ տարուող եւ ծրագրուող պայքարին⁴:

1081 թ. հոկտեմբերի 19-ի Դրաչի նորմանա-բիւզանդական ճակատամարտում Բիւզանդիայի բանակում եղած հայ պաւլիկեաններն ու բողոմիլները կայսրին անակնկալի բերին՝ նոյնիակ զերութեան մատնելով Գրիգոր Բակուրեանին: Միանգամայն բնական է, որ հէնց այդ թուականից սկսած՝ Պետրիժոնի վանքի շինարարութիւնը նպատակ կ'ունենար խախտելու պաւլիկեանների ու բողոմիլների դիրքերը: Կարեւոր այդ խնդրին պակաս մասնակցութիւն չպիտի ունենային Ֆիլիպոպոլսում ու նրա շրջակայքում բնակուող յունադաւան կամ վրացադաւան հայերը: Բանասիրութեանը այժմ յայտնի է, որ հայ քաղկեդոնականները ամէնից աւելի յուսալի մարդիկ էին՝ ինչպէս միարձակու-

¹ Ճյուրջոյ V, էջ 218, «1-2 թարգմ. էջ 219, § 1-2:

² К. Иречек, История болгар, перевод Ф. К. Брука и В. Н. Палаузова, 1878, с. 281; հմմտ. Н. Марр, նշւ. աշխ., էջ 25:

³ Alexiadis, vol. II, p. 297, նաև 295-302. հմմտ. Алексиада, с. 395.

⁴ Н. Марр, Аркаун..., с. 25-26.

թեան, այնպէս էլ (եւ յատկապէս) պաւլիկեան ու բողոմիլեան աղանդաւորների դէմ պայքարելու համար. "Этих наших братьев, как только среди них оказывается кто с божественным разумом, и доднесь отцы наши и патриархи берут с Богом на борьбу с врагами, когда на соборе возбуждается что-либо против армян еретиков, так как они сведущи в их языке и писаниях. И недавно еще при блаженных патриархах в наше время случилось, как некоторые из них, в весьма малом количестве, на соборе не дали отнюдь еретикам (армянам) и языком шевельнуть или слов испустить против православных, хотя еретиков армян было весьма много"¹.

Հայ քաղկեդոնականները աւելի մեծ եռանդով նոյն ծառայութիւնը կը մատուցէին պաւլիկեանների դէմ մղուող պայքարին, եթէ նոյնիսկ կարծենք, որ յունա-սլաւոնական այս աղբիւրի վկայութիւնը «Հերետիկոսներ» ասելով՝ կարող է նաեւ այլադէն «միաբնակ» հասկանալ: Եւթիմէոս Զիդարենոսի (XII դ.) պաւլիկեանց դէմ գրած տրակտատը Պետրիժոնում թարգմանուել է վրացերէն², իսկ այդ նշանակում է, որ պաւլիկեանց դէմ պայքարելը Պետրիժոնի հիմնադրման դրդապատճառներից մէկն էր³:

Վերելում, Դաւիթ Պետրիժոնցու մասին խօսելիս, նկատեցինք, որ նրա յանձնարարութեամբ Արսէն Իդայթոյեցին դեռեւս XI դ. վերջերին թարգմանում է «Քակտումն հայոց հաւատի» հինգ թղթերը: Պետրիժոնեցու յանձնարարութիւնը յուշում է, որ հայ միաբնակների դէմ տարուող պայքարը եւս Պետրիժոնի վանքի գործունէութեան ոլորտներից է եղել: Իսկ այս խնդրում, ինչպէս վերելում տեսանք, ամէնից շատ յոյսեր հայ քաղկեդոնականների վրայ է դրւում: Ուրեմն, Պետրիժոնում ոչ միայն չէր արգելուի հայոց մուտքը, այլեւ նրանք ներկայ կլինէին ի սկզբանէ հայ քաղկեդոնականների այն մասից, որոնք իրենց վրացադաւան էին համարում: Իսկ պատմութիւնից նման այլ դէպքեր էլ են յայտնի, երբ հայ երկաբնակները անդամակցել են յոյն դաւանակից-

¹ Տե՛ս Н. Марр, նշւ. աշխ., էջ 35-36. Հմմտ. ն. Ադոնց, Հայ-ծաթերի ծագման մասին, «Հանդէս ամսօրեայ», 1912, էջ 262-63: Յօդուածի ուսուերէն բնագիրը տե՛ս ЖМНПр., 1911, с. 238-249:

² Բնագրի հրատ. տե՛ս Պ. Մուրադեան, Եւթիմէոս Զիդարենոսի «Լիազէն դաւանական» յունարէն երկի հին վրացերէն թարգմանութիւնը, «Մատը եւ հայագիտութեան հարցերը», Երեւան, 1968, էջ 266-305:

³ Կարեւոր հանգամանք է Թ. Ժորդանիայի հրատարակած գրոյցը Ալաւերդու (Վրաստանում) ս. Գէորգի խաչի մասին (յճօճօյցճօ, II, էջ 117. Հմմտ. Մառ, նշւ. աշխ., էջ 26):

ներին¹: Ի դէպ, 1170-ական թթ. Ֆիլիպպոպոլսի հայ երկաբնակները, պալիկեաններից ու բողոմիլներից թեթեւանալով, միջնորդ են դառնում կիլիկեան հայոց ու Բիւղանդիայի միջեւ՝ եկեղեցական միութեան առաքելութեամբ, որոնցից մէկն էր «ըստ Փիլիպպոպոլսեաց հայր վանից Յոհաննէս անուն»², կայսեր կողմից առ Ներսէս Շնորհալին ուղարկուած (թարգմանիչ եւ պատուիրակ, նոյն Յովհաննէս Աթմանն է, «հայր վանացն հայոց որ ի Ֆիլիպպոպոլսեաց աշխարհէն...»):

Այս ամէնը նշանակում է, որ Պետրիժոնի վանքի հոգեւորականների վրացերէն խմանալը դեռեւս միայն վրացիների միաբանութեան վկայութիւնն չէ, այլ նաեւ՝ վրացադաւան հայոց:

դ) Գրիգոր Բակուրեանը անհրաժեշտ է համարել ճշտել իր հարադատների ու մերձաւորների առնչութիւններն ու իրաւունքները վանքի ու նրա ողջ տնտեսութեան նկատմամբ: Վերեւում տեսանք, որ Բակուրեանի հարադատները ոչ միայն ազգութեամբ հայ են, այլ մասամբ նոյնիսկ՝ հայադաւան (միաբնակ): «Սահմանք»-ում նշւում է, որ վանքը ազատ պէտք է լինի ոտնձգութիւններից, նոյնիսկ եթէ դա վերաբերի Բակուրեանի հարադատներին՝ «այժմ առկայ (զոյութիւն ունեցող) եւ մեղանից յետոյ եկող»³:

Մի այլ տեղեկութիւնից եղրակացնում ենք, որ վանքում կային կամ կարող էին լինել Բակուրեանին ազգական միաբաններ, որոնք եւս կամայականութեան իրաւունք չունեն⁴: Բայց միաժամանակ նշւում է, որ հոգեւորական կարգով ապրող իր հարադատներին առաջնութիւն է տրուելու, քան «օտար եւ դրսից եկած» մարդկանց: Թերեւս հնարաւոր կլինէր կասկածել, որ ՏՄԿԿՆՈՍ ասելով՝ Բակուրեանը ոչ թէ հարադատներին նկատի ունի, այլ առհասարակ վրացազգի մարդկանց, բայց նոյն դիմի յաջորդ յօդուածում նա ինքը ճշտում է. «Եթէ վերոյիշեալ մեր ազգակիցներից որեւէ մէկը, կամ մեր ծառաներից դուրս ուրիշը վրացիներից կլինի եւ [հոգեւորական] կը ձեռնադրուի, իսկ վանականների կարգեալ թիւը պակասած կլինի, անհրաժեշտ է նրանց տալ առաջնութիւնը, եւ նրանք մտնեն վանք եւ լրացնեն թափուր տեղերը՝ ի լրացումն կարգուածի: Նրանք պէտք է սոյն վանքում սահմանուած կարգով ապրեն, համերաշխ լինեն միաբանութեան եղբարց հետ եւ

¹ Հմմտ. Մատ, նշւ. աշխ., էջ 26-27:

² Թուղթ ընդհանրական, Ս. էջմիածին, 1865, էջ 213. Հմմտ. Ն. Ակինեան, Սիմէոն Պղնձահանեցի..., էջ 227:

³ ՅՅԹԵՂՅՈՅԺ V, 196₁₋₂ (հին վրացերէն խմբագրութիւնը տե՛ս Typicon... t. 3, էջ 48₁₆₋₁₈):

⁴ Նոյն տեղում: Այլ առիթով իր մերձաւորների մասին խօսում է էջ 200 (երկրորդ):

հնազանդուեն վանահօրը» (գլ. 25, § 3): Այստեղից պարզ ի պարզոյ հետեւում է, որ վանքում կարող էին լինել կամ կային Բակուրեանի մերձաւորներ, ազգակիցներ (ինչ խօսք՝ քաղկեդոնական): Վրացիներին առաւելութիւն տայր, քան «դրսի» մարդկանց, նշանակում է, որ վանքում կային Բակուրեանին ոչ տոհմակից այլ մարդիկ, ոչ վրացիներ, որոնք վերելում առկոչուած տեղեկութեամբ գիտէին վրացերէն գրել-կարդալ: Իսկ այդ վերաբերում է միայն քաղկեդոնական հայերին, որովհետեւ յունաց մուտքը խստիւ արգելուած էր: Նշանակում է ի սկզբանէ Պետրիժոնում կային հայեր, բացի Բակուրեանի ազգականներից նաեւ «դրսի» կամ «օտար» մարդիկ՝ հայ քաղկեդոնականներ:

դ) «Սահմանք»-ում եղբարց՝ վանքից այն կողմ չանցնելու, վանահօր հրահանգներից դուրս չգալու եւ առհասարակ պատարագի ու ժամասացութեան մասին խօսելուց յետոյ (գլ. 15) Բակուրեանը գրում է.

«...Անհրաժեշտ է ժամասացութիւնը կատարել սիրով ու արթնութեամբ գիշեր ու ցերեկ անդադար, Աստծոյ վայելչութեամբ եւ Փրկչի տուած շնորհով՝ իւրաքանչիւր (ամէն) լեզուով՝ առանձնական (իրեն յատուկ, իր) ձայնով (հնչմամբ), առ տէրն մեր Յիսուս Քրիստոս, որին է փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն»¹:

Ըստ այս տեղեկութեան ժամասացութիւնը կատարուել է ոչ եղակի լեզուով, ոչ միայն վրացերէն, այլ նաեւ ուրիշ լեզուով, որովհետեւ յունարէնում ունենք «լեզու» եւ «ձայն», որոնք տարբեր նշանակութիւն ունեն. ժամասացութեան (= սաղմոսի) արտացոլումն այստեղ «ձայնն» է (φθόγγος), իսկ «լեզուն» (γλώσσα) գործածուած է իր բուն նշանակութեամբ: Որ այս բացատրութիւնը ճիշտ է՝ հաստատուում է հին վրացերէն խմբագրութեամբ. այստեղ ունենք.

«...Հարկ է սաղմոսերգել միշտ զգօն արթնութեամբ եւ սիրով, առանց որեւէ ծուլացման (յապաղումի)՝ գիշեր ու ցերեկ՝ Փրկչի պարգեւած շնորհին պատշաճ, իւրաքանչիւր լեզուով օրհներգում ձայնել առ տէրն մեր Յիսուս Քրիստոս, որին է փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն»²:

յԵՃ-լեզու բառը այստեղ գործածուած է բուն նշանակութեամբ. «ձայնը» եժձ-ն է, գործածուած՝ «ձայնել» (եժձձձ) ձեւով: Արդ, եթէ ժամասացութիւնը (թէկուղ միայն սաղմոսերգութիւնը) կատարուել է ոչ միայն վրացերէն, ապա ո՞րն է երկրորդ լեզուն: «Սահմանք»-ի տեքստից պիտենք, որ մենաստանի վրացիք «չգիտեն յու-

¹ Նոյն տեղում, էջ 190 եւ 192:

² Typicon ... էջ 46:

նարէն...»¹, իսկ յոյների ընդունումն արգելուած էր, բացառութեամբ դպրի, ուրեմն երկրորդ միակ հնարաւոր լեզուն հայերէնն էր²:

Նշանակում է Պետրիժոնում ոչ միայն հայեր կային (բացառապէս վրացադաւան), այլ նոյնիսկ սաղմոսերգութիւն կար հայոց լեզուով, իսկ այնտեղ միաբանած հայազգիք գիտէին վրացերէն գրել-կարդալ:

Այսպիսով, «Սահմանք»-ի յունարէն ու հին վրացերէն խմբագրութիւններում, ինչպէս նաեւ Բակուրեանին վերաբերող յունական, վրացական ու հայկական սկզբնաղբիւրներում պահպանուած վկայութիւնները ապացուցում են.

ա) Բակուրեանը հայազգի է, վրացադաւան, տայեցի: Վրացադաւանութեան պատճառով «վրացի» են նաև Յով. Թոռնիկը, Իւանէ Երկայնաբազուկը, անեցի քաղկեդոնականները և այլք:

բ) Պետրիժոնի վանքում կային հայ քաղկեդոնականներ, կար հայերէն ժամասացութիւն:

գ) «Սահմանք»-ի երեք լեզուներով՝ յունարէն, վրացերէն եւ հայերէն գրելը միանգամայն պատճառաբանուած է, յունական խմբագրութեան տեղեկութիւնն այդ մասին՝ ստոյգ:

Այժմ, նկատի ունենալով սոյն եզրայանգումները, համառօտակի անդրադառնանք «Սահմանք»-ի յունարէն եւ վրացերէն խմբագրութիւնների փոխյարաբերութեան հարցին:

Վերելում ասուեց, որ ակադ. Ա. Շանիձէն եւ ակադ. Ս. Ղաուխչիշուիլին յունարէն եւ վրացերէն տեքստերի փոխյարաբերութեան մասին խօսելիս վրացերէն նորայայտ խմբագրութեան յունարէնից տարբերուող մասը, ըստ էութեան, սկզբնական են համարում: Իսկ այդ տարբերութիւնը ամէնից առաջ վերաբերում է «Սահմանք»-ը «նաեւ հայերէն» գրելուն եւ Բակուրեանի հայազգի ստորագրութեանը: Ինքնին հասկանալի է, որ խնդիրը ինչ լեզուով ստորագրելը չէ (եւ նոյնիսկ ոչ էլ հայերէն օրինակի սոսկ գոյութեան հանգամանքը), այլ այն, որ դրանով ճշտուած է հայոց, վրաց եւ յոյների անցեալին վերաբերող կարեւոր մի փաստաթուղթ՝ գիտական բազմաթիւ ու արժէքաւոր տեղեկութիւններով:

Ս. Ղաուխչիշուիլու հիմնական դրոյթներն առկոչեցինք վերելում:

¹ Վրացական խմբագրութեան տօջօջօն յունարէն κύριος (տէր, βλαδυκα) բառի պատճէնումն է: Հին վրացական աստուածաբանական գրականութեան մէջ κύριος-ին սովորաբար համապատասխանում է տօջօջօն: տօջօջօ (սալասելի էր ինքնեան) բառի մէջ նկատելի ընդգծում է աշխարհական տիրոջ հասկացողութիւնը (այս հանգամանքը կարող է օգտակար լինել վրացերէն առկայ խմբագրութեան գոյացման կամ թարգմանութեան ժամանակը ճշտելիս):

² Գրել-կարդալ չիմանալը բացառում է եւ «սաղմոսերգումը» յունարէն:

Գրիգոր Բակուրեանի աղգութեան ու հայոց Պետրիժոնում լինելու հանգամանքների ճշտումից յետոյ, կարծում ենք, ահադ. Ս. Ղաուխչիշուխու վարկածի որոշ հիմնական դրոյթներ ինքնին վերանայւում են, որով հեշտանում է երկրորդ բաժնի քննութիւնը: Մասնաւորապէս, եթէ Պետրիժոնի հիմնադրումից 20-30 տարի յետոյ Պետրիժոնի վանք շտապեցին քաղկեդոնական հայեր, եւ այդ կապակցութեամբ անհրաժէշտ եղաւ լրացնել յունարէն խմբագրութիւնը, ինչպէս Ս. Ղաուխչիշուխին է կարծում, ապա՝

ա) Ինչո՞ւ յունարէն խմբագրութիւնը վերանայուեց, իսկ վրացերէնը՝ ոչ, չէ՞ որ, Բակուրեանի տեղեկութեամբ, յունարէնը գրուել է երկու օրինակ, որից մէկը դրուելու էր Կ. Պոլսի Պանագիոս վանքում: Պետրիժոնի վանահայրը ինչպէ՞ս կարող էր վերանայել իր ձեռքի տակ եղած յունարէն օրինակը, երբ նրա նախագաղափարը Կ. Պոլսում էր՝ յատուկ պահպանութեան յանձնուած:

բ) Գրիգոր Բակուրեանը խստիւ պարտաւորեցնում էր հետեւել իր «Սահմանք»-ին եւ արգելում փոփոխումները: Կյանդզնէի՞ն նրանից 20-30 տարի յետոյ խախտել նրա բաղմիցս կրկնած զգուշացումները (տե՛ս «Սահմանք»-ի յիշատակարանը, § 5):

գ) Եթէ նոյնիսկ ընդունենք, որ «գրուեց հայերէն» արտայայտութիւնը յաւելում է՝ նոր պայմաններով կոչուած, ապա ի՞նչ կապ ունէին այդ պայմանները Բակուրեանի անձնական ստորագրութեան հետ, մի՞թէ նրա պատուիրանները պահող միաբանները 20-30 տարի յետոյ կկեղծէին վանքի հիմնադրի ստորագրութիւնը՝ «հայերէն տառերով», աւելացնելով: Բակուրեանի ստորագրութեան ինչ գրերով լինելը ամենեւին կապ չունի վանքի հետագայ վիճակի հետ:

դ) Յունարէն խմբագրութեան տակ ստորագրել է նաեւ Երուսաղէմի պատրիարք Եւթիմէոսը, ուրեմն իւրաքանչիւր նոր յաւելում պէտք է կատարուէր միայն նոր ընդօրինակութեան մէջ, որը, սակայն, վաւերականութիւն չէր ունենայ, որովհետեւ այստեղ չէին լինի ո՛չ Բակուրեանի, եւ ո՛չ էլ պատրիարքի ստորագրութիւնները, իսկ ընդօրինակելիս էլ իրաւունք չունէին փոփոխումներ անելու, որովհետեւ Բակուրեանը կտակել էր «արտագրուածը վանահայրն ու միաբանները պէտք է ստուգեն եւ ըստ այնմ տանեն», իսկ «գաղափար օրինակը... ոչ մի դէպքում վանքից չի շարժուելու»:

Այս նկատառումները եւ վերելում բերած մեր եզրայանգումները բացառում են յունարէն խմբագրութեան հետագայ «լրացումը» եւ ապացուցում ճիշտ ընդհակառակը՝ այն, որ ինչ-ինչ պատճառներով վրացերէն խմբագրութիւնն է հեռացել նախնական տեսքից: Վրացերէ-

նի ոչ սկզբնական լինելու հետեւանքն են, բացի նշեալ պարագաներից, տեքստում պահպանուած բազմաթիւ յունարանութիւնները, երբեմն նոյնիսկ յունարէն բնագրի ոչ յստակ ընկալումներ: Այսպէս, օրինակ, λογισμον πιττάκιον արտայայտութեան չէզոք սեռի -օռ վերջաւորութիւնը նոյնութեամբ պահպանուած է վրացերէնում (լոցօնօմօնօնօն Վօցնօ), որ յունարէնի բնագիր լինելն է ապացուցում¹:

Ս. Ղաուխչիչուլիին յունարէն տեքստում որեւէ վրացարանութեան հետք չի գտել, բացառութեամբ μηνᾶ (մօնօ) բառի, որ անշուշտ գործածական է եղել խօսակցական լեզու՝ ետարարական շրջանի յունարէնում կամ վրացերէնում, իսկ յունարանութիւններ վրացերէնում չատ:

Անուանի բիւզանդագէտը, կարծում ենք, վերապահութեամբ հանդերձ՝ շատ է ընդգծել μηνᾶ-ի նշանակութիւնը: Թերեւս անհրաժեշտ էր նկատել, որ այն վրացերէն չէ, այլ արաբերէն-պարսկերէն բառ²: Թէեւ յունարէնում ու վրացերէնում օգտագործուած է նոյն բառը, այնուամենայնիւ, իմաստաւորման նկատելի երանգ կայ. յունարէնում բացատրւում է, որ «կանաչ սափօրը» «մինա» է կոչւում: Եթէ յունարէնը կազմելիս վրացերէնն արդէն ձեռքի տակ լինէր, ապա չէինք ունենայ «կոչուող» (անուանեալ, ասուող) բառը³:

¹ Տե՛ս ՅՅԾԹՅՅՅՅ V, էջ 269-270: Լրացուցիչ, օրինակներն ու նկատումները տե՛ս նոյն տեղում, էջ 268-272:

² Տե՛ս Նեֆիսիի բառարան, հտ. V: Հմմտ. Арабско-русский словарь, составил проф. X. K. Баранов, М., 1962, с. 990 (глазурь, эмаль).

³ Մենք մերժում ենք Պետրիժոնի վանքը հայկական յայտարարելու անհիմն պնդումը, որ կատարուեց մեղանում (տե՛ս «Լրաբեր», 1980, N 7, էջ 78): Հայկական վանքում վրաց լեզւի ինքնայատուկ լեզուա-ոճական դպրոց չէր գոյանա: «Տեսութեան» հեղինակը քննադատում է Վ. Յարութիւնովա-Ֆիդանեանի կողմից «Սահմաքի» «յունարէն բնագրի ուսերէն ամբողջական թարգմանութեան» 'ανίδρυτον' ε'θνος-ի ընկալումը, սակայն տասնամեակներ անց ջանում է ներշնչել, թէ այդ ամբողջական թարգմանութիւնն ինքն է կատարել (տե՛ս «Античная древность и средние века», вып. 37, с. 105-139):

ԴԱԽԻԹ ՔՈՐԱՅՐԵՑԻՆ ԵՒ ՆՐԱ «ՊԱՏՃԱՌՆԵՐԸ»

1281 թուականին Բարսեղ Մշակավանցին Հաղբատից բերած հեղինակային ինքնագրից «աստուածազարդ բարունւոյն եւ անյաղթ վարժապետի»՝ Ներսէս Տարօնացու խնդրանքով ընդօրինակում է Դաւիթ Քորայրեցու «Մեկնութիւն Եսայեայ» աշխատութիւնը եւ յիշատակարանում ասում. «Գրեցաւ սա ի յաւրինակէ մեծիմաստ եւ կորովաբան վարդապետին Դաւթա[յ], որ է հանգիստ նորա ի գերահռչակ սուրբ ուխտին Հաղբատ, եւ մականուն Քոփերեցի կոչեն վասն ծնաւղացն անտի լինելոյ եւ նոյն ինքն անտի ծննդեամբ»¹ :

Կարճառօտ այս տեղեկանքը միանգամայն ստուգելի կենսագրական իրողութիւններ է հաղորդում: Հաղբատի դանդաղատան առջեւ, Յովհաննէս Երզնկացու գերեզմանի կողքին, պահպանուել է Դաւթի տապանաքարը՝ «Հաւր մերո[յ] հոգեւորի՝ Դաւթա[յ] վարդապետի է տապանս: Յիշեցէք ի Տէր սուրբս» գրութեամբ² :

Ծննդեամբ Քորայրեցի (Քոփերեցի) լինելը եւս հաւաստի է, քանի որ այդ անունը կրող մենաստանի մօտակայքում բնակավար կայ³ : Ինչ վերաբերում է «մեծիմաստ եւ կորովաբան վարդապետ» որակումին, ապա այդ ճանաչումի ապացոյցներ են ժԲ-ժԳ դդ. մատենագիրների երկերում եւ օժանդակ աղբիւններում նրան առնչուող վկայութիւնները: 1195 թ. Հաղբատում «Ճառք եւ մեկնութիւն համաբարբառ Աւետարանաց Եփրեմի» ընդօրինակող Խաչատուր գրիչը զաղափար օրինակը գտնում է «առ մեծարգի եւ իմաստուն վարդապետին իմոյ Դաւթի»՝ քանիցս կրկնելով այդ պարագան⁴ : Ի դէպ, Դաւթի անունն առաջինն է

¹ «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», ժԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1984, էջ 518: Գրքի անձնանունների ցանկում Դաւիթ Քորայրեցին չի յիշուած:

² Տե՛ս Կարո Ղաֆաղարեան, Հաղբատ, 1963, էջ 234:

³ Առաւել հանգամանօրէն տե՛ս Պարոյր Մուրադեան, Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները, Երեւան, 1977, էջ 153-189:

⁴ «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ժԲ դարեր, աշխատ. Ա. Ս. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 287: Թերեւս Ղ. Ալիշանի երկմտանքի ազդեցութեամբ է (տե՛ս «Հայաստանում», Բ էջ 335-336), որ Դաւիթն այստեղ (էջ 352) կոչուած է «Հաղբատեցի, մեկնիչ» մինչդեռ Ն. Ակինեանը վաղուց հաստատել է նրա նոյնանձ-

Այնուամենայնիւ պիտի կարծել, որ Դաւիթ Քորայրեցին յիշեալ ժողովներում արծարծուող հարցերում, Մխիթար Գօշի հետ միասին, ծայրայեղ պահպանողական դիրքորոշում ունեցողների խմբում չէր: Այդ է յուշում մասնաւորապէս այն պարագան, որ Գրիգոր Տղայի հետ վէճը շարունակողը Սանահնի առաջնորդ Գրիգոր Տուտեորդին էր, եւ ապա՝ 1178 թ. իր ինքնագիր յիշատակարանում, ուր Քորայրեցին պատմում է Գրիգոր Աստուածաբանի ճառախմբերի պատճառներն ու մեկնութիւնները գրելու պարագաների մասին, ակնածութեամբ է խօսում կիլիկեան հայրերի բանիմացութեան մասին: Այստեղ կարդում ենք. «Յոքնախոնջ ջանիւ ի յոլովից քննեալ իմաստնոց զգիրսս զայսոսիկ գեղձամբ սրտի ի գիւտս ճշմարտին մտաց եւ ի վերջէ հանդիպեալ իմ միւսոյ իմաստնացելոյ ի նոյն կրթութիւն, որ ի մէնջ իսկ սորին ըղձիւ ընթացեալ էր մերձ ի սահմանս Ասորւոց եւ Կիւղիկեցւոց Վարդան մակաձայնելոյ, որոյ յոլով ժամանակս ի սակս քննութեան դեգերեալ առ դրան մեծի իմաստնոյ տեառն Ներսէսի Հայւոց վերադիտողի, յորմէ մինչ եհասն առ մեզ՝ վերստին տեղեկացեալ իմ առ ի հաստատութիւն եւ ի լրումն առաջնոյն կրթութեանց, վստահ եղեալ հաւանութեամբ նորին եւ այլոցս իմաստնոց, ձեռն ի գործ արկի ի մասնաւորս տարացոյց մեկնութեան գրոցս երկոցունց մեծին սփեաստոսի Գրիգորի Աստուածաբանի...»¹:

Սէկ այլ յիշատակարանից պարզւում է, որ Գրիգոր Ապիրատի կաթողիկոսութեան (1194-1203) եւ Հաղբատի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսի (1198-1205) օրօք, ուրեմն 1198-1203 թթ. միջոցին Դաւիթը ճանապարհորդել է Կիլիկիա եւ կաթողիկոսից ստացել Յովհաննու Աւետարանի մեկնութիւնը, ապա այն նուիրել Հաղբատի առաջնորդին²:

Կարծում ենք՝ այս իրողութիւնները բաւարար ապացոյց են «Հիւսիսային կողմանց» վարդապետների եւ Կիլիկեան հայրերի միջեւ շարունակուող համագործակցութեան եւ առաւել եւս՝ Քորայրեցու աւանդապահութեան չափաւորութեան վկայութիւն³:

Այսպիսով, Դաւիթ Քորայրեցին Օրբէլեան տոհմի ապստամբութեան ժամանակ (1177 թ.) արդէն հասուն եւ փորձառու մատենագիր

¹ «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ժԲ դարեր, էջ 222

² Տե՛ս Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնաց, Վենետիկ, 1889, էջ 303. Հմմտ. Ն. Ակինեան, նշւ. աշխ., էջ 79-80:

³ Ուրիշ առիթով արդէն գիտարկել ենք, որ Հայոց կրթականութեան այդ երկու թեւերի խիստ հակադրումը միմեանց արդարացուած չէ (տե՛ս «Գանձասար», Դ, Երեւան, 1993, էջ 95-188):

էր, հեղինակ Աստուածաբանի ճառերի մեկնութեան ու պատճառների, մանաւանդ՝ այդ աստուածբութեան հանգամանքների հմուտ վերլուծող եւ ժամանակագիր: Ուստի անհաւանական չէ 1150 թուականին ծնուած լինելու Ն. եպս. Պողարեանի հարցական ենթադրութիւնը¹: Մասնաւոր թուականը յայտնի չէ, պարզ է, սակայն, որ այն Լոռէի եւ Անիի ժողովներից յետոյ է, ուրեմն ԺԳ դ. 10-20-ական թուականներին²:

Հայագէտներ Հ.Ն. Ակիմեանը, պրոֆ. Լ. Մելիքսէթ-Բէկը եւ Հ.Ն. Պողարեանը ճշտել ու կազմել են Դաւիթ Քորայրեցու անունով պահպանուած երկերի ցանկը³: Ամփոփելով առ այսօր յայտնին՝ կունենանք.

1. **Մեկնութիւն Յորայ:** Մատենագիտութիւն կազմողներին բնագիրն անձանօթ է, սակայն նրա գոյութիւնը ենթադրուած է վանական վարդապետի նոյնանուն մեկնութեան մէջ եղած քաղուածներից: Մասնաւորապէս այդ է թելադրուած Գ. Զարբհանալեանի վկայակոչութիւնը⁴:

2. **Մեկնութիւն Եսայեայ:** Գրուած է Պետրոս վրդ. Հաղբատեցու յորդորով, պահպանուել է 1281 թ. ընդօրինակութեամբ՝ կատարուած հեղինակային ինքնագրից⁵:

3. **Ներբողեան գովեստի՝ բան ի սքանչելի վկայն Քրիստոսի Յովսէփ պատանի,** որ յԱյրարատոյ նահանգէն: Գրուած է Մխիթար Գօշի խնդրանքով 1170 թուականից յետոյ⁶:

4. **Պատճառք եւ լուծմունք ճառից Գրիգոր Աստուածաբանի:** Պահպանուել է հեղինակային ինքնագրով:

¹ Նորայր եպս. Պողարեան, Հայ գրողներ, Ե-Ժէ դարեր, Երուսաղէմ, 1971, էջ 365

² Նորայր եպս. Պողարեանը, դարձեալ հարցականով, 1220-ին է դնում:

³ Հ. Ն. Ակիմեան, նշլ. աշխ., էջ 48-68. Ն. Պողարեան, նշլ. աշխ., էջ 266-267. Լ. Մելիքսէթ-Բէկ, վարդապետք Հայոց Հիւսիսային կողմանց եւ նրանց ինքնութիւնը, Տիֆլիս, 1928, էջ 191-196 (վրացերէն):

⁴ Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 734:

⁵ Նկարագրութիւնը տե՛ս Ն. եպս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց..., Զ, էջ 89-93: Յիշատակարանի վերատպութիւնը տե՛ս «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», ԺԳ դար, էջ 518-520: «Սուրբ Գրոց համառօտողաց» ցանկում կարդում ենք. «Զեսային՝ Դաւիթ քահանայն, յետոյ՝ Գեւորգ վարդապետ Երզնկացին» (տե՛ս Յ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Ա, Երեւան, 1954, էջ LXI):

⁶ «Հայոց նոր վկաները», աշխատ. Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 61-64: Պատուիրատուի՝ Մխիթար Գօշը լինելու համոզմունքը յայտնել է Գ. Տէր-Սիրտչեանը («Արարատ», 1897, էջ 41), երկմտում է Ն. Ակիմեանը (նշլ. աշխ., էջ 52, ծնթ.):

⁷ ՄՄ ձեռ. թիւ 5602: Յիշատակարանի վերջին հրատ. տե՛ս «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, էջ 222-225:

5. Պատճառք ճառից Գրիգորի Նիւսացւոյ: Նախորդի հետ ամփոփուած է նոյն ձեռագրում¹:
6. Պատճառք գրոց Բարսեղի Կեսարացւոյ (իմա՛ «Պահոց գիրք», «Հարցողաց գիրք», «Վեցաւրեայ»): Հնագոյն ընդօրինակութիւնը Գրիգոր Աբասեանի «Գիրք պատճառացում» է²:
7. Պատճառք գրոց Փիլոնի: Աւանդուած է նախորդի հետ նոյն ձեռագրում:
8. Պատճառք Սահմանաց գրոց: Աւանդուած է Գրիգոր Աբասեանի «Գիրք պատճառացի» ձեռագրով:
9. Պատճառ Աւագ բարեկենդանին: Քորայրեցու գրչին պատկանելն անկասկած է նկատուած Ն. Ակինեանը՝ ձեռագրի ներկայութիւն ենթադրելով Ս. Ղազարի Մխիթարեան մատենադարանում³:
10. Պատճառ Նաւակատեաց եկեղեցւոյ: Ճանաչելի է Գ. Զարբհանաւանի յղմամբ⁴:
11. Լուծմունք Դիոնիսիոսի գրոց: Քորայրեցուն է յատկացնում Ն. Պողարեանը՝ հիմք ունենալով «Ի Դաւթէ եւ Յակոբայ՝ յիմաստուն վարդապետաց» ցուցումը եւ, հաւանաբար, իրենց հաւաքածոյի նոյն թիւ 172 ձեռագրում գտնուելու իրողութիւնը:
12. Որքանութիւն թուոցն նահապատացն եւ առաջնորդացն Իսրայէլի՝ յԱբրահամէ մինչեւ ի վերջին գերութիւնն Երուսաղէմի: «Հաւաքմունք ի Դաւթայ վարդապետէ Քորայրեցի կոչեցելոյ» վերտառութիւնը եւ երկու ձեռագրով աւանդուած լինելը հեղինակային պատկանելիութեան երաշխիք են⁵:
13. Յաղագս պատառման Զատկին: Ն. Պողարեանի ծանօթութեան համաձայն՝ գրուած է 1197 թուականի մօտ տարիներին, Գրի-

¹ Ներկայացուած է նաեւ Սրբոց Յակոբեանց մատենադարանի թիւ 172 եւ Վիեննայի Մխիթարեան մատենադարանի թիւ 47 ձեռագրերով: ՄՄ-ում կայ հինգ ձեռագիր (թիւ. 1879, 1897, 4150, 4765, 5254), որոնց հիմամբ Կիմ Մուրադեանը կազմել է համահաւաք բնագիր:

² ՄՄ ձեռ. թիւ 1879, նաեւ՝ Սրբոց Յակոբեանց մատենադարանի ձեռ. թիւ 172, Վիեննայի Մխիթարեան մատենադարանի ձեռ. թիւ 47:

³ Ն. Ակինեան, նշւ. աշխ., էջ 66-67:

⁴ Գ. Զարբհանաւան, նշւ. աշխ., էջ 781:

⁵ Ըստ Ն. Ակինեանի՝ Սեբաստիայի Ս. Նշան վանքի հաւաքածոյ ձեռ. թիւ 221, էջ 510-525 (տե՛ս Ն. Ակինեան, նշւ. աշխ., էջ 83): Սակայն յիշեալ ձեռագիրը միանգամայն այլ բովանդակութիւն ունի (տե՛ս Թորգոմ արքեպս. Գուշակեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիայ, ՀԱ, 1958, էջ 205-206), Սրբոց Յակոբեանց մատենադարանի ձեռ. թիւ 743 (տե՛ս Նորայր եպս. Պողարեան, Հայ գրողներ, էջ 267, հմմտ. նոյնի՝ Մայր ցուցակ ձեռագրաց..., Գ, Երուսաղէմ, 1968, էջ 190):

գոր Տուտեորդու խնդրանքով¹ :

14. Պատճառ Դաւիթի Փիլիսոփայի Ի սուրբ Խաչն ներբողեանի: Երկիս ներկայութիւնը հաւաստել է Գ. ա. ք. Աղանեանը՝ Հաղբատի Չառնի կոչուող այրից գտնուած ձեռագրական հատակոտորները թուարկելիս² :

15. Գանձք: Դաւիթ Քորայրեցին, իբրեւ դանձասաց-տաղասաց, յիշատակուած է Արիստ. Տեւկանցի «Հայերգի» առաջաբանում (էջ Ժ): Ակիներեանը կասկածում է, բայց չի մերժում³ :

16. Ի բանն Մաղաքիայ: Իբրեւ Դաւիթ քահանայի հեղինակութիւն առկայ է Ս. Ղաղարի Մխիթարեան մատենադարանի ԻԱ ճառընտրում (էջ 105): Քանի որ Եսայիայի մեկնութեան մէջ եւս Դաւիթ Քորայրեցին ներկայանում է «Դաւիթ քահանայ» կոչումով, Ն. Ակիներեանի վերագրումը պատճառաբանուած պիտի նկատել⁴ :

17. Թելադրութիւն յԱւետարանն Մատթէի՝ ի պէտս ատենաբանութեան Դաւիթի վարդապետի: Արձանագրուած է Ս. Ղաղար մատենադարանի Զ ճառընտրում (էջ 796): Քորայրեցուն է յատկացուած Գ. Զարբհանալեանի հիմամբ⁵ :

Այս ցանկը, անշուշտ, վերջնական չէ. ճշգրտումներ կարող են լինել լրացման կամ պակասեցման առումով, սակայն միանգամայն բաւարար է՝ գրիչների տուած «մեծիմաստ եւ կորովաբան մեծարգի եւ իմաստուն» որակումներն արդարացուած նկատելու համար⁶ :

Թուարկուած աշխատութիւնները ժանրային խմբաւորմամբ կարելի է դասակարգել հետեւեալ կերպ՝ մեկնութիւններ (1, 2, 11), ներբողներ (3), պատճառներ (4-10), ժամանակագրութիւններ (12 եւ

¹ Ն. եպս. Պողարեան, Հայ գրողներ, էջ 367, Սրբոց Յակոբեանց մատենադարանի ձեռ. թիւ 3614:

² Տե՛ս Գիւտ ա. ք. Աղանեանց, Հնից-նորից (հնախօսական ուղեւորութիւն), «Լուսմայ», 1900, Ա, էջ 252-254. Հմմտ. Ն. Ակիներեան, նշւ. աշխ., էջ 81-82:

³ Ն. Ակիներեան, նշւ. աշխ., էջ 80:

⁴ Նոյն, էջ 50-51

⁵ Գ. Զարբհանալեան, նշւ. աշխ., էջ 702. Ն. Ակիներեան, նշւ. աշխ., էջ 51

⁶ Մենք բաղմիցս առիթ ենք ունեցել շեշտելու, որ հայոց մատենագրութեան պատմութիւնը միայն «գեղեցիկ գրականութեան» շրջանակներում ամփոփելը ո՛չ արդարացուած է եւ ո՛չ էլ հեռանկարային: Ակադ. Մ. Աբեղեանն այդպէս է վարուել իր «Հայոց հին գրականութեան պատմութիւնը» օր ծերութեան եւ գաղափարական առանձնայատուկ պարագաներում գրելու պատճառով, ուստի, ի շարս բազում այլ մատենագիրների, Դաւիթ Քորայրեցին եւս նրա գրքում յիշատակուած անգամ չէ: Յաւօք, մերօրեայ հայոց հին գրականութեան պատմութիւնը շարունակում է հետեւել «գեղեցիկ գրականութեան» պարտադրուած աւանդոյթին՝ յաճախ հետադատութիւնը փոխարինելով վերարտադրութեամբ ու նկարագրումով:

1178 [թ. յիշատակարան), գանձեր (15) եւ խրատականներ (16, 17):

Քանի դեռ այս աշխատութիւնների մեծ մասը տակաւին հրատարակուած եւ ուսումնասիրուած չէ, դժուար պիտի լինի ճանաչել Դաւիթ Քորայրեցու տեղն ու դերը հայ մատենագրութեան պատմութեան մէջ: Յիշենք, սակայն, որ հրատարակուած յիշատակարանը ժամանակագրական, տեղագրական ու պատճառական բաղում ճշգրտումներ բերեց Հայոց ու Վրաց պատմութեան այդ կարեւոր անցուդարձն ուսումնասիրելու համար՝ քանիցս յատուկ քննութեան նիւթ դառնալով:¹ Այնուհետեւ, եթէ իսկ պարզուի, որ Քորայրեցու լուծումը-մեկնութիւնները ճանաչողական այն կշիռը չունեն, ինչ նրան նախորդած մեկնիչների երկերը՝ տեսական աստուածաբանութեան առումով, ապա վերստին չպիտի մոռանանք, որ Քորայրեցին հետապնդում է գերազանցապէս ուսուցողական նպատակ՝ միջնորդ դառնալով եկեղեցու ճանաչուած հայրերի եւ դպրութեան հմտացողների միջեւ: Հէնց այս խնդիրն է, որ նրան մղել է սկզբնաւորող դառնալու մատենագրական մի նոր բնագաւառի՝ պատճառների գրութեան: Գրիգոր Աբասեանի «Պատճառաց գրքի» կապակցութեամբ Յ. Տաշեանը վաղուց նկատել է, թէ այն «բովանդակ հայ մատենագրութեան մէջ եղական երեւոյթ մըն է եւ մատենախօսութիւն մը իւր ժամանակին տեսութեանց համաձայն՝ Սուրբ Գրոց եւ եկեղեցւոյ գլխաւոր վարդապետաց գրութեանց վրայ...»²: Եւ այդ «եղական երեւոյթի» փաստական հիմնադիրը մեղանում Դաւիթ Քորայրեցին է, որովհետեւ «Պատճառաց գրքի» երկրորդ կէսի (նուրբ գրեանք) մի նշանակալի մասը հէնց նրա գրած պատճառներն են, որ խնամքով հաւաքել, դասդասել ու ժողովածու է մուծել նրա կրտսեր ժամանակակից Գրիգոր Աբասեանը³:

¹ Տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Ա., Անթիլիաս, 1951, էջ 469-474. Վ. Յակոբեան, Դաւիթ Քորայրեցու յիշատակարանը, Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1952, թիւ 8, էջ 113-120. Գուրամ Մայսուրաձէ, Մի հայկական աղբիւր Դեմնա արքայորդու ապստամբութեան մասին, «Վրաստանը Ռուսթաւելու ժամանակ», Թբիլիսի, 1966, էջ 253-266 (վրացերէն). П. М. Мурадян, Об издании и переводе одного отрывка из помятной записи Давида Кобайрского, ՊԲՀ, 1973, թիւ 2, էջ 183-188. Հ. Գ. Մարգարեան, Հիւսիսային Հայաստանի եւ Վրաստանի ժԲ դարի պատմութեան մի քանի հարցեր, Երեւան, 1980, էջ 175-195:

² Սրբազան պատարագամատոյցք Հայոց՝ քննութեամբք, նախապիտելեօք եւ ծանօթութեամբք ի հ. Յովսէփայ վ. Գաթրճեան, հրատարակեալ հանդերձ յաւելուածովք ի հ. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1897, էջ 178:

³ «Պատճառների» կարեւոր մի խումբ հրատարակել է վաղամեռիկ եղբայրս՝ հայագիտութեան դոկտոր Կիմ Մուրադեանը («Գանձասար», Ե): Ինչպէս վերջերս տեղեկացայ, այդ գործին նոր «լծակիցներ» են յայտնուել: «Պատճառաց գրքի» եւ նրա

Աշխատութիւնների բերուած ցանկից պարզ երեւում է, որ Դաւիթ Բորայրեցին մասնաւորապէս հետամուտ է հայրախօսական երկերի «պատճառների», ասել է՝ հեղինակային պատկանելիութեան, գրութեան շարժառիթների, նպատակների եւ բովանդակութեան խնդիրները քննելուն: Այսպէս, օրինակ, Բորայրեցու օրօք գրականութեան մէջ կասկածներ են եղել «Առ Մելիտոս Անտիօքացի» ճառի հեղինակային պատկանելիութեան շուրջ, եւ այդ ճառին վերաբերող «Պատճառը» նա նուիրել է յիշեալ խնդիրը պարզելուն՝ խորագրում իսկ գրելով. «Պատճառ ճառին, որ առ Մելիտոս Անտիօքացի, զոր ոմանք Գրիգորի Նիւսաց[ւ]ոյ ասեն եւ ոչ Գրիգորի Աստուածաբանի: Այլ ես Աստուածաբանի ասեմ, զի թէ չէր սորա, ի սորա գիրքս ոչ էր եղեալ»¹: Արտաբանի ասեմ, զի թէ չէր սորա, ի սորա գիրքս ոչ էր եղեալ»¹: Արտաբանի նշաններից յետոյ նա անցնում է «ճառի խորհրդին»՝ բովանդակութեան վերլուծութեանը, եւ պարզաբանում նրա արտասանութեան առիթը, որ է Կոստանդնուպոլսի Բ տիեզերաժողովի աւարտին Մելիտոսի յանկարծական մահը. «Եւ ապա հարկ արարեալ Գրիգորի հարքն սուրբ եւ թէոզոս թագաւորին՝ բանալ զչնորհայից բերանն եւ խաւսել բանս գովութեան վասն ննջեցելոյն, քանզի առաւել ճոխ էր ի բանին զիրս մեծն Գրիգորիոս, որ եւ յայսմ ճառի խաւսել սկսաւ բանս ողորմագինս եւ ողբերգականս»²: Մէկ այլ «Պատճառում» («Առ Գրիգոր Նիւսացի՝ մերձ կացելոյ Բարսղի եւ ի վկայսն») Նիւսացու ձեռնադրութեան հանգամանքները ներկայացնելիս, թէ ինչու ձեռնադրողը Աստուածաբանն էր, եւ ոչ եղբայր Բարսեղ Կեսարացին, Բորայրեցին ամփոփում է. «Եւ յոմանց ասի, թէ վասն աւագ լինելոյն Նիւսացւոյ պատիւ արարեալ ձերութեանն, վասն այն ի նմանէ (իմա՛ ի Գրիգորէ - Պ. Մ.) էառ զձեռնադրութիւնն: Բայց էր աւրն այն տաւն վկայից, թուի թէ շաբաթ էր աւրն, քանզի այնպէս է յառաջ կարգեալ ի Նիկիայ, զի շաբաթ աւր ի բոլոր տարին, զատ ի տէրունական տաւնիցն, զայլն հասարակ մարտիրոսաց տաւնէին, վասն այն ի կատարածի ճառիս յիշէ զմարտիրոսսն, որ վկայեցին վասն Բրիստոսի»³:

Հազիւ թէ անհրաժեշտութիւն զգացուի պատճառաբանել այն կա-

կադմոզի մասին տե՛ս Հ. Ն. Ակինեան, Մատենագրական հետազոտութիւններ, Ա, էջ 1-43:

¹ ՄՄ ձեռ. թիւ 1897, էջ 94ա: Կիւմ Մուրադեանի հրատարակումը տե՛ս «Գանձասար», Ե (1994), էջ 200-201:

² Ճառիս մասին տե՛ս Կ. Մ. Մուրադեան, Գրիգոր Նիւսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս Անտիօքացի» ճառի հայերէն թարգմանութիւնը եւ Մովսէս Խորենացին, ՊԲՀ, 1987, թիւ 2, էջ 139-149

³ ՄՄ ձեռ. թիւ 4150, էջ 9ա-10ա: Վկայակոչուած երկու «Պատճառը», ի թիւս այլոց, հրատարակութեան է պատրաստել Կիւմ Մուրադեանը:

րեւորութիւնը, որ ներկայացնում են միջնադարեան այս կարգի նիւթերը, առաւել եւս եթէ դրանք հաւաքական են՝ իրրեւ հայրախօսական մատենագրութեան պատմութիւն, իսկ Քորայրեցու «Պատճառները» ճիշտ այդպիսին են: Ուստի երեք մեծ կապադովկացիների՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստուածաբանի եւ Գրիգոր Նիւսացու գրական ժառանգութեան ուսումնասիրութեանն ու գիտական հրատարակմանը տասնամեակների ամէնօրեայ տքնաջան աշխատանք նուիրած եւ աներկբայի կարողութիւն ցուցաբերած Կիմ Մուրադեանը չպիտի վարանէր դրանց վերաբերող «Պատճառների» (լուծմունք-մեկնութիւնների) քննութեանն ու հրատարակմանը ձեռնամուխ լինել: Եւ քանի որ Դաւիթ Քորայրեցու գրական վաստակի նշանակալի մասը յիշեալ երեք հեղինակների ժառանգութեանն է նուիրուած, օրնիրուն ձեռագրեր պրպտող գիտնականը կարելի նկատեց ստանձնել Դաւիթ Քորայրեցու ողջ ժառանգութեան հրատարակման ոչ դիւրին գործը: Սակայն «*Ars longa, vita brevis est*» («Արուեստը/գիտութիւնը երկար է, կեանքը՝ կարճ»), եւ բազում այլ ծրագրումների հետ «Դաւիթ Քորայրեցու մատենագրութիւնն» էլ կիսաւարտ մնաց¹: Ինչպէս երեւում է, Բարսեղ Կեսարացու «Պահոց գիրքը» գիտական հրատարակութեան պատրաստելիս աշխատասիրողը նկատի է առել այդ գրքի ճառերին վերաբերող «պատճառների» ընձեռած նիւթը եւս, ուստի դրանք նոյնպէս ի հրատարակութիւն է ընդօրինակել-հաւաքել՝ ըստ առ այսօր յայտնի հնագոյն եւ լաւագոյն ձեռագրի²:

Առաջին իսկ ճառի ներածական «Պատճառից» յայտնի է դառնում, որ Քորայրեցին լաւածանօթ է ս. Բարսեղի՝ հայերէնով առկայ ժառանգութեանը. «Ասաց սա (իմա՛ ս. Բարսեղը – Պ. Մ.) երիս գիրս. առաջին՝ դայս, որ առաջին եղեալս է (իմա՛ Գիրք պահոց – Պ. Մ.), ասաց յաւուրս աղուհացիցն յառաջին շաբաթն եւ դայլ ճառսն, որ ի սա շարայարեալ են, յայլ եւ յայլ ժամու ասացաւ: Եւ յետ այսր մատենի ասաց զՀարցողացն՝ յաւուրս Քառասնորդացն մինչեւ զմեծ աւր Յարութեան Տեառն մերոյ: Եւ երրորդ՝ Վեցաւրէն յայլում ամի ի զատկի շաբաթուն ասաց, որ եւ յաւարտման նորին գրոցն ինքն վերափոխեցաւ առ Քրիստոս»³:

¹ Կիմ Մուրադեանի մասին եւ աշխատութիւնների մատենագրութիւնը տե՛ս «Լրաբեր» հաս. գիտ., 1971, թիւ 5, էջ 173-175. ՊԲՀ, 1992, թիւ 1, էջ 236. «Էջմիածին», 1992 Ա-Գ, էջ 99-101, REArm. t. XXXIII, Paris, 1992, p. 627-631. «Գրական թերթ», 1992, 16 հոկտ.:

² ՄՄ ձեռ. թիւ 1879 («Գիրք պատճառաց», ժԳ դար):

³ Ի դէպ, «Վեցաւրէն» արդէն լոյս է տեսել Կիմ Մուրադեանի քննական հրատարակութեամբ (Երեւան, 1984) եւ արժանացել դրուատական գնահատութեան (միակ բացառութիւնը ամենեցուն ընդդիմախօս Մարտիրոս Մինասեանն է), «Պահոց

Այս դէպքում էլ Քոբայրեցու հարցադրումն անփոփոխ է՝ ե՞րբ եւ ի՞նչ պարագաներում է գրուել «Պահոց գիրքը»։ «Բայց չերեւի յումեքէ սա խնդրեալ, թէպէտ եւ ասի յոմանց, թէ որ էր յայն աւուրսն փակակալ եկեղեցւոյն Կեսարու եւ յետոյ եպիսկոպոս տեղոյ ումեմն Պետրոս՝ նորին եղբայր կրտսեր, եւ այլք թէ՛ ժողովրդականքն խնդրեցին։ Բայց ոչ է ստոյգ այնոքիկ, այլ ինքն յինքեանէ շարժեալ Հոգւովն ասաց, վասն զի առաջնորդ էր յԱստուծոյ կարգեալ սահմանադրութեան եւ կանոնաց եկեղեցւոյ եւ տեսանէր զժողովուրդն ստունգանող պատուիրացն Աստուծոյ եւ լուծիչ կանոնական սահմանադրութեան, մանաւանդ յոր կորստութիւն եւ ի շուայտութիւն արբեցութենէ թաւալեալ»։

Քոբայրեցու համոզմամբ՝ «պահք զհուր շիջուցանէ, զառիւծուց խնու զբերանս եւ զաւրհաս մահու ի կեանս դարձուցանէ աղաւթից լծակցութեամբ եւ զցասումն սատակման ի թշնամիսն դարձուցանէ», իսկ այս ամէնի «զորպիսութիւն ուսցիս ի կարգէ վարդապետութեանս»։

Այլեւս պարզ է, որ «Պատճառի» խորագրում եղած «ասացեալ ի հմտութիւն վարժողաց» մասնաւորեցումը վերաբերում է իր իսկ հեղինակած պատճառներին եւ ոչ անպայմանօրէն ս. Բարսեղի «Պահոց գրքին»։ Վերջինս «որպէս մարդիչք զըմբիշս կրթական արուեստիւ յորդորամիտս պատրաստեն, զնոյն առնէ եւ սուրբս այս, զի յանդիմանական բանիւք, իբրու կծու դեղովք, վարի առ ի բժշկութիւն եւ դասալիք ըմբշացն զտարագրիլն ի պսակացն ասէ եւ ծանրագլխոցն ի գինոյն ասէ, յորո՞ւմ դասու կարգեցից զձեզ ի մուտ պահոցս՝ յարբեցելո՞ցն, թէ՞ ի զգաստիցն»։ Հեղինակային խօսքն անմիջական է՝ հասցէագրուած իր աշակերտներին, ապա նաեւ ընթերցողներին։ Ընդամին, շարադրանքի լեզուն ու ոճը պարզ են եւ հասկանալի՝ առօրեան կենդանի բնութագրող բառերով, օրինակներով ու դարձուածքներով համեմուած։ Քոբայրեցին ինքն էլ է հետեւում ս. Բարսեղի շարադրանքի եղանակին, ուր, իր իսկ խօսքերով, «թէպէտ սուղ է ի բայս բանագողից, այլ հղաւր է ի պարփակումն բոլոր առաքինութեան»։ Ըստ երեւոյթին, այդ յատկանիշներն ամփոփւում են «մասնաւոր տարացոյց մեկնութիւն» եղրով, որ յիշատակարանում գործածում է Քուբայրեցին։

Դաւիթ Քոբայրեցու «Պատճառների» փունջը մեր առջեւ բացում է միջնադարեան վարդապետանոցի ուսուցման ծալքերից մէկը՝ բարո-

գրքի» հրատարակութիւնը սիրայօժար ստանձնել է ս. Էջմիածնի հրատարակչութիւնը, իսկ «Հարցողացը» լոյս տեսաւ հայագէտ Գաբրիէլա Ուլուհօճեանի երկարամեայ եւ քրտնաթոր աշխատասիրութեամբ։

յական աստուածարանութեան աւանդման միջոցն ու եղանակը: «Պատճառներն» ընթերցողին ուղեկցում են դէպի անխառն քրիստոնէական բարոյականութիւն, քաջալերում խոնարհն ու բարին, կրթում ճաշակը, չափաւորում երեւակայութիւնը, դասում բարկացողին, մերժում մախանքը, զգուշացնում ամենայն խորհրդի ունկնդիր լինելուց, «զի ի խորհրդոց սկսանին սխալանք»:

Հարկաւ, բարոյական եւ բանական այդ իսկ դաստիարակութեան թելադրանքով է, որ Դաւիթ Քոբայրեցու աշակերտներն իրենց ուսուցչին մտաբերում են «մեծիմաստ եւ կորովաբան, մեծարդի եւ իմաստուն» որակումներով: Լատիններն ասում էին. «Երջանիկ է նա, ով ըմբռնում է իրերի պատճառները»: Դաւիթ Քոբայրեցին քրիստոնէական մատենագրութեան պատճառներն ըմբռնող մեր միջնադարեան երջանիկներից մէկն է, նեղ իմաստով թերեւս առաջինը:

**ԴԱԻԱՆԱԿԱՆ
ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ
ԱԶԳԱՄԻՋԵԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ
ԳԱՂԱՓԱՐԸ ԺԲ-ԺԳ ԴԱՐԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

«Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք,
զՔրիստոս զգեցեալ էք, չիք խտիր ո՛չ հրէի
եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի,
ո՛չ արուի եւ ո՛չ իգի, զի ամենեքեան դուք մի
էք ի Քրիստոս Յիսուս» [Գաղ. Գ 27-28]:

Տարիներ առաջ հայագիտութեան անխոնջ փաստակաւոր Յակոբ Անասեանը Մատենադարանի ձեռագրերից մէկում (թիւ 8356, ընդօրինակուած հեղինակային ինքնագրից 1322 թ. Կիլիկիայի Կամրիկ անապատում) ի յայտ բերեց, հրատարակեց եւ վերահրատարակեց Վարդան Այգեկցու գրչին պատկանող եւ մատենագրութեան պատմութեան համար առանձնակի կարեւորութիւն ներկայացնող մի թուղթ՝ «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն»¹: «Շատահաջ քննողք» նորահնար բնորոշումը վերաբերում է Ասորիքի Դլուք գաւառի հայ, ասորի եւ յոյն այն հաւատացեալներին, որոնք բռնուած են ազգային-դաւանական անհանդուրժողականութեան մոլուցքով, «քանզի Հայն ասէ, թէ՛ Ես եմ լաւ եւ ընտիր քրիստոնեայ, եւ հայհոյէ անմտութեամբ զՀոռոմն եւ զԱսորին: Եւ Հոռոմն ասէ հպարտութեամբ, թէ՛ Ես եմ ազգառաջին, սուրբ եւ զիտնական եւ ուղեղ հաւատ, եւ Հայն եւ Ասորին ոչ են ի կարգս քրիստոնէութեան եւ ոչ ունին առ Աստուած բաժին, եւ այսպէս նախատէ եւ հայհոյէ: Իսկ Ասորին ասէ ծածուկ նենդութեամբ եւ կեղծաւորութեամբ, թէ՛ Ես եմ ընտիր քրիստոնեայ եւ ունիմ անարատ հաւատ եւ սուրբ կարգ, եւ Հոռոմն եւ Հայն լցեալ են չար հեր-

¹ Յ. Անասեան, Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ, «Բաղմավէպ», 1968, էջ 273-277. նոյնի՝ Վարդան Այգեկցին՝ որպէս համերաշխութեան գաղափարախօս, «Էջմիածին», 1969, է-Ը, էջ 56-58. նոր վերահրատարակութիւն տե՛ս դոկտ. Յ.Ս. Անասեան, Մանր երկեր, Լոս Անջելէս, 1987, էջ 217-220:

ձուածաւք, աւտար են Աստուծոյ եւ զՅիսուս Քրիստոս ոչ ճանաչեն եւ դժոխոց են ժառանգ»:

Եւ մինչ ամէն մէկը դրադուած է իր հաւատն ու կարգը գովելով՝ «Գայ խալիֆայն ի Բաբելոնէ, եւ խատին՝ ի Հալալայ, եւ նախատեն զձեզ... եւ ասեն, թէ՛ դուք՝ ամենայն քրիստոնեայքդ, աւտար էք յԱստուծոյ եւ ոչ ճանաչէք զՆա...»:

Այգեկցին յանդիմանելով խրատում է եւ պարտաւելով յորդորում, թէ՛ դուք բոլորդ՝ Հայ, Ասորի, Յոյն, «ի մի Քրիստոս կոչեցայք եւ ի մի աւագան մկրտեցայք, ի մի Հայրը եւ ի մի Սուրբ Հոգի լուսաւորեցայք եւ դարձեալ նախատէք զիրար եւ հայհոյէք...»¹: «Ընդէ՞ր ոչ հայիք ի տունն Մայիմնաց, թէ քանի ազգ են բաժանեալ լեզուաւք եւ կան խաղաղութեամբ եւ սիրով առ իրար՝ ի մի սահման եւ ի կարգ, դոր առաջնորդն իւրեանց Մահմէտ, կարգաւորեաց եւ սահմանեաց զնոսա»:

Իրատես Այգեկցու դատողութեան հիմքում ժամանակի սթափ զգացողութիւնն է դրուած... «Ո՛վ յիմարք եւ անմիտք, չգիտէ՞ք, որ այս չէ ժամ զհաւատքս քննել կամ հաստատել... այժմ որ ունի, այն է, զինչ որ ունի»: Ուրեմն, աւելորդ է վիճարկել, թէ ո՞վ աւելի առաջ «ձանեաց զՔրիստոս», ո՞վ է անարատ հաւատով եւ կարգով. «Ապա աղաչեմ զձեզ, որդեա՛կք, ամէն ազգ կալէք զիւր եկեղեցւոյն սահման եւ սովորութիւնն եւ զկարգն՝ զպատարագելն, զտաւնելն, զպահքն, զմկրտելն, եւ առ իրար սիրով կեցիք եւ խաղաղութեամբ, որ Քրիստոս հանգչի առ ձեզ, եւ վասն կարգաց եկեղեցւոյ մի՛ քննէք եւ բանավէճ լինիք եւ անհանգիստք»:

Խռովարարները՝ Հայ, Յոյն, թէ Ասորի, Այգեկցու համոզմամբ, սատանայի բերանով են խօսում, մանաւանդ որ «սատանայ բնաւ ոչ եթող եկեղեցի եւ ազգ եւ մարդ անարատ եւ անվնաս, այլ դեղեալ ապականեաց զամենայն ազգ եւ զեկեղեցի», «Եւ թէ կայ իրք մի չար յեկեղեցիս քրիստոնէից, զայն չհամարի նոցա ի մեղս, զի մարդիկ են տկարամիտք, եւ սատանայ խաբող է եւ նենգաւոր...»:

Այգեկցին եւս կ'ուզենար, որ՝ «ամենայն ազգ քրիստոնեայ թող յիւր ազգէն առնեն խնամութիւն, որ չխառնակի մի ազգն ի միւսն, եւ յիւր ազգն մկրտի եւ հաղորդի, եւ այս բարի էր»: Սակայն այլ է իրականութիւնը. «Եւ ահա, ի Կեսարիա եւ ի Մելիտինի, յՈւռհայ եւ յԱնտիոք եւ ի մեր աշխարհս Կիւլիկեցոց անխտիր կու խնամենան եւ կու առնուն հարսն զդատերս միմեանց Ասորին եւ Հայն եւ Հռոմն»,

¹ Այստեղ ձեռագրի 153v եւ 154r էջերի արանքից մէկ թերթ ընկած է, ուստի բնականոն շարադրանքն ընդհատում է, որ եւ նկատուած է հրատարակչի կողմից:

ուստի մի՛ յանդիմանէք ու վերամկրտէք իրար, այլ «պաշտեցէ՛ք զամենայն ազգ զիւր կարգն եւ զսահմանն եւ զիւր եկեղեցին»:

Այս ամէնը, յիրաւի, ազգամիջեան համերաշխութեան գաղափարի դրսեւորման միջնադարեան մատնացուցելի նմոյշ է եւ կիլիկեան Հայաստանում նախորդ սերնդի մեծերի՝ Շնորհալու, Լամբրոնացու, Գրիգոր Տղայի մտորումների եւ համոզմունքների ակնյայտ զարգացում: Խօսքն աւետարանական համերաշխութեան ու մարդկայնութեան մասին չէ [Գաղ. Գ. 27-28, Հմմտ. Ա. Կոր. ԺԲ 13], այլ՝ բազմազգի եւ այլադէն պատմական միջավայրում գաղափարական դիրքորոշման:

Այգեկցու սոյն թղթի, ինչպէս նաեւ «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ» ժողովածուի յայտնաբերումով Յ. Անասեանը վարդան Այգեկցու ժառանգութեան ուսումնասիրութեան մարզում Ն. Մառից յետոյ մի նոր շրջափուլ բաց արեց եւ մէկ անգամ եւս ապացուցեց, որ հայոց մատենագրութեան ուսումնասիրութիւնը համամարդկային քաղաքակրթութեան արժէք ներկայացնող նոր էջեր կարող է բացայայտել¹:

Յ. Անասեանն, այնուամենայնիւ, իր առջեւ խնդիր չունէր պարզել, թէ 1210 թ. յետոյ (բայց՝ մինչեւ 1215 թ.) Այգեկցու դրած այս թուղթն իր արծարծած հարցերով եւ աշխարհայեցութեամբ զուտ կիլիկեան միջավայրի՞ ծնունդ է, թէ՞ համերաշխութեան այդ վարդապետութիւնը համակել էր նաեւ Արեւելեան Հայաստանի երեւելի մատենագիրներին: Ասել է թէ՛ անհրաժեշտ էր պարզել. սա մի մասնաւոր դէպք է՝ պայմանաւորուած կիլիկեան Հայաստանի եւ Ասորիքի օտարազգի համայնքների միջեւ ստեղծուած դաւանական կացութեամբ, թէ՞ աշխարհայեցքային նոր դիրքորոշում առհասարակ: Առիթը ներկայացել էր՝ հաստատելու կամ մերժելու դարասկզբին Ն. Աղոնցի առաջադրած այն դրոյթը, ըստ որի՝ ԺԲ-ԺԳ դդ. հայոց եկեղեցական գրականութիւնն իր հարստութեամբ մասամբ պարտական է «այն կուսակցական քաջջուկներին ու ընդհարումներին, որոնք տեղի էին ունենում հայոց կրթականութեան երկու կենտրոնների միջեւ», այսինքն՝ կիլիկեան եւ արեւելահայաստանան: Ըստ Ն. Աղոնցի գնահատութեան՝ «միարարութեան միտքը համակրութիւն էր գտնում եկեղեցու այն ներկայացուցիչների քով, որոնք դաստիարակուել էին կիլիկեան նոր ոլորտում՝ առլեցուն արեւմտեան ոգով», մինչդեռ «հիւսիսային (կամ արեւելեան - Պ. Մ.) կողմանց» հայոց վարդապետները «վարդապետու-

¹ Չարմանքով ու ավստոսանքով պիտի նշենք, որ Այգեկցու այդ նորայայտ աշխատութեան հրատարակութեան տիտղոսաթերթի վրայ չի նշուած այն յայտնաբերողի եւ աշխատասիրողի՝ Յակոբ Անասեանի անունը (տե՛ս Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, Երեւան, 1998):

թեան հարցում բռնել էին ծայրայեղական դիրք՝ կիլիկեցիների լիբերալիզմին հակադրելով Սանահնի դպրոցի նուիրուածութիւնն անցեալի պատգամներին»¹ : Այս բնութագրութեան ազդեցութեամբ հայ մատենագրութեան կիլիկեան լիբերալ թեւին հակադրուեց «Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց» պահպանողական թեւը², որ ներկայացնում են Գրիգոր Տուտեորդին, Դաւիթ Քորայրեցին, Մխիթար Գօշը եւ այլք : Վարդան Այգեկցու նորայայտ թուղթը լիովին արարացնում է «լիբերալիզմ» որակումը՝ նշանակալիօրէն ընդլայնելով այդ եզրի դրական ընդգծումը, բայց, ինչպէս կը տեսնենք ստորեւ, ամենեւին չի ընդգծում միւս թեւի «պահպանողականութիւնը» :

* * *

Վարդան Այգեկցու անմիջական գաղափարական նախորդը նրա իսկ աւագ ժամանակակից Ներսէս Լամբրոնացին է : Տարսոնի երիտասարդ եպիսկոպոսի 1177 կամ 1179 թ. արտասանած «Ատենաբանութիւն վասն միութեան եկեղեցւոյ»³ ճառը հայոց քաղաքական, մշակութային եւ դաւանական պատմութեան առաւել նշանակալի ձեռքբերումներից է՝ արժանի մասնաւոր ուշադրութեան մեզ հետաքրքրող ազգամիջեան համերաշխութեան եւ դաւանական հանդուրժողականութեան կտրուածքով եւս : 32 եպիսկոպոսների ներկայութեամբ⁴ տուած այդ ճառի շատ դրոյթներ չեն տեղաւորուում միջնադարեան դպրութեան՝ դարերով մշակուած ու որդեգրուած պատկերացումների շրջանակներում : Ահաւասիկ մի քանի նմոյշ.

1) «Մի գլխոյն է անդամ Սպանիա եւ Արեւելք, Յոյնք եւ բարբարոսք, Հայք եւ Վիրք, Ասորիք եւ Եգիպացիք : Ի նա են յարեալ ամենեքեան հոգւով եւ զնայ զգեցեալք հաւատովք» (էջ 35)⁵ :

2) «Նա թէ եւ առ հաւատոյ բան լսեն հաւանական խոստովանու-

¹ Н. Адонц, Армянская литература, "Новый энциклопедический словарь Брокгауза-Ефрона", т. 3, с. 652-653.

² Տե՛ս Լ. Մելիքսէթ-Բէկ, Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց եւ նրանց ինքնութիւնը (վրացերէն), Տիղիա, 1928, էջ 3. նաեւ՝ Իլիա Աբուլաձէ, Աշխատութիւններ (վրացերէն), հտ. Դ, Թբիլիսի, 1985, էջ 5 :

³ Տե՛ս «Ատենաբանութիւն սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ», Վենետիկ, 1812, հրատ. Հ. Պ. Աւգերեան (նրա իսկ լատիներէն թարգմանութեամբ եւ ծանօթագրութիւններով), նաեւ՝ «Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ Ատենաբանութիւն վասն միութեան եկեղեցւոյ եւ ճառք», Կալկաթա, 1851 :

⁴ Ժողովի հրաւիրման թուականի մասին տե՛ս Ներսէս վրդ. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի՝ արքեպիսկոպոս Տարսոնի, Վիեննա, 1956, էջ 31, 35 :

⁵ Այստեղ եւ ստորեւ՝ մէջբերումներն ըստ Կալկաթայի հրատարակութեան :

Թիւն յայլ ազգաց, ոչ կամին ի սէրն խոնարհել, այլ բուռն հարկանեն զայլ կարծեաց, թէ նոքա զմերս ատեն ազգ, վասն այսորիկ եւ ի մէնջ ատեսցին, կուինն եւ կեղեքեն եւ հայհոյեն զմեզ, յաղագս այսորիկ եւ ի մէնջ հայհոյեսցին: Ո՛վ մտացի դու, եւ ո՞ւր ուսար վիրօք զվէր բժշկել...» (էջ 43):

3) «Հայն ի Հոռովմին խորշի հաղորդել յօրհնեալ պատարագն, եւ Հոռոմն՝ ի Հայոյն: Եւ զհաց, զոր մի աղօթիւք միով օրհնութեամբ, մի Քրիստոս անուամբ անուանեմք, միոյ Հոգւոյ շնորհիւ իւրաքանչիւրքն կատարեցաք, յետ այնորիկ անգոսնեմք զիրեարց» (էջ 51):

4) «Տեսցուք, թէ հատուածեալն ի մէնջ ազգ վրաց, ի նոսա յեցեալ, որքան օրրատօրէ ի Քրիստոս պայծառանան. արդ, գոնեայ անագան եւ մեք զնոյն խոկասցուք» (էջ 65):

5) «Ընդէ՞ր այսչափ գալս խոտեալ՝ խորշիմք եւ խուսափեմք ի միմեանց քրիստոնեայքս, որ այլ ազգաց վիճակեցաք կենակիցս: Մինչեւ յե՞րբ անդամքս լեղուօք զիրեարս խոցոտեմք՝ թունիւք իժին լցեալ զբերանս, այսքան երկար ժամանակս անխնայ զմիմեանս հարաք» (էջ 65):

6) «Հայն միշտ աղաղակէ՝ Աստուած իմ, գոհանամ զքէն, որ չարարեր զիս Հոռոմ, եւ Հոռոմն զնոյն բան երկրորդէ, թէ՛ որ ոչ արարեր զիս Հայ: Ո՛վ տմարդութեանս եւ անմիտ յանդգնութեանս...» (էջ 66):

7) «Անմիտ, կամք չար մտացան ոմանք ի մարդկանէ եւ ոչ բնութիւն ազգին է չար՝ Հոռոմին կամ Հայոյն կամ այլոց սեռից, զի եւ ի Պարսից բազումք հաճոյացան Աստուծոյ եւ ընտրին: Արդ, քո այնքան կուրացեալ յատելութենէն, մինչ զի ոչ միայն զկարծիս ազգին, այլեւ զազգն ողջոյն բամբասես եւ ի նմանէ գոհութեամբ հրաժարես» (էջ 66):

8) «Արդ, այժմ չէ օգուտ ի միմեանց հրաժարելն կամ ընդ անհնազանդն ոչ հաղորդելն...» (էջ 67):

Ի՞նչ է առաջարկում Լամբրոնացին՝ «համաշունչ լինել, միախորհուրդ» (էջ 53), պահել սեփական աւանդութիւնը եւ «ընդունիլ զնորայն»։ «այդ է գովելի կարծիք» (էջ 60):

Որ այս դրոյթները յաւուր պատշաճի ձեւակերպումներ չեն, այլ համոզմունք ու դիրքորոշում, կարելի է հաւաստիանալ նրանց մեծ նասի կրկնութեամբ նոյն Լամբրոնացու 1194-1195 թթ. միջոցին հեղինակած «Թուղթ առ քրիստոսազօր իշխողն մեր ինքնակալութեամբ Լեւոնի նուաստ Ներսիսէ, որ ի Տարսոն սրբոյ եկեղեցւոյն պաշտօնեայ», կարճ՝ «Թուղթ առ Լեւոն» երկում¹։

¹ Տե՛ս «Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ՝ Տարսոնի եպիսկոպոսի ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք», Վենետիկ, 1838, էջ 203-242:

Պատասխանելով հայրենի աւանդներից հեռանալու մեղադրանքին եւ նորից արժարժելով Յոյն, Հայ, Լատին եւ Ասորի եկեղեցիների միջեւ հաղորդութիւն առնել-չառնելու խնդիրը՝ Լամբրոնացին անվարան յայտարարում է. «Երկրորդ անկարգութիւն իմ այն է, որ ընդ ամենայն քրիստոնեայս հաղորդիմ: Գիտելի է իմաստուն քննողաց, որ քրիստոնէից ազգք բացատրին ի միմեանց իւիք-իւիք: Իսկ շնորհն Աստուծոյ զօրացոյց զիս՝ զայս սնտի աւանդութիւնս նոցա գիտութեամբ արհամարհել եւ զսէրն նախապատուել. եւ է ինձ Հայն որպէս Լատինացին, եւ Լատինացին՝ որպէս զՀեյլէնացին, եւ Հեյլէնացին՝ որպէս զԵգիպտացին, եւ Եգիպտացին՝ որպէս զԱսորին: Արդ, եթէ ես միոյ ազգի ջատագով էի, ընդ այլսն ե՞րբ էր կար հաղորդիլ. բայց ընդ իւրաքանչիւր, որ միմեանց թշնամիք են, խառնիմ եւ զբնական չահիմ՝ ըստ Քրիստոսի առաքելոյն. եւ ունիմ բան, որ ամենայն հարցողի կարող եմ պատասխանել, թէ ուղիղ ընթանամ եւ սիրովն Քրիստոսի դամենայն կրճիմն քակեմ, որով բարեհռչակիմ ե՛ւ ի Լատինացւոց եկեղեցիսն, ե՛ւ ի Հեյլէնացւոց, ե՛ւ յԱսորաց, ե՛ւ կամ ի Հայաստանս, եւ ընդ սոսա՝ անշարժ, եւ նոցին աւանդութիւնն՝ անփոփոխ»¹:

Լամբրոնացին փաստօրէն մերժում է էթնիկական եւ դաւանական շրջանակներում ներփակուելու կարելիութիւնը, քրիստոնեաներին իրարից բաժանող դաւանական ու ծիսական տարբերութիւնները «սնտի աւանդութիւն» հռչակում եւ «գիտութեամբ արհամարհում»:

Կարեւոր է ընդգծել, որ մեր մատենագիրն իրեն միայնակ չի զգում եւ թուարկում է Հայաստանի տարբեր գաւառներում ու թեմերում գործող իր գաղափարակիցներին, որից եւ կարելի է եզրակացնել, թէ վերալիմը չէր շրջանակում Կիլիկեան Հայաստանի սահմաններով: Նորից վկայակոչենք Լամբրոնացուն «...Արդ, թէ քո աստուածապաշտութիւնդ արժանացոյց զնոսա պատասխանւոյ, մեր իմաստութիւն՝ ոչ բնաւ. զի խրատիմք ոչ տալ անզգամին պատասխանի եւ զի յետին են նոքա, որ յայս յանդգնին՝ բոլոր հարց, որք մերում ճշմարտութեանս ջատագովք են, նոյն ինքն՝ մեր աշխարհս եւ սուրբ Լեառնս եւ որ ի սմա՝ հովիւք սուրբք, եւ բոլոր գաւառն Վասպուրականի եւ որ անդ՝ հռչակաւոր ուխտն Վարագ, եւ երեւելի արքն Ստեփաննոս տիրացուն՝ ուսուցիչն մեր, եւ Գէորգ ճգնաւորն եւ Ստեփաննոս՝ մեր ուսումնակից, եւ Քրիստոսատուր եւ Տիմոթէոս ճգնաւորք, որք ականատես լեալք են մեզ եւ որ առ մեզ ճշմարտութեանս հաւանեալ եւ երանեն, թէ կարող էին ձայնակցել. բոլոր գաւառն Տարոնայ եւ որ ի նմա՝ իմաստուն եպիսկոպոսն

¹ Նոյն տեղում, էջ 215-216

Եսայի, եւ վարժապետ Թէոդորոս, որ զմերս բարեհռչակեն բարեկարգութիւն եւ երանեն զհաղորդեալսն. գաւառն Եկեղեաց եւ լեառն սրբոյն Գրիգորի եւ որ ի նմա հարքն եւ եպիսկոպոսքն, որք գրովն իւրեանց բարեհամբաւեն զմեր ճշմարտութիւնս եւ աւաղեն վասն աղքատութեամբ եւ անօրինաց բռնութեամբ ի սմանէ վերջանալոյ. իշխանքն Խաչենոյ եւ որ անդ՝ վանորայք, որք զաշակերտն մեր զՅովսէփ եւ զկարգաց մեր վարժապետ որպէս զհրեշտակ պատուեն եւ կաթողիկոսութեանն Աղուանից ընծայեն...»¹:

Հայաստանի աշխարհագրութիւնն այստեղ բաւական հարուստ է ներկայացուած՝ Վասպուրական, Տարօն, Եկեղիք, Խաչէն: Նշանակուած է՝ Լամբրոնացու կուսակիցներ (ուսուցիչներ, սննդակիցներ եւ աշակերտներ) կային թէ՛ Կիլիկեան եւ թէ՛ Արեւելեան ու Հարաւային Հայաստանում: Ցաւօք, նրա թուարկած գործիչներից շատերի ինքնութիւնը, ինչպէս նաեւ նրանց գրական արտադրանքները հայագիտութեան մէջ քննութեան չեն առնուել, ուստի «լիբերալիզմի» եւ «պահպանողականութեան» թեւերի բաժանումն աշխարհագրական առումով արդարացուած չէ: Այս իրողութիւնը լաւագոյնս կարելի է հաւաստել Արեւելեան Հայաստանի ԺԲ-ԺԳ դդ. խոշորագոյն մատենագիրներից մէկի՝ Մխիթար Գօշի ժառանգութեան քննութեամբ:

* * *

Մխիթար Գօշի գրական վաստակները թուարկելիս Կիրակոս Գանձակեցին յիշում է «Գիրք մի՝ Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց՝ ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի եւ եղբօր իւրոյ»²: Հաւանաբար սա նոյնն է 1900-1901 թթ. «Արարատում» երեք ձեռագրի հիմամբ տպագրուած (պէտք է խոստովանել՝ ընթերցումների բաւական անյաջող ընտրութեամբ) «Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գօշն կոչիւր» ընդարձակ ջատագովականի հետ՝ հասցէագրուած յիշեալ զօրավար եղբայրներին եւ նրանց միջոցով՝ Վրաց արքունիքին ու կաթողիկոսին³:

Գրութեան ժամանակն աւանդուած չէ, բայց աներկբայօրէն յա-

¹ Նոյն տեղում, էջ 224-225

² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատ. Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1951, էջ 221:

³ Տե՛ս «Արարատ», 1900, էջ 497-504, 562-568, 1901, էջ 55-61, 121-127: Նոյնութեան հարցում կասկածներ ունի Լ. Մելիքսեթ-Բէկը (տե՛ս նշւ. աշխ., էջ 227, 242): Մ. Գօշի այս ջատագովական թղթի գիտական մեր հրատարակութիւնը տե՛ս «Գանձասար», թիւ 2, Երեւան, 1998, էջ 336-402:

Ջորդել է Լոռէի 1204/5 թ. կայացած ժողովին, որին Գօշը ներկայ է եղել, եւ նախորդել 1207 թ. Մնղեան տօնի նախօրէին հրաւիրուած Անիի ժողովին, որին Գօշը նոյնպէս մասնակցել է: Թղթում «յաղթող թագաւորք մեր»՝ Թամարն ու Դաւիթ Սօսլանը, կենդանի են յիշուած, որով վստահ կարող ենք ասել, թէ այն գրուած է 1206 թ.: Գրութեան շարժառիթը որոշակի է. «Յաւուրս մեր տեսանելով եւ լսելով զբամբասանս Վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ՝ յոյժ խոցեալ լինէր հոգի, մանաւանդ զի, - դիմում է զօրավար եղբայրներին, - հաւանելի թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ»:

Վրաց կաթողիկոսին եւ հոգեւորականութեանն ուղղուած նախադրութիւնում ասուած է. «Գրեցաք զթուղթդ՝ ոչ հակառակելով եւ կամ զոք պարսաւելով յազգաց, այլ զարժան եւ զիրաւունս իբր դատաստանաւ ցուցաք եւ զդժուարաւ գալն ի միաբանութիւն եւ զհնարաւորն ըստ ժամանակիս յայտ արարաք եւ զճշմարիտ խոստովանութիւն ցուցաք զմերոյս ազգաց եւ զխոտելի իրն ոչ թաքուցաք զմեր ազգիս եւ զիւրաքանչիւր ազգի զգովելին եւ զպարսաւելին գրեցաք եւ ի գլուխ բանին ընտրեցաք զբարին եւ զլաւն»:¹ Նշանակում է՝ հետապնդած նպատակներն են.

Ա. Ներկայացնել հայոց դաւանութիւնն ու եկեղեցու ծիսակարգը, բացատրել նրանում եղած ինքնօրինակութիւնները:

Բ. Ինչպէս յոյներն ու վրացիները, այնպէս էլ հայերը հերձուածողներ չեն, ուստի միմեանց հանդէպ կրկին մկրտութիւն կիրառելը «Քրիստոսի է անարգանք»:

Գ. Լաւ կը լինէր, եթէ «ամենայն ազգ միակրաւն լինէր», բայց այլեւս միաբանութեան հասնելն անհնար է:

Դ. Ներկայ կացութեան մէջ ի՞նչ պէտք է անել. «Միանգամայն եւ այն ցուցաք, թէ զի՞նչ այժմ հնարաւոր է լինել ազգաց, զորս թէ ձեզ (իմա՛ զօրավար եղբայրներիդ - Պ. Մ.) հաճոյ կարծի, թարգմանեալ ընթեռնոյք նոցա (իմա՛ վրացիներին - Պ. Մ.)»:

Դիտենք, որ Գօշի այս երկի ուսումնասիրութիւնն առ այսօր ընթացել է գերազանցապէս աղբիւրները բացայայտելու ուղիով. Լ. Մելիքսէթ-բէկը պարզել է, որ Դուինի ժողովի մասին պատմելիս Գօշն օգտուում է Յովհան Օձնեցու անունը կրող «Սակս ժողովոց, որ եղեն ի Հայս» երկից՝ յամառօտելով, հայ-վրացական եկեղեցական բաժանումը ներկայացնելիս՝ Անանիա Սանահնեցու «Վասն բաժանման Վրաց» գործից գրեթէ բառացի քաղումներով:

¹ Տե՛ս Լ. Մելիքսէթ-Բէկ, նշլ. աշխ., էջ 243-245: Անանիա Սանահնեցու երկն այժմ հրատարակուած է. տե՛ս «Անանիա վարդապետի հայոց՝ Բան հակաճառութեան

1938 թ. գրուած մի յօդուածում Ի. Արուլաձէն հաստատապէս ապացուցեց, որ Գօշի թուղթը պատասխան է Արսէն Վաչես-ձէի «Դոգմատիկոնի» հակամիաբնակ դրուագներին, որպիսիք ութն են, մասնաւորապէս՝ նրանցից մէկին՝ «Երեսուն գլուխ հայոց հերձուածի»։ Հայագէտը ցոյց տուեց նաեւ, թէ հակամիաբնակ այս երկը հայ քաղկեդոնականների միջավայրում թարգմանուել է հայերէն, լրացուել թարգմանչի մեկնաբանութիւններով ու ընդմիջարկութիւններով եւ «Պատասխանի առ Հայս» խորագրով եւ Յովհան Դամասկացու հեղինակութեան վերագրումով ժամանակին հրատարակուել¹։ Մի քանի տարի առաջ Զ. Ալեքսիձէն հրատարակեց «Երեսուն գլուխ Հայոց հերձուածի» վրացերէն բնագիրն ու նրա համապատասխան հատուածները Յովհան Դամասկացուն վերագրուած «Պատասխանի առ Հայս» երկից²։ Ի վերջոյ, 1976 թ. Ժ. Գարիտը ճշգրտեց, թէ Արսէն Վաչես-ձէի «Դոգմատիկոնի» յիշեալ հակամիաբնակ դրուագի աղբիւրը յունարէն մի աշխատութիւն է՝ հրատարակուած Մինի PG-ի 132-րդ հատորում (սիւնակ 1221-1237)³։

Այս ամէնն, անշուշտ, ե՛լ կարեւոր է, ե՛լ հետաքրքիր, բայց մոռացութեան չպէտք է տալ ամենաէականը՝ ինչո՞վ է տարբերուում Մ. Գօշի թուղթն այն մատենագրական երկերից, որոնցից օգտուում է կամ որոնց ի պատասխան գրում է։ Մեր խնդիրն այս հարցերին պատասխանելն է։

1. Մ. Գօշին նախորդած հայ հեղինակները, որոնց երկերից նա օգտուել է, իբրեւ կանոն, ջանացել են ապացուցել, որ Հայոց եկեղեցու

ընդդէմ երկաբնակաց, զոր գրեաց հրամանաւ տեառն Պետրոսի հայոց վերադիտողի», հրատ. Յ. Քեոսէեան, «Գանձասար», Ա, էջ 204-238, Բ, էջ 168-218, Գ, էջ 174-215:

¹ Տե՛ս «Հոյս» (չարաթաթերթ), Կ. Պոլիս, 1905, էջ 100-1012, 1065-1066 (նախաբան), 1066-1068, 1112-1115, 1906, էջ 45-48, 116-119, 213-216, 355-359, 474-479, 589-592, 810-815, 957-960, 981-984, 1075-1079, 1124-1126, 1196-1199. Ի Արուլաձէ, նշւ. աշխ., էջ 10-16: Հայերէն տեքստի հրատարակիչը Բաբկէն վրդ. Կիւլէսէրեանն է, որը յամառօտ ներածականում չի մերժում Դամասկացու հեղինակ լինելը, բայց եւ դիտում է հետագայ ընդմիջարկութեան առկայութիւնը: Ն. Ակինեանն այն համարում է «Յովհ. Դամասկացույ անուան ներքեւ կեղծող հայհոռոմի մը» գործ (տե՛ս Ն. Ակինեան, Կիւրիոն՝ կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910, էջ 69-70):

² Տե՛ս Զաղա Ալեքսիձէ, Արսէն Վաչես-ձէի «Դոգմատիկոն» մուծած հակամիաբնակ քերթուածքը եւ նրա արձագանքը հայոց հին մատենագրութեան մէջ (վրացերէն), «ՁԳՁՁՁՁՁՁՁՁ», հտ. 1, Թբիլիսի, 1977, էջ 133-158:

³ Gérard Garitte, La source grecque des "Trente articles" géorgiens contre les arméniens, «Հանդէս ամսօրեայ», 1976, էջ 111-116: Սոյն երկի թարգմանական լինելու շուրջ Աբէլ վրդ. Օլլուզեանի յայտնած տարակուսանքը (տե՛ս «Գանձասար», Գ, էջ 53-54) արդիւնք է այստեղ յիշուած մասնագիտական գրականութեան անծանօթութեան:

դաւանութիւնն ու ծիսակարգը անխոտոր պահպանել են ուղղափառութիւնը, եւ որ հերձուածողները Քաղկեդոնի ժողովի հետեւողներն են: Գօշը նոյնպէս պաշտպանում է միաբնակ եկեղեցու ուղղափառութիւնը, բայց եւ երկաբնակութիւնը հերձուած չի համարում. «Ե (5) ազգաց (իմա՛ Յոյներ, Հռոմէացիներ, Հայեր, Ասորիներ եւ Վրացիներ – Պ. Մ.) չտեսանեմք այնքան պատճառք, որ անընդունելի առնէ Ասուած զհաւատ կամ դտաւն, եւ նա ճանաչէ զիւրաքանչիւրոցն զարժանաւորութիւն», ուստի՝ «այլ թէ ասացեալ հինգ ազգդ ոչ կարէն միաբանել, բայց կարող են թշնամիք միմեանց չլինել, զիսաչ եւ զեկեղեցի միմեանց ընդունել երկրպագութեամբ», որովհետեւ «Հայք եւ Վիրք, Ասորիք եւ Հռոմք ճշմարիտ զերրորդութիւնն խոստովանին եւ զՔրիստոս Աստուած՝ ճշմարիտ Որդի Աստուծոյ, թէպէտ եւ ի տնաւրէնութիւնն այլայլեն եւ զՄարիամ Աստուածածին, թէ չիցէ ի կարծեաց Նեստորի, եւ զիսաչ՝ Աստուծոյ Խաչ. առ Հայս այդ առաւել ճշմարիտ է: Այլ ինչ սակաւ բաժանումն տաւնի կամ պահոց կամ կերակրոց չէ հաւատոյ բաժանումն»:

Գօշը լայնախոհաբար նկատում է. «Մի՞թէ ընդ ամենայն աշխարհ Հայ միայն է, եւ կամ՝ Վրացի, եւ կամ՝ Հռոմ: Քրիստոս չէ նախանձոտ. նա ամենայն ազգ ընկալեալ է, զի զարքայութիւնն զուռկանի նմանեցոյց, յոր ամենայն ազգ ձկանց ըմբռնին: Աստուած ե՞րբ առնէ թողութիւն այն քրիստոնէին, որ զՏաճիկն եւ զՋհուղն լաւ ասէ, քան զՀայն: Այնպիսի ասացողքն չունին թողութիւն ո՛չ աստ եւ ո՛չ ի հանդերձելումն, թէ չապաշխարին. թէ Հայ Վրացոյ ասէ, կամ Վրացի՝ Հայոյ, եւ կամ այլ քրիստոնեայ ազգ՝ քրիստոնէի, զի ամենայն քրիստոնեայք եղբարք են»:

Պատկերացնելու համար, թէ ինչ շօշափելի տարբերութիւն կայ Մ. Գօշի եւ նրա դիմաց կանգնած յոյն եւ վրացի հեղինակների համոզմունքների միջեւ, բաւական է յիշել վերջիններիս գործածած մի քանի արտայայտութիւնները՝ «ամենայն չար Հայք», «անաստուածներ եւ զազրելիներ», «այժմեան Հայք՝ մերժողք, հայհոյիչ եւ փոխեալ են այսպիսի խորհրդոց», Հայոց եկեղեցիները կոչում են «սատանայական ժողովարաններ» եւ այլն: Ի դէպ, նման տեղիները յիրաւի վիրաւորական են ներկայացել յուշարձանի միջնադարեան երկաբնակ հայ թարգմանչին, ուստի նա այս որակումները բաց է թողել¹:

¹ Ի. Աբուլաճէի համոզմամբ, «Պատասխանի առ Հայս» երկի հայերէն թարգմանիչն այլ աղբիւրներից քաջ յայտնի Սիմէոն Պղնձահանեցին պիտի լինի (տե՛ս նշւ. աշխ., էջ 18): Վերջինիս մասին հանգամանորէն տե՛ս Ներսէս վրդ. Ակինեան, Սիմէոն Պղնձահանեցի եւ իր թարգմանութիւնները վրացերէնէ, Վիեննա, 1951: Եթէ

2. Դաւանութեան շուրջ խօսող Գօշի նախորդները, մանաւանդ՝ յունավրացական միջավայրում, սովորաբար հաւասարութեան նշան են դնում ազգային եւ դաւանական հասկացութիւնների միջեւ: Պատահական չէ, որ յունական եւ վրացական աղբիւրներում երբեմն «Հայք», «Հայոց»-ի փոխարէն գործածւում է «խաչեցարներ» փոխաբերական եզրը: Գօշը որոշակիօրէն տարբերում է այս կամ այն ժողովուրդը եւ նրա դաւանութիւնը: Նա ջանում է ապացուցել, որ միաբնակութիւն դաւանող ուրիշ ժողովուրդներ էլ կան, եւ թուարկում է Ասիայում եւ Աֆրիկայում գտնուող շատ երկրներ ու ժողովուրդներ (էջ 503), որոնք «ընդ մեզ ի նոյն կրաւնի կան հաստատուն՝ չընկալեալք զժողովն Քաղկեդոնի», «եւ սոքա, ի նոյն հաստատեալ հաւատս, ոչ միաբանին ընդ Յոյնս եւ ընդ Վիրս»: Կայ եւ հակառակը՝ ասլրում են Հայոց միջավայրում, հայալեզու են, բայց հայ չեն ազգային պատկանելիութեամբ, որ պիտիք են, ըստ Գօշի, «մաքենացիք» (էջ 60): Այս էթնոնիմի տակ, թերեւս, Գօշը նկատի ունի պաւլիկեաններին (գուցէ նաեւ ծաթ/ծայթ հայերին կամ բոշաներին): Վրաց հոգեւորականութեանը դիմելով՝ Գօշն ամփոփում է. «Մի՛, սիրելի՛ք Աստուծոյ, լսող լինիք թշնամեաց Գօշն ամփոփում է. «Մի՛, սիրելի՛ք Աստուծոյ, լսող լինիք թշնամեաց մերոց, զի չկայ ի Հայք հերձուած, եւ զայն սակաւ պատճառն, զոր ունին, յամենայն ազգ այլ շատ կան, եւ տեսանեմք, եւ զայն չէ հերձուած Հայոց»:

Անհրաժեշտաբար կրկնում ենք. իր տուած բնագրութիւնները Գօշը կառուցում է էթնիկական-ազգագրական յատկանիշների եւ ոչ՝ դաւանական ինքնութիւնների վրայ: «Զիք ազգ, - ասում է նա, - որ դաւանական ինքնութիւնների վրայ: «Զիք ազգ, - ասում է նա, - որ բարի կարգ ոչ ունի եւ խոտան»». «Յոյնք իմաստունք են եւ ողորմածք՝ ուսեալք ի Յոհանէ Ոսկեբերանէ, Հոռոմք զգաստք են աղաւթից եւ հնազանդ առաջնորդաց, Ասորիք խոնարհք են եւ ճգնող, Հայք պահողք են եւ ողորմածք գերելոց եւ եկեղեցականաց, սրբութեան սիրողք, Վիրք՝ սրբոց եւ վանորէից մեծարողք եւ անբամբաս առաջնորդաց», եւ ապա՝ «առաջնորդաց անհնազանդ են Հայք, բայց սրբութիւն կրաւնա-

Թարգմանիչ Սիմէոնը նոյն Պղնձահանեցին է (Ն. Ակինեանն այդ չի ասում, տե՛ս նշւ. աշխ., էջ 96-98), ապա Մ. Գօշն օգտուած պիտի լինի վրացերէն բնագիրից, քանի որ 1206 թ., երբ նա իր աշխատութիւնն էր գրում, Պղնձահանեցին ընդամէնը 18 տարեկան էր եւ հազիւ թէ թարգմանութեան մարզում հմտացած լինէր: Ի. Աբուլաձէն ե՛ւս այս հարցում կասկածներ ունի (տե՛ս նշւ. աշխ., էջ 16): Ի դէպ, Ն. Ակինեանը «Պատասխանի առ Հայսի» յունարէն բնագրի հեղինակ է համարում Եւստրատիոս Նիկէացուն (տե՛ս նշւ. աշխ., էջ 97): Վերջինիս աշխատութեան բնագիրը ձեռքի տակ չունենալու պատճառով (յղումը տե՛ս Karl Krumbacher, Geschichte der byzantinischen Litteratur, München, 1887, S. 85; նաեւ՝ Ն. Ակինեան, անդ), չենք կարող ասել՝ Գարիտի մատնացուցած բնագրի հետ դրանք նոյնանում են, թէ՞ ոչ:

ւորաց ի Հայք առաւել գտանի եւ արժանաւոր պատարագ, քան՝ զայլ ազգ»։ Նոյնիակ ոչ կանոնական դիտուող, բայց ազգային սովորոյթ դարձած իրողութիւնները նա հանդուրժելի է համարում. «Այլ զի յոյժ պատուեն Վիրք զկնքահայրսն, գովելի է, թէպէտ եւ ոչ է կանոնական, եւ զի՞ բամբասեն զՀայսն, թէ զազգականս առնեն կնքահայր»։ Նա դիտում է, որ տարբերութիւններ յիրաւի կան. «Յոյնք եւ Վիրք զպատկերագրութիւն առաւել պատուեն, եւ Հայք՝ զխաչ»։ «որպէս [Հայք] զխաչ անարգեցին՝ արհամարհանաւք յամենայն տեղիս կանգնելով, նոյնպէս Յոյնք եւ Վիրք՝ զպատկերս, զի զօր գիտեմք, ընդունիմք եւ պատուեմք, զի յիշեցուցիչ է որպէս պատմութիւն վարուց սրբոցն, բայց զի արք տգէտք պաշտելի կարծեն՝ վասն այն եւ ոչ փութան առնել Հայք, այլ իմաստունք զարարեալսն ոչ անպատուեն»։

3. Այն գրութեանը, որին պատասխանում է Մ. Գօշը, անձանօթ է միջէթնիկական յարաբերութիւնների հեռանկարի հասկացութիւնը ինչպէս նաեւ՝ ազգամիջեան համերաշխութեան եւ դաւանական հանդուրժողականութեան գաղափարը, մինչդեռ իրատես Գօշն իրեն պարտաւոր է զգում ասել, թէ՛ «զի՞նչ այժմ հնարաւոր է լինել ազգաց»։ Նրա համոզմամբ՝ վրաց թագաւորները եւս «նախանձաւորին խաղաղութեան եւ սիրոյ առ միմեանս հաւատացելոց», եւ թէեւ թամարն ու Դաւիթը «չեն բաւական տիեզերական ժողով առնել ամենայն ազգաց այլ Աստուծոյ շնորհաւքն կարող են զՀայոց եւ Վրաց թշնամութիւնն բառնալ, որ Քրիստոս չհայհոյեն, զի այն Քրիստոսի է ատելութիւն, զոր զխաչ եւ զխրատ եւ զեկեղեցի միմեանց չհայհոյեն եւ նախատեն»։ «Եւ դուք բաւական էք, և դիմում է նա զօրավար եղբայրներին, և զսաստկացեալ պատերազմդ հայհոյութեան շիջուցանել իմաստութեամբ եւ հաւանել բանիւ, թէպէտ եւ անհնար ցուցաք զժողովն լինել զմիաբանութիւն... զի դուք իշխանք էք Հայոց եւ Վրաց կամաւքն Աստուծոյ եւ թէ կամիք, ծանուցանէք աստուածասէր թագաւորացդ, որ արքայական իշխանութեամբ սաստ դնեն»։

Գօշը նման դիմում է կատարում եւ վրաց հոգեւորականութեանը. «Արդ, մի՛ լիցի ձեզ պատճառ լինել եւ այլոց գայթակղութեան, այլ՝ առաւել շինութեան եւ խաղաղութեան»։ Մարդիկ միմեանց պէտք ու կարօտ ունեն, ուստի նրանց չի կարելի ատելութեամբ բաժանել. «Այլ զայս նախ դիցուք զկամս Աստուծոյ, որ սիրողն է միաբանական կենաց մարդկան, վասն որոյ կարաւոս արար զպէտս ունել միմեանց, եւ յազագս այնորիկ շինեցան քաղաքք եւ այլ բնակութիւնք։ Ընդդէմ այսմ է եւ կամք չարին բաժանելն մարդկան ատելութեամբ, զի այսու դիւրաւ զչարն գործիցէ, որպէս սիրով՝ զբարին Աստուած»։

Արմատացած սովորութիւնների եւ գոյացած աւանդոյթների պատճառով «անհնար տեսանեմք զգալն ամենեցուն ի միաբանութիւն», բայց եւ միաժամանակ՝ «լաւ համարեցաք, որ զմիմեանս չթշնամանեմք եւ զխաչ եւ զեկեղեցի չանարգեմք», որովհետեւ «եւ այս ախտ ամբարտաւանութեան է, զի Յոյնն զինքն կարծէ ճշմարիտ, եւ Հոռոմն՝ զինքն, նմանապէս եւ՝ ազգ ամենայն»։ Խելամիտն իրար հանդուրժելն է. «Լաւ էր, թէ զայն ընտրէաք, որ զթշնամութիւն բառնէաք ի միմեանց եւ բարեկամ լինէաք եւ զկարգ միմեանց չհայհոյէաք»։ Գօշն այլ ելք չի տեսնում, քան խաղաղ ու ինքնակամ գոյակցելը. «Արդ, այլ ինչ հնար բառնալոյ զայդ հակառակութիւնդ ոչ տեսանեմք, բայց թէ՛ զմիմեանս հաւանելն եւ կալ իւրաքանչիւր կարգի ամենայն ազգ»։

Կատարուած քննութիւնը մեզ մղում է մի քանի սկզբունքային եզրակացութիւնների.

Ա. ԺԲ-ԺԳ դդ. հայ իրականութեան մէջ վարդան Այգեկցին միակ հեղինակը չէ, որ յանգել է դաւանական հանդուրժողականութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գաղափարին. նրանից առաջ եւ նրա օրօք, բացի Շնորհալուց եւ Լամբրոնացուց, այդ նոյն գաղափարախօսութեան բանիբուն ջատագով է եղել Մխիթար Գօշը։

Բ. Հայոց էթնիկական աշխարհի երկու ծայր հատուածներում՝ Կիլիկիայում եւ Հիւսիսային (Արեւելեան) Հայաստանում, միաժամանակ, բայց միմեանցից անկախ ձեւաւորուած համերաշխութեան եւ հանդուրժողականութեան այս գաղափարը բարձրակէտ էր, որին յանգեցրել է հայոց էթնիկական, քաղաքական եւ մշակութային զարգացման ողջ նախընթաց շրջանը։

Գ. Վերանայելի է ԺԲ-ԺԳ դդ. հայոց մատենագրութեան եւ նրա կերտողների երկու հակադրուող թեւերի բաժանումը՝ մէկին որակելով լիբերալ, միւսին՝ սլահպանողական։ Կիլիկեան եւ «Հիւսիսային կողմանց» վարդապետների թղթերում եղած փոխյանդիմանութիւնները նման ընդհանրացման հիմք չեն տալիս։ Մշակութային ամբողջականութեան զգացումը միջնադարեան էթնիկ ինքնագիտակցութեան կարեւոր բաղադրիչներից է։

Դ. Հայ ժողովրդի ստեղծած մշակոյթի միջնադարն այլ ժողովուրդների մշակոյթներին յարաբերելիս չպէտք է անտես առնել տեղական աւանդների գործուն ներկայութիւնը. իր գոյութիւնն ապահովելու եւ խաղաղ գոյակցելու երազանքը միշտ ուղեկցել է տեւական մաքառումներով ապրող մեր ժողովրդին։ Աշտարակի Կարմրաւորի կառուցողը է. դարում փորագրել է «Տուաք շինել ... վասն խաղաղութեան ամենայն

աշխարհի եւ շինութեան Աշտարակի եւ ստղաբերութեան սահմանիդ»:

Ե. Մխիթար Գօշի մատենագրական ժառանգութիւնն ուսումնասիրելիս, «Դատաստանագրքում» երեւացող եւ հումանիտական որակուող համոզմունքները գնահատելիս չպէտք է դանց առնել «Գծագրութիւն» կամ «Թուղթ» կոչուող երկի խիստ ուշագրաւ դրոյթները:

* * *

Դաւանական հանդուրժողականութեան և ազգամիջեան համերաշխութեան գաղափարը Հայոց միջնադարեան գաղափարաբանութեան ճշմարիտ նուաճումն է, որին, ցաւօք չարձագանքեցին մեր պատմութեանն ու մշակոյթին աղերսուող և անհամեմատ աւելի նպաստաւոր կացութեան մէջ գտնուող հարեան հասարակութիւնները, ամէնից առաջ Բիւզանդական կայսրութիւնը: «Հանդուրժողութիւնը,- գրում էր Ն. Ադոնցը,- քրիստոնեական մեծ կայսրութեան առաքինութիւններից չէր: X դարից ի վեր նա սկսում է հալածել բոլոր այլադաւաններին և առաջին հերթին հայերին: Նրանց նկատմամբ գործադրուող բռնութիւնն ընդունել է այնպիսի ձևեր, որոնք ամենևին պատիւ չէին բերում խելամիտ քաղաքականութեանը... Ուստի կայսրութիւնը միայն ցամաքեցրել է դարեր շարունակ իր զինուորական փառքն ապահովող աղբիւրը»¹:

Որ հանդուրժողականութեան գաղափարը մեզանում անցողիկ համոզմունք չէր՝ կարելի է հաւաստիանալ նրա ոչ պակաս ակներև դրսևորումով ուշմիջնադարեան հայկական միջավայրում՝ յանձին Ստեփանոս Դաշտեցու լայնախոհ դատումների:

Ճիշտ է՝ Ստեփանոս Դաշտեցու մատենագրական ժառանգութեան ուսումնասիրութեանը նուիրուած մենագրական աշխատութիւն չկայ, իսկ նրա գործերից շատերը, մանաւանդ եկեղեցա-դաւանական բովանդակութեան, տակաւին կարօտ են հրատարակութեան, այնուամենայնիւ XVII-XVIII դարերի դարագլխի այս հեղինակին չուսումնասիրուած մատենագիրների ցանկ չի կարելի դասել²: Ստեփանոս Դաշտեցու գործերի առաւել ամփոփ և ըստ էութեան բնութագրութեան փորձ

¹ Նիկողայոս Ադոնց, Լիկանդոսի բանակաթեմը հայ-բիւզանդական յարաբերութիւններում, «Էջմիածին», 2006, Ժ-ԺԱ, էջ 69:

² Նրան վերաբերող աշխատութիւնների և հրատարակումների մատենագիտութիւն տե՛ս Kevork B. Bardakjian, A Reference Guide to Modern Armenian Literature, 1500-1920, With an Introductory History, Detroit, 2000, pp. 66-67, 516.

կատարել է նոր ժամանակների մեր բանիբուն պատմաբաններից ակադ. Աշոտ Յովհաննիսեանը, իր քննութիւնն աւարտելով հետեւեալ բանաձևով. «Գաղութահայ միջավայրում Դաշտեցու երկերը մի յայտնի չափով արտացոլում էին իրանական բռնատիրութեանը սպասարկող հայ եկեղեցական և խոջայական տարրերի դէմ քաղաքի ներքնախաւերում կուտակուած տրամադրութիւնները: Այնուամենայնիւ քաղաքական իր դիրքորոշումով Դաշտեցին դեռ շարունակում էր յածել հայ բանավարութիւնների հին՝ արեւմտաեւրոպական շաւիղներում: Նա երազում է տեսնել հայրէնի երկիրը եթէ ոչ սեփական իշխանութեան, զէթ արեւմտաեւրոպական կաթոլիկ դինաստիաներից մէկի տիրապետութեան ներքոյ: Իրանահայ ժողովրդի տրիբունը չէ նա իր յակաճառութիւններով ու քառեակներով, այլ պապական միսիոներների ետեկանգնած պետութիւնների և սրանց հայ մեծարողների մոլորաշաւիղ տեսարանն ու դէմագոգ հրապարակագիրը... Նա չնշմարեց նոր նայն հեռանկարը, որի կոնտուրները գծագրւում էին Օրիի գիտակցութեան մէջ՝ սկսած այն օրից, երբ վերջինս հրաժէշտ տուեց Արեւմտեան Եւրոպային՝ հայերի քաղաքական բախտը հիւսիսի մեծ պետութեան հետ կապելու համար»¹:

Հանգուցեալ Ռ. Աբրահամեանի թուարկմամբ Ստ. Դաշտեցին քսանչորս անուն երկի հեղինակ է, գրուած այլևայլ թեմաներով ու ժանրերով (պատմութիւն, ջատագովութիւն, ժամանակագրութիւն, քառեակներ, թեջնիսներ, հանելուկներ, երգիծանք, վարժանք և այլն)²: Ա. Յովհաննիսեանի տուած բնութագրութիւնը հիմնականում կառուցուած է այս հեղինակի «Համառօտ ձեռնարկ վիճաբանութեան ընդդէմ հերձուածողաց ազգին Հայոց» ընդհանուր խորագիրն ունեցող երեքմասնեայ աշխատութեան վրայ («Մաղախ փշրանաց», «Կոչնակ ճշմարտութեան» և «Խնդիր ուղղութեան»)³:

Հարկաւ իրողութիւն է, որ Նոր Զուղայում Հայոց ուղղափառ եկեղեցու քահանայ Տէր Բարսեղի ընտանիքում ծնուած, «դաստիրա-

¹ Աշոտ Յովհաննիսեան, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 466: Ափսոսանքով պիտի նշենք, որ Ա. Յովհաննիսեանի այս աշխատութեան Դաշտեցուն վերաբերող էջերը (460-466) չեն ընդգրկուել Գէորգ Բարտակճեանի վերոնշեալ մատենագիտութիւն: Չեն յիշատակուած նաև Մ. Չամչեանի, Ղ. Ալիշանի, Յ. Տաշեանի, Հ. Աճառեանի, Գ. Զարպհանալեանի, Յ. Տէր-Յովհաննեանցի և որոշ այլ հեղինակների մօտ եղած տեղեկութիւնները:

² Ռ. Աբրահամեան, Ստեփանոս Դաշտեցի, Հայկ. ՍՍՌ. գիտ. ակադ. «Տեղեկագիր» (հասարակակ. գիտ.), 1956, N 12, էջ 105-106:

³ Աւանդուած է՝ Երևանի Մատենադարան, ձեռ. N 673, 781, 8111, 8746, 9049, 9689 (նկատուած են խորագրային տարբերակներ): Կայ և այլ հաւաքածոներում:

կեալ և սնեալ ի եկեղեցւոջ Հայոց և նախանձայոյդ ճշմարտութեան, սիրող սիրոյ և միաբանութեան, ցանկացող արդարութեան և ճշմարտութեան» դպիր Ստեփանոսը ազգային եկեղեցու սպասաւոր չի դառնում, աւելին՝ անթաքոյց յանդիմանում է նրա վարդապետութիւնից դուրս եղած դաւանութիւնները (կաթողիկէ և օրթոդոքս) մերժող ազգային վարդապետներին և պաշտպան կանգնում հռոմեականութեան, սակայն ամենեին իրաւացի չէ նրան «պապական միսիոներների ետև կանգնած պետութիւնների և սրանց հայ մեծարողների մոլորաշաւիղ տեսաբանն ու դէմագոգ հրապարակագիր» կոչելը: XVII դարի վերջին և XVIII առաջին երկու տասնամեակում ապրած ու գործած հեղինակը, փաճառականութեան բերմամբ Արևելքի ու Արևմուտքի երկրները ճանաչելով, բնականաբար, պարսիկների ու թուրքերի բռնատիրութիւնից և յետամնացութիւնից ելք որոնելիս իր տեսած ու գնահատած Արևմուտքը պէտք է նախընտրէր՝ քանի դեռ «հիւսիսի մեծ պետութիւնը» չէր երևակել իր կարողութիւններն ու հետաքրքրութիւնները: Ընդ որում՝ արդարացի չէ Դաշտեցուն շրջանակել պապականութեան հրապարակագրի անձուկ գաղափարով, որովհետև մեր հեղինակը ընդգծուած համակրութեամբ է խոսում նաև յոյն վարդապետների մասին. «...այնպէս գտաք զազգս նոցա, զոր ոչ կարեմ պատմել զբարուց և զազնուականութենէ նոցին, մանաւանդ թէ որպիսի և անխարդախ ընդանութիւն տեսաք ի յեկեղեցականաց և ի վարդապետացն նոցանց...»: Նա հաւասարապես մերժում է, ինչպէս ժամանակին Ներսէս Լամբրոնացին, թէ ներազգային և թէ ազգամիջեան դաւանական անհանդուրժողականութիւնը և Աստուած կանչում, որ «տացէ թերևս զճաշակ սիրոյ և միաբանութեան ազգիս Հայոց առ ի սիրել զհամահաւատ զհաւատակից զեղբարս մեր, թէ զՅոյնս, թէ զՎիրս, թէ զՌուսս, թէ զԼատինացիս, թէ զԵթեօպացիս և թերևս զՀոլանդացիս, զՇուէտս և զԴանեմարքս, թէպէտ և սոքայ երեքեան ազգս իցեն արտաքոյ կաթողիկէ եկեղեցւոյն: Եւ այսպէս ի ձեռն այսու սիրոյ և միաբանութեան ակնունիմ ժառանգել ազգի և վարդապետաց և առհասարակ ազանցս կրկնակի փառս և խնդութիւն այժմ և ի հանդերձելումն, ամէն»¹:

Կարծում ենք՝ այսպիսի լայնախոհութեամբ ու դաւանական հանդուրժողականութեամբ օժտուած անհատականութեան ներկայութիւնը «հայ բանավարութեան հին՝ արևմտաեւրոպական շաւիղներ

¹ Ստեփանոս Դաշտեցին փաստօրէն երկրորդում է Ներսէս Լամբրոնացուն, Վարդան Այգեկցուն և Մխիթար Գօշին (տե՛ս Паруйр М. Мурадян, Идея конфессиональной толерантности и межнационального согласия в армянской книжности XII-XIII веков, "Христианский Восток", новая серия, том. 1 (7), с. 359-373):

րում» XVII-XVIII դարերի դարագլխի համար բնաւ յանդիմանելի չէ, աւելին՝ ազգային-ազատագրական զաղափարներով հայրենակիցներին տողորելու մի նոր դրուագ է մեր պատմութեան մեջ:¹ Դաշտեցին հպարտ է իր ցեղային պատկանելութեամբ և նոյնքան սրտացաւ օտարների դռներն ընկած հայրենակիցների վերաբերմամբ. «ով ոք ազգաւ Հայ՝ առաւել և ես, և ով ոք ժառանգ Յարեթի՝ առաւել և ես, և ով ոք ի ծննդոցն Հայկայ՝ առաւել և ես» ուստի ճանաչում է այն դիպուածքներն ու անցքերը, որոնց «հանդիպեցաւ տառապեալ ազգս Հայոց, թէ ի յոր աստիճանէ սուղեալք անկան ի ստրկութիւն և ի ծառայութիւն այլոց ազգաց, այսքան ժամանակք կորուսանելով զթագն ականակուռ և զնիդակն յաղթութեան թէ ի ծիփանաց մեղաց իմոց, թէ ի նախասահմանութենէն Աստուծոյ»:

Հեղինակը, մեր համոզմամբ, ոչ այնքան կաթողիկէ վարդապետութեան քարոզչութեանն է հետամուտ, որքան իր օրերում ամենազօր Պապի հովանաւորութիւնը Հայոց վրայ ապահովելուն, այսինքն՝ արեւելեցան բռնակալութիւնից Հայոց ազատագրմանն ու Հայոց միջավայրում փոխադարձ հանդուրժողութեան, հաշտութեան հասնելուն, ուստի «Յովհաննիսի գերիմաստ վարդապետի Զուլֆայեցւոյ և յազգէս մեծահռչակ փիլիսոփայի՝ մականուն Մրքուզ կոչեցելոյ ընդդէմ կաթողիկէ եկեղեցւոյն Լատինացւոյ և Յունաց երկարնակաց» գրքի դէմ բաւաւիճելիս խորագրում իսկ մասնաւորեցնում է «Առ ի խելամտութիւն համազնեացն իմոց ձոնեմ թէ վարդապետինն և թէ զմեղապարտինս, որք աւանիկ հանդէպ իրերաց եղեալք երևին մինն և միւսն»²:

Յովհաննէս Մրքուզ Զուլայեցին Հայոց և նոյնիսկ Պարսից միջավայրում ճանաչուած աստուածաբան էր, «տիեզերափայլ երջանկափառ վարդապետ», մէկը այն քչերից, «որք ամիրբերան առնէին զկաճառս և զխումբս մոլեգնեալ և կատաղի Պարսկայնոց և վայրաղօղանջ հերձուածողաց հերեսիովտաց»³: Դաշտեցին նրա հետ չի չափում

¹ Այդ նոյն հողի վրայ, հարիւրամեակներ անց, Լամբրոնացուն ազգային ինքնասիրութիւնից զուրկ է որակում Յուսիկ Եպիսկոպոսը (տես նրա՝ Եկեղեցական գրքերում կամայական սրբագրութիւն և օտարաձայն ընթերցմունք թոյլատրելի չեն. - «Լումայ», 1903, N 3, էջ 224):

² Մատենադարանի ձեռ. N 8111, էջ 1v: Հմմտ. ձեռ. N 9049:

³ Խաչատուր արեղայի Զուլայեցւոյ Պատմութիւն Պարսից, աշխատութեամբ Բաբգէն վրդ. Աղաւելեանց, Վաղարշապատ, 1905, էջ 105: Վերջերս Երևանում լույս տեսաւ Մրքուզի երկկեզու՝ հայերէն-պարսկերէն աշխատութիւնը (Յովհաննէս Վարդապետ Մրքուզ Զուլայեցի, Լիճալի Քրիստոսի օրէնքը, աշխատասիրութեամբ պրոֆ. Գ. Մ. Նալբանդեանի, Երևան, 1998: Ստեփանոս Դաշտեցու կենդանութեան Յովհաննէս Մրքուզ Զուլայեցին չորս հրատարակութեան հեղինակ էր. «Գիրք համառօտ վասն իսկապէս և ճշմարիտ հաւատոյ», Նոր Զուլա, 1788, «Դաւանութիւն հաւա-

(պատասխանատու թիւնք Ստեփաննոսի ումեմն մեղապարտ ծառայի Դաշտեցւոյ և մեղօք զառածելոյ ապաշնորհի), բայց և ունի ազգային շահի ու հեռանկարի իր ընկալումը. «Արդ, ձեզ ասեմ, ազգք Հայոց-գրում է նա,- հարք իմ պատուելիք, դուք իրաւունս արարէք, հայեցէք ըստ որքանութիւն գիտութեան վարդապետիս մերոյ և դիք ի կշիռս ըստ մեծի ուշիմութեան և խոհեմութեան ձերոյ ի յերկոսեան կողմանս, այսինքն՝ զՅոհաննէս Մրքուզ վարդապետս այս Զուլֆայեցի, և զաթոռաժառանգն Պետրոսի և աթոռոյ Հռօմայ փափն, և տաջիք ապա զդոյզն ինչ զգուշանալ վարդապետիս ձերոյ, զի մի սլասցի առաւել քան զկար իւր, վերստին դառնաս վարդապետի սոյն համարադէմս և ասես՝ եթէ փափն իցէ ուղղափառ՝ յայնժամ Հայաստանեացս եկեղեցի ընդունի զնա իբրև արհիեպիսկոպոս ի վերայ իւրում վիճակի և աթոռոյն»¹:

Ակնյայտ է, որ կյանքի վերջին տարիներին Դաշտեցու ջերմեռանդութիւնը դէպի կաթողիկէ վարդապետութիւնը աճել է, որ արդիւնք պիտի լինի տարբեր երկրներում տեւական վաճառականական թափառումի: 1745թ. Հռոմի Մարիամ Եգիպտացու եկեղեցում եռամսանյա «Համառօտ ընձեռումն վիճաբանութեան» գիրքն ընդօրինակող Յակոբոս քահ. Սետեֆեանը պահպանել է աշխատութեան հեղինակային յիշատակարանը, ուր կարդում ենք. «Եւ այս բաւականասցի ի մէնջ, որ եմ ամենանուաստ ծառայ տերութեան ձերոյ և անարգ սպասաւոր բոլոր վարդապետաց և առ հասարակ ազգիս Հայոց և կրտսեր պաշտօնեայ բանասիրաց ապիրատ Ստեփաննոս Բասիլիու Շիրիփալանկեան ի Դաշտէն Գողթնեաց, սերունդ յԱսպահանայ և սխալական, որոյ սկիզբն կալայ խօսիլ ընդ գերահռչակ վարդապետիս յամի Փրկչին 1714, ի մուտս ապրիլ ամսոյն, իսկ յաւարտածի ի թուին 1715 ի փետրուարի Հռոմեացւոց սկզբանն ի վայրս Հնդկաց ի Բանդարի՝ Սուրաթ անուանեալ նաւահանգստի: Իսկ ի թուին Հայոց ՌՃԿԳ և յունվարի Ի (20) աւարտ սորին: Նուէր յինէն ապերախտէ իմոյ հարազատ իմաստասիրաց մանկանց Հայոց՝ ի փառս մեծագոյնս Աստուծոյ օրհնելոյն յաւիտեանս: Ամէն»²:

Քանի որ ձեռագրի սկզբում պահպանուել է դարձեալ հեղինակային տեղեկութիւն, թէ եռամսանեայ գիրքը նուէր է «առ Հայկազուն

տոյ», Կ. Պոլիս, 1713/1714, «Կրթութիւն հաւատոյ», Կ. Պոլիս, 1713, «Համառօտ քերականութիւն և տրամաբանութիւն», Ամստերդամ, 1711: Նրա մատենագրական ժառանգութեան գնահատութիւնը տես Հ. Ղ. Միրզոեան, Յովհաննէս Մրքուզ Զուլֆայեցի, Երևան, 2001:

¹ Մատ. ձեռ. N 781, էջ 70r.

² Անդ, էջ 81r:

եղբորս իմ: Յամի 1700», ստիպուած ենք ենթադրել, որ 1714-1715 թուականներին նա վերջնականապէս վերանայել – խմբագրել է աշխատութիւնը և օժտել վերևում բերուած տեղեկութեամբ:

Համոզվելու համար, որ արդարացի չէ կամ գոնէ չափազանցուած է ասել, թէ Ստեփանոս Դաշտեցին «պապական միսիոներների ետև կանգնած պետութիւնների և սրանց հայ մեծարողների մոլորաշաւիղ տեսարանն ու դէմագոգ հրապարակագիրն» է, ստորև հրապարակուած ենք նրա դաւանաբանական աշխատութեան «Յառաջաբանութիւնը»՝ «Բանք սակաւք առ ընթերցող ազգակից եղբարս իմ», այն քաղելով Երևանի Մատենադարանի № 781 ձեռագրից: Նոյն հաւաքածոյի № 9049 ձեռագրից է քաղուած Դաշտեցու կենսագրութեանն ու աշխատանոցին վերաբերող յիշատակարանային դրուագը:

ՀԱՄԱՌՕՏ ԸՆՁԵՌՈՒՄՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՑ ԱԶԳԻՆ ՀԱՅՈՑ (Ձեռ. № 781)

Գիրք երեք. առաջինն կոչի «Մաղախ փշրանաց», երկրորդն անուանի «Կոչնակ ճշմարտութեան», իսկ երրորդն յորջորջի «Խնդիր ուղղութեան»: Շարադրեալ յումեմնէ Ստեփաննոսէ դպրէ և ի բանիբուն հռետորէ Դաշտեցույ:

Նուէրք առ Հայկազուն եղբորս իմ: Յամի տեառն 1700:

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԳՈՅՍ • ԲԱՆՔ ՍԱԿԱԻՔ ԱՌ ԸՆԹԵՐՑՕՂ ԱԶԳԱԿԻՑ ԵՂԲԱՐՍ ԻՄ

Թէպէտ իւրաքանչիւր ոք գիտէ բաւականապէս զորպիսութենէ դիպուածոյ և անցիցն, որ հանդիպեցաւ տառապեալ ազգիս Հայոց, թէ ի յոր աստիճանէ սուգեալք անկան ի ստրկութիւն և ի ծառայութիւն այլոց ազգաց, այսքան ամանակօք կորուսանելով զթագն ականակուռ և զնիզակն յաղթութեան՝ թէ ի ծփանաց մեղաց իմոց, թէ ի նախասահ[մա]նութենէն Աստծոյ: Սակայն այսու ամենայնի՝ բազում գովութեանց արժանի վարկանելի է ազգս այս օրհնեալ, մանաւանդ ջերմեռանդութիւն հաւատոյ, որ ի Քրիստոս Յիսուս, վասն զի միշտ հաս-

տատուն հաւատով և յամենայն զօրութենէ պինդ կալեալ ունին զյուսոյ խարսխէ տեառն մերոյ և փրկ[չ]ին Յիսուս Քրիստոսի: Տանեն ամենայն փորձութեանց և հալածանաց այլոց ազգաց, երբեմն ի բաց մերկանալով ի հայրէնի ընչից և ազարակաց, յապրանաց և ստացուածոց մանաւանդ, և բազումք զրկեցան յարենակից որդեկաց, ի դատերաց, և կանանց: Եւ զայսոսիկ և ևս քան զսոսա զվիշտ և զտառապանս կրեն խնդութեամբ վասն սիրոյն Քրիստոսի և յուսոյ արքայութեան: Նաև զի թէպէտ ի մէջ այսքան ծփանաց պարուանդեալ կան ազգս այս օրհնեալ, սակայն և շնորհնօքն Աստուծոյ փայլին յամենայնում և յամենայն տեղիս՝ իբրև զաստեղս և զակունս պատուականս սակս հանճարեղ և կորովի սրամտութեանց իւրեանց, որ և քաջապէս յայտն է առ ամենեսեան, վասն զի ունին զբանական իմն սրամտութիւն, ուստի որոց և աշակերտինն զիւրապէս փութանակի և գեր ի վերոյ առնուն ի միտ, և բազմիցս գերազանցեն քան զվարդապետս իւրեանց թէ ի յարհեստս, թէ ի լեզուս և թէ ի գիտութիւնս յոմանս: Եւ այսոքիկ ևս տեսանին ի տրւչութենէ Տեառն լինիլ: Սակայն ըստ (1բ) միւսոյ մասին և եթ կողմանէ կարի ափսոսալի իմն է վարկանելի, այսինքն սակս հեղզութեանցն, զորս բնականապէս ունին, այսինքն ի յիմաստասիրելն: Եւ այս թէ ի կողմանէ ինքեանց և թէ ի կողմանէ կառավարչաց և դատարակողացն իւրեանց, վասն զի բազում անգամ տեսանին ի հարցանիլն այլոց ազգաց՝ թէ ի բնականաց և ի յարտաքին գիտութեանց և կամ ի հաւատոյ տնօրինութեանց, եւ յայսմ մասին այնպէս - այնպէս տկարանան և թալկացեալք ափշին՝ մինչ զի այլ և այլ սկսանին խօսիլ: Եւ յայնժամ ի յանկարգութենէ կամ յամօթոյ, զհարդ և իցէ աճապարեն պատասխանել՝ ոչ հայելով յաջ կամ յահեակ, այլ ըստ բերման և ըստ ներգործութեան մտաց իւրեանց սկսանին խօսիլ, վասն զի զոր ինչ կերպաւորել կարեն յերևակայութիւնս իւրեանց՝ զնոյն իրաւի վարկանելով սանձարձակօրէն և ճեպով ի դուրս փլեն՝ ոչ ունելով զփոյթ ինչ, թէ իցէ՞ սրբոյն համաձայն և թէ՞ հերձուածօղացն: Եւ զայսպիսի ես ինքնին բազմիցս տեսանէի աչօք և լսէի ականջօք, ուստի և միշտ ցաւէի ի սիրտ և ի հոգի վասն զի իբրև նկատեմ զկորովութիւն և զճարտարութիւն մտաց ազգիս և զծննդական սրամտութիւն նոցին, որք իբրև զօղ մաքուր և զառ պատրաստ ունին զպարզամտութիւն մտացն իւրեանց, զի ի ծագել արուսեկին գիտութեան իսկոյն լուսաւորին, սակայն սոյնպիսի նիւթ մաքուր մնայ առանց ճառայգայթի և շաղուաց գիտութեան սակս ոչ ունելոյ զվերատեսուչս փոյթս և զդատարակիչս արիս, զղպրոցս հաստատունս և զվարդապետս կիրթս թէ ի յանկարութենէ ազգիս, որք ընդ իշխանութեամբ այլոց ազգաց պարուանդեալ

եղեն իբրև երկաթուղի, կամ ի հեղգութենէ և յուսումնատեցութենէ դէտաց և հովուացն մերոց, որ մերոյս ազանց է առաւել հարկաւոր զփոյթ ունել այսպիսեաց գիտութեանց քան թէ այլոց ազանց: Վասն զի իւրաքանչիւր ազգաց նկարեն գաւազանաւ իշխանութեանց իւրեանց բռնութեամբ տալ հաւանեցուցանել զդաւանս, զկրօնս և զհաւատս իւրեանց, իսկ մեք և մեր ազգքն իշխիմք գաւազանաւ քան թէ իշխեմք:

Արդ, ասացաք թէ ազգն Հայոց հարկաւոր է յոյժ փոքր ի շատէ գիտել զկերպ գիտութեան իմիք՝ թէ յարտաքին փիլիսոփայութեանց և թէ ի յուղղափառ դաւանութենէ և ի տնօրէնութենէ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որով կարասցուք յաւուրն պատերազմի ի դիմի հարկանել և ի ձեռն հզօր բանի խորտակել զժանիս ոսոխացն, ուրեմն պարտ է մեզ յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ հետեիլ և ուսանիլ մանաւանդ գրաւանութենէ հաւատոյս մերոյս, այսինքն՝ զհաւատամ ի մի Աստուած՝ հայր ամենակալն բան առ բան մասնամասնօրեն (sic), նաև զՅոստովանիմ և զհաւատամ ամենակատար սրտիւն ևս բան առ բան յիւրաքանչիւրն ի ծնողացէ և կամ ի վարժապետէն իւրեանց, որք են գաւանութիւնք եկեղեցւոյս Հայոց համաձայնութեամբ մի և նոյն եկեղեցւոյն Քրիստոսի: Եւ հետևապէս տեղեկանալ զպարագայից եօթանց խորհրդոց զօրութենէ նոցին, զորս Տէրն մեր արձանացոյց յեկեղեցւոջ իւրում և ապա իբրև զպիտանի անօթ կամ ոսկեայ բանալի գանձուցն Աստուծոյ ամփոփեալ յշտեմարանի մտաց, զի ի հարկաւորի պահու պատրաստ լինիցի ի ձեռին, որով կարասցեն բանալ նոքօք զԳիրս աստուածայինս և ճաշակել ի պատրաստութենէ սեղանոյ տան Տեառն Աստուծոյ:

Սակայն կարէ ոք հարցանել, թէ զիա՞րդ իցէ մանաւանդագոյն ուսանելն ազգիս Հայոց քան թէ այլոց ազգաց՝ ինչպէս և ասեսն: Պատասխանեմ և ասեմ, թէ ազգն մեր սակս ոչ ունելոյ զհանգիստ կամ զտեղի, ուր դիցեն զգլուխս իւրեանց, և այս ի կողմանէ գերչաց և ընդ իշխանութեամբ գրաւողացն մերոց, որոց աղագաւ ոչ կարելով ի գործ արկանել զգինուորութիւն, զնօտարութիւն կամ զայլ իմն ծառայութիւն ի դրունս արքունեաց, նաև ոչ տալով նոցա զղաղար առ ի նեղելոյ և յափշտա(շա)կելոյ, կամելով ևս խանգարել զարուեստս ամենայն խորհելով ի մէնջ յայլոց աղագաւ անճարակս եղեալք յոչ ուստեքէ գտանել զհնարս կեցութեան, հետեցան արհեստի վաճառականութեան, և այսպէս ցիր և ցան եղեալ շրջիմք ընդ երեսօք բոլորակի գնդիս երկրիս: Ուստի յամենայն ուրեք և յամենայն տեղիս երևեալ գտանիմ սակս արհեստի վաճառականութեան մերոյ՝ թէ ի մէջ քրիստոնէից և թէ ի մէջ այլադաւանից: Եւ հետևապէս միշտ պատահի բան ինչ և կամ հար-

ցումն իմն թէ սակա հաւատոյ և թէ յաղագս գիտութեանց ոմանց առ ի հաւաքել զնիւթ ինչ թէ ի բնականաց և թէ ի գերբնական գիտութեանց, և միշտ առ պատրաստ ունել ի ձեռին, զի յաւուրս պատերազմաց կարիցուք ի պարտութիւն վանել զախոյեանն ձեր: Բայց արդ տեսնեմ զմեզ ի մէջ գայլոց պատառողաց, և ոչ ունիմք զցուպ մի և եթ ի ձեռին, որով կարասցուք ի բաց մերժել զպատառիչս հօտից և փարախաց գաւթին Քրիստոսի:

Արդարև բազմիցս ամօթի իցեն արժանիք, վասն զի կոչիմք բժիշկ[կ].ք և ողջարարք, բայց զանուանս դեղոց և եթ միայն (զի) ոչ կարեմք անուանել: Ուստի հարկաւոր համարեցաք ի ձեռն փոքր ինչ բանի ըստ տգիտութեան մերոյ համարձակիլ և տալ ծանուցանել հարազատացդ զդուզնաքեայ գիտութեանց զմեկնութիւնէ Հաւատամին և թէ զփիլիսոփայական իրաց ոմանց, որք պատկանին շուրջ զպարագայուք հաւատոյ և տնօրէնութեանց տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի եօթամբք գլխովք ընձեռել, զորս և աստանօր եղաք: Նախ զմեկնութենէ Հաւատամին՝ թէ զի՞նչ է Հաւատամն: Երկրորդ՝ թէ զի՞նչ է զանազանութիւն և զի՞նչ բաժանումն: Երրորդ՝ թէ զի՞նչ է անձն և զի՞նչ է բնութիւնն: Չորրորդ՝ զի՞նչ է միութիւնն և զի՞նչ է միաւորութիւնն: Հինգերորդ՝ զի՞նչ [է] պարզն և զի՞նչ բաղադրեալն: Վեցերորդ՝ թէ եկեղեցիս Հայոց ոչ ի ստոր անկանի բոլորովին ամբաստանութեանց փառամոլաց ոմանց: Եօթներորդ՝ ընձեռութիւնք և վիճաբանութիւնք ոմանք, որք պատահեցան երբեմն յիւրաքանչիւր դիպուածս ընդ այլազգիս և ի Պարսիկս թէ սակա երրորդութեան անձանց միոյ և եզակի Աստուծոյն և յաղագս ներմարմնութեան որդւոյն Աստուծոյ: Սակայն ծանիք, հարազատ ասպնջականք իմ, զի առաջարկութիւնք բանիս ոչ է առ մակացուս և իմաստասէրս, և կամ առ փիլիսոփայականաւ և աստուածաբանականաւ ճոխացեալ իմաստունս և վարդապետս: Այլ կամեցեալ զդոյ[զ]ն ինչ ի տուեցելոցն ամենահարստէն ընձեռել ծանեացն իմոց իբր խակակրթից և դեռաժամանակից ոմանց, թէպէտ և իմումս աստիճանի աւելորդ իմն է և յանթգնութիւն, քանզի եմ տրուպածական և ոչ վարդապետ: Սակայն ուսանիմ ընդ աղօտագունից և ընդ փոքերց աստեղաց, որք համեմատելով առ արեգակն արդարև պակասին իսպառ և ոչ ինչ երևին: Սակայն և այնու ոչ կասին և ոչ դադարին ըստ քանակութեանց ներգործել առ ստորնայինս ներգործել ազդեցողութենէ իւրեանց զի մի ունայն գտանիցին յասեցելոյն ամենահարուստ տուողին բնաւից: Ըստ այն կերպի և ըստ այն չափոյ համեմատելով և զիմս աղօտութիւն և զստորութիւն բանի առ այնքն, որք են վարդապետք և աստուածաբանք փարթամացեալք քարոզիչք, արդարև ոչինչ երևիմ և

խապառ պակասիմ, սակայն և ես ըստ փոքունց և ըստ մաներց աստեղացն ընձեռեմ զազօտ զզօրութիւն աղթողականս¹, զորս Աստուծն ամենայնի առատաձեռնեաց:

Եւ դուք ընթերցողք, արենակիցք եղբարք իմ, եթէ օգտիցէք զբան ինչ՝ այն Աստուծոյ է պարգև, իսկ եթէ ոչ՝ բաւական է զի անմեղադիրս առնիցէք զմեզ, և լինիցիմ ես իբրև զչուսուցիչս, և դուք իբրև չուսեալս, և մեք իբրև չուսեալք և իբրև ոչ ինչ գրեալք, և դուք ևս ոչինչ ընթերցեալք՝ մինչև գայցէ Տէրն առնուլ զհամարս ծառայից իւրոց:

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՆԴՈՒԹԵԱԼ
ՎԻՃԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ Ի ՄԵՐՄԷ
ՆԸԻԱՍՏՈՒԹԵՆԷ Ի ՅՍԿԶԲԱՆ ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՓՐԿԶԻՆ 1714-ԻՆ (ՁԵՈ. № 9049)**

180բ «.. Այլ արդ՝ և զայս ևս կամիմ յայտ առնել ազգի և արենակցացդ իմոց, մանաւանդ թէ գերպայծառ վարդապետաց և առհասարակ մանկանց և բանէսիրացդ եկեղեցւոյս Հայոց թէ ո՞վ ոք առաւել Հայ՝ յարենէ Յաբեթի և ծնունդ Հայկայ՝ նորին, և ես ոչ: Եւ ո՞վ ոք ի տոհմէն Արամայ և ի ծննդո նորին՝ և ես՝ ոչ, կամ ո՞վ ոք հարազատ և իսկական ժառանգ Յաբեթի, և ես ընդոծին՝ գրկեալ ի ժառանգութենէ: Եւ ո՞վ ոք ի մէջ բոլոր ազգիս՝ թէ յաշխարհականս և թէ ի յեկեղեցականս ջատագով ազգի և եկեղեցւոյս Հայոց՝ և ես ոչ: Այլ արդ՝ ով ոք ազգաւ Հայ՝ առաւել և ես, և ով ոք ժառանգ Յաբեթի, առաւել և ես, և ով ոք ի ծննդոցն Հայկայ՝ առաւել և ես, հետեապէս ոչ ոք ջատագով ազգի և եկեղեցւոյս Հայոց առաւել քան զիս՝ որպէս և յայտ է առաջի Աստուծոյ և բոլոր քրիստոսասէր և ծանօթից մերոց հարց և եղբորցդ Հայոց: Քանզի ըստ սրբազանին Պօղոսի, որ ի Գործոց 22 գլուխն և ի 3 համարն, թէև «Ես եմ այր Հրեայ, ծնեալ ի Տարսոնի Կիլիկեցւոց, սնեալ ի քաղաքիս յայսմիկ և առ ոտս Գամաղիէլի խրատեալ ըստ ճշմարտութեան հայրէնի օրինաց, նախանձայոյզ Աստուծոյ» և այլն: Նմանապէս և ես եմ այր ազգաւ Հայ ի ծննդոցն Հայկայ, որդի տեառն տէր Բարսղի սրբասնեալ և հոգիւրնկալ քահանայի, որդւոյ խոջայ Մելքոմի՝ մականունն Շիրփա-

¹ Կարդա՝ ազդողականս:

լանգ կոչեցելույ, որդույ տեառն տէր Ոսկանայ արժանապատուի քահանայի, որդույ Սենեքերիմայ առն նշնաւորի ի Դաշտէն Գողթնեաց և դաստիարակեալ և սնեալ ի յեկեղեցւոջ Հայոց և նախանձայոյզ ճշմարտութեան, սիրող սիրոյ և միաբանութեան, ցանկացող արդարութեան և ճշմարտութեան, փափագող ճշմարտասիրաց և որք խնդրեն զիրաւունս և սիրեն զճշմարտութիւն և ուղղութիւն: Հետեապէս և ատեցող սրտութեան, ատելասիրութեան, նախանձու և հակառակութեան՝ թարց երեսպաշտութեանց և ակնառութեան ումեք, ոչ գովաբանելով զսրտութիւն ազգի և արենակցացն իմոց և ոչ ուրանալով զճշմարտութիւն և զուղղութիւն այլոց և օտարացն այլասեռից: Ոչ խնայելով իմոցն պախարակել՝ եթէ իցեն արտուղի ի ճշմարտութենէ, և ոչ մերժելով զօտարս՝ եթէ իցեն ջատագովք ճշմարտութեան և ուղղութեան: Այլ միշտ կամեցաք պահել զիրաւունս և ոչ զմերն և կամ զօտարն, ընդրելով ի մէջ ճշմարտին և սրտոյն և գովելով զարարողութիւնս համեստս՝ խոհեմաբարս թէպէտ իցեն ի մէջ ազգաց բարբարոսաց կամ անհաւատից, և անարգելով զաւանդութիւնս և զ(181ա) սահմանադրութիւնս անպատշաճս և խոտելիս՝ թէպէտ իցեն ի հաւատոյ և հեղինակացն իմոց աւանդութիւնք: Ոչ երկնչելով ամենեւին և ոչ յումեքէ վկայել վասն ճշմարտութեանն, և ոչ նայելով ի յինչ և ի յստացուածս՝ զփարթամութիւնս և թերեւ զբոլոր կեանս իմս վասն ճանապարհին արդարութեան, ոչ խնդրելով զփառս և զմեծութիւնս և զգահիրիցութիւնս ակնկալ լինելով ի յօգնութենէ այլոց և հաճուկս լինելով զարտուղեացն ճշմարտութեանց, որպէս և յա[յ]տ է առ այնս, որք գոնեայ ի հեռուստ լուանն զմէնջ, մանաւանդ այնոցիկ որք ծանօթագոյնքն եղեն մեզ: Եւ միշտ աննախանձօրէն և անկեղծաբար եղաք և վարեցաք առ ամենայն ազգս քրիստոնէից: Ճշմարիտն ասեմ և ոչ սրտեմ, զի մինչ չե էր իմ տեսեալ և կամ խօսակցեալ ընդ ազգս և ընդ վարդապետս ազգին Յունաց, այնպէսի էր իմ կարծեցեալ զնոցանէ որպէս և միշտ չարախօսէինն վարդապետքս մեր: Այլ իբրև պատահեցաւ մեզ ծանիլ ի տունն Յունաց Կոստանդնուպօլիս, ի յիղմիւռին, մանաւանդ թէ ի բոլոր կղզիսն Արչիփելագս, որք են բնակութիւնք Յունաց, թէ Սիօ, թէ Անդրիայ, թէ Հիօ, թէ Նէկրփոնթ, թէ Նապօլի Ռումնիայ, թէ Քօրօն, թէ Մօղօն, թէ Զանթէ, թէ Զաֆօլոնիայ, թէ Քօրֆու և զայլ յունաբնակ կղզիսն այնպէս գտաք զազգս նոցա զոր ոչ կարեմ պատմել զբարուց և զազնուականութենէ նոցին, մանաւանդ թէ որպիսի և անխարդախ ընդանութիւն տեսաք ի յեկեղեցա-

կանց և ի վարդապետացն նոցունց այնքան ջերմեռանդութեամբ, մինչև զի իբրև տեսանէի զնոսա ի հեռուստ՝ այնպէս թըւէր, թէ են արդարև աշակերտք Քրիստոսի, և իբրև զմի յառաքելոցն, և ոչ լուաք ամենևին ի շրթանց և ի բերանոց նոցին և ոչ բան մի ընդդիմութեան և չարախօսութեան ընդդէմ մերոցս ազին, որպէս և մերքս միշտ հայհոյեն զայնպիսի զբաղմերախտ և զծնող ամենից իմաստից և այնպիսի անհամար սրբազանիւք հարբք և վարդապետօք զարդարեալ և պայծառացեալ զազգսն, զոր Տէր մի յիշեոցէ ի մեզս, այլ տացէ թերևս զճաշակ (181բ) սիրոյ և միաբանութեան ազգիս Հայոց առ ի սիրել զհամահաւատ զհաւատակից զեղբարս մերս թէ զՅոյնս, թէ զՎիրս, թէ զՌուսս, թէ զԼատինացիս, թէ զԵթեօպացիս և թերևս զՀօլանդացիս, զՇուետս և զԴանեմարքս, թէպէտ և սոքայ երեքեան ազգս իցեն արտաքոյ Կաթողիկէ եկեղեցւոյն: Եւ այսպէս ի ձեռն այսու սիրոյ և միաբանութեան ակն ունիմ ժառանգել ազգի և վարդապետաց և առհասարակ ազանացս կրկնակի փառս և խնդութիւն այժմ և ի հանդերձելումն, ամէն:

**«ՎԱՍՆ ԱՒՈՒՐՆ ԿԻՐԱԿԷԻ»
ՃԱՌԻ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՎՐԱՑԵՐԷՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԱՌՆՉԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ**

Եւսեբիոս եպօ. Աղեքսանդրացու անունով պահպանուած «Վասն աւուրն Կիրակէի պատուելոյ» ճառը վաղմիջնադարեան յունական բարոյախրատական այն յուշարձանների թուին է պատկանում, որոնց մէջ փորձ է արւում հաւատացեալներին ետ պահել կիրակի օրը երգ ու պարի, զուարճանքի տրուելու հեթանոսական կենցաղավարութիւնից: Որ հանդիսութիւնները շարունակում էին զբաղեցնել անտիկ թատրոնի նորորեայ երկրպագուներին, յայտնի է նաև եկեղեցական մատենագրութեան այլ ժանրերի ու հեղինակների երկերից (Թեկղի վարք, Յովհան Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացու և Յովհան Մանդակունու ճառեր և այլն):

Եւսեբիոսի ճառը շարադրուած է հարցուպատասխանի մատչելի սկսուածքով միմեանց հակադրելով թատրոնի և եկեղեցու կոչուածութիւնը: Խնդիրը, ինչպէս երևում է, հաւասարապէս մտահոգել է հելլենիզմի ոլորտ ընդգրկուած Այսրկովկասի հասարակութիւններին, Քրիստոնեայ Արևելքի հիւսիս-արևելեան բազուկը ներկայացնող Հայքին ու Վիրքին (հարկաւ նաև Աղուանքին), ուստի և միջնադարում այդ ճառը թարգմանուել է հայերէն և վրացերէն: Երեք տասնամեակ առաջ «Վասն աւուրն Կիրակէի» ճառի յունարէն բնագրի (PG, 86, 1, col. 297-309) և նրա վերոյիշեալ երկու թարգմանութիւնների համեմատական ուսումնասիրութեամբ և նրանց լատիներէն թարգմանութեամբ զբաղուեց Քրիստոնեայ Արևելքի մատենագրութիւնների ներհուն մասնագէտ, Ազաթանգեղոսի Պատմութեան յունարէն թարգմանութեան գիտական բնագրի կազմող ու քննարկող, այժմ հանգուցեալ Գի Լաֆոնտէնը¹:

Գիտնականը ճառի հայերէն բնագիրը հրապարակելիս ձեռքի տակ

¹ G. Lafontaine, "Sur le Dimanche" d' Eusébe d' Alexandrie version arménienne et version géorgienne, "Le Muséon". – Revue d'etudes Orientales, t. LXXXVII, fasc. 1-2 (1974), pp.23-44.

ունեցել է Վենետիկի Մխիթարեան հաւաքածոյի N 265 գրչագիրը և տեղեակ եղել Երևանի Մատենադարանի N 639 ձեռագրի ընդօրինակութեանը: Եթէ զանց առնենք մի քանի անհաջող բառանջատումներն ու իմաստաւորումները (կազմի]կայ զմի, մեղ]մէջ, լալոյ]խաղալոյ, ինքնակամ]ինքնական, այլ ոք]այլաւք, ջան եղեալ]ջանեղեալ, զի ոչ]զիոչ և այլն), ընդհանուր առմամբ պատշաճ հրատարակութիւն է: Վրացերէն բնագիրը վերարտադրուած է, քանի որ այն արդէն հրատարակուել էր Թ. Ճղոնիայի կողմից¹, սակայն հայկական և վրացական տարբերակների համեմատական ուսումնասիրութիւնը լիարժէք դարձնելու համար Գ. Լաֆոնտէնը կատարել է նաև վրացերենի լատիներէն թարգմանութիւն:

Ներածական ուսումնասիրութեան մէջ հրատարակիչը նկատելի ամփոփութեամբ անդրադարձել է հայերէն և վրացերէն թարգմանութիւնների առնչութեանը: Հարադրաւոր բայերի առկայութիւնը հայերէնում (կաց և մնա, կայ և մնայ, կան և մնան, մատիր և հաղորդիր ևն) և նրանց նմանատիպ փոխանցումը վրացերէնում, մի քանի ոճական պատճենումները (ի վեր հայիլ և տեսանել, ի վեր հայիլ և հանգչել) և «արեգակն»-ի դիմաց «մզիսթուալի» (արևի ակ) ունենալը բաւարար հիմք են ծառայել եզրակացնելու, թէ բնագրական նկատելի տարբերութիւններ ունեցող վրացական խմբագրութիւնը, այնուամենայնիւ, թարգմանուած է հայերէնից: Գ. Լաֆոնտէնը միաժամանակ հանգամանալի բնագրագիտական ու աղբիւրագիտական քննութեան է ենթարկում նաև յունարէն բնագիրը:

Գ. Լաֆոնտէնի հրապարակումից մեկ տարի անց, վրացական միջնադարեան ճառընտիրների մենագրական ուսումնասիրութեան առիթով Եւսեբիոս Աղեքսանդրացու «Վասն աւուրն Կիրակէի» ճառի առկայ խմբագրութիւնների փոխառնչութեան խնդրին անդրադարձաւ այժմ հանգուցեալ Մ. վան Էսբրուքը: Նա չի առարկում նախորդի եզրակացութեանը, ասել է թէ ընդունում է վրացական «Կղարջքյան ճառընտրի» (Կ.Կեկելիձեի անւ. Ձեռագրերի ինստ. A - 144, 78v - 81v) օրինակի հայերէնից թարգմանուած լինելը և զետեղում այն ճառընտրի ոչ ստոյգ թարգմանութիւնների խմբում²:

1985թ. Գ. Լաֆոնտէնի՝ վրացերէնը հայերէնից թարգմանուած լինելու եզրակացութեան հերքման փորձ կատարեց և ի նորոյ արժարժման ձեռնամուխ եղաւ բնագրագէտ պրոֆ. Թամիլա Մզալոբլիշւիլին:

¹ «ԵղեմնաՎյոթոս օնեթ. թոսմծյ», Թ. II, տձ., 1960.

² M. van Esbroeck, Les plus anciens homiliares géorgiens, Louvain, 1975, p. 252.

Նա ենթադրում է, որ վրացերէնում հայկաբանութիւններ դիտուած հարադրաւոր ձևերը հաւանաբար յատուկ են եղել յունական չաւանդուած այն բնագրին, որից անկախաբար թարգմանուել են հայերէնն ու վրացերէնը: Ինչ վերաբերում է «արեգակ» բառի Ն.Մառի ժամանակներից դիտուած վրացերէն «մզխաթուալի»-ի հայերէնի նմանութեամբ կազմուած լինելուն, ապա այդպիսիք կան նաև պահլաւերէնում, նոր պարսկերէնում, արաբերէնում և լատիներէնում, ինչպէս ցոյց են տուել Գ. Կլիմովն ու Բ. Գիզինեիշւիլին, հետևաբար այն իբրև հայկաբանութիւն դիտուել չի կարող¹: Ինչ վերաբերում է թարգմանութեան ժամանակին ու պարագաներին, Թ.Մզալթիշւիլին վկայակոչում է հեթանոսական սովորութիւնների դէմ պայքարելու անհրաժէշտութիւնը, որպիսին են կիրակնօրեայ զուարճութիւնները և հատկապէս կանացի պարերը, տիեզերական ժողովների որոշումները, կանոնադրքերի սահմանումները և եզրակացնում, որ A-144 ճառընտրի բովանդակած տարբերակը «խիստ վաղ ժամանակի է և խիստ մօտ է կանգնած իր յունարէն բնագրին, յամենայն դէպս՝ այս թարգմանութիւնը կատարուած պիտի լինի մինչև VII դարը»²:

Հետազօտողը, ինչպէս երևում է, իր եզրակացութիւնները համարում է աւարտական, ուստի «Կղարջքեան ճառընտրի» ամբողջական հրատարակութիւն կատարելիս նոյնութեամբ կրկնել է մինչ այդ հրատարակած յօդուածը³, մասամբ մեղմելով «խիստ մօտ» և «խիստ վաղ» վճիռները: Վարդապետական և յանդիպական տօների փոփոխութեամբ հետազօտողը ջանում է սահմանել յունական PG տարբերակի և նրան մօտ կանգնած հայերէն թարգմանութեան երևան դալու ժամանակը՝ «մօտաւորապէս VIII-IX դարերում»: Այսպիսով, ըստ այդմ, փաստօրէն, վրացական ճառընտիր մուծուած օրինակը յունական այլ բնագիր նախօրինակ է ենթադրում, որից այն թարգմանուած պիտի լինի մէկերկու դար առաջ:

Բնագրաքննական այս դրոյթների հետ կարելի էր համաձայնուել և մերժել Գ. Լաֆոնտէնի և Մ. վան Էսբրուքի հետազօտութիւնների՝

¹ თამილა მგალობლიშვილი, ევსევო აღეკსახდრელის სახელით ცნობილი ერთი თხზულების წყაროს საკითხი.- "მრავალთავი", ტ. XI, თბ., 1985, გვ. 13-23.

² Նույն տեղում, էջ 19:

³ "კლარჯული მრავალთავი", თბ. 1991, გვ. 58-66.

Մեր վկայակոչած հայկաբանութիւնները, կարծում ենք, հապես լրացնում են Գ. Լաֆոնտէնի բերած կոուանները և հաւաստում նրա եզրակացութեան պատճառաբանուածութիւնը՝ հայերէնը թարգմանուած է յունարէնից (PG, 86,1, col. 297-309), իսկ վրացերէնը՝ այսօր մեզ ծանօթ բնագրից մասամբ տարբերուող հայերէն խմբագրութիւնից:

XXX

Նորից յիշենք, որ Կիրակի օրուայ խնդիրը իր մէջ ներառում էր արարչագործութեան օրուանից մինչև Քրիստոսի ծնունդն ու յարությունը շարունակուող բաղձաթիւ պայմանական ստուգազրումներ, հետևաբար այն միայն ծիսական չէ, այլ նաև քրիստոսաբանական: Պատահական չէ, որ այդ օրուան է նուիրուած նաև Յովհան Ոսկերբանի անունով յայտնի «Վասն կիրակէի» մի ճառ, որի հին հայերէն թարգմանութիւնը նորոգուած պիտի լինի Կիլիկեան շրջանի մատենագիրների միջավայրում¹: Այդ են փաստում կու մասնիկը, պարաքայ բառը և այլն:

Այստեղ նոյնպէս հակադրւում են անտիկ շրջանից եկող թատրոնն ու նրա արարողական ձևի մէջ միանգամայն նոր բովանդակութիւն դրած եկեղեցին: Ահա մի վկայակոչում ժողովրդական այդ նոյն տօնախմբութիւնը ներկայացնող դրուագից «... դի չէ հրամայել Աստուած ... կամ շատ արբենալ յաւուր Կիրակէի, կամ երթալ ի տուն բարեկամի, կամ յաղգականի, այլ ի յեկեղեցի, կամ երթալ ի տուն դուսանի, կամ ի տուն խաղոյ վասն ուրախութեան, դի դիւաց տուն կոչի գուսանն, դի մեղքն յաշխարհս ուտելով և ըմբելով և ուրախանալովն եմուտ...» (տես Մատ. ձեռ. 639, էջ 316r - 317r):

Յովհ. Ոսկերբանի անունով պահպանուած այս ճառը չգտնուեց նրա ժառանգութեան հայերէն թարգմանութիւնների հատորներում, ուստի անհրաժէշտ նկատեցինք հրատարակել այն իբրև յաւելում:

Հրապարակման համեմատութիւնը այլ ընդօրինակութիւնների և յունարէն բնագրի հետ թողնում ենք առաջիկային: Քննարկելի ենք նկատում նաև հեղինակային պատկանելիութեան հարցը:

¹ Մատենադարանի ձեռ. N 639, էջ 314v - 319r: Դատելով սկզբնատողերից, նոյնական չէ Գ. Զարբհանալեանի յիշատակած «Խաւսք վասն կեցուցիչ կիւրակէին տաւնի, և յեկելոցն բաղձութիւն և թէ ամենևին չէ պարտ. երդնուլ» ճառի հետ (Գ. Զարբհանալեան, Հայկական թարգմանութիւնք նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 603-604):

ՅԱՎԵԼ ՎԱԾ

ՅՈՎ ՀԱՆՆՈՒ ՈՍԿԻԲԵՐԱՆԻՆ
ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ԿԻՐԱԿԷ

ՁԵՌ. Մ. № 639

Զգուշութեամբ պահելով զաւր Կիրակէի աստուածասէր ժողովուրդք, երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք, յուսով և հաւատով պատուեցէք և սիրեցէք զաղքատն ողորմածութեամբ վասն Քրիստոսի սիրոյն և ձեր հոգւոյս փրկութեան յաւուր անկաշառ դատաստանին, զի Աստուծոյ անունն Կիրակի է, և որ զԿիրակէն արհամարհէ կամ փոքր կարծէ՝ զԱստուած արհամարհէ, զի Կիրակէ համբարձաւ անմահն յերկինս յառաջ քան զյաւիտեանս: Դարձեալ վասն սիրոյ սկիզբն եղև վասն արարչութեան Աստուծոյ: Կիրակէ նոյ զտապանն շինեաց և եկն ջրհեղեղն: Ի Կիրակէ ելաւ նոյ ի տապանէն, ի Կիրակէ մատուցին զընձայս ի սուրբ և յանարատ անասնիցն: Ի Կիրակէի խաւսեցաւ Աստուած ընդ Աբրահամու, ի Կիրակի կործանեաց զՍոդոմ և զԳոմոր վասն մեղաց իւրեանց: Ի Կիրակէի Յովնան մարգարէն քարոզեաց նինուացւոցն և անցոյց զբարկութիւն Աստուծոյ ի ձեռն ապաշխարութեան: Ի Կիրակէի եղև թողութիւն մեղաց Դաւիթ մարգարէին ի ձեռն ապաշխարութեան, ելաւ Յովնան ի փորոց կետին: Ի Կիրակէի ազատեցաւ Յոբ երանելին ի բերանոյ որդանցն, ի Կիրակէի ապրեցաւ Դանիէլ մարգարէն ի բերանոյ առիւծոյն, ի Կիրակէի ապրեցան Երեք մանկունքն ի հնոցին, ի Կիրակէի ելաւ սուրբ Գրիգոր ի Խոր վիրապէն և ազատեաց զթագաւորն ի խոզացելոյն զՏրդատ: Ի Կիրակէի պապանձեցաւ Զաքարիայ ի հրշտակէն, ի Կիրակէի խաւսեցաւ հրշտակն և եբեր զաւետիս Կուսին: Ի Կիրակէի յարեաւ Քրիստոս ի մեռելոց, ի Կիրակէի աւերեաց զգոթիւքն և կապեաց զսատանա[յ]ի յայնիւս և ազատեաց զհինգ հազար տարու զմեռեալսն հորու կապանս և ազատեաց զհինգ հազար տարու զմեռեալսն հոր զիքն, որ բռնել էր և կու չարչարէր սատանայ: Ի Կիրակէի գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս, ի Կիրակէի լինելոց է ահեղ դատաստան: Ի Կիրակէի հանգեաւ Աստուած յամենայն գործոց իւրոց և մեզ հանգիստ շնորհեաց և ասաց իւր սուրբ բերանովն, թէ Որ զԿիրակէն արհամարհէ՝ զԱստուած արհամարհէ, զի գրեալ է յԱռաքելական կանոնքն, թէ անիծեալ է այն մարդն, որ ի Կիրակէի բան առնէ. ծերք և երիտասարդք, մեծ և փոքր ի

- շաբաթ աւուր ի յիններորդ ժամու հանգիստ է, որ բան չառնեն
 մարդոյ և անասնոյ, ծառա[յ]ի և մշակի: Ի յեկեղեցի երթան, և
 որ ոչ երթա[յ] յեկեղեցին՝ չէ կատարեալ քրիստոնեայ և չունի
 316r մասն ընդ Քրիստոսի և ոչ յարութեան ակն ունի, զի Քրիստոս
 ասաց, թէ Ունիք ձեզ վեց աւր շաբաթու գործել և Կիրակիէն
 հանգչել, և որ ի Կիրակի ողորմի և աղքատին բան տա՝ զեզն
 կամ զէշ և այլ զինչ և իցէ՝ չունի վարձ յԱստուծոյ և արհամար-
 հէ զԱռաքելական կանոնքն և պատառէ զցանկ աւրինացն հայ-
 բնական սուրբ հայրապետացն և սուրբ առաքելոցն, զի գրեալ
 է. Աստուած մի՛ դնել լուծ եզինն և մի՛ համէտ իշոյ, և մի՛ տանձս
 ձիոյ, և մի՛ ճանապարհ երթալ, զի չէ բարի: Մի յարտ երթալ ի
 տես, զի պարաքայն վերանա[յ], և մի յայգի, զի պտուղն չորա-
 նա[յ] և մի այլ ինչ բան առներ, այլ միայն աղաւթել, զի չէ հրա-
 մաել (sic) Աստուած զատել յեկեղեցւոյն յաւուր Կիրակէի, կամ
 շատ ուտել, կամ շատ արբենալ յաւուր Կիրակէի, կամ երթալ ի
 տուն բարեկամի, կամ յազգականի, այլ ի յեկեղեցի, կամ երթայ
 ի տուն գուսանի, կամ ի տուն խաղոյ վասն ուրախութեան, զի
 դիւաց տուն կոչի գուսանն, զի մեղքն յաշխարհս ուտելով և
 ըմբելով և ուրախանալովն եմուտ: Եւ ամենայն ցասումն՝ սովն,
 մահտարաժամն, ջրհեղեղն, կրակն, մորեխն. թրթուրն, կար-
 316v կուտն և այլ զինչ և իցէ ցասումն և պատահար ի վերա[յ] աշ-
 խարհի, որ կուգայ ի Կիրակէից բանէն է և յուտելոյն և խմելոյն,
 շնութիւն բուսաւ և վաշխն և ամենայն տոկոսիւք և այլ զամե-
 նայն ինչ և իցէ որ մարդ իմանայ՝ ուտելն և շնա[նա]լն, զրկելն և
 ատելն զընկերն և զամենայն ցասումն բերէ սատանա[յ], և մար-
 դուս առնելիքն որ և վերացաւ ամենայն իրաց պարաքայն աշ-
 խարհէս վասն մարդոյ անհնազանդութենէ, զի Յոհան կու հրա-
 մաէ (sic) Աստուծոյ բերանովն, զի սատանա[յ] և ամենայն դեք
 կալով զան ի շուրջ զգուսանն խնդրեն և տուն և բնակարան շի-
 նեն իւրեանցն և ուրախանան և շատանան և հանգչին ի մարմին
 և ի հոգիս մարդկան և ժողովեն զհողածնեալքս ի յԱղամա[յ]
 մինչև ի վերջին մարդն և հանեն յԱստուծոյ: Եւ դարձեալ ասեն,
 թէ ողբա մեծ սգով ամենայն եկեղեցի կորստեան ժողովրդեանն,
 զի սատանա[յ] տանի ի խաւարն արտաքին, զի անդ եղիցի լալ և
 կրճել ատամանց, զի կինն և գուսանն և գինին խաղայիք են մեծ
 զէն դիւաց և աղիք սատանայի: Աղաչեմ զամենեսեան փախե-
 րուք ի սատանա[յ]է, երկերուք Աստուծոյն և յամենայն սրբոց |
 317r նորա և մի երթայք ի հետ չարին, այլ զնացէք յեկեղեցին, ուր

Քրիստոս և իւր սուրբքն են և անդ աղաւթեցէք և զմեղքն թողէք խոստովանութեամբ, հաղորդեցէք, զմիմեանս սիրեցէք, և զսուտն և զյիշոցքն թողէք, որ գլուխ է ամենայն մեղաց: Զի Քրիստոս կու հրամա[յ]է, թէ ամենայն մեղք թողցի մարդկան, բայց որ զՀոգին սուրբ հայհոյէ՝ մի թողցի մի յայսմ աշխարհիս, մի հանդերձեալ աւրն: Աղաչեմ զձեզ, ով եղբարք, զի Կիրակէն սուր է երկու բերանի՝ մեծ ի յաջոյ հարկանէ և ի ձախոյ կտրէ և ի խաւարն արտաքին տանի: Եւ որ զԿիրակէն սիրէ և սլատվէ (sic)՝ ի դժոխս ոչ իջանէ և ի սպառնայեացն ոչ երկնչի, այլ ի զոզն Աբրահամու հանգչի և յամենայն մեղաց ազատի և որ զգիրս կարդա[յ] կամ այլոց ուսուցանէ՝ զփառս ի Քրիստոսէ առցէ, ամէն:

Ընդ նմին և զիս՝ զանպիտան և զմեղաւք լցեալս և ի բարի գործոցս ապիկարս աղաչեմ յիշել զձեզ յորժամ կարդայք կամ աւրինակէք թողութիւն խնդրեցէք և ինձ մեղապարտիս Յովհաննէս սուտա-նուն քահանայի, և տէրն է արարիչն ամենայնի յորժամ գայցէ ի յիւր միւս անգամ գալուստն և զձեր անցեալն ոչ յիշէ, ամէն: Գրեցաւ ի թվ. ՊԾԸ [1409] ի փառս Աստուծոյ: Ամէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

«Հայերը ամենայն ժամանակ քարերի վերայ արձանագրած ունին հասարակական գործերը և մեծ դիպուածների յիշատակները: Նորանց պատմութիւնը, այսպէս ասած, քարերի և իրենց երկրի ժայռերի վերայ գրուած արձանագրութիւն է: Թագաւորների հին պալատները, ամրոցները, կամուրջները, կրօնական և հասարակական շինութիւնների պատերը ծածկուած են, ես այդ գիտեմ, արձանագրութիւններով, որոնց պատճէնները շատ մեծ նշանակութիւն կունենան: Ես դորանցից մի քանի հատ ունիմ, նորանք ինձ հասել են Մեծ Հայքից և բաւական են ինձ մի բարձր գաղափար տալու համար այն տեսակ ժողովածուի օգտակարութեան մասին»:

Սէն-Մարտէն, «Նամակ Ալեքսանդր
Հոլմբուլդտին» (22, XI, 1831, Փարիզ)¹

Ա. Ֆրանսիացի ակադեմիականի այս ծրագրային գնահատութիւնը միջնորդաւորուած արձագանքն է 19-րդ դարի առաջին տասնամեակներին Ներսէս Աշտարակեցու հրահանգով մեզանում ծայր առած վիճաբանահաւաքչական աշխոյժ աշխատանքի և հետաքրքրութեան²: Շատ չանցած լոյս տեսան Մ. Բժշկեանցի, Յ. Շահխաթունեանցի, Ա. Զալալեանցի, ապա և Ն. Սարգիսեանցի, Մ. Բրոսէի ու Քաջբերունու կազմած հատորները³: Վիճաբանի յիւթերի հմուտ վերծանութիւններով

¹ Նամակի հայերէն թարգմանութիւնը և հրատարակումը կատարել է Աբգար Յովհաննիսեանը («Արձագանք», 1893, թիւ 148): Տես նաև՝ «Ակադեմիկոս Մարի Բրոսէ», կազմեց և խմբագրեց՝ Պ.Մուրադեան, Երևան, 2002, էջ 11-18:

² Պ. Մուրադեան, Ներսէս Աշտարակեցին ազգային վիճաբանութեան առաջնեկ-«Ներսէս Աշտարակեցի՝ Պաշտպան հայրենեաց», [Երևան], 2004, էջ 35-36:

³ Ճանապարհորդութիւն ի Լեհաստան..., շարադրեալ... Հ. Մինասայ Բժշկեանց, Վենետիկ, 1830: Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկ. Շահխաթունեանց Շահրիարցոյ՝ միաբանի սրբոյ Էջմիածնի, հատ. Ա, Էջմիածին 1842, հատ. Բ, 1842: Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատասիրութեամբ Սարգիս վրդ. Զալալեանց,

ու քննարկումներով հարուստ են Ղ. Ալիշանի և Վ. Լանգլուայի տեղագրական աշխատութիւնները¹: Վիմագրերի հաղորդումների աստիճանական ճանաչումը բերում է այդ կարգի աղբիւրների ժողովածուներ կազմելու անհրաժեշտութեանը: Հայագիր արձանագրութիւնների անդրանիկ ժողովածուն, նիւթի ժամանակագրական ներկայացմամբ, կազմել է Կ. Կոստանեանցը²: Այդ նոյն 1913 թուականին «Քարտէզ Հայ Հնագրութեան» աշխատութեան կազմում Գ. Յովսէփեանը լուսապատճենների առկցմամբ ու Հնագրական-տեղագրական բնութագրմամբ հրատարակում է VI-XVII դարերի 30 արձանագրութիւն³:

Բ. Միջնադարեան Հայաստանի վիմագիր ժառանգութեան վերծանութեան և գիտական հրատարակութեան սկզբունքների մշակումը կապուած է 1890-ական թուականների Անիի Հնագիտական ուսումնասիրութեան հետ: Ն. Մառը նախ նորայայտ վիմագրերի որոշ քանակութիւն հրատարակեց՝ դրանք ենթարկելով աղբիւրագիտական, լեզուական-բառագանձային և ոճական քննութեան⁴, ապա և «Վիմական տարեգիրը» խմբագրելիս սահմանեց այն պահանջները, որոնք պետք է հաւաստեն ընթերցման ճշգրտութիւնը, թուագրման փաստականութիւնը, Հնագրական առանձնայատկութիւնը: Յիշեալ խնդիրների կապակցութեամբ նա գիտական խորհրդակցութիւններ գումարեց, նոյնիսկ յապաւումներ ու զանազան կցագրութիւններ ունեցող մայրեր ու տառեր ձուլել տուեց՝ արտաքին նկարագիրը պահպանելու համար: Վիմագրագիտական յատուկ պատրաստութիւն ստացան նրա աշակերտներ Յ. Օրբէլին, Ա. Լոռու-Մելիքեան Քալանթարը, Ս. Տէր-Աւելերտներ Յ. Օրբէլին, Ա. Լոռու-Մելիքեան Քալանթարը VII դարի գերատիսեանը և այլք: Ն. Մառը Յ. Օրբէլուն յանձնարարեց VII դարի գերատիսեանը շինարարական արձանագրութիւնների վերծանութիւնն ու հրատարակութիւնը, ապա և նրան յանձնեց Անիի պեղումներից լոյս աշխարհ եկած վիմագիր նիւթերի դիւանի կազմումը (բուն առարկաների մեկ մասը անհետ կորաւ Ս. Պետերբուրգից Թիֆլիս ցուցադրու-

մասն Ա., Տիֆլիս, 1842, մասն Բ., Տիֆլիս, 1858: Հ. Ներսէս Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս, Վենետիկ, 1864:

¹ Տե՛ս Ղ. Ալիշանի «Շիրակ» (1881), «Սիսուան» (1885), «Այրարատ» (1890), «Սիսական» (1893) և միւս աշխատութիւնները: V. Langlois, Inscriptions

grecaues, romaines, byzant. et armen. de la Cilicie..., Paris, 1854. նոյնի Voyage dans la Cilicie..., Paris, 1861: Տե՛ս և միւս գործերը:

² «Վիմական տարեգիր» - ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց, Ս.-Պետերբուրգ, 1913:

³ Գարեգին վրդ. Յովսէփեան, Գրչութեան արուեստը հին Հայոց մէջ, Վաղարշապատ, 1913:

⁴ Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике (Ани - Аламан - Мрен - Багаран - Ервандакерт - В. Талын), СПб., 1893.

թեան ճանապարհէյիս՝ Վլադիկաւկաղ կայարանի մերձակայքում)¹ : Հանգամանքների բերումով 1920-ական թուականներին սլաւոլատաժ ու աղիւսակները տպած Անիի վիմագրերի դիւանը լոյս տեսաւ 1966 թ. Երևանում Ս. Բարխուդարեանի խմբագրութեամբ² : Հիմնականում պահպանուած են Ն. Մառի դպրոցի սահմանաձգ գիտական և տեխնիկական սկզբունքները, աւելացնելով արձանագրութեան գրչանկար սլաուկերը : Ի դէպ, Անիի և շրջակայքի վիմագրերի հրատարակութեանն ու ֆրանսերէն թարգմանութեանն է նուիրուած Կ. Բասմաճեանի դիրքը³ :

Գ. Հայաստանի վիմագիր ժառանգութեան դիւաններ կազմելու գիտական անհրաժեշտութեան գիտակցումը շատերին մղեց այդ գործին (Մ. Էմին, Ե. Լալաեան, Մ. Սմբատեան, Հր. Աճառեան), սակայն նրանք չմշակեցին միասնական ծրագիր, ուստի և գոհացան առանձին հրատարակումներով կամ ձեռագիր ընդօրինակումներով : 1954 թ. իր գոյութեան առաջին տասնամեակը բոլորող Գիտությունների ակադեմիան ստեղծեց վիմագրական արշաւախումբ, ապա և յատուկ բաժին՝ Յ. Օրբէլու խորհրդատուութեամբ ու վիմագրագէտ Ս. Բարխուդարեանի խմբագրութեամբ «Դիւան Հայ վիմագրութեան» մատենաշար հրատարակելու համար : Առ այսօր լույս է տեսել միասնական սկզբունքով կազմուած ութ պրակ՝ շուրջ եօթ հազար միաւոր ընդգրկումով⁴ : Այս թուին գումարելու են Կ. Ղաֆաղարեանի մենագրական հատորների բովանդակած հարիւրաւոր վիմագրերը⁵, ինչպես նաև Ա. Քալանթարի, Պ. Մուրադեանի, Ա. Այւաղեանի, Ս. Սաղումեանի, Գ. Սարգսեանի,

¹ Բացի արձանագրերից՝ կորած նիւթերի մէջ էին Ն. Մառի օրագրութիւնները, շատ չափագրութիւններ ու լուսանկարներ, Իվ. Զաւախիշչիլու գրադարանը և բազում այլ արժէքներ : Վագոնների հսկողութիւնը Ն. Մառը վստահել էր իր սաներից մէկին :

² «Դիւան Հայ վիմագրութեան», պրակ 1, Անի քաղաք, կազմեց Յ. Ա. Օրբէլի, Երևան, 1966 :

³ K. J. Basmadjian, Les inscriptions arméniennes d'Ani, de Bagnair et de Marmachen. – "Revue de l'Orient chretien", Paris, 1920-1921.

⁴ Պրակները կազմել են՝ 1-ին Յ. Օրբէլի, [Ս. Բարխուդարեան], II-V – Ս. Բարխուդարեան, VI – Ս. Աւագեան, Հո. Զանփուլադեան, VII-VIII – Գ. Գրիգորեան :

⁵ Կարո Ղաֆաղարեան, Հովհաննավանքը և նրա արձանագրութիւնները, Երևան, 1948 : Նոյնի՝ Սանահնի վանքը և նրա արձանագրութիւնները, Երևան, 1957. Նոյնի՝ Հաղրատ. Ճարտարապետական կառուցուածքները և վիմական արձանագրութիւնները, Երևան, 1963. Նոյնի՝ Երևան, միջնադարեան յուշարձանները և վիմական արձանագրութիւնները, Երևան, 1975 : Ashkharbek Kalantar, The mediaeval inscriptions of Vanstan. Armenia, Paris, 1999. П. М. Мурадян, Армянская эпиграфика Грузии, Ереван, 1985, 1988 : Արգամ Այվաղեան, Նախիջևանի վիմագրական ժառանգութիւնը, հատոր Ա, Զուղա, Երևան, 2004 : Ս. Կարապետեան, Բուն Աղուանքի հայերէն վիմագրերը, Երևան, 1997 :

Ս. Կարապետեանի և ուրիշների կատարած հրապարակումները: Այսպիսով, կարելի է ասել, թէ ի մի է բերուած հայոց վիմագիր ժառանգութեան շուրջ կէսը: Հայաստանից դուրս գործող գիտնականներից վիմագրական կարևոր հրապարակումներ են կատարել Մայքլ Սթոունը և Գարրիէլլա Ուլուհոճեանը¹:

Դ. Վիմագրերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանաւորուած է հայոց բնակութեան էթնիկական շրջանակներով՝ բուն հայրենիքում և յետոյ առաջ եկած հայկական բնակավայրերում՝ այլ երկրներում: Բանական կուտակման առումով առանձնանում է Արևելեան

Հայաստանը՝ Այրարատ, Շիրակ, Լոռէ, Սիւնիք, Արցախ: Այս պարագան թելադրուած է ոչ այնքան քաղաքական կամ սոցիալական առանձնայատկութեամբ, որքան աւանդոյթով ու շինաքարի փորագրման մատչելիութեամբ: Հարաւային Հայաստանում նիւթական ու հողեր անցուղարձերին, հրահանգներին, գործարքներին, պարտոյթներին վերաբերող գրառումները մուծուած էին ձեռագիր ժողովածուների ազատ էջեր, լուսանցներ, մինչդեռ Հիւսիսային Հայաստանում այդրի ամէնը գերադասում էին հրապարակել արձանագրութեան տեսքով: Ինչ վերաբերում է հրապարակուող միաւորի պահպանութեան ապահովութեանը, թագաւորական իշխանութեան, իշխանական տների վերացման և կաթողիկոսարանի ու նրա հնադարանների աստանդականութեան պարագայում պաշտամունքային կառոյցների պատերը տեւականութիւն երաշխաւորող միջոցներ էին: Համահայկական կարգաւորող ինստիտուտների բացակայութիւնը բերում էր իրավական-տնտեսական նորմերի՝ տեղայնացման և տեղային գրառման:

Ե. Հայալեզու վիմագրերի ժամանակագրութիւնը ընդգրկում է ողջ միջնադարը՝ ենթաշրջանների անհաւասարաչափ խտացումներով: Հնագոյնը Տեկորի տաճարի արձանագրութիւնն է (V դ. աւարտ)՝ տողերի յաջորդականութեան անսովոր շարունակմամբ և կասկած չարուցող մի քանի այլ պարագաներով²: Բաւական մեծ թիւ են ներկայացնում VII դարի շինարարական արձանագրութիւնները (Ալաման, Աթէն, Աշտարակ, Արուճ, Աւան, Բազարան, Բազաւան, Եղիվարդ, Թային, Մաստարա, Զուարի ևն): Գրերի խոշորութեամբ ու հանդիսա-

¹ Michael Stone, The Armenian Inscription from the Sinai, Cambridge, Massachusetts, 1982, Gabriella Uluhogian, Silloge delle epigrafi armene di S. Stefano di Giulfa, Milano, 1981. Նոյնի Testimoniazze epigrafiche della presenza degli armeni nell Azerbajgian Iraniano, Milano, 1977.

² Н. Март, К датировке ктитерской надписи Текорского храма. - "Христианский Восток", т. III /1914/, стр. 56-71.

ւորութեամբ, միատող գօտևորմամբ, խնամածու փորուածքով նրանցից շատերը միաժամանակ ճարտարապետական կառույցի յարդարանքի մաս են կազմում¹։ Այս վիմագրերում յիշատակուող անձանց տիտղոսներից ու տոհմանուններից կարելի է կռահել Բիւզանդական Հայաստանի վարչա-կառավարման աստիճանակարգը։

Թուագրումը ըստ իշխանութեան տարիների է, բայց և գործածութիւն են գտնում Փրկչական և Հայոց թուականները²։ Ծածկագրութեան գործածութիւնը VII դ. վիմագրերում (Աւան, Եղիւարդ) գրագիտութեան և գրաճանաչման որոշակի մակարդակ է վկայում։ Վիմագիր հրապարակումների քանակը առանձնապէս մեծանում է XI-XIII դարերում, որ պայմանաւորուած է իշխանական նոր տների քաղաքական ու մշակութային ակտիւութեամբ (Զաքարեաններ, Արծրունիներ, Պռոշեաններ, Վաչուտեաններ ևն)։ Վիմագրերով են օժտուած նաև մեմուարային յուշարձանները՝ խաչքարեր, մատուռներ, աղբիւրներ։ XIV-XVI դարերի Հայոց պատմութեան հիմնական աղբիւրը պատմիչների երկերի, յիշատակարանների կողքին, վիմագրերն են, այդ թվում և տապանագրերը մանաւանդ գաղթօջախներում։ Ուշ միջնադարի քաղաքային նշանաւոր կենտրոններում Հայոց հանգստարանների տապանագրերը (Կ. Պոլիս, Զուղա, Թիֆլիս, Երևան ևն), արհեստները, էթնիկական տեղաշարժերը, բարբառներն ու ազգագրական ինքնութիւնները վկայող հսկայական նիւթ են մատակարարում։

2. Արձանագրութիւնները արտացոլում են Հայոց միջնադարեան հասարակական կեանքի գրեթէ բոլոր դրսևորումները՝ հարկերն ու պարտոյթները, իրաւական սահմանումներն ու կարգաւորումները, շինարարական ու նորոգչական աշխատանքները, վարչական կառուցուածքն ու պաշտօնէութիւնը, տնտեսական գործարքները, սահմանները, քաղաքական ու հոգևոր իշխանութիւնների յաջորդականութիւնը, գրական-մշակութային տեղեակութիւնը³, դաւանական պատկանելիութիւնը, միաբանութիւնների կազմը, վանական հաստատութիւնների ու հաւատացեալների յարաբերութիւնները և բազում այլ իրողութիւններ։

Մատենագրական այլ աղբիւրների համեմատութեամբ վիմագիր

¹ Նրանց մեծ մասի վերծանութեամբ ու քննութեամբ ղրադուել է Յ. Օրբէլին (տե՛ս նրա՝ «Избранные труды», Ереван, 1963, стр. 371-412). Կ. Ղաֆաղարեան, Աւանի երկկեղուեան ծածկագիր արձանագրութիւնը, Երևան, 1945, Պ. Մուրադեան, Եղուարդի ծածկագիր արձանագրութիւնը - «Երևանի համալսարան», 1974, N 1, /18/։

² П. Мурадян, Хронология систем летосчисления по армянским источникам - «Вестник общественных наук», 1975, N 10, 1976 N 1։

³ Տե՛ս, օրինակ, Ս. Գևորգեան, Հայ վիմագիր բանաստեղծութիւնը, Երևան, 1989։

բնագրերը բնաւ ենթակայ չեն հետագայ խմբագրութեան ու փոփոխութեան, փտահարար վերաբերում են այն միջավայրին, ուր հրապարագուած են փորագրութեամբ: Իբրև կանոն արձանագրութիւնները ունեն հասցեագրում, գործնական փաստացի բովանդակութիւն, բանաձևային մշակուած շարադրութիւն, թվագրութիւն, շատ յաճախ նաև ճարտարապետ-չինողի ու փորագրողի յիշատակութիւն: Այդ հիմամբ է, որ վիմագրագետ Սեդրակ Բարխուդարեանը կազմեց միջնադարեան ճարտարապետների և քարգործ վարպետների մեծադիր բառարան-ուսումնասիրութիւն¹: Հայոց լեզուի պատմական հնչիւնաբանութեան, բարբառային ձևերի, բառագիտութեան և փոխառութիւնների տեղագրուած ու ժամանակագրուած վկայութիւնները առատօրէն ներկայացուած են վիմագրերում²: Լեզուական այս իրողութիւնները օգնում են ճշտելու արտերկրում հաստատուած հայկական զանգուածների բնիկ հայրենական միջավայրը, ինչպէս նաև արտագաղթի ճանապարհները: Նոյնիսկ ուխտագնացութիւնների ժամանակ այս ու այնտեղ իջևանելիս հայերը հակամէտ էին արձանագիր յիշատակութիւններ թողնել³:

է. Արևելեան քաղաքակրթութեան հնագոյն կենտրոնների հետ ունեցած աշխարհագրական մերձութիւնը, խաչմերուկային դիրքն ու տեական շփումները իրենց գրաւոր հետքերն են թողել Հայկական բարձրավանդակում, ասել է՝ պատմական Հայաստանում: Այստեղ պահպանուել են գաղափարագրութեան, մեհենագրութեան, սեպապագրութեան շրջանի բազմաթիւ յուշարձաններ: Թէ ո՞ր լեզուով և ինչ են վկայում առաջին երկուսը՝ առաջիկայ պրպտող մտքի ճշգրտելիքն է, իսկ մերօրեայ վերձանութեան փորձերը մոռացութեան չտալու առուստով հարկաւ օգտակար են⁴: Սեպագրութեան գաղտնիքները վաղուց պարզուած են, և ուրարտական արձանագրութիւնների պատկառելի պարզուած են, և ուրարտական արձանագրութիւնների պատկառելի հատորը մասնագետների սեղանին է⁵: Վաղուց արդէն վերձանուել ու քննութեան առարկայ են դարձել Հայաստանի տարածքում յայտնաբերուած արամեէրէն, յունարէն ու լատիներէն արձանագրութիւնները⁶:

¹ Ս. Բարխուդարեան, Միջնադարեան Հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963:

² Ս. Աւագեան, Վիմական արձանագրութիւնների հնչիւնաբանութիւն (X-XIV դդ.), Երևան, 1973: Նոյնի՝ Վիմական արձանագրութիւնների բառաքննութիւն, Երևան, 1978: Նոյնի՝ Վիմագրական պրպտումներ, Երևան, 1986:

³ Michel E. Stone, The Armenian Inscriptions from the Sinai.

⁴ Արտակ Մովսիսեան, Հայկական մեհենագրութիւն, Երևան, 2003: Նոյնի՝ Նախամաշտոցեան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003:

⁵ Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

⁶ М. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата, С.-Петербург, 1911. В. Н. Бенешевич, Три анийские надписи XI века из эпохи византийского

Սեփական գիր ու դպրութիւն ստեղծելուց յետոյ էլ քաղաքական ու դաւանական թելադրութիւններով մեզանում գրել ու կարդացուել են ասորերէն, արաբերէն, վրացերէն, պարսկերէն արձանագրութիւններ: Նրանք բոլորը Հայաստանի պատմութեան ու մշակոյթի կարևորագոյն աղբիւրներ են¹:

Ը. Արձանագրութիւնների հաւաքումն ու փաստագրումը Հայագիտութեան անհետաձգելի անելիքներից է²: Քամուց ու անձրևից հողմնահարուելուց բացի, նրանց կորուստը կարող է խթանուել նախանձախնդրութեան, նեղմտութեան, յիշատակը ջնջելու կամ հրահրուող թշնամանքի դրդումներով, ինչպէս վերջերս այդ կատարուեց Նախիջևանում ու Ադրբեջանի տարածքում եղած հայկական մի շարք բնակավայրերում: Այլևս առմիշտ կորած են Արևմտեան Հայաստանի յուշարձաններն ու նրանց վրայ եղած վիմագրերը: Մեծ ջանք է անհրաժեշտ ուղեգիրների վկայութիւններում, ժամանակի մամուլի տեղագրական հրապարակումներում ու այլևայլ արխիււներում երբեմնի վիմագրերի հետքեր փնտրելու և գտնելու համար: Բարեբախտութիւն էր, օրինակ, որ պահպանուել է Նազարէթ Մարտիրոսեանի կազմած «Նշխարք Տարօնոյ» անտիպ ժողովածուն՝ 131 արձանագրութիւնների ընդօրինակմամբ և հրատարակուել «Սիոն» հանդէսի 1967-1968 թ.թ. համարներում: Պրպտումները, կարելի է չկասկածել, երևան կրերեն Արևմտեան Հայաստանի յուշարձաններից քաղուած այլ վիմագիր բնագրեր ևս³: Դժբախտաբար, Հայագիտական որոշ շրջանակներում նման աշխատանք տանելու հրատապութիւնը բաւարար ընկալում չի գտնում:

владычества, Петербург, 1921. Ակադ. Յակոբ Մանանդեան, Գառնիի յունարէն արձանագրութիւնը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946: К. В. Тревер, Очерки по истории культуры Древней Армении, М.-Л., 1953:

¹ А. А. Хачатрян, Корпус арабских надписей Армении VIII-XVI вв., вып. I, Ереван, 1987. Պարոյր Մուրադեան, Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները, Երևան, 1977:

² Հմմտ. P. M. Muradyan, The epigraphic heritage of mediaeval Armenia, Moscow, 1986.

³ Մշոյ Թոնդրակ գիւղի վիմագրերն ընդօրինակելիս նոյն Ն. Մարտիրոսեանը գրում է. «Յիշատակարան (իմա՛ արձանագրութիւն - Պ. Մ.) ունեցող խաչքարերը բազմաթիւ էին, բայց շէխերու ակռաներու կճրտումներուն վրայ՝ հարկադրուեցայ կարճ կապել խուզարկութիւններս» (Սիոն, 1968, մայիս-յունիս, էջ 241):

* * *

Վիճազրերի հրապարակումը բոլոր ժամանակներում նախաձեռնողի կամքի դրսևորման առաւել նախընտրելի եղանակ է դիտուել: Մաղերդայ վանքի ուխտագնացութիւնից վերադարձող «Կուսութեամբ կեցեալ, ոչ ունելով յիշատակ ի վերայ աշխարհի», Հռիփսիմէն՝ Աշոտ Ողորմածի սիրական դուստրը, Աստապատ դաստակերտում մահուան մահճում է յայտնւում և առ արքայ հայրը գրած թղթում (981 թ.) թելադրում իր կամքը՝ իր գնած արտը նուիրում է Մաղերդայ վանքին, այն կոչելով «տեղի շիրիմի իմոյ» «...դի արձանագրեսցէ ի վերայ վիմի միոջ և կանգնեսցէ զվէմն ի գլխոյ զանգակատան վանից մերոյ Սուրբ Ովանէսին, դի թէ առ յապայ թուղթքն եղծանիցին ի հրոյ կամ ի ջրոյ, սակայն քարեայ արձանն անջինջ մնասցէ յաւիտեան...»¹:

¹ «Կալուածագրեր...», պրակ 1: Կազմեց Յար. Աբրահամեան: Երևան, 1941, էջ 9-11:

Ո՞Վ Է ՏԵԿՈՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ «ՀԱԶԱՐԱՊԵՏ ՄԱՆԱՆԸ»

Տեկորի տաճարի շինարարական արձանագրութիւնը մեր վիմագրական յուշարձանների շարքում առանձնանում է բազում ինքնատիպութիւններով. բովանդակութեամբ և պատմական անձանց հիշատակութեամբ այն հնագոյն հայերէն վիմագիր գրառումներից է (եթէ ոչ ամենահնագոյնը), օժտուած հնագրական որոշակի առանձնայատկութեամբ (մանաւանդ Ա գրի գրութեամբ), տողերի յաջորդականութեամբ (վարից վեր), բարբառայնութեան ակնյայտ դրսևորումներով, որոշ անունների ու նրանց պաշտօնների անսովորութեամբ և այլն:

Այս պարագաները, բնականաբար, մասնագետների շրջանում հիմք պէտք է դառնային իրարամերժ վերծանութեան ու իմաստավորման՝ փորագրման ժամանակից սկսած մինչև յիշատակուող անձանց ինքնութեան խնդիրը: Վիմագրի ուսումնասիրութեան պատմութիւնը առանձնանում է իրենց հմտութեամբ հայագիտությանը յայտնի մի քանի հեղինակութիւնների անուններով (Ղ. Ալիշան, Գ. Յովսէփեան, Միաբան, Ն. Մառ, Կ. Ղաֆաղարեան և ուրիշներ):

Շինարարական այս վաւերագրի աւարտուն վերծանութեան, պատմա-բանասիրական ընդգրկուն քննութեան ու ուսուերէն յստակ թարգմանութեան պատիւը պատկանում է ակադ. Նիկողայոս Մառին: Նրա К датировке ктиторской надписи Текорского храма յողուածը (“Христ. Восток”, т. III, Пгд., 1915, стр. 56-71, լուսանկար՝ Ադ. I-II) ամփոփեց վերծանութեան հետ եղած բոլոր խնդիրները, սակայն մեկնաբանութիւնների հարցում Ն. Մառը շարունակեց իր իսկ յայտնած այն կարծիքը պաշտպանել, թէ վաղմիջնադարեան վիմագիր յուշարձաններին յատուկ չպէտք է լինեն դասական գրաբարի քերականական ու ոճական նորմերից շեղումներ, բարբառայնութիւններ, փակագրութիւններ, ոչ կանոնիկ յապաւումներ և այլն, իսկ քանի որ այդպիսիք կան Տեկորի վիմագրում՝ ուրեմն այն հետագայ (գուցէ և XI դարի) ընդօրինակութիւն է:

Կրկնում ենք՝ Ն. Մառը կասկածի չէր ենթարկում արձանագրութեան շինարարական բովանդակութիւնը, բայց նրանում եղած ամէն մի շեղում կամ այլագրութիւն բացատրում էր ուշ ընդօրինակում լինե-

Հայոց հազարապետը, որովհետև նրա անունը գրուած է վաներէցից յետոյ: Այդ տեսակետն անընդունելի է, որովհետև վանքի տնտեսը երբեք հազարապետ չի կոչուել» (էջ 44):

Տարիներ առաջ պրոֆ. Կ. Ղաֆաղարեանի «Էջեր Հայոց միջնադարեան մշակոյթի և պատմութեան» յօդուածների ժողովածուն խմբագրելիս (յոյս տեսաւ գիտնականի ծննդեան հարիւրամեակի օրերին 2007 թ.) տողերիս հեղինակը այս կապակցութեամբ ծանօթագրել է. «Մերժու՞մը վերապահելի է, քանի որ Գր. Բակուրեանի «Սահմանքում» յունարէն «տնտեսի» դիմաց առկայ է «տանուտէր», իսկ վրացերէն բնագրում ունենք «ոստիկան»: Ուրեմն վարչական տերմինի իմաստափոխութիւնը անկարելի չէ» (նշւ. աշխ., էջ 110): Այժմ պիտի մասնաւորեցնենք, որ Ն. Մառի կռահումն ու թարգմանութիւնը միանգամայն ճիշտ են և արդարացի: Պրոֆ. Ն. Աղոնցը ժամանակին անցողակի դիտարկել է (Армения в эпоху..., стр. 446), որ նոր Կտակարանում (Ա. Կորնթ. IV, 1) «հազարապետը» համապատասխանում է յուն. οἰκονόμος-ին, իսկ այլ դէպքում (Մարկ. VI, 21)՝ χιλιάρχος-ին:

Ճիշտ է՝ Ո դարի կէսերին գրուած էջմիածնի յունարէն արձանագրութեան χιλιάρχος-ը ևս գորապետ է (Χριστ. Восток, III, 244), սակայն այստեղ անակնկալ չկա, քանի որ ՆՀԲ (II, էջ 2-3) արդէն դիտէ «հազարապետի» ἑπαρχος, ἐπίτροπος, οἰκονόμος նշանակութիւնները և առ այդ վկայակոչութիւն է կատարում: Ինչպէս երևում է, Ն. Մառը ստուգել է «տնտես» իմաստով գործածութիւնը և ըստ այնմ եզրակացրել, որ Տեկորի արձանագրութեան մէջ «վանաց երէց»-ից յետոյ յիշատակուողը Հայոց հազարապետը չի կարող լինել, այլ՝ վանաց տնտեսը: Եւ յիրաւի, Ա. Գրքում ունենք «հազարապետ տանն իւրոյ» (Օն. ԽԳ, 16), «եւ կոչեաց Աքաար զԱբղիու՝ զհազարապետ իւր» (Գ թագ., ԺԸ, 3), «եւ եկին առ նա Եղիակիմ որդի Քեղեկեայ հազարապետ» (Դ թագ., ԺԸ, 18), «եւ եկին առ նա Եղիակիմ Քեղեկայ, որ հազարապետ էր» (Ես., ԼԶ, 3) «...Իբրև զպաշտօնեայս Քրիստոսի և հազարապետ խորհրդոցն Աստուծոյ» (Առ Կորնթ. առաջին, Դ, 1):

Յունարէն Աստուածաշնչի οἰκονόμος-ի դիմաց հայերէնում 11 անգամ «հազարապետ» է և 6 անգամ «տնտես» (Ղուկ. ԺԲ, 42, ԺԶ, 1, 2, 3, 8, Տիտ. Ա., 7): Ինչ վերաբերում է ἐπίτροπος-ին, այն յունարէնում գործածուած է երեք անգամ (Բ Մակ. ԺԱ, 1, ԺԳ, 2, ԺԴ₂) և բոլորն էլ վերաբերում են «տնտես»-ին:

Համոզուելու համար, թե «հազարապետի» «տնտես» համապատասխանութիւնը սոսկ Ա. Գրքի թարգմանութեամբ չի վկայւում, այլև գործածական է եղել կենդանի առօրեայում և ոչ միայն մեզանում,

կարելի է դիմել Մցխեթի պեղումներից 1996թ. յայտնաբերված II դարի վերջի կամ III դարի սկզբի յունարէն նուիրատուական արձանագրութեան մէջ գործածուած նոյն ἐπίτροπος եզրի նշանակութեանը: Քանի որ Հայաստանի պատմութեան համար ևս կարևորութիւն ներկայացնող այդ վիճագիրը հայագիտութեանը մինչև օրս անծանօթ է մնացել՝ ստորև անհրաժեշտ ենք համարում այն բերել ամբողջութեամբ.

[...θυγατρί δὲ βασιλέως] Ἀρμενίας Οὐλογάισου γυνακὶ δὲ βασιλέως Ἰβήρων μεγάλου Ἀμαζάσπου Ἀναγράνης ὁ τροφεὺς καὶ ἐπίτροπος ἰδίᾳ δυνάμει τὸ βαλανεῖον ἀφιέρωσεν.¹

Թարգմանութիւն. [...] Հայոց [թագաւոր] Վաղարշի [դուստր ... ին], իսկ Վիրքի մեծ թագաւոր Համազասպի տիկնոջը Անագրանէսը՝ դաստիարակն (դայակ) ու տնտեսը, սեփական արդեամբ [կառուցած] բաղանիք նուիրեց:

Վրացագէտները իբրև կանոն ἐπίτροπος-ը «յթոս-թոժջճճո» են թարգմանում (այն վկայուած է Ս. Գրոց վրացական խմբագրութեամբ), որ համապատասխանում է «վերակացու»-ին, «տնտեսին»:

Ի դէպ, Կ. Ղաֆաղարեանի գրոյթին վերաբերող մեր վերապահութեան մէջ մատնացուցուած «տանուտէր» եզրի «տնտես» (նաև «ոստիկան») իմաստաւորումը կարելի է հաստատուած գտնել յանձին Ս. Գրքի ասորական խմբագրութեան մէջ χιλίαρχος-ի և οἰκονόμος-ի դիմաց zabb bayta (տանուտէր) կարդալով:

Այսպիսով՝ Տեկորի հայերէն հնագոյն արձանագրութեան Ն. Մառի վերձանութիւնն ու եզրերի իմաստաւորումը լիովին հիմնաւորուած են և վերանայման ոչ կարօտ: Կ. Ղաֆաղարեանը իրաւացի է, երբ մեր-ը և վերանայման ոչ կարօտ է արձանագրութեան ընդօրինակուած լինելու և ընդօրինակութիւնը XI դարով թուագրելու վարկածը:

Այժմ մի քանի խօսք «վանաց տնտես» Մանանի ինքնութեան մասին: Բաւականաչափ ճիշտ կողմնորոշուելով Մանան հաղարապետի «տնտես» լինելու հարցում, «Քննութիւն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վիճագրերի» (Երևան, 1977) հեղինակ Ա. Մանուչարեանը տարօրինակ ու անսպասելի ենթադրութիւն կատարեց նրա ինքնութեան հարցում: «Մանան անունը գրուած է,- կարդում ենք նրա գրքում,- արձանագրութեան այն մասում, ուր սկսում է նախ աշխարհիկ, և երկրորդ՝ օտարազգի մարդկանց անունների ցուցակը: Օտարազգի, մասնաւորապէս պարսիկ տնտեսի առկայութիւնը Հայաստանի

¹ տոճատոճ ցճշեհո թջոջո, եւ յճրոթցցլոս իջրճնլլո ՄճրՄջրջճոս յոճրճլլո, II, ճլճոսճճլլո յճ յճրոթցցլո, տճ., 2000, թճ. 227-228. Անկիւնաւոր փակագծերում եղած լրացումները վերձանողին են:

աւատական տիրոյթներում, Վարդանանց պատերազմից յետոյ, 481-484 թուականների ապստամբութեանը նախորդող մօտաւոր տարիներին շատ բնական է» (էջ 42): Շարունակութեան մէջ նա փորձում է մանրամասնել իր վարկածը. «...նկատի առնելով նրա անուան ակնյայտ պարսկական ծագումը և այն, որ ժամանակի պատմիչները նրա մասին որևէ յիշատակութիւն չեն պահպանել, ինչպէս նաև այն, որ յայտնի է այդ ժամանակաշրջանի իրանցի հազարապետի իսկական անունը, կարծում ենք, որ Մանանը իրանցի վերակացու էր՝ նշանակուած Արշարունեաց կալուածքների վրայ» (էջ 43):

Սա կատարելապէս ձրի ենթադրութիւն է. Հայաստան պաշտոնաւարութեան ուղարկուած պարսիկը (իրանցին) անվերապահօրէն պարսից դէնի հետևորդ պիտի լինէր, իսկ եթէ նա դարձի եկած էր, ապա իբրև ուրացողի ենթակայ էր նահատակութեան: Եւ այնուհետև, վանքի տնտեսը այսօրուայ «պահեստապետը» չէր, որ կարողանար օտարազգի և օտարադաւան լինել: Նրա անունը յիշատակւում է «վանաց երիցի» կողքին, կաթողիկոս ու եպիսկոպոս թուարկող շարքում:

Ամփոփելու համար ասենք, որ արձանագրութեան փորագրման ժամանակ սահմանւում է ըստ նրանում յիշատակուած պատմական անձանց ժամանակագրութեան, իսկ նրանցից առաւել յայտնին կաթողիկոս Յովհան Մանդակունին է: Մանանին պարսիկ ճանաչող Ա. Մանուչարեանը արձանագրութեան ժամանակ է համարում 478-481 թուականները, որից յետոյ (Վահանանց ապստամբութիւն), ըստ նրա, պարսիկը Արշարունեաց կալուածքների վերակացու (հազարապետ) լինել չէր կարող: Սակայն տեսանք, որ Ուրանը պարսիկ չէ, ուստի այդ հիմնաւորումն անհիմն է: Մանդակունին հայոց կաթողիկոս է եղել մինչև 502 թ. (ճշտումը կատարել է Հ. Ն. Ակինեանը); ուստի Տեկորի արձանագրութեան հրապարակման հնարաւոր սահմանը պիտի երկարաձգել մինչև այդ թուականը:

«ՅՈՀԱՆ ՍԱՐԿԱԽԱԳ» ԹԷ՞ «ՅՈՀԱՆ» ԳԱԽՐԿ»

Աւանի եկեղեցին գմբեթակիր հնագոյն յուշարձաններից մեկն է Հայաստանում, կառուցուած 588/90-595/97թթ. միջոցին¹: Բնականաբար, նրա պատերին վիմագրուած ու շինարարութեանը ժամանակակից արձանագրութիւնները նշանակալի հետաքրքրութիւն են ներկայացնում: Նրանց վերծանութեամբ ու ուսումնասիրութեամբ զբաղուել է պրոֆ. Կ. Ղաֆաղարեանը, հրատարակելով յիրաւի շահեկան մի աշխատութիւն՝ ճշգրտելի ու վերանայելի առանձին տեղերով²: Տողերիս հեղինակը առիթ է ունեցել անդրադառնալու այդ ճշգրտելիքներից մէկին՝ արեւելեան պատին պահպանուած փակագրի վերծանութեանը³: Յարգարժան պրոֆեսորը տասնամեակներ առաջ ոչ առանց վերանայութեան («հաւանաբար այդ փակագիրը պէտք է կարդալ...») այն ընթերցում էր Գ.Ա.ԻՐԿ, նրան համարելով Յոհան կաթողիկոսին «ժաւանակակից ոմն»: Յիշեալ յօդուածում մենք Գ.Ա.ԻՐԿ ընթերցումը համարել ենք թիւր, առաջարկելով փակագիրը կարդալ ՍԱՐԿԱԽԱԳ (իմաստով թէ ՅՈՀԱՆ Գ.Ա.ԻՐԿ, այլ՝ ՅՈՀԱՆ ՍԱՐԿԱԽԱԳ): Պրոֆ. Կ. Ղաֆաղարեանը իր վերծանութիւնը մեր կողմից սրբագրելու առթիւ հանդէս է եկել «Պատմա-բանասիրական հանդէսի» խմբագրութեանը հասցէագրուած նամակով (1973, N 4, էջ 230-231): Այստեղ նա ոչ միայն վերստին հաւաստում է իր ընթերցումը, այլեւ անընդունելի է հռչակում Պ. Մուրադեանի «յօրինած վերծանութեան եղանակը ընդհանրապէս»:

Այժմ տեսնենք, թէ յարգոյ գիտնականը ինչ կռուաններ ու փաստեր ունի.

1. «Յոհան եւ Գաւրկ անունները տարբեր քարերի վրայ են գրուած, ըստ որում Յոհան անունից յետոյ բաւական ազատ տեղ կայ,

¹ Հանգամանօրէն տե՛ս А. Б. Еремян, К вопросу о датировке кафедральной церкви в Аване, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1969, N 3, էջ 47-62:


² Կարո Ղաֆաղարեան, Աւանի երկկեղուեան ծածկագիր արձանագրութիւնը, Երեւան, 1945:

³ Պ. Մուրադեան, Դիտողութիւններ Օձունի արձանագրութիւնների վերծանութեան առթիւ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1973, N 6, էջ 76-77:

որտեղ կարող է գրուել Գաւրկ կամ սարկաւագ փակագիրը»:

Այստեղ երկար բացատրութեան անհրաժէշտութիւն չկայ, քարերն ու արձանագրութիւնը իրենց տեղում են, եւ իւրաքանչիւր ոք կարող է ստուգել: ՅՈՂԱՆ բառի աւարտից մինչեւ քարի եզրը 11,3 սմ է, իսկ փակագրի լայնութիւնը՝ 22,7 սմ: Փակագիրը ինչպէ՞ս «կարող է գրուել» այդ «բաւական ազատ տեղում», երբ նրանից կրկնակի լայն է:

Ուրեմն՝ փակագրի անջատ գրութիւնը հարկադրական է (փորագրողը զգուշացել է քարերի եզրերի վրայ գրելուց, մանաւանդ որ մի քանի ելուստ պիտի կցագրէր): Մեր համոզմամբ, անհրաժէշտ էր հաշուի առնել այս հանգամանքը:



Նկ. 1.

2. «ՅՈՂԱՆ անունը գրուած է 11 սմ երկարութիւն ունեցող գրերով, իսկ Գաւրկ-ի գրերի երկարութիւնը 13,5 սմ է: Մի՞թէ այդքան գեղեցիկ գրեր փորագրող վարպետը մի բառը կարող էր գրել փոքր գրերով, միւսը՝ աւելի մեծ»:

Պատճառաբանութիւնը շատ փաստացի է եւ եզրակացութիւնը որոշ՝ երկու բառը երկու տարբեր արձանագրութիւն է: Բայց իրօք այդպէս է: Հինգ տառ ունեցող ՅՈՂԱՆ-ը գրուած է տարբեր երկարութեան գրերով՝ Յ-11,5 սմ, Ո-11,8 սմ, Ա-12,5 սմ, Ն-12 սմ, (Հ-ն աւելի մեծ է՝ 13,5 սմ, բայց անկողմնակալ լինելու համար չենք վկայակոչում): Նամակի հեղինակը փոքրացնում է գրերը՝ ՅՈՂԱՆ-ի եւ փակագրի տարբերութիւնը մեծացնելու համար: Նա իւրաքանչիւր գրի երկարութիւնը կրճատել է 0,5 սմ- 1,5 սմ-ով եւ համահարթել (11 սմ), այլապէս ստիպուած պիտի լինել ընդունել, որ եթէ նոյն բառի մէջ մէկ գիրը միւսից կարող էր շուրջ 1սմ երկար լինել, ապա միանգամայն բնականոն է նման տարբերութիւն փակագրի վերաբերմամբ, երբ երկու

ստեղծի վրայ չորսգիր-ելուստ պիտի տեղաւորուէր: Ինչպէս տեսնում ենք, «այդքան գեղեցիկ գրեր քանդակող վարպետը» տարբեր երկարութեան տառերով է գրել նոյնիսկ մէկ բառ՝ ՅՈՂԱՆ-ը:


Աւանի եկեղեցու հիւսիսային պատին վիմագրուած է երկու անուն եւս՝ ՄԱԹԵՈՍ եւ ՅԵՍՍԵ, որոնք անվիճելի առնչութիւն ունեն կառոյցին, բայց ահա, այդ անունները գրուած են խիստ առանձնակի թէ գրչութեամբ, թէ տեղադրութեամբ: Աստեղից հետեւում է՝ եթէ փակագիրը ինքնակայ անուն լինէր, ապա պիտի առանձնանար ՅՈՂԱՆ-ից ե՛լ գրչութեամբ, ե՛ւ տեղադրութեամբ, մինչդեռ այն գրուած է ՅՈՂԱՆ-ին կից ու նոյն ձեռքով, նոյն ոճով (հմտ. Յ-ի եւ Ի-ի ելուստները, Այս Ա-երի ելուստը, փորուածքի լայնութիւնն ու խորութիւնը եւ այլն): Այս ամէնը մանրուք չէ. եթէ վիճում ենք մեր նախնիների գրածը ճիշտ կարգալու եւ մեկնաբանելու համար, ապա պիտի ընդունենք, որ փակագիրը վերաբերում է ՅՈՂԱՆ-ին: Առ այդ կան բոլոր անխարդախ կուռանները:

3. «...առանց սկզբնական ս գրի սարկաւագ չի կարող լինել... Մուրադեանը միեւնոյն ա գիրը երեք անգամ ա է կարդում եւ մի անգամ էլ՝ ս: Փակագրի մէջ ս գիր չկայ»:

Տեղում չեղած եւ հնագրութեանն անծանօթ ընթերցողը անշուշտ կգարմանայ՝ ինչպէս կարելի է նոյն գլխագիրը ե՛ւ ա կարդալ, ե՛ւ ս: Իրողութիւնն այս է. մինչեւ VII դարի 40-ական թուականները Ա-ն վիճարկուած ամենուր եւ համատարած գրում է տառամիջեան զուգամագրերում սիւնագծով, որ ստեղին է միանում ելուստի սկզբնաւորման կէտում: Այդպէս է նաեւ հէնց ՅՈՂԱՆ բառի մէջ՝ գրուած, ինչպէս ասուեց, փակագրի հետ միաժամանակ ու նոյն ձեռքով: Բայց ի վարմանս վիմագրագէտի, փակագրի Ա-ն առանց այդ սիւնագծի է, թէեւ այն ունենալու ոչ մի խանգարիչ պարագա չկայ (նկ. 1): VII դարում Ա-ի երկու ստեղծների վրայ յիշուած ուրիշ փակագրեր ու կցագրեր եւս կան, բայց Ա-ն շարունակում է պահպանել իր ներսի սիւնագիծը: Այդպէս է, օրինակ, Եղիվարդի արձանագրութեան մէջ ուր Բ եւ Ր գրերը յեցել են Ա-ի ստեղծներին՝ ԲԱՐ-էՓ[առ.]: Նոյնն է եւ Պեմզաչէնի եկեղեցու շինարար վարպետներից մէկին ներկայացնող փակագրում. այստեղ Ա-ի ստեղծներին կցագրուած են Դ, Մ, Ի, գրերը: Այդպէս է եւ Մաստա-րայում:

Ուրեմն՝ Աւանի փակագրի հեղինակը խուսափել է Ա-ի մէջ սիւնագիծ տանելուց մէկ պատճառով՝ այդ դէպքում գիրը կկարդացուէր միայն Ա, իսկ նրան անհրաժեշտ է եղել Ա-ի երկու ստեղծներով այլ գիր

եւս յուշել, որպիսին միայն Ս-ն է¹: Հնագրական այս իւրայատկութիւնից ելնելով է, որ փակագրում Ա-ից բացի կարողում ենք նաեւ Ս: Պրոֆ. Կ. Ղաֆաղարեանը հաշուի չի առել, որ փակագրութեան մէջ նոյն գիրը Ա եւ Ս կարդալու փաստը իրէն ծանօթ է եւ ուշ շրջանի վիմագրութիւնից. Հաղբատի «սբ Նշանի հս. դրան կամարի տակ» փակագիր կայ, որի աջակողմեան ստեղն առանց դժուարութեան կարդացւում է Նաւայսարդ վերելից ներքեւ»²: Այստեղ առանձին Ս չկա, այլ Ա-ի ստեղները նախ Ս են կարդացւում, ապա Ա՝ ելուստներով: Եթէ տեղում Նաւայսարդ անուան արձանագիր այլ յիշատակութիւն չունենայինք յարգարժան պրոֆեսորը երեւի կառարկէր Ռ. Երզնկեանին, որ Ս եւ Ա կարդալու կռահողն է եւ որին այժմ նա հետեւում է:



ԱԻԱՆ

ՊԵՄՁԱՇԷՆ

ԵՂԿԱՐԴ

ՄԱՍՏԱՐԱ

Այսպիսով, փակագրի Ս-ն ոչ թէ յօրինել, այլ՝ վերծանել ենք:

4. «Մուրադեանը միեւնոյն ա գիրը երեք անգամ ա է կարդում...»

Հետաքրքիր է, եթէ փակագրողը բառի մէջ երեք անգամ Ա է կարդացուելու, ապա փակագրողը երեք անգամ պիտի այն փորագրեր. էլ ինչո՞ւ էր նա կամեցածի չափ տարածք ունենալու պայմաններում փակագրութեան դիմում: Հեռուն չգնալու համար դիմենք մեր վկայակոչած Պեմզաշէնի փակագրին, ուր առկայ են Դ, Ա, Մ, Ի գրերը: Տեղադրութիւնից գիտենք, որ այն քարագործի անուն է, բայց ոչ ԴԱՄԻ, ոչ ԱԴՄԻ, ոչ ՄԱԴԻ եւ այլն, որ տառաչարք են եւ ոչ՝ անուն, այլ պար-

¹ Միջնադարեան թէ նորօրեայ մի «վերծանող» ՅՈՀԱՆ-ի Ա-ն տեսնելուց յետոյ կռահել է, որ փակագրի Ա-ն առանց սիւնագծի է եւ որոշել է «լրացնել պակասը», բայց, բարեբախտաբար, անվարժ է եղել, ուստի սիւնագիծը ժամանակից շուտ թեքել է ու միացրել աջ ստեղին՝ կիսամասից փոքր-ինչ ցած (բնականօրէն ելուստի ծայր հասցնելն էր): Այս պարագան պրոֆ. Կ. Ղաֆաղարեանը ժամանակին նկատել է, ուստի հրապարակել է առանց սիւնագծի: Այդպիսի մի «սրբագրութիւն» էլ կատարուած է ՅԵՄՍԵ բառի երկրորդ Ս-ի հետ՝ Ա-ի ելուստ յաւելելով, հաւանաբար ՅԵՄԱԵ կարդալու համար:

² Կարո Ղաֆաղարեան, Հաղբատ, Երեւան, 1963, էջ 149 (հմտ. էջ 117, գրչանկար 9): Վաւերագրելու, կնիքների վրայ եւ վիմագիր բնագրերում նոյն տառանիչը Ա եւ Ս կարդալու բազմաթիւ օրինակներ են բերուած Ա. Արրահամեանի «Հայոց գիր եւ գրչութիւն» գրքում, որտեղ վկայակոչուած են նման փակագրութեան շատ նմուշներ (էջ 191-194):

դասպէս Ա.Դ.Ա.Մ, եւ որովհետեւ նա կամեցել է իր գործը նշել՝ հոլովել է Ա.Դ.Ա.Մ¹: Ինչպէս տեսնում ենք, Ա-ն նորից 2 անգամ է կարդացում՝ մէկ փորագրումով: Եղիվարդի յիշեալ արձանագրութեան մէջ ՅՆՆԴՄԱՆԷ/ՅՆՆԴԵՆԷ (ուղ. ծնունդ) բառը գրուած է մէկ Ն-ով, որ անշուշտ կրկին ընթերցում ունի:

5. Պրոֆ. Կ. Ղաֆաղարեանը գտնում է, թէ «Գաւրկ անձնանունը Գէորգ-ի հնում շատ տարածուած բարբառային ձեւն է եւ կարդացուել է Գորկ»:

«Հնում» ասել-անցնելը խնդիրը չի լուծում. Աւանի արձանագրութեան ժամանակակից կամ գէթ մերձաւոր դարերում որեւէ օրինակ յայտնի չէ, ուր միավանկ բառում ր-ից յետոյ Գ>Կ հնչիւնափոխութիւն է վկայում²: Հ. Աճառեանի «Հայոց անձնանունների բառարանում» Գորգ անունն 40 վկայութիւն կայ, բայց ոչ մէկ անգամ Գաւրկ կամ Գորկ³: Ի դէպ, Հ. Աճառեանը ծանօթ է Կ. Ղաֆաղարեանի արձարգուող աշխատութեանը, այնտեղից վկայակոչութիւն է կատարում⁴, բայց յաւելումների մէջ անհրաժեշտ չի նկատել նրա ընթերցած Գաւրկ անձնանունը արտացոլել, հաւանաբար վերձանութիւնը անստոյգ համարելու պատճառով:

Կարծում ենք, այլեւս պարզ է, որ ԳԱԻՐԿ ընթերցումը անիրական տառաշարք է եւ ոչ՝ անձնանուն: Բայց սա պատահական չէ: Կ. Ղաֆաղարեանը փակագրերն ու կցագրութիւնները կարդալիս յաճախ տառերի հերթականութեանն է հետեւում: Այսպէս, օրինակ, Յովհաննափանքի արձանագրութիւններից մէկում հանդիպող ԿԳԱՐ (Գ եւ Բ գրերը Ա-ի ստեղծներին) կցագիրը նա կարդում է կգար, մինչդեռ, ինչպէս ցոյց տուեց վիմագրագէտ Ս. Աւագեանը, այն պիտի վերձանել ԿԱՐԳ (իմա Ժ կանոն կարգ): Նոյն վանքի մէկ այլ վիմագրում Ա-ի ստեղծներին կցագիր Դ եւ Բ փակագիրը Կ. Ղաֆաղարեանը կարդում է դար, մինչդեռ, նոյն Ս. Աւագեանի ապացուցմամբ, գրուած է ԱՐԴ⁵:

¹ Փակագիրը գտնւում է Պեմզաշէնի VII դարի եկեղեցու արեւմտեան խաչաթելի հիւսիսային պատին, ներքուստ: Ընդօրինակութիւնը մեզ տրամադրել է ճարտարապետ Լ. Սաղոյեանը, որի համար շնորհակալութիւն են յայտնում:

² Հարցն այժմ հիմնաւորապէս ուսումնասիրուած է Ս. Աւագեանի կողմից (տե՛ս նրա Վիմական արձանագրութիւնների հնչիւնաբանութիւն, Երեւան, 1973, էջ 262-267):

³ Հատ. Ա, էջ 489-492, հատ. Ե, էջ 302: Չչիօթենք մեր արձանագրութիւնից 800 տարի յետոյ յիշատակարաններում հանդիպող Գաւրգէ, Գաւրգի, Գաւրկի անունների հետ:

⁴ Հատ. Ե, էջ 327:

⁵ Ս. Աւագեան, Վիմագրական սրբագրումներ, «Պատմա-բանասիրական հանդէս», 1968, N 4, էջ 221:

Վարդապետների կցագիր ԹԱՄԱՐ անձնանունը նույն սկզբունքով նա կարդացել է Թաար, եւ յանգուցեալ իշխանուհուն դարձրել «մեր երեւելի քանդակագործներից մէկը»՝ Թաար անունով, եւ այլն¹ :

Մերժելով մեր «Դիտողութիւններ Օձունի արձանագրութիւնների վերծանութեան առթիւ» յօդուածում տրուած սարկաւազ ընթերցման դէմ եղած առարկութիւնները անհրաժեշտ ենք համարում նկատել, որ այդ ուսումնասիրութեան մէջ կան իրապէս սրբագրելի այլ տեղիներ: Հարաւային շքամուտքի բարաւորի արձանագրութիւնը վերծանելիս ձեռքի տակ ունէինք Գ. Շախկեանի գրչանկարը (այդ նշուած է իր տեղում): Սակայն Ս. Աւագեանի գրառմանը եւ նորերս կատարած լուսանկարին ծանօթանալուց յետոյ համոզուեցինք, որ ԲԱՐՈՒՈՐ բառի վերջին Ո-ին Ր է կցագրուած, հետեւաբար ԲԱՐՈՒՈՐ պիտի ընթերցել (գրութիւնը արժանի է մասնաւոր քննութեան՝ ԲԱՐՈՒ ՈՐ կամ ԲԱՐՈՒՈՐ - բարաւոր): Մեր յօդուածի հրապարակումից յետոյ, ծեփադերժուած է արեւելեան ճակատի արձանագրութեան աւարտամասը, որից երևում է, թէ ԹԵՒՈՂՈՐՈՍ-ից յետոյ ինչ-որ բառ է եղել, սակայն վերականգնելիքը պարզ չէ (Տիւրո՞ն, Ստրատելա՞տ, Զինուո՞ր, թէ՞ ամէն): Վերապահելի պիտի համարել Շ[ԻՆԱԻՂ] ընթերցման Ղ-ի ելուստի առկայութիւնը: Արուեստագէտ Լ. Ազարեանը գտնում է, որ խաչաքանդակի վրայ պատկերուած սուրբ Աստուածածինը պիտի լինի՝ մանուկով: Նման մեկնաբանութիւն առաջ էլ է ասուել, որ գուցէ եւ աւելի ճշմարտամօտ է, թէեւ քանդակի տակ պահպանուած տառահետքերից կարծէք հնարաւոր է «Թէոդորոս» մակաբերել: Ի հաստատումն մեր դրոյթի, թէ «նախապէս ճարտարապետական ամբողջական յօրինուածքի մէջ խաչի ու սրբի քանդակ ունեցող քարի տեղադրութիւն չի ակնկալուել», այժմ պիտի աւելացնենք, որ սկզբնապէս ծրագրելու դէպում այն կդրուէր արեւելեան ճակատի ճիշտ միջնամասում, աւագ խորանի պատուհանին համամաս, այնինչ նկատելի խոտորուած է:

¹ «Պատմա-բանասիրական հանդէս», 1967, N 2-3, էջ 280-281:

ԵՂԻՎԱՐՂԻ 660 ԹՈՒԱԿԱՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Դարասկզբին Խ. Դատեանը Եղիվարդում պեղեց 32 մետր երկարութիւն ունեցող եռանաւ պաշտամունքային մի կառոյց, որ այսօր գիտութեանը յայտնի է Եղիվարդի բազիլիկա կամ կաթողիկէ անունով: Ճարտարապետութեան պատմաբան Թ. Թորամանեանի գնահատութեամբ, Խ. Դատեանը «այս պեղումով կատարել է հոյակապ գործ»¹, բայց դարերի անյայտութիւնից կառոյցը լոյս աշխարհ բերողը ձեռնպահ մնաց նրա մասին որեւէ հրապարակում կատարելուց: Հետագայում, իհարկէ, պարզուեց այդ լուսեան պատճառը. նա պատճենել էր հարաւային պատի ողջ երկայնքով գրուած մեծադիր ու հանդիսաւոր արձանագրութիւնը եւ վերծանութեան ուղարկել հայագէտ Կ. Բասմաջեանին: Ինչպէս երեւում է, վերջինս արդիւնքի չէր հասել, ուստի արձանագրութեանը վերաբերող որեւէ հրապարակում չարուեց:

Եղիվարդի յուշարձանի նկատմամբ հետաքրքրութիւնը մեծացաւ 1913 թուականից սկսած, երբ այստեղ եղան, ուսումնասիրութիւններ ու չափագրութիւններ կատարեցին Թ. Թորամանեանն ու Վիեննայի համալսարանի պրոֆ. Ժ. Ստրօիգովսկին: Նրանք, իհարկէ, վիճաբանագէտներ չէին եւ արձանագրութիւնը վերծանելու ոչ հնարաւորութիւն ունէին եւ ոչ էլ ժամանակ: Ակներեւ էր, սակայն, որ գործ ունէին հին կառոյցի հետ. այդ էր յուշում նրա բազիլիկ տիպը, ինչպէս նաեւ աւագ խորանին կից աւանդատների կառուցուածքը: Նրանց տպաւորութեամբ՝ նման կառոյց կարող էր երեւան գալ մինչեւ 6-րդ դարի վերջին տասնամեակները: Աստիճանաբար այս վարկածը ընդհանուր ճանաչում գտաւ, մանաւանդ երբ յիշեալ գիտնականներին ուղեկցող երիտասարդ հայագէտ Լ. Լիսիցեանը հաւաստիացրեց, թէ հարաւային պատի արձանագրութեան մէջ յիշատակւում է Մովսէս Եղիվարդեցին, որի գահակալութեան տարիներն են 574-604 թուականները: Գիտական գրականութեան մէջ մինչեւ այսօր էլ յիշեալ թուագրութիւնը հորովւում է, թէեւ ոչ ոք իրականում չգիտէ, թէ ինչ է ասում կառոյցի պատմու-

¹ Թորոս Թորամանեան, Նիւթեր հայկական ճարտարապետութեան պատմութեան, աշխատութիւնների երկրորդ ժողովածոյ: Կաղմեց եւ խմբագրեց Կ. Ղաֆաղարեան, աշխատակցութեամբ Ն. Թորամանեանի, Երեւան, 1948, էջ 156-157:

Թեան միակ վաւերագիր-վկան՝ արձանագրութիւնը, որովհետեւ, ինչպէս Թ. Թորամանեանն է ասում, այն «դեռ մանրամասն ստոյգ կարգացող չէ եղած»¹ :



Թւում է, Եղիվարդի յիշատակարանը պիտի խոսէր 20-ական թուականներին, երբ բաղձաշխատ Գ. Յովսէփեանը ձեռնամուխ եղանակաւ ընթերցմանը: Սպասումները, սակայն, չարդարացան, նա նախ կասկած յայտնեց Մովսէս անուան հիշատակութեան իսկութեան վերաբերմամբ, իսկ ապա զարմանալի վճիռ կայացրեց. «Հարկ ենք համարում այստեղ շեշտել, որ հարաւային պատի դօտեձեւ արձանագրութիւնը երբեք եկեղեցու ծագման շրջանին չի պատկանում գրերի այնպիսի կցումներով (լիգատուրներ), որ յատուկ են ԺԳ դարին, յամենայն դեպս, ոչ վաղ քան ԺԲ դարը»² :

Ասում ենք «զարմանալի վճիռ», որովհետեւ արձանագրութեան ժամանակը սահմանւում էր առանց նրա բովանդակութեանը ծանօթ լինելու: Կցագրերի առկայութեան դեպքում արձանագրութիւնն ուղղարեւորով թուագրելը նա ժառանգել էր Յ. Օրբէլու՝ տասական թուականներին հրատարակած աշխատութիւններից³ : Թէ ուրիշ ուղքեր են վերծանութեան փորձեր արել՝ յայտնի չէ, փաստ է միայն, որ բազում տասնամեակներ արձանագրութիւնն ու գիտնականը հանդիպում ու բաժանւում են՝ առանց «իրար լեզու հասկանալու»: Ինչո՞ւ: Արձանագրութիւն կրող շարքի առանձին քարեր ընկած են եւ այժմ չկան, որի հետեւանքով տեքստը դարձել է պատառիկային: Թերեւս դժուար չէր լինի կորած դրուագները վերականգնել, եթէ ընթերցման լիակատար վստահութիւն ունենայինք պահպանուածի վերաբերմամբ: Սակայն շատ քարեր այնպէս են հողմահարուել, որ նրանց վրայի տառաշարքերը մեծ դժուարութեամբ են կռահելի դառնում: Նման պարագաներում աւելանում է մի երրորդ դժվարութիւն եւս՝ կապգրերի (կցագրութիւնների) առատութիւնը, երբ երկու-երեք տառանիշեր նստած են մի ստեղի կամ ազուցուած են իրար: Այս պայմաններում

¹ Նոյն տեղում, էջ 127:

² Գ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռչեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 407, ծան. 3:

³ Հարկ ենք համարում բերել Գ. Յովսէփեանի տուած նկարագրութիւնն ու պատճառաբանութիւնները. «Արձանագրութեան սկիզբը եւ վերջը պակաս է, իսկ մէջտեղումն էլ տեղ-տեղ փճացած: ...Արձանագրութեան տառերը շատ խոշոր են, բարձրութիւնը 22սմ եւ գտնւում է հարաւային պատի ամբողջ երկարութեամբ: Գօտեձեւ արձանագրութիւնները յատուկ [են] մեր հին եկեղեցիներին (Նախճաւան, Բագարան), բայց ունինք եւ ուղղարեւորում, ինչպէս Արամուս գիւղի բլրի եկեղեցուն ՅԾԶ (907) թուականից» (անդ):



առաւել մեծ ջանք ու ճիգ է պահանջուում՝ ճիշտ տառապատկերը ընկալելու եւ իրական յաջորդականութիւնը որոշելու համար: Արձանագրութեան վերջին հատուածը լավ է պահպանուած, համեմատաբար հեշտ է կարդացուում, բայց հէնց այստեղ գրիչը որոշել է ծածկագրել իր ասելիքը, ուստի տեքստը կարդացուում է, իսկ բովանդակութիւնը մնում է առեղծուած:

Այս ամէնի թելադրանքով է, ահա, որ մեր վաղ շրջանի վիմագրութեան ամենաուշագրաւ էջերից մեկը մնում է չվերծանուած:

«Հնագրութեան ատլաս» եւ «Հայաստանի վրացերէն արձանագրութիւնների» ղիւան պատրաստելու կապակցութեամբ Համալսարանի Պատմութեան ֆակուլտետի դեկանատն ու հնագիտութեան, աղբիւրագիտութեան ու ազգագրութեան ամբիոնը օգոստոս ամսին կազմակերպեցին վիմագրական արշաւախումբ, որը պէտք է տեղում վերծանէր, ստուգէր ու լուսանկարէր յիշեալ հրատարակութիւններում ընդգրկուող նիւթերը: Նախապէս մշակուած ծրագրի համաձայն, 1973 թ. օգոստոսի 9-ը յատկացուած էր Աշտարակի Կարմրաւոր եւ Եղիվարդի Կաթողիկէ եկեղեցիների գոտեւորող արձանագրութիւնների վերծանութեանը:

Եղիվարդ գնացինք օրուայ երկրորդ կէսին, երբ հարաւային պատը լոյսի եւ ստուերի ցանկալի հարաբերութեան մէջ էր:

Ահա արձանագրութեան անաղարտ պահպանուած եւ ամենակարեւոր վերջնամասի վերծանութիւնը. «[ԿԱՏԱՐԵՑԱ.]¹ ԵՏ ԾՆ[Ն]ԴՄԱՆԷ ԿԵ[ՆԴ]ԱՆԱՐԱՐԻ ՄԵՐՈ ՓՐ[ԿՁԻ]... [ԾՆՈՂ]ԻՆ ՇՆՈՐՀԱՑՆ ՊՏՈՒՂՍ

¹ Կամ՝ ՀԻՄՆԱՐԿԵՑԱԻ: ԵՏ ԾՆՆԴՄԱՆԷ-ի փոխարէն կարող էր լինել ԵՏ ԾՆՆԴԵՆԷ:

ՊՏՈՒՂՍ ԸՆԴ ՄԻՈՅՆ : Ճ : ԸՆԴ ՄԻՒՍՈՅՆ : Կ : ԸՆԴ ՄԻՈՅՆ : Լ : ԸՆ
ՑԻՅ ԱՄ : Զ : ՈՉ ԸՍՏ ԻՄ ԻՆՉ ՄՏԱՑԱԾՆԻ ՔՈՂԱԽԸՆԴԻՐ[ԵԱԼ] :»

Ճիշտ է, գրիչը իր հիմնական ասելիքը, այն է՝ արձանագրութեան թուականը, խստագոյնս գաղտնագրել է, բայց միաժամանակ հարկ է նկատել զգուշացնել, որ այն իր հնարածը չէ, կամ որ նույնն է՝ հնարովի չէ: Այդ մտքի վրայ ուշադրութիւն հրաւիրելու համար ՈՉ ժխտականի Ո-ն միւս բոլոր գրերից բաւականաչափ մեծ է գրել եւ աւելացրել, թէ քողախընդրել է ոչ մտացածին եղանակով: Արձանագրութեան այդ մասի տակ, ոչ պակաս շքեղութեամբ, վիմագրուած են լրացուցիչ հաղորդումներ՝ ԵՍ ԻՍԱՀԱԿ, այնուհետեւ՝ ԱՆԱՆՈ ՏԻ է, իսկ մի քիչ աւելի ներքեւ՝ ԼԿՅՄՀ, որոնց իմաստը հասկանալի է դառնում բուն ծածկագրութիւնը (քողախընդրեայլ) վերծանելուց յետոյ¹:

Լուծումն սկսենք գրչի ընտրած հերթականութեամբ, նախապէս յիշելով նրա այն հաղորդումը, թէ խօսքը վերաբերու է փրկչական թուականին (ԵՏ ԾՆՆԴԵՆԷ): ՃԿԼ-ի գումարից արձանագրութեան թուական չի ստացւում, որովհետեւ գումարագիր (100+60+30) 190 թուականին Հայաստանում եկեղեցի կառուցուել չէր կարող եւ ապա՝ գրիչը ՃԿԼ-ի փոխարէն կգրէր ՃՂ(190): Ուրեմն՝ հաստատապէս գաղտնագրութիւն է. պատահական չէ, որ հեղինակը մէկ Ճ(100) յիշելուց յետոյ շեշտել է միւսոյն Կ (60)՝ տառիս փոխարինագիրն ակնարկելով, որ միավոր Զ(6)-ն է: Ինչ վերաբերում է Լ-ին, ապա այստեղ էլ ասված է ընդ միոցն, որ նշանակում է Լ+Լ(30+30), ընդ որում, միաւորը գրուած է հարիւրաւորի ու տասնաւորի արանքում, որպէսզի այն ոչ թէ գումարենք, այլ բազմապատկենք: Մեծ հմտութիւն պէտք չէ կռահելու համար, որ արձանագրութեան կազմողը գաղտնագրման ոչ մտացածին լինելը ակնարկելիս նկատի ունի Աւետարանի խօսքը թէ «Եւ նոքա են որ յերկիրն բարւոք սերմանեցան, որք լսեն զբանն եւ ընդունին, եւ տան պտող ընդ միոյ երեսուն, եւ ընդ միոյ վաթսուն, եւ ընդ միոյ՝ հարեւր» (Մարկ, Դ 20):

¹ Ըստ Գ. Յովսէփեանի «Բացի վերոյիշեալ արձանագրութիւնից՝ մէջտեղի մեծ դռնից դէպի աջ երեւում են երկրորդ հին արձանագրութեան մնացորդներ, տարբեր բնութիւնով, աւելի երես փորագրուած՝ այդ մնացորդները նոյն տողաշարքով չեն, թէեւ նոյն քարաշարքի վերայ: Երկու դռների մէջ քարերի վերին մասում կարդացւում է «Անանողի է», նոյն քարաշարքի ներքեւի մասում փոքր դռնից դէպի աջ միմիայն տառեր են, որոնցից միտք չի դուրս գալիս՝ «ԼԿՅՄՀ» նոյն քարաշարքի վերայ փոքր ինչ վերեւ այս անիմաստ տառերի ուղղութիւնից, «ԼՂՀԱ», նշաններ, որոնք ապացոյց են թէ այս մասում քարերը փոփոխութեան են ենթարկուած» (անդ, էջ 408): Ի հաստատումն վկայակոչում է Թ. Թորամանեանին:

Հայոց գրերի թուային արժեքը վկայակոչելիս և փոխարինագիրը ընտրելիս նկատի պէտք է առնել միաւորներից մինչեւ հազարաւոր արտայայտող հետեւեալ շարքերը.

միաւոր	տասնաւոր	հարիւրաւոր	հազարաւոր
Ա-1	Ժ-10	Ճ-100	Ռ-1000
Բ-2	Ի-20	Մ-200	Ս-2000
Գ-3	Լ-30	Յ-300	Վ-3000
Դ-4	Խ-40	Ն-400	Տ-4000
Ե-5	Ծ-50	Շ-500	Ր-5000
Զ-6	Կ-60	Ո-600	Յ-6000
Է-7	Հ-70	Ձ-700	Ի-7000
Ը-8	Չ-80	Պ-800	Ֆ-8000
Թ-9	Ղ-90	Ջ-900	Ք-9000

Ոստի ՃԿԼ-ն վերծանելիս կուենանք՝ $100 \times 6 + 60 = 660$

Արամտօրէն օգտուելով թուանշանների արտասանական կողմից, ծածկագրողը խճճել է ընթերցողին, որը պարտաւոր է կռահել, թէ : Լ : ճածկագրողը խճճել է ընթերցողին, որը պարտաւոր է կռահել, թէ : Լ : ԸՆ նշանակում է երեսուն-ն, բայց դրանով նա չի գոհացել եւ արձա- նագրութեան թուականը նորից գաղտնագրել՝ ՅԻՅ ամ, այսինքն՝ ՅԻՅ նագրութեան թուականը նորից գաղտնագրել՝ ՅԻՅ ամ, այսինքն՝ ՅԻՅ տարի: Այբուբենի թուական արժեքի համաձայն նրանց գումարը կազմում է 6320, բայց եթէ նպատակը այդ ասելը լինէր, ապա պիտի ունե- նայինք ՅՅԻ: Հասկանալի է, փրկչական այդ թուականին կհասնենք նախորդ վերծանութիւնից գիտենք, որ միաւոր թուանշանը միջամա- Նախորդ վերծանութիւնից գիտենք, որ միաւոր թուանշանը միջամա- սում է դրում բազմապատկելու համար, միայն այս անգամ հանելուկի լուծումը դժուարացնելու միտումով բազմապատկելիք է դարձել ոչ թէ հարիւրաւորը, այլ տասնաւորը: Այսպիսով, ստանում ենք՝ $600 + 2 \times 30 = 660$:

Առաւել բարդն ու առեղծուածայինը երրորդ գաղտնագրութիւնն է. վերծանողը մոլորւում է, թէ ի՞նչ է նշանակում ԸՆՅԻՅ ամ Ջ: Հարկադրուած ենք լինում նորից ու նորից կարդալ այդ հատուածի նա-

խորդ ողջ բացատրութիւնը: Պարզուում է, որ ընդ միոցն արտայայտութիւնը երկակի կիրառութիւն ունի, այսինքն՝ մէկ վերաբերում է Լ-ին առանձին (30+30) եւ մեկ էլ նրանից յետոյ եկող ողջ հատուածին՝ ընդ միոցն Լ ԸՆՑԻՅ, որոնց գումարը հավասար է 6758-ի: Սակայն դա դեռ թուական չէ. նա յաջորդ անելիքը յուշել է ԸՆՑԻՅ բառախաղով, անճանաչելի դարձնելով հանցի-ն կամ անցի-ն, այսինքն՝ հանելը (բառախաղը հարկադրական է, որովհետեւ նրա տառերը միաժամանակ թուական արժէք ունեն): Եւ ահա՝ հետեւելով կազմողի խորհրդին, ԼԸՆՑԻՅ-ից (6758) հանում ենք ամ Զ (900) եւ ստանում 5858: Սկսվում է գաղտնագրի լուծման երրորդ փուլը, վիճաբորդը սկզբից նշել է, որ հաշուարկը փրկչական թուականով է, եւ այդպես էլ էր առաջին երկու ծածկաթուերը վերծանելիս: Պարզուում է, որ փրկչական թուական ստանալու համար այդ գումարից պիտի հանենք արարչագործութեան Յոթանասնից տարիները, ըստ որի աշխարհի արարչագործութիւնից մինչեւ Քրիստոսի ծնունդը 5198 տարի է: Այլեւս պարզ է՝ 5858-5198=660:

Վերելում բերուած լուծումներն այնքան բարդացուած են եւ գործողութիւններով առատ, որ մեր ընթերցողը կարող է ակամայ կասկածանքների մէջ ընկնել՝ արդեօ՞ք միակ լուծումն այդ է, արդեօ՞ք ժամանակակիցները կկարողանա՞յին նման գաղտնագրութիւն վերծանել՝ կառոյցի ու արձանագրութեան ժամանակն իմանալու համար: Արձանագրութեան հեղինակը դիտակցել է իր առաջադրած խնդրի բարդութիւնը, ուստի որոշել է փորագրել եւ պատասխանը՝ անհամեմատ դիրին գաղտնագրմամբ: Գ. Յովսէփեանի «անիմաստ» համարած ԼԿՅՄՀ առանձնագիրը տառաշարքի իմաստը հէնց խնդրի պատասխանը լինելու մեջ է.

$$ա) Ճ(100) \times Կ(60 \rightarrow Զ[6]) + Լ(30) + Լ(30) = 660$$

$$բ) Յ(6000) \rightarrow [\Omega(600)] + Ի(20) \rightarrow [Բ(2)] \times Յ(300) \rightarrow [Լ(30)] = 600 + 2 \times 30 = 660$$

$$գ) Ա(30) + Ը(8) + Ն(400) + Յ(6000) + Ի(20) + Յ(300) - Զ(900) = 6758 - 900 = 5858$$

$$5858 - 5198(\text{արարչագործ. թուական}) = 660(\text{փրկչական})$$

$$դ) Լ(30) + Կ(60) + Յ(300) + Մ(200) + Հ(70) = 660$$

Նման գումարագրի կռահումը ժամանակի «գիտուն արանց» համար դժուարութիւն չէր ներկայացնում, մանաւանդ որ ծածկագրութեան արուեստին նրանք ծանօթ էին աւելի վաղ՝ Աւանում Եզրի ար-

ձանագրութիւնից սկսած (630-641 թուականներ), երբ փոխարինագրերի գործածմամբ ՉՌԼԿԶ-ն կարդացվում է ՀԱՅՈՑ, իսկ ՇՌԱՌՀ-ն՝ ԾԱՌԱՅ¹:

Այսպէս, ուրեմն, Եղիվարդի արձանագրութիւնը գրուած է 660 թուականին:

Սակայն այս թուականի ճշգրտումը գիտութեան համար շատ աւելին է նշանակում, քան 7-րդ դարի մէկ թուադիր արձանագրութիւն եւս ունենալը, որ ինքնին կարեւոր է: Ըստ մեր վերծանութեան, հայոց ճարտարապետութեան վաղ շրջանի կոթողներից մէկը՝ Եղիվարդի եռանաւ բազիլիկան, կառուցուած է 660 թուականին. եթէ այդպէս է՝ վերանայելի է դառնում ճարտարապետութեան պատմութեան մէջ ընդհանրական դարձած այն դրոյթը, թէ Աւանից, Հռիփսիմէից ու համանման դմբեթակիր այլ կառոյցներից յետոյ հնաւանդ բազիլիկաներ չէին կառուցւում: Շինարարական տիպերն ու աւանդները համաժամանակեայ դարդացման շրջան էլ են ապրել, նայած ո՞ր գաւառում է կառուցւում, ի՞նչ տարբերիչ նպատակով, ո՞ւմ կողմից ու ի՞նչ նախասիրութեամբ: Ճարտարապետական՝ յուշարձանների ժամանակագրութիւնը չի կարելի պարզունակ միագծութեան ենթարկել: Այնուհետեւ՝ Աւանը չի կարելի պարզունակ միագծութեան ենթարկել: Այնուհետեւ՝ Աւանը կառուցող Յովհան Սարկաւազի, Հռիփսիմէն կառուցող Կոմիտասի, Զուարթնոցը կառուցող Ներսէսի, Աթէնի տաճարը շինող Թողոսակի, Օձունի շինարար Կողմասի կողքին այժմ ունենք շնորհաշատ մի ճարտարապետի անուն եւս՝ Իսահակ, որ իր դարի աւանդոյթով բանձեւել է՝ ԵՍ ԻՍԱՀԱԿ, հար ու նման Աթէնի ԵՍ ԹՈՂՈՍԱԿ-ին, միայն առանց միւս մասնաւորացումների:

Ն. Մառի եւ Յ. Օրբէյլու առաջին աշխատութիւններից սկսած հայագիտութեան մէջ արմատաւորուել է այն դրոյթը, թէ վաղ շրջանի արձանագրութիւնները կապերը ու փակագրութիւններ չպէտք է ունենային, ուստի այդպիսիք ունեցող բոլոր արձանագրութիւնները հայտարարւում են հետագայ ընդօրինակութիւն: Օձունի, Աւանի, Մաստարայի փակագրութիւնների բացումը մեզ իրաւունք էր տուել վերանայել այդ աւանդական դարձած դրոյթը, իսկ այժմ Եղիվարդի արձանագրութիւնը գալիս է ապացուցելու, որ մեր պատկերացումները 7-րդ դարի վիճագրութեան մասին շատ պակասաւոր են: 660 թ. գրուած շուրջ 30 մ երկարութեան արձանագրութիւնը ծայրից ծայր լի

¹ Տե՛ս Կ. Ղաֆաղարեան, Աւանի երկլեզուեան ծածկագիր արձանագրութիւնը, Երեւան, 1945:

է կցագրութիւններով ու փակագրերով: Դիտելի է եւ մէկ այլ իրողութիւն. այսօր գործածուող փրկչական թուականութիւնը սահմանուել է 525 թուականին, Դիոնիսիոս Կրտսերի կողմից, որի առաջին գործածութիւնը 532 թ. է վերաբերում: Հռոմում սկիզբ առած այդ թուական հաշուարկը շատ դանդաղ էր տարածւում, պաշտօնական վաւերագրերում այն առաջին անգամ գործածուած է 742 թ.: Այսրկովկասի՝ մատենագրութիւն ունեցող ժողովուրդների մօտ «փրկչական» թուականը յաճախադէպ գործածութիւն սկսեց 10-րդ դարից, թեւ կայ եւ աւելի վաղ գործածութեան յիշատակութիւն: Շիրակացին, օրինակ, հաղորդում է, որ իր թուաբանութեան ձեռնարկը կազմել է փրկչական 661 թուականին¹: Վրաց «Աբո Թփղիսեցու վարքի» հեղինակ Յովհան Սաբանիսձէն 8-րդ դարի վերջերին արդէն ծանօթ էր այդ թուականութեանը, որ ինքնին նշանակում է, թէ այն արդէն բաւական լայն գործածութիւն ունէր: Եղիվարդի արձանագրութեամբ պարզւում է, որ 660 թ. Հայաստանում քաջ ծանօթ էին փրկչական թուականին, այնքան ծանօթ, որ նրանով գաղտնագրեր էին կազմում:

Այսպես, ուրեմն, Եղիվարդի արձանագրութիւնը փրկչական այսօրուայ թուականի գործածութեան առաջին դէպքերից մէկն է մեզանում եւ ամենավաղ վկայութիւններից մէկն առհասարակ: Ի վերջոյ՝ հայրենական մաթեմատիկայի պատմութիւնը միջնադարեան ուշագրաւ շատ էջեր ունի, մանաւանդ Շիրակացու «Խնդրագրքից» սկսած, բայց վիճագրութեան վաղ շրջանի յուշարձաններից առաջինը Եղիվարդի արձանագրութիւնն է, ուր միաժամանակ վկայւում է համարողական երեք գործողութիւն՝ գումարում, հանում, բազմապատկում՝ միաւորից-հազարաւորի շրջանակներում: Ծածկագրութեան կազմողը ծանօթ է ոչ միայն տոմարական նորագոյն հաշւումներին, այլեւ համարողական արուեստի խոշոր գիտակ է, այսօրուայ տերմինով ասած՝ մաթեմատիկոս: Եթէ լրացուցիչ տեղեկութիւններ չունենայինք՝ այդպիսին համարելու էինք կառոյցի ճարտարապետին ու վիճագրող վարպետին իրեն՝ Իսահակին: Բայց նա մաթեմատիկոս ներկայանալու յաւակնութիւն չի ունեցել, ուստի ազնուօրէն ծանօթագրել է՝ ՈՉ ԸՍՏ ԻՄ ԻՆՉ ՄՏԱՅԱԾՆԻ, որ կարելի է հասկանալ թէ յօրինովի չէ եւ թէ՛ իմ մտքի արգասիքը չէ իմաստով, աւելի ճիշտ՝ երկուսը միաժամանակ²: Եթէ

¹ Հանգամանալի քննութիւնը տե՛ս Ս. Մ. Мурадян, Хронология систем летосчисления по армянским источникам. Эра по Р. X., "Вестник общ. наук", 1975, N 10, с. 77-94.

² Եւ իրօք, գաղտնագրի կառուցուածքը քաղուած է Մարկոսի Աւետարանի (Դ, 8) ուսուցողական առակից, ուր ասուած է. «... Եւ այլն անկաւ յերկիր բարւոք, և

այդպէս է, ապա իմաստայից է դառնում արձանագրութեան տակի երկրորդ տեղեկանքը՝ ԱՆԱՆՈ Տ(եառն)Ի է, այսինքն՝ Անանիայինն է: Դժուարանում ենք 660 թ. Հայաստանում տոմարագէտ ու մաթեմատիկոս մեկ այլ Անանիա գտնել, քան ինքը՝ հանրածանօթ Անանիա Շիրակացին: Այդ է յուշում եւ փրկչական թուականի օգտագործումը Շիրակացու յիշատակարանում ու Եղիվարդի արձանագրութեան մէջ: Այդ դէպքում լուծելի են դառնում մեծ գիտնականի կեանքի ու գործի հետ կապուած այլ հարցեր եւս:

Մի խօսքով, Եղիվարդի արձանագրութեան առեղծուածի լուծումով մեր պատկերացումների մէջ նշանակալի սրբագրութիւններ են կատարւում եւ նոր արծարծումների հնարաւորութիւններ բացւում, որոնց արժէ անդրադառնալ առանձին:

* * *

Եղիվարդի ծածկագիր արձանագրութեան վերծանութեան մեր անդրանիկ հրատարակումից¹ անցել է երեք տասնամեակից աւելի (1974/2008) եւ, ինչպէս նշել ենք 1976 թ. գրած «Պալեոգրաֆիկ ուսումնասիրութեան արդիւնքները»² յօդուածում, մեր բոլոր հիմնական դրոյթները համարում ենք ճիշտ եւ վերանայման որեւէ փաստական հիմք չենք տեսնում: Վիճաբարում առկայ հողմնայարուած կամ չպահպանուած դրուագները լրացնելու որեւէ կողմնակի աղբիւր չունենք, ուստի այստեղ մէկ անգամ եւս բերենք վերծանութեան մերօրեայ վիճակը.

[...]Ի ԵՏ ԾՆ[Ն]ԴՄԱՆԷ ԿԵ[ՆԴ]ԱՆԱՐԱՐԻ ՄԵՐՈ ՓՐ[ԿՁԻ...] ՈՂՈՐՄԵԱ, ԲԱՐԵՓ[ԱՌ ՏԷՐ,...]ՈՂԱԻ (ԿԱՄ՝ ԴԱԻ) ԵՏ ԵԻ ԲԱՐԷՂՈՄԱ ԱՌԱՋՆՈՐԴԻ Տ(ԵԱՌ)Ն ԴԱԻ[ԹԻ...] Հ...ՆԱԿԱ[...]ՅՈՐԴԻՈ [...ԾՆՈՂ]ԻՆ (ԿԱՄ՝ ՏՈՒՈՂԻՆ) ՇՆՈՐՀԱՅՆ ՊՏՈՒՂՍ ԸՆԴ ՄԻՈՅՆ :Ճ: ԸՆԴ ՄԻՒՍՈՅՆ :Կ: ԸՆԴ ՄԻՈՅՆ :Լ: ԸՆ ՅԻՅ ԱՄ :Ձ: ՈՁ ԸՍՏ ԻՄ ԻՆՁ ՄՏԱՅԱԾՆԻ ԲՈՂԱԽԸՆԴ[ԵԱԼ]:

Այլ արձանագրութիւններ, որոնք ժամանակակից են միատող վիճաբարին, բայց գրչութեամբ նոյնական չեն:

Ելեալ աճեցեալ տայր պտուղ, և բերէր ընդ միոյ՝ երեսուն, և ընդ միոյ՝ վաթսուն, և ընդ միոյ՝ հարեւր, և ասէր. Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ»: Ի դեպ, այս վերջին յորդորն էլ շատ կարեւոր է՝ մանաւանդ կարդացածը ընկալելու համար:

¹ «Երեւանի Համալսարան», 1974, N 1 (18), էջ 36-39:

² «Երեւանի Համալսարան», 1976, N 1 (24), էջ 47-52:

ա) [Ե]Ս ԻՍԱՀԱԿ:

բ) ԱՆԱՆՈ Տ(ԵԱՌՆ)Ի Է¹:

գ) [Ի]ՍՐ[Ա.]ՅԷՂ ՀԱԶ[ԱՐԱՊԵՏ]

դ) ԼԿՅՄՀ

Արձանագրութիւնների մէջ քերականական-ոճական նկատելի իւրայատկութիւններ կան. իբրեւ կանոն Ա-ով եւ Ռ-ով վերջացող սեռական հոլովածեւերը սպասելի Յ գիրը չեն յաւելում: Ասել է թէ 7-րդ դարում այն արդէն սկսել էր չարտասանուել: Մասամբ տարօրինակ է տեսա՞ն սեռականի կրկնակի հոլովակազմիչ ստանալը՝ ՏԵԱՌՆԻ: Անշուշտ սովորական չէ նաեւ ԾՆՈՒՆԴ բառի բացառական հոլովածեւը՝ ԾՆՆԴՄԱՆԷ, երբ աւելի գրական ու սովորական էր ԾՆՆԴԵՆԷ ձեւը: Այս պարագայում թերեւս գործ ունենք հէնց Անանիա Շիրակացու ոճաւորման հետ, յիշելով նրա գործածած «Նահանջմանցն նահանջմունք եւ շարաթմանց շարաթմունք» արտայայտութիւնները («Տիեզեր եւ տոմար», էջ 61): Այսպիսի իրողութիւնները պատահական չեն լինում:

Արձանագրութեան քննութիւնը աւարտուած չալիտի համարել, բայց նրա հիմնական ասելիքը այլեւս կռահուած է:

* * *

Հրապարակման սկզբում նշեցինք, թե 1973 թ. օգոստոսի 9-ը հատկացուած էր Աշտարակի Կարմրաւոր եւ Եղիվարդի բազիլիկ եկեղեցիների գօտեւորող արձանագրութիւնների վերծանութեանը: Եղիվարդի վիմագրին անդրադառնալու առիթներ քիչ չեն եղել (գաղտնագրի առեղծմանը վերաբերող զեկուցումներ են կարդացուել Երեւանի Պետական համալսարանում, ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտում եւ Օշականի Մաշտոցեան ընթերցումների ժամանակ), մինչդեռ Կարմրաւորի շինարարական յիշատակարանը մէջ ենք բերել «բանավիճական» «Պալեոգրաֆիկ ուսումնասիրութեան» արդիւնքները յօդուածում միայն, այն էլ բաւական դժուար գտանելի եւ ոչ զուտ գիտական հանդէսում: Ճիշտ է, այն գտել, կարդացել եւ ըստ պատշաճի գնահատել են այժմ հանգուցեալ գրչակից բարեկաներս՝ պրոֆ. Պիոն Յակոբեանն ու վիմագրագէտ Սուրէն Սաղումեանը, սակայն վաղ շրջանի այդ եղակի բովանդակութեան վիմագիրը կարօտ է վերստին հրատարակութեան եւ լայն շրջանակների ծանօթութեան: Ահա այն. ԵՍ՝ ԴԱ-

¹ Կանոնաւոր հոլովմամբ սլիտի լինէր Տ(եառ)Ն է:

Ի՞նչ, ՄԵՂԱԻ ՈՐԴԻ ԵՆԱՆՈՍԱՅ [...Ի...] ԳԵԻՂԱՔԱՂԱՔԷՍ ՅԵՐԻ-
ՑՈՒՆԵԱՅ ԳՐԻԳՈՐԻ ՔԱՀ(Ա)ՆԱՅԻ, ԵՒ ՄԱՆԱՍ ԵՒ ՈՐԴԻՔ ՏՈՒԱՔ
ՇԻՆԵԼ ԶԵԿ[ԵՂԵՑԻ ՍՈՒՐԲ] ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՍ ՎԱՄՆ ԽԱՂԱՂՈՒ-
ԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ԵՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ԵՒ
ՊՏՂԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԻԴ ԵՒ ՎԱՄՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՈՑ
ՄԵՐՈՑ, ԱԶԳԻ ՄԵՐՈՑ ԿԵՆԴԱՆԵԱՅ ԵՒ ՄԵՌԵԼՈՑ: ՍՄԱ ՓԱՓԱԳԵ-
ՑԱՔ ՍՈՒՐԲ ԼՈՒՍՈՑ, ՍՄԱ ԿՈԶԵՑԱՔ ՈՐԴԻ ՎՇՏԱՅ ԱՆԱՐԺԱՆՈ:

Յիշեցնենք նաեւ, որ արձանագրութեան սկզբի մի քանի քարեր
նախնական են, իսկ ողջ շարունակութիւնը՝ ընդօրինակութիւն:



Պատառիկներ Եղիվարդի 660 թ. շինարարական վիճագրից







ՀՈՒՍԿ ԲԱՆ

Մենազրական ուսումնասիրութիւնների անցումային շրջանում միջոց է գոյանում մասնաւոր հարցերի լուսաբանման համար: Կամաց-կամաց պարզւում է, որ այդ «մասնաւոր» կոչուածներն էլ հիմնական դրադմունքի կապող օղակներ են, փաստօրէն՝ ինքնակայ մենազրութիւններ: Ինչ-որ չափով այս պարագան ևս կովկասագիտական աւանդոյթի դրսևորում է: Խնդիրը ամփոփման նախընտրելի եղանակ կամ ժամանակ գտնելն է:

Տողերիս հեղինակը իբրև առաջին պրակ փորձեց համադրել գերազանցապէս աղբիւրագիտական, հին իմաստով բանասիրական հրապարակումները՝ անհրաժեշտութեան պարագային վերանայելով կամ լրացնելով քննարկելիքը: Իսկ ժամանակը՝ կենաց եօթուկէս տասնամեակ թևակոխելն է, որ կածեմ այլևս շուտ չպիտի նկատել: Ամփոփւած աշխատութիւնների կատարողական խնդիրներին վերաբերելիս ես լիովին համերաշխ եմ հանգուցեալ ակադ. Լևոն Հախվերդեանի խոստովանութեանը (տես նրա՝ «Բանասիրական որոնումների հաճոյքն ու տառապանքը» յօդուածը), թէ «եւ այնուհանդերձ, իմ հասկացութեամբ ամէնից դժուարը բանասիրական որոնումների ասպարէզն է: Այստեղ, անսպառ համբերութիւնից բացի, պէտք է փաստի հետքերը քրքրելու, անվերջանալի ճշտումներ անելու աննահանջ յամառութիւն, վերջապէս, քնարական շեղումներից ազատ ստուգապատում գրելաձև»:

Աւելացնենք, սակայն, թե այդ հաճոյքին ու տառապանքներին անմասն չմնալու համար ընթերցողն իր հերթին չէ թէ միայն պատրաստութիւն, այլ նաև պատկերացումները սրբագրելու պատրաստակամութիւն պիտի ունենայ: Մեր այս փորձութիւններով լեցուն օրերին մասնագէտ ընթերցող գտնելը նոյնքան դժուար է, որքան տառապանքը կամաւոր ստանձնող հեղինակ:

Ես ջանքեր չխնայեցի գիտութեան իմ նախորդներին ճանաչելու, հասկանալու և ժառանգութիւնը գնահատելու համար: Իմ համոզմամբ գնահատման համար անհրաժեշտ է հրատարակել նախորդներին և նրանցից աւելին չպահանջել, քան նրանք կամեցել կամ կարողացել են տալ: Հայագիտութեան նոր սերունդը, ցաւօք, այս առումով ժառանգած աւանդներ քիչ ունի, մինչդեռ մեր հունձքը յաճախ արտում առանց մշակի է մնում:

Ի Լ Ր Ո Ի Մ Ն

էջ 12-13

Նախագրային շրջանի հայ-վրացական մշակութային աղերսներն արծարծելիս վկայակոչել ենք հայոց «Հուլի» և «Սահմի» ամսանունների վրացերենով ստուգաբանելու («երկու», «երեք») մասնագիտական գրականութեան մէջ առկայ վարկածը: Պարզում է, սակայն, որ Ն. Աղոնցը այդ ամսանունների ստուգաբանութեան հարցը լուծել է միանգամայն այլ հիմքի վրայ, ասլացուցելով, որ նրանք «ոչ մի կապ չունին վրացերէն օրի և սամի՝ «երկու, երեք» բառերի հետ, ինչպէս ենթադրել է Ք. Պատկանեան և ընդունել Հ. Աճառեան: Իմ կարծիքով հին ասոր. *Airu, Simanu* երկրորդ և երրորդ ամիսների անունն է: Այնտեղ է ծագում իրանական և մեր տոմարը: Վրաց ամսանունները յայտնի են, և այնտեղ ոչ օրի և ոչ սամի հետքերը չկան» («Սիոն», 1934, N 12, էջ 382-385: Վերահրատ. տե՛ս Ն.Աղոնց, Երկեր, Գ, Երևան, 2008, էջ 349): Հետագայում, ինչպէս Պ. Յովհաննիսեանի ծանօթագրութիւնից ենք տեղեկանում, «Հայերէն ստուգաբանական բառարան» կազմելիս 67 և 68 համարների տակ գիտնականը ըստ ամենայնի հիմնաւորել է իր ստուգաբանութիւնը՝ իրաներէնի միջոցով փոխառուած այդ ամսանունները բարելոնական ծագման նկատելով (Ն.Աղոնց, Երկեր, Գ, էջ 461):

Ց Ա Ն Կ Ե Ր ¹

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Արամ Գրիգոր Զորափորեցի, տե՛ս
Գրիգոր Արամայ որդի
Արամ Բաղրատունի (Կարսեցի) 244,
250, 252
Արգար թագաւոր 105, 107
Արգարեան Գ. 103, 106, 234
Արդուլ Մեծիտ 213
Արեղեան Մ. 19, 30, 117, 118, 119,
122, 127, 128, 130, 131, 140,
153, 313
Արս Թփղիսեցի 380
ԱրրաՀամ (Արրամ) 45, 46, 47, 49,
50, 53, 54, 351
ԱրրաՀամ եպիսկոպոս 154, 232
ԱրրաՀամեան 133
ԱրրաՀամեան Աշ. 88, 92, 108, 124,
127, 370
ԱրրաՀամեան Յար. 361
ԱրրաՀամեան Ռ. 333
ԱրրաՀամ Աղբաթանեցի կաթողիկոս
30, 104
Արրիանոս եւ Անատոլ 25
Արուլ Ասուար Շեղաղեան 254
Արուլաձէ Ի. 25, 26, 27, 30, 67, 76,
88, 110, 111, 112, 113, 114,
115, 183, 197, 198, 322, 327,
328, 329
Ազաթանդեղոս 28, 34, 65, 110, 112,
113, 120, 126, 155, 157, 211,
344
Ազաթոս 160
Ադամ 371
Ադդէ 107
Ադոնց Ն. 61, 77, 113, 141, 142,
227, 302, 321, 332, 364
Ազարեան Լ. 372
Ազնաւորեան Զարէհ եպս. 260
Աթանազինէս 16
Աթանաս Աղեքսանդրացի 149, 192
Աթանաս Տարօնացի 102
Ալեքսիանոս (Կոմնենոս) 295
Ալեքսիձէ Զ. 78, 79, 80, 81, 82, 83,
85, 86, 89, 90, 91, 92, 93, 94,
95, 96, 97, 327
Ալիեւ Ի. 88
Ալիշան Դ. 17, 83, 104, 111, 133,
134, 135, 148, 162, 163, 210,
211, 212, 217, 244, 248, 252,
308, 333, 355, 362
Ալպոյաճեան Ա. 142
Արիապան 296
Ալինեան Ն. 19, 26,
27, 75, 99, 100, 101, 102, 107,
108, 109, 114, 120, 123, 127,
153, 230, 238, 240, 241, 242,
243, 247, 295, 303, 308, 309,
310, 311, 312, 313, 315, 322,
327, 328, 329, 366
ԱՀարոն Բուլղար 205
ԱՀարոն (Առաւն) Մազխատրոս 256,
257
ԱՀարոն Վանանդեցի 30, 67, 76
Աղայեան է. 13
Աղան Արծրունի 149, 150
Աղանեանց Գիւտ 129, 313
Աղաւելեանց Բարգէն վրդ. 335
Աղեքսանդր կայսր 249
Աղեքսանդր (Մակեդոնացի) 101
Աղութ 166
Աճառեան Հր. 7, 144, 183, 184, 311,
333, 349, 356, 371
Աճէմեան Շահէ արք. 20, 37, 60, 215
Ամալեան Հ. 38

- Ամմիանոս 85
 Այվազեան Ա. 135, 356
 Անագրանէս 365
 Անան 105
 Անանեան Հ. Պօղոս 100, 109, 110, 230, 238, 247
 Անանիա 58
 Անանիա Նարեկացի 58, 59, 60, 61, 285
 Անանիա Շիրակացի 103, 108, 127, 232, 234, 380, 381, 382
 Անանիա Սանահնեցի 326
 Անանիա Վարազացի 58, 59, 61
 Անանուն 105, 108, 120, 127
 Անանուն Եղեսացի 200
 Անանուն մեկնիչ (վրացի) 192, 193, 194
 Անասեան Յ. 20, 37, 56, 57, 63, 64, 91, 193, 311, 319, 321
 Անաստաս կաթողիկոս 233
 Անատոլիա 228
 Անդրէաս 108
 Անդրէաս Բիւզանդացի 13
 Անդրէաս երէց 30
 Անթարեան Փ. 18, 66, 67, 117
 Անձեւացիք 223
 Աննա Կոմնինա 292, 294, 295, 301
 Անտիպատրոս Սոստրացի 25
 Անտոն Հռոմայեցի (անապատական) 111
 Աշոտ իշխանաց իշխան (Բագարատի որդի), Աշոտ Ա. թագաւոր 246, 247
 Աշոտ Բագրատունի 202, 238, 239, 250, 252
 Աշոտ Բ. Բագրատունի (Աշոտ Երկաթ) 248, 249, 250
 Աշոտ Գ. Ողորմած 251, 361
 Աշոտ - Գրիգոր Բագրատունի 251
 Աշոտ Կամսարական, տե՛ս Կամսարական Աշոտ
 Աշոտ Կիւրոպաղատ 22
 Աշոտ Մսակեր (Բագրատունի) 246
 Աշուշայ բղեղիս 148, 159
 Ապոլոն 34
 Ապոլլինարոս Լաւողիկեցի 150
 Ապուղամբ 210
 Ապուսաշլ Համադասայ 240
 Առաքեայ 210
 Առաքելեան Հ. 217, 218
 Ասպուրակէս 120
 Աստուածատրեան Յովհ. վրդ. 214
 Աստուածատուր քահանայ 136
 Աստուրեան Հ. Յ. 223
 Ատոմ Աղուբենց 168
 Ատոմեանք 59
 Ատրներսէզ Կիւրապաղատ 249
 Արամ 103, 104, 341
 Արեւշատեան Ս. 231
 Արիատակէս (Հայրապետ) 28, 112, 123, 124, 127
 Արիատակէս Լաստիվերոցի 253, 254, 255, 257
 Արիատակէս Տեւկանց 313
 Արիոս Աղեքսանդրացի 150
 Արծրունեաց տոհմ 149, 150
 Արծրունիներ 358
 Արձան 109, 229
 Արշակ Բ. Արշակունի արքայ 132, 195
 Արշակունիներ 90, 103, 104, 155, 156, 157, 200, 247
 Արշարունիներ 244, 246, 366
 Արսէն արեղայ 297
 Արսէն Իղալթոյեցի 299, 302
 Արսէն Սափարացի 17, 84
 Արսէն Վաչեա-ձէ 327
 Արսւաղ (Աղուանից թագաւոր) 95
 Արտամոնով Ն. 83
 Արտաշէս թագաւոր (Արտաքսիաս) 9, 99
 Արւանբէգ Սարայ 209
 Աւագեան Ս. 202, 204, 205, 206, 256, 258, 262, 356, 359, 371, 372
 Աւգիբեան Պ. 322
 Աւետիքեան Գ. 260
 Աւնան 47
 Ափշին ոստիկան 249

- Բարգէն Ոթմսեցի 153
 Բարգէն ամսուակից կաթողիկոս, տե՛ս
 Կիւլէսէրեան Բ.
 Բազարատ Բազրատունի 251
 Բազրատ 296
 Բազրատ Գ. 251
 Բազրատ Հայ Աթէնացի 103, 104,
 117
 Բազրատ Վսկացի (մագիստրոս) 201,
 205, 206, 207, 208, 257, 258,
 296
 Բազրատ Դ. (վրաց թագաւոր) 206,
 254, 298
 Բազրատունի 248
 Բազրատունի Հ. Արսէն 57
 Բազրատունիներ 22, 104, 199, 200,
 246, 251, 252, 253, 254, 255
 Բազրատունիներ (Կարսի) 259
 Բազրատունիներ (Տարոնի) 251
 Բակուր արքայ 95
 Բամպուքճեան Գ. 265
 Բանուչեան Ա. 224
 Բասմաջեան Կ. 356, 373
 Բարդաժան 35
 Բարթիկեան Հ. 114, 143, 200, 202,
 203, 204, 205, 208, 234, 247,
 248, 251, 295
 Բարթուղիմեոս առաքեալ 15
 Բարթուղիմէոս Ժ. 212
 Բարխուդարեան Ս. 244, 356, 359
 Բարխուտարեան Մ. 83
 Բարնաւելի Թ. 298
 Բարսեղ կայսր 249
 Բարսեղ Կեսարացի 24, 36, 149, 188,
 192, 227, 232, 312, 315, 316,
 344
 Բարսեղ Մշկավանցի 308
 Բարտակճեան Գ. 333
 Բաուճտարկ Ա. 190
 Բեզոբրազով Պ. 290, 292
 Բենեշեւիչ Վ. Ն. 201, 257
 Բենիամին երէց (Թարգմանիչ) 90, 95
 Բեշքէն 207
 Բէլ 103, 104
 Բէլք Վոլղեմար 215
 Բժշկեանց Հ. Մինաս 354
 Բիրդաւլ Յ. 43
 Բիրունի 17
 Բլուզանդացի Ն. 19, 65, 66, 99, 104,
 114, 120, 161, 163, 164, 167,
 177, 178, 184
 Բլէյկ Ռ. 41, 42, 43
 Բրոսէ Մ. 212, 221, 354
 Բուղա 86, 145

 Գազիկ Արծրունի 249
 Գազիկ Ա. Բազրատունի 199, 200,
 201, 250, 254
 Գազիկ Բ. Բազրատունի, որդի Աշոտի
 254, 255
 Գազիկ Կարսեցի 259
 Գաղաւոն 106
 Գաթրճեան Յ. վ. 314
 Գամղրելիձէ Թ. 19, 35
 Գանձակեցի, տե՛ս Կիրակոս
 Գանձակեցի
 Գարագաշեան Մատ. 57
 Գարեգին Ա. կաթողիկոս, տե՛ս
 Յովսէփեան Գ. կթղ.
 Գարեգին եպս. Տրապիզոնի, տե՛ս
 Խաչատուրեան Գարեգին եպս.
 Գարիտ Ժ. 24, 327, 329
 Գարսոյեան Ն. 196
 Գաւրկ 367, 368, 371
 Գելցեր Յ. 293
 Գերմանոս պատրիարք 234, 236
 Գեւորգեան Մ. 196
 Գեւորգեան Ս. 358
 Գէորգ 371
 Գէորգ զրիչ 61
 Գէորգ ճգնաւոր 324
 Գէորգ Մելիտինեցի 260
 Գէորգ Պալատեցի, տե՛ս Տէր-
 Յովհաննիսեան Գէորգ Պալատեցի
 Գէորգի Ա. 251, 253, 297
 Գէորգի (միաբան Օշկի վանքի) 41
 Գէորգի Կեղրենոս 296
 Գէորգի Սուրբաարեցի 42, 191, 192
 Գիգինելիշիլի Բ. 346
 Գինթ 228

- Գիւտ կաթողիկոս 77, 99
 Գրիգոր Աբասեան (Գրիգոր Աբասայ որդի) 233, 312, 314
 Գրիգոր (Լասպատակի որդի) 204, 258
 Գրիգոր Անաւարդեցի 242
 Գրիգոր Ապիրատ 310
 Գրիգոր, Ապուղամբի որդի 210
 Գրիգոր Ատուածարան 149, 310, 311, 315, 316
 Գրիգոր Բակուրեան 209, 257, 258, 290, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 303, 304, 305, 306, 364
 Գրիգոր Գողիկ 234
 Գրիգոր դպիր 136
 Գրիգոր երէց 163
 Գրիգոր Լուսաւորիչ (Պարթեւ) 14, 15, 16, 25, 35, 67, 68, 69, 124, 127, 157, 158, 200, 211, 212, 213, 217, 238, 248
 Գրիգոր Մերենց Խլաթեցի 166, 242
 Գրիգոր Մագիստրոս 254, 257
 Գրիգոր Մամիկոնեան 22
 Գրիգոր Մարգուանցի 270, 281
 Գրիգոր Նարեկացի 61, 242, 260-266, 270-272, 280-289
 Գրիգոր Նիւսացի 235, 312, 315, 316
 Գրիգոր Վկայասէր 242
 Գրիգոր Դ. Տղայ 309, 310, 321
 Գրիգոր Տուաչորդի 309, 310, 313, 322
 Գրիգոր քահանայ 383
 Գրիգորեան Գ. 356
 Գրիգորեան Սեսրոպ 130, 234, 235, 236
 Գրիգորիս եպիսկոպոս 310
 Գրիգորիս Հայրապետ 28, 112, 123, 127
 Գւինչիձէ Օ. 294
 Գույումճեան Տ. 148
 Գուշակեան Թորգոմ արքեպս. 223, 260, 271, 312
 Գուրգէն 231
 Գուրգէն Անձեւացի 252
 Գուրգէն Արծրունի 247
 Գուրգէն, եղբայր Սենեքերիմի 252
 Գուրգէն 252
 Գուրգէն Բ. 251
 Գօշ, տե՛ս Մխիթար Գօշ
 Դանան 228
 Դանելիա Կ. 21, 22, 41, 43
 Դանիէլ 36, 123
 Դանիէլ 68
 Դանիէլ մարգարէ 351
 Դանիէլ Հայրապետ 28, 112, 123, 126, 127
 Դանիէլ կաթողիկոս 218
 Դասխուրանցի, տե՛ս Մովսէս Դասխուրանցի
 Դատեան Խ. 373
 Դաւիթ 25, 28
 Դաւիթ Անհողին 255
 Դաւիթ Անյաղթ 84, 99, 231, 313
 Դաւիթ Արծրունի, որդի Սենեքերիմի 252, 255
 Դաւիթ արքայ (Հրէից) 246
 Դաւիթ Բագրեւանդցի 232
 Դաւիթ Գարեջացի 82, 84
 Դաւիթ երէց 158
 Դաւիթ Թարգման Տարոնացի 232
 Դաւիթ Կիւրոպաղատ 41, 251, 298
 Դաւիթ Հաղբատեցի, տե՛ս Դաւիթ Քորայրեցի
 Դաւիթ Հիւսապոս 234
 Դաւիթ մարգարէ 100
 Դաւիթ Շինարար 292, 296, 299
 Դաւիթ Պետրիժոնցի 299, 302
 Դաւիթ Սօսլան 326, 330
 Դաւիթ Փիլիսոփայ 142
 Դաւիթ քահանայ 103, 108, 313
 Դաւիթ Քորայրեցի 308-318, 322
 Դեակոնով Ի. 6, 7
 Դերենիկ Արծրունի 247
 Դիմաքսեանց Թաթուլ 159
 Դիմաքսեանց Սատոյ 159
 Դինար Թաղուհի 84
 Դիոնեսիոս Արիսապաղացի 26, 234
 Դիոնիսիոս Թրակացի 141, 142, 145

- Դիոնիսիոս Կրտսեր 380
 Դոչանաշուկի էլ. 21, 22, 41, 42, 43
 Դրաշ 301
 Դուրեան Ե. 47, 48, 142
- Եաղբճեան Ստ. վրդ. 103
 Եգանեան Օ. 37, 58, 60, 117, 216, 217, 221
 Եղեան Կ. 221
 Եղնիկ Կողբացի 108, 109, 215, 228, 229
 Եղր կաթողիկոս 82, 298, 378
 Եղիազար Դամասկացի 47
 Եղիշայ 92
 Եղիշէ 29, 158, 159, 160, 215, 219, 222, 223, 224
 Ենովք 228
 Եպիփան 108
 Եսայի եպիսկոպոս 325
 Եսայի Նչեցի 168
 Եսքող 47
 Երեմեան Ս. 8, 80-83, 88, 95, 97, 146
 Երեմիա եպիսկոպոս 95
 Երզնկեան Ռ. 370
 Երուանդ Ա. 147
 Երուանդ արքայ 143, 146
 Եւթաղ Աղեքսանդրացի 97
 Եւթիմէոս Զիդաբենոս 302, 306
 Եւղաղ եպիսկոպոս 158
 Եւսեբիոս Աղեքսանդրացի 344, 345
 Եւսեբիոս Կեսարացի 24, 25, 102, 108
 Եւտաթիոս Բոյիլաս 295, 296
 Եւտրատիոս Նիկէացի 329
 Եւտիբէոս Կոստանդնուպոլսեցի 150, 230, 231
 Եփրեմ Կրտսեր 192, 193
- Զարբհանալեան Գ. 310-313, 333, 350
 Զաքարեաններ 358
 Զաքարիա Ամիրսպասալար 309, 325
 Զաքարիա կաթողիկոս 238, 247
 Զաքարիա մարգարէ 135, 351
- Զենոր 215
 Զենոր Ասորի 16
 Զենոն կայսր 92
 Զէյթունեան Ա. 37, 38, 48, 49, 55, 60, 117
 Զուարէն Անձեւացի 158
 Զօհրապեան Յովհաննէս վրդ. 45, 57, 61, 63
- Էսաս Աղեքսանդրացի 13
 Էմին Մ. 196, 356
 Էսապալեան Հ. Պողոս 56
 Էսքրուք Մ. վան 345, 346
 Էփրիկեան Ս. 216
- Թաղէոս վկայ 107
 Թաղէոս առաքեալ 107
 Թահմիզեան Ն. 58
 Թամամշեան Մ. 129
 Թամար 372
 Թամար Թադուհի 326, 330
 Թամրաղեան Հ. 58
 Թարխնիշուկի Մ. 291
 Թեկղի 25, 344
 Թեոդոս 226
 Թեոդորոս, Թէոդորոս 372
 Թէոփանոս 247, 249
 Թէոփիլակս 301
 Թէոփիլոս կայսր 237
 Թէոդոս Մեծ 27, 315
 Թէոդոսիոս Բ. 237
 Թէոդորա 256
 Թէոդորոս 26
 Թէոդորոս վարժապետ 325
 Թէոդորոս Ռշտունի 106
 Թողոսակ 379
 Թողրուլ բէկ 257
 Թոմասոն Ռ. 122
 Թոռնիկ, տե՛ս Յովհաննէս
 Զորդուանէլ Թոռնիկ
 Թովմայ առաքեալ 131
 Թովմայ Արծրունի 120, 194, 246, 247
 Թովմայ Վանաղացի 132

- Թորամանեան Թ. 363, 373, 374, 376
 Թորոսեան Հ. Յ. 122, 123
 Թրթռեան Արտաւազդ արքեպս. 260
 Թութայէլ 239
 Թուխութանկ 168
 Թումանեան Յովհ. 218
- Ժորդանիա Թ. 302
- Իգնատիոս վարդապետ 309
 Իշխանիկ 84
 Իսահակ 46, 379, 380, 382
 Իսահակ Կոմնենոս 257, 296
 Իսրայէլ Օրի 333
 Իսրայէլ Հազարապետ 382
 Իրեչեկ Կ. 301
 Իւանէ Երկայնաբազուկ 305
 Իւանէ Լիպարիտեան 257
 Իւզրաշեան Կ. 161, 162, 204, 220-223, 247, 250, 253
- Լազարեան Աւետարան 57
 Լալայեան Ե. 356
 Լալաֆարեան Ս. 221
 Լանգլուա Վ. 196, 355
 Լապաստակ 204, 258
 Լաուեր Մ. 196
 Լաֆոնտէն Գ. 113, 344, 345, 346, 350
 Լելուար Լ. 43
 Լեւոն արքայ 161, 323
 Լեւոն Թոռնիկ 255
 Լեւոն Զ. Իմաստասէր 236, 237, 249
 Լեւոն Սարկաւազ 243
 Լեոնտի Մրովելի 198
 Լիոնետ Ս. 43
 Լիսիցեան Լ. 373
 Լիտաւրին Գ. 293
 Լոռու - Մելիքեան Քալանթար Ա., տե՛ս Քալանթար Լոռու Մելիքեան Ա.
- Խաղ եպիսկոպոս 28, 113
 Խալաթեանց Գ. 8, 23, 40, 114, 153, 158
- Խախանաշլիլի Ա. 41
 Խաչատրեան Պ. 262
 Խաչատուր գրիչ 308
 Խաչատուր Զուղայեցի 335
 Խաչատուրեան Գարեգին եպս. 260
 Խաչերեան Լ. 169
 Խաչիկեան Լ. 18, 35, 38, 91, 117, 169, 210
 Խարանիս Պ. 227, 236-238
 Խոյանդ 166
 Խոնդկարեան Ա. 227
 Խոսրով Անձեւացի 281
 Խոսրով Թազաւոր, որդի Տրդատի 106, 109
 Խոսրովիկ Թարգմանիչ 154, 188
 Խորէն երէց 158
- Մեր 166
 Մերեթելի Գ. 19, 35
- Կաթղան Ա. 227
 Կամսարական Աշոտ 158
 Կամսարական Հրահատ 151
 Կամսարական Ներսէզ 151, 158
 Կամսարական տոհմ 150, 151, 152, 246
 Կանայեան Ստ. 128
 Կատակալոն Կեկաւմենոս 255
 Կատրանիդէ 199
 Կարազեօզեան Յ. 144
 Կարապետ 168
 Կարապետ վարդապետ (Կոռուցի վանահայր) 264, 265, 283, 287, 288, 289
 Կարապետեան Լ. 218
 Կարապետեան Ս. 356, 357
 Կարենեանց Յ. 128, 129, 131, 132, 136
 Կարիերեանք 97
 Կեկելիձէ Կ. 13, 14, 16, 19, 20, 24, 26, 28, 30, 42, 43, 78, 85, 89, 111, 114, 115, 191, 193, 299, 345
 Կիրակոս 61
 Կիրակոս Արեւելցի 242

Կիրակոս Գանձակեցի 91, 102, 244,
309, 325

Կիրակոս Միջնաձորեցի 89

Կիւլէսէրեան Բ. 157, 265, 283, 327

Կիւրէղ Աղեքսանդրացի 149, 234

Կիւրէղ Երուսաղէմացի 26, 100, 149,
192

Կիւրիոն 15, 30

Կլիմով Գ. 88, 92, 346

Կոզմաս 379

Կոմիտաս կաթողիկոս 105, 108, 379

Կոնիբիր Ֆ. 219, 222

Կոստանդիանոս (Կոստանդ Բ) 106

Կոստանդին 237, 249

Կոստանդին Միրանաձին 200, 247,
249, 250

Կոստանդին կայսր 106, 232, 248

Կոստանդին Ժ. Դուկաս 258, 259,
281, 296

Կոստանդին Մոնոմախ 254

Կոստանդին Սարկինոս 255

Կոստանեանց Կ. 222-224, 254, 355

Կովիասեան 34

Կորայ 291

Կորիւն 19, 20, 24, 34-36, 65, 66, 73,
74, 76, 91, 95, 109, 122, 157,
188, 193, 228

Կորկոտեան Բ. 130

Կոքս Կ. 37

Կուֆտին Բ. 32

Համադասպ 365

Համադասպ Մամիկոնեան, տե՛ս Մա-
միկոնեան Համադասպ

Հայկ 102, 335, 341

Հայկունի Ս. 211, 215

Հարպ 240

Հաղունի Վ. 107

Հերակղ կայսր 80, 81, 82, 83, 212,
214, 217

Հերմէս 34

Հերոդոտէս 7

Հիպոլիտէս Բոսորացի 25, 28, 35,
108, 233

Հիւրշման Հ. 7, 146,

Հիւսեան Յովհ. վրդ. 265-6,

Հմայեակ Մամիկոնեան, տե՛ս Մամի-
կոնեան Հմայեակ

Հովիսիմեանք 15, 25, 30, 105, 109,
111, 349

Հովիսիմէ 361

Հոսիանոս 36

Հրաչատ Կամսարական, տե՛ս
Կամսարական Հրաչատ

Հումրուղտ Աղեքսանդր 354

Ջուլիկ տիկին 148, 149

Ղաղար Փարպեցի 18, 28, 34, 65-67,
71, 74-77, 114, 148-167, 169,
173-188, 190-194, 199, 211,
212, 222, 247

Ղաղինեան Ա. 262, 270

Ղաղրիկ Թարգմանիչ 160

Ղաուխչիչուլի Ս. 291, 293, 294, 298,
300, 305, 306, 307

Ղափանցեան Գր. 5, 7, 8, 11, 12

Ղաֆաղարեան Կ. 308, 356, 358,
362-365, 367, 370, 371, 373,
379

Ղեւոնդ 109, 240, 243

Ղեւոնդեանք 179

Ղեւոնդ երէց 158, 179, 180, 181,
228

Ղեւոնդ վարդապետ 22, 91

Ղուկաս աւետարանիչ 63

Ճղոնիա Թ. 345

Մաթեոս 369

Մաթեւոսեան Ա. 19, 27, 58, 102,
103, 119, 166, 200, 205, 231,
308

Մալեան Սարգիս վրդ. Հաճընցի 38

Մալխասեանց Ստ. 105, 106, 118,
121, 125, 153, 162-164, 182,
187, 196, 200

Մակկեր Ֆ. 56, 57

Մահմէտ 320

Մամբրէ 232

- Մամբրէ Ամորհացի 47
 Մամիկոնեան Արտաշէս 148
 Մամիկոնեան Համադասպ 68, 69, 72, 154, 232
 Մամիկոնեան Հմայեակ 28, 68, 69, 72, 148, 159
 Մամիկոնեան Մուշեղ 246
 Մամիկոնեան Վահան 28, 148, 150, 151, 154, 155, 159, 161, 199
 Մամիկոնեան Վասակ 148, 195
 Մամիկոնեան Վարդան 28, 68, 69, 148, 158, 178, 229
 Մամիկոնեան տոհմ 72, 148, 149, 151, 152, 156
 Մանան Հաղարապետ 363, 365, 366
 Մանաս 383
 Մայսուրաձէ Գ. 314
 Մանանդեան Յ. 7, 83, 311, 360
 Մանուչարեան Ա. 365, 366
 Մաշտոց, տե՛ս Մեսրոպ Մաշտոց
 Մառ Ն. 5, 7, 8, 10, 16, 17, 21-25, 28, 39, 40-44, 52, 55, 56, 67, 74, 75, 78, 88, 110-115, 123, 141, 142, 143, 185, 208, 209, 216, 221, 246, 257, 291, 293, 294, 298, 299, 300, 301, 302, 303, 346, 349, 355, 356, 362, 363, 364, 365, 379
 Մաստրովրոս, տե՛ս Մեսրոպ Մաշտոց
 Մատթէոս Ուռհայեցի 240, 242, 243, 252, 253, 254, 255, 258, 292, 296
 Մարգարեան Հ. 314
 Մարկիան 226
 Մարկոսեան Տաճատ քհնյ. 57
 Մարտիրոս վարժապետ 265, 288
 Մարտիրոսեան Յ. 32
 Մարտիրոսեան Ն. 360
 Մգալորբլիշլիթի Թ. 345, 346
 Մելիտոս Անտիոքացի 25, 315
 Մելիքիշլիթի Գ. 8
 Մելիք-շահ 296
 Մելիք-Օհանջանեան Կ. 309, 325
 Մելիքսէթ-Բէկ Լ. 14, 17, 24, 28, 76, 77, 84, 110, 297, 311, 322, 325, 326
 Մելքոմ Շիրփալանդ 341
 Մելքոնեան Հ. 15
 Մնձկեւնեցիներ 80, 81, 82, 83, 84
 Մնյէ Ա. 7
 Մննարդէ Լ. 85
 Մնչչանինով Ի. 32
 Մեսրոբ 134, 135
 Մեսրոպ Մազխատրոս, տե՛ս Տէր-Մովսիսեան Մ.
 Մեսրոպ Մաշտոց 15, 20, 24, 35, 60, 61, 65, 66, 69, 70, 75, 76, 77, 86, 90, 95, 109, 122, 150, 156, 157, 188, 228, 229
 Միաբան, տե՛ս Տէր-Մկրտչեան Գ.
 Միհրանեան տոհմ 82
 Միհրաներսէզ 157, 172, 173, 180, 181, 182
 Մին 327
 Մինասեան Մ. 316
 Մինորսկի Վ. 88, 197
 Մինասեան Մ. 57, 99
 Միրզոյեան Հ. 336
 Միքայէլ (միաբան Օշկի վանքի) 41
 Միքայէլ Աթալիատոս 258
 Միքայէլ Ասիտ (Իասիտէս) 255
 Միքայէլ Ասորի 200
 Միքայէլ Գ. 247
 Միքայէլ Դ. կայսր 254
 Մլքէ թագուհի 56
 Մխիթար Այրիվանեցի 102
 Մխիթար Անեցի 120
 Մխիթար Գօշ 91, 309-311, 322, 325-332, 334
 Մխիթար Հիւսպատոս, Կրտի որդի 204, 258
 Մխիթարեան Յ. 186
 Մկրտիչ Թուրաւազ 168
 Մնացականեան Աս. 88, 117, 142, 217, 309
 Մովիթոր Ի. 43
 Մովսէս 374
 Մովսէս (պատուիրատու) 132-135
 Մովսէս Դասխուրանցի 82, 92, 108
 Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոս

- 104, 231, 373
- Մովսէս Եպիսկոպոս 95
- Մովսէս Խորենացի 13, 15, 28, 34, 65, 66, 74-77, 85, 98, 99, 100-136, 140-146, 151, 154, 157, 160, 189, 193, 194, 200, 215, 229, 349
- Մովսէս Կաղանկատուացի 82, 83, 86, 91, 100, 108
- Մովսէս Սիւնեցի 151, 234
- Մովսէս Յուրտաւեցի 16, 149
- Մովսէս Բերթող 231
- Մովսէս Բերթողաճայր 109, 116
- Մովսէս Փիլիսոփայ 65, 154
- Մովսիսեան Ա. 32, 359
- Մսերեանց Լ. 88
- Մուշեղ Բագրատունի 251
- Մուշեղ Եպիսկոպոս (Սիւնեաց) 151
- Մուսէոս Գ. 291, 292
- Մուրադեանց Գասպար ամիրայ 265, 269, 276, 283, 288, 289
- Մուրադեան Կ. 19, 38, 188, 191, 228, 232, 235, 312, 314, 315, 316
- Մուրադեան Պ. 14, 19, 28-30, 44, 52, 53, 61, 67, 75, 110, 113, 114, 115, 118, 120, 121, 123, 126, 131, 161, 298, 302, 308, 349, 354, 358, 360, 367, 369, 370
- Մուրատեանց Պ. 214
- Մուրաւեով Ս. 92
- Մուրուալեան Ա. 9, 11
- Յարեթ 335, 341
- Յաղկերտ, որդի Վռամի 69, 70, 148, 150, 157, 159
- Յակոբ 94
- Յակոբ առաքեալ 100
- Յակոբ Մծբնացի 281
- Յակոբ սարկաւազ 135
- Յակոբ վարդապետ 264, 265, 268, 269, 271, 282, 283, 287, 288, 289
- Յակոբ Յուրտաւեցի 110
- Յակոբ քաճանայ 136
- Յակոբեան Ա. 88
- Յակոբեան Պ. 59, 215, 382
- Յակոբեան Վ. 75, 102, 122, 128, 314
- Յարութիւնեան Ն. 33
- Յարութիւնեան Ս. 117, 118, 119, 128, 130, 131
- Յարութիւնովա - Ֆիդանեան Վ. 292, 307
- Յեսսէ 369
- Յիզատիբուզիտ 28
- Յոր Հայ 15, 85
- Յոր երանելի 351
- Յոհան 367, 368, 369
- Յոհան Սարկաւազ 367, 379
- Յոհանա (Յոհաննէս) 96
- Յովանէս 166
- Յովհան, աշակերտ Մաշտոցի 229
- Յովհան (առաջնորդ-վանաճայր) 85
- Յովհան Արշարունի եպս. 363
- Յովհան Դամասկացի 327
- Յովհան Եփեսացի 100, 230, 231
- Յովհան Զեդազնեցի 79
- Յովհան Մայրազոմեցի 84
- Յովհան Մանդակունի 153, 159, 344, 363, 366
- Յովհան Մոնաստիրիոտ 257
- Յովհան Ոսկերերան 25, 329, 344, 350, 351
- Յովհան Պահեցող 16, 17
- Յովհան Սաբանիսձէ 380
- Յովհան Օձնեցի 326
- Յովհան (Իովանէ) Փաշուէթի 208
- Յովհաննէս Աթման 303
- Յովհաննէս Աւետարանիչ 18
- Յովհաննէս բժիշկ 27
- Յովհաննէս Գաբելեանացի 100, 101, 117, 230, 231
- Յովհաննէս գրիչ 59
- Յովհաննէս Երզնկացի 308
- Յովհաննէս - Թոռնիկ (Զորդուանէլ) 41, 305
- Յովհաննէս կաղձող 133
- Յովհաննէս Դրասխանապետացի 66, 102, 120, 127, 145, 146, 239, 248, 249, 250

- Յովհաննէս Կամրջաձորեցի 244
 Յովհաննէս Կոզեռն 253
 Յովհաննէս Մոկացի 282
 Յովհաննէս Չմշկիկ 240, 242, 243, 252
 Յովհաննէս Զուղայեցի Մրբուզ 335, 336
 Յովհաննէս Սկիլիցէս 200, 251, 252, 253, 254, 255, 296
 Յովհաննէս Սմբատ 253, 254
 Յովհաննէս Վանական վարդապետ 205
 Յովհաննէս վարդապետ 134, 135
 Յովհաննէս քահանայ 353
 Յովհաննէս Քերական 237
 Յովհաննիսեան Աբգար 128, 354
 Յովհաննիսեան Աշ. 128, 333
 Յովհաննիսեան Պ. 118
 Յովհաննիսեան Պօղոս 289
 Յովնան մարգարէ 351
 Յովսէփ 228
 Յովսէփ պատանի 311
 Յովսէփ Կոստանդնուպոլսեցի 240, 241, 242, 243
 Յովսէփ Վայոցձորեցի 157
 Յովսէփեան Գ. կթղ. 61, 169, 231, 233, 239, 240, 262, 314, 355, 362, 374, 376, 378
 Յուլիանոս 26, 126
 Յուսիկ եպիսկոպոս 335
 Յուսիկ Հայրապետ 28, 112, 123, 125, 126
 Յուստիանոս 108
 Յուստինիանոս 227
 Յուսուփ 249, 250
 Նադիր շահ 129
 Նաղարեան Շ. 263, 264, 265, 266
 Նալբանդեան Գ. 335
 Նալբանդեան Մ. 151
 Նալեան Յ. 260, 265
 Նաղաշ Յովնաթան 135
 Նանէ 14
 Նեմեսիոս 235
 Նեստոր Անտիոքացի 150, 328
 Ներսէս Կամսարական, տե՛ս Կամսարական Ներսէս
 Ներսէս Աշտարակեցի 219, 354
 Ներսէս Համբրոնացի 130, 131, 133, 136, 137, 140, 161, 269, 270, 280, 309, 321, 322, 323, 324, 325, 331, 334, 335
 Ներսէս Մեծ Պարթեւ 28, 35, 67, 68, 85, 113, 114, 214, 229, 297
 Ներսէս Շինող (կաթողիկոս) 106; 379
 Ներսէս Շնորհալի 167, 168, 221, 303, 309, 310, 321, 331
 Ներսէս Տարօնացի 308
 Նեֆիսի 307
 Նիկեփոր Փոկաս 251, 252
 Նիկիտ 247
 Նիկողայոս (պարակիմոմենոս), կառավարիչ Անիի 255
 Նիկողայոս Միատիկոս 248
 Նիկողայոս Ա. պապ 238
 Նիկողայոս (Քարթլիի կաթողիկոս) 209
 Նիկոն Մենակեաց 299
 Նիւքար 103, 104
 Նոյ 351
 Նուրիջանեան Թովմայ եպս. 130
 Շախեան Գ. 372
 Շահադիդ Ե. 219, 220
 Շահակ (Սահակ) 109
 Շահխաթունեանց Յ. 212, 354
 Շանիձէ Ա. 9, 11, 19, 21, 41, 42, 54, 88, 97, 209, 291, 293, 305
 Շանիձէ Մ. 21, 41, 43, 189, 191, 193
 Շապուհ (Բաղրատունի, Աշոտի Հայր) 239, 246, 250
 Շապուհ Բ. Երկարակեաց 195
 Շիրուանզադէ 218
 Շուլց Վ. 92
 Շուշանիկ 29, 30, 31, 76, 110, 120, 160, 197, 198, 199
 Ոսկան Երեւանցի 42
 Ոսկանեան Ն. 130
 Ոսկեան Հ. 241

- Ոսկեանք 111
 Որմիզդ 34
 Ուլուբարեան Բ. 83, 162
 Ուլուհօճեան Գ. 317, 357
 Ուխտանէս եպիսկոպոս 59, 149
 Ուսպենսկի Պ. 190
 Ուրան 363, 366

 Չամչեան Մ. 188, 190, 333

 Պահլաւունիներ 255
 Պահլաւունի Վահրամ 254, 255
 Պանտայեոն 240, 241, 243
 Պապ 229
 Պատկանեան Բ. 246
 Պարթեւներ 106, 129
 Պաւղոս Կիլիկեցի (Ակներցի) գրիչ
 168, 169
 Պետերս Պ. 24, 26, 27, 30, 197
 Պետրոս առաքեալ 240
 Պետրոս Գետաղարձ 253, 254, 255
 Պետրոս վարդապետ Հաղբատեցի
 309, 311, 317
 Պերոզ 159
 Պէրպէրեան Հ. 122, 227, 239, 248
 Պիտտրովսկի Բ. 8
 Պիվազեան Է. 188
 Պողարեան Ն. եպս. 114, 161, 166,
 311, 312, 313
 Պոռչեաններ 358
 Պտի Լ. 291, 292
 Պտղոմէոս 141
 Պրոկոպիոս Կեսարացի 160
 Պօղոս 232
 Պօղոս առաքեալ 93, 97
 Պտղոմէոս 82

 Զալալեանց Ս. վրդ. 354
 Զահուկեան Գ. 5, 7, 8, 11, 12, 33
 Զաղայ 20, 24, 95, 188
 Զանաչիա Ն. 30
 Զանփողաղեան Հռ. 356
 Զաւախիշլիլի Ի. 19, 30, 35, 111,
 113, 356
 Զափարիձէ Օ. 32

 Զիրզու էրիսթաւ 80
 Զիվանշիր 82

 Ռզաւել Ն. 93
 Ռեկլիւ Է. 215
 Ռընու Շ. 95
 Ռոմանոս Լեկաբենոս (Լակապէնոս)
 244, 250
 Ռուբէն 210
 Ռուվիսթաւցիներ 79, 84, 85

 Սարա Արդար 27
 Սարոյեան Լ. 371
 Ս. Աթանազիոս 211
 Սաթէնիկ 111, 112
 Ս. Բարսեղ 19, 317
 Ս. Գէորգ 13, 297, 302
 Ս. Գրիգոր 66-70, 126, 325, 351
 Ս. Հովսիփոս 108
 Ս. Յովհաննէս Մկրտիչ 211
 Ս. Նունէ, Նինո 14, 15, 67, 198
 Ս. Շուշանիկ 61, 74, 75, 110, 118,
 120, 121, 123, 197, 204
 Ս. Սահակ 61, 71, 72, 73, 76, 77,
 247
 Ս. Սարգիս 14, 25, 363
 Սահակ Բագրատունի 131
 Սահակ Կամսարական 363
 Սահակ Պարթեւ 20, 28, 65-70, 73-
 77, 109, 114, 120, 122, 156,
 157, 163, 188, 193, 229
 Սահակ-Մեսրոպեան, Սահակ-Մաշտո-
 ցեան 38, 61, 63, 64
 Սաղումեան Ս. 199, 200, 356, 382
 Սամուէլ Վրացի 89
 Սանատրուկ արքայ 107
 Սանդուխտ 107
 Սատոյ Դիմաքսեանց, տե՛ս Դիմաք-
 սեանց Սատոյ
 Սարաֆեան Սարգիս եպս. 265, 288
 Սարգիս 205, 254
 Սարգիս Արաբացի եպս. 231
 Սարգիս, որդի Արտաւազի 204, 258
 Սարգիս եպիսկոպոս (Տայքի) 22
 Սարգիս կաթողիկոս 200

- Սարգիս Հայկազն 254, 255
 Սարգիսեան Բ. 164, 167
 Սարգիսեան Հ. Գրիգոր 148, 162, 165
 Սարգիսեան Հ. Ներսէս 214, 354, 355
 Սարգսեան Ա. 118, 129
 Սարգսեան Գ. 18, 35, 99, 356
 Սարհանգ 296
 Սաւալեան Ա. 130
 Սերէոս 105, 106, 151
 Սեղբեստրոս 233
 Սենեքերիմ 342
 Սենեքերիմ Արծրունի 251, 252, 254, 255, 281
 Սետեֆեան Յակոբոս քազ. 336
 Սեւերիոս Գաբաղոնացի 25
 Սեւորդիք 145
 Սէն Մարտէն 354
 Սթոուն Մ. 37, 78, 357
 Սիմենաւր 82
 Սիմէոն Աստրախանցի 131
 Սիմէոն ՊղնձաՀանեցի 328, 329
 Սիմոնեան Յ. 101
 Սիրունի Յ. 260, 261
 Սմբատ Ա. 145, 239
 Սմբատ Բագրատունի, որդի Աշոտի 202, 235, 249
 Սմբատ Դաւթայ որդի 80, 81, 82, 83, 86
 Սմբատեան Մ. 356
 Սոկրատ Աքոլաստիկոս 233
 Սոփրոնիոս 15
 Ստեփանէ Խորէն ծ. վ. 121
 Ստեփաննոս տիրացու 324
 Ստեփանոս Բիւզանդացի 143
 Ստեփանոս Դաշտեցի (Շիրիփալանկեան) 332-337
 Ստեփանոս կաթողիկոս 109
 Ստեփանոս Կոն 145
 Ստեփանոս (միաբան Օշկի վանքի) 41
 Ստեփանոս Մոկացի 242
 Ստեփանոս Նախապկայ 262
 Ստեփանոս Սիւնեցի 234, 235, 236
 Ստեփանոս Տարօնացի 103, 215
 Ստեփանոս Տարօնացի Ասողիկ 59, 97, 106, 151, 232, 233, 242, 243, 244, 251, 252
 Ստեփանոս Օրբէլեան 122
 Ստրարոն 6, 9, 12, 87
 Ստրժիգովսկի ժ. 373
 Սուլխան - Սարա Օրբելեանի 21, 42, 349
 Սուրէն 117
 Սուքիասեանք 111

 վազգէն վեհափառ 57
 վախթանգ Գորգասալ 29
 վահագն 13
 վահան կաթողիկոս 281
 վահանանք 29, 159, 366
 վահան Մամիկոնեան, տե՛ս Մամիկոնեան վահան
 վահրամ իշխանաց իշխան 201
 վահրամ Պահլաւունի, տե՛ս Պահլաւունի վահրամ
 վահրամի Ֆառախումարտ 196
 վահրիճ 195, 196
 վաղարշ թագաւոր 365
 վանական վրդ., տե՛ս Յովհաննէս վանական վարդապետ
 վաչուտեաններ 358
 վասակ Արծրունի՞ 150
 վասակ Մամիկոնեան, վասակ զօրավար, տե՛ս Մամիկոնեան վասակ
 վասակ Սիւնեցի 151, 158, 159
 վասիլ Ա. կայսր 247
 վասիլ Բ. կայսր 243, 251, 252, 253, 254, 281
 վարազ 81
 վարազ Բակուր Խիղարեցի 81, 85
 վարազ Գագեցի 80
 վարազ Գրիգոր 80, 81, 82, 83
 վարազ-Հարան 81
 վարազվաղան 158, 187
 վարդ Սկլերոս 41
 վարդան 171
 վարդան Այգեկցի 319-322, 331, 334
 վարդան Արեւելցի 66, 67, 95, 247
 վարդան Բաղիշեցի 163
 վարդան Հաղբատեցի 309
 վարդան Մամիկոնեան, տե՛ս Մամի-

- Կոնեան Վարդան
 Վարդան Մեծ 244
 Վարդան վարդապետ 248
 Վարդանանք 29, 157, 158, 178, 366
 Վարդանեան Ա. 97
 Վարդաս Կեսար 237
 Վարդգէս Մանուկ 142, 143, 145, 146,
 Վռամ 69, 70
 Վռամշապուհ Արշակունի 156
 Վրթանէս Հայրապետ 28, 112, 123, 124, 125, 127
 Վրթանէս Քերթող 104, 105, 108

 Տաճատ Վարագացի (Վարագեցի) 59
 Տաշեան Յ. 133, 168, 221, 235, 314, 333
 Տէր-Աւետիսեան Ս. 206, 355
 Տէր Բարսեղ, Հայր Ստեփանոս Դաշտեցու 333, 341
 Տէր-Դաւթեան Ք. 197
 Տէր Զաւէն եպիսկոպոս 158
 Տէր Խաչատուր 133
 Տէր-Խաչատուրեան Յովհաննէս 136
 Տէր-Մինասեան Ե. 153, 223
 Տէր-Սիրտչեան Գ. 59, 162, 163, 164, 187, 215, 311, 362
 Տէր-Սիրտչեան Կ. 38, 40
 Տէր-Մովսիսեան Մ. 39, 56, 221, 233
 Տէր-Յակոբ քահանայ 133
 Տէր-Յակոբեան Խաչատուր 129
 Տէր-Յովհաննեանց Յ. 333
 Տէր-Յովհաննիսեան Գէորգ Պալատեցի 164
 Տէր-Ներսէսեան Ս. 105
 Տէր Ոսկան 342
 Տէր-Պետրոսեան Լ. 24, 188, 189
 Տէր-Պողոսեան Ն. 100
 Տէր-Պողոսեան Պ. 114, 153
 Տէր-Վարդանեան Գ. 58, 135, 221
 Տիգրան Հոնենց 201
 Տիգրան Պահլավունի 238
 Տիմոթէոս Երուսաղէմացի 25
 Տիմոթէոս Կուղ 185, 186
 Տիմոթէոս ճգնաւոր 324

 Տիտոս 234
 Տիր 13, 34
 Տիրան 125, 126, 229
 Տիրիթ 229
 Տիրիճան 25, 29
 Տիւքիկոս 232
 Տրդատ Թաղաւոր 108, 109, 124, 211, 213, 351
 Տրդատ, որդի Տիրանի 229
 Տրդատ ճարտարապետ 243
 Տրդատ Ռեւ 85
 Տրեւեր Կ. Վ. 88, 95, 97

 Բաղուայ Պէյ 213

 Յազարելի Ա. 41
 Յինդելիանի Ու. 21, 41, 43
 Յքիթիշլիլի Թ. 21, 43

 Փարպեցի, տե՛ս Ղազար Փարպեցի
 Փաւստոս Բուզանդ 34, 35, 65, 107, 113, 120, 155, 195, 196, 197
 Փիլիկտիմոն 25
 Փիլիպոս կաթողիկոս 130
 Փիլիպպէ (Կապան) 252
 Փիլոն Հեբրայեցի 185
 Փիլոն Տիրակացի 233
 Փոտ պատրիարք 237, 238, 247

 Քալանթար Լոռու Մելիքեան Ա. 355, 356
 Քալէշահինենց 219
 Քաջբերունի 354
 Քարղամխուար Բարդաղուր 85
 Քաւթարիա Մ. 78
 Քաուէ Պ. 37
 Քէօսէեան Յ. 327
 Քիւրդեան Յ. 199
 Քոլանջեան Ս. 217, 262
 Քսենոփոն 143, 144
 Քուլի Բ. 217
 Քուրցիկիձէ Յ. 21, 41

 Օղիւմպ քուրմ 35
 Օղլուգեան Աբէլ վրդ. 327

- Օնիանի Շ. 30
 Օրբէլեան Ստ., տե՛ս Ստեփանոս Օրբէլեան
 Օրբէլեան տոհմ. 310
 Օրբէլի Յ. 212, 216, 217, 221, 355, 356, 358, 374, 379
 Օրի, տե՛ս Իսրայէլ Օրի
 Օրմանեան Մ. 35, 100, 153, 214, 216, 229, 248

 Ֆերուհիսան Բարունակ Պէյ 212, 213, 214, 216
 Ֆնտզեան Գ. 19

Adjamian Shahe Archbishop 38
Adonz N. 41, 227, 246, 251
Bardakjian K. 332
Baumstark A. 190
Basmadjian K. 356
Blake R. 41, 42, 67, 115
Diaconi L. 243
Esbroeck M. van 345
Garitte Gerard 15, 114, 247, 327
Garsoian N. 229
Hubschmann H. 7, 143, 146
Kalantar A. 356
Lafontaine G. 113, 344
Langlois V. 122, 355
Lehmann H. 136
Leloir 43
Lyonnet S. 43
Kouymjian D. 136
Krumbacher K. 329
Mahe Annie 122
Mahe J.-P. 122
Molitor I. 43
Peeters P. 42
Stone M. 136, 357, 359
Theophanes 247
Thomson R. 121

 ածյուլածյ ո. - 22, 25, 27, 28, 42, 59, 67, 76, 121, 123, 124, 126, 190, 297, 349
 աղբիւծյ Ն. - 17, 90
 արսեն խաջարբելո - 17
 ճանբելոյ յ. - 22, 44
 ճոլոծյ ո. - 209
 ճոխանիժիլոյ յլ. - 21
 իմնաիժիլոյ յլ. - 190
 կոկոլոծյ յ. - 13, 14, 16, 19, 24, 26, 27, 28, 43, 191, 192, 193, 299
 մգալոծլոյժիլոյ տ. - 346
 մբնածլոյ յ. - 41
 յորճանոյ տ. - 76, 299
 խլխան-խաճա օրծլոյանո - 349
 յաջտարոյ մ. - 90
 յիւրծիլոյ յ. - 22, 23
 յալխանիժիլոյ տ. - 365
 յալխանիժիլոյ խ. - 143, 291, 294, 349
 ժանոծյ ձ. - 9, 19, 42, 209
 ժանոծյ մ. - 22, 90, 190, 191, 192
 խլխանիլոյ յ. - 90
 խալխանիժիլոյ յլ. - 19, 22, 297

Адонц Н. - 141, 142, 322
Акопян А. - 108
Анна Комнина - 292, 295
Аревшатын С.С. - 231
Арутюнова - Фиданян В. А. - 76,

- 209, 258, 292
- Арутюнян Н. В. – 8, 359
- Бартикян Р. М. – 204
- Безобразов П. – 292
- Бенешевич В. И. – 202, 256, 257, 296, 359
- Блэйк Р. – 41
- Гамкрелидзе Т. В. – 6
- Джавахов И. А. – 14
- Дьяконов И. М. – 7, 8
- Еремян С. Т. – 251, 259, 367
- Иванов В. В. – 6
- Каждан А. – 227
- Какабадзе С. С. – 206
- Капанцян Гр. – 11
- Кесеян А. – 238
- Климов Г. А. – 5
- Кушнарцева К. – 5
- Литаврин Г. – 293
- Любарский Я. – 292
- Мансветов И. – 16
- Марр Н. Я. – 5, 7, 8, 14-18, 21, 22, 23, 25, 28, 39, 40, 48, 49, 52, 56, 67, 111, 112, 113, 121, 123,
- 141, 207, 208, 209, 211, 246, 254, 257, 291, 293, 297, 299, 301, 355, 357
- Мелик – Оганджаниян К. – 122
- Меликсет-Беков Л. – 16
- Мурадян П. М. – 14, 84, 146, 212, 238, 334, 356, 358, 380
- Орбели И. А. – 212
- Ростовцев М. – 359
- Саркисян Г. Х. – 121
- Тер-Аветисян С. – 205
- Тер-Мовсесян М. – 39
- Туманов А. – 135
- Хачатрян А. – 360
- Церетели Г. – 19
- Шандровская В. – 256
- Шанидзе А. – 11, 293
- Эмин Н. О. – 121
- Юзбашян К. Н. – 205, 238, 247, 248, 251-

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աբարան 252
 Ագուլիս 135, 136
 Ադրբեջան 360
 Աթէնի Սիոն 249
 Աթէն 357, 379
 Աթէնք 104, 229
 Աթոս 21, 25, 28, 29, 37, 41, 42, 43, 67, 89, 115
 Ալաման 256, 357
 Ալանաց Դուռ 145
 Ալանների երկիր, Ալանք 111
 Ալաւերդի 302
 Ախալքալաք 185
 Ախթամար 262
 Ակն 281
 Աղեքսանդրիա 101
 Աղուանից աշխարհ 82, 150
 Աղուանք (Ռան) 6, 12, 34, 35, 36, 84, 87, 90, 92, 93, 97, 111, 146, 152, 158, 159, 344
 Ամասիա 231
 Ամիդ (Տիգրանակերտ) 154, 252, 271
 Ամստերդամ 129, 130, 131, 132
 Այսրկովկաս 8, 13, 17, 18, 29, 32, 33, 34, 92, 95, 97, 344, 380
 Այրարատ, Այրարատեան գաւառ, նահանգ 145, 154, 311, 357
 Այրիվանք 234
 Անդրիայ 342
 Անթիլիաս 260, 283
 Անի 84, 103, 104, 200-205, 207, 210, 249, 251, 252, 254, 255, 256, 257, 258, 259, 296, 298, 309, 311, 326, 355, 356
 Անի-Կամախ 246
 Անձեւացեաց գաւառ 281
 Անտիոք 14, 18, 36, 320
 Աշխարհ Հայոց, Երկիր Հայոց (Հայաստան) 14, 69, 149, 150
 Աշխարհ Յունաց (Բիւղանդիա) 247
 Աշտարակ 199, 200, 201, 331, 332, 357, 375, 382
 Աշտիշատ 69, 70, 73
 Առաջաւոր Ասիա 18
 Ասիա 329
 Ասորիք 319
 Աստապատ 361
 Աստղաբլուր, Աստեղնաբլուր 83, 86
 Աստուածածնի եկեղեցի 79
 Ատրպատական 5, 249
 Արագածոտն 148
 Արածանի 217
 Արակայ Ուխտ 281
 Արամուս 146, 373
 Արարատեան երկիր 133
 Արեւելք 18, 32, 34, 251, 257, 296, 297, 322, 334
 Արեւելեան Հայաստան 321, 325, 357
 Արեւելեան Վրաստան 298
 Արեւմտեան Հայաստան 360
 Արեւմտեան Եւրոպա 333
 Արեւմտեան Վրաստան 15, 249
 Արեւմուտք 334
 Արմաշի վանք 213, 218
 Արշարունիք 152
 Արչիփելագ կղզիներ 342
 Արտագ գաւառ 14, 107

- Արտաշատ 34
 Արտիմէդ քաղաք 143, 145
 Արցախ 82, 83, 84, 85, 86, 87,
 90, 91, 357
 Արուճ 144, 202, 357
 Աւան 357, 358, 367, 369, 371,
 378, 379
 Ափխազք 15
 Աֆրիկա 329
- Բարեկոն 212, 320
 Բազարան 246, 357, 374
 Բազաւան 211, 212, 213, 214,
 215, 216, 217, 218, 357
 Բազրեւանդ դաւառ 69, 70, 73,
 111, 215
 Բայազետ 246
 Բարեւան գիւղ 206
 Բաղրոտ գիւղ 107
 Բաղդադ 80, 237
 Բաղէշ 163
 Բանա 297
 Բանդար 336
 Բեթղեեմ 63
 Բերդուշ (Բերդաճոջ) 80, 81, 82
 Բիաինա (Վանի թագաւորութիւն)
 33
 Բիւզանդական Հայաստան 227,
 358
 Բիւզանդական կայսրութիւն 237,
 243, 332
 Բիւզանդիա 5, 149, 150, 160,
 227, 229, 230, 232, 235,
 236, 238, 239, 243, 244,
 246, 247, 248, 249, 250,
 251, 252, 258, 296, 301, 303
 Բիւզանդիոն 134, 217, 229, 240,
 241
 Բիւրական 256
 Բլուր գիւղ 69, 70
- Բջնի 133, 134, 135, 309
 Բուլղարիա 301
- Գառնի 144
 Գարդաբանի դաւառ 80, 81, 82
 Գարդման 82, 83, 91, 145, 146
 Գարեջայի մենաստան (Դաւիթ
 Գարեջայի մենաստան,
 Գարեռչա) 79, 81-86
 Գերեզմանք 103, 104
 Գլաձոր 168, 169
 Գլխոյ վանք 83
 Գողթն 342
 Գոմոր 351
 Գորիս 146
 Գուգարաց բղեշխութիւն 44
 Գուգարք 9, 11, 14, 30, 152, 158,
 244
 Գուրղան (Վիրք) 15
 Գուրիա 249
- Դաղստան 92
 Դարանաղի 246
 Դարոյնք 246
 Դաւիթ Գարեջայի մենաստան 80,
 82
 Դեբեդ 81
 Դեղձնուտի վանք 82
 Դերջան 228
 Դլուք դաւառ 319
 Դոնի Ռոստով 219
 Դրազարկ 61
 Դուին 15, 17, 102, 106, 159,
 229, 234, 254, 255, 309, 326
- Եգիպտոս 50
 Եդեսիա, տե՛ս ՈւռՀայ
 Եկեղեաց դաւառ 325
 Եղիվարդ 357, 358, 369, 373,
 374, 375, 379, 380, 381, 382

- Երազգաւորք 246
 Երերոյք 256
 Երեւան 82, 83, 118, 220, 221, 280, 335, 356, 358
 Երեւանի Մատենադարան 56, 57, 99, 102, 117, 161, 163, 220, 282, 288, 333, 337, 345
 Երուսաղէմ 18, 25, 27, 36, 86, 92, 113, 161, 166, 192, 283, 306
 Երուսաղէմի մատենադարան Ս. Յակոբեանց վանքի 166, 312
 Եփեսոս 193, 194
 Եփրատ գետ 211, 213, 214

 Զանթէ 342
 Զաֆօրոնիայ 342
 Զեղաղէն (Զեղա Զաղէն մենաստան, անապատ) 79, 81, 82, 83, 84, 85, 86
 Զուարթնոց 379
 Զուխմա (Սուխմա) 8

 Էջմիածին 56, 128, 163, 164, 217, 219, 317, 364

 Թալին 357
 Թաւրիզ 197
 Թարթառ, տե՛ս Տրտու
 Թբիլիսի, տե՛ս Թիֆլիս
 Թեսալոնիկէ 93
 Թիֆլիս 80, 128, 129, 136, 205, 221, 355, 358
 Թոնդրակ գիւղ (Մուշ) 360
 Թորդան 125, 126
 Թոնեղք 6

 Իբերիա 9
 Իզմիր 342
 Իջեւան 81, 82, 83

 Իսկիւտարի Ս. Խաչ եկեղեցի 265, 288
 Իսպահան 136
 Իսրայէլ 50
 Իրան 57
 Իւերիա բանակաթեմ 251, 255, 256, 257
 Իւերոն վանք (Աթոս) 67
 Իւչքիլիսայ 215, 218

 Լազարեան ինստիտուտ 56
 Լազերի երկիր 15
 Լալի գիւղ 80, 81, 82, 83
 ԼաՀիճ, ԼաՀիճան 197
 Լարիսայ 252
 Լիկանդոն 244
 Լիմ անապատ 265
 Լիոն 222
 Լմբատավանք 210
 Լոռէ 309, 311, 326, 357

 Խաչեն 145, 325
 Խիղար 85
 Խորեղմ 17
 Խորձեան 9
 Խոր վիրապ 351
 Խուղաշէն 80, 81
 Խուճան ամրոց 82

 Ծիրանաւոր եկեղեցի (Աշտարակ) 199
 Ծոփ 80, 81

 Կաթողիկէ եկեղեցի (Եղիվարդ) 375
 Կալա բերդ 80, 85
 Կալկաթա 322
 Կալոն Պեղատ 255
 Կախէթ 8, 81, 82, 85, 86
 Կամախ ամրոց 246

- Կամրջածորի վանք 244
 Կապադովկիա 17, 142, 252, 255
 Կապան 252
 Կապուտքար 244
 Կարին 250, 257, 296, 297
 Կարս 251, 252, 259, 296, 297, 309
 Կարմրաւոր եկեղեցի (Աշտարակ) 331, 375, 382
 Կարմրիկ անապատ (Կիլիկիա) 319
 Կեսարիա 18, 36, 211, 317, 320,
 Կիլիկիա 303, 310, 319, 325, 331
 Կիլիկեան Հայաստան 321, 324
 Կղարջք 44, 141, 142, 206, 207, 290, 297, 298
 Կողբ 250
 Կոստանդնուպոլիս, Կ. Պոլիս 57, 135, 149, 203, 227-243, 248, 255, 263, 266, 268, 280, 282, 283, 306, 315, 342, 358
 Կովկաս 5, 6, 7, 18, 32, 33, 87, 248, 257
 Կովկասեան Աղուանք 87, 89, 90
 Կովկասեան լեռներ 103
 Կորիդէթ 207
 Կուխէթ 81
 Կտուց անապատ 264, 265, 288, 289
 Կուր գետ 8, 90, 91, 145

 Հայէս 320
 Հաղբատ 308, 309, 310, 370
 Հայաստան 8, 12-16, 22, 24, 28, 32, 33, 34, 37, 57, 69, 70, 78, 82, 103, 107, 111, 118, 145, 147, 150, 151, 155, 156, 159, 185, 195, 212, 218, 228, 234, 235, 239, 246, 249, 250, 252, 257, 264, 276, 289, 296, 319, 324, 325, 354, 355, 356, 359, 365, 366, 367, 380, 381
 Հայկայ աշխարհ 132
 Հայոց երկիր, աշխարհ, տե՛ս Հայաստան
 Հայք 6, 9, 85, 107, 112, 232, 236, 240, 322, 344
 Հարաւային Կովկաս 32, 33
 Հարաւային Հայաստան 325, 357
 Հարք գաւառ 252
 Հեմս 242
 Հերէթ 28, 84, 86
 Հիւսիսային Կովկաս 85
 Հիւսիսային Հայաստան 136, 142, 145, 331, 357
 Հիօ 342
 Հոռոմոսի վանք 244, 256
 Հոփոսիմէ եկեղեցի 379
 Հոռմ 111, 134, 240, 336, 380
 Հոռմկլայ 309
 Հունարակերտ 145

 Զիրաւի դաշտ 214
 Զորոյ գետ 309

 Ղալաթիա 265, 283
 Ղարաբէկ գիւղ 215
 Ղարղուն գիւղ (Իրան) 57
 Ղրիմ 91, 219, 220

 Ճորոխ գետ 246

 Մախազեան 195, 196, 197
 Մաղերդայ վանք 361
 Մանազկերտ 22, 92, 123
 Մանգաուրայ 237
 Մանգլիս 298
 Մասիս 146
 Մաստարա 201, 357, 369, 379

- Մարաշ 223
 Մարաց լեռներ 103
 Մելիտինե 227, 320
 Մեծիրանք դաւառ 83
 Մեծ Կողմանք, տե՛ս Մեծ Կուէնք
 Մեծ Ե Կուէնք (Մեծ Կուանք, Մեծկուեանք, Մեծ Կողմանք) 82-87
 Մեծ Հայք 117, 200, 247, 250, 251, 252, 254, 255, 256, 354
 Մեսկուան, Մեծեկեւնեյնի, տե՛ս Մեծ Կուէնք
 Մինգեչաուր 88
 Միջագետք 257
 Միջագիւղ 217
 Միջերկրական ծով 103
 Միջնարցախ (Մեծ Կողմանք) 83, 84
 Մխիթարեան մատենադարան (Վենետիկ) 312, 313
 Մխիթարեան մատենադարան (Վիեննա) 130, 241, 312
 Մծխէթ, Մցխէթ 31, 85, 209, 365
 Մոկաց երկիր 242, 264, 265, 276, 288, 289
 Մոկս 264, 269, 271, 285
 Մուղան 205
 Մուշ 360
 Մօզօն 342

 Յունաստան 149

 Նախճաւան 374
 Նախիջեւան 360
 Նապօյի Ռումնիայ 342
 Նարեկայ վանք, Նարեկավանք 58, 59, 61, 265, 281
 Նէկրփոնթ 342
 Նիկիայ 100, 315
 Նպատ լեռ 213, 214

 Նորատուք, Նորատուս 144, 146
 Նոր Հոռմ, տե՛ս Բիւզանդիոն
 Նոր Նախիջեւան 219, 220
 Նոր Զուղայ 333

 Շահապիւփան 75, 153
 Շաղատ 122
 Շամքոր 145
 Շատախ 262
 Շատրեբդ 192
 Շաւշէթ 209
 Շաւշէթ-Կղարջք 22
 Շիրակ 152, 210, 244, 246, 254, 357
 Շիրակաւան 246, 247
 Շրէշ բլուր 143, 145

 Զղախի հովիտ 83, 86

 Պաղեստին 27, 42, 92
 Պաղտատ, տե՛ս Բաղդադ
 Պանագիոս վանք (Կ. Պոլիս) 306
 Պարիադրիսի լեռներ 9
 Պարսկական Հայաստան 15
 Պարսկաստան 57, 160, 183, 195, 196, 215
 Պեմզաշէն 369, 370, 371
 Պետերբուրգ 39, 167, 355
 Պետրիժոնի վանք 208, 210, 299, 300-307
 Պիզու 255
 Պլովդիւ, տե՛ս Ֆիլիպպոպոլիս
 Պոնդ (Պոնտական ծով) 103
 Պոնտոս 143
 Պուէնիոս Այրէս 260

 Զուարի 357
 Զուղայ 358

 Ռուսաստան 219, 220

- Ա. Աստուածածին եկեղեցի
 (Բերդուջ) 80
 Ա. Աստուածածնի վանք
 (Պետրիժոնի) 300
 Ա. Աստուածածին եկեղեցի (Բջնի)
 130
 Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի
 213,
 Ա. Լուսավորիչ Աւագ եկեղեցի
 (Նոր Նախիջեւան) 219
 Ա. Եկատերինէ վանք 78, 88
 Ա. Թովմայ առաքելայի վանք
 (Ագուլիս) 129, 134, 135
 Ա. Խաչ վանք (Պաղեստին) 42
 Ա. Կարապետ եկեղեցի (Թիֆլիս)
 129
 Ա. Կարապետ 213
 Ա. Կարապետ վանք (Ապարանք)
 243
 Ա. Յովհաննէս վանք, եկեղեցի
 (Բազաւան) 211, 217, 218
 Ա. Նշան վանք Սեբաստիայի 312
 Ա. Սաբայի մայրավանք 20
 Ա. Սոփիայի տաճար 217, 238,
 240, 242, 243, 248
 Սաբերեբի 84
 Սախլորբանի գիւղ 209
 Սամցխէ 22, 298
 Սանազին 322
 Սանազնի վանք 244, 310
 Սանասարեան վարժարան
 (Կարին) 221
 Սանկտ Պետրբուրգ 220, 221,
 222
 Սասուն 252
 Սեբաստիա 252, 282, 312
 Սեւ ծով 8
 Սինայի թ-կղզի, վանք 14, 25, 78,
 79, 81, 85, 87, 88, 90, 92,
 190, 297
 Սինայի լեռ 89
 Սիսական 249
 Սիւնիք, Սիւնեաց աշխարհ 85,
 100, 122, 151, 152, 158,
 234, 249, 357
 Սիօ 342
 Սոմխիթի 14
 Սպանիա 322
 Սպեր 246
 Սողոմ 351
 Սուխմա (Սուխմու), տե՛ս Զուխմա
 Սուկաւէտ լեռ 111
 Սուրաթ 336
 Վաղարշապատ 143, 152, 154
 Վայկունիք 83
 Վան 167
 Վանանդ 251
 Վանի թագաւորութիւն (Բիաինա)
 32, 33
 Վասպուրական 80, 82, 85, 249,
 250, 252, 256, 257, 281,
 324, 325
 Վարագ, Վարագավանք 59, 324,
 372
 Վարձիա 95
 Վենետիկ 44, 57, 128, 129, 163,
 164, 221, 263, 345
 Վերին Լաբկո 92
 Վիեննա 57, 133, 241, 373
 Վիրք (Վրաստան) 6, 9, 13, 14,
 15, 16, 34, 35, 85, 92, 110,
 152, 322, 344, 365
 Վաղիկաւկազ 356
 Վոխտոն (Բիւրխտոն) 242
 Վրաց աշխարհ (Վրաստան) 149,
 150
 Վրաց դաշտ 149
 Վրաստան 12, 13, 14, 15, 17, 24,

- 36, 42, 80, 81, 83, 84, 90, 92, 149, 158, 159, 208, 291, 298, 302
- Վուրի աշխարհ, տե՛ս Արեւմտեան Վրաստան
- Տաղձանք վանք, տե՛ս Դեղձնուտի վանք
- Տայք 9, 22, 28, 44, 115, 144, 145, 206, 207, 249, 251, 290, 293, 295, 297, 298
- Տայոց գաւառ 144
- Տանձուտ գիւղ 208
- Տարան, Տարանի գաւառ, Տարօն 14, 69, 70, 73, 246, 251, 324, 325
- Տարսոն 133, 323, 341
- Տաւշոյ ամրոց 145, 146
- Տաւշոյ ձոր 145, 146
- Տաւուշ, Տաուշ 145
- Տրէթի վանք 141
- Տեկոր 256, 357, 362, 363, 364, 365, 366
- Տիգրանակերտ 271, 282, 288, 289
- Տիւրիկ 281
- Տրապիզոն 232
- Տրէթուն գիւղ 136
- Տրտու (Թարթառ) գետ 83
- Տուհք, Տուհաց գաւառ 141-147
- Տուս, Տուք գաւառ, գիւղ 145, 146
- Տուս գետ (Տաւուշ գետ) 146
- Տուս-Քուստակ 146
- Տփղիս 80, 85, 118, 132, 145, 205
- Տփղիսի բերդ 80
- Յուրտաւ 31, 149
- Ուլթիք 297
- Ուչքիլիսէ, տե՛ս Բագաւան
- Ուռհայ (Եղեսիա) 105, 107, 320
- Ուտիք 90, 91, 145, 146
- Ուրարտու 8, 33
- Փայտակարան 124
- Փարիզ 354
- Փարպի գիւղ 148
- Փոթի (Փաշղ) 8
- Փոքր Հայք 16, 19, 191, 227, 228, 244, 259, 281
- Քաղկեդոն 229
- Քասաղ գետ 143, 145
- Քարթլի 8, 13, 14, 85, 90, 209
- Քիոս կղզի 291
- Քյոլն 196
- Քրիստոնեայ Արեւելք 26, 78, 87, 344
- Քօրօն 342
- Քօրֆու 342
- Օձուն 372, 379
- Օշական 382
- Օշկի վանք 41, 43, 190
- Ֆիլիպոպոլիս 301, 303

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը	5
Կովկասեան երեք դպրութիւնների սկզբնաւորումը	32
Աստուածաշնչի հայկական խմբագրութեան բնագրական քննութեան աղբիւրները	37
Դիտարկումներ աւանդաբար Ս. Մեսրոպի ընդօրինակութիւն համարուող Աւետարանի շուրջ	56
Սահակի եւ Մեսրոպի «Կատարեալ պատմութեան» խնդիրը	65
Արցախը վրացական նորայայտ ձեռագրերում	78
Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» բնագրական հետքերը VI-VII դարերի երկերում.....	98
Խորենացու «Պատմութեան» բնագրական մի քանի դիտարկումներ	117
Մովսէս Խորենացու «Պատմութեան» Ներսէս Լամբրոնացու օրինակը	128
Մովսէս Խորենացու «Տուհաց գաւառի» տեղորոշման հարցի շուրջ	141
Ղազար Փարպեցի	148
Ղազար Փարպեցու «Պատմութեան» նորայայտ պատառիկը	162
Ղազար Փարպեցու մի տեղեկութեան պատմա-բանասիրական նշանակութիւնը	187
Բնագրագիտական դիտարկումներ	195
Դրուագներ Բագաւանի ձեռագրական հաւաքածոյի պատմութիւնից	211
Հայկական ձեռագրական հաւաքածոներ Ռուսաստանում և Եղիշէի «Պատմութեան» մի նոր պատառիկ	219
Հայոց դպրութիւնը Կոստանդնուպոլսում (V-X դդ.)	227
Բիւզանդիայի արեւելեան քաղաքականութիւնը եւ Անին	246
«Նարեկի» հեղինակային ինքնագիրը եւ անդրանիկ գիտական հրատարակութիւնը	260
Գրիգոր Բակուրեանի «Սահմանք»-ի յունարէն եւ վրացերէն խմբագրութիւնների գնահատութեան հարցի շուրջը	290
Դաւիթ Բոբայրեցին եւ նրա «Պատճառները»	308
Դաւանական հանդուրժողականութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գաղափարը ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանում	319
«Վասն Աւուրն Կիրակէի» ճառի հայերէն և վրացերէն թարգմանութիւնների առնչակցութեան խնդիրը	344
Հայաստանի վիմագրական ժառանգութիւնը	354
Ո՞վ է Տեկորի արձանագրութեան հազարապետ Մանանը	362
«Յոհան Սարկաւազ» թէ «Յոհան Գաւրկ»	367
Եիզվարդի 660 թուականի ծածկագիր արձանագրութիւնը	373
Հուսկ բան	387
Ցանկեր	389

ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ

**ԿՈՎԿԱՍԵԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ
ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ**

Պրակ Ա.

Հրատ. խմբագիր՝ Ա. Սահակյան

Համակարգչային էջադրումը՝ *Ռ.Գալստյանի*

Հրատ. պատվեր N 214

Հանձնված է արտադրություն 10.07.2008թ.:

Չափսը՝ 70 X 100 ¹/₁₆, թուղթ՝ օֆսեթ N 1

25,75 տպագր. մամուլ: Տպաքանակը 400 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

«Էդիթ-պրինտ» ՍՊԸ տպարան,

Երևան, Դ.Մալյան 43

(3000)

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0084794

ЦЕНА

~~11
93835~~